1524
у — 95

12004

100

1524
Գ–64
528-ԱՀ
Printed in Turkey

# Գ Ի Ր Ք

Որ կոչի

# ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ.

Ասացեալ Ս՟բ Հօրն մերոյ Երանելւոյն Գրի-
գորի Լուսաւորչին.

Յորում պարունակին ճառք Յոգնապատումք
քսաներեք.

Վ՟ անհաս էութե՟ն ա՟յ, և խնամոցն և սիրոյն
որ առ ստեղծուածս.

Եւ վարուց ուղղութե՟ և հատուցման գործոց.

Որ

Ի Հայրապետութե՟ Ս՟րբյ Էջմիածնի Տ՟ն Տ՟ն
Եփրեմ Ս՟րբզն Կաթուղիկոսի ա՟մ Հայոց.

Եւ ի Պատրիարգութե՟ ս՟յ Եր՟մ Տ՟ն Գաբ-
րիելի գերերջանիկ Արք Եպ՟սի.

Նաև ի Պատրիարգութեան մեծի մայրաքա-
ղաքիս Կոստանդնուպօլսոյ Տ՟ն Կարապետի
Երանաշնորհ Արհի Եպ՟սի.

Որոյ վեհափառ հրամանաւ

## ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ

Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և բա-
րեպաշտի ակնեցի մհ՟տսի Յօհաննեան
մհ՟տսի Աբրահամ ամիրայի.

Յիւրում խոկ սեփհական գործարանի.
Յամի Տ՟ն 1824. Յուլիսի 21։
'ի Հասանփաշայ խանն.
'ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

9415-57
ИМ. А. МЯСНИКЯНА



Printed in Turkey

Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Վասն Յաւիտենականին, Յաղագս Գոյութեան և Երրորդութեանն սրբոյ. և Բարի Բնութեան նորին. և Խոնարհման և Սիրոյն առ Արարածս իւր.

## Վասն Աստուծոյ.

ՄԻԱ ԲՆՈՒԹԻՒՆ և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեն. և իւր է ինքնութիւն և յիւր մէ գոյութէ։ Զի յ'իսկզբանց ունի զպատճառն գոլ հայր զորդւոյ և զսբ հոգւոյ։ Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն. և մշտընջենաւորութիւն անսահման. և ճշմարտութիւն անփոփոխ։ Կեանք է և կենդանացուցիչ ամ կենդանեաց։ Հայր է որդւոյն. և բղխօղ հոգւոյն։ Այ է արարիչ արարածոց երևելեաց և աներևութից։ Պատճառ ծննդեանն՝ որդւոյ. և բղխօղ հոգւոյն սբյ. Իսկ ինքն անծին՝ զէն անսկիզբն ծնեալ. Մշտնջենաւորն անսահման՝ զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ.

Կեան

Կեանքն կենդանեաց՝ զկեանքն կենդանատու ծնեալ։
Բարերարն զբարերարն ծնեալ։ Մարիչն զմա-
րարիչն ծնեալ ամ արարածոց երևելեաց և ա-
ներևութից։ Երկնի հաստիչ և երկնային զօ-
րութեանցն. և երկրի և որ 'ի սմա են արարածք։
Լոյս է և կատարեալ. որ զամ յամի լնու. և ինքն
ոչ թերանայ. ոչ նուազի և ոչ հնանայ. ոչ լնուի
և ոչ պակասի. որ նոյն իսկ կայ 'ի լրութե լի-
րում և յանբաւութե։ Եւ չիք ուստեք եկա-
մուտ ինչ կամ յօրինուած յանբաւն և յանհաս
և յանսահման և յամենակատար բնութե նորա.
որում ոչ հասու լինին միտք. և ոչ 'ի հրեշտակաց
երբեք իմանի։ Զի թէպէտ երագունք են ոգի
զմիտս մարդկան. այլ ուր անհնարինն կամք արար-
չին, այնորիկ սպասաւորութիւ առնեն յերկնա-
ւորս և յերկրայինս։ Եւ որպէս երկինք և ամ
զօրք նոց հաստատեալ կան բանիւն այ, և հոգ-
ւովն ամ զօրութիւք։ Նոյնպէս և երկիր լե-
րամբք և դաշտօք. ծովովք և գետովք. աղբերօք
և անտառախիտ ծառովք։ Ոչ ոք այլ արարիչ.
բայց միայն ամենասուրբ Երրորդութիւն. որ տայ
և եղեն հրամայելոց և հաստատեցան։ Որ նորին
յերկինս երկնից և խնամէ զարարածս ամ։
Որ կանուխ գիտութբն և անբաւ իմաստութբն
մատակարարէ զերկնաւորս և զերկրաւորս։
Մեծնեցուն կեանք է և կեցուցիչ. և յամէ ան-
բաւ և անհաս և անճառ։ Սէր է՝ կենդանի ե-
րանութբ լցեալ։ Լոյս է անմատոյց՝ անհեղ և
զարմանալի. Գիտութի է և իմաստութիւն։

'Ի

՚Ի նմանէ սուրբ եւ կենդանութիւն կենդանարար․ ողորմած եւ բարերար շնորհք։ Երկայնամիտ եւ դարմանիչ։ Ինքն սրբութիւն սրբոց մերձեցելոց ՚ի նա սրբութեամբ եւ արդարութեամբ։ Լուսաւորիչ է բանական բնութեան միտս․ եւ ամենայն ճշմարտութիւն է․ յանդիմանելով զմեղս եւ խրատելով զմեղուցեալսն․ զի ապրեսցին ՚ի բարկութենէն որ գալոցն է ՚ի վերայ ամբարշտաց։ Նաեւ խոստմամբք բարեաց յորդորէ զմեղս․ զի արժանաւորք լիցուք պսակաց եւ փառաց յաւիտենից ամենաշահութեցն։ Զի հանգստարար նաւահանգիստ է ձգնողաց ՚ի խնամս ողորմ սիրոյն իւրոյ․ որ յանճառ երանութեան վայելեցուցանէ զառաքինացեալսն հոգւով։ Զի մեծութիւնք անքննինք են անսկզբն էութեան նորա․ եւ ՚ի վեր է քան զիմանալիս յանսահմանութեան եւ յանբաւութեան իւրում․ եւ խնամովք տեսչութեամբն իւրով զամենայն արարածս։ Որ գիտէ զխորհուրդս սրտից․ եւ քննէ զերիկամունս․ եւ առաջնորդէ օրինօք եւ հոգւով կենդանարարաւ յօթեւանս փրկութեան կենացն անմահից․ յանմոռաց ուրախութիւն եւ յանպատում բարութիւն ժառանգել զարքայութիւն Աստուծոյ։ Նա՝ այս ամենայն առաւելութք ինքնաբոյսք՝ անսահմանելի միանձնենաւորին դարմանիչք յարարածս՝ ըստ բարերար արարչութեն իւրոյ են․ զի կեցուցիչ է ՚ի խնամս իւր որ անբաւ եւ անքննին է։ Որում ոչ բաւէ իմաստութիւն հոգեւոր զօրացն հասու լինել հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ։ Նաեւ ՚ի գործոց իւրոց եւ յերախտեացն իմանի

և ճանաչի անմարմնոց և մարմնաւորաց մի ա̃ծու-
թի ամենազօր տ̃րութե̃ նր. Զի ոպ̃ արև և
լոյս և ջեր՝ մի արեգակն ասի և ոչ այլ յայլոյ. և
ոպ̃ աղբիւր և ջուր և գետ 'ի միոյ բնութէ լինի.
ոպ̃ և միտք և բան և ոգի իմանի 'ի մարդումն.
Նոյնպէս բստ միոյ բնութե̃ է իմանալ հօր և
որդւոյ և հոգւոյն ս̃բյ զբնութիւն. Զի ոչ է
արեգակն առանց լուսոյ և ջերմութե̃. և ոչ
աղբիւր առանց ջրոյ և բղխման. և ոչ միտք ա-
ռանց բանի և հոգւոյ. Նյպ̃ս և ոչ Հայր ա-
ռանց Որդւոյ և Հոգւոյն ս̃բյ.

Գործեալ Յայտնութե̃ Հաւատոյ Սրբոյն Գրիգորի
առ Լուսաւորութե̃ն և Սիւնութե̃ն ողնաքէ Լուսաւորու-
թեանն. Նոյն առ Սէրն նորին յորորածս էակ.

## Ճառ Բ̃


աստուած է հայր՝ անձամբ և զօրութե̃.
գիտութե̃ և իմաստութե̃. արարչութե̃
և բարերարութե̃. և զա̃մ՝ իւր անծին
իսկութ̃ն ունի. Աստուած է որդի՝
անձամբ և զօրութե̃. և գիտութե̃ և իմաստութե̃.
արարչութե̃ և բարերարութե̃. և զա̃մ՝ հայրա-
ծին իսկութ̃ն ունի. Աստուած է և ս̃բ հո-
գին՝ անձամբ և զօրութե̃. գիտութե̃ և իմաս-
տութե̃. արարչութե̃ և բարերարութե̃. և զա̃մ՝
իւր անսկիզբն էութ̃ն ունի. Մի է բնութի
ա̃ծութե̃ն և անփոփոխ իսկութե̃ն. մի արարչութի

է

է և մի բարերարութիւն· մի տէրութիւն և մի զօրութիւն։ Նա՛ չէք ունէք եկամուտ և յաւելուած ինչ անսկիզբն էութեան Երրորդութեանն։ Զի նա է աղբիւր ամենայն բարեաց· և՛ ի նմանէ բաշխին պարգևք առատութեան յորդառատս ամենայն։ Որ յօրինէ և դարմանէ և սնուցանէ բարերարութեամբն իւրով զերևելիս և զաներևոյթսն։ Նա՛ ճշմարիտ վարդապետութեամբ առաջնորդէ յիւր արքայութիւն և՛ ի փառս· որք հաւատան և կատարեն զսրբութիւն ահիւն Աստուծոյ 'ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոց ոգւոյ և գրեալ է։ I տիմ I. 5։ Այսպէս ընկալաք զհաւատոցն զբան· և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ Երրորդութիւն· յարարիչն ամենայն և՛ ի հաստիչն տէր և՛ ի կենսատու շնորհն նորա։ Որ կենդանարար լուսովն և սուրբ սիրովն ժառանգորդս առնէ իւր անճառ արքայութեանն։ Որ լինի յորդորիչ և յիշեցուցիչ խոստացելոց անպատում պարգևացն, որ կայ և պահի յուսացելոց 'ի նա հաւատով և սիրով։ Աստուած զի սէր արդարութեան սապեաց զինքն առնել զարարածս ամենայն որ երևելին և որ ոչն երևելին։ Ո՛չ 'ի պէտս ինչ իւրոյ աստուածութեան արարեալ· այլ զի երևեսցին նորա փառքն· որ արարածովքս իմացեալ տեսանի անմարմնոց և մարմնաւորաց։ Ո՛չ ապա թէ առնու ինչ 'ի կենդանեաց, այլ տայ նոցա զկենդանութիւն· և ապա ոչ լոյս աչաց· այլ լոյս 'ի լուսոյ լուսաւորի և տեսանէ զնոյն։ Այսպէս տէր կացուցանէ և լուսաւորէ զարարածս իւր· զմտաւորս և զբանաւորս· և բաժանէ 'ի նոյն շնորհս ապա և կամս։ Այսպէս և բաժինք

շնոր-

շնորհաց են, այլ տր նոյն է որ յաջողէ զամ յամի.
1 Կոր. 12. 4. Այլ տուեալ պատիւ հրեշտակաց և
մարդկան զիշխանական կամսն. զի փառաւորես_
ցեն զարարիչն ած. որ յոչնչէ 'ի լինելութի
եած զամ. և զհանգամանս բարեպաշտութե ու_
սոյց գրովք սրբովք. զի կարասցեն խոյս տալ 'ի
չարէն և առնել զբարին. և դարձեալ նորոգէ
փառօք 'ի փառս.

Յայտնի երևի սէրն այ 'ի մեզ, զի վն մեր
արար զերկինս և զերկիր, և որ 'ի նս արարածք
են. այսու խնամով կացուցել զարարչութի սի_
րոյ իւրոյ. Նոյնպս և արարածքս ճշմարիտ սի_
րոյն մերձենան առ ած հաւատով և յուսով և
պատուիրանապահութբ. և լինի նց պարգևատու.
Զի յամի գոհանալով զարարչութեն նր խնա_
մոց, խոստովանօղք և դաւանօղք ճշմարտութեն
լիցուք. և կացցուք 'ի հնազանդութի հանդերձեալ
լուսոյն որ առ հաճոյս տրութեն իցէ. 'ի նեղութե
և յանդորրու անքակ մնալ 'ի սէրն որ առ ած է
ամ բարութբ. հոգւով սեամ և մարմնով. Այլ ոչ
զանուն արարչին արարածոց կոչել. և ոչ զճշմար_
տութին մոլորեցուցանել 'ի սուտս. Նաև առողջ
և անբիծ և անարատ երախտեօք սիրոյն կալ միշտ
'ի մտերմութե. Այլ այս ամ յօրինուածք իրաւանց
և արդարութե արարչին կայ մնայ առ արարածս իւր.
Վայսորիկ դադարեսցուք 'ի դատարկ և 'ի
վայրապար քննութե. և զհետ երթիցուք զխրա_
տուց գրոց սրբց հնոյն և նորոյս. Զի ես եմ
ասէ ած. և չիք այլ ոք որ պատմէ զխրատուն.

զի

զի նովաւ կեամք և շարժիմք և եմք ։ Նմա
լուիցուք որ փրկէ զմեզ յա̃մ վտանգից և փոխէ
յարքայութիւն երկնից ։ Արդ՝ եկայք որդեակք
իմ լուարուք ինձ ։ և զերկիւղ տ̃ն ուսուցանեմ
ձեզ ասէ 'ի սաղմոսերգութիւն ։ որ կոչէ զա̃մն
'ի հնազանդութի հոգևոր օրինացն ։ Եւ զի որ
պահէ զպատուիրանս իմ ասէ տ̃ր, նա է որ սիրէ
զիս ։ և որ սիրէ զիս, սիրեսցի 'ի հօրէ իմմէ ։
և առ նա եկեսցուք և օթևանս առ նմա արա_
ցուք ։ Որպիսի անճառ սիրով պատուել եղաք ։
Արդ մի՛ խոտան գտցուք ա̃յ ։ զի մի՛ անկցուք
յերանելի կենացն զոր խոստացաւ սր̃ցն ։ Զի
արդարքն ժառանգեսցեն զերկիր, և մեղաւորքն
կորիցեն զպատիժսն ։ Որք հոգւովն ա̃յ վարին
ուէ, նոքա են որդիք ա̃յ ։ Իսկ որք ըստ մարմնոյ
կեան, հաճոյ ա̃յ լինել ոչ կարեն ։ Հռ 8.8 ։ Զի
հոգևոր վարուք այսու կենօքս՝ վայելեսցուք
յա̃մ երկնաւոր բարութիւն ։ որ է ըստ մեծութե
անհամեմատ և անկշիռ այնր անլախձան կենացն
Զի անպատումէ հոգւոյն ա̃յ սէր արարչութեն
առ մեզ ։ որ ոչ լուի և ոչ իմանի ։ եթէ ոչ սիրո_
ղացն իւրոց ։ զի նո̃ կենարար սիրովն վայելես_
ցեն զբարութիւն ։ որ 'ի վեր է քան զա̃մ զմիտս և
զխորհուրդս , և քան զզօրաց երկնաւորաց ։ զի
յիւր անմահութե կարգան հանդուցանէ ։ Որոց
և ընտրութիք լինին յօթևանին ըստ արժանաւո_
րութե անքննին վայելչութեն և սրբութեն ։
Զի ո̃ հոգիք մտաւորք՝ կենդանիք են և ան_
մահք ։ և ոչ ունին զպայման հասակին և զսահման

գնա_

գնացին. զի Թէպէտ քան զերկինս 'ի վեր բարձ-
րանան և քան զծով անդր ելանեն յիշատակք
իմաստութե որ 'ի գիտութե սբ գրոց. այլ ոչ յա-
կան Թօթափել՝ անդրէն ամփոփին 'ի կեանս կեն-
դանի մարմնոց։ Նոյնպէս և մարմինք՝ 'ի յարութե
անդ՝ յանմահութե անդր փոխին յանճառ և յան-
պատում կեանսն. 'ի հրակերպեան ճառագայթան
և 'ի կենդանի լոյսն հրով հոգւոյն անշիջանելի.
Իսկ որպէս անարգ և փոքր և տխուր է տեսիլ
մարմնոյս քան զհոգւոց կենդանեացն անմահից։
Նոյնպէս և սմ նշոյլք և ճառագայթք երևելի
լուսաւորացս որ շիջանելոց են՝ չհամեմատին և
ոչ իմն առ կենդանի և անանց ճառագայթս փռց
արեգականն արդարութե. զոր զգենլոց են սրքն
յանմահական կեանսն համարակաց հոգւոց և
մարմնոց. որչ զգեցող ոք զարեգականն զլոյս լռ
բանին տն։ Արեգակն և լուսին խաւարեսցին
ասէ. և աստեղք ծածկեսցին. և արդարք փայլե-
ցին իբրև զարեգակն յարքայութեն երկնից.
Զի յորժամ Քս յայտնեսցի կեանքն մեր (ասէ
առաքեալն,) յայնժամ և դուք ընդ նմա յայտ-
նեսջիք փառօք. կող 3.4 Լուցեալք ածային հրովն
'ի լոյսն անշիջանելի և սբ. Իսկ յորժամ իւրենց
լուսովն զանշիջանելին զգենուցուն զլոյս արե-
գականն արդարութե և վայելեն 'ի պայծառութե
փառացն, կան իմն միշտ կենդանի. լուսաւորեալք
'ի սբ սիրոյն։ Նորանորեալք և փառօք փա-
ռաւորեալք 'ի չափս անչափս քնի. զի ոչ կարէ
աւել ոք զոյնս. զի եղիցի ած ամ յամի. 1 կոր 15.28

Լի՛ է անդ բարեօք անմահիւք․ ըստ բանին Տեառն
որ խնդրեաց ՚ի Հօրէ․ զի ուր դու և ես միեմք
տէ, այսպէս և հաւատացելովք և որք ՚ի մեզ իցեն.
յոհ 17.9.11. Զի այնչափ սիրեաց Աստուած զմարդիկ,
որ և զաստուածութեան պատիւ և զփառս շնորհեաց մեզ:
Արար Աստուած զամենայն զայս վասն մարդկան ՚ի ծնունդ
և ՚ի մնունդ․ և ՚ի կեանս երանաւանց և արդա-
րութեան և առաքինութեան. Այլ հանդիսիւք պատ-
ուիրանապահութեան՝ զայն զմեր զանմահ և զա-
նուշակ զաստուածեղէն փառսն շնորհէ մեզ․ փոխե-
լով յանցաւորացս՝ յանանց բարիսն և յանսպա-
ռուրախութիւնս. Այլ այս զոր ասեմք, սուղ իմն է
՚ի բիւրաւոր բարեացն. Որպէս տղայք յորովայնի
մարցն ոչ գիտեն թէ յորպիսի հասակ փոխելոց
են տեսանել և վայելել զարարածս. Այնպէս և
մեզ վերինն այն ոչ է իմանալի և գիտելի. Ըստ
բանի առաքելոյն որ ասէ, փոքր ՚ի շատէ գիտեմք
և փոքր ՚ի շատէ մարգարէանամք․ այլ յորժամ ե-
կեսցէ կատարումն, փոքրիշատէս խափանեսցի.
1 Կոր 13.9. Զի առաւել է յամենայնի և անճառ․ և
ոչ անմարմնոցն իմանալի․ թող թէ ՚ի մարմնաւո-
րացս զմտաւ ածել և կամ ասել ոք կարասցէ.
Զի ուր խաւար ՚ի լուսոյ փախչի, այսպէս և երկ-
րաւորքս յերկնաւորացն և յանմահից կենացն.
Արդ այսր լի բարութեանց՝ զամենայն բարութեան ջանաս ՚ի
մեզ ունելով, փոյթ ՚ի մեզ բերցուք կալ մնալ
՚ի մշտակայութեան հանգստեանն Տեառն որ անվախճանօք է լցեալ է.
Այլ փութասցուք յաղօթել և ՚ի գործս ցանկութեանց
և ՚ի չարեաց որ վշտագին սպառնալեօք է պատու-
հան.

հան · և հետևեսցուք հանդիսի վերնոցն մա-
քուր վարուք ։ Լինել երախտաւոր եղբարց ·
մշակել զբարի աւանդն ՚ի փրկութ̃ի հոգւոց և
մարմնոց · զի հրաւիրեալ և կոչեցեալ եմք յոր-
դեգրութ̃ե շնորհն · զի բարս բարիս տնկեալ է
՚ի մեզ ա̃յ · այլև զիշխանական կամսն · զի կամե-
ցուք միշտ զբարին առնել · զի հոգևոր օրէնքն
հաստատեսցի ՚ի սիրտս մեր · յոյս, սէր, հաւատ,
այլովքն հանդերձ յանձնիշխանական կամսն հր-
րեշտակաց և մարդկան ։ Ապ̃ զի ժառանգորդք
լիցուք փառաւորեալ կենացն, և պատուեալք
յարարչէն երանութ̃եքն որ անճառելին է ։
Տ՛ր ես անձնիշխանութ̃ե արարածոցս երկուս
դաստիարակս մ̃դ որդւոց · սպառնալիս և զաւե-
տիս · երկնչել ՚ի սպառնալեացն և փախչել ՚ի վնա-
սակարացն · և ցանկալ աւետաւոր բարւոյն և եր-
թալ զհետ արդարութ̃ե · ՚ի ձեռն ճշմարիտ և ս̃բ
գրոց խրատուց · խրատանց և արդարութ̃ե հնա-
զանդիլ յաղագս բարեձևութ̃ե ։ Զի ՚ի վ̃ր այսո-
րիկ ես զմարգարէս և զառաքեալս · զհայրապետս
և զվարդապետս ուսուցիչս, զի տեղեակ և հր-
մուտ արասցեն զմեզ բարի կամացն ա̃յ · որ զա̃մ
մարդ կամի զի ՚ի գիտութ̃ի ճշմարտութ̃ե եկեսցեն ։
Երախտաւոր լինել գործովք արդարութ̃ե հօրն
երկնաւորի և որդւոյն միածնի և հոգւոյն ս̃բյ
ճշմարտի · որ տայ զկենդանութ̃ի արարածոց ·
գործակից լինել նո̃ բարերար կամացն ։ Ս. յու-
իրաւամբք և արդարութ̃ե էած եմոյծ զմեզ ՚ի
ժառանգութ̃ի ա̃ծութ̃ե իւրոյ · ըստ առաքելոյն

բանի. ժառանգք այ և ժառանգակիցք քի լի-
ցուք աւէ. Գաղ 4. 7. Արդ՝ եթէ նմանակիցք
քի լիցուք և փառացն կցորդք, ապա մի՛ հեղ-
գայցուք ՚ի կենանս մեր. Այլ ուշ եդեալ ՚ի կեա
կոչմանն անմեհեր փութով ուսուցանել և առ-
նել զկամս նր. զի մեծ կոչեսցի այնպիսին յար-
քայութեն այ. Այսու վարդապետեալ տէրն
մեր՝ որ արարն և ուսոյց ընտրելոց իւրոց ՚ի տը-
նօրէնութեն իւրում. Գոր 1. 1. Ո՛ ՚ի հայեցեալ
յերս գնացից փրկչին մերոյ, նմանօղք լիցուք
նմա. Եբր՛՛ 12. 2.

Ա՛ռ ՚ի մարգարէից և ՚ի հայրապետաց ծանիցուք
զհայրն ամենակալ, և զորդին համագոյ, և զհո-
գին համագործ. և ծանիցուք և գիտասցուք և
ընտանասցուք հանճարոյ արարողին ողորմա-
հա՛ատով. անքակ մնալով ՚ի սիրոյ արարչին ՚ի նե-
ղութե և յանդորրու. արդարացեալք և լեալք ե-
րախտաւորք և կամարարք բարերարին. Զ՛ վա-
տակս Ճգանց՝ վկայս առնելով աա այծ. և մտեր-
մութե օրհնել զառաւօղն այմ բարութեց. և գոհանա-
լով փառաւորել զնա. Որ և տր ինքն զեւր ե-
րախտին վկայս առնի իւրոյ սիրոյն և բարերա-
րութեցն առ ընտրեալսն և կատարեալսն և երախ-
տացեալսն հոգւով. որ զեղու ՚ի նմա զշնորհսն.
Այլև դարձելոցն յապաշխարութի խոստովանութե՛
ներէ և խնամէ և բժշկէ ողորմութե և թողու
զմեղս նց ըստ բարութե գթութե իւրում. Իսկ
զամբարիշտսն և զանիրաւսն և զամբարտաւա-
նեալսն չարութե, որոց խաւարեալ են միտք և զ-
տայ.

տարացեալք 'ի կենաց այ , և առ նա երկայնամտէ
զի դարձցին 'ի զղջումն ։ Ապա թէ ոչ այսպէս ,
բարկութի և սրտմտութի կայ 'ի վր ամցն յանցուոց
արարչէն ըստ բանի առաքելոյն ։ Հռոմ 1 . 18 ։
Այս են արուեստք կենաց կենարարին և ստա-
ցողին ․ որ դարմանոք սիրոյն իւրոյ խնամէ զա-
րարածս իւր երևելեօք և աներևութիւք ։
Նա յորին բարերարութե իւրոյ 'ի սնուցանելն
և 'ի դարմանելն՝ պէսպէս շնորհք իւրոյ գիտու-
թեն և իմաստութեն ․ զի խելամուտ և հնարա-
գէտ արասցէ զմեզ 'ի պահպանութի պատուիրա-
նին իւրոյ ։ Նա զօրութբ իւրով կարող և հաստա-
տուն պահեսցէ ․ զի զօրացեալք՝ ընդդէմ կաց-
ցուք հնարիցն սատանայի ․ և անշարժ և հաստա-
տուն մնասցուք առ ճշմարտութին ։ Որով յորդո-
րեալք յառաքինութիւն լաւութբ 'ի գործս պի-
տանութե , փայլեսցուք 'ի փառսն ուր պսակէ
զմեզ իւր ։ Զի վն կենդանի երանութեցն ,
առցուք զառհաւատչեայն ճշմարիտ յուսով և
հաւատով հանդերձեալ բարեացն ․ ճաշակօք սի-
րոյն կենդանութե որ անբաւ է և անքննին ․ որ
կայ նուա 'ի նր անճառ երանութին ։ Որ գթու-
թբ իւրով խնամէ զպէտս հոգւոց և մարմնոց
ըստ մեծի ողորմութե իւրում ։ Զի զօրացեալք
'ի շնորհաց մծատուր պարգևացն , յառողջութե
և 'ի խաղաղութե փայլեսցուք ։ Նա յայսպիսի
երկայնմտութե առ նորոգումն բարւոյն այ վե-
րաբերեալք , յառաջադէմն նկրտել յերևելեան
և յաներևոյթսն ։ Փիլ 3 . 13 ։ Որպէս յաղթոյ 'ի
մեզն

մ͞ծին ա͞յ · ազատանալ և լուսաւորել 'ի փառս տէ_
րական ազատութե͞ն · և անհոգելի լինել թշնամեացն
և զերծանել 'ի մահուանէ մեղաց · և յուսով յա_
րութե՛ կալ հնալ անբիծ ո͞ք և անարատ ։ Եւ
բարձրանալ խոնարհութե͞ն փառօք՝ որով ամբար_
տաւանութիւն կործանի՛ ա͞ն յարգանօք ։ Զի
խոնարհք և հնազանդք և հեզք բարձրանան, և
ամբարտաւանք և խիստք և անհաւանք կործա_
նին առաջի ա͞ն ։ Եւ ճշմարտեալքն՝ ա͞մ ողոր_
մութբ պսակեսցին և փառաւորեսցին յարքա_
յեն յարքայութե͞ն արդարոց ։ Զի ա͞մ բարեբանք
աւետեացն՝ զհաւատացեալսն և զլաւսն և զա_
ռաքինիսն՝ 'ի դրունս ճշմարտութե͞ հրաւիրեն 'ի
ն͞ր յարգանսն և 'ի ն͞ր պսակն փառաց վայելել · զի
ողորմութբ և գթութբ են խնամեալք · որք և կա_
տարեալ ապաշխարութբ զթողութի մեղաց յա_
մենեցունց տէրունեան առնուն ։

Եւ բարեբանք աւետեաց սպառնալեացն՝ զամբա_
րիշտսն և զանառակսն և զցանկասէրսն և զան_
հնազանդսն զանարգելսն 'ի մեղս, 'ի տանջանս
յաւիտենից արկանեն յանմահ սատակումն 'ի
դժոխս ։ Զի արհամարհեցին զգութ և զխնամս
արարչին · և հեռացեալ օտարացան 'ի սոյգ ա_
պաշխարութե͞ն որ սրբէր զն͞ս և արդարացուցա_
նէր, և մերձաւորս առնէր կենացն յաւիտենից ։
Եւ վ͞ն այսորիկ ընկալցին զամօթ՝ և զանշէջ
հուրն որ պատրաստեալ է սա͞նյի և դիւաց ն͞ր ։
Եւ այս ա͞մ 'ի բարեբար կամացն են կարգեալք
'ի պէսպէս հնարս ։ Սբ և բարի կողմանն՝ խոստ

մունք

մունք աւետեաց որ 'ի մեր։ Իսկ չար և անհնա-
զանդ կողմանն սպառնացումն բարկութե և սրտ-
մտութե․ որք 'ի ձեռն հրեշտակի չարի վրէժս
ընկալցին։ Զի թէ կամեցեալ էին, կարող էին
զնիւթեալ բարկութին շիջուցանել․ և 'ի բաց
ջնջել ապաշխարութե զմեղսն ըստ մեծի ողորմութե
արարչին։ Նա այսպէս խոստմամբ բարւոյն և
սպառնալեօք մատակարարէ զմարդիկ առ 'ի ուղ-
ղութի․ զի զա̃մն կամի զի կեցցեն և արքայութեն
հասցեն։ Այլ որ ընտիրքն իցեն 'ի մեզ, նոքա
ըստ արդարութե կենացն են տաղաւարեալք։
Եւ որ բարին է բնութ յառաջ քան զյաւի-
տեանս, չէք եկամուտ իւիք 'ի կատարեալ բարե-
րարութին․ այլ կայ մնայ միշտ բարի։ Այլ որ ա-
սէ ա̃յ ցասումն կամ բարկութի կամ սպառնալիք,
զանօրինաց խրատունն ասէ․ զի զանխրատն և
զանզգամսն ածէ 'ի ուղղութի սպառնալեօք որ
լինն է բարկութե։ Զի չէք արատ կամ բիծ առ
կատարեալ բարերարութին և քաղցրութին․ ոչ 'ի
նմանէ բուսանի, և ոչ եկամուտ ուսանէք 'ի նմա
լինի չար․ զի որ նորայն է, իսկութ բարի է․ և
չէք 'ի նմա նշմար չարութե․ Զի մեղքն մեր
ցասուցանեն զա̃ծ․ և նա խրատէ զմեզ սպառնա-
լեօք․ 'ի բարկութե զողորմութի յիշելով․ զի
խրատեալք՝ գտցուք զայցելութի յարարչէն։
Զի արժան է մեզ ասել զմեղս և սիրել զար-
դարութի և զբարութի և զճշմարտութի․ որ ուրախ
առնէ զարարիչն հանդերձ երկնաւոր զօրօքն։
Եւ այս է սիրոյ նր ցոյց որ խնդայ ընդ մարդ-

 կան

կան ուղղութի՟ւ որ դառնան 'ի չար վարուցն · զի ինքն կեանք է և կեցուցիչ և սէր · ամենալից պարգևօք իւրովք · և ոչ ոք կարէ ասել զարժանն զնո՟ր զամենազօր մեծութե՟ն։ Ո՛չ ոք 'ի բիւրաւոր զօրացն երկնաւոր բանակացն, և ոչ 'ի մարդկանէ · յորոց հաճեցաւ օրհնութի՟ առնուլ և երկրպագութի։ Լա՛ ա՟մ հայհոյութիւք դիւաց և հեթանոսաց, ամբարշտաց և մեղաւորաց, ոչ հպին յանհպելի լոյս մ՟ծութենն։ Լա՛ ա՟մ բիւրաւոր բանակք հրեշտակաց և ընտրեալք 'ի մնէ յորդւոց 'ի մարդկանէ, ոչ կարեն զարժանաւորն օրհնել զա՟ծ։ Զ ի մ՟ծութի՟ն ոչ յարգի յումեքէ և ոչ անպատուի · զի ոչ փոփոխի յիւրմէ անուի փառացն · զի կեանք է և լոյս անփոփոխելի որ ոչ անցանէ ։

Բայց զարմանալի է այս, զի մ՟ա առաւել սիրոյն իւրոյ, անանուննն յանուն դայ · զի ոչ էր ոք ընդ անսկզբանն որ կոչէր զանուն նր · այլ ինքն մ՟ա բարերար կամացն, արարիչ արարածոց անուանի։ Զ ի արարիչ և բարերար, լոյս և կեանք, 'ի խնամս արարածոց զանուանս ունի · այլ զիւր անուննն ինքն միայն գիտէ։ Զ ի լոյս է անշիջանելի · և կենդանեաց կեանք · և հուր անմխութ · նիւթական հրոյս արարօղ։ Այլ ո՟վ էրն և է և կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ։ Այլ սիրոյն իւրով յայտնեցաւ արարածոց · և խնամովք իւրովք ծանուցեալ եղև ։

Այլև կոչեաց զարարածս իւր բարերարութ՟ն յաշակերտութի։ Նախ զառաքեալսն ասէ պօղոս ·

և որ զկնի այսորիկ։ 1 Կոր 12 . 28։ Յորս բաժա-
նէ Հոգին սբ զշնորհսն . գործակից առնել կոչ-
մանն որ հրաւիրեաց ՚ի յարքայութիւն։ Յայտնեց
զինուանս տեսչութե իւրոյ սիրոյն . զի լիցուք ար-
դարացեալք ՚ի հաւատոց անտի . որով մտանիցեմք
՚ի փառաւորեալ ժառանգութիւն քնի այ։ Զ է այ-
գի իւր անուանեալ զհաւատացեալս . և մշակ
զհայրն երկնաւոր . այլև զառաքեալսն ասէ մշակս.
որովք ժողովեն հաւատացեալսն և պտղեն ՚ի հն-
ձանն յաւիտենից։ Մտթ. 20 . 1։ Յով 15 . 1։ Որ յա-
ռաջին ժամէն մինչև ՚ի վերջին ժամն գործե-
ցին, ըստ յօժար կամացն՝ զառաջնոյն առին ըզ-
վարձս ՚ի դիտողէն։ Իսկ ոյք ոչ նմանեցին այ
սիրոյն որ ծագէ զարեգակն իւր ՚ի վր չարաց և
բարեց . այլ խանդացան . ոչ առն որդիս այ առին
զվարձս։ Այլ սրք ամ գործեցին զարդարութի
և զհոգևոր մշակութի . և հասին աւետեացն որ ՚ի
քն՝ ճշմարիտ քարոզութբ որ ՚ի փառս ամենասբ
Երրորդութեն։ Եւ լցին զտիեզերս կենաց բա-
նիւն . և ջրով և հոգւով նորոգեցին զամ։ Այլև
խոստովանութբ և ապաշխարութբ զփրկութի քարո-
զեցին ՚ի ձեռն շնորհաց որդւոյն այ։ Զի հայր
է բնութբ միածնին որդւոյն իւրոյ . որ ՚ի կենաց
կեանք . և ՚ի լուսոյ լոյս . և ՚ի բարւոյ բարի .
Այլ մեզ ըստ շնորհի հայր անուանեալ է։ Եւ
լոյս՝ որ լուսաւորէ զմեզ հաւատով։ Եւ կենք՝
որ կենդանագործէ զմեզ։ Որպ առ մարդիկ այս օ-
րինակ ճշմարտութե երևի . ոմանց բնութբ, և կի-
սոց խնամածութբ որդւոց հայր։ Այսպս է զմեզ.

մեր-

[library stamp, illegible]

մերձաւորս առնել ինքեան․ ըստ խնամոց արար-
չական խնամածութեան զմոլորեալսն դարձուցա-
նել յամ գիտութի շնորհօք բարերարին հօր․
Այլև բարերարութեանցն նր նման գթածութբն
լինիլ առ մեղուցեալսն․ ուսուցանել զի մի՛ խա-
պառ կորիցեն։ Այլև խորագիտութբ ածել
յուղղութի ածայինն օրինացն․ գիտել ճանաչել
զիմաստութի և զխրատ․ և ուղղել զթիւրեալսն
շնորհօք և արու՛եստիւք։ Զաշակերտեալսն հաս-
տատել ճշմարտութբ․ համբերութբ բազմաւ կալ
յամ փորձութիս ըստ բանին ածն սիրոյ։ Յորդո-
րել ՚ի նր կողման սէրն։ Գթութբ խնամածել և
դարմանել․ բառնալ զբեռինս և զկարիս բազ-
մաց․ և կոչել առ շնորհս աւազանին ապաշխարութբ։
Նաև երկայնմտութբ և հանճարով զամենեսին որ-
սալ հոգևոր ուռկանաւն առ բարեպաշտութին։
Նաև լուսաւորել զխաւարեալսն մեղօք և անիրա-
ւութբ։ Սրբել և մաքրել և ազատել ՚ի ծառայու-
թենէ սատանայի․ և նորոգել զնորն որ ըստ այ է
լուսաւորութի արդարութի և ճշմարտութի․ և
մերկանալ զհին մարդն գործովք իւրովք․ և
արժանի լինիլ պսակաց և փառաց։

Զայս արու՛եստ ՚ի հօրէ և յորդւոյ և ՚ի հոգ-
ւոյն սրբոյ ուսեալք․ որ միշտ գործակից առնէ
զմեզ իւր բարերար կամացն ըստ ճշմարտութե
աւանդեցին։ Որ զժողովուրդս անվրէպ հաւա-
տով մերձեցուցանէ յօթևանս սրբոյ։ Նա այսպս
աշակերտեալք յընտրութե անտի օրինացն կան
՚ի հաւատս և ՚ի սէր արդարութե ըստ հանդիսից

տառ

առաքինութեանցն ճշմարտից առաքելոց և մարգարէից և ուղղափառ վարդապետաց․ և որք ՚ի նոցանէն ուսան վկայք ըստ համբերութեան իւրեանց ՚ի ջանս․ խոստովանողք ՚ի սրբութեան և յառաքինութեան․ և ապաշխարողք ՚ի թողութիւն մեղաց։

Նոյսու ա̃մէ ընտրեաց ՚ի մարդկանէ իւր ժողովուրդ ա̃ծ․ լինիլ նախանձաւոր գործոց բարութեան․ և առնուլ զպսակն անեղծութեան յերկինս բարերարութեանն։ Զի սիրեցին զարարիչն և սիրեցան ՚ի նմանէ․ որ շնորհօք իւրովք փառաւորս և անուանիս արար զն̃ս ՚ի յերկինս և ՚ի յերկրի․ ուր կան և մնան միշտ։ Զի թէ ոչ էր լեալ ըստ բունի ՚ի մ̃նէ ըստ արդարութեան օրինացն, ո՛չ երբեմեալ լինէր առաքինութեանցն մտերմութիւն և քաջութիւն․ և խափանեալ լինէր հանդէս նահատակացն որ յերանելի կեանսն տանի․ և զրկեալք լինէին ՚ի կենդանի երանութեանցն ժառանգութենէ ո̃րք․ նաև զօրքն հոգեղինաց որք կան ՚ի սէրն ա̃յ։ Զի որք յառաջին խնամոցն վրիպեցան, ընդունելին զպատիժս յահեղ դատաւորէն որ ա̃ծ արժանեացն հատուցանէ։ Զի երթիցեն ասէ արդարքն ՚ի կեանսն յաւիտենից․ և մեղաւորքն ՚ի տանջանսն յաւիտենից։ Զերկաքանչիւրոյն ա̃ծային բանին յայտ առնէ։ Եկա՛յք ասէ օրհնեալք հօր իմոյ․ ժառանգեցէք զարքայութիւն ա̃յ։ Եւ երթա՛յք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենից․ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց ն̃ր։ Նախ յորդորէ և կոչէ ՚ի բարի գործս․ եկա՛յք առ իս ա̃մ աշխատեալք և բեռնաւորք։

ւորք. և ես հանգուցից զձեզ։ Այլ ուսարուք
յինէն զհեզութիւն և զխոնարհութիւն. և գտջիք հան-
գիստ անձանց ձերոց։ Այլ առաքեալն ասէ,
Նմանեցէք այ՟ իբրև որդիք սիրելիք. և գնացէք
սիրով. որպ՟ և քս՟ սիրեաց զմեզ. և զանձն իւր
մատնեաց վս՟ մեր պատարագ այ՟։ Եփես. ե. ա.
Զի որդին այ՟ զորդիս մարդկան՝ իւր ժառան-
գորդս արար. և սիրեաց ի մեզ զշնորհս հոգւոյն
առատաբար։ Զի բարերար բարբառովն կոչէ
յապաշխարութիւն զմեղաւորսն. և ի հնազանդութի
աւետարանին կենաց. զի նորոգեսցէ զհաւատա-
ցեալս լուսաւոր աւազանաւն յորդեգրութի
իւրում հօրն. որոյ բնութբ՟ է որդի. և շնորհօք
արար զմեզ եղբարս իւր։ Այլ զորսա և զբիծ
մեղացն լուծանէ զնորածնելոցս աւազանաւ ի
հոգւոյն սրբ՟. և ազատէ ի ծառայութէ չարին։ Զի
որք ի քս՟ մկրտեցան, զքս՟ զգեցան. եթէ արու
և եթէ էգ. եթէ հրէայ, եթէ հեթանոս. եթէ
ծառայ, եթէ ազատ. ամենեքին մի են շնորհօք
որդիք այ՟ և ժառանգակիցք քսի՟։ Որք իջին
ի յորդանան հոգևոր աւազանին. պարգևօք ամե-
նսբ՟ Երրորդութեն. օրհնութբ՟ և քահանայական
խորհրդածութբ՟ ծնանին հոգւով ի քս՟ լուսաւո-
րեալք. ըստ բանին տն՟, առէք զհոգին սբ՟՝ յոր-
դեգրութի հօրն։ Զի նովաւ ունին քահանայքն
իշխանութի կապելոյ և արձակելոյ։ Որք զմկր-
տեալսն հրաժարեցուցանեն ի սատանայէ առ
ի մեռանիլ զմեղացն մահ. զի մի՛ այլ ևս մեղօք
կայցեն ի յերկրի։ Զի որպ՟ մեռեալն լռէ յամ

 որ-

արուեստից , նոյնպէս և մկրտեալն եղիցի մեռեալ ՚ի մեղաց , և կենդանի արքայութեան . զի զկերպարանս Աստուծոյ ՚ի շնորհաց նորա Յարութեան առնու . յայնմհետէ զվերջինն խորհիլ ըստ ճշմարտութեան աւետարանին քաղցրութեան և հաճոյից անմահ թագաւորին . արդար և ճշմարիտ փառուք հասանիլ կենացն անմահից որ ՚ի Քրիստոս Յիսուս . Եւ վերստին ծնունդն՝ վերստին ստացեալ լինի առանց ախտից . շնորհօք և մարդասիրութեամբ ամենասուրբ Երրորդութեան . Որք ոչ յարենէ ոք և ոչ ՚ի կամաց մարմնոյ և ՚ի կամաց առն . այլ յԱստուծոյ ծնեալ . Եւ առ հաւատչեայ ժառանգութեան քո է այս , զի ծնանիմք որդիք ՚ի կերպարանս որդւոյն Աստուծոյ . և լինիմք քարոզք ճշմարտութեան ՚ի նեղութեան և յանդորրու . և կան անսասանելի ՚ի սէրն Աստուծոյ ուղիղ հաւատով և ուղղափառ խոստովանութեամբ . և որդիք ընծայեն կենարար հօրն երկնաւորի . զգործս Աստուծոյ գործելով և զկամս նորա առնելով ըստ երախտեաց բարերարին . Որք և կցորդակից լինին զօրացն երկնաւորաց առ սպասաւորութիւն մարդկան շնորհօք արարչին . այնոցիկ որք ժառանգելոցն են զփրկութիւն յաւիտենից ՚ի Քրիստոս . Եւ Աստուած որդին Աստուծոյ՝ եղև որդի մարդոյ և զգեցաւ զմեր բնութիւն և կատարեաց զարդարութիւն ամենայն՝ հոգւով և մարմնով . Նոյնպէս և մեք զգեցցուք զամենայն արդարութիւն ՚ի Քրիստոս . զի որդիք Աստուծոյ լիցուք և Աստուծոյ սիրողք . Զի մարմնացաւ որդին Աստուծոյ կամաւ . և յանձն էառ զամենայն կիրս մարդկային բնութեան մերոյ . Նոյնպէս և մեզ լիցի Աստուածեղէն զօրութեամբ

ընդ

ընդ ամ՟ կիրս անցանել առանց յանցման. զի կա-
րօղ լիցուք հասանիլ 'ի չափ հասակի կատարմանն
ք՟ի. և այսպ՟ս ճշմարտեալ կերպարանիւն այ՟, ժա-
ռանգեսցուք զարքայութիւն ք՟ի։ Եւ պիտոյ է
միշտ դաստիարակութի՟ աւետարանին 'ի հրահան-
գել զմեզ 'ի լաւութե՟ կարգս. զի յանձանձեալք
'ի շնորհաց ս՟բ հոգւոյն ճշմարտութ՟ք, աճեցուս-
ցուք զվաստակս արդարութե՟ ս՟բ սրտիւ և ուղ-
ղախոհ հաւատով յամ՟. Եւ 'ի տեսչութե՟ նա-
խախնամական սիրոյն այ՟ արթունք և զուար-
թունք եղիցուք 'ի պատրանաց բանսարկուին
միշտ. Հաստատուն յուսով և ս՟բ փարուք առա-
քինութե՟ մաքուր հոգւով և մարմնով հասանել
'ի նաւահանգիստն խաղաղութե՟ 'ի յաւիտենական
կեանսն և յանպատում բարիսն. որ պատրաստե-
ցաւ սրբոցն յանձառ սիրոյն այ՟։ Ոպ՟ արեգակնս
այս որ լուսաւորէ զերկիր և որ 'ի սմա են ա-
րարածք որք երևելիք են 'ի ծովու և 'ի ցամաքի։
Նոյնպէս և հաւատոյ ճշմարտութի՟ և սրբութի՟
լուսաւորէ զմիտս ցանկացողացն այ՟։ Եւ անձ-
նիշխանական կամօք երկնաւորք և երկրաւորք,
մարդիկ և հրեշտակք, ճշմարտութ՟ք վարդապետք
եղեն 'ի շնորհաց ս՟բ հոգւոյն ստոյգ գիտութ՟ք
ըստ արդարութե՟ օրինացն. Եւ այսպ՟ս առաջնոր-
դեալ լուսով Երրորդութեն ստոյգ պատմութ՟ք
արարչական էութեն, լցին զերկինս և զերկիր
ճառագայթիւք այ՟ արեգականն լոյս. 'ի կեանս
և 'ի փառս երկնաւորաց և երկրաւորաց։
Իսկ սատանայ որ ամ՟ անալն կամեցաւ, տեսեալ

զնոքն

զինքն ՚ի պայծառութե, ամբարհաւաճեալ ոչ կար ծէրն՝ վրիպեցաւ ՚ի փառացն և ՚ի վայր կործանեցաւ ՚ի պատուոյն. և զմարդիկ որսաց ընդ իւր ՚ի կորուստ. մնալով յուսոյն ստերխուրել ՚ի հոգւ մոլութե. և ձգեալ ՚ի սիրոյն այ ՚ի պէսպէս ցան-
կութիւնս ամբարշտութեան։

Այլ եթէ ասիցէ ոք, զիարդ ներեաց այ սատանայի այնքան տարածել զմոլորութիւն և զանօրէնութիւնս։ Ասեմ այն՝ զի ըստ արժանեացն ընկալցին ամբեան զհատուցումն ՚ի դէպ ժամանակի զփառս և զտանջանս յարարչէն արարածոց. Զի ոչ միայն թագաւորեաց ՚ի ձեռն յանցուածոյն ադամայ. այսպէս և սատանայ ՚ի վր մեղաւորաց տիրեաց. զի սիրեցին զնա մարդիկ զմոլորութի. վն այնորիկ առաքեաց առ նս ազդեցուի մոլորութե զի դատապարտեսցին. զի հաճեցան ընդ չարն։ Սակայն ոչ եթող զարարածս իւր ՚ի նախախնամական սիրոյն իւրոյ։ Այլ գալստեամբ որդւոյն որ եկն յաշխարհս և փրկեաց զմեղաւորս ՚ի ծառայութէ սատանայի, հաւատովք յաղաթուն փառաց որդւոյն այ. լուծաւ բռնութի
նր յորդւոց մարդկանէ որ տիրէր մեղօք.

Որ և յերկիւղ փրկչին շնորհօք, թագաւորեցին մարդիկ հաւատովք որ ՚ի Քս Աստուածութին. գտեալ զթողուի հոգևոր աւազանաւն և մարմնով և արեամբն քսի. ընդունելութբ հոգւոյն այյ. որ աղբիւրաբար բղխեաց զշնորհս իւր յարարածս. Զի արդարացեալք ՚ի հաւատոց անտի, զխաղաղութի կալցուք առ այ որ ՚ի քս յս

առ

տուհաւատչեայ յաւիտենական ժառանգութեն։
Զի նորոգեաց զաշխարհս անեղծութք. կամա-
ւոր խոնարհութբն իւրով. և մահուամբն եղծ-
զմահ. և յարութբն իւրով՝ զմեզ ՚ի մեռելութէ
մեղաց յարոյց. զի ՚ի նորոգումն կենաց կեց-
ցուք յուսով յարութեն ՚ի փառս ամենասուրբ
Երրորդութեն։ Այժմ և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից ամէն։

Դարձեալ Գոհ Հաւատոյ մերոյ Պարծեմք Ի [illegible]
չէին. ու [illegible] ոչ, և ու [illegible] նր [illegible] [illegible]։

Ձայն Գ



շմարտութի հաւատոց լոյս է աչաց
մտացն շարժմանց՝ խորհրդոցն յե-
շատակաց. զգեցեալ զլոյսն գիտու-
և իմաստութե շնորհաց մք հոգւոյն.
որ զառաջնորդական զմիտսն լուսաւորէ. և զբ
րովք սրբովք յանդիման կացուցանէ զաներե-
ւոյթսն. իբրև ՚ի տեսիլ աչաց արեգականն լոյս.
Զի և այն ևս լոյս՝ այսինքն երևութանայ ած-
ային տրութեն մեծութի անքննին. որ աննման
և անհամեմատ է. անպատում և անսահման. ան-
հաս և անքաւ յարարածոց. Այլ ճանաչի ա-
ներկեալ հաւատովս այսմ, որ ՚ի նեղութե և յան-
դորրու զօրացեալ հաւատովս որ ՚ի մբ Երրորդու-
թեն, կայ մնայ անսասանելի առ մարտակիցն հա-
ւատոյ։ Զի լուսաւորեալք ուղիղ հաւատովք

յա-

յանսկիզբն էութեն, 'ի մշտնջենաւոր լոյսն, յան-
փոփոխ ճշմարտութենն, 'ի կենդանարար կենդա-
նութեն, մի՛ ևս խոտորեսցուք 'ի յունայնաբանութեն
որ 'ի հայր և յորդի և'ի հոգին ա̃ծ հայհոյութիք.
Նաև զգրաւական աւետեացն շնորհաց մի՛ ի՛ւիք
թողցուք. զի հասցուք խոստացեալ երանութեցն
անմահութե և անեղծութե. և զողորմանս իւրոյ
բարերարութեն միշտ ընկալցուք զտ̃րութեն.
Նաև զարքայութեն զայս 'ի սիրտս մեր հանապազ
ունել. և զկենդանարար շնորհացն զպարգևսն
ոչ մոռանալ որ 'ի տ̃ր. Նաև զխնամակալութի նորին՝
մերոյ անգիտութե և տկարութե օգնական ունել
և կալ ընդդէմ հնարիցն սատանայի. որ յա̃մ է
մեզ թշնամի. Նաև զօրացեալ 'ի կենաց առաջնոր
դին խրատուց, ըստ անձման հաւատոց՝ 'ի կատա-
րումն առաքինութե եկեսցուք.
Նաև յա̃մ վարս՝ պարտ է զխրատ տ̃եցն 'ի միտս
ունել. յերևելիսն և յաներևոյթսն. և այսպէս
ծանիցես զճշմարտութին. Ա̃ զի ոչ 'ի քէն բա-
ւես հասու լինիլ ա̃ծութեն փառաց. Նաև ոչ
հոգեղինացն դասք հրեշտակաց. սերովբէիցն և
քերովբէիցն. զի ա̃մ երկնաւոր զօրութիքն անհաս
են ա̃ծային փառացն. Որպէս մտերիմ ծառայն
ա̃յ՝ զէութին ա̃յ քարոզեաց մեզ ոչ յինքենէ,
այլ 'ի նոյն ինքն յա̃յ. Ես եմ (ասէ ա̃ծ) որ էն.
Ելից 3.14.
Նաև այստ̃ս ուսեաց յայտարածս զլոյս ա̃ծգի-
տութեն. զի անմոլար գիտու̃բ խոստովանեսցին
մարդիկ զմիաւ մեծութի փառացն. զանծին ի-
կու

կութիւն և զանսկիզբն էութեան զճշմարտութիւն․
զանփոփոխ մշտնջենաւորութիւն․ և զանհաս և
զանվրէպ զիմաստութիւն․ զոր քարոզեցին օրի-
նօք օրինապահքն ըստ իւրաքանչիւր շնորհի․
Նաև զդժնդակ և զաղտեղի և զխստակամ զա-
պերախտին խլեցին մինչև 'ի վախճան ժամա-
նակաց․ և այսու փառաւորեցան և պատուեցան
արքանեակք բարերարին․ Զի է յորժամ առա-
քեաց ած զմովսէս առ ապերախտ ժողովուրդն,
եցոյց զխնամոց իւրոց զքաղցրութիւն․ Զի է ասէ,
գթած եմ ես և ողորմած․ երկայնամիտ և բա-
զում ողորմ․ և զղջանամ 'ի վր չարեաց արա-
րածոց․ Զի է այնպէս ուղղեսցէ զվերակացուն 'ի
շնորհէն, և նորոգեսցէ վերստին ամենակալ զօ-
րութեն և ամենաբարի սիրոյն․ որ կոչեաց զմեզ
յիւր որդեգրութեն շնորհն․ Նաև այնպէս ազատ
առաքինութբ, անարատ սրբութեն փափագանօք
մնացուցանէ լուսաւորս Տէր ամենայնիւ Երրոր-
դութիւն․ և կոչէ յորդեգրութի անփոփոխ ճշմար-
տութբ․ Զի է որն է այսոցիկ պատուեստից պատուես-
տաւոր․ աշակերտել և ստանալ նահատակս ա-
ռաքինիս, և ճշմարտութեն գործակիցս յիւրոց
արարածոց․ զի այսպս տեսուչք հոգւոց լինի-
ցին 'ի սէրն այ հեռաւորաց և մերձաւորաց․
Արդ՝ հաւատովք ճշմարտութե՝ և առաքինութեն
համբերելով, արդարութե և սրբութե՝ լիցուք հաս
տատեալք յաներեւոյթ փառսն որ անքննելին է
և անպատում ըստ աւետեաց անճառ և անապական
փառաւորութեն․ Նաև զղջաւոր սրտի և ճշմա-

րիտ

ըստ խոստովանութե՛ օրհնել զանքննին մեծութե՛
արարչին . և անշարժ մնալ 'ի յոյսն կենդանի և 'ի
հանգստարար հանգիստն ։ Զի զոր ակն ոչ ե-
տես , և ունկն ոչ լուաւ , և 'ի սիրտ մարդոյ ոչ
անկաւ , պատրաստեաց ա̃ծ սիրելեացն ։
Զի անճառ են բարերարութիւքն զոր վկայեն
ս̃րբքն բորբոքմամբ խնամոցն և կենդանարար սի-
րոյն ա̃յ ։
'Ի վ̃ր այսր ամ̃ք գոհանալ պարտիմք զարարչա-
կան խնամոցն . որ արժանի արար զարարածս իւր
այնքան բարեացն երևելեօք և աներևութիւք ։
Օրհնելով օրհնեսցուք զանմահ թ̃րութիւն 'ի
տուէ և 'ի գիշերի . անմեղկելի սրտիւ և մտերիմ
կամօք և անարատ սրբութ̃ և անմոռաց յիշատա
կօք 'ի խնամս փրկութե ։ 'Ի մեր ունելով զգա-
լեաց փառացն ա̃յ՝ վկայութե հաճոյից նր ։
Զի ոչ ճառագայթք արեգականն յառաջըն-
թացք՝ և ոչ ծաւալին . այսպէս յառաջ գան
ճշմարտութիւք էութե անփոփոխ իսկութենն ։
Որ անհաս է քան զմիտս և զխորհուրդս . և
պատմի նախքան զարարածս և յետոյ քան զյա-
ւիտեանս յաւիտենից ։ Որ 'ի վեր է քան զեր-
կինս երկնից . և 'ի խոնարհ է քան զանդունդս
ծովու . որ յանբաւ էութե կայ և մնայ ։
'Ի միոյ անակնկալն էութե բարերար կամացն ու-
նին զսկզբնաւորութի արարչին արարածք . զի այսպէս
անսահման է և անկշիռ և անբաւ և յղացակ աղ-
բիւր ։ Ամենազօր և ամենակալ . կեանք և կեցու-
ցիչ . լոյս մշտնջենաւոր . անհեղ . հզօր . ամենի-

 մաստ

իմաստ և յառաջագէտ։ Բարերար և տուօղ բա-
րեաց։ Գթած և ողորմած։ Ներող և երկայ-
նամիտ։ Ս՟ր ս՟րբց և մաքրու՟թ ա՟մ արարածոց։
Զի եթէ բիւրաւոր անմարմնոցն զօրք և լու-
սաւորք երկնից որք երեւին և որք ոչն երեւին,
և որդիք մարդկան որք 'ի յերկիրի են, և որ 'ի
ծովու անբաւ կենդանիք, և որ այլ ես 'ի նմ՟
անշունչ արարածք 'ի լեզուս գայցեն, բան գո-
վութե՟ ոչ բաւեն նր՟ մեծութե՟ն փառաց՝ 'ի գո-
վութ՟ մատուցանել։ Արդ որ այնքան անբաւ
է մեծութե՟ն փառօք, և բարձրագոյն է քան
զա՟մ իմանալիս, խոնարհի յարարածս և իմանի
և տեսանի ըստ մարթնոյ բնութե՟ իմաստօք իւրովք։
Այլ հրեշտակք որք քան զմիտս մարդկան սրա-
գոյնք են և ոչ կարեն հասու լինել նմա ըստ մա-
սին, զիարդ կարասցուք մեք երկրաւորքս հասու
լինել փառացն նր՟։ Զի ոչ ոք գիտէ զհայր,
բայց որդի. և ոչ զորդի և զհոգի, եթէ ոչ հայր։
Իսկ իմաստք կամաց բարերարին մ՟ր՝ բազմա-
ւէտ դարմանօք 'ի յանսկիզբն էութէ՟ն և յան-
փոփոխ մշտնջենաւորութէ՟ն տնօրինելին յարա-
րածս. 'ի հովուել և 'ի խնամել ամենայնս Նորո-
գութե՟ն. որ լինի է ամենարուեստ բարեօք։
Որ բազմառատ պարգեւօք և կենդանարար շնոր-
հօք զընտրեալ առաքինիսն առաքինութ՟՝ յերա-
նելի հանդիստն ժողովէ և փառօք պսակէ 'ի
մշտնջենաւոր և յանուշակ պարգեւսն։
Այլ վ՟ն այսորիկ սուղ արարից զմարդն անձ-
նիշխան, զի ըստ ընտրութե՟ հոգւոր օրինացն
փո-

փոփոխումն տացեն ՚ի փրկութեան ՚ի մեծուէ յանարգութեցս եղանել ՚ի պատիւ. յապականութեն յանապականութի. ՚ի մահկանացուէս յանմահութի աճութեն ՚ի քն յն Յորում չիք փոփոխումն ժամանակաց և հանումն առաւելոյն յարքայութեն ոյ. միշտ ՚ի մշտնջենաւորութիւն վայելելով ՚ի փառս ամենասուրբ Երրորդութեն. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.

Յաղագս ըէ՝ զի որորածի՝ յաստուածոյ ստեղծեալք են. Յորում և յանդիմանութիւն մոլար մտաց. Այլ ըն- ծայութեան ած գովութեան.

Գլ. Է

Յանհամեմատ Ամենակալ տր Երրորդութեն և յանսկիզբն էութեն մշտնջենաւորութեն հաստեցան ամ արարածք. երևելիք և աներևոյթք. Երկինք և երկիր և ամ որ ՚ի նս, ՚ի միոյ արարչութեն արարան ամ զօրութք. ամենալոյս լուսոյն և կենդանարար տրամբն. զի լի են ամ արարածք փառօք նր. Որ ամենիմաստ և ամենագէտ և ամենատես բարերար կամօք իւրովք խնամէ զարարածս. զոր յոչընչէ և՚ի չգոյէ գոյացոյց. զհոգևորս և զընչաւորս և զանշունչս. Այլ զտարերս ամ չորիւք եղանակօք յարդարեաց. բարձրութբ և խոնարհութբ. լայնութբ և երկայնութեամբ.

Որք և կենդանիս անմահս մտաւորս և բանաւորս.

նօրս · որ են գունովք հրեշտակաց երկնաւոր զօրք · որ կարգեալ են 'ի պատիւ և 'ի պաշտօն և յանդադար փառաբանութ ամենայնի Երրորդութեն ։ Կացոյց և լուսաւորս յառաջնորդ և 'ի փոփոխումն աւուրց և ժամանակաց · 'ի սընունդ մարդկան և ա̃մ կենդանեաց և բուսոց և տնկոց ։ Նաև զհուր և զջուր, զաւդ և զհողմն յարդարեաց 'ի պէտս ազգի ազգի տնկոց և բուսոց · որ 'ի պէտս մարդկան արարան իւրաքանչիւր պտղովք ։ Նա ձկունք և ազգք գազանաց պէսպէս բնութ̃ և զանազան կերպարանօք · 'ի ծովու և 'ի ցամաքի · մեծամեծք և փոքունք · քաղցունք և դառինք · շահեկանք և անշահք ։ Նմանապէս 'ի բոյսս և 'ի տունկս որ 'ի պէտս եղեն մարդկան · և ոչ 'ի պէտս արարչին արարան ։ Նա ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ, և պատուական քարինք և անարգք՝ 'ի պէտս մարդկան 'ի վկայութ̃ մեծին ա̃յ հաստատեցան ։ Նա 'ի չորից նիւթոց զերևելիս եցոյց · որք խոնաւ և ցամաք, ցուրտ և ջերմ յա̃յ կազմեցան ։ Նա 'ի նոյն նիւթոյ արարեալ զմարդն, շնչեաց 'ի նա հոգի կենդանի և անմահ և մտաւոր և բանաւոր ։ Խառնեաց զհոգևորն ընդ մարմնաւորն · զի զհանդէս իւրոյ մեծրմութ̃են ցուցցէ առ արարիչն · և ժուժկալեալ հոգւովն պահիցէ զպատուիրանս ա̃ն ահրի · զի հաճոյացեալ ա̃յ, ժառանգորդ լիցի անվախճան ուրախութ̃եցն ։ Ո՛ է արար առէ զմարդն 'ի պատկեր իւր, և տ̃ր ա̃մի կացոյց զնա ։ Ըստ պատկերի իւրոյ արար զնա · որ ըստ քո̃ն մար-

մնոյ

ծանաւոյն է իմանալ. Վա՜յ անձանց կամօք մե-
ծարեաց զմարդիկ քան զՀրեշտակս. և ելից ի-
մաստութեամբ և գիտութեամբ. և տեղեակ ամ Հանգա-
մանց խրատու Հոգևոր իրաց արար զնա առ Հա-
ճոյս տրութեան իւրոյ. զի լիցի տեսուչ արարչին
արարածոց ըստ պատուիրանի նորա. Վա՜յ զամ տա,
բերս եւ ՚ի գործակցութի արուեստից Հանճարոյ
մարդոյն, առ ՚ի շինութի Ոի ըստ գաւառաց և քա-
ղաքաց. Նորա կաՀ և կազմած և անօթ ըստ
ընտրութե արուեստից կազմիցէ առ պէտս մա-
րուց աշխարՀիս որոց պէտքն անօրինին.
Վա՜յ Հնչմանորաց անասնոց և գազանաց և թռչ-
նոց՝ եւ բարս և ուշս առ ՚ի պէտս. Որոց ուշն
զբարսն շարժէ առ ՚ի ներգործութի. Վա՜յ բարուց
նոցա վարդապետ՝ զմիտս մարդկան եդ առ ՚ի պէտս
իւրաքանչիւրոցն ՚ի մեր սպասաւորութիւն.
Վա՜յ ՚ի նոսին են մեծամեծք և մանունք. յար-
դիք և շաՀեկանք. պիտանիք և անպիտանք. զա-
զիրք և գեղեցիկք. Զի երևեսցի լո՜յն ՚ի վատ
թարէն և անարգն ՚ի պատուականէն. Ոչ խա-
ւար ՚ի լուսոյ ճանաչի, և լոյսն ՚ի խաւարէն.
Վա՜յ ՚ի գազանաց զգօնն, և ՚ի թռչնաւորաց անմե
ղանչականն. Այնպէս և ՚ի տունկս և ՚ի բոյս են
պտղաբերք. և Հոտովք և Համովք քաղցր և
դառն. անոյշ և անՀամ. զի երևեսցի լո՜յն ՚ի վատ
թարէն. որ առ դարման և առ բժշկութի կարգե-
ցան ըստ ներգործութեն այ. Վա՜յ են որ անծա-
նօթք են և են որ ծանուցեալք ըստ տեղեաց
տեղեաց. Վ՛ ինչ և ՚ի սղուհս ՚ի պէտս ինչ

Բ. իրաց.

իրաց · ըստ կազմեն 'ի յօձիցն զԹիւրականն·
Այլ այսպ՟ յօրինեալ արարչին զնախախնամու-
Թեանն յարարածս իւր որ երևին և որ ոչն
երևին. Այլ այսր ամի որ և իշխան և ժառան-
գորդս արար զմարդն. և արուեստաւոր երևե-
լեաց՝ մնոքք: Զի յոչնչէ արար զամ և Թագա-
ւոր կացոյց զմարդն և մեծարեաց · զի նովաւ
ծանիցի արարօղն և փառաւորեսցի միշտ · և
մարդն ծանիցէ զիւր պատիւն յարարչէն · որ
յանպատուութէ 'ի պատիւ վերաբերեաց զմարդն
յամ արարածոց: Որ արուեստաւոր խելամտու-
Թբն որ յարարչէն՝ կարասցէ 'ի գործ արկանել
զշնչաւորս և զանշնչաւորս · զի երևեսցի գործ
իմաստուն նր ըստ ամի: Որք 'ի հնազանդութե
են հնազանդեալք 'ի նմնէ 'ի գործ պիտոյից · և
կամ առ շինուի և 'ի զարդ · կամ առ այլ ինչ փառ-
Թամուի: Յայտնիկ վայելելով իշխանական ձու-
խութբ, փառաւորեսցէ միշտ զբարեգործօղն ·
Զի այսքան պատիւ տուաւ մարմնաւորացս ըստ
հոգեղինացն և անմահից անմարմնոց: Այլ արար
ընտրօղս արարչութեն · որ միշտ օրհնեսցեն զնա
'ի ձեռն եղելոց օրինացն զկրաւանց իշխանակա-
նօք: Հաստատեսցին 'ի հաւատս ճշմարտութե
և ընտրեսցեն զարարիչն և զարարածս 'ի միմեանց.
զդարմանիչն և զդարմանաւորն · զկեցուցիչն ամ
կենդանեաց · որովք լնու զպէտս պիտոյից ամ
արարածոց: Զի արժան է յամ ժամ կարդալ
առ նա · և խնդրել զայցելուի հոգեորաց և մարմ-
նաւորաց · և գործակից լինել բարերար կամաց

նր՟ . և անմխաս մնալ առ երախտաւորն ա՟ծ . Այլ այսու օրինակաւ փոխել 'ի վատթարէն 'ի լաւն . յանարգաց 'ի պատիւ . 'ի ծառայութէ յազատութի որդւոյն ա՟յ . և յընտանութի ճշմարիտ հաւատոյ որ 'ի հօրէ և յորդւոյ և 'ի հոգւոյն ս՟րբ . Լինել ժառանգաւոր երկնից արքայութէն և անվախճան երանութէն . Զի նա է արարիչ ա՟մ . որ արար զպաշտօնեայս իւր 'ի հոգիս և 'ի բոց հրոյ զվերին զօրութիւն . Այլ զմարդիկ յերկրէ ըստեղծեալ, աստուածն և զերն ունի դարմանօք . Որ և հրեշտակք դաստիարակին 'ի հոգեղինաց վարս ըստ նախախնամութէն ա՟յ . որ զօրէնան յօգնականութի են մեզ . Այլ 'ի մարդկանէ հաճեցաւ ա՟ծ քարոզ լինել ճշմարիտ աւանդիցն . որք հաւատարիմ գտան 'ի պատուիրանս նր՟ և հաճոյացան նմա . որ զքաղումս 'ի մարդկանէ դարձուցին յա՟ծպաշտութի և յուղղութի ըստ կամաց արարչին կենաց . Այլ որք արհամարհանօք գտան 'ի լուրն ա՟յ և նանրացան 'ի խորհուրդս իւրեանց և խաւարեցան անմտութբ սիրտք ն՟ց որպ՟ ասէ առաքեալն, հռոմ 1.21, զրկեցան յամենառատ բարերարութեցն . Զի ոչ միայն զխնամս արարչին արգելին իւրեանց անհնազանդ բարուքն և յետս ընդդէմ գնացիւքն , այլ զբարկութին ա՟յ զիւրեամբք շարժեցին յորդար և 'ի մարդասէր դատաւորէն . և անկան 'ի փառաց և 'ի պատուոյ և 'ի նախախնամութէ բարերար կամացն . և 'ի հրեշտակաց դաստիարակութէ որ զօրավիգն էին մեզ . Այլ որք 'ի մոլորմունս կացին մնացին համբե-

րու

ութեն յա͞մ նեղութեան · 'ի նոցին խնամսն վայե-
լեն աստ և 'ի հանդերձելումն։ Նաև որք մոլոր-
ցան 'ի ճշմարտութենէ անտի · բարկութիւն ա͞յ կայ և
մնայ 'ի վ͞ր ն͞ց։ Զի զտարերս ա͞մ ա͞ծ արարին
զշնչաւորս և զանշունչս · զջուր և զհուր ·
Զի ջուր 'ի պէտս կենդանեաց արարաւ յա͞յ ·
որ արբուցանէ զերկիր · և դարձեալ' ապականէ
նեխելով և նուաղելով։ Նաև հուր առ 'ի պէտս
մեր արարաւ · որ դարմանելով վառի և սպառա-
նորէ մեզ · և 'ի պակասիլ կերակրոյն, այսինքն նիւ-
թոյն շիջանի և ապականի։ Նոյնպէս և ամպք և
հողմք 'ի պէտս ևս այլ արարածոց արարան յա͞յ
և ոչ ինքեանք եղեն · և ապականացուք են յոր-
դելով և պակասելով · և լեալ և պակասեալ, զիւ-
րեանց յայլմէ լինելն ցուցանեն։ Երկինք և եր-
կիր ոչ ինքեանք եղեն · և որ 'ի նո͞ց կենդանիք
զեռունք և անշունչք · այլ' յա͞յ արարան և ապա-
կանելոց են։ Երկինք լուսաւորօք, և երկիր կեն-
դանեօք, բուսովք և տնկովք, և ա͞մ ձեռակեր-
տօք արուեստից, որ ստեղծանեն պատկերս յա-
րարածոց ա͞յ աստուածս, սուտ են և եղծանելիք
ո͞պ իմաստնոց քաջայայտ է։ Նաև ոսկի և ար-
ծաթ և ակունք պատուականք, և պղինձ և եր-
կաթ, 'ի մարդկանէ ճարտարաց 'ի պէտս ինչ ի-
րաց կազմին · հասարակաց արարչին տալովն իմաս-
տութի 'ի նախախնամելն։ Զի երկինք և երկիր
և ա͞մ զարդք ն͞ց յա͞յ արարան յոչընչէ · և չեն
աստուածք տարերքդ ա͞մ · այլ' արարածք են հա-
սարակաց արարչին ա͞յ։ Նաև լուսաւորքդ' արե-

գաղն և լուսին և աստեղք նմ̃, իւրեանց փո-
փոխմամբքն ցուցանեն զիւրեանց սպասաւորու-
թ̃ին ըստ սահմանելոյն այ̃ այլ ևս արարածոց։
Նոյն յայտ առնեն մեզ թէ՝ արարածք են օգտե-
լով և վնասելով· Ջերմամբքն ամարայնոյ և ցըր-
տուբ̃քն ձմերայնոյ· մանրապատում օգտի շահիւք
և վնասակարուբ̃ ոպ̃ է յայտ իմանալի։ Զի ոպ̃
ոչ կացին մարդիկ 'ի պատուիրանապահութ̃ին այ̃
զի ըստ հրամանի արարողին յօգտակարան վայե-
լեացեն· այլ նանրացան 'ի միտս և 'ի գործս իւրեանց։
Նյոպ̃ս և դարմանիչ արարածք փոխեցան յօգ-
տակարէն 'ի վնասակարն։ Ոպ̃ ձմեռն ոչ միայն զո-
վացուցանէ, այլ սպանանէ· և ամառն ոչ միայն
ջեռուցանէ, այլ խորշակահար առնէ։ Նոյն հուր
ոչ միայն ջեռուցանէ և զպէտս լնու, այլ այրէ
և ապականէ։ Նոյն ջուր ոչ միայն արբուցանէ
զերկիր, այլ ողողէ և վնասէ։ Նյոպ̃ս և նմ̃
դարմանք· ոպ̃ իւղ և մեղր և գինի, և այլն նմ̃
ըստ նմին օրինակի։ Նոյն չափով են խնամք դար-
մանոյ· և անչափ են տանջանք և մահք· զի սան-
ձեացէ զժպիրհ և զյանդուգն կամս ագահուն։
զանձնիշխանականին զընդվայր հոսումն և զըղն-
դումն անսանձուբ̃ և անխնայ չարուբ̃· որ է ճա-
նապարհ լայն որ տանի 'ի կորուստ։ Նոյն նեղ
և նուրբ ճանապարհ է սիրոյ և արդարուե̃ օրի-
նացն, որ տայ մտանել 'ի կեանսն յաւիտենից·
յաղագս սրբուե̃ն և ճշմարտուե̃ն, որ ընթացու-
ցանէ զճանապարհորդն իւր 'ի դրունս կենաց
և փրկութե̃։ Նյոպ̃ս երևելեօք և աներևու-

թիւք

թուք պարտ է ատեան այ անձնահարել զանձն և զզգայութիւն. և զծայրհութի և զարատութի անձնիշխանական կամացն լուծանել ՚ի չարեն և ՚ի բարին շարժել. յաղագարեալ ըստ օրինացն. Աշխել և խորհիլ և առնել զայն որ ՚ի հաճոյս այ ուսուցանէ ճշմարիտ վկայութե սուրբ գրոց. Այլ մի անկանիլ ՚ի բազմախոյզ խնդիրս ոչ վերպեցուցանեն ՚ի սէր հաւատոց. Զի ճշմարիտ գիտութիւն խմատուբք կենարար շահից լցուցանէ միշտ. որ ամրացեալ պահպանութե պատուիրանին ՚ի հեգևոր վարդապետութեն՝ կայ մնայ անսասանելի. Այլև զամուրս ամ քակէ. զհպարտացեալն ՚ի վեր գիտութեն այ. և ածէ ՚ի հաւանութիւն

հաւատոց. 2 կորն 10. 4.

Որինչ մարդն հնազանդ էր օրինացն այ, և գազանք և թռչունք հնազանդ էին մարդոյն ադամն և թէ պէրճի. Ոչ առիւծքն դանիելի որ էկաց ՚ի պատուիրանս այն ; դան 6. 28. և հուրն երից մանկանցն ՚ի հնոցին 3. 4. և այլ ծովն պետրոսին. և այլ ամ որց հնազանդեցան արարածք ՚ի կամացն այ. Այլ որք ապստամբեին ՚ի պատուիրանացն այ, ամ արարածք շնչաւորք և անշունչք հակառակ յայտնեին նմա. և երկիր ամ բուսեալք և անկեալք յապականութի դառնայ. Անար առէ պէրկերն պաղարեր աղտաղտուկ վն չարութե բնակչաց նորա. Այլ որքան հնար եղև մեզն զմարդիկ ածել յուղղութի հաւատոյ՝ օրինօք և աւետարանաւն քո. նոյնքան և մարդկան եղև ջանըստ այ հնորհին ածել հնարիւք ՚ի հնազանդութի

Գ պանա

զանտառսն և զդաշտսն և զԹփուտսն արբանե-
կել պտղոյն, և զերկիր 'ի գործ արկանել։
Նաև նախախնամութի արարչին աներևութաբար
ներգործէ 'ի մեր հնազանդութի գազանաց և ա-
նասնոց և թռչնոց և սողնոց և զեռնոց. որ 'ի
ծովու են և որ 'ի ցամաքի. Ո՛ ի եթէ ոչ էր ա-
ծն 'ի վ՛ր մեր՝ ամենեքին նոքա սատակէին զմեզ։
Նաև ուր ուրեք մինչ վնասեն մեզ, յերկիւղն այ
շարժեն զմեզ. զի 'ի հեղգութէ 'ի վարս առաքի-
նութէ վերաբերիլ փութասցուք միշտ։ Ո՛ ի գա-
զանք ոչ եթէ 'ի բնութէ եղեն չարք. այլ 'ի մեղաց
մերոց. որպ ցուցանեն օձք ընտելութբն առ Թո-
վիչսն։ Նաև առիւծ և ինձ և արջ հնազանդին
մարդկան. որպ և եզն և շուն, և այլն ամ որք ընդ-
ծովանկանին և շողոքորթեն. և անընտել գա-
զանքն վէրս առնեն անծանօթիցն և մահ։
Նաև որպ 'ի պատճառս իմեքէ կատաղութի 'ի խելան
անկանին և հանեն 'ի գարմանոցն. և յընտանութէ
'ի վայրագութի մոլորեցուցանեն 'ի կորուստ ինքեան
և այլոցն։ ՙՆոյնպէս և առ ուսմունս՝ մոլորութի
'ի խելս մտացն անկանին և ցնորեցուցանեն որպ կա-
տաղի. և անծանօթ առնեն 'ի ճշմարտութէն ամ-
բարիշտ և այլանդակ վարուք. որք ելանեն ըստ
սահման բարեպաշտութէ եթէ ոչ բժշկեցին։
Ա՛ս այստորին պիտոյ է յոյժ զգուշութի. պահելով
զանեղս և զմիտս յայնպիսեաց անտի վնասուց.
և խորհելով յօրէնս այն 'ի տուէ և 'ի գիշերի որ
փրկութն լի է և կենօք. զի մարդս մտաւոր և
բանաւոր՝ հոգևորն այ անշարժ կայցէ 'ի լաւու-
թեանն

թեանն մտերիմ հաւատալ և անարատ վարուք.
փոխել 'ի չարագոյնէն 'ի լաւն. և արժանաւոր
լինել հոգևոր առողջութեն և անբիծ սրբութեն
երախտեաց Աշխարհի սիրոյն այ։ Նա՛ ընդունել
զշնորհս առաքելական, մարգարէական, վարդապետ
ութե, քահանայութե, հաւատական կամօք.
Նա՛ լուսաւորել զամ խորհուրդս մտաց՝ լուսով
գիտութե. և արժանաւոր և երախտաւոր վարուք
հասանել 'ի նաւահանգիստն կենաց։ Զի մարդս
յաղագս անձնիշխանութեն ունի զօրութի կալ 'ի
մտերմութի որ սիրոյն 'ի այր, 'ի հնազանդութի հո-
գևոր օրինացն։ Ունի և 'ի բարեացն 'ի վայր կոր-
ծանել 'ի խորս չարեաց, և զանարգանաց անուն
ժառանգել և զանբարշաւանէ զանօրէն և զպիղծ.
Այնպէս և երկնաւոր զօրութեցն՝ է իշխանական
կամօք կալ 'ի հրամանի արարչին, և ապստամբել
այն։ Որպ իմանալի է 'ի հոգեղինացն կալ մնալ 'ի
սէրն այ և միշտ 'ի յանդադար փառաբանութե
արարչին իւրեանց։ Իսկ սատանայն 'ի նոցանէ՝
եղև սատանայ. և որք ընդ նմա, այսք պիղծք
և չար դևք անուանեին։ Բայց։ յանուանէ ու-
նին զհետևմունս բարւոյն և չարին. յայտնել
մեզ զլաւն և զանարգն։ Զի զիւրաքանչիւրոցն
ծանուցեալ զպատիւ և զանարգանս, զհետ եր-
թիցուք բարեացն և առեսցուք զչարն.
Զի լուիցուք զբարբառն երանելի որ ասէ.
ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ. որովհետև
'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վր բազմաց
կացուցից զքեզ. մուտ յուրախութի տն քո։

Նա՛

Այլ հեծանողք որ ստոյգ ապաշխարեսցեն, նոքա ևս փրկութեան հասանիցեն 'ի քս յս. Զի ոչ է պարտ հեծանողացն 'ի դարմանս մեղացն վայելել. և վստացն ընդ քաջսն, և մեղաւորացն ընդ անմեղսն, և անարբոցն ընդ սրբսն հաւասարել. Նաև կալ մնալ յիւրաքանչիւր կարգի ուսումանն. ոմն 'ի յուսուցանելն, և ոմն 'ի յուսանելն. Զի այսուհետև շնորհին հրաւիրանօք կոչեաց տր զամենեան յիւր արքայութիւն. Այլ կանոնս գիտութեն ընտրեաց զաւաքեալսն 'ի սպաս պաշտաման ճշմարիտ քարոզութե հասարակաց արարչին. Այլ կոչեաց նոքօք զբազումս 'ի ժառանգութի մծ գիտութե. Այլ վն այնորիկ բարերար կոչի և Թագաւոր Թագաւորաց և տր տերանց. որ միայն ունի նախախնամութի 'ի վր մտերիմ ծառայից իւրոց առաքինեաց. 'ի նեղութե և յանդորրու ցուցանէ զօգնութի իւր առ ապաւինեալսն իւր. Զի դատաւոր արդար է 'ի վր օրինաց. և բժիշկ հեծանողաց որք ախտացան 'ի զանազան ախտս և 'ի ցաւս. յորժամ գայ առ նա ապաշխարութեն խոստովանութք. Նաև դարմանք հոգևորք պատրաստեալ կան. խրատք առողջութե 'ի նոր գրոց. և աւետիք Թողութե և հանդերձեալ երանութե՝ այնոցիկ որք կամիցին. Որպ ամպ որ երբեմն կարկտի և հրով շարժի, և երբեմն քաղցր ցողով. այնպս և հրաման տն շարժի 'ի վր անարժանիցն բարկութբ ըստ արդար դատաւորութեն. իսկ 'ի վր արդարոց քաղցրութբ ըստ գթութեն.

Այլ արարիչն մծ և հաստիչն մր՝ 'ի գործոց ան-

տի

տի իւրոց յայտնէ զխոստովանութիւն իւր, և կա-
ցուցանէ զանուանս երախտաւորաց իւրոց զբարե-
րարն և զողորմածն. զքաղցրն և զերկայնամիտն, զըս-
տոյգն և զճշմարիտն. որ զանհերևոյթ զօրութիւն
իւր՝ երևելեօքս կացուցանէ 'ի հանդէսի. 'ի
խորս և յառաջնորդութի անհերևոյթ զօրացն և
երևելի որդւոց մարդկան. ըստ ընտրութե լաւութե
առաքինութե գործոցն սրբութե. Որ փառաւո-
րեալքն են արարչին կենդանարար արուեստիւքն.
որ գործակիցն լինի իւրովքն շնորհիւք.

Նա՛ զնոյն անուանս ստանայ արարածն զարար-
չին իւրոյ. և նոքիմբք մեծարեալ մնանէ 'ի ժա-
ռանգութի որդւոցն այ մարդասիրի. վայելել 'ի բա-
րութիս անսպառ և անվախճան ուրախութեցն,
ընդ անմահ արքային միշտ 'ի յաւիտեանս։

Շնորհալից մտաց և հաւատացելոց՝ սակաւ-
բանք խրատուց բաւական են առ ուղղութի. իսկ
անհաւատից և անշնորհաց՝ և յոլով բանք խրա-
տուց ոչ ինչ օգուտ գործեն. որոց խաւարեալ
են միտք իւրեանց, և օտարացեալ են 'ի շնորհաց
անտի այ. Որդ՝ յուշ լիցի ամցուն ածեղէն
խրատն. որով լուսաւորիմք իմանալի լուսովն որ
անստուերն է. և չէք 'ի նմա խաւարի մասն.
Արար զմեզ ած մտաւորս և բանաւորս. զի ծա-
նիցուք զարարիչն և տեսցուք զհանճարս նր. որ
յոչընչէ 'ի լինելութի եած զմեզ և'ի չգոյէ 'ի գոյ.
Նա՛ մատակարարեալ վերափոխէ զկեցեալսն 'ի
գործ պատուիրանապահութե՝ յածեղէն փառս
քոյս. Զի որք ասեն՝ եթէ այնպէս արար զմեզ
ած

ապականացուս և ոչ անապականս. մի թէ ասիցէ
ստեղծուածն ցստեղծիչն իւր եթէ ընդէ՞ր
այդպէս ստեղծեր զիս: Հռ. 9.20. Այլ ուսցուք
զմեզ ինքեանս ըստ իշխանական կամացն մեղու-
ցեալս և ապականեալս. և անմեղս և անապականս.
Որոց իւրաքանչիւրոցն յետ յառնելոյ ելանե-
լոյ՝ է պատրաստեալ հատուցումն. մեղուցելոցն
մահ, և անմեղելոցն կեանք. Որոց կենացն և մա-
հու փոփոխումն չէք. Որ անփոփոխ է կեանքն
կենդանի յարութեն կազմեալ՝ ի սիրոյն քի.
Զի զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՝ ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց ած սի-
րելեաց իւրոց ասէ ածայինն առաքեալն: 1 Կոր 2.9.
Զի յայնժամ՝ ի յարութեն ամենքն յորժամ լինի
ահաւոր ատեանն յերևելի փառաց որդւոյն այ,
երկինք և երկիր անցցեն և նոր կայ մնայ անմահ
և մշտնջենաւոր և անապառ յաւտնս յաւտնից.
Նա անհնազանդից անհաւատից ամբարշտաց և
մեղաւորաց, կազմեալ են տանջանք անվախճանք
այլ սատանայի և զօրաց նր. Զի ՝ի յերկրի այլ
՝ի ծովու ծփեցան հողմակոծեալք և մրրկեալք
մեղօք. Այլ որք հաւատարիմք եղեն և լուսա-
ւոր շնորհօք անսասանելի մնացին ՝ի պատուի ա-
րարողին, լուսաւոր ցուցան անուանք նց. զի որք
տեսին զգործս նց բարիս, փառաւորեցին ըզ
հայրն որ յերկինս է ըստ բանի աւետարանին.
Այլ արարիչն բոլորից և ամենեցուն տրն, ոչ ոք կա-
րէ հասու լինել նմա. այլ թէ բանական աւել
զամենայնի զօրութի նր զմեծութին և զիմաստութին.

Այլ

Այլ ըստ իւրում բարերարութեն եբաց զդուռն կենաց արարածոց իւրոց հաւատացելոց՝ ՚ի ձեռն Յսի Քսի և սբց իւրոց։ Որոց աշակերտեալ՝ ՚ի նոյն գնասցուք հաւատով և սիրով և յուսով։ Զի ընդ նոսին ժառանգեսցուք զպատրաստեալ բարիսն ՚ի Քս Յս ՚ի Տր մեր։ Որում ընդ Հօր և Հոգւոյն սբյ փառք յաւիտեանս ամէն։

## Հատուածք Ճշմարտութե։ [illegible]

## Ճառ Է

Յայտնի է իմաստնոց սբց որք ունին զգիտութի գրոց սբց մարգարէից և առաքելոց և վարդապետաց, եթէ մի է բնութի ամենայ սբ Երրորդութեն. զօրութբ և փառօք և մշտնջենաւորութբ։ Ամենախնամ ճշմարտութի. կեանք և կեցուցիչ մարդկան և ամ կենդանեաց. Հայր է հայրն՝ միածնի որդւոյն, և բղխօղ սբ Հոգւոյն. պատճառ նոցուն իսկութեցն ՚ի նոյն բնութե։ Երրորդութի կատարեալ. մի աստուածութի փառաւորեալ միշտ ՚ի զօրաց երկնաւորաց և ՚ի մարդկանէ. աստ և արարիչ գոլով. Զի յոչնչէ արար զլուսաւորսն, և զամ որ երևին և որ ոչն երևին յերկինս և յերկիր։ Հրեղինաց և բանաւորաց տուեալ զինքնիշխանական կամսն. զի երևեսցին պատուեալք. ցուցանելով զլուսաւորութի մտերմութե իւրեանց առ արարիչն։ Փառաւորելով զտրն փառաց՝ առնելով զհաճոյս նր.

նր̃․ և արտաքնայոց նր̃ տեղեակ և աշակերտ լինե-
լով անարատութ̃ ։ Երախտաւոր լինիլ առ դար-
մանս որդւոց մարդկան ։ Հովուել բժշկել և
առաջնորդել ։ յերկնելիս և յանհրաժեշտ պէտս
ըստ ա̃մ օգտի, գործակցութ̃ հոգւոյն ը̃ օրինացն ։
Բարի կամօք և բարի խորհրդովք և բարի գոր-
ծովք ցուցանել զգործս պիտանութեանն ։
Զի եղեալքս և հաստատեալքս 'ի բարին՝ 'ի
նոյնս կացցուք · զի աղբիւր է ա̃մ բարեաց և
կենդանութ̃ն ն̃ր խրատուց ։ Եւ զամենեցուն
զմիտս լուսաւորէ 'ի գործակցութ̃ կամաց իւրոց
բարեսիրաց · խելամտութ̃ գործոց ն̃րց՝ մտանել
'ի ժառանգութ̃ արքայութ̃ն որ յանվախճան
կեանսն տանի ։ Նա է բարերարութ̃ ն̃ր հան-
դէս աննախանձ և առատ առ արարածս իւր · զի
զամենեան կոչէ 'ի փառս իւր և յերանութիս գոր-
ծակցութ̃ ըստ իւր բարերարութ̃ցն ։ Եւ զի ա-
րարածոց կամքն հաղորդեալ իցեն նր̃ բարի կա-
մացն 'ի ձեռն օրինացն եդելոց · և լիցին աշա-
կերտք բանին կենաց ։ Զի նախ նր̃ միայնոյ ա-
մենակալ զօրութ̃ն և բարերար կամացն և ամենա-
գէտ սիրոյն գործ երևեցաւ · զի յոչնչէ արար
զերկինս և զերկիր և որ 'ի նս̃ արարածք իցեն
որ երևելին և որ ոչն երևելին ։ Երկրորդ՝ լաւութ̃ն
մտաւորաց և բանաւորաց · զի որք 'ի նոցանէ ըզ
գործս մաքրութ̃ե և հնազանդութ̃ե և սիրոյ
ցուցին, յայլ պատիւ փոխեցան յանուն և 'ի
փառս հրեշտակաց և հրեշտակապետաց · սերով-
բէից և քերովբէից և զօրութ̃նց և ա̃մ երկնա-

 ւոր

ւոր զօրացն որք փառաւորեն 'ի յերկինս ։ Իսկ երկրաւորացս տուեալ շնորհ առաքելութե՟, մարգարէութե՟, քահանայութե՟, աւետարանութե՟, ճշմարիտ վարդապետութե՟։ Մարտիրոսութե՟, կուսութե՟, սրբութե՟, կատարեալ ապաշխարութե՟։

Զի երկոքեան կողմանքն՝ միոյ բարերար կամացն արբանեակք են և աշակերտք․ և վերին զօրքն և մարդիկք։ Զի մի է ած՟ հայր, յորմէ ամ՟․ և մի տր՟ յս՟ քս՟, որով ամենայնքս․ և մի սբ՟ հոգի նորոգօղ Երրորդութի սբ՟։ Զի բանիւ տն՟՝ երկինք հաստատեցան․ և հոգւով բերանոյ նր՟ ամ՟ զօրութիք նց՟․ ոպ՟ ասացաւ 'ի մարգարէէն որ միշտ օրհնէր յարարածոց ։ Եւ է զանազան պատիւս յայս 'ի հրեշտակս և 'ի մարդիկ ըստ իւրաքանչիւրոց յօժարութեցն և սիրոյն որ առ ած՟․ զի յանուանցն ծանուցանիցեն մեզ երկնաւորքն և երկրաւորքս։ Կալ 'ի մտերմութե՟ և 'ի բարս խոնարհութե՟ 'ի բարի գործս․ յորդորել և զայլս 'ի բարին և 'ի հաճոյն ամենազօր տէրուէն․ և խափանումն առնել աղտեղի բարուցն շարժմանց ։

Զվերինն խորհիլ ըստ հրեշտակացն զարարչին կամացն․ և ճշմարիտ քարոզութե՟ զանմոլար դիտութին սփռել 'ի լսելիս մարդկան և զարթուցանել 'ի գործս բարեաց։ Եւ ունիլ զերասանակս անձնիշխանութե՟ կամաց 'ի պահպանութի պատուիրանին և յիրաւունս տն՟ ։ Որ զայս արասցէ, քերովբէի նման է․ և զնոյն պատիւն առցէ յարարչէն ։ Եւ որ զհակառակն և զդժնդակ վարս ուղղեսցէ 'ի հնազանդութի և 'ի հեզութի

և

և յանարատ սրբութն, խլել 'ի մարմնոյ և 'ի մտաց զանիրաւ բռյսս որոմանն չարութե և ամ փառաւորա րաց, և ցանկացօղս առնել ածային օրինացն արդա րութե, զսրովբէիցն զկարգ ունի և զպատիւ.

Իսկ որ արթուն կայ 'ի հանդէս առաքինութե սբ և անարատ. և ոչ պղերգանայցէ 'ի յօգտակա րացն, 'ի հոգևորացն և 'ի մարմնաւորացն, ըզ զուարթնոցն զկարգ ունի. և զփառս և զերա նութիւն գտանէ.

Իսկ որ զկորուսեալն գտանէ և զգտեալն պա հէ, և զամբոխեալսն բարկութ և ամբարտաւա նութ' զիջուցանէ 'ի հաշտութի, նմանեալ լինի որդւոյն այ և ժառանգակից ըստ խրում բանին. Երանի խաղաղարարաց ասէ, զի նոքա որդիք այ կոչեսցին.

Իսկ որ զօտարն ընտանեցուցանէ, և զգլորեալսն 'ի մեղս' կանգնէ. և զհիւանդացեալսն անհա ւատութ և երկմտութ' բժշկէ ուղիղ հաւա տովք և բարի գործովք. և զաղտեղեալսն և զխոտացեալսն հոգւով և մարմնով' սրբէ սուրբ խոստովանութ ըստ աւազանին շնորհի. որ գա ցէ յապաշխարութի գործակցութ հոգւոյն այ, լինի նորուն բնակարան. Ըստ բանին' դուք տա ճար այ էք շինեալք խրատմբք և արդարութ և սրբութ. և հոգի այ բնակեալ է 'ի ձեզ. որ կայ խորովք ածային փառօքն 'ի սրբեալսն.

Իսկ որ զանձրյոյն' յուսով նորոգէ 'ի յոյս կե նացն յաւիտենից. և զհարթուցեալսն և զհե ռացեալսն հանդարտեցուցանէ և զետեղէ եր

կայն

կայնմանութբ̃ ʼի համբերութի · և գթած խնամոցն յանձանձէ · և շնորհօք և ողորմութբ̃ ուղղէ ʼի լաւագոյնսն ʼի լուսաւորութի ա̃ծգիտութ̃ և մաքուր վարուց · ժառանգորդ լինիլ ք̃ի յարքայութե̃ն երկնից։ Որ նմանեցաւ նորին մարդասիրութե̃ն · և ʼի խնամս ո̃ր Երրորդութե̃ն վայելեսցէ յերանելի կեանսն։ Ո՜վ երախտեօք ʼի փոքուն հաւատարիմ եղև ա̃յ՝ հօգևոր դարմանովքն և մարմնաւոր։ Ո՜վ քաղցեայ էի և ետուք ինձ ուտել · ծարաւի էի , և արբուցէք զիս · և որ այլ ևս ։ Ո՜վ որովհետև արարէք միում ʼի փոքրկանցս , ինձ արարէք ասէ · ահա այսպէս է խնամք սիրոյն նորա ʼի մեզ։

Իսկ որ ծուլանան ʼի բարի գործս , և արհամարհանօք արհամարհեն զօրէնսդիրն · և որոշեն զանձինս ʼի տ̃նէ հպարտութբ̃ և անհաւանութբ̃ , ապստամբեալ ʼի բանէն կենաց · ամբարտաւանեալ ը̃ դէմ ներբող տ̃րութե̃ն · և ամենակալ զօրութե̃ն · և լինին յոլովից պատճառք կորստեան վրիպիլ ʼի յաւիտենից բարույն և յերանելի յուսոյն , սատանայի նմանեալ՝ զնոյն պատիժս տայցեն յաւիտենից տանջանացն ։ Որ աստէն իսկ դրաւեալք են ʼի ներքոյ ահաւոր սպառնալեացն արդար դատաստանին · յաղագս ապախտաւոր և անառակ վարուցն չարութեանն։

Իսկ որ ստահակին և մոլորին ʼի չարիս · և նենգելով լինին բանսարկու · և մոլորեցուցանեն զայլս յուղիղ հաւատոց և ʼի բ̃ր վարուց · և նախանձին ընդ բարեգործս · և լինին խռովարարք

և

և բարկացօղք և պղտորիչք պարզամտաց . զդի-
ւացն զկարգ ուխտին, և նոցին են ժառանգորդք
’ի յաւիտենից տանջանսն . եթէ յանմարմնոց, և
եթէ ’ի մարմնաւորաց:

Իսկ որ անխտիրն է ’ի յաղտեղութ՟ի . և վարեալ
’ի պէս պէս ցանկութ՟իս՝ պարարի ոչ պատճառ .
բազմատոռէ անօրէնութ՟եք . ’ի գողանալ, ’ի ստել,
յերդնուլ, և բազմամասն դժնդակութ՟ պատճառ
լինի բազմաց ’ի կորուստ, Այնպիսին զաղտեղին
զպիղծ անուն ժառանգէ . և հրաժարեալ ’ի կեն-
դանի յուսոյն և ’ի սրբութ՟ փառացն, ելանէ ’ի
խաւարին արտաքին հրախառն . ուր որդն ն՟ց ոչ
մեռանի և հուրն ոչ շիջանի . և լինիցին ’ի տե-
սիլ ա՟մ մարդկան: Եսայի 66.24:

Իսկ որ անփոյթ են ’ի չարութ՟ի . և լի են անհրա-
ւութ՟ յերեւելիս և յաներեւոյթս . յանառակութ՟իս
և յանզգամութ՟իս . ’ի յարկանել ’ի նեղել ’ի սպանա-
նել ’ի կորուսանել, Այնպիսիքն զանողորմ չա-
րագործացն զպատուհասն ընդունիցին . զի չարքն
չարեաւ կորնչին:

Իմացա՞ր բաց ի բոլոր քանչելեաց խորհրդոց և գոր-
ծոց զհատուցումն արդար կշռօքն ա՟յ: Զի է
դա՟ւ պատուիրան մարդկան՝ կալ հաստատուն ’ի
յանարատ սրբութ՟ . և գործել զարժանն և ըղ-
լաւ՟ն . և կալ մնալ անշարժ ’ի լաւութ՟ն ոչ ասացաւ:
Զի է այնպէս կարասցեն ընդունակ լինել շնորհաց
մարդասիրութ՟ . և խորհրդակից լինել բարերար
կամաց տրութ՟ն՝ Ճշմարիտ քարոզութ՟ . զարթու-
ցանել զա՟մ մարդ՝ ’ի քնոյ յանփոյթութ՟ի կենացն

յուսոյն․ սպասել ամենեցուն խոստացելոց․ և
ժառանգորդ լինիլ անքննելին փառացն որ ար-
դարոցն է․

Այլ որք հրաժարեն 'ի պատիր խաբէութէ մարմ-
նաւոր վարուց․ լուացեալ զմիտս շնորհօք 'ի
խղճէ չարեաց․ սոյդ զղջմամբ՝ ապաշխարութե
վարուք․ ատել զչարն և սիրել զբարին․ խափան
լինել մոլար խաբէութե ուսմանն․ և ընծայաբեր
լինիլ ամենասուրբ Երրորդութենն․ Նոյնոն զանուն
առաքելական ամենեցուն նոր կտակարանաց․ և
ժառանգորդ լինին արքայութեն երկնից․

Այլ որք նախ զաւնելն ընծայեցուցանեն բա
ուղիղ քարոզութեն․ որոց գործքն վկայեն քարո
զութեն․ այս և լսողացն ընդունելի են․ առ 'ի
խափանումն ստապատիր խաբէութեց մոլացն
շարժմանց․ Զի որք քրիստոնեայքն են [illegible]
[illegible]ն, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանեն կա-
րեօք և ցանկութք հանդերձ․ Այլ այնպիսիքն են
բնակարան ածութեն․ վկայ ք՝ ճշմարտութե ամ հա-
ւատացելոց․ Գաղ 5․24․

Իսկ որ միամտութք և սրբութք ընտրեն 'ի սրբել
զմիտս և զխորհուրդս և զմարմինս 'ի խղճէ չա-
րեաց․ յերևելեաց և յաներևութից․ արժանի
հոգւոյն սբյ կոչմանն առաքինացեալք․ ամ զքաջ
նահատակս անարատ սրբութք յանդիմանել մեղս
զմարմնաւոր վարուց զշարժմունսն․ և քակել
զկիրս մարմնաւորս․ և շինել զհոգևորսն զամբը
ծութ և զամ արդարութ փափագանօք և անմեղ-
կելի․ 'ի շնորհաւոր գիտս փրկութե մերձաւորին․

և հեռաւորին։ Որք այսպիսի վարուք հանդի-
սանան, նոքա են արժանիք օծմանն հոգւոյն սբյ·
քահանայանալ այ և ընծայել ժողովուրդ տն ·
նախանձաւորք գործոց բարեաց և պաշտօնեայք
սբ Երրորդութեն · 'ի ձեռն շնորհաց աւազանին՝
մարմնոյ և արեանն քսի կցորդք ըստ որդեգրու-
թեն շնորհին։ 'Ի բաց ընկեցեալ զհին մարդն,
և նորոգել զնորն ըստ պատկերին այ · արդար և
սբ, մեկնեալ 'ի չարեաց·

Իսկ որք կամին զանց առնել զանցաւորօքս, և
առնուլ զմշտնջենաւորսն 'ի ժառանգութի, ատե-
ցեն զվարս մարմնաւորս, և սիրեսցեն զվարս
հոգևորս։ Նահատակեալք բազում առաքինու-
թբ · զի առցեն զանուն խոստովանողաց և վկայ-
ից՝ սբ մարտիրոսացն որ երանութբ պսակին։

Իսկ որ զգեցեալ են զանարատ սրբութի կու-
սութե, և զմիամտութի ըստ հաճոյից բարերար
կամացն, և ըստ արդար օրինացն և կրօնից սբ
հարցն։ Նոքա են որ մտանեն յառագաստն լու-
սոյ և վայելեն 'ի փառս անմահ Թագաւորին։

Իսկ այն որ անկեալ է 'ի փորձութիւնս մեղաց
աղտեղութե և դժնդակութե 'ի խաբս սատա-
նայի · և յիշեսցէ զբանն կենդանի որ ասէ, դար-
ձարուք առ իս 'ի մեղաց և խոստովան լերուք և
ապաշխարեցէք · և ես դառնամ առ ձեզ յողոր-
մութե շնորհս · 'ի բժշկել 'ի փրկել և կեցուցա-
նել։ Մաղաք 3·7։ Ո օրացեալ 'ի տնէ՝ յաղթես-
ցէ սովորական ցանկութեցն որ ըստ հոգւոյ և
մարմնոյ է մարտ բռնացեալ։ Եւ հանդիսացել

յա-

յառաքինութե մրցմունս, յաղթեացէ և յամօթ արասցէ զխշխամն մեղաց, առ հաւատչեայ յուսոյն և անեղանօր յարութ̄ն։ Զի է ՚ի ձեռն մարմնոյ և արեան տ̄ն՝ ազատեալ լիցուք ՚ի տանջանացն, և ժառանգորդ լիցուք արքայութ̄ն։ Զի է փառք պատուի և խաղաղութ̄ի որ գործեն զբարին. և բարկութ̄ի և սրտմտութ̄ի և նեղութ̄ի որ գործեն զչարն։ Տեսանես ՚ի յայդ չափ ընտրութ̄ց և քննութ̄ց, որ դատնոյ ողորմութ̄բ ՚ի խնամել զարարածս իւր. և զմոլորեալսն դարձուցանէ. զգլորեալսն կանգնէ. զբեկեալսն պատէ. զհիւանդացեալսն բժշկէ. զաղտեղեալսն մաքրէ արտասուօք. զերկմիտսն հաստատէ հաւատովք. և զամենեսեան լուսաւորէ։

Որդ՝ ո̄վ բաւական է բարեաց բարերարին զոհութ̄ի ընծեռել. որ յամ̄ կողմանց փութայ կեցուցանել զարարածս իւր։ Զի սպառնալիսն ո̄պ հուր վառէ ՚ի վ̄ր ամբարշտաց և մեղաւորաց. անարբոց և պղծոց. զի դարձցին ՚ի չարեաց և ապրեսցին ՚ի բարկութ̄ն որ գալոց է։ Իսկ զանեալսն իբրև զայս ծաւալէ. ՚ի զարթուցանել և սթափել ո̄պ ՚ի քնոյ. զի ՚ի բարիս վայելեսցեն. և զանանց կեանսն ժառանգեսցեն յարարչէն։

Իսկ որ այն դատնոն և ապաշխարեն, պատրաստեցաւ նց̄ ամանջանք ՚ի տ̄նէ ըստ իւրաքանչիւրոցն։ Զի է ո̄պ գթած է անուննն ՚ի խնամելն և ողորմած ՚ի շնորհելն և երկայնամիտ ՚ի ներելն և ս̄րբ առ ՚ի սրբեալսն և լոյս առ ՚ի լուսաւորեալսն։ Նայնպս և ճշմարիտ անուն է նր̄՝ արդար դատաւոր.

ւոր · որ ըստ իրաւանց հատուցանէ բարեաց գոր-ծոյն և չարեացն · Որդ՝ զորոյ զգործն ունի ոք և զկամս, զնորին անուն և զփառսն ժառան-գեսցէ · կամ զանարգանան զչարեաց զպատիժն ՚ի յորդար դատաւորէն · Զի ով զերկրաւորս իրաւարար ասեմք որ զչարագործն և զպիղծն և զանիրաւն ՚ի բանտս և ՚ի կապանս և ՚ի սատակումն մարմնոյ մատնէն · զի խաղաղութի տացէ աշխարհն և իւրքն փառաւորեսցին · Նոյնպէս է իմանալ

և զայ դատաստանն ·

Ա՛ մի՛ ոք երկմտիցէ թէ ո՛վ գիտէ զայս, եթէ պատիժք մեղաւորաց ՚ի մարդասիրէն այ պատ-րաստեալ են · ՚Ի սոյն յիշեսցէ զատակումն · որ ՚ի ջուրցն հեղեղէ ամ շունչ կենդանի սպա-կանեալ կորեաւ · բաց ՚ի տապանէն որ յայ հրա-

մայեցաւ շինիլ ·

Ապա եթէ այսմ ո՛չ հաւատասցես, երթ ՚ի սո-դոմ և ՚ի գոմոր · և զհինգ թագաւորացն զտունս և զանցս տեսցես զաղէտիցն ըստ պատմութե · որ տեղաց ՚ի այնէ հուր և ծծումբ յերկնից · և այրեաց զմարդ և զանասուն · զթռչունս երկ-նից և զձկունս ծովու · զքար և զհող և զան-տառս : Ապա եթէ զայս հեռի համարեսցիս, աշ-դէն իսկ տե՛ս ընդ ժամանակս ժամանակս զսով և զսուր և զգերութիս զմահս տարաժամս և ըզ-մահ անասնոց · այլև զհարուածս և զցաւս և ըզ-հիւանդութիս չարաչարս : Այլև խռովութիւն հօր առ որդի · և որդւոց անհաւանութիք · և եղ-բարց և սիրելեաց առ միմեանս ատելութիք · և

դառն

դառն հարուածք և մահ վ՟ն մեղաց այսոցիկ։
Բայց յայսմանէն մեք գիրք ա՟ծեղէնք թէ գի-
տութի՟ ճշմարտութեան և իմաստութե՟, և հնարք
արուեստից ըստ բարուց շարժեալ յամենակալ
հօրէն և յարարչէն և՚ի փրկչէ թագաւորէն՝ մա-
տակարարի յարարածս ա՟մ։ Զի նա է տուիչ
բարեաց և աղբիւր կենաց և փրկութեան. և
շնորհիչ երևելեաց և աներևութից։ Նա՛ իմաստքն
որ ՚ի մարդիկ, ՚ի նմանէ յառաջագային. պէսպէս
արուեստից գիւտք և հնարագիտութիւք։
Զի նախ ՚ի միոյն գանձէն հնարք արուեստից,
և ապա յիշատակ իւրեանց փոխադրեալ լինին
՚ի զգայութիւն. ճշմարիտ տեղեկութի ստացեալ
՚ի շնորհաց տուողէն։ Ո՟պ Բեսելիէլըն և նորին
ընկերացն առ ՚ի շինութի խորանին։ Զի հոգին
ա՟յ զեղոյր ՚ի նո՟ զազգի ազգի հանգամանս ար-
ուեստից. որ նախ նոքա եղեն ճարտարագործք
արուեստից ՚ի պարգևաց հոգւոյն, և ապա այլք
՚ի նոցանէ եղեն աշակերտեալք մինչև ցայսմ ժա-
մանակի։ Զի որ զդարբնութիս ուսեալ կամ
զոսկերչութիս կամ զայլ արուեստս, ՚ի միտ ունի
զհանգամանս իւրեանց և զկահուցն. և խոկայ միշտ
զի կարասցէ գեղեցկագոյնս յօրինել զէնս և
զարդս. կամ այլ ինչ գործուածս որ ըստ աշ-
խարհիս է իմանալ։
Նոյնպէս և բժիշկն որ երակօքն իմանայ զցաւս,
և դեղօքն զառողջութի շնորհէ ՚ի շնորհացն ա՟յ։
Այլև հանդերձարարք և շինողք և հողագործք
և խորտկարարք, և որ այլ ինչ արուեստք ՚ի պէտս


մարդ-

մարդկան ընտանութեցան, ո՞չ ապաքէն 'ի շնորհացն այ ունելին զմտաւորութի. որ գոլով և պատուոյ
են արժանիք և փառացն որ առնուն.

Իսկ որ ծուլութ՝ արհամարհանօք անցանեն ընդ հնարագիտութի արուեստիցն, անպիտան առնեն զարուեստն. Նա և ուշն յիշատակաց արուեստիցն՝ սառ յանկուցանէ 'ի ծուլութէ և 'ի տգեղութենէ որ 'ի խանգարումն երևութանայ. որ անհանճարից արուեստք՝ անգտանին. և ամօթալից լինին և անկանին 'ի տաղտս և 'ի տուգանս և
'ի տանջանս անարգելով յամենայնի.

Այնպէս և 'ի կարգ քրիստոնէութե և ծպատուե է զգուշանալ. զի ամ իմաստութ և հնարագիտութ ուղղեացէ 'ի բարին զգայարանսն լաւագոյն վարդապետութ հոգևոր օրինացն և ըստ հանճոյից բարեբար կամաց արարչին. զորս և ըղգիշեր 'ի կամս ան խորհիլ. Յուշ առնել մտաց և զգայութեց զերկիւղն այ. զի առ ամ պէտս բարի գործոց պատրաստիցէին խորհիլ. Նաև ունել զբարիսն առաջնորդութ վերնատու ողին. և 'ի հնարս մտանել առ 'ի գրաւել յինքն զյիշատակ մեծի գիտութեն այ. Ամ ժամ 'ի կամս ան նայիլ. և 'ի նորասէրն և յերկիւղն կալ միշտ. Որ կարող է զանգոյն 'ի գոյ ածել. և զանարգան պատուականս առնել սոցա խոստովանութ. և իմաստութ առաջնորդել ըստ արուեստեն. Արդ հանապազ 'ի մշակութե հանճոյից ամենակալ տրութեն. անշարժ հաւատով և անբիծ վարուք. Նաև ակնկալութ յուսոյն կենաց՝ զամենայնն

անդր

անդր գանձել․ ուր ոչ ցեց ուտէ և ոչ ուտիճ
ապականէ և ոչ գողք ական հատանեն յամենայն
պահպանութենէն։ Եւ քաղցր յիշատակօք մեր սէ-
րոյն անքակ կալ ՚ի նմանէ անպարտ սրբութբ։
Նայել երախտաւոր լինիլ առ հեռաւորս և մեր-
ձաւորս․ ՚ի նեղութե և յանդորրու մնալ միշտ
՚ի ճշմարտութե։ Խլել ՚ի մտաց և ՚ի զգայութեց
զսուտ և զպատիր խաբէութեցն զշարժմունս
զեկամուտ նենգաւորին և չարին աղտեղի ցան-
կութբ և խիստ ամբարտաւանութբ։ Եւ զըղջ-
մամբ և ապաշխարութբ լուացեալ ՚ի խղճէ չա-
րեաց, և ստացեալ կամս բարիս առ ած մարդիկ,
փութալ պահել զպատուիրանս այ․ և ընդ այ սի-
րոյն կապիլ միշտ․ և անդ զմիտս ամբառնալ․ և
զնր գութն ՚ի մեզ ձգել կենդանի խնամօքն իւ-
րովք։ Եւ ահիւ նր զգուշանալ․ և զգաստանալ
մտերիմ սիրով․ արթուն և պատրաստ լինիլ յամ
երկրաւոր իրաց․ զի խափանիչ և վրիպիչ են շա-
հաւոր օգտութեց։ Ոչ խօսիլ զնախատականն զոր
չէ արժան․ այլ խօսիլ զճշմարիտն և զօգտակարն։
Եւ ոչ լսել զլուրս խարդախութե․ այլ որ յամե-
նայնան յորդորէ ՚ի սէրն այ։ Եւ ոչ նայիլ ուր
չէ արժան ՚ի շռայլս մարմնոյ ՚ի զբօսանաց անտի։
Եւ առատամիտ լինիլ յագահութե․ և աննախանձ
և բարերար լինիլ առ ամենեսին․ և օգնական
տկարաց հոգևորաց և մարմնաւորաց։
Եւ ոչ է արժան զաղանդս խուզել․ և ՚ի նոսա
դեգերիլ ՚ի կորուստ։ Եւ զգուշանալ պարտ է
յամ անօրէնութե․ ՚ի բարկութե ՚ի հարկանելոյ,

՚ի

'ի զրկելոյ, 'ի Թշնամանաց, յերդմանէ 'ի սուտ, յախտակալութէ, 'ի չարութէ, 'ի նենգութէ, և յամենայն բանէ· զի մի՛ բարկասցի տր և կորիցեն որ զպայպլիս ունիցին։

Իսկ որք ընդդէմ այսոցիկ զառաքինութի դնիցեն, մեծարանք և պարգևք լինին նց 'ի տնէ· և զերանութիւն յաւիտենից ժառանգեսցեն։

Ջ է տմ շարժմունք արտաքոյ որ 'ի մարդիկ 'ի կամաց շարժին 'ի լաւն կամ 'ի վատթարն· զի իշխանականն ունի զերկաքանչիւրոցն· կամ զբարւոյն կամ զչարին։ Եւ բազմադիմք են սերմանք բարւոյն 'ի մարդիկ· զի աներևելի սիրոյն այ երևելի ցուցցէ զմիտս բարւոյն։ Եւ առաւել բարեօք փառաւորեսցի տր 'ի պարծանս նոցա· որք վայելեսցեն զկեանս աւետեօք։

Իսկ դժնդակ վարուց և աղտեղի որ 'ի սերմանէ չարին բուսանին 'ի միտս, յայտնին 'ի բծից ընկալեալ սերմանքն ըստ ընտրութե օրինացն· որք զհաստացումն ընկալան 'ի տնէ զանշէջ հուրն և զանմահ որդունքն· զի ատեցին զբարին և սիրեցին զչարն· զի ընտրութիք են յայ բարւոյն և չարին։

Ջ է որոց կամքն շարժին զգայութքն 'ի բարին կամ 'ի չարն, զնոյն և զհաստացումն ընդունիցին։

Սիրոյն այ սրբութի հաստատի· բարի խորհուրդ· ուղղահաւատութի· բարեգործութի· արդարութի· ճշմարտութի· եղբայրսիրութի· խոնարհութի· հեզութի· հնազանդութի· գործասիրութի· և որ այլևս են առաքինութիք· շահաւոր օգտիւք պահպանեալք երևելեօք և աներևութիւք։

Զգթութի՟ն բարի կամօք սիրել. զողորմութի՟ն քաղցր շնորհօք. երկայնմտութե՟ զուարթ. յօժարութե՟ անձանձրոյթ. յաղօթս արթութե՟.

պահօք պնդիլ. և զայս պահել յայտնիկ. Փոյթ ունել միշտ և զայսոսիկ բարւոք ցուցանել զանձնս. մտերմութե՟ սիրոյն որ առ հայրն երկնաւոր և որդին միածին և հոգին սբ համագոր տրու՟ն. Նաև հակառակ լինել դժընդակ չարին և՝ի բաց մերժել. զչարութիւ, զչար խորհրդածութիւ, զչարագործ անօրէնութիւ, ըղպիղծ անառակութիւ. զսուտ պատիր ցանկութեց երդմունս, զանհամբոյր զբարս զանհաւան, զչարժիրն 'ի բարկութի սրտմտութե՟, զստահակութի 'ի թշնամանս, զծուլութի 'ի մեղկու՟, զլկտու՟ի և զանառակու՟ի, զոխակալու՟ի և զնախանձ, զորվայնամոլութի և զարբեցութի, զփառասիրու՟ի և զանբարհաւանութի հանդերձ այլ բծիւք և անխնայ չարալք և անխտիր աղտեղու՟ որ անարգանօք լի՛ է. Այսոքիկ են դժնդակ վարք և փաստակար որոմանն սերմանք. որք առանձին բընութե՟ չարաչար կոչին և ոչ բարի. այլ 'ի միտսն ունին բարի և չար. զի սիրոյն այ լինի սիրել զբարին և ատել զչարն. Չար է նախանձիլ ընդ բարիսն այլոց. իսկ նախանձիլ և ունել զբարին բարի՛ է. և նախանձն նոյն է. Այնպէս և առ ամենեսին բարիս է խմանալ զնախանձ և զցանկու՟ի. Զի ամենառատն բարերարի զբարին է սերմանեալ 'ի մարդիկ. և յիշխանական կամսն թողեալ. որք կամիցին վարիլ 'ի բարի կամ 'ի չար.

Արա-

Սրբութիւն 'ի հանդէս բարեպաշտութեան, և հեշ-
տութիւն 'ի չարն հակառակ է միշտ։ Եւ՛ կատա-
րեալ վարուց բարութեան՝ աստուածսիրութիւնն է և եղբայր-
սիրութիւն․ զի սէր ոչ խորհի զչար։ Իսկ չարեաց՝
է անաստուածութիւն և անձնասիրութիւն կառավար ըստ
առաքելոյ բանին․ ստրկանալ յոյս և առնել զկամս
մարմնոյ և մտաց․ և լինել որդի բարկութեան։ 2 Կոր
5․6։ Եւ՛ գործեալ առէ, կենդանի եմ ոչ ես,
այլ կենդանի է յիս Քրիստոս․ այսինքն է հաճոյքն
Քրիստոսի․ արդարութիւն, սրբութիւն, ճշմարտութիւն։
Գաղ 2․20։ Եւ՛ գործեալ առէ լալով զԹշնամեաց
խաչին Քրիստոսի․ որոց կատարածն է կորուստ․ որք
զերկրաւորս և եթ խորհին։ Փիլ 3․18։ և խօ-
սքն և առնեն զչար, և զլցեալսն ամենայն անիրաւութեամբ
և գժնդակ չարեօք։ Իսկ ընդդէմ չարին զբա-
րին գործել՝ պակաս և փառաց և պատուոյ է
արժանի ընդ մարդկան ամենայն։ Իսկ որ զաստուած սիրել ա-
սէ և ատէ զեղբայրն, սուտ ասէ, որ գտանէ և կո-
րուսանէ, և լնու և հեղու․ զի յամենայն ժամ պարտ
է զբարեաց զհետ երթալ, և ընդդէմ կալ չա-
րեացն մարտից։ Որ առիթ լինի չարին, զփոխա-
րէն չարին տացէ․ այնպէս և բարեացն առիթք
բարիս ընդունին յամենակալ տեառնէն և ժա-
ռանգեն զերանութիւնս։ Ո՛վ ի խափանիչք բար-
ւոյն չարասէրքն՝ յանշէջ հուրն ընդ դևսն պար-
տաւորեալ տանջին։ Եւ՛ յերկոցունց վասն սոցին
իսկ անսուտ բանն Քրիստոսի զդատաւճիռն առնէ։
Երթիցեն ասէ արդարքն 'ի կեանսն յաւիտե-
նից, և մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենից․ որ
պատ-

պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր̃ ։ Մատ 25.46 ։ Այլ ասացեալ է վ̃ն նեռին՝ մարդն անօրէնութե̃, որդին կորստեան ․ զոր հողմով բերանոյ իւրոյ սատակէ ք̃ս դշտրին 2 Թես 2.3 ։ Նոյն են պատիժք որ ընդդէմ գործեն զդժնդակ վարս և զգազիր գործս ։ Զոր ապականել հրաժարէ մայէ քարոզն հեթանոսաց՝ զմեղաց զանդամս մարմնոյ ։ Հռ։ 6 ։ Մախնքն զցանկութի չարեաց յա̃մի ․ որ է մեղաց մարդ և կորստեան որդի և ժառանգ յաւիտենից հրոյն ։ Իսկ որ սատանայ զվարս ո̃ւս և անարատս որ լոտ պատուիրանին ա̃յ, կոչի մարդ արդար և ո̃ւր և ճշմարիտ ա̃մ աւ-ուքինութե̃ կատարեալ՝ ի ք̃ս ․ ժառանգորդ լեալ երկնից արքայութեն և անանց բարութեցն ։

Մարդ՝ զայսպիսի խրատս ՝ի մտի պարտ է ունել և չթողուլ ՝ի մտաց ո̃չ անտեղեակ ․ զի զցաւս հոգւոց և մարմնոց բժշկէ ․ և առողջութի շնորհէ ՝ի հակառակացն որ փտեն զերևելիս և զաներևոյթսն յուղղութենէն ։

Մարդ զգոյշ լեր այսոցիկ յուսուցանել ՝ի լսել և յառնել միշտ զխրատս կենաց ․ որ մաշէ է ամբարշտութե̃ և անօրէնութե̃ և աղտեղութե̃ մարդկան ․ և կանգնէ զկործանեալսն ՝ի մեղս և զարդարսն պահէ միշտ ։ Զի որ զպտուղ իւր ՝ի ժամու տացէ, եղև նա ո̃չ ծառ տնկեալ ՝ի գնացս ջուրց՝ ՝ի հոգևոր խրատս ․ և զա̃մ զոր ինչ առնիցէ, յաջողեսցի նմա ասէ ։ Նաև լսելոց է ՝ի ք̃սէ որ ասէ, ծառայ բարի և հաւատարիմ ․ որով ՝ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի՛կ մտա

յու

յուրախութի տ՟ն քո. որ պատրաստեցաւն քեզ ըստ վաստակոց քոց. Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ հոգևոր խրատուց 'ի ք՟ս յ՟ս 'ի տ՟ր մեր. Որում փառք յաւիտեանս ամէն.

## Յանդիմանութիւն Ուղղափառութեան Հաւատոյ. Որ շարադրեցաւ յերանելւոյն անձէ. Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ

### Ձ՟ն Է

Ո՛չ է Հայր ծնեալ ուստեք. այլ Որդի է ծնեալ և ո՛չ արարեալ. և ո՛չ Հոգին Ս՟ր ստացեալ. այլ բղխեալ. Մշտնջենաւորք միաբան խոկուէ ընդ Հօր և առ Հայր և 'ի Հօրէ. Ո՟պ բոց և ջերմութի 'ի Հրոյ. Ո՟պ լոյս և ճառագայթ յարեգականէ. Ո՟պ ջուր և բղխումն յաղբերէ. Ո՟պ բան և ոգի 'ի մտաց. Շարժեալ յառանձնաւորութիւն, այլ կացեալ 'ի միաբանութի մի բնութեն. և ո՛չ է եկամուտ ինչ յառանձնաւորութիւն. Նոյն առակք ճշմարիտ Ս՟ր Երրորդութեն. Իսկութի անսկիզբն. կենք և կեցուցիչ. ամենագիւտ սէր և ամենակալ զօրութի. Հայր և Որդի Հոգի Ս՟ր. Երեք անձինք և մի բնութի և մի կամք արարչին.
Նա՛ բարերարն և հաստիչն ա՟ծ էր և է.
Նա՛ անսկիզբն յիւրում փառսն. և մշտնջենաւոր անվախճան առ խնամս արարածոց.
Նա՛ ճշմարտութի էր և է. յէութե իւրում



ան

անփոփոխ. և հաստատութիւն արարածոց.

Անվրէպ ամենաշահ գիտութիւն էր և է. յիւրում անբաւութեան առ լուսաւորութիւն արարածոց.

Անհաս իմաստութիւն իրաւունք էր և է. յիւրում անճառելի նախախնամութեան առ արարածս ամ. կենարար ամենագիւտ ամենաշահ խրատիւք.

Անփոփոխ հաւատարմութիւն էր և է. յաւէժ փըրկական խորհրդով յազգս մարդկան. առ մերձաւորութիւն հաղորդութեան կենդանական սիրով.

Ամենակար զօրութիւն էր և է. յիւրում գոյութեանն. առ ՚ի զօրացուցանել զզօրս իւր ՚ի մարտս հոգևոր պատերազմի. լինիլ յաղթօղ յերևելիս և յաներևոյթս.

Կենդանի երանութիւն սիրոյն ամ. էր և է. բոլոր բոլորմամբ առ խնամեալսն. պահել զարդարս, և ՚ի զղջումն ածել զմեղաւորս.

Լուսաւորեալ և փառաւորեալ սրբութիւն էր և է. ՚ի նորոգել ՚ի պայծառացուցանել և ՚ի փառաւորել զարարածս բազմաշող շնորհօքն և լուսաւոր աւազանաւն.

Գթութիւն խնամօքն էր և է. անպատում բարութեն առ ՚ի խնամածութիւն արարածոց երևելեաց և աներևութից. զի հասցեն ՚ի նմանահանգիտ բարեաց աւետեացն խոստացելոց երկնաւոր կոչմանն. որ լինի է կենդանութիւն ՚ի կեանս.

Ողորմութիւն և շնորհօք իւրովք էր և է. իւր անպատում բարութեն և ամենառատ պարգևօքն ՚ի տալ և ՚ի ցուցանել զարդիւնս մարդասիրութեան և զկոչումն ընծայութեան յորդեգրութեան շնորհն.

Եր–

Երկայնամիտ և ներող էր և է. քաղցրութբ և բարերար և անյիշաչար կամօք ներել և ոչ զամենեսեան պատժել. զի գարշեալ 'ի մեղաց՝ կեցցեն արդարութեամբն.

Ամենաւք Սրբութբն կամօք իւրովք առ արարածս իւր էր և է յանպակաս լիութեն. որ ոչ պակասի և ոչ կշռի և ոչ պարփակի. երևելեօք և աներևութիւք առ ողորմս և կշտամբանս ըստ հնարագիտութեան մատակարարութեն. Զի զշահաւորսն և զօգտակարսն առաքեն արարածք իւր. և զերկամուտն 'ի մտաւորս և 'ի բանաւորս՝ ածցէ 'ի լաւագոյնս ամենիմաստ գիտութբ իւրով 'ի ժառանգութի կենացն. քաջաւէտ առաքինութբ պսակեալ յարքայութեն երկնից. Այլխնի յառաւ հաւանեալ և հնազանդեալ. որոց աշակերտիլ եղև ածային վարդապետութեն. որ է բարին հաճոյն և կատարեալն. զի մշտնջենաւոր և անեղծ կենացն հասցեն.

Որ էնն և է և կայ յանբաւութե իւրում. և բարւոք բարերարութբն իւրով խնամէ զարարածս ած. Որ աննուաղ է և անբաւ և անսահման. Որ 'ի վեր է քան զարարածս ած՝ անքըննին մեծութբն և փառօք. Որ կենաց և փառաց և լուսոյ է տուօղ. ամենաշահ կենարար երանութբն. Ինքն 'ի յինքենէ բանական է առ ամենեսին. որ արդարացուցանէ լուսաւորէ և փառաւոր առնէ. Որ հայր է միածնի որդւոյն և բղխող հոգւոյն սբյ. Նա՛ իւր բարերար կամօքն և ամենաշահ սիրովն և ամենագիտակ հանճա

րովն

րովք ժառանգաւորս առնէ զմարդիկ անմարմ-
նոցն դասուց և արքայութեան երկնից և անսպ-
պառ բարեացն.

Նախ պատիր խաբէութեան սատանի բանսարկուին ուստի է կորուստն, ոչ էր ՚ի սկզբանն մինչ չէր մոլորութեան յառաջագայեալ վրիպեցուցանել ՚ի չարն։ Իսկ այժմ ոչ զօրէ յառելն մեր զչարն, և լուեալ աւետաւոր քարոզութեան և հաւատոյ և վերստին ծնանիլ ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ. և այլ ոչ ևս դառնալ յապականութի և յապաշխարելոյ պէտս.

Մահ ոչ էր, մինչ մեղք ոչ էին։ Իսկ այժմ լուծել լուսաւոր յարութեն քո անարգել ՚ի մեզն մեր.

Անապատիր խաբէութին և խորամանկ կեղծաւորութին և ամբարշտութի չէր նախկին, մինչ ոչ էր բանսարկեալ սատանայի. Իսկ այժմ տկար է և ոչ է երևեալ ՚ի ճշմարտութեն.

Անհաւատութի և ցանկութի չարեաց ոչ էր ՚ի սկզբանն, մինչ ոչ էր հակառակաւէր ածամարտն ՚ի վայր կործանեալ. Իսկ այժմ ոչ է երևեալ ՚ի հաւատոցն և օրինացն ընտրութեան, և յածսիրութեան ցուցմն.

Անհնազանդութի և ստահակութի ոչ էր յառաջ, մինչ ոչ էր անհաւանեալ այ սատանայ և մարդն։ Իսկ այժմ ոչ է ՚ի հնազանդիլն քոյ մերովս, և ուղղելն զմերս ՚ի նոյնս.

Խաբէութի և նենգութի ոչ էր նախ, մինչ ոչ էր խորամանկեալ չարն և ՚ի քէն մոռեալ. Իսկ այժմ ոչ է ընդ քոյ քաղցր և աննախանձ կամացն առ ՚ի մեզ շնորհն.

Նաև

Ատելութի̃ և բարկութի̃ ո՛չ էր մինչ ոչ էր 'ի չա
րէն 'ի մեզ լեալ․ Այլ այժմ ո՛չ է ընդ բազ
մաՀեզոյն և մարդասիրէն և փրկչէն ։
Ամբարտաւանութի̃ և անձնասիրութի̃ ո՛չ էր ,
յորժամ ո՛չ էր Հպարտացեալ չարն և պատրեալ
զմեզ․ Այլ այժմ ո՛չ է յերևելի խոնարՀէն և ըզ
մեզ սիրողէն յաւէտ , ուսարուք յինէն․ զի Հեզ
եմ և խոնարՀ սրտիւ․ և գտջիք զՀանգիստ ։
Յատումն և թշնամանք ո՛չ էր նախ․ և այժմ ո՛չ է
յորժամ ամենագութն ողորմելով շարժի 'ի խնամս
Անյագութի̃ որովայնամոլութի̃ և ագաՀութի̃ ո՛չ էր․
և այժմ ո՛չ է պարկեշտից և արՀամարՀողաց զերկ
րաւորս ։ Անժոյժ ազատութի̃քն ո՛չ էին , մինչ
ո՛չ էին անմաքրութի̃քն․ և այժմ 'ի սրբութեց
ամ̃ենայն շնորՀացն լուծաւ գարշութի̃ ախտիցն ։
Այլ ամ̃ մեղք և անխնայ չարութի̃ք երևելիք
և աներևոյթք ո՛չ էին գործակցօքն իւրեանց
սատանայիւ և դիւօք նորին 'ի սկզբան անդ․
այլ յետոյ 'ի ներքս մտին 'ի Հակառակորդէն որ
'ի նմ̃ զմեզ ընկեաց ։ Այլ այժմ ո՛չ է յորժամ
կենարար գառն նուիրեցաւ 'ի վր̃ խաչին վասն
քաւութե̃ մեղաց և Հաշտութե̃ Հօր ընդ արա
րածս ։ Այլ վերստին ծննդեամբ աւազանին
փրկական խորՀրդովն կենագործեաց զՀաւատա
ցեալս 'ի ն̃ր Երրորդութի̃ն ։ Այլ զամբարիշտ
Հպարտս և զամբարտաւանս կործանեաց , և բարձ
րացոյց զխոնարՀս առՀաւատչեայ յուսոյն ։
Այլ լուծաւ եկամուտ մեղքն․ և այն որ զիշխա
նութին ունէր զմաՀուն․ այսինքն է սատանայ ։

Զի կեցուսցէ զմեռեալսն 'ի նոյն կամսն. երե-
ւելի շնորհօքն և մարդասիրութ̃ն իւրով: Որոյ բազումք երևեցան 'ի սկզբանէ վկայք կենսաբեր գալստեանն. որ նորոգելոցն էր զմեզ յարենէ անտի աբելի արդարոյ. ունելով զանուն արդար յանարատ վարուց: Ոչ ենովս յուսոյն. և ենովք հաճոյիւքն այ̃ փոխելովն. և նոյ կատարելութ̃ն յարդարութե. և աբրահամ հաւատովն. և իսահակ աւետեաց որդւոյն. և ի̃էլ տեսողն մարտի առաքինութե. և յովսէփ պարկեշտութ̃ն. և դաւիթ ուղիղ և հեզ թագաւոր. Նաև ամ̃ սբ̃ մարգարէքն. և մակաբայեցիքն. և երեք մանկունքն 'ի հնոցին. մինչև 'ի յովհաննէս ծրագն արեգական արդարութե: Որ լուսաւորէ զամ̃ մարդ եկեալ յաշխարհ լուսովն ած̃գէտութե. քս̃ փրկիչն որ եկն յաշխարհ փրկել զմեղաւորս և լուսաւորել զսիրտս հաւատացելոց. բարերար կամօք արարչին մերոյ պտղաբերս լինել ըստ արդարութե օրինացն և հաճոյից ամենակալ տէրութեն: Նաև արքայութե յուսովն՝ անարատ վարուք ընթանալ 'ի կէտ վերին կոչմանն. և լինիլ կատարեալ որպէս հայրն երկնաւոր կատարեալ է: Որ կամօք բարերարութեն իւրոյ լնու զամ̃ արարածս, և յորդորէ զամ̃ միտս 'ի բարեգործութեան կամսն: Նաև յերկնից յերկիր խօսի բարերարութ̃ն զդարձն յապաշխարութե մեղաւորաց. խոստովանիլ զյանցանսն, և զղջանալ վս̃ որոյ գործեցին. և պտուղ արժանի ապաշխարութե առնել. որ զզօրս հրեշտակաց ուրախա-

ցուցանէ ըստ ք՟սի բանին։ Զի ասէ, վ՟ն միոյ մեղաւորի որ դառնայ յապաշխարութիւն, ուրա-խութիւն է հրեշտակաց ՚ի յերկինս։ ղուկ 15 . 10։

Եւ զի՞նչ պա՛րտ է վ՟ն արդարոցն ասել, առա-քելոցն և մարգարէիցն, մարտիրոսացն և վարդա պետացն և ճգնաւոր կուսանացն և պարկեշտ ամուսնացելոցն։ Որք ո՛չ ունին զաղտեղի ցա-սումն և զխռովական ոգւոց. և զամբարտաւա-նութիւն. և զբարկութիւն. և զնախանձ. և զորովայ-նամոլութիւն։ Այլ միշտ են ՚ի ջանս բարեպաշտու-թեան խլել ՚ի միջոյ զչար սովորութիւն. յորդոր մամբ սիրոյն որ սիրեաց զմեզ։

Զի սատանայութիւն ո՛չ էր՝ մինչ ո՛չ էր հակառա-կեա՛լ չարն բարւոյ։ Զի և յետ վեց աւուր՝ մինչ ո՛չ էր ստացեալ զամբարշտութիւն զմիտս, վկայէ ՚ի տ՟նէ եթէ՝ զա՟մ զոր արար ա՟ծ՝ բարի՛ էր յոյժ. զի թէ ՚ի բնէ չա՛ր էր, ո՛չ զբարւոյ վկայէր զա՟մ՝ անսուտն ամենակալ։ Եւ յաւետարանն առ աշա կերտսն ասէ, ո՞չ ես զձեզ ընտրեցի զերկոտա-սանդ. և մինդ ՚ի ձէնջ սատանա՛յ է։ Զի ո՛չ զըր-պարտեաց զնա արդար դատաւորն նախ, մինչև եղև երևոյթ չարին ՚ի չար կամաց շարժեալ ՚ի չար անդր. և ապա զսատանայի անուն առնու և քակի ՚ի տ՟ե պաշտամանէն և որոշի ՚ի կենդանարար սիրոյն. և անյոյս լեալ՝ ՚ի մահ զինքն ձգէ։

Ապ դևքն ՚ի ծովակն խոզիւքն. որք ասէին. զի՞ կայ մեր և քո՝ որդի ա՟յ. յառաջ քան զժամն եկիր կորուսանել զմեզ ո՟րդ ա՟յ։ յոհ 12 . 31։

Զի դևսն և նոքա զժամանակ դատաստանի

իւ-

խուրեանց և մեր. և զհաստուցումն ըստ արժանեաց
անօրինաց և անհնազանդից և անմբց և պղծոց.
Զի սատանայ ոչ էր՝ մինչ չէր ամբարշտեալ.
Այլ այժմ անզօր է ըստ ասացելոյն Տն եթէ,
իշխան Ճխս այսորիկ դատապարտեալ է և ըն‿
կեցցի արտաքս. յոհ 8.29.
Այլ խաւար ոչ էր և ոչ է. զի ստուեր է տա‿
րերց և ոչ բնութի ինչ. Զի ածուխ սև է
քան զստուերս և որ այլ ինչ սևութիք իցեն.
և ՚ի ծագել արեգականն և լուսաւորաց, նոյնպէս
կան մնան սևութիքն. Բայց ՚ի գալ լուսոյն լու‿
ծանի ստուեր խաւարին, և ոչ ևս կայ ընդդէմ.
Այլ մահ ոչ էր, մինչ ոչ էր պարտական լեալ
մարդն մեղաց. Այլ այժմ ոչ է ՚ի յայտնել կենաց
և յարութե որ ՚ի մեռելոց. զի երկոքինն հրաժեշտ
առին մահ և խաւար ՚ի ծագել լուսոյ և կենացն.
Այլ այս ամ յօրինուածք իրաց և օրինաց՝ ՚ի
Տնէ են. յաղագս այսորիկ, որ քաջ և պիտանիքն
իցեն պատրաստ ՚ի լաւութե առաքինութեն,
թագ ՚ի գլուխ մնացեն ՚ի հանգիստն լուսոյ և
կենացն յաւիտենից. Այլ որք վատն իցեն և
ծոյլք և արհամարհօղք ածային պատուիրանացն,
ընկալցին զպատուհասն զպատիժս յանշէջ
հուրն գեհենին. որ կազմեցաւ նցա. Զի առանց
եպերանաց է արդար դատաւորին իրաւունքն
որ առաջի ճշմարտութե փակ է. Այլ վկայեն
երկոքին կողմանքն լաւացն և վատթարացն. որ
փառացն ունի զյոյս՝ և որ թշուառութեան և
տանջանաց ակնկալութի. Այլ երկաքանչիւրոցն

խրա‿

խրատէ և յորդորէ բարեաւն և աշխին ։
Նաև զկծեցուցանէ զի մի՛ ոք զրկեսցի ՚ի յաւի-
տենից խոստացելոցն . և զերկրաւորին կողմանսն սի-
րովն խնամէ ։ Զ քաջսն՝ զի մի՛ երկուանացին ՚ի
յուսոյն կենաց ։ Նաև զվատսն՝ զի աշխ՟ ա՟ն
ապաշխարեսցեն և ՚ի ժամանեսցեն յանկարօտ
լիութի շնորհացն . ընդ այնոսիկ որք պարծանօքն
՚ի փառսն վայելեն ։ Զ ի երևեսցին շնորհքն ա՟ն
՚ի վ՟ր սիրողացն որք ծառայեցին ա՟ն աշխ՟ և
սիրով ։ Նաև ընկալեալ ՚ի ա՟նէ ընդ մեծարեալն
և փառաւորեալն, որդեգրութե արժանաւո-
րեալք . յանապառ բարիսն ք՟ի վայելեսցեն ը՟
ա՟մ ո՟յս ։ Զ ի ամենակալ ամենատէր Նորոգութե
բարերարութ՟ն խնամէ զարարածս ամենագիտ
սիրովն իւրով . և ամենաշահ երախտեօքն և ան-
փոփոխ ճշմարտութ՟բն որ յերևելիս և որ յա-
ներևոյթս՝ ուղղէ և ոչ տայ քակել որ ՚ի մեզ
բարի մատակարարի ՚ի բարերարէն ։ Զ ի անեղծ
և անապականն ոչ ինքն փոփոխի, այլ ինքն փո-
փոխէ զմեզ ՚ի լաւն ։ Նաև զկենդանութիւն
ստեղծուածոց զարմանալի յօրինուածովքն իւ-
րովք և հանդերձ իւքն լաւութե ՚ի գործ անդ-
զանյարմարսն յարմարէ պէսպէս յօրինուածովք
՚ի բարիս ։ Նաև զվախճանն յերկմտութե փո-
խէ ՚ի հաւատարմութի իւր . և զստութե մե-
քենայս չարին սծէ ՚ի ստուգութիւն ։

Նաև կազմէ ա՟ծ խրատու ՚ի ս՟բ գրոց . ՚ի լու-
սաւորութի ա՟մ անձին . և շնորհաց իւրութեամբ
կենդանաբար և կատարեալ իմաստից՝ բարուց
մա-

մասին հաղորդիլ։ Որ զեկամուտ քաղն չոր կամացն և չոր խորհրդոցն և չոր գործոցն լինել խոստովանութիւն։ Որ զխոտպանացեալ միտս ՚ի ծուլութենէ և յարհամարհանաց՝ ուղղէ և ՚ի գործ ածէ՝ բարւոյ զգուշանալ և զգաստանալ։ Որ զկամակորութիւն մտացն և մարմնոյ՝ ածել ՚ի հաւանութիւն և ՚ի հնազանդութիւն հոգևոր կարգաց և կրօնից. լինել ՚ի միջոյ և ՚ի բաց բառնալ զչար սովորութիւնս աչիւ և սիրով։ Որ զմեր շարժմունսն՝ յանձայինսն բերել. և շահել բարձր մտածմամբ. և ձգամբք և վառակալք մշակել յառաքինութիւն. և ցուցանել զհանդէս մտերմութեան. զի կանուխ և անագան երևեսցի պտուղ բարի։ Որ լոյս ոչ փոխի ՚ի խաւար, այլ զխաւարն լուսաւորէ. և ոչ կեանք ՚ի մահ, այլ զմահացեալսն կենդանարարէ ՚ի տէր։ Այսպէս կամք բարի՝ զանարգան թողու, և զլաւան մեծարէ շնորհօք ամենակալին. երևեալք ով լուսաւորք յաշխարհի. զբանն կենաց ունելով յանձինս և յառաջնորդութիւն բազմաց ՚ի կեանս անբիծս։ Ի հանդէս բարեպաշտութեան անցուցանել զայն և ժամանակս բարերարութեան կարգաց. անարատ և ողջ և ճշմարիտ վարս ստացեալ հաճոյս բարերար կամաց արարչին։ Որ մաքրիմ և քաջասիրտ հաւատով՝ զանարժան իրս հալածել և արժանաւոր օգտիւք զշահաւորսն ժողովել. ուստի անուն բարութեան և պարծանաց յերկրի թողուլ, և յերկինս համբարել զյաւիտենական կեանսն. ուր փառքն և անսպառ բարիքն պատրաստեալ կան

Ե յու

յուսացելոց։ Որք զատուխս արհամարհեցին կեն-
դանարար սիրոյն այ և անճառ երանութե յու-
սոյն որ 'ի տր, և վայելուչ ազատութեամբն։
Թագաւորեալք 'ի փառս բարձրելոյն, և յան-
կուծն բեկեալ մնաց թշնամւոյն՝ և բարձրանալ-
ցնորելոց. որք համառօտ պարտեցին սատ զհա-
նապազորդ թշնամին. և անդ զուարճացեալ բերկ-
րին անանց ուրախութբն որ 'ի հայր և յորդին
և 'ի հոգին սբ. Ասուրի մերժեալ են մոլիխա-
կանքն ամ. և բղխեն պէսպէս բարիքն. որ կան
և մնան 'ի վայելչումն կենացն անվախճանից որցն
այ ըստ երանութե սիրոյն սրց, 'ի կոչումն հրա-
ւիրանաց ուրախութե հարսանեացն։ Որք ըստ
կամաց երկնաւոր հօրն՝ պատրաստեցին զանձինս
իւրեանց։ Որք և պսակին լուսաւոր պսակօքն 'ի
գովեստ փառացն այ յանվախճան ուրախութեանն։
Նա առեալ զառհաւատչեայն յուսոյն կենաց.
և անդ կացեալ ընդ երախտաւորսն 'ի ժառան-
գութի արքայութեն երկնից։ Նա ազատեալք
յամօթանաց, և անդ 'ի վշտացն սպառնալեաց ար-
դար դատաստանին և 'ի պատուհասից տուժից
տուգանաց դառն տանջանաց. Այլ զգուշեալ
արդարութբ արդարև ճշմարիտ պարգևօքն մե-
ծացեալք. և յարգանօք և պատուօք փառաւո-
րեալք պարծանօքն. Այլ այնպէս զերծեալք 'ի
սպառնալեաց գեհեննոյն և տանջանացն։ Հաւա-
տացեալ 'ի բանն որ 'ի վր ամբարշտացն և մեղա-
ւորաց ցուցաւ 'ի տնէ. երթայք յինէն անի-
ծեալք 'ի հուրն յաւիտենից. ուր լալ աչացն է
և

և կրծել ատամանց. որ պատրաստեալն է սատա-
նայի և արբանեկաց նր։ Այլ առ հաւատարիմն
ասէ, եկայք օրհնեալք հօր իմոյ յարքայութին
երկնից. որով 'ի սակաւուդ հաւատարիմ եղայք,
'ի վր բազմաց կացուցից զձեզ. մտէք յուրա-
խութի տն ձերոյ 'ի մշտնջենաւոր կեանսն ընդ
սր հրեշտակսն առ Թագաւորն փառաց. որ ա-
սացն, ուր եմ ես՝ անդ և պաշտօնեայն իմ
եղիցի։ Ուր 'ի կենդանի ուրախութին ուրախ
առնէ զսիրելիս իւր ըստ իւրաքանչիւր վաստա-
կոցն։ Ո՛ է իւրեանց ձգամբքն մեծարեցան 'ի
տնէ յանապառ ամենագիւտ սիրոյն ժառանգու-
թեն. զարթուցեալք յերկրաւոր իրաց և 'ի զբօ-
սանաց մարմնաւորաց. զմտաւ ածել զհնարս ամե-
նագիւտ զգուշութե որ 'ի յերկրի. զտեսն և
զխիղճ անախտ խորհրդով ընդ ած պճնուլ և
զմայլել 'ի լուսաւոր գեղն նր ջերմեռանդն սի-
րով. և յիշատակօք խոստացեալ որդեգրութե. և
անձկանաւ և 'ի նր բարիսն փափագիլ. և գրաւել
ընդ իւրև զկամս շարժմանց մարմնոյն. Հիւս-
առեալ 'ի տնէ 'ի սր օգնականութենէ. զի անա-
րատ կացցէ արտաքոյ լինիլ քան զամ ծուխս
մարմնաւորս. և 'ի ներքոյ վարագուրին մտել 'ի
սրբութե. ամրացեալ և զգուշացեալ 'ի կամս տն.
Այլ սր զգուշութե զարթուցեալ 'ի սր կոչման
աւետեացն. առնուլ զգրաւականն սիրոյն զմխի-
թարութին, անարգել և սր շարժմամբ. Այլ բար
բերմամբ սիրոյն յորդորել 'ի կեանս անուշակ
կենարար բանին. հաղորդութե սր խորհրդոյն

յիշա

յիշատակօք անճառելին, նայիլ ընդ դէմն խոր-
տացեալ ամենեւեաց. Ոպ՟ զմեղուացն է իմանալ.
որ զծաղկանցն զկարեւորսն 'ի մեղուանոցսն բե-
րեն. եւ նոքօք գործեն զքաղցրութիւն անուշա-
ցուցիչ ամ՟ դաժան եւ դառն ճաշակաց. Այսպ՟
եւ 'ի կենարար խրատսն ժրացեալք, եւ յայնցանէ
ընկալեալք զօգտակարսն, իմաստութբ՟ առաջ-
նորդել յամ՟ բարութիւն առ պատրաստութի հա-
ճոյ ճշմարիտ եւ ոք՟ փառուք. քաղցր յուսով
ընթանալ զանմոլար ճանապարհն որ տանի 'ի
կեանսն յաւիտենից. հասանիլ յօթեւանս կենաց
յաւուրն փրկութե. Անծաւ՟ ցանկութբ՟ եւ
սաստիկ ծարաւով ճաշակել զանուշակ քաղցրութի
բարերար խնամոցն. եւ 'ի նոսին վայելել զանճա-
ռելին մտաւոր իմաստութբ՟ 'ի քս՟. ոք՟ խանդա
զատանօք 'ի նորոգութի մերձեալ. Ընկալեալ
առ հաւատչեայ զկեանսն. եւ 'ի նոսին կալ մնալ
յանկարօտ երանութիւն. անսպառ միշտ յան-
ճառսն եւ յանբաւսն. լեալ անձանձրոյթ զօրութբ՟
'ի յափշութե Տ՟ի զբօսանաց. որ շարժէ զմիտսն
'ի մոլարսն, եւ զմարմինսն 'ի հարուածս ցանկութե.
որ անօթոյ եւ անարգանաց է արժանի պատժոց.
Այլ 'ի յերկինս ուշ ունել. եւ զվերինն խորհիլ
պատրաստութբ՟ հայեցուածեցն այ՟. 'Ի վեր ու-
նել զմիտս առ այն՝ որ 'ի վեր է քան զվերինսն
եւ զներքինս. Որ պատճառ է մեր կենաց եւ փրկ-
կութե. Որ գործակիցն արար զմեզ իւր բա-
րերար կամացն՝ 'ի գիւտ կորուսելոցն եւ 'ի պահ-
պանութի լաւացն. Առաջնորդել ամ՟ցուն 'ի բա-
րիսն,

ըխն, և մերձաւոր առնել զՀեռաւորսն, և ըն-
տանեցուցանել զօտարսն խնամովք մարդասիրու-
ժողովել ամենեցուն 'ի միութիւն և 'ի կեանսն․ Հե-
ռաւորաց և մերձաւորաց։ Պատրաստ ունել
զկամս առ 'ի սպասաւորութիւն եղբարց յամ մասս
բարւոյ։ Սերկանալ զամ ցանկութիւս չարի․ և
զամ փառասէր խարդախութիս։ Սբ սրտիւք և
անբիծ վարուք և ուղիղ Հաւատով ընդ ամի յա-
ռաջանալ 'ի տր․ Սիրել զնա 'ի բոլոր սրտէ․ և
միանալ անքակ 'ի նր ծառայութիւն տե․ և 'ի նր քա-
ղցրութեն լուսաւորել զամ զգայարանս ոգի եր-
կիր յարեգակնէ ճառագայթեալ։ Նա՛ յիշատա-
կօք նր սիրոյն փրկիլ․ և ամրացեալ միշտ 'ի նորա
սէրն, նորին ուսմամբն կցորդ լինիլ սբցն այ․ 'ի
լոյս անդր յորդորելով զայլսն։ Օգնական ու-
նիլ միշտ զշնորհս բարերարին․ և յամի գոհանա-
լով օրհնել միշտ զամենակալն և զտուօղն բարեց
ամ․ Որ և փառս տալոյ ինքեան զմեզ արժանի
արար․ և գործակից լինիլ իւրոյ բարերար կա-
մացն։ Սէր ցուցցուք 'ի նեղութե և յանդոր-
րու զՀանդէս մտերմութե մերոյ առ տր․ և նա
աննուաղ զիւր պարգևսն շնորհէ մեզ․ զի զամե-
նեցուն զկեանս կամի և ժառանգաւորսն լինիլ
անանց փառացն և մեծութեն որ 'ի քս յս տր
մեր։ Նա՛ մեք որ նովաւ եղաք՝ իւրաքանչիւր
վաստակօք և առաքինութբ պարտիմք սրբիլ 'ի
չար ցանկութեց, և առիթ լինիլ բազմաց փըր-
կութե․ և ճշմարտեալ վարուք փոխիլ յերկրէս
'ի յերկնաւոր Հանգիստն․ յանուշակ արքայութեն

ընդ

ընդ քո ի լինել և ՚ի նո երանութեան վայելել.
Նա՛ որպ անդամօք կանգնի հասակ. այսպէս բարի
գործովք և հաւատովք սուրբ կոյսն. և յու-
սոյն հանդէս.

Նա՛ այսպէս շնորհօք հոգւոյն մեծ վերագոյն
լինիլ, և երկնայնոց անմահից կենացն լինիլ ժա-
ռանգորդ. ՚ի բնակարանս մեծ՝ ՚ի կենդանարար
ակրն ծաղկեալ. ՚ի գեղեցկագոյն փառսն և յան-
ճառելի մշտնջենաւորսն փառաւորելով միշտ զա-
մենայն զերրորդութին յաւիտեանս յաւիտենից ամէն.

## Նորին երանելոյն Սրբոյն Գրիգորի տաթեւացւոյ Հայոց Նա-
## ռամորէն, Ա՛ յորինուածոց ուղղափառաց.

## Ճառ Է

Յորժամ բազմացաւ իմաստութիւն յանձունս
չարաց, և եհաս տղայութիւն յայր կատա-
րեալ, զի բաւականացի լսել բան ճշմարտութե,
պիտոյ եղև քարոզութիւն մարգարէիցն.
Զ անմոլար գիտութիւն ախտել ՚ի լսելիս մարդ-
կան. զի հաւատովքն ընկալցին զանմոլար իմաս-
տութե զխրատն. և գիտութե արարչին և հան-
ճարիցն տեղեակ լինիցին ՚ի ձեռն ճշմարիտ և
հոգևոր օրինացն. Նոյնպէս կալ ՚ի դժնդակ վա-
րուց. և հանգիստ ՚ի բարի վարս. և պատճառ
օգտից լինիլ հեռաւորաց և մերձաւորաց ՚ի փրր
կութի. Նա՛ այս աւր է յանհաս իմաստութե
արարչին յարարածս աւր. որ լուսաւոր ճառագայ
թիւք

թիւք զիմանալիս լուսաւորէ . զի նորոգեսցէ զզգայարանս հոգւոր խրատուն . և անկարօտս պահեսցին ամենայն կամացն հաճութիւնք .

Արդարակշռելու խրատամիք յառաջանալ 'ի հանդէս բարեացն . և վկայ լինել արդարութե և ճշմարտութե աւանդիցն : Եւ այս ամ՝ է 'ի շինութի հոգւոր մասինն . ժառանգորդ լինել արքայութեն երկնից , և կարգացն երևելեաց և աներևութից . և տեղեակ լինել ամ լաւութե կարգաց . և բնութե արարածոց հասու լինել :

Եւ կարգեաց ամ զնս ոչ դպրոց . զի ուսցին արարածք զխնամն արարչին յառնել և 'ի կազմել : Եւ միշտ նախախնամութբ նր դարմանեալք որ երևին և որ ոչն երևին . Զի յորինչէ սնոտի սկիզբն արար միոյն՝ և եած մինչև 'ի հազարս և 'ի բիւրս զբիւրաքանչիւրսն . Զի լաւութեան հանդիսիւք առաքինութեցն՝ 'ի գլուխ ելեալ ամ վարք առաքինութեցն , 'ի վախճանի [illegible] պարգևել զանմահութե պարգևան յանփոփոխելի և յանհամեմատ և յամենեղէն մշտնջենաւորութիւն յարքայութեն երկնից 'ի քս . Զի նախ սկիզբն 'ի մտացն խնդրէ զուղղութե օրինադիր բանն . և ապա 'ի մշակութի կացուցանէ առնել զօգտակարն և 'ի բաց կալ 'ի վնասուցն .

Եւ զքննութի արարածոց յօրինեաց ոչ զգիր դպրութե . և եդ անուանս , զի անուանքն զընտրութիւն տացեն զգրոյն՝ զորոշումն 'ի միմեանց . և գիրն զբանն կարդասցէ զանուանսն . Եւ երկուս երկուս յօրինեաց , զի միոյն միւսոյն քար-

զէչ

զինչ իցէ. և բնութեան երկուց՝ երկու անուանք
պիտոյանան. որ որոշեն զնա 'ի միմեանց. և ան-
ուանցն՝ բնութիւքն պիտոյ էին, որ կային ու-
նէին զանուանսն: Զի ասէ, աներևոյթ և ան-
պատրաստ երկիր էր նախ. և սկիզբն արար բա-
նին յօրինել զարարածս: Կոչեաց ապա զլոյսն
տիւ. որ յօրինիչ է կազմածոց. զի զոր բանն յօ-
րինեացէ, լոյսն զյօրինուածսն յօրինեացէ. զի
աներևոյթ և անկազմ ծածկեալ ունէր խաւար
զերկիր: Ապ կոչեաց զլոյսն տիւ, սկիզբն արար
կարգելոց պատմութեցն զի 'ի թիւ անկցին. զի
եթէ ոչ էր խաւար, լոյսն իւր անուանէր տիւ,
կամ խաւարն գիշեր:

Դարձեալ՝ քաղցրն և դառն ասին որ համա-
համք ըմպցն ճանաչին. և յանուանէ որոշի քաղցրն
և դառնն. և այս 'ի տեսչութէ արարողին է հաս-
տատեալ: Նաև լոյս զմարդիկ յորդորէ յամ
պէտս օգտի. զի ամ գիտաք զիս՝ գործոց մար-
դոյն կամ արուեստից՝ իւր աշխատութե գինքն
իցեն. եթէ դարմանութի, եթէ մշակութիւն,
եթէ ճանապարհորդութի, և եթէ այլ ինչ պէս
պէս արուեստք շահից: Զի եդ ած 'ի պատուի
անձնիշխան կամացն զտիւ 'ի գործակալութի. և
զգիշերն քնոյ՝ 'ի դարմանս աշխատութե. զի
տկարութիւն զօրասցի. և նորոգել համգստեամբն՝
անդրէն 'ի տիւն դարձցի 'ի գործն որ օգուտ
և շահ ստանայ: Ապ և քաղցրն և անոյշն՝ և դառն
և կծուն՝ 'ի ձեռն բժշկացն տնօրինին:

Նա և զայլ պէսպէս համեմացն է գիտել առ զա-

նազան խորտիկան անուշեալ. զի նոքա յորդես-
ցին նոքօք, և սոքա սոքօք: Նոյն և անուանս ու-
նին. զի ո͞պ հանգիստ և աշխատութի կարօտ են
միմեանց. զի աշխատութ͞ե շահիցն ՚ի հանգստեան
վայելեսցեն: Նոյնպէս է իմանալ և զա͞մ խառ-
նուածս արարածոց ՚ի մարդն: Ո͞պ տօթ և սառն.
որ մինն ցրտացուցանէ և միւսն ջեռացուցանէ.
երկաքանչիւրքն պիտոյացեալ: Եւ՛ գեղեցիկ
խառնուածովք բարեացն արարողին՝ ոչ կարա-
ցեն շարժել ՚ի սահմանէն. զի սահման եդեր
ասէ որ ոչ անցանէ: Ու մարդս հնարագէտ է
՚ի խնամակալութէ արարչին ՚ի պէտս իւրոց փըր-
կութեան վայելելոյ ՚ի բարութիւն անձնիշխան
կամքն: Որ և ո͞պ որդի ՚ի հօր խնամոցն վայե-
լէ. և ոչ ո͞պ ծառայ ընդ հարկաւ ո͞պ այլ արա-
րածք են:

Դարձեալ՝ օդքն ցամաքեցուցանեն և խոնա-
ւեցուցանեն զերկիր և զջուրս: Են որ ՚ի յօ-
գուտ մարդկան են, և են որ ՚ի վնաս. ըստ նա-
խախնամութեան ա͞յ ՚ի միմեանս խառնելոյ:
Նոյնպէս առողջութիւնք և ցաւք. զի առողջու-
թի ՚ի գործ մշակութե յորդորէ և յարդիւնս շա-
հից. և ցաւք՝ բժշկաց կարօտին ա͞յ և մարդկան:
Նոյն և համբերութե զթողութի առնուն սխալա-
նացն, և վարձս ունին ո͞պ յոյժ. և անուանս ունին:
Նոյնպէս և տրտմութիւնք և խնդութիւնք. զի
տրտմութի յորժամ լինին ըստ ա͞ի իրաց, մահ և
ապաշխարութի գործէ ՚ի մեզ. իսկ ըստ ա͞յ լեալ,
մխիթարութի ընձեռէ յուսոյն և խնդութի ըստ
խառ-

խոստացեալ բարեացն․ որ և անուանս ես ունին։

Այնպէս և լիութի և կարօտութի միմեամբք յարգին․ զի լիութի կարօտութեն վայելէ․ և կարօտութիւն զհանդէս ժուժկալութեն ցուցանէ 'ի ժրութի մշակութեն․ ամենարուեստ հնարիւքն միաբանեալ օգտուտ ունին․ և անուանս ունին ըստ երևմանց։

Այնպէս երկիւղ և անհոգութի․ զի երկիւղն՝ անհոգութե ցանկայ․ և անհոգութին երկիւղի կարօտի․ որ զգուշացուցանէ 'ի կամս տն և ոչ թողու յապիրատութի։ Եւ 'ի միմեանս խառնեալ ըստ պատուիրանին՝ զօգտակարն 'ի մեզ ամբարեն ըստ անուանակոչութեանցն։

Այնպէս և փառաւորութի և անարգութի 'ի միմեանս տեղի տալով 'ի սահմանի կան մնան։ Նա եթէ ելանեն ըստ չափին, վնաս առնեն 'ի հոգևորս և 'ի մարմնաւորս․ ուր ամենեցուն քաջայայտ է այս․ և յանուանցն ծանիցուք զիրսն։

Այնպէս բարիք և պատիժք ոչ են մի․ և երկոքեան մեզ պիտոյանան։ Մին յորդորէ 'ի բարի գործս, և միւսն զհամարձակիլն 'ի մեղս արգելու․ զի խոշտանգանօք լուծցեն զվատսն և դարձցին 'ի լաւսն։ Եւ բարեգործքն մի՛ մոռասցին զբարերարն և զերանելի ժառանգութին և զաւետիսն խոստացեալ որ առաւելու 'ի բարիսն։ Եւ այսպէս զանուանսն առնուն։ Նզովեալքն աղօտ են 'ի մէջ մեղաւորաց և փառաւորեալ յամի․ մեղքն նկուն 'ի մէջ արդարոցն։ Եւ յիշելով զապաւինալսն մեղաւորաց, փութացեն յապաշ-

խա

խարութի խոստովանութբ · և տպրեսցին ՚ի բարկութեն որ գալոցն է ՚ի վր անօրինաց և անհնազանդեց · անարգաց և պղծոց · և լեալ յարդարու կեցցեն ։ Իսկ արդարքն որ ունին առհաւատչեայ զազատութին որդեգրութ ՚ի Ճշմարտութե անտի՝ յաւելցեն զարդարութի · զի լինիցին կատարեալք ոպ և հայրն երկնաւոր կատարեալ է ։

Նոյպէս զանուն առին միմեամբք և մեծութ և տնանկութի · զի տնանկութի կարօտ է մեծութե որ զեղու ՚ի նա զլիութին · և մեծութի կամաւոր տնանկութե · որ ամբծութբ և անարատութբ հացէ անանց մեծութեն ։ Նմլ և արդարակորով մեծութբն ոչ զրկի ՚ի մշտնջենաւորութեն · որ միմեամբք զանուանսն առին մեծութեան և տնանկութեան ։

Նաև տկարութի և զօրութի՝ ձեռն տուեալ միմեանց՝ գովելոյ արժանի են ։ Զի տնանկութի զքաղցրութի և զխոնարհութի ուսուցանէ · յուսով կալ առ խրատունս արդար դատաւորին քոյ ։ Իսկ զօրաւորք ճշմարտեալք՝ բերդամուր լեալ տկարացն և օգնական և տուիչ բարեաց , ընդունելոց են զանեղծ և զանանց փառսն · որք միմեամբք զանուանսն առնուն և զհատուցումն յարարչէն ։

Նաև յիմարութի և իմաստութ պիտոյ են յերկրաւոր վարս ։ Յիմարն զհաւանութի և զհնազանդութի առ իմաստունն ունիլ · ուսանիլ ՚ի նմանէ զկեանս · զի իմաստութին զառաջնորդական մտս ստացեալ ունի · և խրատէ և ուղղէ

յար-

յարդարութի զայնոսիկ որ հաւանութբն մտցեն յարքայութիւն։ Զի յիմարն այ՝ իմաստնագոյն է քան զմարդիկ իմաստունս ձեր պարզիկ։

Իսկ այ իմաստութիւն նախ զի սբ է․ ապա խաղաղարար․ և բարուոք և արդար պտղովք ՚ի վերինան տանի ՚ի փառսն։ Նա ոչ ըստ օձին խորամանկեալ և պատրեալ․ այլ ըստ անուանն ծանուցեալ անմեղութի իմաստիւք և յաջողութիւ։

Նա և տխմարութի և գիտութի առ միմեանս օգուտս գործեն․ ՚ի միոյն շահ առողջութե, և ՚ի միւսոյն կատարումն պիտոյից զոր ինչ կամքն խնդրէ։ Նա երկոցունց հարկաւոր է հաւատարմութիւն ըստ գործոց արուեստին և վարձուցն որ ՚ի կամսն նախախնամօղ լինի․ որպէս և զանուանսն ունին։

Նա կեանքն կենդանի են յարդարութե կեցեալ․ և մեռեալքն մեղօք՝ են տարակուսանօք ՚ի մահ որոց տանջանքն մըթերեալ կան։

Նա կենդանիքն որ ՚ի սէրն այ և ՚ի սրբութե և ՚ի հաւատս ճշմարտութե յուսով հաստատեալ կան յաւհաւտչեայ կեանսն՝ զնոցայն ոչ մահ, այլ կեանք ՚ի գրոց իմանալի է․ և քուն, զոր քս յարուցանէ բանիւ ՚ի ձեռն հրեշտակապետացն փողոյն։ Որոց զբարիս գործեալ են՝ փառք և պատիւ և անմահական կեանք։ Նա որոց զչար արարեալ՝ անմահ մահն յաւիտենից։ Նա այսմ ամի աշակերտս արար զմարդիկ անձնիշխան կամօք․ խնդրել զօգտակարսն և որոշել ՚ի վնասակարացն․ և ՚ի հարկէ կալ առաքինութեցն՝ յուսով

որ 'ի տէր․ Զի է առաջին զանուն եղբայրութեն որ
'ի քէն․ և վայելեսցեն 'ի նոր բարիսն․ և երկոցունց
կողմանցն օգուտս կազմել․ Զի է արդարակա-
րովքն՝ երանութեքն պսակին ըստ առաքինութեցն․
որ պարծանօք ասա համբերութեն գոլին 'ի տնէ․
և անվիշտ ունին զազատութեն զհամարձակութ
յօրինացն արդարութե․ և վայելեն անդ 'ի բա-
րիս ըստ արժանաւորութեանն․

Այլ արար ած զերևելի արարածս զգայական,
առ դարմանս մարդկան կենաց․ Որպ երկինք ամ-
պով և ցօղով և լուսաւորօք խնամէ և հասուցա-
նէ զպտուղս բուսոց և տնկոց․ Որոց բուսոց
պիտոյանան ըստ ժամանակի հովուց և ջերմութե․
որ սնուցանէ և անվնաս պահէ․ Ա ջուրն ոռո-
գանէ զերկիր և արբուցանէ զմարդիկ և զանա-
սունս զգազանս և զթռչունս․ և զամ զեռունս
և զսողունս որ ունին շունչ կենդանի․

Այլ եթէ դառնան մարդիկ կամակոր միտք 'ի
ստահակութիս, նովին դարմանօք որով խնամէին
տանջէ և խրատէ անհամբերութեն և բարկութեն
զանդարձսն․ Զի է նոյն արարածք որ դարմա-
նելն ունին ըստ հրամանացն վայելել 'ի բարութի․
յորժամ յղփանայ և ելանէ արտաքոյ քան զսահ-
ման օրինաւորին, յայնժամ զնոյն դայեակ զայ-
րացուցանէ և նոքօք խրատէ․ զի սովով և նուա-
զութե ամենայնիւ յողջախոհութի ածցէ․

Այլ և ցրտով և ջերմով զօդս և զտունկս ա-
պականէ․ և զանձրևս 'ի կարկուտ և 'ի ձիւն դար-
ձուցանէ․ և զցօղ յեղեամն վնասակար․ և զառող-

Զ․ ջու-

ջութի՛ 'ի ցաւս փառաւորս . և զխնդութիս 'ի
տրտմութի . և զփառքն յանփառութիւն .
Եւ զոմ յաջողութի բարեաց փոխէ 'ի թշուառութի . և զօգտակարսն 'ի վայելս բարեաց՝ 'ի
դժնդակ և 'ի վշտագին նեղութիս . Եւ զխաղաղութի և զշինութի որ պատրաստեալ ունին
խնդամտութբ , 'ի խռովութի և 'ի տարակուսանս
դարձուցանէ . և յանհնարին խռովութիս ընտանեաց և օտարաց , ծնողից և որդւանց 'ի պէսպէս չար
համբաւս . զի դարձցին այսուքիւք 'ի զղջումն .
Ապա եթէ 'ի նոյն յամառեալ կայցեն 'ի չարիսն,
և ոչ դառնան խոստովանութբ յապաշխարութի,
խրատէ մեծամեծ պատժօք արդար դատաւորն։
Որք պղծեն զսրբութիւն անձանց վարուք . և արհամարհեն զօրէնս և զհրամանս տնանկաց և
զողորմութի կարօտելոց . և զճշմարտութի անիրաւութբ ունին . և անտես առնեն զարտասուս
նեղելոց . և ձայնի զրկելոց ոչ լսեն . և որ այլ
ևս իցեն չարիք . Եւ յաղագս այսորիկ մատնէ
զնս արդար դատաւորն 'ի սով և 'ի սուր . 'ի գերութի և 'ի կորուստ։ Եւ որպ ասաց տր 'ի ձեռն
օրինաց և մարգարէից դառնալ յապաշխարութի
և ոչ լուան . աղաղակեցին և նոքա առ տր և նա
ոչ լուաւ նց 'ի նեղութե իւրեանց որպ ասացաւ
'ի գիրս սրբ . Զի կամքն անձնիշխան որ ոչ
գնայ յհրամանս արդարութե և 'ի դարմանս աղքատաց և տնանկաց՝ պատժի։ Բայց բարերարն
ած ըստ բազում սիրոյն իւրոյ որ սիրեաց զմարդիկ , խրատով խրատէ և 'ի մահ ոչ մատնէ և ոչ

սատա

սատակէ ։ և ոչ բառնայ զխշտանս ստահակաց և անզգամաց ։ Նաև զի ոչ գիտացին գոհանալ զպարգևացն այ և հնազանդիլ օրինացն նր, մատնէ զփառս նց և զշքեղութիս ՚ի ձեռն թշնամոյն՝ ողբոց և արտասուաց արժանաւորս ։ Զի խո֊տեսցին և ճշմարտեալք որբեսցին և մնասցեն ընդ խնամօք բարերարին ։ գործել միշտ զբարիս ա֊ռաջի նր ։ Իբրև կացցեն ՚ի դժնդակ և յանա֊ռակ վարուց ։ և մի՛ զերախտաւոր կարգան յա֊պախտաւորս փոխեսցեն ։ և զխաղաղութիւնն և զանդորրութիւնն ՚ի դառնութի և ՚ի դժնդակ

հարուածս չարաչար տխրեց ։

Այլ եթէ փոխեն զդժնդակ վարսն ՚ի լաւութի, դառնայ և ժամանակն ՚ի խաղաղութի ։ զի գոր֊ծակից եմք արութեն խնամոց և համառօտ դա֊տաւորութեն ։ փառք և պատիւ և խաղաղութի գործողացն զբարին առ առաքեալն երանելի ։ և բարկութի և սրտմտութի և նեղութի առ ՚ի վր ամի որ գործեն զչարն ։ Հռոմ 2 ։ 10 ։

Զի բարեգործքն բարեկեցիկք են ՚ի բարե֊րարութեն նր և ժառանգիչք դարմանոցն նր և խնամոցն և աւետեացն որ ՚ի քս ։ Զի ՚ի յերկ֊րի զխնամսն նր վայելեն , և յուսով ըստ ան֊սուտ խոստմանցն ժառանգեն զանսպառ բա֊րիսն ըստ արդարութեն ։ Իսկ անհնազանդքն և անառակքն գործակից են սատանայեացն դն ։ որ փոխեն զքաղցր ժամանակն ՚ի խնամոց նր ՚ի դառն հատուցումն տուժից և տուգանաց և ՚ի

պէսպէս հարուածս ։

Տես

Տէ՛ս ո՛րչափ է իշխան մարդն. զի զա͞ծ ՚ի կամս իւր ածէ յառնել զբարին. զի ո՛չ կամիմ (ասէ տ͞ր մարգարէիւն) զմահ մեղաւորին. ա͞յ զդառնալն նր͞ ՚ի չար ճանապարհէն և զկեալն։ Եզեկ 33.11 Զ՛ի արդար դատաւոր է և ըստ արժանեացն դատէ զոր ինչ գործէ մարդ յաւուրս իւր եթէ բարի և եթէ չար. Նաև իշխանութի͞ է մեզ փոխել զժամանակս՝ բարի գործովք ՚ի բարիս. Նաև դարձեալ ՚ի չար, եթէ մեղասէր լի-ցուք։ Զ՛ի ՚ի մեզ է զխոշտանգանսն ՚ի գըգ-ուանս դարձուցանել. և դարձեալ զնոյն սէր՝ ՚ի բարկութի։ Նաև ո՛չ ՚ի բաց թողու ՚ի սատանայէն. այլ ներէ, զի զղջասցին և հնազանդեսցին ընդ ամենագութ խնամովք բարերարին ա͞յ. Զ՛ի ասէ՝ ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութի. և ո՛չ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ՝ հիւանդաց. Մրկ 2.17. Դարձեալ մարգարէիւն ասէ, արդարութի͞ արդարոյն ՚ի վ͞ր նորին եղիցի ՚ի կեանս. և անօրէնութի͞ անօրինին ՚ի վ͞ր նորին եղիցի ՚ի մահ եթէ մնասցէ ՚ի նմին Եզ 18.20. Նաև եթէ դարձցի արդարն ՚ի մեղս՝ մահու մեռցի. և մեղաւորն յարդարութի͞ կե-րով կեցցէ. Նաև զարդար դատաստանն արդարոց և մեղաւորաց ՚ի տ͞նէ. Ապ զիա՞րդ և կամիմք՝ փոփոխեմք զաւետիսն ՚ի սպառնալիս և զողորմանսն ՚ի պատուհաս. Կարող եմք և զկենս մեր փոփոխել ՚ի մահ. և զմահ ՚ի կեանս. զկարգեալ սահմանն ա͞յ ո͞պ կամիմք շրջեմք ՚ի բարի և ՚ի չար. որ ա͞յ միայն է կարողութի։ Ըստ մարգա-

րէ-

րէին որ ասէ , եթէ ախորժեսջիք և լուիցէք
ինձ , զբարութիւս երկրի կերիջիք . և եթէ ոչ
կամիք լսել ինձ , սուր կերիցէ զձեզ . զի բերան
տն խօսեցաւ զայս : Ես. 1. 19: Նոյն առաքեալն
ասէ , ամ ինչ վն ձեր է . եթէ մահ , եթէ կեանք .
եթէ այս աշխարհ , և եթէ այն [illegible]ս . եթէ բարձ-
րութիւնք , եթէ խոնարհութիւնք . դուք քի , քս
այ : 1 Կոր. 3. 22: Նաև զի ասաց՝ ամ ինչ վն ձեր
է , եթէ կեանք . որ ՚ի կեանս իւրեանց՝ նր կեն-
դանի սիրովն և կամօքն վարին յաշխարհի :
Զի որպէս բուրվառ որ անուշահոտ խնկօք ու-
րախ առնէ զմերձաւորսն , այնպէս և դաւանութե
մերոյ և մաքրութե հոտ՝ բուրեսցի առաջի քի
հանապազ : Նոյն զի ասէ , եթէ մահ . եթէ մահն
մեր որ վն քի՝ վկայ լիցի սիրոյ նր . և այնպիսի
մահուամբ փոխեսցուք յանմահական կեանս
անեղծութե ՚ի քս յսի : Զի ոչ միայն այնոցիկ է
պատուական մահն , որ վկայութե ստուգման առին
՚ի ժամանակի հալածանացն սրով և հրով և ջրով
և կամ այլ ազգ ինչ վշտօք : Նաև ամենեքեան որ
՚ի քս մկրտեցան՝ զքս զգեցան: Հռ. 6. 3. զհին
մարդն մերկացան գործովքն հանդերձ , և զգե-
ցան զնորն նորոգեալ որ ըստ պատկերի այ է .
Եփես. 4. 22. յարդարութե և ՚ի սրբութե և ՚ի ճշմար-
տութե . որք մեռանին մեղաց . և կենդանի են միշտ
արդարութե : Զի որպէս յարեաւ քս ՚ի մեռելոց
փառօք հօր , նոյնպէս և մեք ՚ի նորոգումն կենաց
շրջեսցուք ասաց առաքեալն : Հռ. 6. 4.
Զի մեռանելով մարմնով և մօտք մարմնոյ , և կե-

լով որ և անարատ ըստ արդարութե օրինացն
աւետարանին քնի, կարացէ ասել, կենդանի
եմ ես այսուհետև․ ոչ ես, այլ կենդանի է յիս
քն։ գաղ 2․20։ Զի եթէ այս աշխարհ որով
զհանդէս առաքինութեն ցուցանեմք, և եթէ
հանդերձեալն, ամենեքին նովաւ և 'ի նորա
խնամսն և 'ի փառսն կատարին․ եփես 1․23․ որ զամ
յամի լնու 'ի խորութե և 'ի բարձրութե։
Դարձեալ խորութի զանկարութի մարմնոյ է իմա-
նալ յերկիր և քնի վերանալ 'ի բարձունս։
Իսկ բարձրութի զզօրութի հոգւոյն ընդ երկնայ-
նոցն և անմահիցն որ 'ի քն։ Ամենայնն ասէ քնի
ձեր է․ և դուք նր 'ի փառս հօր և հոգւոյն։
1 կոր 3․22։ Յորժամ զբան նր պահեսցուք և
մնասցուք 'ի սէր նր և յանարատ վարս, այնուհե-
տև ոչ ևս է զմեզ իմանալ մարմնով․ այլ հոգւով․
զի որք հոգւովն այ վարին ասէ՝ նոքա են որդիք
այ և ժառանգակիցք քնի։ Զի եթէ չարչա-
րանացն կցորդիմք յերկրի, և փառացն հաղորդ-
լինելոց եմք յերկինս․ հռոմ 8․17․ որ կան և
մնան։ Զի թէպէտ և գիտեմք յաղագս փըր-
կութե և կենաց, այլ արդ ոչ ևս նոյնպ գիտեմք։
Այլ ած ամ յամի անճառելի է․ որ սիրոյն խը-
նամէ զպատրաստս ամ․ և խոստացեալ է տալ
զարքայութիւնն և զանապառ բարիսն
որ 'ի հայր և յորդի և 'ի հոգին սբ։
Որում փառք յաւիտեանս
յաւիտենից
ամէն։

## Երանելւոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչէ ասացեալ Յանդիմանութիւն դժնդակ վարուց, և ըն-ծայութիւն Առաքինութեան Հանդիսից։

### Ժա

Դարմանք մարգարէից՝ և առաքելոցն
քարոզութիւնք՝ յառաւելութիւն բա-
րեաց զմեզ ընթացուցանեն ընդ-
լաւ մասինն որ 'ի Քս։ Եւ գլխաւորելովն յա-
ռաւելումն յորդորեն որ դրունք են ամ բարու-
թեց և երանութեց. և ընդ նմա մտանեն աւե-
տիք խոստացեալ պարգևացն Քնի 'ի հոգևոր
դարմանսն։ Այլ և 'ի մարմնաւորսն լռութի և
առատութի և խաղաղութի պտղովքն հանդերձ
հարկաւորօքն։ Եւ բարութիւնք յուսոյ կենացն
յաւիտենից և շնորհք աներևոյթ սիրոյն որ են
գանձք գիտութեան և իմաստութե, որ գիտէ
ընտրել զլաւն 'ի վատթարէն, հաստատի 'ի մեզ
որ հոգևով վարիմք։ Այս վն զընտրութիւն
առնելոյ 'ի միմեանց առաքինութեցն և մոլու-
թեցն. հաւատացաւ և անհաւատից առ 'ի ընտ-
րել զբարի հաւատ ածգիտութե։ Եւ արդարքն
մի վրիպեցին 'ի փրկութե յուսոյն։ Այլ ըզ
դըժնդակ վարսն զամենաչարն սանձել որ դրունք
են բարկութե և սրտմտութե. սովոյ՝ սրոյ՝ և
գերութե՝ և պէսպէս չարի։ Զի որ աղբիւրն
է ամ բարեաց և արարիչ ամ արարածոց, երկնա-
ւորաց և երկրաւորաց, հոգևորաց և մարմնաւո-
րաց։

րաց, ամենազօրն ամենակալն երախտաւորն ա՟մ կենդանեաց, ասէ, ես եմ ա՟ծ ձեր. զպատուիրանս իմ պահեցէք և կեցջիք. զի զա՟մենեան կամիմ զի կեցցեն և՚ի ճշմարտութի՟ գիտութեան եկեսցեն: 1 Տիմ. 2. 4: Այ՟պս զա՟մենեան կոչէ ՚ի կեանս իւր. որ կենաց տուիչ և դարմանիչ է ամենախնամ բարերարութ՟բն: Պարտ է զնա սիրել յա՟մ անձնէ և՚ի զօրութէ և՚ի մտաց. այլ և զընկերն իբրև զանձն՝ ա՟մ սրբութ՟բ. զի ապրեսցուք յա՟նէ աստի չարէ ըստ շնորհացն ա՟յ որ ՚ի մեզ: Սանձահարել զդժնդակ բարսն, և զանհաստատութի՟ մտացն պնդել ՚ի հաստատութի՟ յուսոյն ՚ի նեղութե՟ և յանդորրու: Եւ ատել զանառակու՟ն որ ՚ի բարկու՟ն շարժէ և պղտորէ.

և՚ի պոռնկութի՟ և՚ի շնութի՟ հակամիտէ:

Զի պոռնկութի՟ սերիւրէ ՚ի պէսպէս հրապոյրս ախտուց. և վրիպեցուցանէ ՚ի հաւատոյ և՚ի ո՟բ վարուց. ՚ի պատրանս մեղաց. յանառակութիս աղտեղիս: Արդ՝ փախիցուք ՚ի պոռնկութէ ՚ի մօրէն չարեաց. որ յորդորիչ է յա՟մ չարիս. զի զբազումս կորոյս ջրով և այլ ազգ պատուհասիւք ո՟պ ասեն գիրք: Զի որ շնայն կամ պոռնկին, կորուստ անձին ստանայ. և՚ի տ՟նէ ՚ի բաց եկաց ա՟նբ անձն ն՟ր: Զի տաճար են ո՟գք ամենա՟ոբ Երրորդութե՟ն. և տաճար դիւաց են պոռնիկք և շունք: Զի կոյս ապականէ և մերժէ ՚ի տ՟նէ. և զամուսնութի՟ քակէ և բազում չարիս առնէ: Զի վ՟ն պոռնկութե՟ զկախարդս յօգնութիւն պղծութե՟ ըստ հրապուրանացն սատանայի առնուն

նուն կաշառօք ։ Վն պոռնկութեն նախանձու՝
զէտր և զաղտեղութե խորհուրդս միշտ ունին ։
Վն պոռնկութե դժպհութիք և ստութիք և
երդմնահարութիւնք և գողութիք լինին ։
Վն պոռնկութեան՝ հեղգութիւն աղօթից և
պահոց . և պղերգութի լինի առ ՚ի գործ ։
Վն պոռնկութեան՝ բազմախուս նենգութիւնք
նիւթին առ օտարս և ընտանիս .
Վն պոռնկութե՝ խորամանկութիք և պէսպէս
մահ դաղտնիք և յայտնիք գործին ։ Կէսք յո-
րովայնի ծնլեն և տարաժամ անցուցանեն զմա-
նուկն . և կամ դեղօք սպականեն յորովայնի .
և են որ զծնեալն սպանանեն ։ Ոչ է զի ու-
նեւոյրն և սեղեխն ՚ի մխեանց մեռանին . կամ
յայտնի մարտիւ կ գաղտնի չարեօք ։ Ո՛ զի և
հոմանիք ՚ի մխեանց խողխողին ՚ի վր բողիցն ։
Ոչ է՞ որ բողքն խաբս ինչ ուսանին ՚ի կախար-
դաց , և սպանանեն զայրն վր հոմանեացն ցան-
կալիրաց ։ Ոչ բազում չարիս ունի ախտիցն
ցանկութի յորս և ՚ի կանայս . զոր լսելն կամ
ասելն զազիր է մաքրեցելոց մտաց և սրբեցելոց ։
Նա և զասացեալս և զոր ասելոց եմ՝ լուիցեն
ովք այսպիսիք ՚ի սմանէ ըմբռնեալք են զորս
գործէ պոռնիկն ։ Վն որոյ մարգարէն ասէ ,
վյ որ արբեալք էք ՚ի ցանկութե և ո՛չ ՚ի գինւ-
ոյ ։ Ես 51 . 21 ։ Ո՛ ի՞մ չարեաց պատճառ է
պոռնկութի և մայր մեղաց և դուռն ամ չարեց
նստելոց ՚ի մեղս ։ Ո՛ ի վր այսորիկ դայ բար-
կութիւն այ ՚ի վր երկրի . սովոյ՝ և սրոյ՝ և գերութե՝

և

և պէսպէս ախտից : Խռովութի ընտանեաց և
օտարաց · ծնողաց և ծննդոց · ծառայից և տերանց ·
յորս կայք և կալուածք և մահք :

Նա ևս չարագոյն է քան զատացեալս՝ ախտիցն
դարշուն · որքան զանաստուածս և զդաւաճանս և զաղ-
ղուածս անարգել են յախտէ · որ և յանաստուածս
և յարմուս պղծին · թողեալ զպէտս խղճութեան
արուաց և իգաց , բորբոքեցան ցանկութբ իւ-
րեանց՝ յանասնելի աղտեղութիս · զոր և ոչ է տե-
սեալ յայլ ընչաւորս : Հռ 1.26 : Ո՞չ չարեացն և
անարգել ախտին · որ արտաքս ելանէ քան զսահ-
մանն և գլուխ է ամ դժնդակ չարեաց :

Նախքին օրէնքն քարկոծ առնէին և կամ հրով
այրէին զայնպիսիսն · և նորա՝ արտաքս ունի յե-
կեղեցւոյ և ժողովրդոց · մինչև լալով բազմաւ
՝ի տուէ և՝ի գիշերի խորգով և մխրով պահօք
ապաշխարեսցէ · անհատ աղօթիւք և աշխատութբ
և բեկեալ սրտիւ : Զի թէ տրն Մտ 5.28 , ըղ-
հայիլ ՝ի կին՝ պարտաւոր առնէ շնութե , մի այլ
անզգուշութե ախտիցն զի՞նչ պարտ է ասել պա-
տիժս : Նաև որքան երանէ զմաքուրսն զի ասէ ,
երանի՛ որ սուրբ են սրտիւք · զի նոքա զած տես-
ցեն հոգւով : Որքան է ողջն զած տեսանել
և յանպատում բարիսն վայելել : Զի թէ երբ
զարեգակն տեսանեմք յետ գիշերային ցրտու-
թեն ջեռուցանել և լուսաւորել՝ խնդամք , որ
փոփոխելի՛ է և անցաւոր : Ապա զանճառելի ըղ-
ձովն զնր արարիչն և զմեր մինչ տեսանեմք՝ զի՛նչ
պարտ է ասել զանհամեմատն ած : Որ լցուցանէ
զան-

զանձինս մերոյն շնորհօք · և վայելեցուցանէ յան-
բաւ բարիսն և յանվախճան ուրախութիւն և
յանսպառ երանութիւնս։ Զի ոչ զնմանութի ինչ
զկայանիցն է ասել հնար զանձառիցն · բայց որ
մերքն են սրտիւք և անարատ անդամօք մարմնոյ,
նոց երևի ՚ի քս անձառապէս։ Բայց եթէ ան-
մեք լիցեն մարմնով և հոգւով, այսքէն ՚ի սրտէն
առնուն զհանդամանս գործոց չար խորհրդոցն
չարեաց և մարմնով պղծին։ Եւ զի ասէ, եթէ
աչն քո կամ ձեռն և կամ այլ ինչ անդամ գայ-
թակղեցուցէ զքեզ, հա՛ն զնա և ընկեա՛ ՚ի քէն.
Մտթ 5 · 29 ։ Եւ այս հրաման ո՛չ եթէ զանդամս
տայ հատանել, այլ զցանկութի շարժման ախտիցն
որ ՚ի նմա գործի ՚ի կորուստ անձանց · զի լուցկիք
է պոռնկութի անշէջ հրոյն ամ չարեօք։

Եւ յորժամ փրկիչն զառաքեալսն Քս առա-
քէր սերմանել զբանն ճշմարտութե յանդաս-
տանս մտաց հաւատացելոց և նովաւ աճել ՚ի հա-
ւատս ուղղութե, նախ զփուշն խլել զցանկութե
բուսոցն հրամայեաց, զկամս մարմնոյ և զմտաց,
և հնազանդել աւետարանին · և ապա սերմանել
զաւետիս հրաւիրելոցն · և կոչել խոստովանութ
յապաշխարութի և ՚ի հաշտութի ամցունց արարչին։
Զի հնազանդեալք աւետարանին քարոզութե,
և արժանաւորեալք մեք երախտեացն կենդանի
յուսոյն, ժառանգեսցուք յօթեւանս կենացն յա-
ւիտենից ՚ի քս յս։

Եւ ՚ի ժողովս առաքելոցն վս խնդրոյն այնո-
րիկ հրէից և հեթանոսաց՝ նախ զայս ընտրեցին,
՚ի

'ի բաց կալ 'ի պոռնկութենէ և 'ի հեղձուցելոյ և յարենէ և 'ի զոհելոյ: Գործ 15.29: Որոց արարեալ զայս բարի գործս, ստանան անանց զարդիս

և զապառնիսն:

Սկիզբն նախ զպոռնկութե հատուածն առնեն, զի զբազում ոստս որ 'ի նմին է փշաք մեղաց՝ խափանեսցեն. և զմեռելոտի գործս և զուտել՝ արգելցեն. Նաև զարիւն նորին որ 'ի սպանութե մտաբերին, այսպէս խափանեսցեն. Զի հնազանդութե նուաճեալք առ 'ի սրբութի և 'ի պարկեշտութի, և ընտանեցեալք համատով՝ մօցեն 'ի յաւիտենից խոստացեալ բարիսն. Նա զամ դժնդակութի տեսել և 'ի բաց ընկենուլ սպառնալեօք անվախճան տանջանացն որ պատրաստեալ է 'ի տնէ անօրէնն և պղծելոցն 'ի պոռնկութե. Զի եթէ զմեռելոտին ուտել և զարիւն անանոց ըմպել, եղկութի և թշուառութի 'ի մէջ կայ. Նպա որք զազգակիցսն վշտագին նեղութեք զոգիս և զմարմինս ձմլեն պէսպէս վտանգիւք, որքան պատիժս ընկալցին դառն տանջանօք և մահուամբն յաւիտենից 'ի յարդար դատաւորէն պատրաստեալ. Նա առաքեալն ասէ, մի խաբիք եղբարք. ոչ պոռնիկք, ոչ շունչք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ սպանօղք, և որ զհետ այսոցիկ, զարքայութիւն այ ոչ ժառանգեն: 1 Կոր 6.9: Նաև զանշէջ հուրն. ըստ մարգարէին եթէ, հուրն նոցա ոչ շիջանի. և

որդն ոչ վախճանի: Եսայի 66.24:

Պատուական տէ զամուսնութի և զանարատ անկո-

զինս և նախատանաւ առնէ զկուսութիւնս այլ դպրանեկս աէ և զշունս դառնէ ած․ եբր 13․4․ 1 կորն 7․26․
Եւ դարձեալ ասէ, դուք տաճար էք այ․ և
հոգի այ բնակեալ է ՚ի ձեզ․
Այսինքն է՝ որք անարժանք են յաղտեղութէ․ զի սբ է տաճար քո սքանչելի արդարութբ առնէ դաւիթ․
Եւ եթէ ոք զտաճար այ ապականէ, ապականեսցէ զնա ած․ զի տաճար այ սբ է աէ․ որ էք դուք ՚ի միջի կամակոր և աղտեղի ազգաց․ 1 կորն 3․16․
Եւ եթէ ջրհեղեղաւն ապականեցաւ երկիր, որ գէճ պղծութբ էր ապականեալ․ մեք զիարդ ոչ երկնիցուք, որ այսպիսի մեղաց՝ վկայութի ունիմք զհամաշխարհական կործանումն ջրհեղեղին․
Այլև վկայ սոդոմ և գոմոր հրով և ծծմբով տոչորեալ ըստ ջերմութե և զաղիր ախտիցն․ որով ըմբռնեալ սատակեցան հինգ թագաւորաց պըղծեալ տունքն․ և երկիրն հանդերձ լըխն իւրով․
Եւ զայս երկուս հարուածս յաղագս գիճութե և պղծութե՝ երկուս վկայս աչաւորս կացոյց ած աչաւոր դատաստանին․ որ լինելոցն է պատիժ այսպիսի պղծոց յաւուրն այցելութե ազգաց․
Ո ըստ էին (ասէ տրն) յաւուրս նոյի, կանայս առնէին և արանց լինէին․ մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամ առ հասարակ․ Նոյնպէս և յաւուրս ղովտայ ՚ի փափկութե և յամ ուրախութե վայելէին և յանառակ ցանկութիս․ մինչև տր եհան զղովտ անտի․ և զնա այրեաց առ հասարակ հրով․ ծն 19․ Այլ դուք ասէ լոյս էք ՚ի տր սըրբութբ․ և խաւար ասէ զգործն խաւարի որ ոչ

գայ 'ի լոյս. Եփես. 5. 8. Իսկ 'ի խաւարէ մեղաց
զերծեալ ոգւոցն՝ լոյսն երեւի. Վարձեալ ասէ,
որ մերձենայ 'ի պոռնիկն՝ մի մարմին է. զի ոչ
միով մարմնով մեղքն նոցին կատարին. զի հասա
րակ է չարն նոցին 'ի լսելն և 'ի գործելն և ամ
խորհրդք չարեաց նոցին. Իսկ որ մերձենայ 'ի
տր, մի հոգի է. ընկղմեալ 'ի սրբութեան.

Զի սրբեալ անդամքն մարմնով և հոգւով միա
ւորեալ ընդ քի 'ի կենանն՝ հաւատով և ճշմար
տութբ, լինին ոչ անդամք քի հանդերձ ամ
առաքինութբքն. Զի կարասցեն ասել առ
մարտս թշնամւոյն, առեալ զանդամս քի՝ առ
նիցեմք անդամս պոռնկի՞ 1 Կոր. 6. 16. քաւ լիցի
զսրբութիւն մատնել յանմաքրութիւն.

Զպոռնիկն բազում անգամ վտանգ էր պօղոս
վս պղծութեն և խրատէր և մատնէր 'ի ձեռս
սատանայի 'ի սատակումն մարմնոյն զի հոգին ապ
րեսցի զղջմամբ. ճգնել զմարմինն պահօք պըն
դութե. և աղօթիւք հրահանգեալ 'ի սրբութի
լնուլ զասացեալս նորա որ յաղագս այնոցիկ են
հանդերձեալքն. 1 Կոր. 5. 5.

Զի 'ի ձեռն պոռնկութե պէսպէս անօրէնու
թիք յաճախեն 'ի վր երկրի. զի բազմաչար է
պոռնկութի. և է յանառակ ախտիցն ցանկութեց.
Վս այսորիկ առաքեալն զմեզ խրատէ և ուսու
ցանէ սպառնալեօք, փախչել յայնպիսի ախտից
և 'ի պղծութեց, որոց վախճանն կործանում է.

Զի ասէ, մի' պոռնկեսջուք. ոչ ոմանք 'ի հրէ
իցն կորեան 'ի սատակչէ անտի յաղագս պոռն
կու

կութեն 'ի միում աւուր քան և չարք հազարք։
1 կոր 10.8. Զի ոչ եթէ անիրաւ ինչ է ա՟ծ որ
ածէ զբարկութի 'ի վ՟ր ն՟ց որ գիտէ զմ՟ղ։
Վ՟ն այսորիկ հարուածս ընդ իշխանան եմուծ 'ի
ժողովուրդսն. զի նոքա էին որդիք կորստեան
պատճառքն 'ի մեղս. Թէպէտ և 'ի միասին մեռան
որք մեղանն։ Զի և մարգարէն ասէ, անձն որ
մեղիցէ, նոյն և մեռցի։ եզեկ 18.4.2։
Թէպէտ ասէն, հարքն ագոխ կերան, և որդւոցն
ատամունքն առին։ Զի են ոմանք որ 'ի մեղս
իւրեանց վախճանին առանց ապաշխարութեան,
եցոյց եթէ ոչ ունի մնացուածս յօրինացն ն՟յ.
այլ կայ պահի առ արդարութի աւետիք ո՟րց. և
առ անօրէնութի սպառնալեացն արհաւիրք։
Զի որդիք մեղաւորացն երկիցեն և մի՛ արաս-
ցեն զանօրէնութի ն՟ց և հարքն իւրեանց. այլ
արդարութք՟ն իւրեանց ապրեսցին 'ի բարկու-
թէն որ սպառնացաւ ն՟ց։ Զի որդի որ ասէ զամ-
բարշտութի հօրն, և արասցէ իրաւունս, կեալ
կեցցէ ասէ տ՟ր։ եզ 33.14։ Նաև մի՛ փորձեսցուք
զտ՟ր. և կամ տրտնջեսցուք ո՟պ ոմանք 'ի նո-
ցանէն, և յօձից անտի սատակեցան։ 1 կոր 10.9.
Զի ուսուցն վարդապետութէ խրատէ զմեզ
յուղղութի. որոշէ զլաւն 'ի վատթարէն. և պա-
հէ զբարութի ըստ օրինացն արդարութէ և ա՟ծ
աւետարանական վարդապետութեն. բռնաւո-
րեալ խորհրդով և բանիւ և գործով։
Նաև փրկիլ 'ի բարկութէն որ գալոցն է 'ի վ՟ր
անօրինացն և պղծոցն. և կալ առաջի քո՟ի տ՟ր.
և

և ժառանգել զանպատում բարիսն ։
Այլ և վերակացուք մի՛ հեղգասցին ՚ի պատմելոյ
զպատուիրանս տն̃ այ̃ · զի ասէ մարգարէն ,
դէտ կացուցի զքեզ · զի ասասցես՝ մահու մեռա-
ցիս թէ մեղիցես ։ Եւ եթէ լուիցէ քեզ ,
կեցցէ · ապա թէ ոչ լուիցէ քեզ՝ մեռցի · և զու
զանձն քո ապրեցուցես ։ Ապա եթէ ո՛չ ասա-
ցես զպատուիրանս որք զայն գործեն , թէ սուր
գայ և բարկութի · զարիւն նր̃ ՚ի ձեռաց քոց
խնդրեցից ։ Եզեկ 3 · 17 ։ Զի կամ ողորմանօք ա-
ւետեացն և երանութեանցն յուսով ուղղեսցին ,
և կամ սպառնալեօքն հարուածոց և վշտաց և նե-
ղութե որ յերկրի աստ , և կամ յահեղ օրն՝ մե-
ղաւորաց և անհնազանդից է պատահելոց ։
Զի իբրև հրեշտակք են այ̃ հրամանաց · որ
առաքին յիշխանութեն ընդ ա̃մ արարածս · ընդ
երկնաւորսն առ զօրսն հրեշտակաց · և ընդ երկ-
րաւորս առ ազգս մարդկան · առնել ՚ի մեզ զշա-
հաւորն սիրոյ ա̃րութեն ՚ի նեղութե և յանդոր-
րու ՚ի պէտս մեր ։ Զի անքակ կայցուք ՚ի ճըշ-
մարտութե աւանդման մերում փարուք՝ մարմնոյ
և հոգւոյ առ ա̃րութին · և երախտաւոր լինել
ամենաշահ դարմանօք առ կեանս և փրկութի ըն-
կերացն ։ Այլ և արտաքնոց ճշմարտից կալ ՚ի
մշակութի · և արքանեակ լինել առ հաճոյս բարե-
րար կամացն այ̃ · և շնորհօք հոգւոյն վայելեալ
՚ի կեանս Քսի · զի ազատեալք ՚ի մեղաց , և յար-
դարութեն միշտ եղեալք պտղաբեր , հանդերձ
ա̃մ սրբութե և համբերութե բազմաւ , ժա-

Զ. ռանգ

ռանգաւոր կարասցուք լինել խոստացեալ աւե-
տեացն սուրբ Երրորդութեան ։

Այլ և վկայութիւնք լաւութեան նոր մտերիմք են անձնիշխանական կամօք ՚ի վարդապետութիւն հոգւոյն սրբոյ ։ որ ՚ի ձեռն մարգարէից և առաքելոց և վարդապետաց գրովք աւանդեցան մեզ ։ զի ծանիցուք զաստուած ։ զերախտաւորն, զարդարն, զբարերարն, զտէրն, զճշմարիտն ։ Մերժել և հեռանալ ՚ի դժնդակ վարուց ։ յապախտաւոր և յանհաւան և յան խրատ և յանխտիր երանութենէ ։ և սրբել ՚ի մեղաց և մարմնոց զխաւարական ամբարշտութիւն միշտ ։

Նաև պարսիկք և կամ այլ խուժադուժ ազգք, որք ոչ գիտեն զօրէնս, բնութեամբ զօրինացն գործեն ըստ առաքելոյն բանի ։ հռ ։ 14 ։ և ՚ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս և զանիրաւս ։ Եւ գոն սպառնալիք իշխանաց և դատաւորաց՝ առ անխտիրսն ՚ի չարսն, առ սուտս և երդմնասուտս ։ նենգաւորս, գողս, սպանօղս, շունս, կախարդս, դիւթս, և որ ՚ի նոյնս են հոյլք մեղաց ։ Զորս բանտիւք և երկաթի կապանօք և պէս պէս տանջանօք խոշտանգեն և մահ ՚ի վերայ ածեն ։ զի այլքն երկիւղ ունիցին և արգելցին յանխնայ յանօրէնութենէ ։ Իսկ որք խրատին և գան ՚ի լաւութիւն կարգաց և իրաւանց Թագաւորին, ՚ի միամտութեան և հպատակութեան կացուցանել զանձինս ։ այնպիսեացն փառք և պատիւ և պարգևք ազատութեան շնորհեն ։

Նոյն օրինակ և յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս երախտաւորացն և մտերմացն ։ պար

գեօք և մեծարանօք ։ Այլ զանիրաւացն և զան-
հնազանդիցն և զամբարհաւաճիցն և զանառակ
պղծոցն անձինս՝ պատուհասիւք և պատժովք և
դատն նեղութեամբք նեղեն ։ զի խրատեսցին ՚ի
բաց կալ ՚ի մեղաց և գործել զբարիս հանապա-
զօր ։ զի մի՛ վրդովեսցի աշխարհ յանօրինաց ։ այլ
զխաղաղութի և զշինութի կալցի ։

Նոյնպէս՝ և ամ ազգք՝ եթէ ոչ կացցեն յիրա-
ւունս արդարութե, յարդար դատաւորեն այ
ունին կարգիչս իրաւանց դատաստանօք և խրա-
տուք ուղղել ։ զի մի՛ ամբոխ և մարտ յուզեսցին ։
Այլ իրաւանց և արդարութե երկու բարբառք
են ։ որ յարգեն և պատուեն զիրաւախոհսն ա-
ւետեօք պարգևացն ։ Այլ սպառնալեօք պատ-
ժեն պէսպէս նեղութեամբք զապախտաւորսն և
զանիրաւսն ։ զի չիք ազգ որոյ չիցէ իրաւունք
դատաստանաց դատաւորաց ։ Այլ այս ամ կարգ-
իշխանութե աշխարհի կարգեալ են ՚ի անէ այ
նախախնամութե նր առ ազգս մարդկան ։ Թէ-
պէտ և ո՛չ գիտեն զած և ո՛չ փառաւորեցին կամ
գոհացան ։ զի ո՛չ խնդրեցին զած ունել ՚ի գի-
տութե ։ այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց
և կուրացան անմտութեամբ սիրտք նց ։ Հռօմ I. 21 ։
Այլ ո՛չ առնէ անտես արարիչն զարարածս ։ զի
հայր է շնորհիւ և տր ։ որ հրաւիրեաց և կոչեց
զամենեսեան յարքայութին իւր ։

Արդ՝ այս ամ կարգք իրաւանց և արդարութե
վկայք են այ հոգևոր օրինացն ։ որ քարոզե-
ցաւ մարգարեիւք գրովք սրբովք ։ Որ յանիրա-

ւու-

ութէ յերաւունս ածեն. յանարգութէ ՚ի
փառս. յանցաւորս ՚ի մշտնջենաւորսն. առաքի-
նութեցն հանդերձք և այլ կարգաց կրաւնաց
և սրբութեցս. Ճշմարիտ հաւատով և կենդանի
սիրով անմեկնելի լինել ՚ի կամացն այ ՚ի նեղութե
և յանդորրու. Կռուել զպատրանս չրս և հաս-
տատել ՚ի յոյս կենացն յաւիտենից. և խաղաղա-
րար սրբութե հասանել ՚ի բնակարանս այց յե-
րանելի և ՚ի սքանչելի փառսն. վայելել ՚ի բարիսն
անպատում, յանհամեմատ վայելչութիւն յա-
նուշակ արքայութին Հօր ամենակալի և Որդ-
ւոյն բարերարի տեառն մեզ զկեանս, և Հոգ-
ւոյն սրբոյ նորոգողին զհաստատեալս.
Մխիթարական Միաննանք Երրորդութեն. Որում
փառք յաւիտեանս յաւիտենից ամէն.

Մերձաւորութիւն Կոստանդեայ ՚ի Տէր, Յովհան-
ննէսեան Պահոց.
Նախընթացն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչէն
ասացեալ.

Դուռն Ժ

Եւ քանզի ամ կարգաց ջամբ է եղեալ
յամենակալ այնուէն և յարարչէն. այլ զի
հանդիսացեալք՝ կատարեսցուք զառա-
քինութի աշխին այ. որ փառօք պսակի հաւա-
տով և շնորհօքն քսի. Ջ ի յամ արուեստս քա-
ջութե նախատակեալ, ՚ի մշակութի օրինացն այ
այր

ու̄ք սիրոյն լցուք զօրացեալք․ ո̄վ և զզօրս հո-
գեղինացն է տեսանել։ Ուր և օրէնսդիրքն
փառաւորեցան, և օրինապահքն պսակեցան։
Առաջնորդեալք յօթևանս երկնից արքայութե̄ն
օրինակօք յամենագիտ խնամոն սիրոյ բարե-
րարին։ Զի նմանեալք նմ՝ խորհիլ յօրէնս տ̄ն
՚ի տուէ և ՚ի գիշերի, ընկալցուք զժուժկալութ̄
և զարդարութե̄ զշնորհսն։ Եւ ըստ իւրաքան-
չիւր լաւութե̄ վարուցն՝ Թագ ՚ի գլուխ մտ-
ցուք յարքայութի̄ն մշտնջենաւոր և յանվախ-
ճան կեանսն. երկնայնոցն և անմահիցն կցորդ-
լինիլ ըստ ընտրութե̄ շնորհացն գործով. յան-
դիման առաջի ա̄յ և զօրացն անմարմնոց. զոր
յերկրի աստ մատակարարէ՝ յերկնաւորան երևի։
Այսու յուսով յորդորէ զորդիս մարդկան տ̄ր
աւետեացն. և ժառանգորդս առնէ ք̄սի հայրն
բարերար և հոգին ս̄բ ամենախնամ. որ ոչ թո-
ղու զարարածս իւր ՚ի նախախնամական սիրոյն.
զի զմ̄րդն կամի զկեալն և ՚ի գիտութի̄ ճշմար-
տութե̄ հասանիլն։ Եւ որ արասցէ և ուսու-
ցէ, նա մեծ կոչեսցի յարքայութե̄ն երկնից։
Եւ ո̄վ հրեշտակացն կարգաւորութի̄ է յար-
քայից արքայէն. և ՚ի նմին կան և մնան ըստ բա-
րերար կամաց բարերարին։ Այնպէս և զմարդիկ
յորդորէ ՚ի հրեշտակային կարգաւորութիւնն
ելանել։ Ո̄վ և սերովբէք և քերովբէք ընծայեն
զիւրեանց սպասաւորութի̄ն ամենակալ տ̄րութե̄ն,
որովք արարածք դարմանին ՚ի խնամս բարերարու-
թե̄ն միշտ Այլ և տ̄մ զօրութի̄ք և զօրք հոգե-
ղի-

զինաց և անմարմնոց յիւրաքանչիւր կարգի կան հաստատեալ պաշտօնեայք ակնարկման կամաց բարերարին • Այսոցիկ բիւրաւոր զօրացն հաւանեալք և հնազանդեալք ՚ի հաճոյս տրութեն , ցուցին զպաշտաւորութի իւրեանց անհանգիստ օրհնութք ՚ի տր • գործակից լինիլ բարերարին այ երախտեացն • և փառաբանիչք նր մեծութեն և ածութեն • որով ուրախացեալք ցնծան

՚ի պայծառութի արարչին միշտ։

Իսկ սատամբակեալն ՚ի նոսա՝ իւր բանակաւն դըժընդակ բարս ստացեալ սատանայ անուանեցաւ • և դեք՝ որ նր են արբանեակք չարի սատանայք • որք ցուցանեն զգործս անօրէնութե և հակառակ են արդար վաստակոց • Ս է ինքեանք անկան ՚ի պատուոյն , և զմարդիկ որսան ՚ի կորուստ • զորոց զպատիժն խոստացաւ ած տալ մարդկան • զի ածամարտ է և մեղսասէր • և հանապազորդ թշնամի մարդկան • և հակառակ արդարութե և սրբութե • և ոչ դադարէ յիւրմէ խորամանկութենէ • ՚ի խաբել ՚ի կորուսանել ըզմարդիկ պէսպէս և զանազան չարեօք •

Վս այսորիկ գրաւեալ է ընդ պատուհասեօք ահաւոր տանջանացն և անմահ սատակմանն •

Ոչ միայն նմա է այս և նորին զօրացն , այլ և որք սիրեցին առնել զկամս նր խորհրդով բանիւ և գործով։ Երթիցեն (ասէ տրն) մեղաւորքն ՚ի տանջանսն յաւիտենից որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր •

Այսոքիկ ՚ի կամաց լինին և ոչ ՚ի հարկէ •

Իսկ մեք պատուիրանս ունիմք 'ի տ՟նէ. զի ծա-
նիցուք զնո՟ր զպատուիրանսն և զերծեալ լիցուք
'ի նո՟ր հաղբեցն մեղս. և աւետեօք բարեաց խոստ-
մանցն` գործեսցուք զբարիս առաջի տ՟ն յա՟մ
ժամ. և մտերիմ հաճոյիւքն ա՟յ կալ անխաս 'ի
մշակութե նորին. Յորդորել զբազումս 'ի լաւս
և որ լին է փրկութի՟ և ամենազարդ սրբութի՟.
Վ՟ որոյ փառք և պատիւ 'ի բարերար տ՟նէն
յաղագս արդար և ո՟ղ գործոց պատրաստեալ
կան. Որք յուսով զօրացեալ կան յա՟մ փորձանս.
և ոչ վրիպին 'ի ո՟ղ և յուղիղ վարուց. ա՟ծասի-
րութի՟ն առաջնորդեալ և յառաջեալ յա՟մ առա-
քինութիս. և կալ մնալ անսասանելի.

Օ մարդն յիւրում կարգին հաստատեաց ա՟ծ
'ի նե՟րքոյ իւրոյ շահոյն. զի լիցի արքանեակ ճըշ-
մարիտ քաղաքութե՟ն հրամանաց վերին կոչ-
մանն. և ըստ մարգարէութե՟ շնորհի` խորհրդա-
կից լինել կամաց արարչին. Եւ 'ի գիտութիւն
աւետեաց նորոց կտակարանաց 'ի նորոգումն կե-
նաց անմահից` ուղիղ հաւատ քահանայական ըն-
ծայել ա՟յ շնորհիւ օծմամբ` և հոգւով խնա-
մովք` տեսչութե՟ սիրոյն ք՟ի. Մերկանալ զհին
մարդն և զգենուլ զնորն որ ըստ պատկերի ա՟յ է
ս՟բ և արդար. Եփե՟ս. 4. 22. Մերկանալ յա՟մ չարէ-
աւազանին շնորհօք և մարմնով և արեամբն ք՟ի.
Մտանել 'ի ժառանգութի հօրն երկնաւորի և
'ի թիւ իմաստուն կուսանացն և ա՟մ ս՟րբ. որք
զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին (ո՟պ ասաց ա-
ռաքեալն) ա՟մ ցանկութե՟ն հանդերձ 5. 24.

Եւ

Եւ դարձեալ՝ հոգւով գնացէք ասէ և զցանկութի մարմնոյ մի՛ կատարէք։ Գաղ. 5. 16։ Նայս պարտ է յամօթ առնել զայն՝ որ զիշխանութիւն ունի մահու սատանայ։ Զի ուսուցեալքն ՚ի նմանէ՝ ապրեսցին շնորհօք արարչին. առաքինացեալք յարդարութի և ՚ի սրբութի և ՚ի ճշմարտութի հաւատարիմ պատերազմաւ, անարատ մաքրութբ և անբիծ կատարեալ սիրովն որ ՚ի քս. և համբերութբն որ ՚ի վտանգս. սոքա հասցեն խոստացելոց բարեացն որ ՚ի քս։

Իսկ որք ոչ ընկալան զօրէնս արդարութե կարգաց և կրօնից, խաւարեցան անմտութբ սրտք նց, և մատնեալք եղեն ՚ի բանսարկուէն յանառակ ցանկութիւս և յանբարշտութիւս և ՚ի հպարտութիւս և յամ անօրէնութիւս։ Եւ մատնեաց զնս ած տանջանաց անմահ մահուն։ Հռ. 1. 28։ Սակայն խնամք արարչին ոչ թողու անդարման զսրբարանս իւր. այլ վս բազում մարդասիրութեն իւրոյ քարոզեաց զչարն և զապաշխարութի ՚ի քաւութի ամ մեղաց։ Զի դարձեալ վերստին առցուք արտասուօք զաւազանին լուացումն ՚ի ձեռն հաւատարիմ և անսուտ խոստովանութե և ապաշխարութե որ արտասուօք խառնեալ է. Զի գթացեալ տր ողորմեսցի և տացէ զորդեգրութե շնորհան, հնազանդիլ այնուհետև ըստ բարերար կամացն. և կատարել զարդարութիւն ամ և խլել զչար սովորութիւն՝ ամ աղտեղի և չար ցանկութեքն հանդերձ. և ազատանալ ՚ի դատն պարտեաց գեհեննին. և ժառանգորդ լինել կեն_

դա_

գանի խնամոց բարերար սիրոյ նր Աստուածութեն. զի յորդորեալք յորդորութեն և՚ի նր վարս, ժառանգեսցեն զորդարութի։ Զի յորժամ յաւելուած սուտ կարծեացն միտքն ՚ի նախաստեղծ մարդն յայլն և ՚ի կինն ՚ի մոլախանաց բանաւորկութիւն, ՚ի հրապուրանաց հեշտութեանն քարշեալք՝ սուտ կարծեօք ածք լինել, խաբեցան և ոչ պահեցին զպատուիրանն արարչին իւրեանց. և եղեն ՚ի փափկութե դրախտէն. և զմահ ստացեալ ժառանգեցին. Զի յառաջագոյն պատուիրան տուեալ նց գործել և պահել ըզդրախտն ժուժկալութե պահոցն. յորս ուտել նոցա ՚ի պտղոյն, և յորս ոչ։

Նոյնպէս և այժմ քարոզեցաւ մեզ պահք. յորս աւուրս պահելի է և յորս լուծանելի. ոչ որինադրեցաւ ՚ի մարգարէից և յառաքելոց և՚ի նր հարց մերձաւորացն նր։ Զի որ պահէ զսրբութիւն և զնմ արդարութիւն, ՚ի մտանել ՚ի դրախտն՝ կայ մնայ ՚ի նմին անմեղ ՚ի դրախտին արդարութե. և յառաքինութե տնկոյն վայելէ շնորհօք արարչին կենաց ծառ, և անդ փոխել յանձառելին։ Զայս ասելով՝ ոչ իմանալի ասեմ զդրախտն. այլ տեսանելի առաջին մարդոյն. թէպէտ մեզ ծածկեալ հրեղէն սուրն ըստ խորին իմաստութեն նր։ Զի երկդիմի է իմանալ զդրախտն. մինն շօշափելի և տեսանելի, և մինն իմանալի՝ որ յառաքինութին վերաբերի. զի պահք դաստիարակք են մարդկան։ Զի ոչ զողջոյն դաստիարակքն հրահանգեն ՚ի բաց կալ ՚ի վնասակարացն և յօգտակարսն կալ մնալ

և

և մի՛ յանօգուտսն զբաղնուլ անժուժկալութե՛ք։
Վ՟ն այսորիկ և մեզ եղան պահք. խափանիչ ան-
ժուժկալութեն ամ՟ փառաց, որ 'ի մեզն է հա-
կամիտ հոգւոյ և մարմնոյ։ Զի կատարե-
ցուք զբարութի ահեն՟ այ. և անցցուք ընդ ան-
դորրութիս անքննելիս որ կայ և պահի պահո-
ղացն։ Իբր՟ ոչ որովայնամոլիցն. որ նստան ուտել
և ըմպել և յարեան 'ի խաղալ. և սատակեցան 'ի
բարկութենէն այն խնկոյն յոլովք։ Ա կոր՟ 10,7։
Զի ոչ պահեցին զպատուիրանս նր՟. այլ նանրա-
ցան 'ի խորհուրդս ունեանց. և զհրամանս պա-
հոց անարգեցին որ կորստեամբ. և ոչ կացին
յուխտին. և խոստացեալ պարգևացն ոչ հասանա-
ցին. և բարկացուցին զած՟, և եած 'ի վր՟ նց՟ հար-
ուածս և սատակեաց։ Իսկ որք ամփոփեցան 'ի
պնդութի պահոց, ցուցին զփոյթ համբերութեն
և ժուժկալութեն. պահեցին զհրամանս այն, և
կացին մնացին ժուժկալ եւլք. Որք ունէին ըղ-
պահքն սրբութե՛ք և ամ՟ բարեաւ կարգօք, նոքա
ընկալցին զհանգիստն 'ի քա՟. Զի եթէ մեզ պահք
բժիշկք. զի զոր անժուժկալութե՛ք մեղերեալ
ունիմք 'ի հոգի և 'ի մարմին զխասս պէսպէս ձա-
շակաց մեղաց, և 'ի միմեանց վր՟ շեղջակուտեալ
և նեխեալ այլանդակ խորհուրդս և անմաքուր
վարս, 'ի ժուժկալութի և 'ի պահս մտեալ՝ նո-
րոգիմք 'ի մըլթերից մեղացն և լինիմք ընակա-
րան սրբութեան։

Պահք զմեր՟ եկեալ դեղն առողջութե հոգ-
հեն 'ի ժուժկալոյն. և ջերմութե հոգւոյն սե-
րոյն

րոյն հալեն զմոլթերս աղանդութն. և յառաջէ նութի վերաբերեն: Նա՛ անուշահոտ վարուք ցամաքեցուցանէ զժահահոտութի և բառնայ 'ի միջոյ. և զառողջութի տայ հիւանդաց որ մեղօք ապականեալ են: Նա՛ զորբութի և զանարատ վարս յանձին ցուցանէ զկնի առողջութեն, նահատակեալ 'ի սրբութի: Նա՛ զայն որ վիրաւորեաց ըզմեզ ազանեղի ցանկութբ և անխտիր անառակութբ, հարցէ զնա սրբութբ և անարատ ամբծութբ. և զատեսցէ զորովայնամոլութի միշտ պահօք. և խլեսցէ զչար սովորութիւն յանձնէ: Սի դատապարտեսցի 'ի ձեռն շնորհացն քո մեղքն և իշխանն մեղաց. և առցեն զկատարեալ առողջութի փրկական խորհրդոյն 'ի ստոյգ խոստովանութե և յապաշխարութե. պահօք և աղօթիւք ամրացեալք 'ի փառսաւորացն: Նա՛ այսպէս առցեն զպսակն յաղթութե. որ զօրութբ և պահօք յօրինեալ է պահողացն: Սի բազում արանեւսոք են պահողացն զկարգ. և բազում շահ ստանան անձանց որք սիրեն զնա և պահեն միշտ:

Պահք՝ կատարեալ հաւատոցն Ճշմարտութե աղդեցութի յայ, բաց ակնկալութե յուսոյն առողջութե, անարատ և ամբիծ և ոչ երախտեօք սիրոյն որ առ ած. Որ այնոքիւք դադարէ յալանդակութե մտացն. և շնայութի զգայութեցն Նաւաց տեսանել, ականջաց լսել, լեզուի առ խօսել, և ձեռաց առ գործել, և սրտի ուղիղ, և Ճաշակելեօք առ 'ի պարկեշտութի, ամենեքումբք պնդել 'ի պահս ոգւ, և զամ կամա ցանկութեան

և

և զգայուն արմատոքն խլել, և զմտածութիւն բա-
րեաց զարթուցանել նշոյլք ծածկութեան և
հրաժարիլ ՚ի չար լուծմանէն մեղաց։ ՚Ի պոռն-
կութէ, յորովայնամոլութէ, յամբարտաւանութէ,
՚ի նախանձուէ, ՚ի բարկութէ, յագահութէ, ՚ի գոռ-
զանալոյ, ՚ի ստութէ, յերդմանէ, ՚ի չարախօսու-
թէ, յոխակալութէ, ՚ի զրկողութէ, ՚ի նենգութէ,
՚ի ցասմանէ, ՚ի Թշնամանաց, ՚ի ծուլութէ, ՚ի ծիծա-
ղելոյ, ՚ի խեղկատակութէ, յարբեցութէ, ՚ի բամբա-
սանաց։ Զայսպիսի զանըմբեր լուծս ՚ի բաց
փոխեալ ուղիղ խոստովանութբ, և առեալ զդեղն
կենաց, և առողջացեալ սիրով հոգւոյն, յառաջի-
նութեն յապարէզ՝ նահատակեսցուք ընդդէմ
մտաակարացն զուղղութե վարս։ Անհամուութբ
հնազանդիլ բարեբար կամացն, և փակել զմիտ
յորդորումն չարին կամաց։ Եւ զչար և զդառն
շարժմունս մտաց և զգայութեց արգելուլ միշտ.
որ է լռումն և կատարումն պահոց. որ հաստուցա-
նէ ՚ի դրունս կենաց։ Ամրացեալ ՚ի ներքոյ
պահոցն ժուժկալութե համբերութբ. ՚ի զգուշութե
և ՚ի զգաստութե մնալով. և յորդորել ՚ի գութ
և յողորմութի առ կարօտեալս հեռաւորս և մեր-
ձաւորս, ՚ի փառս և ՚ի պարծանս համօրէն աստե-
նին և յարութե մեռելոց։

Պահք զծածկեալ հիւանդութիս որ ՚ի մարմնի՝
արտաքս հանէ։ Զի ոչ դեղ մաղձոյ՝ ընդ ձա-
շակին խառնեալ՝ զմաղձն ՚ի բաց փախէ և առող-
ջութի տայ։ Այնպէս և զմեղքն՝ պահք. զի ՚ի նո-
ւազիլ կերակրոց, մարմինն հանդարտանայ և սրբի։

Եւ

Նա՛ զմարմնոյ զհետ երթալ՝ կորուստ անձին
ստանայ· իսկ զհոգւոյ՝ զկենս յաւիտենից 'ի տր·
Պահք զօրացուցիչք են հոգւոյ վարուց, և խա
փանիչ մարմնական շարժմանց · զի 'ի զօրանալոյ
միոյն՝ միւսն տկարանայ· Զի ո՛չ դիշակեր թռ
չունք տկարանան 'ի թռչելն՝ յանխնայ ուտելոյն,
և դիւրաւ ըմբռնեին յորսողացն 'ի մահ· իսկ սա
կաւակերքն արագաթռիչք են և անըմբռնելիք
յորոգայթադիր որսողաց· Այնոք և զորկորամոլսն
և զպարկեշտսն 'ի պահս ո̃րս է տեսանել·
Նա՛ եղիա մարգարէն յորդորէ զմեզ 'ի պահս
պընդութե, որ պահեաց զքառասուն տիւ և
զքառասուն գիշեր, և եբարձ զա̃մ կարիս յին
քենէ զմարդկային շարժմանց · և երևմանն ա̃յ
արժանաւոր լեալ՝ վերացաւ հրեղէն կառօք
յերկինս· 3 թագ, 19 · 8 · 13 · 4 թագ 2 · 11·
Այնպէս և Մովսէս պահեաց զքառասուն տիւ
և զքառասուն գիշեր · ո՛չ միանգամ, այլ և երկ
րորդ անգամ· զի զինքեան զկարիսն լուծցէ · և
զբարկութիւն ա̃յ որ 'ի վ̃ր ժողովրդեանն որ ու
տելով և ըմպելով՝ 'ի խաղս լեալ պաշտեցին ըզ
գլուխ որթոյն և սատակեցան, արգելցէ պահօք·
և լիցի օրէնադիր յա̃յ խօսեցելն ո̃րս·
Այնպէս և պահքն յովհաննու ա̃մ կենացն բա
ցայայտ է· որ ոչ ուտէր և ո՛չ ըմպէր 'ի բերոց
երկրաւորացս կազմեալ 'ի կերակուր· այլ մարա
խով և վայրենի մեղերբ զպ̃տուն վճարէր յանապա
տին· Նա՛ սրբեալ 'ի պահոցն եղև կարապետ և
տեսանող անճառիցն ըստ աւետարանին շնորհաց·

Այսպէս և տէրն մեր յետ մկրտութեան պահօք սկսեալ քառասուն մարմնով ընդդէմ թշնամւոյն զպատերազմ առնէր. զի այսպէս ուսուսցէ զմարդիկ սպառազինել պահօք ընդդէմ թշնամւոյն մարտից և նահատակել պահօք. և բազմանդակ առաքինութեամբ առնուլ զշնորհս յաղթութեան և յաղթել փորձողին: Ապա և տէրն մեր որ վերացաւ ՚ի թեւս հոգւոյն ընդ աջմէ մեծութեան ՚ի բարձունս. և զնոյն իսկ զմարտն պահօք եցոյց մեզ: Օ է զորկրամոլութի և զամ զբօսանս որ է բեռինք մեղաց՝ ՚ի բաց ընկեսցուք. զի արժանի լիցուք թեւօք հոգւոյն վերանալ և զտէրն փառաց տեսանել: Որ ասէ, եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութին իմ: Օ է ամ տեց՝ պահքն եղեն առիթ սրբութե. ամբառնալ յերկրէս և մերձենալ ՚ի հոգեղէնս: Օ է ոչ հրով ընկալան զսրբութի ՚ի ձեռն պահոց. և ապա ընտանեցաւ նոցա հուրն կիզող. ոչ երից մանկանցն ՚ի հնոցին որ պահօք էին սրբեալք: Օ է հուր՝ զայրելիսն այրէ. և զսրբեալսն պահօք՝ առաւել լուսաւորէ և պայծառ կազմէ լուսով: Իսկ որք չէին արժանի՝ և մերձ եղեն ՚ի հուրն, իբրև խոտ այրեցան. զի չէին ընկալեալ զպահոցն սրբութի: Իսկ եթէ արդարոց կատարումն է պահք, ՚ի հոգեղէնս և ՚ի հրեղէնս լինել, քանի օգուտ գործէ մեղաւորաց պահք, որ ՚ի պէսպէս ցանկութիս աղտեղիս են: Օ է սրբեալն պահօք՝ ազատէ ՚ի մեղաց զներքին և զարտաքին մարդն ՚ի բծից անտի. ոչ ոսկի և արծաթ հրով սրբել

և

և պարզեալ յաղօթս անոր․ և այսպէս լինի պատուական անօթ պիտանի տն իւրում․ Եւ որպէս երկաթ կարծր՝ շինեալ ի գործողաց և մաքրական հրով կազմեալ ի պէտս մարդկան․ Զի որք առաքեալքն և մարգարէքն նախ ինքեանք սրբեցան պահօք և ամ որ կարգօք, և ապա քարոզեցին զհաւատ և ուղիղ փառս հանդերձ ամ սրբութբ․ Եւ որք հաւատացին, ի ձեռն շնորհացն քի սրբեցան և եղեն օթևանք ածուենո․ Զի եղեն որքն աշխարհք հրեղէնք․ և զամենեսին արբուցին հրով հոգւոյն՝ սրբութբ պահոցն․ որք ընթանան ի կէտ կոչմանն որ ի քն․

Պահքն են որ անուշացուցանեն զնեխութի հոգւոց և մարմնոց յաղտեղութե մեղաց ընդ անոյշ կամս հոգւոյն սբյ անարատութբ․ զի և աղ յերկրէ ելանէ և անուշացուցանէ զայլսն․

Պահք՝ զմարդիկ յորդորէ յապաշխարութի և ածէ յուղղութի․ և որ ըստ խոստովանութե կարգին հաստատին ի պահս, լուծանի մեղքն․ զի ոչ զանասուն համարեալ են որ ոչ զգան ի ձեռն պահոցն՝ սրբութբ մերձենալ առ տէր․

Եւ իմաստունք են որք զառհաւատչեայ յուսոյն ընկալեալ են յանձինս․ և յիմարք են որ ի պարտիս յուսահատութե խրեանց կապեալ են․

Եւ երկուց պիտոյ են պահք․ զի որ կատարեալն է ի գիտութե, անուշացուցանեն պահք զնա ի ճաշակս սրբութե ըստ համձայնիցն տյ․ Եւ զորս մարմն ածեն ի գիտութի ճշմարտութե հաւատոց․ Եւ որք կենդանիք են առ սրբութին, ամրացեալ պա‿

պահին անարատ 'ի պահս։ Նա՛ որք մեռեալ են
մեղօք, կենդանացուցանեն պահքն, խառնեալ
ընդ նմա զա̃մ արդարութիւն։ Զի ո̃վ կերակուր
քաղցի՛ համեմի և պէտք մարդկան հրովանա-
շանաց, այսպէս և կամք մտաց և մարմնոց կատա-
րեալ պահօք համեմին 'ի շնորհաց հոգւոյն, և
մեծութե̃ նորին նուիրին։ Զի հոգին ո՞ր թշնա
մանի յանժայժ որկորստութէ̃ և 'ի ստահակ յան-
դգնութէ̃ և 'ի զգօսանաց արբշռաց. որք զանձինս
իւրեանց ետուն 'ի կամս շռայլութե̃։ Զի ո̃վ
անժուժութի̃ն ագահայ և այլ անէծս 'ի վե̃ր
կան և մահ, նոյնպէս և ծնեալքս 'ի նոցանէ որ
զնոյն անժուժութի̃ ունին. և արտաքոյ բար-
ւոյն որովայնամոլութե̃ն անկանիցին։ Իսկ պահք
և ժուժկալութի̃ եբարձ զթշնամութի̃ 'ի միջոյ
և հաշտեցոյց զա̃ծ ընդ մարդկան 'ի ձեռն կա-
մաւոր չարչարանացն. որք հաստատեցեն 'ի կեն-
սաբեր քարոզութի̃ն. որ կոչեաց զմարդիկ 'ի
կեանս վերստին նորոգման.

Պահք՝ պարիսպ հզօր է և դուռն ամուր. որ
պահէ 'ի մտից փառասիրաց 'ի խորամանկ թշնամ-
ւոյն։ Զի մի՛ լիցուք ո̃վ զորդիսն հեղեայ ան-
ժոյժք. որ զբարկութի̃ն այ շարժեցին 'ի վե̃ր ինքե̃նց
և հօրն՝ և 'ի վե̃ր ժողովրդեանն այ։ 1 Թագ 2. 12.
Ամլ ժուժկալք ո̃վ սամուէլ. որ պահօք անէլ
եղև 'ի մանկութենէ. և եղև գլուխ
մարգարէից։

Պահք՝ շիջուցանեն զբորբոքեալ հուրն ցան-
կութե̃ց. զի ո̃վ հուր 'ի նիւթոյ պակասեալ շի-

ջու-

ջանի՝ նոյնպ և որովայնամոլութի և արբեցութի պա-
կասեալ, ցանկութիւն բոց շիջանի, և սրբութիւն և
արդարութիւն բորբոքի պահօքն պնդեալ:

Պահք շիջուցանեն զգիճութե պղծութին.
զի ոչ նեխեալ երկիր չորանայ յերաշտութէ,
այսպէս դարշեցեալ անձն ՚ի գիճական ախտէ
սրբեալ պահօք անուշահոտ և սուրբ լինի:

Պահք արգելուն զեռանդն ցանկութեան
մանկանց. որք հրով ախտին տոչորին ՚ի թշնամ-
ւոյն շարժմանց:

Պահք դադարեցուցանեն զկռուեն որ ՚ի կե-
րողէ և յարբեցուէ առաջադայի. զի մերձեալ
պահքն ՚ի մարմին, վերստեղծուն ՚ի սրբութի

Պահք խափանեն զայսքս մտաց և մարմնոյ՝ պղտո-
րեալս յուղխից ցանկութե հոսմանց. և յստակեն
սրբուցանեն զխմանալի և զհոգեկիր երկիր:

Պահքն նաւահանգիստ է խաղաղ՝ ծովածուփ
ալեաց ախտից. և յամ փախուցյ առաջնորդէ ՚ի
կենաց նաւահանգիստն. զի մի՛ փախեսցէ յոր-
կորստութենէ և յարբեցութենէ մահն ՚ի ծո-
վու մեղաց ալեկոծելով:

Պահք եկեալ՝ խաղաղութիւ առնեն ամբոխ-
մանց, և հանգուցանեն զբեռնաւորսն. և ամ՛ցուն
առաջնորդ լինին ՚ի զգաստութի. տալով զկե-
րինն խորհիլ որ ՚ի քս:

Պահքն սանձ է ստահակաց որ անարգել են
յանիրաւութիւ: Օ՛ է ոչ ձիոյ սանձ ՚ի բերան
դնի և ամ մարմինն նուաճի և անայ ՚ի կամս ե-
րասանակալին. այսպէս է և պահքն մարմնոյն առ-

Լ:                                                    հո-

հոգևոր պատերազմն։ Եւ՛ որոյ միտք վառեալ
են արդար և ո՛րք խորհրդովք, և զգայարանքն
կազմեալ պատուիրանապահութեամբ, եթէ ոչ ունի
զպահոցն պնդութիւն, յարձակիլ մարտին ընդ
դէմ, դիւրաւ ըմբռնի։

Առաւել ևս զգուշացուցանէ բանս խրատու՝
՚ի գինւոյ և՚ի մսոյ. զի գինի առաւել յիմա-
րեցուցանէ զմիտս և յանառակութիւն շարժէ.
մանաւանդ զմանկութիւն. և հոտումն գիճութեն
՚ի մարմնոցն լինի։

Գինի թմրութիւն սրտի. պապանձումն բերանոյ.
խաւարումն աչաց. խլութիւն ականջաց. լուծումն
ձեռաց. գայթակղութիւն ոտից. ցնորք խորհրդոց.
ծանրութիւն քնոյ. թշնամի արդարութեան։

Գինի զերկիւղ մերժէ. զպատկառանս ՚ի բաց
մղէ. և զյիշատակս պատուիրանաց քամահէ. և
զխնամս ո՛րք սիրոյն զյանցուցանէ. և յուղիղ հա-
ւատոցն զարտուղի հանէ. և զանհեղ դատաստանն
անյիշելի թողու. և ո՛չ տայ զմտաւ ածել զմահ
և զանվախճան տանջանսն։ Զայս յուշ առնե-
լով ո՛չ հիւանդաց և ո՛չ տկարաց արգելում զչա-
փաւ պիտոյութ գինւոյ ըստ առաքելոյն խրատու.
վասն ստամոքսի և ստէպ հիւանդութեան։ Իսկ որ
կարողքն են և մանկագոյնք հասակաւ, զգոյշ կա-
ցեն ՚ի գինւոյ և ՚ի մսոյ. զի մի դիւրաւ ըմբռ-
նեսցին ՚ի հանապազորդ թշնամւոյն, որսացեալք
՚ի նմանէ ՚ի նորա կամսն։ 2 տիմ 2. 16։ Զի գինի
և արբեցութի տապականեն զարս իմաստունս. այսպ
զանկատարսն մտօք և մարմնով զի՞նչ պարտ է ասել։

Զի ո՞չ հրով տոչորէ և վառէ զցանկութե՛ն բոցն. զի հուր զմարմինն միայն այրէ. իսկ սա և զենու զհոգւոյն շարժմամբ ցանկութե՛։ Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա և ցանկութի՛ ՚ի պահոց։ Այս թէ անարգել յուտել և յըմպել և՛ ՚ի զբօսանս իցէ մանկութի՛ն, մի՛ ակնկալցի ողջախոհանալ ՚ի ծերութե՛. այլ եռացեալ ցանկութիւն որովայնամոլութե՛ն, հեղու զհոսանս հրոյ և այրէ զոր գտանէ ախտին հրովն. և կազմէ յինքեան զդատաստանն սրտմտութե՛ և հաղորդակցաց լինող. զի որդն նց (ասէ մարգարէն) ո՛չ վախճանի, և հուրն ո՛չ շիջանի. և եղիցին տեսիլ ա՛մ մարմնեղեաց։ Եսայ. 66 . 24։

Այսքան պատիժս ունին որովայնամոլքն և որբեցողքն. որք կան և մնան ՚ի նմին և ապականեն զանձինս պէսպէս գարշութե՛ ախտին։

Պահք Ճշմարիտ՝ զա՛մ ցանկութիս ՚ի բաց մերժէ զհոգւոյ և զմարմնոյ. որք հեռացեալ յա՛մ արդարութիս՝ լինին ժուժկալք և զինուորին ընդդէմ հոգւոյ և մարմնոյ առ ՚ի լուծումն մեղաց։ Այլ մնալ ՚ի բարեպաշտութեան ջանս որ ՚ի ք՛ս յ՛ս ՚ի տէր մեր։

Որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

Նորին տեառն Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ Երախտաւորութեան անճառելի բարերարին Աստուծոյ մերոյ։ Սա յորդորական ՚ի լսելն և յառաջելն բան ճշմարիտ Աստուածային. ՚ի փառս Սուրբ Երրորդութեան ճառեալ։

## Ճառ Ժ

Շնորհս ունիմ երախտեաց բարերարութեան անսկզբին և անփոփոխ միշտընջենաւոր տրութեան սրբոյ Երրորդութեան. որ աղբիւրն է ամենայն արարածոց. երկնաւորաց և երկրաւորաց. և որ ՚ի նմա արարածքս են։ Սա արբուցանէ զամենայն առհասարակ բարերար կամօք, և ամենադիւտ սիրոյն խնամօք. զի ժառանգորդս արասցէ զբանաւորս միշտընջենաւոր երանութեանցն։ Զի և առողջ և ողջ և անարատ լիցուք ՚ի պատուիրանապահութեան նորին. անբիծ երախտեօք՝ մաքրիմ սիրով և ուղիղ հաւատով լինել օթեւան ամենասուրբ Երրորդութեան։ Սա կայ ՚ի մշակութեան հանապազ մեր առաւել սիրոյ արարչին. և կենաց և փրկութեան ընկերաց մերոց աշխատել։ Բարերար կամացն հնազանդել և ցուցանել զհանդէս լաւութեան բան հոգևոր օրինացն յորդորմամբ յուսոյն։ Սերմանել զկենդանի խրատուն զսերմն, և հատուցանել զարմտիս հարիւրաւորս. զի որպէս եղեալք ՚ի նմանէ, նոյնպէս և խնամեալք ՚ի նորին շնորհացն եմք։ Սա որպէս երկիր բարի զսերմն բարի ընկալեալ՝ բազմապատիկ առնէ զարդիւնս արմտեացն. նոյնպէս բազմապատիկ արասցուք զարդիւնս առա-

քննութե͞ն իշխանական կամքք · զի և ընտրութիւնք
են ՚ի տեսողէն լուսոյ և վատթարաց արմոնեաց։
Զի որ զընկերն սիրէ ըստ ա͞յ ո͞չ սիրոյն, ար-
մոնիք ո͞չ է ն͞ր այն։ Որ ՚ի ձեռն շահաւոր գի-
տոցն և բարի խորհրդոց և խրատու՝ յորդորէ
՚ի հոգևոր շահն · տալ զնաստակարան սիրով հոգ-
ւոյն ։ Զի սէր ասէ՝ ոչ կերպարանի · ոչ ամբար-
տաւանի · ոչ ամբարհաւաճի, ոչ նախանձի · ոչ խոր
հի զչար ընկերին · այլ զբարին։ Ամենայնի տանէ ·
ա͞մի համբերէ · և ոչ երբէք սէր ՚ի չար փոխի ՚ի
բարուոյն ։ 1 կոր՝ 13 · 4 ։ Ամենայն առաքելոց և
մարգարէից գլուխ սէր է որ խմբաւէն կապէ ։
1 տիմ՝ 1 · 5 ։ Սիրեսցես ասէ զտ͞ր ա͞ծ քո յա͞մ
սրտէ · և զընկեր քո իբրև զանձն քո։ մատ 22 · 37
Զի որ կայ ՚ի սէրն, կայ ՚ի յա͞ծ ։ 1 յոհ 4 · 16 ։
Զի սիրել զընկերն՝ է զա͞ծ սիրել։ Եւ բա-
զում շահս առանց անձին յա͞յ՝ որ զընկերն սիրէ։
Իսկ որք անձնասէրքն են աւելի քան զար-
ժանն, զընկերին զշահն յինքեանս ձգեն · և անդ
լինի զրկումն և զլացումն և ապիրատութի · ստութի
և երդմնահարութի · զզուել հարկանել սպանանել։
Եւ վ͞ն այսորիկ օրինադրեաց ա͞ծ մարգարէիւքն
և քարոզեաց առաքելովքն, և խրատէ քահանայա
պետօք և ժառանգաւորօք եկեղեցւոյ, զի ողջա
խոհեսցին յարդարութի և ՚ի սրբութի և յիրաւունս։
Եւ յուսով արքայութե͞ն առնուլ ասա զառհա-
ւատչեայ արդարութին յանհոգութի, մեծարանօք
՚ի գոհութին ա͞յ · զանձն և զտունն ազատել ՚ի
պատժոց և օրհնել ՚ի ա͞նէ։ Եւ ՚ի հանդերձեալն

զփառս

զխաւս և զպասկս անեղծ պարծանօք առնուլ
'ի քէն։ Այլ զթագաւորս և զիշխանս և զդատա-
ւորս 'ի խաղաղութի և 'ի շինութի ձե՛ր կարգեաց
ա՛ծ • զի զամբարիշտս , զչարս , զգողս , զխաբարդս
և զա՛մ անիրաւս պէտս սանձանօք և մահուամբ
զարհուրեցուսցեն • զի ա՛մ չարագործք յանըմբե-
րելի ահէն արգելցին 'ի չարեացն։ Բայց է և 'ի
ն՛ա անիրաւութի նման ն՛ց և առաւել ևս • որք կա-
շառօք կամ այլ չարեօք բազմացուցանեն զանօ-
րէնութիւն համարձակիլ 'ի փասս։ Եւ վ՛ն այսո-
րիկ բանան ինքեանց առ զդրունս որոց և սո-
վու և գերութե և պէսպէս վտանգից և մահուց•
և յետ ատեացն՝ ելցեն 'ի հրախառն խաւար ար-
տաքին • ուր լալ աչացն է և կրճտել ատամանց•
Իսկ իրաւախոհքն և արդարքն՝ փրկութե և կե-
նաց պատճառք լինին բազմաց • առողջութե և
շինութե և խաղաղութե աստ • և անդ փառօք
պատուին և պսակին 'ի գլուխ բազմականացն
արդարոց։ Զի յաղբերէն իրաւանցն ա՛յ տը-
րին կեանք բարեգործացն և հարուածք և մահք
անիրաւացն։ Եւ բանք գիտութե ա՛ծային գրոց
յայտ առնեն զբարեգործացն զբարի հատու-
ցումն , և անիրաւաց զհարուածս բարկութե •
Իսկ որ արարեալ և ուսուսցէ , նա՛ մեծ կոչեսցի
յարքայութեն երկնից • Եւ յերկոցունց կող-
մանց յայտ լինին արարչին իրաւունքն։ Որ զար-
դարս փառաւոր առնէ • որ հոգեւոր օրինօքն հա-
ճոյացան տրութե ն՛ր , և կացին 'ի ճշմարտութե
'ի սրբութե և յա՛մ արդարութիւն • որք անձանց


լու

լուսոյն փառաւորեալ պսակին 'ի տիեզերական ատենին յաւուրն յետնում առաջի երկնաւորաց և երկրաւորաց ։ Նաև զանխրատն անարգանօք դատապարտէ 'ի պատիժս ․ որք արհամարհեցին զպատուիրանս նր̃ և ոչ պահեցին զսրբութի և զխրատուսն ․ և չթողին յոյս անձինս ․ և վս̃ այսորիկ եղեն ժառանգաւորք յաւիտենից տանջանացն ։ Զի յանձնիշխան կամաց այլ և այլ բարքն ծնանին ․ և 'ի բարուց՝ գործքն ․ և 'ի գործոց՝ անուանք չար կամ բարի ․ և ըստ անուանն հատուցումն ։ Նաև 'ի բարի կամացն՝ ծնունդ-բարուց և հնազանդութե ․ և 'ի հնազանդութե հպատակութի ․ և 'ի հպատակութէ սէր ․ և 'ի սիրոյ բազմաշահ երախտիք բարեաց ։ Դոյնպս յարհամարհանաց և 'ի ծուլութէ և յանհնազանդութէ ա̃մ դժնդակութիք ծնանին ․ ապախտաւորութիք առ երախտիս արարչին մերոյ ։ Նաև պատճառ այսորիկ ծննդոց՝ է անձնիշխան կամակորութիւն մտացն ․ որ զաներևելին յերևելիս բերէ 'ի լաւն կամ 'ի վատթարն հակամիտեալ ։ Ուստի որ ընտրէ զբարին և առնէ , երանելի է ․ իսկ ապիրատքն պատժին խրատիւք զի զղջասցին և ապաշխարեցեն զկամակոր վարսն անխրատուէ ․ և գտցեն զողորմութե շնորհն 'ի բարերար տն̃էն ․ որ գթայ առ արարածս իւր և ոչ թողու 'ի խնամակալութէ սիրոյն իւրոյ ։ Նաև զանբաւ և զանապառ բարիսն տայ որք խնդրեն 'ի նմանէ ․ և լինի պարգևատու որք աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի ։ Նաև ըստ աւետարանական երանութեցն

կոչէ

կոչէ զա̃մն յիւր արքայութիւնն և՚ի փառսն .
զի ճշմարտեալ ըստ կարգացն քի̃ ժառանգես-
ցուք զերանութիւնսն .

Երանի (ասէ տէրն) աղքատաց հոգւով . զի նոցա է
արքայութին երկնից։ Որք վն̃ ամենատեացն՝ հոգ-
ւով կամաւ աղքատացան . ՚ի բաց ընկեցին ըզ
մարմնաւոր զդժնդակ մեծութիս . և հոգևոր
յուսոյն զգեցան զմշտնջենաւոր զմեծութիւնս.
Զի որք մտօք և մարմնով և անկեղծաւոր հաւա
տով կատարեցին զկամս տն̃ սիրով։ Ըստ իմաս-
տուն նաւապետք ուղղելով զնաւս մարմնոյս ՚ի
ծովածուփ աշխարհական ալեացս . թափեալ ըզ
ծանր բեռինս մղ̃ս ծովու . զի թեթևք հոգւոյն
թռուցեալք հասցեն ՚ի նաւահանգիստն խաղա-
ղութեան . Այսպէս հոգւով աղքատացեալքն
երանին . որ ընդ տե̃մ փառօքս ե̃ս անցանելով
հոգւով և ճշմարտութբ̃ անխաս պահեցին զան-
ձինս ՚ի չար ցանկութեց . ՚ի փառասիրութէ և
յանձնասիրութէ։ Նա ձեռն պատրաստ ունե-
լով զա̃մ ցանկութիւնս , զամենեքումբք զանց արա
րին վն̃ անձառ երանութեն որ կայ և պահի
յուսացելոցն ՚ի քս̃ . որ վն̃ մեր աղքատացաւ
որ տէրն է փառաց։ 2 կոր 8 . 9։

Զի հայեցեալք յետս գնայից կամաւոր աղքա
տութեն ծրախտաւորին , հասցեն յօթևանս
կենաց ՚ի դրուն փրկութե յանխախտ երանու
թիւն որ լի է կենդանի և անուշակ երանութբ̃։
Երանի հեզոց . զի նոքա ժառանգեսցեն զեր-
կիրն ։ Զա́ետոխս եկեղեցւոյ ասէ երկիր .

որ

որ ամենաշահ կենօք՝ հանդարտութբ են 'ի վարս-
ազատեալք յամբոխից և 'ի խռովութեանց փորձա-
նաց և յամ դժնդակաց ։ Որք զինուորին ան-
շարժ մնալ միշտ · և հեզութբն ցածուցանել զամ
բարկութի և զխստաակար շարժմունս · զիւրեանցն
և զամենցուն որ անբաստանութբ լին են ։

'Ի կշտամբանս, 'ի տոյժս, 'ի տուգանս, յանար-
գանս, 'ի յամօթ և 'ի պէսպէս տանջանս, իրա-
ւամբք հեզութեն առաջնորդել յամ արդարութիւ·
յամբծութի, 'ի սրբութի, 'ի սէր անշարժ, յուղիղ
հաւատս։ Նա՛ւ շնորհօք հեզութեն բնակել յերկ-
րի · և զուարթածաղիկ յամ առաքինութիւ անու-
շահոտ հեզութբն զարդարիլ · և յուսով ակն ու-
նիլ մշտնջենաւոր անփոփոխ անվախճան կենաց-
տու երանութեանցն ։

Երանի տէ սգաւորաց · զի նոքա մխիթարե-
ցին։ Որոց ընկալեալ են զշնորհս հոգւոյն առ
ած · սէր բաղձալի, խնդիրս արտասուօք ։

Ընծեկնելի լինի յայն սգաւորն · որ անձկայ շնոր-
հօք տեսանել զանձառելին որ ճեցն տուաւ ։

Մ. և ըղ զղջացելոյն է իմանալ զսգաւորսն · որք
դառնան 'ի չարաչար վարուց առոյգ խոստովանու-
թբ · և հանապազ արտասուօք խնդրեն զթողութ
յանցանաց յամենեցունց անէն · զի կարասցեն
հասանել յօթևանս կենաց որ լին է և անդէոջ
'ի մխիթարել։ Նա՛ զուարթածաղիկ ուրախութբ
ընդ ճշմարիտ սգաւորսն ժառանգէ զերանու-
թիւն որ է յաւիտենից մխիթարութի ։

Երանի տէ որ քաղցեալ և ծարաւի իցեն ար-
դա-

գարուն, զի նոքա յոգնեցին։ Որք հրաւիրա_
նաւն կոչեցան 'ի հոգևոր հարսանիսն զի վայե_
լեսցեն զգարխն. որք մեծաւ բաղձանօք ցան_
կան ըմպել արդարութեան ճաշակօքն։ Ով քաղցեալք
և ծարաւիք՝ ըստ համահամ քմացն խորտկաց և
ըմպելեաց լցուցանեն զպէտս ցանկութեան 'ի կե_
րակուրս և յըմպելիս. Նոյնպէս և ցանկացօղք
ածայնոցն վայելից՝ արժանաւոր կարգօք փու_
թան հասանել 'ի յայժ ախորժելի ճաշակումն. որ
կայ մնայ միշտ որ երանութիւն է զարդարեալ յար
քայութեան արդարոց։ Որ միշտ վայելեն զաննը
ճաշ և զանսպառ բարիսն որք աստեն ժողովեցին
'ի շտեմարանս անմահ կենացն յաւիտենից։
Երանի տէ որ լան այժմ, զի նոքա ծիծաղես_
ցին։ Որք զերծանիլ ցանկան յերկրաւոր զբօ
սանաց. յագահութէ և 'ի չար ցանկութեց. և ջանան
մտանել առ ած ջերմեռանդն արտասուօք։
Խոշտանգեն զանձինն և նեղեն բազում նեղու_
թբք. զի տր և ամբիծ և անարատ երախտեօք
բարերարին հասցեն յուրախութի այն 'ի վայելումն
անուշակ հանգստեան սիրոյն որքում։ Նոյն
զբաղձանս անձուկ սիրոյն առ ած. զոր արտասուօք
խնդրեր միշտ զերանութիւն զորդեգրութե՛ն շնորհսն.
որ լինի է անձառ խնդութ 'ի փառս ածութեն։
Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութի գտցեն։
Որ գործակցութք ողորմութեցն այ նմանեալ.
ուժ օգնութե առեալ յածեղէն զօրութէ անտի,
զի ածզեն ողորմեսցին առաջնորդել և ուսուցա
նել. օգնել նեղելոց. լցուցանել զկարօտեալս 'ի
պէտս.

պէտս հոգևորս և մարմնաւորս ։ Զի ընկալցին զբարիսն յերկրի աստ ողորմութեն շնորհսն ՚ի ա̃նէ ։ և ՚ի հանդերձեալն զառատապարգև բարիսն որ լինի ա̃մ երանութիք զոր պատրաստեաց ա̃ծ ողորմածաց ։

Երանի այնոցիկ որ սբ̃ են սրտիւք ։ զի նոքա զա̃ծ տեսցեն ։ Որ շնորհօքն ա̃յ հաւատով և ճշմարտութբ̃, սրբութբ̃ և արդարութբ̃ զա̃մբիծս մարմնոյ և մտաց սրբեն զչար ցանկութիւնս ։ Եւ մաքուր խորհրդով և անարատ մարմնով հային ՚ի փառսն ա̃ն ։ և տեսանեն իբրև ընդ հայելի իմանալի մտօք զիմանալի ա̃ծութեն զլոյսն ։ Նա թէ ժանկով մեղաց աղտեղեալ իցէ ։ չար ցանկութբ̃քն և չար խորհրդովքն և չար գործովքն ։ և ոչ սրբէ զխորհուրդսն և զզգայարանսն նայիլ ՚ի վեր ՚ի ճառագայթս ա̃ծութեն ուր քս̃ն է արդարութե արեգակնն ։ Ոչ տեսանէ զլոյսն մեծ ամենա̃ք Երրորդութեն ։ որ յիմանալիսն ծագէ և լուսաւորէ զս̃րբսն սրտիւ և զանարատսն անդամօք ։ Զի ժառանգեսցեն զերանութիւն կենացն անմահից ։ որ տայ աստ զառհաւատչեայ երանութիւն որ ՚ի քս̃ յս̃ ։

Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք ա̃յ կոչեսցին ։ Որ գործակից են որդւոյն ա̃յ ։ որ արար խաղաղութի և հաշտեցոյց զհայր ը̃ արա̃րծս ։ կող 1 ։ 20 Զի որ հրաժարեալ է ՚ի չար ամբոխից և ՚ի խռովութէ և խաղաղացեալ է սիրով, այնպիսին ունի զհինն խաղաղութե մտաւոր հոգւոյն ՚ի քս̃ ։ Զի ա̃ն որդին ա̃յ եբարձ զխռովութին որ յա-

ղագս

զագս մեղաց պարտեացէր առ մարդիկ և աւե-
տարանեաց զխաղաղութի. Նոյնպէս մեզ ասէ
լինիլ խաղաղարար զի եղբարք նր լիցուք, նմա-
նեալք խաղաղարարին. Զի թէ մեծաց իրաց
խաղաղարար լինի և փոքունց յաղագս այդ՝ և
մարդկան փրկութե, և բառնայ ՚ի միջոյ զխռովա-
կար թշնամութի հոգւոյ և մարմնոյ, հաշտ և խա-
ղաղական հանդիպի. և զանուն և զփառս որդ-
ւոյն այ ժառանգէ հանդխիւքն լաւութե.
Որ է որք և անբիծ և անարատ խաղաղարար ՚ի
քս. որ աստ մեծարի և պատուի, և անդ բարձրա
նայ և փառաւորի խաղաղ երանութբն որ ՚ի քս.
Երանի որ հալածեալ իցեն վս արդարութե. զի
նց է արքայութին երկնից. Զի վկայեցն զհանդէս
ցուցանէ բանս և զմն առաքինութեց. զի որ
յմն օտար է, և մասն ինչ չունի ընդ երկրա-
ւորս և պատճառ ինչ եկամուտ զբաղման, անյար
՚ի փնաւակար ցանկութիս, Այնոքիկ են որ ՚ի չա-
րեն հալածեալ են և առ ած դիմադրաւեալք
հաւատով վս ճշմարտութե աւետարանին քարո-
զութե. Որպ առաքեալն ասէ, որ կամին ած-
պաշտութբ կեալ ՚ի քս, ՚ի հալածանս կացցեն. զի
մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն ՚ի
չար անդր ՚ի մոլորեցուցանել. 2 տիմ 3. 12. 14.
Իսկ որք հալածեսցին ՚ի չարեն ՚ի բարիսն որ
առ ած և յայս առնել. զի մի նմանեսցին անա-
ռակ որդւոյն և խաբեալ ՚ի դիւաց ելցեն ՚ի
հայրենի խնամոցն. վատնեալ զբրբութե զվարսն
անառակութբ. Այլ դարձին նորին նմանեալ ՚ի

հայրենի խնամոն. ՚ի չարաչարս հալածեալ ՚ի դի
ւաց և ՚ի մարդկանէ, հասցեն հալածանօք ՚ի խոս_
տացեալ աւետիսն արքայութե անճառ երանութե.
Երանի է ասէ ձեզ, յորժամ նախատիցեն զձ
ձեզ մարդիկ և հալածիցեն. և ասիցեն զամ
բան չար զձէնջ սուտ վս իմ. ցնծացէք և ու_
րախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
Զի ՚ի ձեռն լուռութե փառք և պարծանք ըն_
ծային յոյ. հանդերձեալք նահատակել ՚ի քս. որ
զհնուորին ընդդէմ հակառակին ճշմարտութե.
Այլ օգտակար է առ ամ մարտուցեալսն համբե
րութի ՚ի կամս այ. զի զաւետիս բարութեցն
ունիցին զարդիս և զհանդերձելոցն. Զի այսպ
ասէ առնէին մրգցն որ յառաջ քան զձեզ էին.
Որք զանուն և զոգի ժառանգեցին համբերութե
բազմաւ. Ոմանք ոպ զերկաթ անվտանգ, և կէսք
իբրև զպարիսպ պղնձի ամուր. և այլք որ զար_
ծաթ ընտրեալ և սրբեալ ՚ի հրոյ փորձութեն.
Իսկ այլք ոպ զոսկի պատուական ՚ի սպաս. կամ
ոպ մարգարիտ գեղեցիկ. կամ ոպ զականս մե_
ծագինս որ ՚ի փառս թագաւորաց. Նոյնպս ամ
սրբք և համբերօղք զանազան տանջանօք փորձա_
նացն ՚ի դժնդակացն կազմեցան և եղեն վէմք
պարզին ՚ի փառաւորութի անմահ թագաւորին.
Զի ոպ զանազան են հանդէսք իւրաքանչիւրոցն
վկայից, և խոստովանողաց, և կուսանաց, և պար_
կեշտ ամուսնացելոց. Նոյնպէս և պարգևքն ըստ
իւրաքանչիւր արժանեացն բաժանին և որոշին
ամցուն ՚ի այնէ, որ ՚ի միա առնու զամցուն


զկար-

զխորհուրդս և զբանս և զգործս ։ Զի որք ճշմար-
տութբ և անարատութբ և անբիծ սիրով նահատակին
ընդդէմ չար ցանկութեանցն և ամ մասնաւորաց և լինին
յաղթօղք, զմարտիրոսացն առնուն զպսակն ։ զի
լնուն զբանն տն ։ Առցէ ասէ զխաչ իւր հա-
նապազ և եկեսցէ զհետ իմ ։ Զի խաչ մարմնա-
կան ախտիցն և դժնդակ վարուցն մահ գործէ ։
որպ սրբքն զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կա-
րեօք և ցանկութբ յառաքելոյն վկայեալ ։ Գաղ 5·24
Զի որպ նց պէսպէս տանջանքն, սոյնպս և սոցա
զանազան փորձանքն ։ զի յամի 'ի չարաչար մար-
տիցն տաժանմանց ոչ յաղթահարին 'ի հոգևոր
պատերազմին որպ քաջամարտիկ ։ այլ զյաղթութե
զշնորհսն երևեցուցանեն 'ի փառս այ ։
Բայց է 'ի նմա առաւելութի կամ պակասութի առա-
քինութե ։ ըստ նմին և վարձքն ։ եպիսկոպոսաց
և քահանայից և սարկաւագաց և դպրաց որք կու-
սութբ նահատակին ։ Այլ և միանձունք և որք
ամուսնացեալք զանազանեալ են 'ի վարս ։ որք
ստուգապէս ցուցանեն յաւուրն յետնում
յարութե որ 'ի մեռելոց՝ զիւրաքանչիւրոց վա-
րուց զպտուղն ։ Իսկ որք զճշմարտութին անխրա-
էութբ ունին, կերպարանեալ պատճառանօք զար-
դարութի ։ և են անօրէնք և կաշառառուք և զօշա-
քաղք և մարդահաճոյք և որ այլ ևս են արատք
և արատք զորս ծածկել ջանան ։ Այլ ոչ ինչ է
'ի ծածուկ որ ոչ յայտնեսցի (ասէ տէրն ։) և
գաղտնի որ ոչ ծանիցի ։ Մաթ 10·26 ։
Զի սուտ երևին ոմք և արդարք ։ որք ճշմա-
րիտ

րեն հանդերձեալք վշտացան՝ նախատանօք թշնա-
մանեօք և բազում նեղութեամբք տանջեալք, ՚ի ճշմար-
տութենէն ոչ վրիպեին ։ Սոքա և առին աստ զառ-
հաւատչեայ յուսոյն զերանութին . զի վիշտքն ան-
ցանեն, բայց աւետիք երանութեցն կան մնան ։
Զի աստ առին զազատութին, և անդ ժառան-
գեսցեն զարքայութին ։ Զի ի մէջ հանդերձեալքն
լուսոյ՝ զերանութեցն զգրաւականն ընկալան
բարի վարուքն . որ է պատճառ փրկութե յերևե-
լիս և յաներևոյթս՝ ՚ի պատմելիս և յանպատմելիս ։
Բանն որդի առ հայր ասէ, ով դու և ես մի
եմք, այնպէս հաստատեցէք ՚ի մեզ լիցին ։ յոհ 17.22
Զի այս զորդեգրութե շնորհս ՚ի հօրէ, և ժա-
ռանգաւորս առնէ իւր զմեզ իւր ։ Զի ես
մեզ լոյս աչաց՝ խրատ մնաց . զի արթունք և
զուարթունք եղիցուք ։ Նա կենաց լուսովն ա-
ռաջնորդեալք և հոգևորական խրատուն յամ
գործս արդարութե իմանալի լուսովն կալ մնալ
մեք և արդար ։ Զի հոգևոր մեք զգոյշ խրատք՝
զգուշութի ճշմարիտ վարուցն տան . և ՚ի հոգևոր
կարգս յորդորեն զմեզ ։ Զի զոր ինչ խորհի
ոք զատանիս հիւթանիւթ իւր՝ զնոյն և զշարժ-
մունս մարմնաւոր յիշատակօք ունի զաղտեղու-
թեն . որ պղտորէ զմիտս և զզգայարանս մարմնոյ ։
Իսկ եթէ զհոգևորն խորհի զսրբութի ՚ի մէջ
հոգւոյն ազդեցութե , զհոգևոր վարուցն խորհի
և ջանայ կատարել զառաքինութիսն և վայելել ՚ի
շնորհս հոգւոյն որ անասելի է և անլռելի . զի
հոգևոր է և մտաւոր . և նա միայն գիտէ որում
աշ

աղէկ։ Իսկ որ գիտաց մերձենալ 'ի շնորհն յի-
շատակաւ սրբութե. և անմեկնելի լինել յանուշու-
թեան վայելչին. և 'ի նո գեղն ցանկ պշնուլ։
Ուսանօրեայ խորհրդովք մերժել զչարին
յարձակումն 'ի մոլթագին խորհրդոցն։ Կանխել
յաղօթս և 'ի խնդրուածս ջերմեռանդն արտաս-
ուօք և պինդ պահօք. ունելով և զուսուրս աղօ-
մութե։ Հանել զինքն 'ի վեր և բարձրանալ 'ի
վերոյ քան զերկրաւորաց շարժմունս. և առնուլ
զհաստատութի հոգևոր օգտութեցն որ ըստ հա-
ճոյիցն այ։ Յորդորիլ ըստ առաքելոյն բանի, 'ի
վեր նայիլ և զվերինն խորհիլ ուր քս նստի ընդ
աջմէ հօր։ Զի մեռայք ասէ զմեղացն մահ.
և կեանքն ձեր ծածկեալ են ընդ քսի յած-
հայր։ Կող 3. 1. 3։

Զի զամ զհոգս երկրաւորս 'ի բաց ընկեցել որ
խափանիչ է հոգևոր երկնային կոչմանն, ամ մշակ
առ գործ և զինուոր առ պատերազմն զինեալ։
Որ յամս է մեզ պատերազմ առաքինութե. հանդի
սանալ միշտ և արթնալ. զի կարասցուք հարկա-
նել զգունդս չարեաց. զցանկութի և զամբարտա-
ւանութի և զագահութի. և որ ընդ սոքօք են ար-
կածք մնասուց յաղթմանէ չարին։ Զի նմա-
նեալք հաւատարիմ ծառային, մտցուք յուրա-
խութիւն տն. ընդունել զերանութիւն 'ի քս որ
կեանքն է հաւատացելոց։

Եւ ոչ լուսովնո գնայ անառակն և ստահակն.
զի ոչ գնայ ընդ ճանապարհն արդարոց որ տանի
'ի կեանսն. և ոչ առնու 'ի միտ զխրատ իմաստնոց

և

և զածայինն գրոց․ այլ ոչ զհոգին ընդ թակարդ անցուցանէ զնոսա։ Ոչ յաղագս այսորիկ ասէ տէրն ո՛չ տալ զսրբութի շանց, և արկանել զմարգա–րիտս առաջի խոզից ։ մտթ 7․6 ։

Զի մարդ բարի է ուէ ի բարի գանձուց սրտին հանէ զբարին․ և մարդ չար զչարն ի վեր բերէ 12․35

Զի յանձնիշխան կամօքն շարժի յոր և կամի․ թէ ի լաւն և թէ ի վատթարն ։ Ոչ առաքելն ասէ, յառնել ամբարշտէ յետ երկիցս խրատե–լոյ հրաժարեա՛ ։ տիտ 3․10 ։

Ոչ դաւիթ ո՛չ տայ թոյլ մեղաւորին պատմել զօրէնս տն․ որ ատեաց զխրատ և յետս ընկեց զիրաւունսն որ յոյյ եդանէ։ Յանդիմանին խըս տագոյնս՝ որք զօրէնս ասեն և ոչ առնեն․ մտթ 23․3։ և որք լսեն և քամահեն։ տիմ 1․5։

Զի տմ գիրք ի խրատ են և յանդիմանութի․ որ քարոզեն զփրկութի այնոցիկ որք հաւատով ամբարել յանձինս զոր լսենն։ 2 տիմ 3․16։

Զի որ թուի մարտուցելոցն պատերազմին դըժ–ուարին, և յաղթեալք՝ խնդան ոչ սակաւ․ և ա–ռաւել մարտին՝ յաղթութին հոգևորացն է խըն–դութին ։ Մեծատունք և աղքատք յանձնիշխան կամին ունին առ բարիսն շարժումն և առ չարսն ։

Զի աղքատն լի՛ է փառօքն մեծացեալ, որ աղ–քատութեն և տմ առաքինութե է յարդարեալ․ Նոյնպէս և մեծատունք անբիծք և ողորմածք որք զկարօտս լցուցանեն․ զի զմեղս աղքատութի ոչ բով զոսկի սրբէ յաղտոյ․ և ի պատիւ փա–ռացն ոյ բարձրացուցանէ երկնից մեծութեն։

Այսպէս որ համբերութե՛ և ժուժկալութե՛ և անտրտունջ ունին զաղքատութի՛ մեծանան։ Նոյնպէս մեծատունք որ գթով խնամեն և դար-մանեն զաղքատս և զկարօտեալս, նոքա զանմա-հութի և զփառս և զպատիւ ժառանգեսցեն որ անանցանելին է։ Ապա թէ զաղքատութի ոք անի-րաւութե՛ ունի և անխտիր է յանառակութի ՚ի շնութի ՚ի գողութի ՚ի չարութի ՚ի ստութի և յամ գործս չարս, նոքա ընկալցին զպատիժս յերկրի, և անդ զանզերծ զպատուհասն։ Իսկ մեծատունք որ արգելուն զկարօտելոց զպէտսն, և ՚ի շուայլու-թե և յարբեցութե են, եկեսցէ օր՝ որ նոց յա-նկար յորում ոչ գիտիցէ. և ընդ մէջ կտրեսցէ զնա ՚ի կենաց. և զմասն նոր ընդ անհաւատսն դի-ցէ յանշէջ հուր գեհեննին։ Մատ 24. 50։ զի էր յանառակութե. և զտուեալն յայս մեծութի ոչ իրաւապէս բաշխեաց աղքատաց։ Զի իւրա-քանչիւրոցն է ինչ ըստ բարեաց գործոց. միա-գամայն և անիրաւաց՝ ՚ի դատաստանին։

Նոյնպէս և առողջութի ունի շնորհս և զփառս. զի առողջն մարմնով որ կացցէ ՚ի հոգևոր առող-ջութեն, ժրացել ՚ի բարեպաշտութե ջանս, ընդու-նի զաշխատութե զհատուցումն զհանգիստն անանց։ Ապա եթէ ՚ի ծուլութե անցուսցէ, ընկալցի ոչ զհանգիստ, այլ զպատիժս։ Նոյնպէս հիւանդն մարմնով և առողջն հոգւով՝ եթէ կացցէ ՚ի համբերութե և ՚ի գոհութե այս, մաքրեալ յամ սխալանաց։ Յուսայ յամ և նմա հատուցայ ըղ-ջահ անձինն զմահ և զկեանս, ընդունի զօրհնու-թի

յա՟յ և զկատարեալ առողջութի՟ն. ուստի մերժեալ
են ցաւք և հեծութիւնք և տրտմութիւնք. Նա՛ այսպ՟ս
և սա ընդունի ըստ արժանեացն զհատուցումն.
Նոյնպէս և իշխանք որք ունին զվերակացութի՟ն
ն՟ի եթէ զերկոցունցն հոգասցեն զա՟ծ ունիլ
'ի մտի և ոչ թողուլ 'ի մտաց զկեանսն ն՟ր. զանձին
արքութի՟ և ունողութի՟ զա՟մ արդարութիւ և զուղ
ղութիւն. և խրատունս առ ամենեան ցուցանել.
Նա՛ որք ընդ իշխանութ՟ք են՝ 'ի մտերմութե
կեալ. զի ոչ ուստեք է իշխանութիւն՝ բաց
յա՟յ. և որք ենն՝ յա՟յ են. Հռ. 13. 1.
Իւրաքանչիւրոք զիւր վարձս առցէ յարդար
դատաւորէն. իշխանք՝ և որք ընդ իշխանութ՟ք
են. զի ա՟մենեցունց մի է տ՟ր արդար որ ըստ արժա
նեացն պատուէ և փառաւորէ յորժամ գայ
փառօք հօր դատել զերկիր. Զի որ արդարքն
են՝ անդ բազմապատիկ առնուն զհատուցումն
յարդար դատաւորէն. Իսկ որք մեղաւորքն
լինին, զպարտիս մեղաց իւրեանց հատուցանեն.
որք արհամարհեն զբանն ա՟յ և ոչ ապաշխարեն.
զի ա՟մենեցուն լինի հատուցումն խորհրդոց և գոր
ծոց երկրաւորացս. Զի զօրաւորաց և տկարաց
և ա՟մի իսկ՝ կայ յանդիման լինել առաջի բեմին
ք՟ի. որոց զբարին գործեալ իցէ՝ ընկալցին ըզ
կեանսն յաւիտենից. իսկ որք ապստամբք են
'ի ճշմարտութենէն և գործեն զչար, անվախճան
տանջանքն կայ մնայ նոցա.
Նոյնպէս վերակացուք և որք ընդ վերակացու
թ՟ք են ունին զահս և զխաս. Զի որք
վե-

վերակացութիւն ունին, և զինքեանս այ՟ կամացն
տուեալ են 'ի հնազանդութիւն յերևելիս և յանե_
րևոյթս. որք և անարատ, պէտ և առաջնորդ, զա՟ծ
ունին 'ի խորհուրդս միամիտս, և զինքեանս որ_
բանեակ մն՟ կացմեն. Նախկինքն առաջնոր_
դեալք յամ՟ արդարութիւ, զանվախճան վերակա_
ցութիւն առնուն ընդ սերովբէս և ընդ քերով_
բէս ը՟ երկնայինն զինուորութիւն սպասաւորս այ՟.
Զի առաքեալք և մարգարէք և քահանայք այ՟
որք, առին իշխանութի 'ի տնէ և եղեն վերակա_
ցուք Ճշմարիտք. Եւ զոր կապեցին յերկրի,
եղիցին կապեալ 'ի յերկինս. և զոր արձակեցին,
եղիցին արձակեալ 'ի յերկինս. Այնպէս և այժմ
մեզ տուաւ շնորհս այս յորարջէն. Իսկ որ ա_
ռեալ զվերակացութիւն' յղփացի և ծուլացի
հպարտացեալ իշխանական ձոխութբն և ըստ կա_
մաց իւրոց վարէ զառաջնորդութիւն և ոչ 'ի կամս
այ՟, և երկբայեսցի 'ի յուսոյն քի՟, անկցի 'ի փոր
ձանս և առանց բժշկութե է նր՟ բեկումն.
Տեսանէի (ասէ տրն) զսատանայ անկեալ յերկ_
նից զառաջնորդն դիւաց հանդերձ իւր հաւա_
նելովքն որ եղև կորուստ մեզ և առաքինեաց.
Որք առին հրաման 'ի տնէ լուծանել զնր՟ զթոյնան
ամ՟ օձից և կարիճից, և ոչ կարեն մեղանչել ղուկ 10.
Իսկ և հաւանեալքն նր՟ կամացն և ապստամ_
բեալքն 'ի Ճշմարտութէն, զնոյն պատիժս կրեսցեն.
Զի 'ի ձեռն իշխանաց արդարոց և առաջնոր_
դաց մեզ' է շինութի աշխարհի, և եկեղեցւոյ այ՟
հաստատութի 'ի բարի կարգս. զի նոքօք զօրանայ

իրա_

իրաւունք յերկրի և մեծարի սրբութիւնն ։
Որք ընդունին զհատուցումն բարի ըստ բարեաց
գործոց․ համանգամայն և չարեացն որք ոչ կամե-
ցան գնալ յօրէնս Այ։ Եւ յիմաստութի դէ-
մայն երեւին որք ըստ Այ վարին և որք ոչ ըստ Այ։
Որ իմաստութբ տիրէ, և խորհի յօրէնս Այ ՚ի
տուէ և ՚ի գիշերի․ և ամցուն լինի ուխտ մըր-
կուէ, այն է վերին իմաստութի․ որ և խաղաղարար,
լի բարեօք և պտղովք արդարութե։ Յակ 3․17․
Իսկ որք խորամանկին նմանեալ և բանսարկուին՝
լի անօրէնութբ և դժնդակութբ․ նախանձ․ շող-
մոգ․ չարախօս․ Այ ատեաց․ գտիչ և նորոգիչ չա-
րեաց, Հռօմ 1․29, տայցեն վրէժս ՚ի հուր գեհե-
նին որ պատրաստեալն է սատանայի և որսացե-
լոցն ՚ի նմանէ ՚ի նր կամսն։ Ո՜ւր է դիւրագոյն է
որք իշխանութբ են կատարել զառաքինութիւն, քան
կամակար իշխանութբն․ զի որում շատ տուաւ
ուէ՝ շատ խնդրեսցի ՚ի նմանէ։ Ո՜ւր է որք կար-
գաւորք են ՚ի վարս իւրեանց հնազանդութեն
և արքանեկութեն վկայութբ Այ գրոց, նոքա երա-
նեացին։ Ո՜ւր է անդադար վաստակին ՚ի պէտս
կարօտելոց․ միշտ ՚ի մեներմութե կացեալ և յանա-
րատ սրբութե․ ոչ իմիք դադարեալ ՚ի հակառա-
կացն որք ընդդէմ են բարեացն գործոց․ ազա-
տեալք ՚ի ծառայութէ մեղաց, և արքանեակք
սրբութե և արդարութե վարուց եղեալ, սաս
զմշտատակս գոլուե թողցեն, և անդ զխառս և
զպարգեւսն յԱն վայելեսցեն որ ոչ անցանէ․
Ո՜ւր է կամք բարերարին է՝ ամցուն լինիլ բարե-
րար

րար և ժառանգորդ անապառ բարեացն որ յու-
սացելոցն է։ Աղբիւր է ա͞ծ ա͞մ բարեաց. և առ
բուցանէ զհաւատացեալս ըստ իւրաքանչիւր բար-
ւոյ ցանկութ͞ե ո͞չ շնորհօք։ Նա՛ կեանք է կեն-
դանարար և մշտնջենաւոր. որ կենդանութիւն
տայ ա͞մ արարածոց իւրոց. և բարերար է առ
ա͞մենեան. որ պարգևօք իւրովք շնորհէ՛ զքաւութ͞ի
ոյք դառնան առնա 'ի չարեաց։ Նա՛ լոյս է. որ
լուսաւոր առնէ զա͞մ մարդ որ կայծ 'ի խաւա-
րային մեղացն՝ գալ 'ի ո͞չ լոյսն։ Նա՛ ճշմարտութ͞ե
մուտ է. որք նախաշաւիղ ճանապարհորդեն սըր
բութ͞ե 'ի ճշմարիտ բարիսն։ Նա՛ 'ի նմանէ 'ի
բաց լինիլ ումեք չէք. ո՛չ վերնոցն և ո՛չ ներքնոց.
զի զա͞մ արարածս ընդ ինքեամբ ունի ամենակա
րող զօրութ͞ն իւրով. զերկրաւորս և զերկնայինսն։
Նա՛ գիտէ զխորհուրդս մարդկան և 'ի միտ առ-
նու զա͞մ գործս ն͞ց և ըստ արժանեացն հատու-
ցանէ։ Ես ես եմ տէ ա͞ծ. և չիք այլ ոք բաց
յինէն։ Ես սպանանեմ զմեղաւորս, և կե-
ցուցանեմ զարդարս. և ո՛չ ոք է որ հանէ 'ի
նմանէ զարարածս իւր։

Նա՛ է զոր խրատէ վտանգաւոր պատուհասիւք
որ ապիրատ վարուք ընթանան։ Նա՛ է որ շնոր-
հօք յորդորէ 'ի լաւն և յառաւել փառաց ժա-
ռանգաւորութ͞ին. որք հաւատով և երկիւղիւ
և սիրով մերձենան առ ա͞ծութ͞ին. և սրբեալք
'ի նորա շնորհացն, երախտեօք նորա ծանիցեն
զպարգևատուն բարեաց։

Կոչեաց զհաւատացեալս իւր՝ ժողովուրդ. զի


խընդ-

խնդրեսցուք զողորմութիւն ՚ի նմանէ և արժա-
ցուք զկամս նր̄. Կոչեաց զմեզ և ծառայս. զի
մտերիմ սիրով և մք̄ փառօք կատարեսցուք ըզ-
կամս նր̄. Կոչեաց զմեզ և որդիս. զի զհայրե-
նական խնամսն վայելիցեմք և մի՛ յորդեգրու-
թենէն արտաքս ելցուք անմք̄ փառօք. զի մք̄ է
մր̄ և ՚ի մս̄ բնակեալ. և եղբարս իւր անուա-
նեաց զմեզ. Պատմեցից առ զանուն քո եղ-
բարց իմոց. և ՚ի մէջ եկեղեցեաց օրհնեցից ըզ-
քեզ հայր. Նմ̂ դարձեալ ասէ, յորժամ բարձ-
րացայց՝ զամենեսեան ձգեցից առ իս. յհ ժ. 32.
Զի եկն որդին մյ̄ փրկել զազգս մարդկան. և
ուրախ արար զհաւատացեալս իւր. զի նովաւ
եղաք և նովաւ փրկեցաք. և առնա երթիցուք
որ հրաւիրեաց զմեզ և կոչեաց յիւր արքայու-
թիւնն և ՚ի փառս. յանեղծ և յանվախճան և
յանպատում կեանսն. Զոմանս ինքեամբ և
զոմանս ՚ի ձեռն առաքելոցն և մարգարէիցն և
հոգևոր վարդապետացն. զի զամենեցուն կամի
զկեալն և ժառանգորդ լինել կենացն յաւիտե-
նից ՚ի փառս ամենասուրբ Երրորդութեանն.
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն.

Ներբողեան սրբոյն Պետրոսի Ս. Հօրս Անտոնինոսէ.
Որ հանդերձեալ լուսաւորեանն դասել երանեցան.

## Ճառ ԺԱ

Ամենայն արուեստից լաւութեան եւ քաղցրութեան տուիչ ամենայնի Երրորդութիւն է որ շնորհօք յարդարէ. վասն զի նա է տուիչ եւ յաջողիչ երկնաւորաց եւ երկրաւորաց: Այն որ զմտերիմ հաւատացեալս զիւրս եւ զսիրելիս իւր աշակերտեաց. որք ընկալան զարուեստս լուսաւոր կարգացն եւ վառեցան որպէս զճառագայթս լուսոյ ՚ի մէջ մարդկանց. Զի ասէ Տէրն, դուք լոյս աշխարհի էք. եւ լուսաւորեսցէ լոյս ձեր զմարդիկ. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւոր արասցեն զՀայր ձեր որ յերկինս է. Մատ. 5. Այն առաքեալքն որպէս լուսաւոր տուք շրջիլ յաշխարհի, զբանն կենաց ունել ՚ի զգուշութիւն անձանց եւ ՚ի շահ օգտից բազմաց: Փիլ. 2. 15. Որ նոքօք սփռեաց զճառագայթս բանին կենաց ճշմարտութեան ընդ ամենայն տիեզերս. եւ կոչեաց զհաւատացեալս ՚ի հաղորդութիւն բարերար կամաց իւրոց ՚ի կենդանի փառս անեղծութեան. զի ժառանգաւորք լիցին արարածք արքայութեան արարչին եւ աւետեաց ուրախութեան անձառ բարեացն.

Այսպիսի յուսով հաճեցան սուրբքն եւ կամօք արարչին զամենայն դժնդակութիւնս յաղթմանէ չարին, եւ զշարժմունս մարմնոյ եւ մտաց խափանեցին շնորհօքն Քրիստոսի. անարատ սրբութեամբ, անդադար աղօթիւք ջեր-

Չերմեռանդն արտասուօք և կատարեալ ժուժ-
կալութ ՚ի պահս։ Սանձել զագահութի և զորկո-
րստութի. զլկտութի և զանառակութի ՚ի չար անդր։
Ունել զզգուշութս ողորմութե յիշատակօքն քնի.
յորդորեալք ՚ի հանդէս բարեաց. և արժանի
եղեալք ազատութե շնորհացն և պարգևաց հոգ-
ւոյն սբյ. վկայութ հանդիսիցն լաւութե մբ սի-
րով և մտերիմ հաւատով. ՚ի նեղութե և յանդոր-
րու անդորս և անքին ունել զմիտսն և զգաստու-
թիւն ամ ճշմարտութ։ Ո՛չ ի՛նք ունելով խար
դախութի և կեղծաւոր խորհուրդ անհաւատութե
և անարգութե վարս որ են պատճառք կորստեան։
Նմ զլուսաւոր սրբութին միշտ ՚ի յանձին ու-
նել. անքին երախտեօք սիրոյն սրբութե ծառ-
կեալ առաքինասէր վարուք և պսակեալ յաւի-
տենական յուսոյն ՚ի գովեստ փառացն քնի։
Եւ հրով հոգւոյն սբյ յանարատ սրբութի վերա
բերեալ, օրհնանք ամենասուրբ Երրորդութե
լինել յերկրի։

Ո ի ամ հանդիսից առաքինութե զարդ՝ սրբու-
թին է. յերևելիս և յաներևոյթս հոգւով և
մարմնով։ Եւ ամ արդարութե և քաջութե Թագ
և պսակ պարծանաց՝ սրբութին է միշտ։ Եւ ամ
կարգաց երկնաւորաց և երկրաւորաց՝ փառք և
պատիւ և մեծարանք՝ սրբութին է որ ընտանե-
ցուցանէ քնի այ։ Եւ ամ երկնային զօրացն
պատմուճան լուսոյ և արմատ բարեաց՝ սրբու-
թին է։ Որ ճշմարտեալ և միաբանեալ ՚ի գովեստ
փառացն այ՝ յանմարմնոց դասուն, և լուսեղէն

մա-

փարուք հաստատեալ կան 'ի սրբութ՟ վ՟ այնորիկ
են ամենայն՟ մրութեանն սպասաւորք.
Այնպէս հրաման առին մբ առաքեալքն զէսն
կարգել 'ի սպասաւորութի եկեղեցւոյն այ. զի
հաղորդք լիցին հրեշտակաց՝ լեալ սպասաւորք
քսի պատարագին. Ո՛ ի որպ հոգի՝ մարմնոյն
յարմարի և անձէ զանձունս հասակի. նոյնպս մտաւ
որ հոգին զամենայնն քննէ և որոշէ զլաւն 'ի
վատթարէն. Այնպս է և հաւատք ճշմարիտ ած֊
գիտութ. որ անձէ զանձունս առաքինութ որ 'ի
քս. և լինի կատարումն հասակի արդարութե.
հաւատարութբ հաւատարիլ անդամոցն քսի 'ի
միաբանութի հանձոյեցն այ: Ո՛ ի իմ լուսաւոր
վարք հաւատոյն բովանդակին. յերևելիս և յա֊
ներևոյթս. զի լուսաւորեալ 'ի գիտութի ճշմար֊
տութե, զօրացի 'ի հանդէս բարեպաշտութեն
'ի քս. զի յամի քսի եղև կատարումն. եթէ
յերկինս և եթէ յերկրի առէ առաքեալն. Կող
1. 16. զի զաներևոյթսն յերևելիս ցուցանեն
հաւատք, և զերևելիս յաներևոյթս 'ի կամս մն.
Վասն անկապուտ են հաւատք. որք զբարիսն 'ի
մեզ ամբարեն. և 'ի ձեռն շնորհացն յայտնեաց
հաւատովլ ած զպարգևս փրկութե անմահից. զի
զամ երանութիւն յուսովլ վայելեսցուք. զի իբրև
առաջի աչաց դնէ մեզ զուարթածաղիկ զուրա֊
խութիւն յուսով. զի մի հեղգասցուք 'ի հան֊
դիսիցն որ առաջնորդեն մեզ յանանց բարիսն
որ պատրաստեալ է մեզ. Այլ նախ սիրով նորա
լցեալ և զարդարեալ ճառագայթիւք՝ յիշատակք

սրբ֊

արբութեն. որ ամ անդամոց և մտաց առաջնորդէ
յորդարութի, հաւատով յամենայնք. Երրորդութին
և՛ ի կամս նր սիրով հաստատիլք։ Զի սիրտ մր
տաճար է հոգւոյն մրյ. և սէր մր ունել՝ ընա-
կարան քի. զի 'ի նմա հանգուցեալ են ամենեքեն
կամքն։ Զի որ կայ 'ի սէրն իմ և պահէ զբանս
իմ ասէ տրն, ես և հայր իմ առ նա եկեսցուք և
օթևանս առ նմա արասցուք։ յոհ 14. 23։
Զորս իւրով բարերարութբն յանձառ բարիսն
վայելեցուցանէ։ Ոյք են որ զբանս նր պահեն.
որք մր սրտիւ և անարատ վարուք յամ ժամուց
մնան անբիծք։ Այլ որք սիրեն զնա, որք սիրեսցեն
'ի նմանէ. և որք խնդրեն 'ի նմանէ, լինի նց պար
գևատու։ Իսկ որք ոչն պահեսցեն զնր զբանն,
ինքնին բանն զոր խօսեցայ ընդ ձեզ ասէ՝ նա
դատեսցէ զձեզ յաւուրն յետնում։ յոհ 12. 14։
Իսկ որ զբան նր պահէ, խլէ 'ի սրտէ զդժնդակ
խորհուրդս մեղաց։ Զանհաւատութի և զերկմը
տութի. զչարութի. զնախանձ. և զաղտեղի ցանկու
թիս հանդերձ ամ չարակարգքն. Այլ 'ի ներքս
բերէ զբարի մր խորհուրդս որ լի է բարեօք 'ի քն
Զի ազատեալք 'ի բծից զգայարանքն՝ կատա-
րեսցեն զարդարութի. և արթուն կացցեն միտքն
զգաստութբ 'ի վր շահիցն և կենարար գիտութն.
Այլ 'ի սատակման պատերազմին՝ ոչ լքանիլ և
լուծանել զարիմատն. այլ ճշմարիտ համբերութբ
զդէմ ունել և երկայնամտել յուսով։
Զի զօրացեալ 'ի քն շնորհօք յաղթեսցէ մար-
տին. և հասցէ 'ի նաւահանգիստն որ 'ի քն

Զի-

Ջնջեսցէ զազդումն չարին և զշարժմունսն բարուցն չարութե. Եւ պայծառութե զշնորհսն ընկալեալ՝ և զգոյութիւն վերնոց և ներքնոց, պատուէրեսցի փառօք և պարծանօք աւետեաց փրկութեն կենաց. Որ կացցէ յայն սէր որ ՚ի քս. որ փըրկեաց զարարածս և եբարձ զթշնամութի ՚ի միջոյ. Արդ՝ եղիցուք նմանօղք նր մեծութեն և շահեացուք զբարիս և զեղբարս. և փոխեսցուք զբարիս մեր ՚ի նշ կարիսն. և զկեանս մեր ընդ մահու նշ. զի լինիցիմք ժառանգաւորք նր տրութեանն. և բնակարան կենդանի կամաց նր. և հաղորդ սքանչելի սիրոյ նր. և կցորդ փառաւորեալ փառաց նորա.

Մեր տր՝ մայր է առողջութե անարատութե և ամբծութե. որ խնամէ և յորդորէ յառաքինութիւ և յարդարէ յամ բարեգործութիւ. Մեր՝ աղբիւր է ամ բարեաց. որ արբուցանէ զմբ անձինս. և գրաւականն ամ երանութեց և մեծութե պարգեւացն այ բաշխօղ. Մեր՝ բղխումն երախտեացն քոյ. և վայելեցուցիչ յանպատումն շնորհս նր. լուծիչ խռովութե և տուիչ խաղաղութե. լուսաւորիչ միտաց և անդամոց. Մեր տր՝ հոգւոց և մարմնոց աներծ ստացուած. զի որք ունին զնա միշտ, են ՚ի կենդանի շնորհսն քոյ. ամենաշահ երանութեք յարդարեալ ՚ի գովեստ փառացն այ. Մեր՝ աւետիք կենդանի յուսոյն. ցրիչ նեղութե և վշտաց. և լուծիչ ամ դժնդակաց ՚ի վր եկելոց որ զինուորին ընդդէմ առաքինութե հանդիսից. Մեր տր՝ երախտաւորք հրեշտակ է խաղաղարար.

որ զցասումն մերժէ և զոխութիւն լուծանէ. և
զնախանձ արտաքս մղէ. և ցածուցանէ զչարն.
Սէր ա՛ծ՝ այգի է վայելուչ. որ խաղողոյն գի-
նեաւ զարբեցուցանէ զմիտս և զզգայարանսն ՚ի
տրտմականացն եկամտից. և ուրախ առնէ ՚ի
կամս ա՛ծոյ. Սէր ա՛ծ՝ ձիթենի է պտղալից ՚ի սուրբ
տի բարեխոհի. մղելով զձիթենին ՚ի լուսաւո-
րութիւն իմանալեացն, և յօծումն երևելի անդա-
մոցն ՚ի զուարթութիւն. Սէր ա՛ծ՝ հոգևոր կարգաց
յարդարիչ է. և մարմնաւոր վարուց յանձանձիչ.
որ ՚ի միասին կայէ, և ոչ տայ բաժանիլ և քայ-
քայել զհ տարակոյց բարին. Սէր ա՛ծ՝ բանալի է
դրախտին կենաց. որ զկեանս բաշխէ. և աներև-
ոյթ շնորհացն ա՛յ գանձուցն բաշխօղ ՚ի մեզ ան-
ձինս. և դժնդակ վարուց խափանիչ և ընդդի-
մամարտ մեղսասիրաց. Իսկ ա՛մ արուեստք առա-
քինութ՝ սիրով յարդարին ՚ի սրբութ և յարդա-
րութի. Իսկ նմաւ ցուցանեն զհանդէս լու-
սութե իւրեանց որ է փրկիչ չարի և յորդորիչ
բարեաց. զօրավիգն ա՛ծասիրաց, և կործանիչ խո-
րամանկաց և մեղսասիրաց. Իսկ խառնեալ մեզ
ակեր ընդ հաւատոյ և ընդ սիրոյ՝ հանդիսանայ ՚ի
բարեպաշտութե վարս. և ՚ի մխիթեանց հաղորդութեն
յոյսմի առնէ զլուսաւոր կարգս. Զի ՚ի պատ-
ճառս առաքինութեցն լուսաւոր թագօքն պսա-
կեսցին յանուշակ երկնաւոր հօրն խնամքն. և
վայելեսցեն յանվախճան և յանպատում երանու-
թիւնն նր. Զի որ ունի զխնամս սիրոյն սր-
բութե առ ա՛մենայն հեռաւորս և մերձաւորս,

առ հոգի և մարմին, զամ ճշմարտութ և երանութ Տր սիրոյն՝ յամենասուրբ Երրորդութենէն օրհնեալ պսակի և մեծարի. և մշտնջենաւոր խնդութքն վայելէ յանվախճան և յանհամեմատ բարութիւնս։ Այլ զի հաստատուն ուղիղ հաւատոց՝ բովանդակից է Տր սիրոյ և յուսոյ անսասանելի կենաց։ Զի շնորհք Տր հոգւոյն՝ նովիմբ միաւորելոցն՝ պարփակ ամուր է ապաստանի՝ զամ առաքինութեցն շրջապատ։ Որ ոչ փոխահասցի թշնամին առնուլ զամուրն. որ պահի 'ի զգուշութե հաւատով և արթնութք. և յիշատակօք յուսոյն մեայ անդրդուելի. միշտ գոհանալով և փառաւորելով զտէր անյագ բաղձանօք։ Յորդ և քաղցր անձկով փափագիլ առ աղբիւրն շնորհաց. ըմպել անյագ 'ի նր բղխմանէն և արբուցանել զտունկս արդարութե և զսերմանիս բարեպաշտութե շնորհացն արտասուաց վտակօք. զի զառհաւատչեայն բերցեն զպտուղ։ Զի գարուն հոգևոր է այժմ անձմանն հաւատոց և սրբութե սիրոյն. որ զամ առաքինութիս բողբոջեն։ Որպ տունկք և բոյսք բերեն զսաղարթս և զծաղիկս 'ի ձմերայնին կապանացն լուծեալք։ Նոյնպէս և ջերմութբ Տր սիրոյն և հաւատով և շնորհալից արտասուօք՝ առաքինութիւն փայլէ ամենասուրբ Երրորդութեանն կամօք և շնորհօք։ Այլ հաստատութի հաւատոյ՝ և Տր սիրոյն հաւասարութի յոր կայծն և յորդորէ, զամ հաւատացեալս 'ի քս ժողովէ։ Այլ նա է նաւահանգիստն մեր և բաշխողն պարգևաց. կենդանի աղբիւր և ճաշակ անմահութե. որ զամ

Տր

մեր վայելչութբ պատկէ յաւէժ կենդանի երա_
նութեն ։ Մա՛ զիւրաքանչիւրոց զքաջութիւն
վերաբերեալ յորինէ և կազմէ օգտակար շահիցն
փառօք ։ Մա՛ լուսաւոր առաքինութեցն համ_
դերձ ցուցանէին աստ և արուեստիցն բարուք ։
զի ըզգուշութի զգաստութեն մմ զգայութեցն՝ հա_
ւատովլ և մք սիրովլ և անարատ ամբծութբ յինքն
հրեաց ։ որ ՚ի բաց մերժէ զախտոյ բժան ՚ի
մարմնոյ և ՚ի մտաց , և յատակէ մք սիրովն որ առ մծ
Որ կարողն է ընտրել զօգտակարն և անարգել
զվնասակարն ։ և յորդորէ լինել մտացն և զգայու
թեցն ՚ի բարիս ։ և ՚ի խորդախութ վնասուցն պա
հել զմտաց ահիւ և զգաստութբ միշտ ։
Զի յերկիւղն այ ամփոփեալ միտքն ՚ի զգու_
շութի այ բանին , և զգաստութեն առաջնորդեալ ,
անարգեսցէ զչարն և ընտրեսցէ զբարին ։ և կաց
ցէ և մնասցէ մք և արդար յերևելիս և յանե_
րևոյթս արթուն և զուարթուն ։ Զի մի խո_
րամանկեալ չարին՝ մտցէ ՚ի ներքս ընդ միտսն
կամ ընդ զգայութիւն և յափշտակեսցէ զառաքի_
նութե զգանձն ։ և պարտաւորեալ գտանի ՚ի
հեղգացելոցն դատաստանին ։ որ ոչ հսկեալ պա_
հեաց զտուն գանձուցն առաքինութե ։ այլ թող ետ
ական հատանել և գողանալ զբարի մեծութին
յորս վայելելոց էր ՚ի հանդերձեալսն ։ և մն այ
սորին պատժի մն հեղգութեն ՚ի գեհենին ։
Արդ՝ եղիցի զգուշութի ՚ի պահել զամուրս և
զզգաստութե զգանձն ՚ի քն որ ՚ի մարմնի է զոր
գտեալ շնորհօք ։ զի նովաւ ապրեսցուք ՚ի խո_
րա_

բամանկուէ բանսարկուին պատրանացն։ Այլ հա
ճոյացեալք կամացն նր՝ մնացուք ՚ի խոստացեալ
բարութիւնս։ Աւանց ամ փառաւոյց զամ ճշմար-
տուին և զպարծանս նր փառաւոց ընդ մեզ ունե-
լով, հանդիպեսցուք ՚ի գոգն հանգստեան և ՚ի գիրկս
մխիթարութե և ՚ի լոյսն փառաց անշիջանելի։
Այլ ընդ բազմաբեր պտղոյն մերոյ՝ առաւելլա-
ցին պտուղք և փառքն մեր․ և ազատեալք ՚ի քո
առցուք զպսակն պարծանաց յամենակալ հօրէն։
Նսացեց և վն նր հեզութե․ որ առողջութիւն է
խլրտման ցաւման մտաց և մարմնոյ։ Ով ի լու-
սաւորեալ անարատ հեզութէ և անբիծ սիրով որ
հաստատին յարդարեալ է, ՚ի հաճոյս նր հոգւոյն
և ՚ի կամս որդւոյն և ՚ի փառսն հօրն երկնաւորի՝
առողջացեալ և ճշմարտեալ ՚ի նր սէր նր, պահես-
ցին անձինք մեր․ և ՚ի հարուածոց յանդգնութեցն
ազատեսցին․ և հանդարտութիւն առցեն ՚ի չա-
սակար մարտիցն․ և ՚ի չնչել այսոյն չարութեան,
ցածուսցին ՚ի միտս և ՚ի մարմինս․

Հեզութի սանձք է բարկութե և շարժմանց
ցասման և վնասակարաց․ ՚ի լկտութի և ՚ի ստահա-
կութի և ՚ի թշնամանսն յանդգնիլ ըստ ամի․
Հեզութի՝ քաղցր և անոյշ ճաշակ քմաց․ և ցածու-
ցիչ խռովութե ամբոխից որ յամբարտաւանութե
լինի գերեալ։ Հեզութի հանդարտեցուցիչ մրր
կեալ ալեաց մտաց և մարմնոյ ալեկոծելոց ՚ի
փորձանաց։ Հեզութի արմատ խոնարհութե և համ-
բերութե և ժուժկալութե որ մերձաւորի քսի․
Հեզութի զօրութի է ամ առաքինութե և հիմն ամ

բա-

բարեաց յերևելիս 'ի մեզ։ Հեզութիւն շնորհած
խաղաղութեան, և քակտումն և հերքիչ խռովութեան
ոխութեան և նախանձու՝ երևելի և գաղտնի։
Հեզութիւն աղբիւր է յստակ և անմղ քաղցրացող.
որ արբուցանէ զբարեպաշտութիւն տխրելոց։
Հեզութիւն դաստիարակ է մանկանց և հաւանութիւն
խրատուց և կարգաւոր կարգաց ուսուցիչ։
Հեզութիւն փառք ծերոց. որ նովաւ են հրահան-
գեալ յողջախոհութիւն և յամենայն առաքինութիւնս։
Հեզութիւն պարգև երիտասարդաց. որ նովաւ
յաղթեցին ամենայն հակառակորդաց. ստահակաց և
անիրաւաց խոնարհութեամբ և քաղցրութեամբ։
Հեզութիւն է պսակ պարծանաց կուսանաց. որք
ամենարուեստ երախտեօք և բազմահանդէս
առաքինութեամբք են ընծայեալք 'ի կուսութեան սիրոյն
որդւոյն։ Զարթուցեալք և անվեհեր քաջութեամբ
հնազանդեալք, զհեղգութիւն և զյամառութիւն յոր-
դորեն 'ի հաւատս ճշմարտութեան։ Փոյթք սրբութեամբ
'ի գործս առաքինութեան. անքակ աղօթիւք, մտե-
րիմ կամօք, խոնարհ շարժմամբք, և քաղցր հնա-
րիւք. յորդորեալք յիշատակօք սիրոյն որդւոյն։
Սատարել պահօք սանձելով զըժնդակ և զգաղտ-
նի խորհրդոց զշարժմունսն յաղթմանէ չարին.
առ 'ի չշիջուցանել զհուր ցանկութեան՝ ջերմեռանդն
արտասուօք։ Բաց ունելով զդրունս ողորմութեան
'ի պէտս կարօտելոց. այն կալեալք յուսոյն խոս-
տացեալ աւետեաց իմաստուն կուսանացն։
Եկայք առէ օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք
զարքայութիւնն իմ։

Հեզութիւն մանկանց եկեղեցւոյ սնունդ է․ և
յորդորիչ բոլոր անձանց զգաստութեան և ճշմարտութեան․
որոց սկիզբն առեալ ՚ի տղայութենէ ՚ի սրբութիւն և ՚ի
պիտանութիւն, զբուսանօր վարդապետութիւնն և զհան֊
գամանս ձայնից և բանից ոչ զճառագայթս ա֊
րեգական փայլեցուցանեն փառաւորութեամբ ՚ի
փառս Աստուծոյ վերնոց և ներքնոց․ հանդերձ ամ֊
նք վարուք և խոնարհ սրտիւ․ զի այնպէս լիցին
փառակից վերնոցն ։

Հեզութիւն զգաստութիւն է առաքինեաց, և քարոզիչ
նոյն հանդիսիցն․ որ խմացան զերկրաւորս անցա֊
ւոր․ և բուռն հարին զանանց կենացն միամիտ
սրտիւ և անհեղգ մարմնով․ ազատեալ յամենայն փա֊
ռակարաց մտօք և անդամօք ։ Որ կատարեալ
զամենայն հրամայեալսն ՚ի Տեառնէ, և զայլս յորդորեցին
որ պարտն է պահել արդարոց սրբութեամբ զամ֊
առաքինութիւն․ կամ ոչ դառնալ ՚ի խոստովանու֊
թիւն ապաշխարութեան ։

Հեզութիւն գովելի մեծութիւն է անձանց․ զի երկ֊
րաւոր մեծութիւն մաշի և կորնչի հպարտութիւն․
այլ անձանցն հեզութեամբ մեծացեալք կան մնան ա֊
նանցք․ զորոց զմեծութիւնն ոչ ցեց ուտէ և ոչ
ուտիչ․ և ոչ գողք ական հատանեն և գողանան։
Եւ յաղագս այսորիկ երանէ տէրն զհեզս․ զի
ասէ՝ երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն
զերկիրն կենդանեաց․ ուր ոչ լու համբաւ մա֊
հու․ ոչ դաւ խթ ասէ՝ հաճոյ լինիլ առաջի Տեառն
յերկրին կենդանեաց ։ Այլ և աստէն ունի
զհանդարտութիւն մտաց և անդամոց և առ ամենեան

մ

որ ճակատամարտին ։ Զի հեզութիւն զաղքատս ՚ի համբերութեան կրթէ, և զզօրաւորս զգօն առնէ. առանց խոնարհութեան ունել զիշխանութիւն երկրաւորս. և առանց տղմկի հանապազորդ.

Այս յաղթ ամենեքումբք է հանդարտութիւն և մեծաց և փոքունց դաստիարակ.

Հեզութիւն լուսաւորութիւն է քահանայական շնորհին. զառաջնորդական միտս ՚ի հանդարտութեան ունի. և ոչ տայ թոյլ ցասմանց շարժիլ ՚ի բարկութիւն և ՚ի թշնամանս. անդրդուացեալ զոր ինչ խորհրդոցն է ամբարտաւանիլ ՚ի ցասումն. Նմա հեզութիւն մտայոյզ եղեալ ըստ քն աւետարանութեանն ուղղէ զհրամանս նորայն առ սուրբս գիտութեան, և այնպէս լուսաւորեալք ՚ի հեզութիւն. Որպ զի տեսցեն զգործս ձեր բարիս տուէ տէրն և փառաւորեսցեն զհայրն ձեր որ յերկինս է.

Հեզութիւն որպ աղ է անուշինչ խորտակաց. որ զհամեղութիւն ճաշակացն համահամ մտացն տայ. Զի բանք ձեր տուէ որպ աղի՛ համեմեալ լիցին լի՛ շնորհօք և ճշմարտութեամբ, յարդարեալ հեզ վարդապետութեամբ. զի տացէ շնորհս լսողացն վն հանդերձեալ դատաստանին արդարոց և մեղաւորաց. զի որք լուիցեն՝ իմաստնասցին ՚ի քն.

Կող. 4. 6. Եփես. 4. 29.

Հեզութիւն անպարգամեծար է. որ զձկնորսս քարոզս արար. և աղքատս կենդանարար ՚ի շնորհաց սր հոգւոյն արբուցանելով զհաւատացեալս յանդգիտութեն Հեզութիւն պատկառ է յանդուգն և յանհաւր բարուց. ոչ Մովսէս և Դաւիթ միայն. ումն առ-

աքլո-

ապաստանէ ժողովուրդն, և ոչն առ սա՛ուղ բա֊
զում անգամ երևեր։ Հեզուի իմաստնոց՝ խնա֊
ցուցանէ լռողաց զբանս հանճարոյ. ՚ի միտ առ֊
նուլ զարդարուի ճշմարիտ և ուղղել զկրաւունս
և զամ առաքինութիւս։ Հեզուի զարդ երևելի է
առաքինեաց անձանց. հաւատոյ, յուսոյ, սիրոյ,
սրբուէ, աղօթից, պահոց, խոնարհուէ, ժուժկա֊
լուէ, և ամ բարեաց. Հեզուի սրբուէ զգեստ
է որք մերկացան և ՚ի բաց ընկեցին զաշխարհա֊
կան զցանկութիւնս։ Հեզուի մեծ քան զլուք
և պատկան է ՚ի բազմամբոխ հրապարակաց. որ
զհոգևոր օրէնս հանդարտուէ ճառէ. և հրեշ֊
տակ խաղաղուէ լինի առ ամ լռօղսն և անուն
ամն փառաւորի։ Նա՛ ՚ի հեզոյն և ՚ի մարդասիրէն
այ փառաւորեալ՝ վերացրի ՚ի կեանս. և լսէ ՚ի
ամնէ՝ Էկ հաւատարիմ ծառայ և հեզ. որով ՚ի
սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց
կացուցից զքեզ։

Հեզութե կերպարան փառաց է ան, և գիւտք
հանդարտարար յաւիտենից. որ իւրովք դարմա֊
նովքն ՚ի ձեռն հեզուէ իւրոյ վանք է երկնա֊
ւորաց և երկրաւորաց. մտերմաց հաւատացելոց
մեզ ՚ինա. որ խոնարհեցաւ յերկնից ՚ի յերկիր
՚ի մեծուէ փառաց՝ և էառ զծառայի զկերպա֊
րանս. Ո՛վ ծառայքս զնր զկերպարանն առ֊
ցուք արդարուԹբ սրբուԹբ և ճշմարտուԹբ.
Մի բարերար ամենօգուտ սիրոյն՝ և գրաւակա֊
նաւն զոր էառ ՚ի մէնջ և ինքեամբ նորոյց ը
աջմէ հօր ՚ի բարձունս. և եա յոյս վերատին նո֊
րոգ֊

րոգման ա՟մ հաւատացելոց խոստացեալ աւե-
տեօքն։ Ուր եմ ես ասէ՝ անդ և պաշտօնեայն
իմ եղիցի։ Վ՟ն որոյ հրաւիրեաց զամենեան և կո-
չեաց յիւր արքայութի՟ն և՚ի փառսն։ Եկա՛յք ասէ
առ իս ա՟մ աշխատեալք ճգնաւորական հանդի-
սիւք՝ և բեռնաւորք մեղօք յապաշխարութի՟ խոս-
տովանութ՟ե, և ուսարուք յինէն զհեզութի՟ և ըզ-
խոնարհութի՟։ և գտջիք հանգիստ անձանց ձերոց։
զի լուծ աշխատելոցն յուսովհեզոց քաղցր է։
և բեռինք մեղաց խոնարհութ՟ն փոքրոգի լինին։
Եւ՛ յերկոցունց հաստատութ՟է կայ ընդ աջմէ ա՟յ
հ՟ր և անարատ։ ոչ ինչ ունելով զձախակողմեան
դժնդակութի՟ս։ այլ զաջակողման արութի՟ս։
Զի որք զայս ունին, ք՟ի նման են հեզոյն և
խոնարհին առ արարածս։ և պսակին երանութ՟քն
՚ի խնամոց հ՟ր սիրոյն հեզք և խոնարհք սրտիւք
յամենամբ Եղբորդութ՟են։ Եւ ազատեալ ՚ի
դառն վշտացն և՚ի յաւիտենից տանջանացն, յա-
նանց խնդութի՟ն և յանհամեմատ բարերարութի՟ն
վայելեցուցանէ։ Զի բազմաբոյս առաքինու-
թ՟եքն ՚ի բազմազով կենացն ուրախանան։ և փա-
ռաւորեալ և պսակեալ զանձառ զլոյսն զգենուն
՚ի ք՟նէ յանպատում և յանանց կենացն։ որ պատ-
րաստեալ է ա՟մ ո՟ց ՚ի խորանն յաւիտենից։
Զի բազում և առաւել ևս է ճաշակ քաղց-
րութ՟ե և խոնարհութ՟ե և հնազանդութ՟ե և ողջա-
խոհութ՟ե և անարատ վարուց անբիծ սիրոյն ե-
րախտեօք։ Որով և խորտակեցան դրունք պղըն-
ձիք անհաւատութ՟ե։ և նիզակք երկաթիք անհնա-

զան-

զանգուած փշրեցան. և յաւար եղեն գանձք ա-
ներևոյթ թշնամեացն՝ ճշմարիտ իմաստութեն
քո 'ի հաւատս աւետարանին քարոզութե.
Որ լուսաւորաց նմանեալ որ ճառագայթիւք
լնուն զտիեզերս. և ուղիղ զգնացս մարդկան
ունին ըստ արդարութեան ճանապարհին. զի
Քաղցրութի խոնարհութե և հնազանդութե՝ վայե-
լեցուցիչ է զաղբիւրն բարութե. Նա՛ բժիշկ
դառն ցաւոց որ զառողջութի տայ. Նա՛ բարեաց
առաջնորդ. որ ուղիղ ճանապարհօք յերանութին
տանի. ապաւեալ յամ վշտագին վտանգիս.
Քաղցրութի խոնարհութե և հնազանդութե միա-
ւորեալ՝ է նորոգօղ բարեաց և ժողովօղ ամ
առաքինութեց և վանք սբյ Երրորդութեն.
Քաղցրութի և խոնարհութի և հնազանդութի միա-
ւորեալ՝ զժողովս ճգնաւորաց 'ի միաբան ունի.
և ոչ թողու քակտել 'ի միմեանց. Քաղցրութի
և խոնարհութի և հնազանդութի ընտանեցուցիչ է
օտարաց և զգաստութի մերձաւորաց. Նաւա-
տութիւն ամբարտաւանից և զօրութիւն հեղ-
գացելոց. ցածուցիչ ամենայն ստահակաց, և
զարթուցիչ է կենացն յուսոյն. որ 'ի մեղացն
ազատեցուցանէ 'ի ծառայութե. Նա՛ պատճառք
է ամ հոգևոր շնորհաց, և խափանիչ կորստեան
վնասակար խորհրդոց և գործոց. Բացիչ է ճշմա-
րիտ խոստովանութե, և արձակիչ կապելոց զղջ-
մամբ 'ի թողութի մեղաց. Հրաժեշտ վնասակա-
րացն, և մուտ յորդեգրութի երկնաւոր հօրն.
Օտարացուցիչ է ամ դժնդակաց, և մերձաւորիչ

ժ յու-

յուսոյ կենացն յաւիտենից ։ Տօնէ ճշմարիտ քարոզութեան խնամոց ․ և աղբիւր սննդեան հոգւոյն սբյ շնորհացն բղխման ։ Հեռացուցիչ է անգիտութե, և տուն գանձի է իմաստութե և հանճարոյ։ Ընտանեցուցիչ է ճշմարիտ բարեկամաց, և յանդիմանիչ սպրդողաց սուտ եղբարց ամբարշտաց։ Յուսելոց ճշմարտասիրաց է ժողովիչ, և անիրաւացն ցրուիչ։ Հաստեցուցիչ է սարտուցելոց պարգևատու շնորհօք ․ որ դառնան յիրաւունս արդարութե ․ և կարգաւորիչ է 'ի լաւն առ հասարակ։ Մխիթարիչ է ազգաւորաց, և սփոփանք ամ վշտագնելոց ․

․ Քաղցրութի և խոնարհութի և հնազանդութի անդորրութի է 'ի դարմանս խնամոց ։ Ողջութի է ցաւագնելոց, և յոյս հաստատուն 'ի հանդերձեալ մեծի աւուրն ։ Ծփելոց է նաւահանգիստ, և օգնական առաքինեաց ․ և սրբութե ամենագիւտ հնարք ․ և պղերգաց ձեռնտու 'ի գործս այգոյն որ առնուն վարձս ընդ առաջնոցն։ Դուռն բաց է կենսաբեր 'ի մուտսն, որ ունին զբաղձանս արքայութե ․ ընդ ինքեան ունելով զանբաւ բարիսն։ Նա՛ փակի ապախտաւորացն անհնազանդիցն և ամբարշտացն և մեղաւորացն և որք ոչ լուան նր բանին։ Նա՛ որք խոնարհեալ հնազանդին ը քաղցր լծով ապաշխարութե, ոչ զրկին 'ի խոստացեալ աւետեացն սորա խոստովանողաց և ապաշխարողաց ․ զի ոչ եկն 'ի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։ Նա՛ որք զայս վարս առաքինութե ունին, կենդանի երանութեքն պսակին յամենա-

նր̄ Աստուածութ̄են։ Ապաստեալ ՚ի դառն վշտաց գեհենին, մշտնջենաւոր անմահ խնդութ̄ն յանհամեմատ բարիսն վայելեն ՚ի ք̄ս սքանչելի և լի ա̄մ երանութ̄ք. ուղիղ միաբանութ̄ք հաւատոցն և ն̄ր փառաց։ Զի առողջ անբիծ և անարատ ունին զերախտիս սիրոյն որ առ ա̄մ անդամսն յարմարութիւն ՚ի ք̄ս։ Եփ̄ս 2. 19.

Զի նովաւ հաստատին ՚ի մի կամս ք̄սի և ՚ի մի հաւատ։ և ՚ի նմա բնակի յորդորումն ն̄ց և աճումն առաքինութեան։

Միաբանութ̄ն հաւատոյ և ն̄ր փառաց՝ աղբիւր է գիտութե. յորմէ բղխի անծախաբար այն՝ որ տայ իւրաքանչիւր զէնս նահատակութե.

Զի կամս բարիս յընտրողական միտս. առեալ ըղձջարն և կանխեալ ՚ի սէրն ն̄ց և ՚ի շինութ̄ն կամացն. կատարեալ ապաշխարութ̄ք և մտերիմ խոստովանութ̄ք։ Միաբանութ̄ն հաւատոյ և ն̄ր փառաց՝ խառն ընդ արարչին շնորհս և ն̄ր յիշատակաց ն̄ր՝ անքակ ունի զա̄մ անդամսն առ դրունս ողորմութե սիրոյ ն̄ր վ̄ս ա̄մ բարեաց որ յարաբածս է։ Այլ ընդ այն դուռն մտանեն պարգեք միաբանութե. որ աղաւէ և մեծացուցանէ. և նոցուն միաբանութ̄ն ընդունին անդամքն ՚ի միմեանց զօդնութ̄ի առ շինութ̄իս իւրաքանչիւր կարգի։ Այլ ա̄մ որ քակի ՚ի միաբանութ̄են և ՚ի ն̄ր փառաց, ոչ միայն լինի հրաժեշտ ՚ի յերանութեց անտի, այլ և ՚ի պատիժ մատնի. և ոչ անդամ ՚ի մարմնոյ հատեալ անպիտան լինի. և կամ ոստ ՚ի ծառոց՝ ՚ի հուր արկանի։

Միա-

Մ՝իաբանութ̄ի հաւատոյ յամենաս̄ր Երրորդու-
թ̄ն ՚ի ն̄ր վարս, քաղցր ամուր է երկնային
զօրութ̄ն պարսպեալ ՚ի բնակութ̄ի սիրոյն ն̄ոյ. և
վերին զօրացն ժողով՝ ՚ի նո̄ ա̄մ սրբովք յան-
ձառ օրհնութ̄եան ն̄ոյ. միաբանեալ ընկղմեալ յու-
րախութ̄եան խնամոց ն̄ր սիրոյն. վառեալք յուսով
փառացն ն̄ոյ. սիրօղք զմիաբանութ̄ի անարատ սըր-
բութ̄ե. անբիծ երախտեօքն յոր քո̄ի։ Զի որ
այսպիսի ունի զսէր հոգւոյն հաւատով և ն̄ր
վարուք, կենդանի երանութ̄ն պսակի ՚ի խնամոց
ն̄ր Երրորդութ̄ենն. Ազատեալ ՚ի դառն տանջա-
նաց գեհենին, մշտնջենաւոր անհամեմատ բա-
րեօքն բերկրի յանանց կեանսն։

Աստանօր և գթութեց պէտս ունի. որ կամ է
միաբանութ̄ե. մայր է սիրոյն, և հանգստեան
առողջութ̄ի. անարատ ն̄ր անբիծ երախտաւոր սի-
րոյն աւետեացն քո̄ի։ Զի առատապարգև է
առ մերձաւորս և հեռաւորս. դաստիարակ է մե-
ծամեծաց և օգնական տկարաց. անուցիչ է ընտա-
նեաց և դարմանիչ օտարաց. սիրելի առ երախ-
տաւորս. որ սիրէ զբարեկամս ՚ի բարութիս. և կամի
զդարձ ատելեաց զի հասցեն ն̄ր սիրոյն քո̄ի։
Գթութ̄ի խնամք է ն̄ր սիրոյն. բորբոքումն անձ-
կոյ առ ն̄ր սիրոյն. յիշատակ ծնողաց և յորդո-
րումն ծննդոց. խնդիր հեռացելոց և սնունդ
մերձաւորաց միջոց.

Գթութ̄ի արմատ բարեաց. և տունք ն̄ր խնդութ̄ի.
և տերև ն̄ր զուարթութ̄ի. և պտուղ ն̄ր անհամե-
մատ անուշութ̄ի։ Զի գթովն բանայ զտրտմութ̄ի
յան-

յանցանաց և զաղտաղտուկ ձանձրութի որ վհա-
տեն զանձն. և զսուգ՝ որ ստարացուցանեն և
յիմարեցուցանեն։ Խափանիչ է վատութ. և յոր
դորիչ առատութե. խլիչ ագահութ. և ընդունիչ
ակամայութ. յանդիմանիչ լկտութ, չնչուին
թերահաւատութե, և նշոյլք լուսոյն հաւատոց։
Սէր երկմտութե և մայր կենդանի յուսոյն։
Ստարացուցիչ ատելութեան և անդորրիչ վրան-
գելոց. և մտ՟ նեղելոց սփոփանք.
Գթութի կափիչ հպարտութ և լուծիչ նենգութ.
Խայտառակիչ խորամանկութ և մերժուին ոխա-
կալութ և նախանձու։ Խոշտանգանք է անհնա-
զանդից և բաջալերիչ համբերողաց։ Զօրացու-
ցիչ է ժուժկալաց և սրբիչ գիճութեան.
Արախոյս է երկայնամտաց և ձեռնտու խոնար-
հաց։ Պսակ զգաստութ և անբծութ, և յորդո-
րիչ առաքինութե. Զարթուցիչ է քնելոց և
պղերգաց, և հաստուցիչ է ՚ի գործս հանդստեան
որ լի՛ է մտ՟ բարուք. որ ունի զխնամս գթութ
առողջ մբ՟ անարատ անբիծ երախտեօք խնամոց
սիրոյն. Զի որ զայս հոգևոր գութ յանձն
առացեալ ունի ՚ի վր՟ մբ՟ փարուց, կենդանի երա
նութեք պսակի ՚ի խնամոց սիրոյն ամենամբ՟
Երրորդութեն։ Որ ազատէ՛ ՚ի դատն վշտաց գե-
հեննին. և մշտնջենաւոր անհամեմատ կենօք վայե-
լեցուցանէ ՚ի բարիս.

Սա՛ և զգաստութի իմանալեացն որ հաստատել
է ՚ի հաւատսն որ ՚ի մր՟, իշխանական կամօքն
իւրէ ՚ի զգայութեցն զհաստակարան և՚ի նեղելքս բե-
րէ.

րէ զառաքինութիւն. զսրբութիւն և զճշմարտութիւն
ըստ ա՟մ ։ Խօսել զդժնդակացն եկամուտս, և
փախչել զզէնս հակառակ չարին. և՚ի վայր կործա
նել զհակառակն արդարութե. Եւ հրով հոգւոյն
հալել զսառնամանիք ձմերային մեղաց խստութեն
ջերմեռանդն արտասուօք. Որ արձակէ արմատ
զքաղցրութի և զանոյշ խոնարհութին և զանբիծ
հնազանդութին ա՟մ ճշմարտութբ ՚ի քս. Եւ բարձ
րացուցանէ զսուտն հաւանութե հաւատով յա՟մ
առաքինութե աճմունս ո՟չ զծառս որ տնկեալ
են ՚ի գնացս ջուրց. Որ մեծաւ ցանկութբ ՚ի
շնորհացն այ շարժին վտակք արտասուաց. որովք
մաքրին երեւելիք և աներեւոյթք. և խաղաղ և
հեզ ցօղով արբուցանէ զտունկս և զբոյսս կա_
նուխ և անագան. յոհ 5. 7. և յորդորէ զա՟մ ան_
դամն յանձնին արդարութե ՚ի լաւն և յառա_
ջելն. զի եկեսցէ ՚ի կատարումն առաքինութե
պտղովք արդարութե. Խօսելով զորոմն զբոյսն
օտարոտի. որ ինչ չար սերմանիք ՚ի թշնամւոյն
սերմանեալ ՚ի միտս և՚ի զգայարանս. և զխոտ_
վութիւն ըստ ա՟մ շարժմանց. Յոբ 13. 25.
Զարատութի, զյանդգնութի, զանզգամութի, զանհը
նազանդութի, զբարկութի, զամբարտաւանութի, զը
փառասիրութի, զհպարտութի, զագահութի, զանխըռ_
րութի, զպղերգութի. Այս են պատճառք կորըս_
տեան. վրիպիլ ՚ի մեծ բարեացն շահից, և՚ի գո_
վութէ առաքինութե փառացն. Ամ պարտ է
իմանալեօք որոշել զչարին ՚ի միամիտ խորհրդանն
և հաւան կամօք գործել զբարին. անոյշ և

քաղցր

քաղցր և լուսաւոր յորդորմամբ՝ ամենադիւա շնորհօքն քո։ Յիշատակօք երախտեաց սիրոյն որդւոյ և հաճոյից կամաց տն բարերարի՝ արբանեակ լինիլ շնորհացն ՚ի փառս և ՚ի պատիւ կենաց տուողին։ Ո՛վ գործակից լինիլ նր բարերար կամացն հանապազ և ճշմարտիլ ՚ի հաւատս. առողջ ոք անարատ և անբիծ երախտեօք հաստատեալ կալ։

Ո՛վ զի ՚ի գլուխն տմ զգայութեց՝ իմանալիքն որ ՚ի քո՝ շնորհօք տմ անդամքն յարդարեալ և պատշաճեալ անձն զանձուն այ որդ առաքեալն ասէ։ Կող. 2. 19.

Ո՛վ ՚ի նմանէ բաշխին շնորհք իմաստութե յամ անդամսն. յերեւելի պէտսն և յաներեւոյթսն։ Ո՛վ ՚ի նմանէ ըմպեն զհանճար բարեաց. ՚ի մուտս օգտից և ՚ի մերժումն վնասակարաց։ Ո՛վ անոր ծագէ լոյսն յայտնիչ տմ քննութեց. և զգաստանան տմ զգայարանքն. և առնուն զճաշակսն հոգեւորական վայելչեցն. լինին ընտրողք զլաւան անձանց. և առաջնորդին ՚ի զգուշութի իմաստից. և զդրունս բանան իմաստից շնորհացն։

Ո՛վ զգաստացեալ և լուսաւորեալ անվեհեր փութով հանդիսանան յընթացս վերին կոչմանն։

Ո՛վ պատրաստ ունելով զօգտակար շնորհսն հոգւոց և մարմնոց, ժառանգեսցեն զառհաւատչէ յ երանութիւնն.

Ո՛վ բերանն բղխէ յիշխանական հոգւոյն ըղճշմարիտ վարդապետութին առողջութե, անարատ ամբծութե, անբիծ սիրոյն։ Ո՛վ ընդ նա գնան

տմ

ամ վճռակք իմաստութեն 'ի սրտէն յառաջացեալ·
արբուցանել և պարարել զշահեկան երկիր շնոր-
հաց բանին կենաց . առ 'ի յածումն բարեբար
բուսոյն և առ ծաղիկս անուշահոտս վայելչացել
քաղցր պտղոյն։ Այլ զի բերանն է Ճշմարիտ բա-
նին Այ Ճրագարան լուսոյ · որ հալածէ զխաւար
և յայտնէ զմութն · և ցուցանէ զաղտեղութն և
երևեցուցանէ զգայթակղութն ուստի բեկումն է ·
Ժող 12 · 27 ։ Ուստի որդին Այ հնարիւք իւ-
րովք զպատուազինութի նր յափշտակեաց · զխորա-
մանկութի, զյանդգնութի, զյափշտակութի, և զզը-
քանս խաբէից, և զարհաւիրս, հարթուցանելով
'ի Ճշմարտութէ անտի, և որ այլ ևս են մեքենայք
չարին · զոր յայտնեն նշայլք վարդապետութեն
քնի։ Ո՛վ 'ի տայ զհնարս նահատակաց առաքինա-
նալ, և յորդորել ընդդէմ չարին զուղղութին ·
և բառնալ 'ի մեոց զիմաստութին մոլորականս · և
ամփոփել զենքն 'ի Ճշմարիտ վարս · և զգուշանալ
յամ խաստուց · առաջնորդել և այլոց 'ի բարիսն ։
Այլ զյիշատակ սրբութե սիրոյն Այ խորհիմե-
զու ունել 'ի քիմս բերանոյ իւրոյ · զի նա է որ
քաղցրացուցանէ զդառնութի չարին։
Ակ որ բանայ զաչս իւր 'ի լոյս արեգականն 'ի
մէջօրէի որ մերձանայ 'ի բիբսն նր սոյնպս է որ
յառաջ են նայելիքն յիշատակումն սրբութեն · և
յոյս ուրախութե են նր կենդանի սիրոյն խնամքն ·
որ պահէ զնա առանց վնասուց տուժից անբիծ
և անարատ։ Այլ նովին լուսաւոր շնորհիւն տե-
սանէ զկորուսելոց զխտանս · և մերձաւորս առնէ


ողո-

ողորմութե՟ փրկչին · և ՚ի նեղս ՚ի խնամս նորա
կարգէ։ Զի ՚ի ճաճանչ լուսոյն քարոզութե՟ բա-
նին՝ ցուցանէ զդեղ կենդանի յուսոյն · և ըզ-
դարմանս արքայութե՟ն զանճառս և զանպատումս։
Այլ ՚ի ձեռն ճշմարիտ հաւատոյն՝ ընթացուցա-
նէ ընդ ճանապարհ վերին կոչմանն առ հայրն
ամենակալ · և որդին բարերար · և հոգին կենդա-
նարար · որ անճառ է մեծութի փառացն ·
Այլ և գունդք վերին զօրացն եղեն փեսաւէրք
որդւոյն այ և առիթք մերոյ փրկութե՟ս · և քաջա-
լերեն զխրախուս այ · որ փրկեաց զմարդիկ ՚ի
մահուանէ մեղաց։ Զի ուրախութի եղիցի
յերկինս, որք դառնան առ այ և ապաշխա-
րեն։ ղուկ 15 · 10 ։ Այլ որք հաւատացին յայ
և հաճոյացան նմա, որպէս զնոյն ժառանգակիցս
խոյս արքայութե՟ն ։ Զի աստ այժմ ճշմարիտ
հաւատով կատարեցին զբան նր · և ուսուցին ա-
ռողջութի և անարատ սրբութի · անբիծ երախ-
տեօք որ սիրոյն այ։ Զի որ զայս վարս ստա-
ցեալ ունի յանձին, ըստ այմ ճշմարտեալ կեն-
դանի երանութեքն պսակեսցի ՚ի մէջ Երրորդու-
թեն · և ազատեալ ՚ի դառն տանջանաց, ՚ի մշտըն-
ջենաւոր և յանհամեմատ բարիսն վայելեսցէ։
Այլ աչք հաւատով սրբեալ, տեսցուք խնամոցն
նշոյլք է լուսոյն անսպառ ուրախութեցն։
Որ վառեալ լուցանի լուսոյն արեգական ար-
դարութե · որ լուսաւորէ զամ մրս, և մերձաւորս
առնէ ՚ի սէր շնորհաց իւրոց · և բառնայ զխա-
ւարայլին մոլորութին։ Որ անախառ ընթացիւք

ըն-

ընթանայ 'ի կէտ վերին կոչմանն յօթևանս հան
գըստեան ըստ քաղցրութեան լուսոյն այ։
Զի նովաւ հպի 'ի գիրկս սբ սիրոյն որդւոյն
այ, և 'ի գգուանս հօրն երկնաւորի, և 'ի պարգևս
հոգւոյն սբյ յանձառելիսն։ Որ տայ զվիճակ
ժառանգութե իւրոյ այնոցիկ որ 'ի կամս նր վա
րեցան յոլի. և զինուորեցան հոգևոր զինուք
ընդդէմ չարեացն. առնելով միշտ զբարիսն ըստ
աւետարանին քսի։ Եւ կցորդ եղեն նր չար֊
չարանացն քսի. և խաչակից եղեն կամաւոր մահ
ուան նր ամ համբերութբ. ճշմարտեալ անքակ սբ
սիրով 'ի նեղութե և յանդորրու։ Իջուցին
զպատիւս ողոքանաց և զխիստ բռնութի կատա֊
րեալ ժուժկալութբ. Հանապազ ակն կալեալք խնա
մական աջոյն. որ զօրացուցանէ զյուսացեալս իւր,
որ իմանալեաց աչաց և երևելեացս լոյս՝ նր է։
Զի հանապազ կանխեալ 'ի պաղատանս խոնարհ
սրտի և ջերմեռանդն արտասուօք զաղօթսն մա
տուցանեն այ 'ի բոլոր սրտէ։ Յաչացն հեղլով
զարտասուաց հոսանսն. որ 'ի ձեռն գթոյ և անձ
կոյ յառաջագայի 'ի նշողից շնորհաց աւետեացն.
որ բառնայ զվիշտս և զվտանգս 'ի բեռնաւորաց.
և ընու բարութբ՝ յորդառատ զզջմամբ. և ըն֊
դունարան լինի սբյ հոգւոյն. որ յայտնէ զծած
կեալս և զանքննինս սիրելեացն այ. զի և զփա֊
փագումն կարօտութե անձկոյն լցուցանէ կենդա
նի և անճառ ճաշակօքն 'ի բարերարութէն։
Եւ լոյսն ահեղ անմատոյց՝ ոչ մերժի սքանչելս
պէս յանձանց անտի. որ և զտեսիլ աչացն հաւա
տով

տով լուսաւորէ. և ՚ի նշուլիցն շնորհաց ընու-
միշտ. և ծաղկեցուցանէ զպգայութիւն. և զուար-
թացուցանէ սնամաշական խնամովք զայնոսիկ՝ որ
մերժեալ են յինքեանց զաշխարհական զցանկու-
թիւս, և զգեցեալ զսրբութի̄ վերարկուն. անբիծ
հաւատով ՚ի ս̄բ Երրորդութե̄ն ճշմարտեալ. և ՚ի
թևս ս̄բ հոգւոյն վարեալ յ̄մի, ՚ի շինութի̄ և ՚ի
խաղաղութի̄ ըստ ամ̄ի հոգևորօք և մարմնաւորօք.
Մինչև հասցէ յանքոյթ նաւահանգիստն իմա-
նալի տեսութ̄, առողջ անձամբ. անբիծ անա-
րատ. խնամովք ս̄բ սիրոյն՝ երախտեօքն ք̄ի.
Զի որ զայս շնորհ ստացեալ ունի յ̄այ, ՚ի վե̄ր
ամ̄ ս̄բ վարուց կենդանի խնամովք ս̄բ սիրոյն
յամենաս̄բ Երրորդութե̄ն պսակեսցի. Եւ ազա-
տեալ ՚ի դառն տանջանաց, մշտնջենաւոր անհա-
մեմատ ուրախութե̄ն վայելէ ՚ի բարիսն.
Եւ լուելիք անխարդախ հաւատով հնազանդե̄լ
յառողջութի̄ և յանարատ սրբութի̄՝ անբիծ խնա-
մովք երախտաւոր սիրոյն, մտանեն ընդ այն ա̄ծ-
ային պատգամացն աւետիք. և կերպարանեն ՚ի
ներքին մարդն զկերպարանս փրկչին մերոյ ք̄ի
իւրովք փառօքն. Որ ունի յաջմէ զնիշ խաղա-
ղութե̄, և յահեկէ իւրմէ զհաստատութի̄ որդեգ-
րութե̄ն. և ՚ի գլուխ իւր ունի զպսակն պարծա-
նաց. և ընդ մէջ ածեալ զկամարն սրբութեան.
և ճշմարիտ զգաստութե̄ պատրաստեալ զկօշ-
իւր ՚ի զօրութիւնն ք̄ի.
Եւ սելիք դրունք են հաւատոյ ՚ի մուտս զգու-
շութե̄ անարատ վարուց երկիւղիւ և խնդութ̄

խառ-

խառնել. և ելք նր արդարումն և խրախունք ըստ
հոգևոր օրինացն։ Որ կատարեալ սրբութ ծաղ֊
կեալ ՚ի ներքս՝ բուրէ զանուշահոտութ զաղմ֊
սաց և զօրհնութեց. և անդ հնչեն փառք Թագա֊
ւորին անմահի, և բուրեն ոտ յանոյշ խնկոց ՚ի
բերանոց նոց պաշտօնէից. որք սրբութ գովեն
զամենասուրբ զԵրրորդութիւն. Անդ և դունդք
հրեշտակաց բանակ առեալ, և պատրաստութիք
զուարթնոցն վառեալ բորբոքին յերգս հոգե֊
ւորս. հաստատեալք ամենեքին հատուցանել
նմ զփառսն.

Լսելիք հաւատով ճշմարտեալ՝ ընդունելութ է
ծառոյն կենաց և հաւատոյն քաղուէ և որթոյն
փրկութե. և ՚ի նմանէ արձակեն արմատս ՚ի սիրտս
կատարելոց՝ ոյ։ Որ շնորհօք դարմանին հանա֊
պազ և պարարին ՚ի ցօղս հոգւոյն սբյ։ Այլ ամ
արարածք որ գրաւեալ են սրբութ ՚ի սէր նր,
ուրախ են ընդ նմա։ Գոհանան և փառաւորեն
զբարերարն ած որ արար զամենայնս. և յարդա֊
րել պահէ ՚ի փառաբանութի սբ անուանն իւրոյ։
Լսելիք ճշմարտեալք հաւատով՝ վառակք են ու֊
ռոգանօղք ՚ի կենաց աղբիւրէն զանդս մտաց և
զգայութեց յաճումն առաքինութեան.

Այլ զդժնդակացն բերմունս արտաքս հանեն
լաւագոյն ժրութեամբն. որ նիւթոյ հրոյն
ունի զհանգամանս.

Լսելիք ճշմարտեալք՝ զոյն յինքն ամփոփէ.
որ վերստեղծու զզգաստն գիտել և ճանաչել
զբարին և զչարն։ Ոչ այլակեղուքն զլսելեացն

լսեն զառ 'ի պէտսն զլսօսն և ոչ զմերս. այնպէս
որ զայս լսել իս սրբութ̃ ունի, զնոյն լսէ և ոչ
զչարին. Եւ ունկն մեր բանի՛ որ 'ի բերանոց
լսէ. որ մնուտ է և առանց բանի. որ սրբէ զմիտս
և զզգայարանս. և 'ի հնազանդութ̃ն յորդորէ հո-
գևոր օրհնացն առողջ անարատ և մեր երախտա
ւոր սիրոյն. որ կենդանի խնամօք սիրոյն յամե
նայնի Երրորդութեան լուսաւորութ̃բ պսակեսցի.
Եւ ազատեալ 'ի դառն տանջանաց, յանհամե-
մատ բարիսն վայելեսցէ խնդու.

Եւ հաստատելիք հաւատով՝ հաստատեսցին զհաստ
գիտութ̃բ և իմաստութ̃բ. առողջ անարատ անբիծ
երախտաւորք մեր սիրոյն. Եւ ճշմարտեալ անսու-
շութ̃բն 'ի հոգևոր հաստ գիտութ̃բ, արբուցանէ
'ի հոգւոյն մեզ զանձինս 'ի հոգևոր օրհնացն.
Զի 'ի նոցանէ յառաջագայի հաստ գիտութ̃բ
հօր, և ճանաչէ զորդի, և իմանայ զհոգին մեր.
Գիտութ̃բ հօր տաճ̃ր է նր̃ փառացն. և որք
մտանեն 'ի նա խոստովանութ̃բ, դտանեն զնա.
Եւ իմաստութ̃բ որդւոյ խորան է նր̃ ծնելութեան.
զի որ հպին 'ի նա դաւանութ̃բ, մերձեցուցանէ
յինքն և ճանաչէ զհոգին մեր զառ̃իւրն բարեաց
'ի ձեռն ճշմարիտ հաւատոց որ ցուցանէ զլոյս
մեծութեան. որ շնորհօք զառ̃օղն լուսաւորէ.
Հաստ գիտութ̃բ՝ վերաբերէ զմեզ ընդ վերին
զօրս. փառեալ յօրհնութիւս հօր 'ի բարձունս. հօր
և որդւոյ և հոգւոյն մեզ ճշմարիտ հաւատովքս.
Հաստ իմաստութ̃բ հաւատոց՝ տայ ճանաչել զհայրն
ամենակալ, և գիտել զորդին մարդասէր գոլ, և

զհոգին ած պարգեւատու։ Խոստովանելիք հաւա-
տով՝ ընթացուցանեն զմեզ յարքայութիւն երկնից.
և բանան զդրունս կենաց որ առ ած Երրորդու-
թիւն անձկացեալ են. ընդ ինքեանս ունելով զա-
ռաքինութիւնս։ Եւ փառակից լինելով վերին զօ-
րացն՝ օրհնեն զհայրն ընդ սերովբէսն. և գովեն
զորդին ընդ քերովբէսն. և երկրպագեն հոգ-
ւոյն սրբոյ ընդ հրեշտակս՝ միոյ աստուածութեան.

Խոստովանելիք ճշմարտեալք հաւատով՝ որոշեն
զհոտ կենաց և մահու. զարքայութեն և զդժոխոց.
զսրբութեն և զաղտեղութե. զարդարութեն և զա-
նիրաւութե. Ոմանց գովութե և շնորհօք բուրեն.
և ոմանց պարսաւանօք զազիրս. 2 կոր 6.8.

Զոմանս վայելչացեալս յերկրէ ամբառնայ
յած. և զոմանս 'ի վայր բերեալ և խորտակեալ 'ի
վիհն կորստեան ընկենու.

Խոստովանելիք ճշմարտեալք հաւատով՝ ճանաչեն
զորդիս լուսոյ և զորդիս խաւարի. իմանալ ըղ-
խնամս իւրաքանչիւր ուղղութե. Որ պայծառակք
և պայծառեալք են, որոշեն զնոսա 'ի բաց հոտով
մեղաց. ըստ հրամանի ան աղտոտս համելով 'ի խնա-
մոցն այս 'ի խաւարն արտաքին. ուր լալ աչաց է,
և կրճել ատամանց։ Եւ զնոսա անուշահոտ վա-
րուք սնուցանէ առաքինութեամբն. մինչև հասցեն 'ի
չափ հասակի կատարմանն քի. ժառանգորդ լի-
նիլ անուշակ արքայութեն։ Որ ճշմարտեալ են 'ի
հաւատն լուսաւոր և ած վարուք, անարատ և
անբիծ երախտեօք սիրոյն։ Զի որ զայս շնոր-
հալից հոտ առաքինութե ունի 'ի վերայ այլոց ած
վա-

վարուց, կենդանի երանութեանն պսակի 'ի խնամոց
սիրոյն յամենասրբոյ Երրորդութեանն: Այլ ազատել
'ի դատոյ վշտաց գեհենին, մշտնջենաւոր անհա-
մեմատ ուրախութեամբն վայելեսցէ 'ի բարիսն
անսպառ և անվախճան:

Այլ ձեռք ճշմարտեալ հաւատով 'ի բարի գործս
առողջ անարատ անբիծ երախտեօք նորին սիրոյն,
են մշակք պատրաստեալք հանդերձեալ աշխար-
հին արքայութեանն երկնից: Որք երախտաւոր
լեալ բարի գործովք, ընդունին սերմամբ յուսոյն
զանդս պտղոցն բարեաց: Ձեռնտու գլորելոց,
զբեկեալսն պատէ զանկեալսն կանգնէ, զտկարա-
ցեալսն զօրացուցանէ: Այլ գործէ ձեռօք, զի
բաւական լիցի տալ իւրաքանչիւր ըստ շնորհե-
լոյն նմա յիւրոյ առողջութեան առ 'ի շինութիւն
հաւատոյ: Եփես. 4. 28.

Յիշելով զառաքելոյ ասելն և զառնելն. զի ասէ,
և որ ընդ իմն էին պաշտեցին ձեռքս այս հանա-
պազ: Գործ. 20. 34.

Ձեռք նորին հաւատով՝ բուրվառք են անուշահոտ
խնկովք 'ի հրոյ հոգւոյն սրբոյ. բուրեալ 'ի բա-
րի գործ հեռաւորաց և մերձաւորաց 'ի վայելս,
'ի վեր ամբառնալ ամենասրբոյ և գոհութիւն ընծայել
Աստուծոյ: Ձեռք ճշմարտեալք հաւատով՝ գործարան
են մտաց և մարմնոյ. որ զիւրաքանչիւրոց զպէտսն
վճարէ յերեւելիս և յաներևոյթս: Նմանա՝ յորի-
նեալ գովութ 'ի փառս Այ Հր որ յերկինսն: Մատթ. 5. 16
Ուստի ծագէ լոյսն աւետեաց՝ ձեռացն տարած-
մամբ. և գործողին զարդարութեան զվարձս առնլով:

Ձեռք

Զեռոք ճշմարտեալք հաւատով՝ անօթ է խորհրդոյ դոյ խաչին. որ խլէ զփուշս յանդէ, և զանիծիցն պտտաստակ մեղաց, և տընկէ զծառն կենաց. որ պտղաբերէ ՚ի մեզ զքնի մարմինն և զարիւնն ՚ի թողութի մեղաց. ՚ի ձեռն սրբութե և խոնարհութեան և հնազանդութե. զի այսպէս մըտ-

ցուք ՚ի յարկս լուսոյն կենացն յաւիտենից.

Զեռոք ճշմարտեալք հաւատով՝ մշակք հոգւոյն ճշմարտութե են. որ ՚ի ձեռն փառաւորց իւրեանց առաքինութեցն առնուն պարծանօք զվարձսն. Այլ ող ՚ի ծովու յոխս ձեռօք վարեն զնաւն. զի հասցեն ՚ի նաւահանգիստն խաղաղութեան

և հանգիցեն ՚ի քս յս.

Զեռոք ճշմարտեալք հաւատով՝ որսորդք են ոչ ձկանց, այլ՝ մարդկան. որ քահանայական ձեռնադրութբն շնորհ ընձեռի ՚ի հոգւոյն սբյ յաղմանէ որսալոյն աւետարանին ուռկանաւն. առողջ և անարատ և անբիծ երախտեօքն խնամակալ և սբ սիրոյն. Ո ի որ զձեռագործս սուգութբ կատարէ հանդերձ սբ փառօք, կենդանի երանութբն երախտաւոր սբ սիրոյն պա-

կեսցի յամենայն Երրորդութենէն.

Այլ ազատէ ՚ի պատժոց գեհենին, յանհամեմատ բարիսն վայելեսցէ յանանց և յանսպառ կենանն. Այլ ոյք ուղղել հաւատով ՚ի գնացս սրբութ, անարատ և անբիծ երախտեօք սբ սիրոյն նախաշաւիղ ճանապարհորդ է ըստ աւետարանին ՚ի

հանդերձեալ յօթևանսն ՚ի քս.

Ոյք ուղղեալ հաւատով հաստատեն ամենա-

սուրբ

տուրք վարուք և կարգօք ՚ի քաղաքն կենդա֊
նեաց ՚ի սրբոցն ժողովսն։

Որք ուղղեալ հաւատով՝ երկնայինք են որք կա֊
մաց. որ ընթացուցանեն ՚ի գործ նահատակու֊
թեան վերին կոչմանն։

Որք ուղղեալ հաւատով՝ զ՚քս՛ խրխէլոյն և զկոչե֊
ցեալսն յորդորէ ՚ի հոգևոր ուրախութիւնն
պայծառ և որք գնացին. հանդերձ յաւիտենա֊
կան առաքինութեամբ. ոչ ինչ խածեալ զգարշա֊
պարս. Եբր՜ոց 21. 29.

Որք ուղղեալ հաւատով՝ ընթացուցանեն ուղիղ
զհետս մոլորելոցն. ՚ի դարձուցանել զհողեղէնս
՚ի հոգեղէնս. զապիրատս յիրաւունս. զանհնա֊
զանդս ՚ի հնազանդութիւն արդարութեան գնացից։

Որք ուղղեալ հաւատով՝ առաջնորդեն զհետ
երթալ վերնոցն. ուր մեզն են բնակութիւնք. կա֊
խեալ զզօրութիւն Թշնամւոյն. ամրացեալ պահպա֊
նական կօշկօքն առաքինութեան. որ ոչ կարացէ խա֊
ծանել օձն ՚ի ձմեռնհի և խափանել զէ ոտ գնացիցն

Որք ուղղեալ հաւատով՝ կոխեն զհուր է օրէ֊
նակի երից մանկանցն գնալով ՚ի հնոցին. Դան 3. 49

Կամ ոտ պետրոս ՚ի վէ ծովուն գնալով ոտ յա֊
տակի. որ եթէ ոչ էր ՚ի Թերահաւատութեան ըն֊
կղմեալ, ոչ օգնութեան յոյի կարօտանայր. որ
վերստին զգնացսն հաստատէր ՚ի վերայ ալեաց
ծովու. Մատ 14. 28.

Զի որ այսպէս հանդիսացեալ գնասցէ ըստ
աւետարանական գնացից՝ արդարութբ ըստ աւե֊
տեաց յուսոյն, պսակեսցի յամենամե Տէրոր֊

Ժա դա

դուէն և զանապատ բարիսն ժառանգեսցէ։
Նյորքիւք խրատեալք և պսակեալք յուսհա-
ւառչեալ հանդերձեալ յուսոյն, փութա-
ցուք ծառայել առաջի տն երկիւղիւ և ցնծալ
առաջի նր դողութբ։ Ըստ դաւթայ ասելոյն,
ընկալարուք զխրատս նր. զի մի բարկասցի տէր,
և կորնչիցիք 'ի ճանապարհացն արդարութեան։
'Ի ժամանակի յորում զարթնուցու բարկութի
նր 'ի դատել զերկիրս և հատուցանել ըստ ար-
դար դատաստանին։ Գաժնդակացն և յանցա-
ւորացն որք մեղան և ոչ ապաշխարեցին, որդն
անմահ և խաւարին արտաքին. ուր լալ աչացն է
և կրճել ատամանց. և անշէջ հուր դեհենին
պատրաստեալ անմահ տանջանօք։ Իսկ որք սրբ.
բեցին զանձինս իւրեանց յամ աղտեղի ցան-
կութեանց և կատարեցին զարդարութիւնս ամ,
անհամեմատ երանութեամբքն մեծարեալ՝ և
փառաւորեալ պարծանօք՝ պսակեսցին յամենա-
սուրբ Երրորդութենէն։

Որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

Երանելւոյն Սբյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին
Մարդասիրութիւն եւ Քրիստոսի Արարչին խնամոցն.
Եւ Աստուածաբանութիւն ամենակալին Աստուծոյ. Եւ սուրբ
Երրորդութեան բնութեան եւ լուսաւոր վարդապետութեան.

## Ճառ ԺԷ

Բազմադիմի՛ են երախտիք շնորհաց միոյ Հօրն բարերարի. և միոյ Տեառն կենարարի խնամքք արարչութեն լուսաւոր փոփոխմանց. և միոյ Հոգւոյն սբյ խնամոցն պարգեւք ամենազգիւտ սիրոյն առ երկնաւորսն և երկրաւորս և որ ՚ի նմա են արարածք ամ. Ջուրք և օդք ըստ փոփոխման արարչին՝ խորաքանչիւրքն ցուցանեն զվերնոց և զներքնոց առ փոքր փոքր զաճումն առնուլ և՚ի կատարումն ընթացուցանել զգործն ըստ հաճոյից նոյ. և ըզհանդէս մտերմութեն գործակցութե հոգևոր օրինացն բարձրացուցանել ՚ի փառս և՚ի պատիւ ըմամբ խոստացեալ բարեացն. որ փառօք և պարծանօք մեծարեալ են բարերար և տուող և անխնախանձ կենդանարար շնորհօք. Եւ զփոփոխումն յարգանացն տեսեալ, յաւելել մտերմութե հանդէսն յորդորին. և զաներևոյթն երևելեօքս ցուցանեն. առողջ անարատ և լուսաւոր օրէնք. յորդորմամբ անբիծ երախտեօք սիրոյն. Եւ ընծայաբերք լինել նմա ըստ միոյ միոյ պտղելի գործակցութե ամենաշահ նորա խրատուցն. զմերոյ մեծարելով հաւանական և բարերար կամացն շնորհօղ են

Սար

Կարդացուք մշակս ճշմարտութե՛ ան երախտիս բա-
րեացն ամի. Հռոմ 25. 21. յաներևութիցն և յերևե-
լիս. յանմարմին զօրութիւն ասեմ, և յերևելիս
որդիս մարդկանս. Զի ի նմա՛ կեան և շարժին
երկնաւորքն և երկրաւորքս. Գործ 17. 28.

Որ ՚ի բարերար կամացն այ՝ արքանեակք լինին
սիրելեացն որ վերին զորքն. Առաքելոց, մարգա-
րէից, ուղղափառ վարդապետաց, վկայից որց, քահա-
նայից, կուսանաց, արդարոց և այլ ճշմարտասիրաց.
Որք առաքինութե՛ նահատակին ՚ի փրկութի ան-
ձանց և մերձաւորաց. գործակցութե՛ հոգևոր օրի-
նացն այնս. Նա՛ առ փոքր փոքր յաւելուածովքն
գալ ՚ի կատարումն սննդեամբ. Որպ և ինքն իսկ
եցոյց զնւրոց գործոցն զօրինուածս ՚ի ծնունդս
որ յուշընչէ ՚ի սաղմէն և յարգանդէն ՚ի հա-
ճանութենէ արանն և իգին՝ ըստ օրինաւոր
ամուսնութե՛ կարգացն այ՝ զաւակ ստանան. ՚ի սփո-
փանս անձանց և մերձաւորաց և ՚ի գոհութի պար-
գևաւորին. և բազում ուրախութիւ ցուցանեն
՚ի ծննդեանն բարեկամօք և մերձաւորօք. տօն
կատարելով ծննդեանն անուանակոչութեամբն.
Որ ՚ի մթին և յաղջամղջին որովայնէ յառաջ
եկեալ ՚ի մարդ կերպարանեալ ցուցանի յերկրի.
Նա՛ յորժամ սննդեամբ մարմինն աճէ ՚ի կատա-
րեալ հասակ, պատրաստութե՛ արուեստիցն ուս-
մամբ՝ և ոգիքն մտաւորք և բանաւորք ըստ մարմ-
նոյ աճմանն՝ զգիտութի և զիմաստութի ընդունին
բազդայայտեն ՚ի ձեռն ուսուցչացն խրատուց. որ
և պետութեց և իշխանութեց հանդիպին յերկրի.

Այլ նախ քան զամ՝ է ճանաչել զԱծ. և արա_
րածովքս խմանալ զարարիչն երկնի և երկրի և
որ ՚ի նմա արարածք իցեն. և լինիլ աշակերտ և որ
դանեակ նր կամացն և նմանիլ նր բարերարութն
Ատել զչարն և սիրել զբարին. լինիլ պատճառ
շահից, և խլել փառաց կորստեանն. Արախտա_
ւոր լինիլ հեռաւորաց և մերձաւորաց. առ դրա_
ցիս և ընտանիս. բարի կամօք և բարի բանիւք
և բարի գործովք առ ամենեսին. լինիլ արժանա
ւոր վարձուց՝ խրատամբք. և արդար և ուղիղ և
սբ և ճշմարիտ վարս ստանալ: Այլ այնպէս երա
նելի երեւիլ յԱի ամ առաքինութբ զարդարեալ
ըստ պատկերի այ. և փոխիլ յանուշակ ՚ի կենդա
նի և յանմահ փառսն և ՚ի յայն յարութ և ըն_
դունիլ զերանութի սիրոյն: Զի խնամաւ սիրոյն
լի են երկինք և երկիր և որ ՚ի նմա արարածք ի_
ցեն և նր նախախնամութբն դարմանին:

Այլ ոգիք կատարելոց սիրելեացն այ ուր և են,
՚ի նր սբ սիրոյն ՚ի գրկի կան և ՚ի նորա կենդանի
խնամսն վայելեն: Այնպէս և մարմինքն ՚ի նր
գիրն անկեալ պահին ՚ի խնամոցն. եթէ ՚ի ցամա
քի և եթէ ՚ի ջուրս ուր և իցեն. Զի Տր ամ
մեր յերկինս և յերկրի, ՚ի ծովս և ՚ի խորս (ասէ
մարգարէն.) սաղմոս 113: 114. 6.

Այլ դարձեալ ասէ, թէ ելանեմ յերկինս՝ դու
անդ ես. և թէ իջանեմ ՚ի դժոխս՝ և անդ մօտ
ես. և եթէ առնում զթևս իմ ընդ առաւօտս և
բնակիմ յեզերս ծովու, սակայն և անդ ձեռն քո
առաջնորդեսցէ ինձ և աջ քո ընկալցի զիս

աե

սիրով. 138. 8. Դժոխս ասէ՝ զգերեզմանսն ապականիչ. ուր այլ խնամովքն պահին մարմինքն ՚ի յոյս յարութեան. և անտի վերստին նորոգին ՚ի կենսն յաւիտենից. ընդունելով զհոգիս իւրեանց. Նաև որք մեռեալքն են՝ ՚ի քս մերձ լինին. զի՝ ուր եսն եմ անդ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. յօհան 12.26

Այլ և զմեղաւորաց զմարմինսն և զհոգիսն պահեսցէ ուր և իցեն. ՚ի յանդիմանութիւն կշտամբանաց մեծի աւուրն դատաստանին և յարութեան որ ՚ի մեռելոց. Զի դիմադարձք եղեն օրինացն արդարութե. սիրեցին զչար և ատեցին զբարին. և զպատուիրանս նր ոչ պահեցին. Իսկ որք ճշմարտեալ սիրով խնդրեցին զնա՝ եղև նոցա պարգևատու. զի արդար է տր և ուղիղ են դատաստանք նր. Թէպէտ և մեզ է այս անհասանելի.

Որ ծագէ զարեգակն ՚ի վր չարաց և բարեաց. և որ այլ ևս են խնամք հասարակաց ՚ի տնէ.

Բայց որք առնեն զկամս նր, մնան յաւիտեան. զի՛ եղերուք սբք և արդարք. զի ես սբ սուրբ և արդար եմ. 1 պետ 1.16.

Իսկ որք զայս աւետիս յանձինս ունին, սրբեն զանձինս յամ յանդգնութեց. 2 կոր 7.1. և լինին արքանեակ ած և ճշմարիտ փառաց. և այնպս լինին ընդունարան ածային շնորհացն և օթևանք այ. Մարդ՝ որ այսպիսիք են, ՚ի խնամս սիրոյն նորա միշտ հաստատեալ կան. Որպ և ասաց եթէ, բնակեցայց ՚ի նս և զգնացից ՚ի նս. և եղէց նց ած՝ և նոքա եղիցին ինձ ժողովուրդ. 2 կոր 6.16. Նաև դարձեալ թէ, ես եղէց նց հայր, և նոքա

եղի

եղիցին ինձ յուստերս և 'ի դստերս ասէ տէր ամենակալ. 18.

Որդ՝ ամ մարդարանծք 'ի ներքոյ զօրութե նր կա-խեալ կան. բայց զընտրեալս իւր և զկամարարս 'ի ներքոյ վարագուրի խնամոց սիրոյն պահէ յա-մենայն վտանգից. սղ 30. 21. 2 օրէ 33. 3.

Այս այլ կայանք են նց որք արհամարհեցին զօ-րէնս նր, և ծառայեցին դժնդակ ցանկութեց անխտիր՝ և պէսպէս չարեաց. որք ժառանգելոց են զարտաքին խաւարն. Խաւար է աստ արտա-քին չար՝ որոց խաւարեալ են միտք և զգայու-թիւնք, և օտարացեալ են 'ի կենաց անտի ած ասէ առաքեալն. եփես. 4. 18.

Այս են անդ 'ի հուր գեհեննին. ուր լալ աչաց է և կրճել ատամանց. և ոչ զորք տեսանեն, և որ այլ 'ի նոյն են տանջանք. որ պատրաստեալ է դիւաց և պղծոց. Օ՛ի իբրև երկրաւոր կեանքս 'ի ձեռն մահուան 'ի գլուխ ելանեն, հոգիքն յղարկին առ ած որ ետ զնա. և մարմինն դառնայ 'ի հող յորմէ առեղծաւ յարարչէն. ժող 12. 7.

Այս ոք և արդար հոգեացն ընդ առաջ գան հրե-շտակք և սբցն հոգիք. և տանին առաջի այ սաղմոսիւք և օրհնութբք և երգօք հոգևորօք. Գովեն զամենազօր փառսն որութե ամենասբ Երրորդութեն. և գոհանան զերախտաւոր բարե-րարութեն. որ փոխէ յերկրաւորացս յերկնա-ւորսն. յանարգութէս 'ի պատիւ. զհրաւիրեալսն և զկոչեցեալսն յիւր արքայութին և 'ի փառսն. որ նա միայն է փառաց և պատւոյ և օրհնութե

որ

արժանի։ Բաղցր խոնարհութբ և հնազանդութբ
օրինացն՝ ընծայիւք պատարագացն ՚ի նուէրս ըն֊
տրութե գործոցն բարութն՝ զքն պատարագեն զսար֊
սափելի խորհուրդն վն նր փրկութեն․ յու֊
սով և քահանայական խորհրդածութեամբ։
Պիտոյ ևս է զկապելոյն արձակել․ և զպարտսն
թողուլ․ զկարօտելոյն լցուցանել․ և որ այլ ևս
են բարեգործութք բազմաձեռնութբ․ աղօթիւք
և խնդրուածովք և ջերմեռանդն արտասուօք
վն հանգերձելոցն փրկանաց։ Այսուհետև պարտ է
յղարկել զհրաժարելոյն ՚ի յոյս կենացն յա֊
ւիտենից ՚ի քն․ որ այսուքիւք հաշտեսցի հայրն
գթած․ և որդին բարերար․ և հոգին սբ բարե֊
խնամօղ․ և ուրախութի լիցի ՚ի վր այսոցիկ վերին
զօրացն։ Այլ ՚ի վր մեղաւորացն որ դառնան
ստուգապէս խոստովանութբ յապաշխարութի․ և
ընդունին զհոգին յօծեանս ըստ իւրաքան֊
չիւր արժանաւորութեն․ բաժանեալ և որոշեալ
զհանգիստն և զտեղի ըստ տեսչութեն այս։
՚Ի վր այսոցիկ հաւատոյ և արժանաւորացն յու֊
սոյ՝ որք անյուսութբ լան և կոծեն և ցաւեն զե֊
րեսս առ յղարկելն զհրաժարելոյն ոչ հեթա֊
նոսք որոց ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զած։
Այլ ՚ի գործոց երախտեաց բարեացն որ ընծայե֊
ցաւ յոյս վն հրաժարելոցն, զրկեն զնս այնու֊
հետև ՚ի հանգստենէն․ և տրտմեցուցանեն զզօրս
երկնաւորս և զհոգիս արդարոցն․ և զնոցա իսկ
զհոգին վն որոց երկարեն զսուգն․ Այլ են֊
քեանք անկանին ՚ի պատիժս վն անյուսութեն

և առնուն զվճիռս պատուհասիցն։ Զի որ խը
ռովեցուցանէ զա՟ծ և տրտմեցուցանէ զզօրս երկ
նաւորս և զարդարոցն զհոգիսն, և զրկէ զհան-
գուցելոցն զհոգին ՚ի հանգստենէն, կրեսցէ դա
տաստան ո՛րք և իցէ ը՟ս առաքելոյն բանի։ Եբր 5.10
Արդ որ զմարդիկ խռովեցուցանեն՝ պատուհաս
կրիցեն, որքան որ զա՟ծ և զընտանիս նր՟ զհրշտկս
և զուրս. Զի ա՟յ դատաստանն ճշմարտութբ՟ է առ՝
՚ի վր՟ այնոցիկ որ զայնպիսիսն գործեն։ Հռոմ 2.2.
Եւ զի՛ երիս իրս մարդկային կեանքս բացա-
յայտեն. Առաջինն՝ յորովայնի մօրն սաղմն ա-
ռեալ և աճեալ. ՚ի մըթին և յաղջամղջին արգա-
դին զկեանսն տընօրինեալ մինչև ՚ի ժամանակ
ծննդեանն։ Եւ երկրորդն՝ կեանք երկրագործ.
որ յն՟իս քաղաքավարի ըստ ն՟իս բարեաց նա-
խանձաւորութբ՟ արարչին, դարմանեալ յերկրէ և
՚ի ծովէ։ Իսկ երրորդն՝ կենդանեաց աշխարհն.
ուր ո՛չ լուի համբաւ մահու. և ո՛չ փոփոխի կեն-
դանի երանութ՟ին. անհրաժեշտ պայծառութ՟ին
և անմոռաց ուրախութ՟ն. Զոր ո՛չ կարէ ասել
բան. զի անճառելիք են. և ո՛չ ունկն կարէ լսել.
զի անհամեմատք են. և ո՛չ միտք բովանդակեն.
զի անխմանալի՛ է քննողաց։ Զի և ո՛չ զորովայ-
նին կենաց կարէ ոք ասել զօրինուածն. այլ և
զերևելիս ո՛չ կարէ ասել. որ յերկինս և յերկրի
և՚ի ծովէ կեանք մարդկան ՚ի խնամոցն ա՟յ մա-
տակարարին. Թո՛ղ թէ զառհաւատչեայ յուսոյն
զանանց կեանսն. Բայց հրաւիրեն միայն գիրք
խոստմամբ զարքայութ՟ին հաւատացելոց. և յու-
սով

տով յորդորեն զողջախոհսն. թէ որ զերկինս և զերկիր եւս լցեալ իւրայ՝ ի սնունդ. ամ բարերարն վն և ոչ մի ինչ լնու մերոյ, ապա ի սոցանէ յայտ է անսուտ խոստմունքն ի բարերար տնէն սիրողաց իւրոց. Նաեւ զի ոչ կարեն ճառել սիրողքն այ զհանդերձեալսն. այլ ի բանէն տն գիտեն որ ասէ, ծագեսցեն արդարքն որպէս զարեգակն յարքայութեան այ. մատ 13.43.

Նաեւ որպէս ոչ նման է խաւար՝ արեգականն լուսոյ, այսպէս և ոչ արեգական լոյսն՝ կենդանի լուսոյն փառացն համեմատի. զոր զգենլոց են սրբքն զանըստուեր լոյսն զմշտնջենաւորն ՛և զանխափանն որ լին է կենդանարար բարութեամբ. Զի որպէս ի զգալիս՝ է արեգակն, իմանալիսն՝ է ած. որ լուսաւորէ զամ. Զի որ ասէ ըստ խոստուպատուիրանի ան հրահանգեն զինքեանս ի վարս առաքինութե, առհաւատչեայ յուսոյն իւրեւ ի տուրնջեան բարեձեւ կարգօք վարեն զաշխարհս. և ոչ մեկնին ի նոցա կամացն. ոչ ի տրտմականաց և ոչ ի հեշտականաց. և ոչ խռովեցուցանեն զած. և ոչ տրտմեցուցանեն զօրս անմարմնոց և զոգիս արդարոց. և ոչ անկանին ի զգայութե և ի շնորհաց. Որ յամ դժնդակաց շարժմունս՝ ի սուգ և ի վիշտս՝ ի ներողութե և յանդորրու՝ արտաքս ի կամացն այ գործեն.

Իսկ որք առաքինաբար անցանեն ընդ վիշտս և ընդ նեղութիս, ոչ ինչ վնասեալ ի պատահեալսն, ուրախ առնեն զած, և ի հրճուանս ածեն զզօրս հրեշտակաց և զոգիս արդարոց. Այսմ օրինակի

զոր

զոր վերագոյնն ասացաք։ Նաեւ լուսաւորելոց լու-
սոյն աւետեաց, փոխին յանմահութիւն կենաց։
Իսկ որք մեղօք են վախճանեալ՝ ամբարշտութեամբ եւ անի-
րաւութեամբ եւ յուսահատութեամբ, նոքա ողբոց են արժանի
արտասուաց։ Որք վրիպեցան 'ի խոստովանութենէ եւ բա-
րեացն եւ յանապատ ուրախութեանցն. եւ հրաւիրե-
ցան յանշէջ հուրն գեհենին եւ յանմահ սատա-
կումն. ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց միշտ։
Զի որք զճշմարտութեան հաւատով զբարեգործս
վարուք ոգւոյն անյոյս, նոքա ընդունին զպատու-
հաս փոխանակ անյուսութեան 'ի Տեառնէ. եւ զհրաժա-
րելոց ոգւոյն վնասեն. Արտասուք օգտակարք
այս են 'ի տէր, զմեռելոց զյիշատակս մեղացն եւ
զանձանց՝ առաջի այ ընծայել եւ ոչ առաջի հրա-
պարակաց. որ լինի սրբարան մեղաց եւ ոչ 'ի պա-
տիժս։ Նաեւ ջերմեռանդն արտասուօք միշտ 'ի
յաղօթսն կանխել։ 'Ի տուէ եւ 'ի գիշերի հսկել։
Նաեւ ցաւագին հեծութեամբք եւ պահօք պնդութեամբ եւ
բազում զղջմամբ եւ ապաշաւանօք զխաւարման սը-
գալ հանապազ. որ վրիպեցաւ յերանելի յուսոյն
եւ 'ի յայտնութեան փառաց մեծին այ։ Զի որ մե-
ղօքն 'ի խոստացեալ այ բարեացն զրկեցաւ, զնա
ողբասցուք այսպիսի ապաշաւանօք, եղուկ վարկա-
նելով զվրիպեալսն յանանց բարեացն։ Նաեւ ար-
տասուալից աղօթիւք եւ առատ ողորմութեամբք՝ հան-
դերձ քահանայի պատարագաւն՝ զած 'ի հաշտութիւն
ածել եւ հրաժարելոյն մխիթար լինել 'ի հանդեր-
ձեալսն։ Այսպիսիկ են որք զանձն օգտեցուցա-
նեն. եւ իւրեանց մերձաւոր հրաժարելոցն՝ զմը-
տե

տերևմայրն ցուցանեն. վս հրաժարելոյն յերկ-
րէ հաւատով՝ և ննջեցելոյն յուսով. Այլ առա-
քելոյն մխիթարէ ասելով, մի՛ տրտմիք որպ հեթա-
նոսքն. որոց ոչ գոյ յոյս. զի որպ յարեաւ քս ՚ի
մեռելոց, նոյնպէս զննջեցեալսն մեր և զմեզ յա-
րուսցէ և յանդիմանս կացուսցէ ընդ՝ հանդերձ
ամ որդւք ՚ի գալստեանն իւրում. եփե. 5. 17.
Այլ ՚ի զօրս մակաբայեցւոցն երևի յոյս. որ
զինչ հեթանոսացն ունելով անկան ՚ի պատերազ-
մին. և զնչ առարն եւտուն ցքահանայսն զի աղ-
քատաց բաշխեսցեն ՚ի քաւութի մեղաց նոցա
վախճանելոցն ՚ի ճշմարտութեն. 2 մակ 12. 40.
Այլ զի գիրք՝ են մեզ վարդապետք. և ՚ի ձեռն նց
զյաւիտենից յոյսն ընկալցուք. 2 տիմ 3. 16.
Զի ՚ի նոքօք վարժեսցուք յաշխարհիս. և ճշմար-
տեալք որ սիրով փոխեսցուք ՚ի կենդանի յոյսն
և յերանութիւն որ կայ և մնայ.
Պատուական տոէ մարգարէն զմահ սրբցն առաջի
տն ամենակալի.
Այլ ի՞նչ է պատուական մահ սրբցն, Որ ճշմարիտ
որոշմամբ զլաւանն զհանդերձս առաքինութեանն
ցուցին ՚ի յոյս կենացն յաւիտենականաց.
Ի՞նչ է պատուական մահ սրբցն այս. զի յանցաւոր
կենացս այսոցիկ՝ ՚ի մշտնջենաւոր կենաց փոխին.
Ի՞նչ է պատուական մահ սրբցն այս. զի ՚ի վշտագին
նեղութեց այսոցիկ, ՚ի հանգիստ բարեացն փոխին.
Ի՞նչ է պատուական մահ սրբցն այս. զի ՚ի թշուառութէ
և յերկեղէ կենացս՝ յերանելի կենաց փոխին.
Ի՞նչ է պատուական մահ սրբցն այս. զի յակամայ

ԺԼ          փոր

փորձանաց հոգւոյն և մարմնոյն ազատին և յանդորրն փոխին.

ԻԷ է պատճառական մահ սրբոցն այ. զի զծերութի և զտկարութիւնս թողուն, և՛ ի նորոգութիւն վերստին փոխին.

ԻԸ է պատճառական մահ սրբոցն այ. զի սիրովն որով յաղթեցին այնմ կարեաց մարմնոյ՝ ի նա փոխին.

ԻԹ է պատճառական մահ սրբոցն այ. զի զմեղացն մեռան զմահ յերկրի, և կենդանի յաւսոյն փափագեցին. զի յորժամ քս յայտնի կեանքն մեր, և սուրբք ընդ նմա փառաւորին. Զի որք կենդանի երանութե կացին յԱի, և այժմ կենդանի են առ այ խնամոն. Զի հոգիք արդարոց ի ձեռս այ են ուրախարար յուսովն ընդ անսուտ խոստմանցն այ. Իմս 3 զոր ի յարութեն ընդունելոց են զփառս յաղագս սրբութեն և համբերութե և արդարութե յարքայութեն երկնից յամենասուրբ Երրորդութեն.

Իսկ որ կենդանի մարմնով մեռացն՝ յԱի վարին զաղէր աւտոէք, կենդանի մեռեալս կոչէն զնս ածայեն գիրք. Որպս այն որ ասաց տրն՝ մեռելոցն մեղօք թաղել զհայրն մեռեալ. և նմա քարոզել զարքայութին այ. Ղուկ 9. 60.

Զի որք յուսահատեալ են ի կենաց անտի և ստարացեալք յայ և յուղիղ վարուց, նոքա են ստուգապէս մեռեալք, որք արարին զկամս մարմնոյ և մտաց. և ոչ ի դերեզմանի թաղեալ կան նեխեալ մեղօք ի մարմնի անդ և պիղծ՝ անխոր ոխր յԱմ յանցանս. որք և զժահահոտութիւնս

 բու

բուրեն զանօրէնութիւնս։ Որպէս որ ցուցանէ ըզ փարիսեցւոց ժողովն․ որ 'ի վերայ երեւին ինչ, և 'ի ներքոյ լի՛ են չարեօք․ ամբարշտութե͞բ և հայհոյութե͞բ։ մտթ 23․27․ Զի որպէս գերեզման բաց են կոկորդք նց ասէ մարգարէն․ դատէ զնս Տ͞ր Ա͞ծ, զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց չարեաց։ Զայնպիսիսն ողբասցուք որ կենդանի մեռեալք են․ և մեռան զհասարակաց մահն անմխիթար։

Վա՜յ մեղաւորաց ասէ մարգարէն չա՛ր է յաղագս դժնդակ և անտէր վարուցն․ բայց ոմք ասեն զարդարս յաղագս ողջախոհ խրատուց՝ զղջացին․ զի հրաւիրեցան յանշէջ հուրն գեհենին։

Ուստի է չար մահ մեղաւորաց․ զի յուսահատութե͞բ է վախճան նց․ զի մեռան և ոչ զղջացան և ապաշխարեցին և հաշտեցուցին զա͞ծ։

Ուստի է չար մահ մեղաւորաց․ զի ելին 'ի ժառանգութէ հրեշտակաց և եղեն ժառանգորդք դեւաց և յաւիտենից տանջանացն որ պատրաստեալ է յամենեցունց տեառնէն։

Ուստի է չար մահ մեղաւորաց․ զի յայնմ ժամու՝ յոր անզգայաբար կեայր, ոչ առնոյր 'ի միտ զօր ելիցն․ զոր ոչ կարէ գործել զկնի աւուր վճարելոյն ըզբարիսն և մտանել առ ա͞ծ․ յոհան 9․4․ 12․35․

Ուստի է չար մահ մեղաւորաց․ զի լսեն յամենեցունց 'ի տ͞նէն, երթա՛յք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից․ որ սատանայի կամարարք եղեն և ոչ ա͞յ․ որ արար զա͞մ 'ի բարի կամս։

Ուստի է չար մահ մեղաւորաց․ զի դրունք կենաց ապաշխարութե փակեցան․ և ոչ ևս է լսել 'ի տ͞նէ․

դար

դարձարո՛ւք առ իս և ես դառնամ առ ձեզ. այլ_
թէ հանէք 'ի խաւարն արտաքին զի ոչ լուանիցիք։

Մաղ. 3. 7. Մատ. 22. 13.

Ո՞չ է չար մահ մեղաւորաց. զի բանան դրունք մահաբեր դժոխոցն յաղագս զանազան դժնդակ չարեացն զոր գործեցին. և ոչ կրեցին զյաւիտենից տանջանքն մեղաւորաց։ Ընդ զղջումն անօգուտ է. զի արգելեալ է դուռն մարդասիրութեն որք յառաջադասեն արտաքս անկանին։ Ա՜յ կաթիլ ջրոյ կարօտին լուռ զազրու։ Ա՜յ շիջեալ ջահիցն իւղ՝ և որ ո՛չ եւս՝ են անշրջելիք. և ոչ եւս ուստեք է գտանել պայծառութի։ Նա՛լ (երթիցեն մեղաւորքն 'ի տանջանս յաւիտենից) ասաց բանն այ առ մեզ. (իսկ արդարքն 'ի կեանս յաւիտենից։) Մատ. 25. 46. Որոց պատուական ցուցան մահն նց առաջի տն յաղագս որ և ուղիղ վարուց ճշմարիտ հաւատով. լուսաւորեալ 'ի լոյս կենացն յաւիտենից։ Զի է 'ի մջ արդարոց և մեղաւորաց յանսուտ բանէն յաւիտենիցն է հաստատեալ. երթիցեն մեղաւորքն յաւիտենից տանջանս, և արդարքն յ՜տնից կեանս։ Ա՜յ գովիցք և փառաւորիցք զէին մեր ածութեանն, և պատուով և պարծանօք երանիցն. և պսակին և մտանեն 'ի ժառանգութի որդեգրութեանն. և վայելեն յանսպառ բարիսն. 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ։

Այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից
ամէն։

Հանդերձ մեզ լուսաւորէ յիշատակաց 'ի դէպս օգտից։ Զի ընդհանրականն յերկնելս ցուցանելով 'ի գործս առաքինութէ։ Փոխեալ 'ի յայն կենդանի 'ի բանակս շնորհաց նոցա։ Որ սոյն խոստովանեցին շհրաժայն այլ։

Երանելւոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին առաքելոյ։

## Ճառ ԺԳ

Ո՜ խորք մեծութե եւ գիտութե եւ իմաստութեն այ։ Հռ 11։33։ որ բազում հնարիւք ունկնդրաց եւ հնազանդելոց առաջնորդեալ 'ի հաճոյս տրուե իւրոյ, զգուշութբ եւ արդարութբ եւ զգաստութբ յորդոր սիրով 'ի պահպանութի պատուիրանին։ զի հասցուք 'ի դուռն փրկութե 'ի հանգիստ։ Նախախնամական սիրովն եւ իրաւամբք արդարութեն։ զի ժառանգեսցուք զպատիւ փառաց նր։ հասանելով հաւատովք 'ի յոյսն ճշմարիտ։ Զի արթնուլ 'ի կոչումն բանին կենաց ըստ պէսպէս շնորհացն ընդունել զարժանն եւ զիրաւն։ առնուլ յուսով զառհաւատչեայ աւետիսն։ եւ թռչել թեւօք հոգւոյն յերկնից արքայութին։ եւ գեղեցիկ վարուք լինել ճանապարհ բազմաց 'ի կեանս։ Եւ յիշատակօք յուսոյն՝ յառաջակայսն ընթանալ։ եւ զկնի ծաւալել ճշմարիտ հաւատով զստուգութե վարս 'ի նախանձ բազմաց։ Զի է առաջինիքն օրինակ են մերձ նոցա 'ի բարի յորդորումն։ եւ մերձինքս հանապազօր նորոգին յիշատակօք առաջնոցն առաքինութբ

Գր

Պաղատելով զնս՟, գոհանալով փառաւորեն զած՟ ըզ-
տուիչն այնպիսի շնորհաց մարդկան։ Այլ այնպէս
յորդորին 'ի սէրն այ՟ . և բերանով խոստովանին
զճշմարտութի̃ն ամենակալ զօրութե̃ն այ՟ . և ընծայա-
բեր լինին բարի պատարագօք արդարութե̃՝ ամե-
նեցունց տննն՝ առաջնոցն գործակցութ̃ և ճշմա-
րիտ նց՟ հանդիսիւքն։ Նոքա համարեալ զան-
ձինս 'ի նց՟ անուն յուսոյն և մտերիմ սիրոյն . և
առհաւատչեայ՝ միշտ բարեխօս առ տր՟ ունելով
զնս՟։ Ո՜վ է կատարեալ հետևօղք լինիցին ճշմա-
րիտ լոման առաջնոցն, որ յուսումն իւրեանց
կենդանի են այ՟ .

Այլ համարակաց յոյժ մի՛ շահ է . զի առաջինքն
օրինակ լինին վերջնոցս 'ի բարեգործութի . և
վերջինքս հասանին յառաջնոցն կատարելութի
յուսոյն։ Այլ առաքինութի առաջնոցն ժառան-
գութի առնի վերջնոցս . զի մնացուածք բարի
գործոց առաջնոցն՝ առնուն լումն 'ի վերջնոց
աստի։ Այլ եթէ յանցաւոր ևս իցէ լեալ, և
սոյդ խոստովանեալ և ապաշխարեալ ջերմե-
ռանդն արտասուօք և գթով տընանկաց և ա՟մ
լաւութեցն հանդիսիւք որ ընդդէմ մեղաց,
եթող կարգ բարի վերջնոցս իբրև ժառանգութի
խոստովանողաց և ապաշխարողաց։ Այլ ջատա-
գով մեղուցելոցն՝ 'ի գթութին այ՟ կոչէ զվերջինքս
ըստ առաջնոցն կարգաց . զի բարձցին 'ի միջոյ
պարտիք փառացն . և ազատեալ 'ի մեղաց սոյդ
խոստովանութբ՝ մնասցեն 'ի ժառանգութին։
Հեռացեալ յամ՟ փառասիրացն որ հաւատով և

անձ̄ք վարուք ապականեալ է 'ի հոսանս չարեաց, բժշկել լինին 'ի սրբութ̄ և առողջութ̄ անդամոց. Այլ սովորութ̄ է գրոց՝ զառաջնոց լուացն զայն շաւակսն՝ ոչ նուէրս պատարագաց վ̄ն հասարա‑կաց յուսոյն կատարել վերջնոցս. և հաւատալ և ուղիղ վարուք կալ 'ի մշակութ̄ հաճոյից այ̄ որ յոյսն է կենդանեաց և մեռելոց. Այլ բազումք են վերջինք՝ որ վ̄ն առաջնոցն աղօթս և պաղա‑տանս և նուէրս մատուցին այ̄ և եղեն ընդու‑նելիք. որ ուղիղ խոստովանութ̄ դաւանան առ ած̄ յապաշխարութ̄. Ոչ առաքեալն ցուցանէ զընտրութ̄ հաւատոց և զարդար վարուց. և նց̄ յիշատակօքն բարի խոստովանութ̄ զհաշտութ̄ պատարագս մատուցանել վ̄ն նց̄ և մեր այ̄.

Որպէս զաբելին արդար և զուղիղ պատարագն յիշէ. որ ամ̄ պատարագաց է գլուխ միջնորդ և բա‑րեխօս վերջնոցս՝ իւր մեռելով մք հաճոյ անա‑րատ կամօքն. Եբր. 11. 4. Այլ որք զկնի նր̄ առա‑քինացան անարատ մտօք. ոչ ենովս և ենովք և նոյ՝ հաճոյ եղեն այ̄. և հաւատարարք կան առաջի տրութե նր̄ վ̄ն հաւատացելոցն 'ի տր̄ ած̄.

Ոչ և աբրահամ և իսահակ և իսրայել՝ հանդե‑սիւք լուսաւորութեցն առ իւր զընտրութ̄. Ս̄ որոյ ոչ յամօթ համարի ած̄՝ անուանել զնս̄ խորհրդա‑կիցս, և յայտնել նց̄ զծածկեալսն ոչ մեռելիմ սիրելեաց. Այլ 'ի նց̄ ծննդոցն՝ զօրհնադիրս զմարգարէս և զքահանայս և զթագաւորս յու‑րոյց և զբազում արդարս. Ո է և մովսէս լու‑համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն այ̄,

քան

քան առ ժամանակ մի վայելել ՚ի հեշտութենէ։
Եբր 11. 25։

Որոյ ելեալ ՚ի խաւարային վարուց եգիպտաց֊
ւոցն՝ յանապատս պանդխտանայր։ Եւ անդ առ֊
նու հրաման յայ դառնալ անդրէն յեգիպտոս
և հանել զժողովուրդն յերկրէն աւետեաց նշա
նօք և արուեստիւք. և այնու կատարել զուխտն
որ առ հարսն մեր խոստացեալ եղև։ Ելց 3. 5.
Զի ես եմ տէր ած աբրահամու և ած իսա֊
հակայ և ած յակոբայ։ Եւ չասի ած մեռելոց
և մեղաւորաց, այլ կենդանեաց և արդարոց. զի
արդարքն այ կենդանիք են։ Մտթ 22. 32։ Ղուկ 20. 28
Զի սիրոյն այ և յուսոյն՝ մինչ առաջի կան այ։
Որ և մեք լինցուք հաստատեալ ՚ի հաւատս և ՚ի
սբ սէրն այ. Ով զի ճշմարտեալ սիրովն առցուք
զայսն որ առ ամենազօր տրութին. և ած արդա֊
րոցն յիշատակօք՝ մինչ նորոգել ՚ի մեզ զայ ըզ
սէրն որ ՚ինն մատակարարէր։ Եւ ըստ այսմ
օրինակի ած յոյս սբցն կենդանի է առաջի այ
և անշէջ. և առանց մոռանալոյ է յիշատակ սբ
սիրոյն յուսացելոցն ՚ի տր։ Ով յանցանքն ռու
բենի առ հայրն՝ Ծն 35. 22. հանէին զնա յօրհնու
թենէ հօրն 49. 4։ և անարատ սրբութին ՚ի մէջ
եած զյովսէփ յօրհնութի հօրն 49. 22. և ՚ի
ժառանգութի եղբարց իւրոց ՚ի յեւլոն. յեսու 24. 32
և եղև պատճառ կենաց ած ազգին սբն և անյոտնն։
Տասանէ առ ՚ի վշտ երուսաղէմի վա անիրաւ
ժողովրդեանն յաւուրս եզեկիայի և սենեքա֊
րիմայ։ 4 Թագ 18. 17։ Նաև աղօթիւք թգւորին
և

և եսայեայ՝ դարձոյց ած զբարկութիւն ՚ի թշնա-
մեան · և սատակեցան այնքան զօրք · և կորեա՛
յիշատակ նոց ՚ի միջոյ 19·35·

Յայնտաբիկ և զդաւիթ յիշէ ած · թէ վն նր վե-
րակացու եղէց քաղաքիդ այդմիկ· 19·34·

Ոի ամ արդարոց յիշէն առայցելութիւն նի ՚ի մր գիրս ՚ի սկզբանց անտի մինչև ցգալուստն քնի · որ զառաքինութիւն իւրաքանչիւրոցն բացայայտ է · զի ըն հաւատոց մեռան ամ մրք · Եբր 11·13 Իսկ յորժամ ծագեաց տր մեր յս քս արդարութե արեգակն և նի փրկիչ, կատարեաց և ելից զառաջին օրինակին զպակասութիւն · զի եբաց զդուռ շնորհաց զկենաց դրունս ՚ի ձեռն աւազանին լուսաւորութե ուղիղ հաւատով յամենայնք Երրորդութիւն։ Մեռանիլ զմեղաց մահն ՚ի ջուրն մկրտութեան · և ընդ քնի յարուցեալ՝ ՚ի նորոգութն կենաց կալ մնալ։ Հռով 6·4· Որ թէպէտ և մեռանի, կենդանի է ՚ի յոյս կենացն յաւիտենից· Ուր մերկացեալ են զհին մարդն, որ վրէժխնդրութե օրինացն պարտական էր · զի զքս զգեցան և զկերպարանս որդեգրութե առին · և ժառանգաւորք եղեն քնի · Մանաւանդ որ զճշմարիտ հաւատս և զուղիղ վարս մինչև ցվախճան պինդ ունիցին յաստն քնի · զի յոյս նց ընդ քնի է յարուցեալ · և ընդ քնի նստի ընդաջմէ մեծութե ՚ի բարձունս· Կող 2·12· Եբր 1·3· Եփե 2·6· և բարեխօս են քնին առ հայր վն որց · Որք ՚ի քս մկրտեցան ճշմարիտ հաւատով և որք սիրով՝ հազորդին մարմնոյ և արեան փրկչին · որ գրաւա-

կան

կանէ փառաց լուսոյ յարութեն։ Ըստ բանին
Տն թէ, քանզի անգամ եթէ ուտիցէք ՚ի մարմ-
նոյ իմմէ և ըմպիցէք յարենէ իմմէ, զյիշատակ
մահուան իմոյ պատմեսջիք մինչև ՚ի դարձ գա-
լստեան իմոյ յերկնից։ 1 կոր 11. 26։ Զի նա է
ազատիչ և արդարացուցիչ. որով լուծանին մեղք
հին մարդոյն և սկիզբն առնուն նորքս որ ըստ Այ
հաստատեալք՝ են և ճշմարիտ ՚ի Քս Յս։ Մեկնիլ
յամ չարեաց. և յարդարիլ ամ բարի գործովք
աւետեօք լուսոյն կենաց։ Զի մահուամբն
խուռովելոյծ Քս զզօրութի սատանայի. որ զիշխա-
նութի մահուն ՚ի ձեռն մեղաց ունէր. եբր 2. 14
և կեանքն թագաւորեսցեն արդարութբ. և լոյս
յարութե հաստատեալ կայ ՚ի Քս։ Զի յարոյց
ուէ զմեզ ընդ իւր, և նստոյց ընդ երկնաւորս ՚ի
Քս Յս լոյս հաւատացելոց սրբոց։ եփես 2. 6։
Զի զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին ուէ են Քի
կրեօք և ցանկութբ հանդերձ։ գաղ 5. 24։
Որք և ընդունեին զառհաւատչեայն և փառաւո-
րին և լուսոյն զուարճանան։ Զի Քի ոչ սի-
րով խրախուսեալք որդն, ծնեալ լուսոյն ՚ի
ձեռն հաշտարար պատարագին որով փրկեցան
արարածք։ Որ զաներևոյթն երևելեօքս եցոյց
կամաւոր խաչելութբն, հաշտեցուցանել զարա-
րիչն ընդ արարածս։ Նաև լուսաւոր վարդապե-
տութբ ստուգեաց ճշմարիտ հաւատս յամենայ-
սբ Երրորդութիւնն։

Բանայր զվիշտս և զվտանգս ՚ի մարդկանէ ՚ի
պէսպէս ցաւս և ՚ի տանջանս ըմբռնեալս։

Զբաղ

Զքաղցեալս կերակրելով զբազումս յանապատի· զմեռեալս յարուցանելով· և զդևսն հալածելով· Այլ ազատեալ զմարդիկ 'ի կշտամբանաց ն՟ց, բառնայ իւրովքն չարչարանօք զա՟մ վիշտս մարդկան· և պէսպէս երախտեօք արժանի առնէ հայրական խնամոցն և շնորհաց հոգւոյն ս՟բյ և խոստացեալ բարեացն ա՟յ·

Այլ 'ի մատուցանել զահաւոր և զսարսափելի զփրկական խորհուրդն, յիշէ անդ զմարդասիրութե՟ ն՟ր զերախտիսն· և խնդրէ ջերմեռանդն արտասուօք զքաւութի կենդանեաց և մեռելոց, և առնու զխնդրելին· Նամանաւանդ եթէ ո՟ք իցէ և անարատ և ազատ 'ի մեղաց մատուցող պատարագին, ճշմարտեալ հաւատով ստանայ անձին իւրում զփառաց պսակն·

Վ՟ս զի պատարագն է քաւութի յուսով· որ շնորհի 'ի բարերար տ՟նէն· Այլ եթէ որ ունի խէթ ինչ զընկերէն՝ թողուլ տայ զպատարագն մինչև հաշտեսցի, մտթ 5·23, ապա վ՟ս այլ չարեաց և դժնդակ վարուց զինչ պարտ է ասել զորհաւիր սպառնալեաց պատուհասիցն· որք ոչ արժանաւ՟ր զպատարագն ընծայեն ա՟յ, և որք անարժանաւ՟ր հաղորդին· 1 կոր 11·27· Եւ՛ որում շատ տուաւ շնորհ շատ խնդրեսցի 'ի նմանէ· և որում տակաւ սակաւ, ասէ տ՟էրն յաւետարանն մեր· ղուկ 12·48·

Զի կատարեալ առաքինութի խնդրէ ա՟ծ և ճշմարտութի 'ի սպասաւորաց խորհրդոյն· զի կենանք է փրկութե՟ մերոյ· և մի լիցի կամակար մտօք դատապարտութի 'ի տ՟նէ· եբր 10·26· զի ա՟մ

ինչ

ինչ նուաճ և՛ ՚ի նոյն կատարի կենդանեաց և մե-
ռելոց։ Այլ և մերց առաքելոց և մարգարէից և
մարտիրոսաց յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն կա-
տարին. խորհրդածեալ փառաբանութբ՝ զմերցն
զնահատակութիւն վերաձայնելով ՚ի յորդորումն
մտաւորաց՝ և ՚ի գովեստ ամենասուրբ Երրորդու-
թեն. որ ետ զյաղթութն շնորհօն ամ մերց իւրոց։
Զի ուրախութի է զօրաց երկնաւորաց յիշատա-
կօք մերց. որք յաղթեցին բռնաւորաց և հրեշտա-
կացն։ Այլ հոգիք արդարոց ՚ի ձեռին այ են
ընդ անմարմնոցն դասուց. սքանչելի իմն ՚ի փառս
այ ուրախարար յուսոյն։ իմաս 3. 1։
Այլ ՚ի հասարակաց յարութեն զկենակից մարմինն
առնուն յերկրէ որով հաճոյացան այ. և լինին որպ
հրեշտակս ՚ի յերկինս. զի յարութե որդիք են և ոչ ու-
նին մեռանել կամ մեռանիլ։ Ղուկ 20. 36.
Տեսե՞ր, զի յոյսն կենդանեաց բնակութի է հրեշ-
տակաց և արդարոց. և՛ ՚ի միասին ուրախ լինին։
Այլ և որք մեռանին և սոսկ խոստովանեալ ա-
պաշխարեցին ջերմեռանդն արտասուօք և ամ
բարի գործովք, և նոքա ոչ զրկեցան ՚ի հանդեր-
ձեալ յուսոյն. ամբն ճշմարտեալ ՚ի հաւատս հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ. լուսաւոր մկրտութբն,
և մարմնով և արեամբն Քրիստոսի։ Որք որդիք լուսոյ
են և ժառանգք արքայութեն. քաղաքակիցք մերց
և ընտանիք այ։ Զի մի է ած և մի հաւատ.
մի մկրտութի և յոյսն կենդանարար և ուրախութի
յուսով. Եփես 4. 5. որք կատարեն զյիշատակս
մերցն հաւատով. զի և նոքա զուարճանան նոցա սի-
րովն.

բռնի. որ յաղագս ա՟յ՝ զնոյն յուսով կատարեն ա՟մ բարեգործութ՟ք ՚ի ք՟ս. Եւ մնացեալքն ՚ի բարեացն առաջնոյ, առնուն զլրումն վերջնովքս. զի և զմնացուածս մարգարէիցն՝ լցին առաքելքն. և զնոցայն հաստատեցին վարդապետք զհաւատս և զվարս. Եւ վարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց տուեալ լինի յա՟մցունց տ՟նէն և պսակս. Զի այլ փառք են արեգական (ասէ առաքեալն,) և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք. սոյնպէս և յարութ՟ն մեռելոց. 1 Կոր 15.41. Եւ իւրաքանչիւր զիւր փառսն զգենու ՚ի տ՟նէ ըստ արժանաւորութ՟ե ՚ի միոյ ա՟ծութ՟ն փառաց՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս՟բյ. Զի մի է յոյս կոչմանն և մի բնութ՟ի ա՟ծութ՟ն. մի իսկութ՟ի և անփոփոխ մշտնջենաւորութ՟ի. մի ամենակալ զօրութ՟ի. անվրէպ գիտութ՟ի. անզեղջ իմաստութ՟ի. անսկիզբն էութ՟ի. որ յիւր ՚ի ճշմարիտ փառսն ՚ի կենդանի և յանմատոյց լոյսն բնակեալ է. Եւ տ՟ր սիրոյն իւրոյ խնամք առ արարածս ցուցեալ, բորբոքին անձառ և անպատումլի՛ բարութ՟ք. Եւ զարարածս ա՟մ զմտաւորս և զբանաւորս՝ յանձառ երանութ՟ն հրաւիրէ՝ և կոչէ յիւր արքայութիւնն և ՚ի փառս անձառս և յանվախճան երանութեանց ուրախութիւնն.

Արդ զյիշատակս առնել արդարոց կատարելոց, ն՟ց նահատակութ՟ն և սիրոյն որ ա՟ծ վկայս, բազում չափ ստանամք ս՟բցն բարեխօսութ՟ք առ ա՟ծ. Իսկ զհաւատացելոց. մեղուցելոց և խոստովա-

նողաց և ապաշխարողաց, և հաղորդելոց փրկա-
կան խորհրդոյն, և հրաժարելոց յշխ՟է, և նց՟ կա-
տարեսցին յիշատակք՝ քո՟ պատարագաւն, և
աղօթիւք և գթով անանկաց և այլ բարի գոր-
ծովք. զի վերջնոցն բարեգործութեամբք՝ հան-
գուցեալքն նորոգեսցին նորոգութ՟բ կենացն
անվախճանից:

Իսկ եթէ ասիցէ ոք, եթէ մօտ 'ի վախճանն
զղջացեալ խոստովանեսցի ոք. և ողորմս զգործե-
ցեալ զայնցանս, և խոստանայ ապաշխարել, և
խնդրէ զմարմին և զարիւնն քո՟ հաւատովք 'ի
քաւութի, զի՞նչ առ նս՟ յոյս փրկութե լիցի.

Պատասխանի.

Ո՛չ ի եթէ մօտ 'ի վախճանն իցեն, և 'ի հրապոյրս
սատանայի ըմբռնեալ 'ի դժնդակ վարս, և օտա-
րացեալ 'ի նախախնամական սիրոյն յառաջագոյն,
և դառնայ 'ի վախճանի 'ի զղջումն և 'ի խոստովա-
նութիւն ջերմեռանդն արտասուօք, և 'ի բոլոր
սրտէ հաւատով հայցէ զփրկական խորհուրդն,
յուսով ապաւինեալ 'ի մարդասիրութին քո, մի
անյոյս լիցի. Մատահացել 'ի բարութին զղջմամբ,
և կենդանարար մարմնոյ և արեանն քո փրկ-
չին մերոյ. որ տայ զկենդանութի ստեղծուա-
ծոց իւրոց. զի ամենայն որ կարդասցէ զանուն
տեառն՝ կեցցէ. Գործ 2. 21.

Իսկ որ ո՛չն դառնան յառաջագոյն յապաշխա-
րութի, և ո՛չ 'ի վախճանի զղջանան, և յուսահատ
և առանց խոստովանութե և անմերձ 'ի փրկական
խորհրդոյն մնան, զի՞նչ պարտ է ասել վս՟ նց՟

յի

յիշատակաց· որ բաղում ողբոց և արտասուաց արժանի են և ծանր վիշտս ունին ՚ի քէն.

Բայց յառաջագոյն մեղուցելոցն և սոսայգ խոստովանողացն և ապաշխարողացն, մինչ կատարեսցին յիշատակք նց. Այն որ ՚ի ժամ եղանելոյ մեղաց զղջանան. Նա և բաղում բարիս պարտ է ցուցանել մնացելոցն յաղագս հրաժարելոցն յմեղս. Զի կարեւորն արձակել· զպարտս թողուլ· զխոստովանս լցուցանել բարութեամբ. Զի է զոր ինքն արար բարիս. և է որ պատուիրեցաւ առնել. և երթան զհետ բարի գործքն ՚ի հաւատարիմ սիրելեաց հրաժարելոցն յերկրէ. Զի որ մերձենան ՚ի սրբութիւն սոսայգ զղջացեալքն՝ իբրև հուր սրբէ և պատրէ և լուսաւորէ է նց իւրովք ընծայիւք. մտերիմ հաւատովք վկայութ՝ ահրինն նյ. որ զգուշութ և արդարութ լի է. Զի սկիզբն է մշհաւոր օգտից երկիւղ այ ըստ իմաստնոյն բանի որ ասէ, նոյն անհնարինք հնարաւորք երկիւղածացն նյ ծոց. Այն որ հեռի է յերկիւղէ այ, ՚ի ծուլութի և յարհամարհութ նյ պատուիրանին կրթի. և յամ բարեաց գործոց և խորհրդոց հեռանայ. և յանկրաւութ տկարի. Նա որ փոյթն է ՚ի հնազանդութ հոգևոր օրինացն երկիւղն այ, մինչ ընծայաբեր լինի այ ՚ի ձեռն սբ հրեշտակաց. ըստ բանին տն որ ասէ, զգո՛յշ լերուք, մի՛ արհամարհիցէք զմի՛ ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ. զի հրեշտակք նց հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է. Մտ 18. 10.

Զի

Զի զհաւատոյն գործքն զօրացուցանեն · յակ 2 · 20 · և զաղօթսն սիրով զղջումն անձկալի՛ անմեղ կելի խնդրուածովք · անշարժ ունելով զկամսն առ ած ՚ի նեղութե և յանդորրու · Այլ առնուլ զյաղթութե շնորհս առ մարտս մտաց և անդամոց ՚ի բարերար խնամոցն այ · Այլ ոչ սրտի և ան կեղծաւոր հաւատով առաքինանան և ուրախ առնեն զհրեշտակսն · որք կենդանի սիրովն զը ւարճանան միշտ ՚ի նշ բարի գործսն · Զ որ ոչն է իմանալ կամ տեսանել որ յայ նոքօք մեզ ըղ պահպանութին · որ պատրաստեցաւ յայ խնամոցն սիրողաց անուան նր · Զի ամ խորհուրդք կամ գործք մտերմութե երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց , առաջի այ ամենակալ տրութենն հանապազօր վերանան ՚ի կշիռս ·

Այլ ՚ի կողմն Ճշմարիտ հաւատացելոց և սիրո ղացն այ՝ մահն քնի յառաջանայ ամենաչահ չար չարանօքն՝ վկայութք սիրոյն իւրոյ · Այլ առնմ ժողովլին Ճշմարտութիք արդարոց · քաջութիք նահա տակաց և արդարութիք որց · ժուժկալութիք կուսանաց · համբերութիք մարտիրոսաց ·

Նաև և սոյգ խոստովանողաց վարք , շարժեն զգութ և զողորմութի ՚ի խնամոց որ սիրոյն ·

Այլ գործք անօրինաց և անհնազանդից ամբա րըշտաց և մեղաւորաց և ամ չար ցանկութեց՝ հան գերձ չար խորհրդակցովքն դիւօք , կշտամբեալ յանդիմանին · և զարժանն զհատուցումն պատու հասից ընդունին յարդար դատաւորէն և ՚ի տես չէն գալստենց · որ գիտէ զներքինն և զվերինն ·

Իսկ

Իսկ որ 'ի մ՟ջ սէրն ք՟ի հաստատեալ են որք զանձինս իւրեանց ետուն 'ի մահ վ՟ն ն՟ր զի ազատեսցին 'ի դառն տանջանաց յերեւելեաց և յաներեւութից՝ այրեալք լինին, գործակից և բարեխօս ունելով զամենայն ս՟բս և զարդարս։

Եւ բացցին դրունք կենաց բարերարութեանն շնորհօք հոգւոյն ս՟բյ վերին կայանիցն. ուր ժողովք ս՟բցն են հանգուցեալք։ Ո՛վ զամենեցուն կամի զկեալն. և 'ի գիտութ՟ի ճշմարտութե կենացն լինել ժառանգաւորս. զի ոչ կամի զմահ մեղաւորին. այլ զկեալն 'ի ք՟ս։

Որքան շահ օգտից են յիշ՟կ հանգուցելոցն առնել ուղիղ սրտիւ. արդար և ճշմարիտ և ս՟բ հաւատով. ահիւ և ս՟բ սիրով և ողջամիտ յուսով 'ի գովեստ ա՟յ։ Ո՛վ լիցի ընդունելի մեր պատարագն 'ի ներքոյ վարագուրին 'ի կենդանարար կենաց վերաբերելով, վայելել յերանելի բարութեան 'ի խնամս կենդանարար սիրոյն աւետեացն խոստացելոց։ Ո՛վ ուր եսն եմ (ասէ տ՟րն,) անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Ո՛վ որ և բարերար երկնաւոր հայրն ուրախ առնէ զկոչեցեալսն յորդեգրութ՟ն՝ մարդասէր միածին որդւոյն իւրով և կենդանի ս՟բ հոգւոյն 'ի բորբոքումն կենդանարար սիրոյն. յանհրաժեշտ և յանվախճան և յանհամեմատ յա՟ծեղէն բարութիւնսն զիւրսն վայելեցուցանելով.

Եւ նմա գոհութիւն և պատիւ և փառք.
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.

Նաւակատեան Սբյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին առա
ցեալ Յաւուրն որ յետ խաչի վերացմանն առ կիրակէին։

## Ձա Ժդ

Մեծ է խորհուրդ ամենապայծառն․ ճշմարիտ հաւատով որ ՚ի հայր և յորդի և ՚ի հոգին սբ․ և առաքինի գործովք՝ արդար և սբ երևիր։

Զի առաւել քան զարեգակն լուսաւորեր զաչս մտաց հաւատացելոց․ և հալածէր զխաւար մեղաց․ և առաջնորդէր յարդարութիւն և ՚ի սրբութիւն․

Նա տայ ՚ի բաց կալ ՚ի դժնդակ վարուց և ՚ի չար մտաց․ և գնալ ՚ի ճանապարհս արդարոց որ տանի ՚ի կեանսն յաւիտենից․ Բարի կամօք և բարի վարուք զհետ երթալ բարեբար կամաց արարչին․ որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածէ, և յանարգութէ ՚ի պատիւ։

Նա այս երկու մասամբք․ տկար և զօրաւոր․ զմարմին և զհոգի․ Զի տկարն ճգնեսցի վաստակովք և ՚ի զօրութէ արարչին ապաւինեսցի․ զի մի՛ վրիպեսցի ՚ի բարերար օգնութենէ անդի․ որ առաքինացուցանէ արդար և սբ վաստակօք․

Նա զանուն քաջութե առնու․ և զյաղթութե պարծանօք պսակեսցի․ և ՚ի խնամս բազմադարմանս վայելեսցէ յաւէտ երանելի կենացն։

Իսկ զօրաւոր մասն հոգւոյն՝ ճշմարիտ հաւատով և անխախտ գիտութբ սբ Երրորդութեն՝ որոշի ՚ի ստապատիր մոլորութէ և ազատանայ ՚ի ծառայութէ մեղաց որոյ վս մահն ՚ի ներքս եմուտ․ և պրծեալ

՚ի մեղացն՝ ժառանգաւոր կենացն եղիցի ՚ի ք͞ս։ Տէր մարմնոյն՝ երևեսցի մխիթարութիւն ՚ի ճգնութին համբերութբ յուսոյն։ Եւ զօրաւոր մասամբն՝ երևեսցի շնորհք ա͞ն ը͞ն առաքելոց բանին։ Որ խնդրեաց ՚ի տ͞նէ հրաժեշտ տկարութեն որ ճգնէր և աշխատէր և վշտանայր ազգի ազգի վշտօք ենեղութբ։ Եւ լուաւ ՚ի տ͞նէ թէ, շատ են քեզ շնորհք իմ պօղէ· զի զօրութի իմ ՚ի տկարութե կատարի։ 2 կոր 1·9։

Մ͞յ յօժարութբ ընդունէր զա͞մ վիշտս չարչարանացն· զի տկարութի զօրութբ կարգի· զի և մշակք բազմադիմի աշխատութբ վաստակոց յարդարին· և տ͞րն բազմաշահ պարգևօքն փառաւորի։

Մ͞ռ այսորիկ ՚ի չորից նիւթոց արար զարարածս· և յօրինեաց կարգաւ զերևելիս և զաներևոյթս· և անտի զմարմինս կազմեաց ՚ի ցամաքէ և ՚ի խոնաւոյ և ՚ի ջերմոյ և ՚ի ցրտոյ։ Եւ յայս չորից նիւթոցս արարան պէտք ՚ի սնունդս և ՚ի դարմանս· զի երևեսցին խնամք արարչութեանն։

Երկինք ցօղո͞մ յամպոց զխնամէ, և ջերմութբ լուսաւորաց և խառնուածովք օդոց՝ սնուցանէ զտունկս և զա͞մ շունչ կենդանի։ Եւ թռչունք երկնից՝ և երկիր ջրով և լողակօք՝ և այլ զեռունք ա͞մ ՚ի խնամոցն ա͞յ դարմանին։ Օ ի նախ զհոգին բանական եդ ՚ի մարմնի և խառնեաց· և այս զպէտս դարմանոց պատրաստեաց· զի ցուցցէ զփրոյն իւրոյ զտեսչութի որ յառաջ բարերարութէ անտի։ Եւ բանաւոր և մտաւոր ոգւոյն զօրաւոր դարմանս եցոյց ՚ի շնորհաց հոգւոյն ա͞յ

զխրատ ուսման 'ի վարդապետութենէ հոգևոր
օրինացն։ Յայսմիկ 'ի հոգևոր դարմանս վայե-
լել, և ընտանենալ համազօր տրուեն արարչին և
խնամոց նորին․ որ յերկինս և յերկրի՝ 'ի ջրոյ և
յօդոյ զկենանս ա̃մցուն յօրինեաց․ Իսկ այսու-
քիւք ուսուցէ և ընտելացուցէ մեծի յու-
սոյ աւետեաց խոստացելոյ որդեգրութեն և ան-
մահ ժառանգութեն․ որ են սատէն զուհա-
եատչեայ ազատութին շնորհօք աւազանին և մար-
նով և արեամբն ք̃րի։ Զի տկար մարմնոյն ձրգ-
նաւորեալ՝ ազգի ազգի առաքինութբ՝ զհամբե-
րութեն հանդէս ցուցանիցեն ըստ հաճոյից
ա̃յ․ ահիւ և ե̃ր սիրով առնել զկամս ա̃ն։
Զի թէ տ̃ր եմ ես՝ ո̃ւր է երկիւղն իմ․ ասէ։
և եթէ հայր, եղիցին կամք նր̃ ո̃պ յերկինս և
յերկրի։ Զի այսու ուղղեալ 'ի ձեռն օրինացն
եդելոց և պատուիրանացն կարգաց, մարտնչիր
լիցուք 'ի լաւագոյն կարգս առաքինութե և զօ-
րութե․ և յաղթող երևեալ՝ պսակեսցուք յա-
րարչէն ք̃նէ։ Նայսու խրատամբք յայտնի արար
զիւրոյ բարերարութեն զամենառատ շնորհս․ զի
մտերիմ ծառայից գործակից է բարի վարուց։
Իսկ ըստ խնամոց սիրոյն իւրոյ՝ զնեղութի հանդի-
սիցն անցաւոր արար և զհանգիստն անվախճան։
Նաև ինքն իսկ տ̃րն փոխեաց որ ա̃մ զօրութեց
և զօրաւորաց է արարիչ, յորժամ կամեցաւ ցու-
ցանել զաներևոյթ սէր իւր առ ազգս մարդ-
կան, չարչարել լինելր՝ որ վշտաց ին աշխատեալըն էրծ
Որ սուլիմէ հոգւով միաւորեալ առ ա̃ծ բանին․
մաս

մտաւորն և բանաւորն խառնեալ 'ի մարմին ըստ աւետարանական բանին. զի՛ Բանն ասէ մարմին եղև և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նր մեք՝ զփառս իբրև զմիածնի որդւոյ առ 'ի հօրէ

լի՛ շնորհօք և ճշմարտութեամբ.

Զի 'ի ձեռն ճշմարիտ շնորհաց իւրոց և կամաւոր խոնարհութեն որ կրեաց զամ կիրս մարմնոյ և հոգւոյ բաց 'ի մեղաց, եցոյց զկրկուե ճանապարհս արդարոց, և զխնամս մեծի սիրոյն իւրոյ տեսչութեն. որ շնորհօք դարմանէ զորդիս մարդկան յերևելիս և յաներևոյթս. Որ զհիւանդս բժշկէր. զմեղս քաւէր. զդևս հալածէր. զմեռեալս յարուցանէր. Նա՛ եբաց զդրունս կենաց և ազատեաց զհոգիս՝ չարչարանօք և զմահւամբ իւրով. Նա՛ կատարեաց զարդարութիւ ամ 'ի փառս և 'ի պարծանս մարդկուես մերում. և եղև վարդապետ ամ արարածոց. զի նր առաքինութեն հետևօղք եղեալ, նորին փառացն հաղորդակից եղիցուք. որ կայ և պահի յուսա-

ցելոցն 'ի քս.

Նա՛ վս այսորիկ ակն է մարմնոս, զի յերկրէ ունի զծնունդն. 'ի բուսոց և 'ի տնկոց և 'ի չորքաւորաց. ոչ և ամ անբան կենդանիք. Զի նոյն հրամայեցաւ ուտել միս շնչոյ կենդանւոյ. և ըմպել գինի յաղագս տկարութեն 'ի մխիթարութի. զոր ունէր վս համատարած ապականմանն սուղ. ծնն 9. Զի որ 'ի դրախտին կեանքն էր անունդ՝ յայնմանէ վրիպեցաք յաղագս յանցանացն և ընդ բազում տկարութե եղաք անկեալք.

Նա՛

Ասէ վ̃ն այսորիկ ՚ի պատճառէ խմբէք ձգէ ՚ի
մահ ցաւոյ և տօթ և հիւանդութե մարմնոյ։
Նաև և ՚ի կերակրոց և յըմպելեաց առաւելութե
լինին կեանք և մահ․ Նմանապէս և ՚ի պակասութէ,
՚ի սովոյ և ՚ի ծարաւոյ։ Նաև և թունաւոր ճի֊
ճիք և դաժանութիք արմատոց և բուսոց կա֊
րեն զմեզ վնասել և սպանանել և անզգայացու֊
ցանել և այլայլել։

Ասէ վ̃ն այսորիկ ոսկոր է մարմինս, զի մի՛ յոր֊
ժամ լսեմք այս պատկեր՝ ամբարտաւանել ամ֊
բառնայցեմք․ և ամբառնալով անկանիցիմք ՚ի
վայր ՚ի վիհն կործանման։ Այլ նոյն ինքն ա̃ծա֊
մարտն որ ՚ի վեր քան զամպս ասէր դնել զա֊
թոռ իւր և լինել նման բարձրելոյն․ իսկ այժմ
՚ի դժոխս եղ հանդերձ ապստամբ զօրօքն․ որպ̃
ասաց մարգարէն յեսայեաց ա̃նւ [illegible] 14․13։

Ասէ քս̃ զխոնարհութե մարմինս զայս առնլով,
խոնարհութե̃ն զնա կործանեաց․ և զխոնարհս
բարձրացոյց․ և խայտառակեաց զն̃ր ամբարհաւա֊
նութիւն։ Ոչ ի այսքան միայն է ն̃ր չարութե̃ն
թոյնք․ որպ̃ ճիճեաց թոյնքն․ և որպ̃ բուսոցն․ և
արմատոցն դաժանութե̃ վնասք։ Սակայն բժիշկք
թէ՝ գտն արմատք որ հալածեն զդեղս ՚ի մարդ֊
կանէ․ և իմանալի է այսպ̃ս, թէ այս ներգործու֊
թիւն ՚ի տկար նիւթոյ ցուցանէ զն̃ր տկարութիւն
և զկարծեալ զօրութիւն հակառակամարտին․ զի ան֊
զօր է առ ո̃րբս․ որ և կոխել զնա հրաման ունին
՚ի տ̃նէ․ որպ̃ տ̃մ հաւատացելոց է քաջայայտ․ և
դարձցին յետս և ամաչեսցեն ն̃ր կամարարքն․

և որք յուսան ՚ի նր̅ յոյժ։ Եւ որք ամենակալ
զօրութ̅ ամենասուրբ Երրորդութեան են օրհներգուք
և փառաբանիչք, այսու տկար մարմնովս զհանդէս
առաքինութեան որքապէս կատարեցին. և անցա_
նեն զկարգս Ձիս ըստ ճշմարտութ̅։ Անցանեն
ժամք և աւուրք և ամք, և յառաջադէմ նկրտին.
և առաքինութեան ծնունդք զհետ երթան որբուն.
Եւ ճշմարտեալ ըստ առաքինութ̅ փոխին յայսմ
Ձես ՚ի կենդանի Ած. ուր ոչ լոյ համբաւ մա_
հու յանուշակ ՚ի մշտնջենաւոր ուրախութիւն։
Որ վերատին նորոգի ըստ այն զօրութ̅ն յանկր
պառ և յանվախճան ուրախութիւն։ Որ լուցանին
ըստ արեգական այս յանմատոյց լուսոյն. և կեն_
դանի ըստ օրինի վասն հրով ամենասուրբ Երրոր
դութեան յանվախճան ուրախութիւն. և վայելեն
յանապառ և յանվախճան բարութիւն ՚ի Քս̅ Յս̅
՚ի Տր̅ մեր։ Ընդ որում Հօր ամենակալի և
Հոգւոյն ըստ պարգեւողի, փառք իշխանութիւն
և պատիւ։ Այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն։

## Ճառ ԻԵ

Աստուած ըստ մեծի մարդասիրութեն իւրոյ
բազմադէմ տեսչութեն իւրով խնամէ
զարարածս որպէս վայելէ իւրոյ
բարերարութեանն.
Զանմահ զօրս հրեշտակացն՝ մտաւորս եւ բա-
նաւորս եւ պաշտօնեայս իւր արար. զի փառա-
ւորեսցեն զամենազօր տէրութիւն. եւ արբանեկես-
ցեն կամօքն այ. զի այն արարածք նախ են
կազմեալ եւ բովանդակեալ. եւ պաշտօնէայք եւ
սպասաւորք են մեծի փառաց աստուածութեն. որ նոքօք
հրաւիրէ եւ կոչէ զմարդիկ յիւր արքայութին եւ
՚ի փառսն. Եւ զծնունդս մարդկան ՚ի սաղմնա-
ւորութէ անտի նորոգէ. զի ՚ի լինելութէ առնու
եւ աճէ. եւ ըստ սահմանի աւուրցն յառաջագայի
ծննդեամբ եւ աճէ սնընդեամբ եւ զարգացմամբ
՚ի խրատ եւ յուսումն պէսպէս գիտութեան.
Ի մտի առնուլ զարդարութի ճշմարիտ, եւ ուղղել
զհրամանս հոգեւոր օրինացն. [illegible] 1 . 3 . Ճանա-
չել զարարիչն եւ զ[illegible] սիրոյն իւրոյ զերախտիս
առ արարածս. Եւ գիտութե խրատու նր ըստա-
նալ զհնազանդութի օրինացն. Ընտրել զբարին
՚ի վատթարացն. ՚ի բաց կալ ՚ի դժնդակացն եւ
բուռն հարկանել զարդարոյ վաստակացն տրամբ.
Եւ այս կատարեսցէ զառաքինութեն զհանդէս,
ընտ

ընտրութեն ըստ հոգևոր օրինացն , բազմախնամ ողորմութեն այ · Համբերութ բազմաւ և ճշմարտեալ սիրով և կենդանի յուսով ընթանալ 'ի կէտ վերին կոչմանն՝ շնորհօք ամենասուրբ բարերար ամենատր Երրորդութեն · և կատարել զվարս երկնաւորացն ըստ կանխագիտութեն այ սահմանեալ յերկրի։ Ոմն 'ի տղայութեն, ոմն 'ի մանկութեն, և ոմն 'ի ծերութեն։ Սակայն և այս 'ի խնամոցն այ մատակարարի, զի մի գիտասցեն զօր վախճանին իւրեանց, և հեղգացեալ վրիպեսցին յարդարութե · այլ արթունք և պատրաստք 'ի գործս արքունե զամ աւուրս կենաց իւրեանց մնասցեն։ Եւ այն որ 'ի տղայութեն և 'ի մանկութեն առնու զվախճան Տէր , զերծեալ լինի 'ի փորձութեց և 'ի հոգոց աշխարհականաց · իմս 4 · 11 · և զգուշութի լինի այնոցիկ որք վարեն զկս առ հանդէս արդարութե և ամ առաքինութե · և կատարին 'ի հաւատ և 'ի սէր և 'ի յոյս։ Եւ փոխին յանարատ և յամբիծ և յանմահ կեանս յանապական ժառանգութին արդարոց։ Ի հոգիքն որ ելանեն 'ի մարմնոյ աստ, երթան 'ի կեանսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեցն · և անդ հրճուին առաքինեացն հոգիք ըստ խոստացեալ աւետեացն որ կայ և պահի յուսացելոց իւրոց անձառ և անքննին · որ 'ի կամս այ վարեցան յսի ըստ աւետարանին քարոզութեան ։

Երանին 'ի տնէ աղքատք հոգւով · որ վն աւետեացն մեծութե՝ հոգւով աղքատացան առ ժառանգութի արքայութեն երկնից որ 'ի տր յս քս ։

Նրա

Երանի են և խոնարհք սրտիւք․ զի գտանեն հան-
գիստ յերկրէ յերկինս ուր անբաւ բարութիւնն է․
զոր խոնարհքն ընդունին ՚ի քս̃ յս̃․ Երանի են
և հեզք․ որ ժառանգորդ են երկրին կենդանեաց․
յորմէ փախուցեալ են ցաւք և տրտմութիւնք և
հեծութիւնք անձառ լուսովն ՚ի քս̃ յս̃․
Երանի են և սգաւորք․ որ յաղագս սիրոյն այ̃ ՚ի խո-
րոց սրտէ հեղուն զարտասուաց աղբիւրս․ որ
շնորհալից իմաստուէ̃ մխիթարուի̃ ունին ՚ի քս̃ յս̃
Երանի են և սր̃բք սրտիւք․ որք ազատեալ են և սրբեալ
յաղտեղի ցանկութեանց․ զի նոքա զա̃ծ տեսցեն․
Երանի են և խաղաղարարք․ զի նոքա նմանօղք ե-
ղեն որդւոյն այ̃․ որ արար խաղաղութի̃ յերկինս
և յերկրի․ հեռաւորաց և մերձաւորաց․ նմանապէս
և սոքա եղեն․ Նաև ա̃մ երանութիւ̃քն զուարձա-
նան և զուարթանան հոգիք արդարոցն ՚ի հան-
գստեանն քնի մինչև ՚ի հասարակաց յարութիւնն․
Յորժամ գայցէ տ̃րն մեր փառօք հօր․ և մեռեալք
՚ի քս̃ յարիցեն առանց ապականութեան․
Ա՛յ առաքինեաց անձանց արդարութիւքն առաջի
ընթանան ամենայ̃ն Երրորդութե̃ն․ զի հաւատքն
հաստատեն ՚ի ծանօթութե̃ փառացն այ̃․
Ա՛յ զի՞ ես պիտոյ է ասել այնուհետև վ̃ս այսո-
րիկ զոր ետես․ և վ̃ս լուսոյն զոր մուծանէ
՚ի ժառանգութիւն բարեաց որում ցանկացեալն
է և ինքն տեղի տայ․ Ո՛վ ի յայսմհետէ զի՞
ես յուսայ կամ այն ունի այնմ զոր ժառան-
գեաց․ հռօ՛ 8․24․
Որպէս և համբերութե̃ և ժուժկալութե̃, եր-
կայն

կայնմտութ̄ և հեզութ̄ և հնազանդութ̄, ուղղութ̄ և որբութ̄ և ճշմարտութ̄, հանդերձ ամ̄ երանու-թբ̄քն փառաւորեալ և պսակեալ, մտուցանեն զժառանգաւորսն 'ի ժառանգութ̄ արքայութ̄ն. Ո՜ ի ուր կատարումն է, զի՞ ևս պիտոյ է առաքինութ̄ հանդիսից. զի եմուտ 'ի վայելս անըս-պառ բարեացն, և ուրախանայ ընդ սիրոյն յան-վախճան երանութ̄ն ամենայնք Երրորդութ̄ն. որ անճառ է և անբաւ և անպատում.

Այնպէս և մարդք չարք և անօրէնք և ապստամբք 'ի ճշմարտութ̄է անտի, որք զհետ երթեալ անի-րաւութ̄ 'ի նոյն վախճանին, ընդդէմ նց̄ յառա-ջնան գործք իւրեանց ամբաստանեցն դառն յիշատակօք յաղագս ամենաչար յանդգնութ̄եցն. ահաւոր սպառնալեօք 'ի վ̄ր անօրինաց անհնա-զանդից անսրբոց և պղծոց և որ այլ ևս յան-ցանք իցեն. Ա՜յ 'ի վ̄ր վայի հաստատեալ կայ նց̄ յամ̄եղէն գրոց սր̄բց. և յանաչառ դատաւո-րէն պատիժք. Ո՜ ի յիմարեցան սրտիւք իւ-րեանց յիմանալըս. և ոչ լուան ձայնի տ̄ն. և պատ-ուիրանաց նր̄ ոչ անսացին. Նաև վ̄ն այսորիկ պատ-րաստեալ կայ բարկութ̄ն Այ̄ 'ի վ̄ր ամբարշտաց և մեղաւորաց. որք զճշմարտութ̄ն անարգեցին յան-ձինս իւրեանց որոց յառաջագոյն սպառնացաւ. Նա և այս ամ̄ սպառնալիք յանցաւորաց՝ յոյժ 'ի տրտմութ̄ ունին զհոգիս մեղաւորաց 'ի կա-յանան. որ ըստ իւրաքանչիւր մեղացն բաժանել և որոշեալ 'ի տխրական տեղիսն, ուր երևմամբ տեսանեն խմանալեօքն զհատուցումն արդար դա-

տաս

տատանէին. զանշէջ հուրն և զխաւարն արտաքին.
զլալ աչացն և զկրճել ատամանցն: Նմանքիւք՝
ահիւ տրտմեալք և տխրեալք կան ոգիք մեղա-
ւորացն մինչև 'ի հասարակաց յարութին 'ի քնէ.
Ապա եթէ ոք ասիցէ, եթէ այդ յառաջ քան
զհանդէս ատենին և հատուցմանն է, ո՞ւր է
ասացեալն յառաքելոյն թէ՝ առանց մեր չառ-
նուն զկատարումն առաջինքն: Այլ դարձեալ
ասէ մարգարէն, մի՛ յուսայք յիշխանս յորդիս
մարդկան. զի ելցէ հոգի 'ի նոցանէ և դարձցին
անդրէն 'ի հող. և յայնմ աւուր կորիցեն ամ
խորհուրդք նց.

Այլ եթէ ոչ ուրախ առնեն հոգիք արդարոց
առանց մարմնոց, ընդէ՞ր վաղագոյն կանխէր տրն
զաւետիսն. ապաքէն զի ուրախ արասցէ զհոգիս
արդարոցն սբց. Կանխեաց և զպատուհասն ամ-
բարշտաց և մեղաւորաց. ապաքէն զի զարհուրե-
ցուսցէ զնս և տխրեալ տրտմեսցին. Ըստ այսմ
օրինակի է իմանալ, ոպ թագաւորք առաջնամարտաց
և յաղթողաց պարգևս խոստանան. և նոքա հաւ-
տատեալ գիտեն եթէ 'ի դէպ ժամանակի առ-
նուն զխոստացեալ պարգևսն, վն այնորիկ ուրա
խութբ ուրախ են մինչև առցեն զփառս և ըզ
պսակս երանութեանցն.

Այնպէս և մեղաւորաց հոգիքն են. որոց սպառ-
նացաւ մահ յաղագս յանցանացն. ոպ 'ի թագա-
ւորացն մահապարտք. որ միշտ կան և մնան իւ-
րեանց տանջանացն և մահուն. բազում տրտմութբ
և դողութբ մինչև 'ի ժամն յորում առնուն զհա-
տու

տուցուին ըստ արժանեացն զանմահ տանջանացն զպատիժն և զպատուհասն. որ մարմնոյն և հոգ-ւոյն ընդունելին. Այլ զոր առաքեալն ասէ, և մեք զնոյն ասեմք. զի իւրաքանչիւրոք զիւր վարձս առցէ 'ի հասարակաց յարութեն զոր ինչ գործեցին. եթէ բարի և եթէ չար.

Եւ մի՛ յուսայ յիշխանս ասէ մարգարէն. զի լուծանելոց են յերկրէս ամե բռնաւանեալ իշխանութիւնքն և շիջանին հպարտ կամքն.

Այլ յուսալ յած ասէ. որ անմահն է և իշխան մահու և կենաց յաւիտեան.

Եւ են ոմանք որ ասեն եթէ՝ ամ մանուկ յո-րովայնի անզգայ և կենդանի՝ լինել գաղափարել կայ 'ի խօսելոյ և 'ի լսելոյ, 'ի գնալոյ և 'ի գործե-լոյ, այնպէս համարին զոգիս մարդկան լինել և ցածուցեալ. Ո՛ այս գիտասցեն, զի 'ի սաղմնա-ւորութէ անտի յառաջագայի և լինի մանուկ յօ-րինուածովք ըստ կերպարանին մարդ. և աճումն առնու ողջն 'ի ծնունդն և 'ի սնունդն ողջու-թեն՝ ամենայն մարմնոյ և մնայ յորովայնին.

Եւ յետ ծննդեանն՝ նախախնամութբն այ ամ ինքն գիտէ կարօղն ոգւոյ և մարմնոյ 'ի միասին՝ գայ 'ի կատարելութի մարմնոյ և մտաց. և դարձեալ պակասի և զմահ ստանայ ըստ սահմանին այ.

Եւ այս վն այնորիկ, զի ըստ իւրաքանչիւր հա-սակաց անձանն՝ և զառաքինութե զհանդերձն ը նմին յորդորեսցեն 'ի կատարումն քնի գլխոյն մեր հասարակաց. Եւ հաւատով և սիրով և եր-կիւղիւ գնալ 'ի ճանապարհս արդարութեան.

Որ է առաջնորդն մեր և կատարիչն առաքի-
նութեան յն քն բազմադիմի շնորհօք իւրովք
խնամէ զարարածս յերկիրս. Եբր. 12. 2.

Այլ որ անդ են կայանք՝ ննջեցելոցն հոգիք՝ են
'ի զգայութե և յանձառ փառաբանութե հրեշտա-
կային օրհնութեքն. Զի ի ածային գիրք՝ կեն-
դանիս և անմահս ասեն զհոգիս մարդկան. Ժող. 3.
Որովք իմանալի է ոչ անզգայս. այլ ունին փառա-
տալ արարչին. Նաև եթէ ըստ մարմնոյ օրինակի
իմացիս, որպ յորովայնին, և յետ այնորիկ գայ
'ի կատարելութի մտաց և մարմնոց և փոփոխի.
Նոյն հոգի անմահ մնաւոր և բանաւոր՝ յորժամ
ելանէ 'ի մարմնոյս, յառաւել գիտութի իմաստից
է իմանալ և փառաւորել զտէրն փառաց.

Զի յառաջագոյն մարմինն որպ ամպ ինչ ծած-
կեալ ունէր զիմանալի տեսչութին. թէպէտ և յու-
սովնահատակէր 'ի գործս բարիս 'ի ձեռն հոգե-
ւոր օրինացն. որով և զընտրութին առնէր բար-
ւոյն և չարին. անարգելով զչարն և ընտրելով
զբարին. խրատու և իմաստութբ տն երախտաւոր
սիրոյն. Զի ոչ է պարտ զհոգիս մարդկան մա-
հացուս ասել կամ անզգայս. այլ որպ եզեկիելի
մարգարէի 'ի միում վայրի յարութի մեռելոց
ցուցաւ. Նախ ոսկերաց և ջլաց մարմնոյ միա-
ւորեալ ամ յօրինուածովք, և ապա կոչեալ զհո-
գին յիւրաքանչիւր կայանից հոգւով տրվ որպ
հողմոյ. Եզեկ 37. Զի առաքես տէ զհոգի քո
և ստանաս զնս, և նորոգես. Այլ որ յաւէտա-
րանան պատմին յարութիքն մեռելոց 'ի տնէ. զի

հո

հոգեացն գործ ՚ի մարմինան այս են։ Բերան խօսի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, ձեռք շօշափեն, ոտք գնան, և սիրտ շարժի իմանալեօքն. և փառաւոր առնեն զած՝ կենդանարար հոգւովն որ զամ զգայութիւն շարժէ անդամբ։ Եւ յորժամ հոգին արձակի ՚ի մարմնոյն, մեռեալ կոչեցաւ. և քակտին ամ յօդեալ յօրինուածք անդամոցն։ Այլք վկայութիւք են իւրոյ հոգւոյն շարժելոյն. զի մարմնոյս այսմ՝ տուիչ և վարդապետ և կենդանարար հոգիքն են ըստ այ կամացն։ Զի եթէ զգայութիւքն են պատճառք կենդանութե, ապա ուր է անմահութի

հոգւոյն որ զկեանսն ունի այլ.

Եւ այսպէս իմանալի է. ամ շարժմունք՝ հոգւոյն են. և հոգիքն տան մարմնոյն զկեանս ըստ այ նախախնամութեն։ Եւ որպ մարմինք վկայութ ունին զգործս բնութե բարուցն, այնպէս և ոգիքն մեր զխորհրդեանց բարուցն ունին զվկայութի. Եւ ոգի անուանի կենդանի ՚ի մարմինս աղելիս և աշխատելիս և չարչարելիս և մահկանացուս։ Յորժէ որոշի ըստ վերին կոչման արարչին ՚ի պատրաստել օթևանս անմարմնոցն։ Եւ մարմինն դառնայ յերկիր և հանգչի անհոգ. Ժող 12. 7. Եւ հոգի մր՝ բարի աւետեօք յուսոյն զուարճանայ ընդ հրեշտակս ՚ի փառս ամենակալին. իբրև արդեն առեալ զառհաւատչեայ երանութիան երկնից արքայութեանն։ Զի և հոգին վկայէ ռք հոգւոյս մերում եթէ եմք որդիք այ և ժառանգակիցք քսի. Հռոմ 8. 16. զերծեալք

՚ի

՚ի ծառայութէ՛ մեղաց յազատութիւն փառաց
որդւոյն այ. Զի ած հաւատացելոց ծանու-
ցեալ եղև երախտիք սիրոյն այ առ արարածս
իւր լուսաւոր աւազանաւն և փրկական խորհր-
դովն մարմնոյ և արեանն քի. որ պատարագե-
ցաւ ՚ի վրն խաչին. և եբարձ զմեղս աշխարհիս
որք հաւատով մերձենան առ փրկիչն մեր։
Նա՛ յորժամ դարձեալ գայցէ փառօք ՚ի նորո-
գել զորդիս մարդկան, յարուցանէ զմեռեալս և
նորափետուր զարդարէ լուսով զարդար կենդա-
նիս և զյաւիտենից ննջեցեալ որս ՚ի տր. և մու-
ծանէ ՚ի ժառանգութի իւր յանմահական կենաց
երանութինն. որ կայ և պահի յուսացելոց ՚ի տր։
Նա՛ ինքն եղիցի (ասէ առաքեալն) ած յամի.
իւրով կենդանի սուրբ սիրովն և կենդանարար
խնամովքն. 1 կորն 15. 28.
Զորս վայելեցուցանէ ՚ի փառս ածութեանն
զճշմարտեալսն ուղիղ հաւատով և սբ. և անարատ
վարուք։ Մճարեալ զերկրաւոր կեանս՝ և զա-
նանց կեանս շահեալ ՚ի քս. զմշտնջենաւորն և
զերանելին յանուշակ փառս միածնի. Որ ած
երանութբք պսակէ և փառաւորէ զսիրելիս իւր
՚ի կեանսն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ
յաւիտեանս յաւիտենից ամէն։

## Երանելւոյն Սրբոյն Գրիգորի Հօրս Լուսաւորչի, Վ. Ս. Մարտիրոսաց Վ. [illegible] [illegible].

### Ճառ ԺԶ

Սկսանիմք այսուհետեւ եւ վասն մարտիրոսաց ճառել բանիւ. զի պատմեսցուք զչարչարանս նոցա եւ երանեսցուք նոցա վասն ճշմարիտ վկայութեան եւ սիրոյ. եւ բազում վարձս առնուցուք նոցա բարեխօսելովն վասն մեր.

Եւ զպաշտօնն Աստուծոյ մատուսցուք սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք. Մեծ սրտիւ գովելով զանսկիզբն էութիւն եւ զամենազօր Տէրութեան. զի արժանի արասցէ զմեզ մասին ժառանգութեան սրբոցն ՚ի լոյս եւ ՚ի փառս Տէրութեան. Եւ ամենայն ժողովք որք ժողովին ՚ի յիշատակս սրբոց, ՚ի միտ ածցեն հաւատով եւ սուրբ սիրով զհանդէս նահատակութեան նոցա. Եւ նոցա բարեխօսութեամբն աղաչելով զԱստուած ջերմեռանդն արտասուօք. հոգւով զտիւ եւ զգիշեր ՚ի պաղատանս կանխելով ՚ի սուրբ սրտէ. զի զերծուսցէ յԱստուծոյ ամենայն չարէ առաքինասէր վարուք. Որպէս սուրբքս այսոքիկ որոց յիշատակքն կատարին ՚ի փառս Աստուծոյ. եւ հանդէս մեծ մեծ է խրեանց ցուցանին առ ամենեցունց Տէրն եւ արարիչն ամենայնի. որ ետ նոցա զայսպիսի յաղթութիւն առ բռնաւորսն, եւ հակառակորդսն ճշմարտութեան. Եւ մեզ տացէ շնորհս յաղթել ամենայն կարեաց որ յառնեն ՚ի վերայ մեր ճակատամարտք երեւելիք եւ աներեւոյթք. եւ զպաշտօն փառաբանութեան Աստուծոյ

ընծայել երկրպագութիւն։ Զի այն իսկ են մեզն
կամք, զի և ժողովուրդք՝ նոյ բարեխօսութեան՝
յոյն պաշտօնն յորդորեսցեն. և այնպէս առցեն
զաշխատութեանցն զփոխարէնսն յամենառատն Առա-
տութենէն։ Զի և պօղոս և բառնաբաս առաքեալ
զնոյնն յանուն ամն յոյժ քնի. զառ ՚ի մօրէ ըղ-
կաղն բժշկելով և զարմացուցանելով զամենեսին.
մինչ զի քուրմքն մծս զնսա համարեցան յերկնից
իջեալ, զկերպարանս մարդոյ ունելով. վն որոյ
զոհիւք կամեցան պատուել զնոսա որպ զածսն ի-
րեանց։ Այլ յաղագս այնորիկ պատառեցին ըզ
հանդերձսն և ձիչ բարձեալ ասէին, և մեք ձեզ
նմանեալ մարդիկ եմք ծառայք այ բարձրելոյ որ
արար զերկինս և զերկիր և որ ՚ի նմա արարածք
իցեն. և յանուն նրա բժշկեցաւ սա։ Այլ զայս
ասելով հազիւ լռեցուցին զամբոխն. զի լաւ հա-
մարեցան մեռանիլ, քան թէ զպատիւն այ յիւ-
րեանս ձգել և փոխարինել ՚ի մարդկանէ։ գործ 14. 7.
Նմանապէս իմն արար սատանայ. զայ պատիւն
յինքն ձգեաց և որոշեցաւ ՚ի խնամոց արար-
չին իւրոյ. և անկաւ ՚ի փառաւորեալ կարգաց հը-
րեշտակային դասուցն. և եղև խաւար փոխանակ
լուսոյ, և ժառանգորդ գեհենին պատժոց։ եսայե
14. 13. Զի մեզ առաքելոցն և մարգարէիցն
և ճշմարիտ վարդապետացն ծառայիցն այ՝ անարգս
երևեցուցանելով զինքեանս, գիտէին զաստուածայի
՚ի ձեռն ամբարտաւանութեան հպարտացեալ և ամ-
բարհաւանեալ զվայր անկումն. և զխոնարհաց և
զհեզոց զվեր ելումն ՚ի տեղի անկելոցն։

Մանաւանդ քանզի յայտնագոյն եցոյց ք[րիստո]ս ՚ի
ձեռն տնօրէնութեան զանձառ խոնարհութի[ւն] իւր.
յորս և ասէ իսկ, ուսարուք յինէն զի հեզ եմ
և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց
ձերոց: Մատթ. 11. 29. Այլ ա[ստուա]ծ մեր՝ իւրեանց առաջ
նորդութե[ա]ն՝ ճշմարտեալ խոնարհութ[եամ]բ առ տէրն ՚ի
բարձունս ընթացուցանեն զմարդ հաւատացեալսն
յա[ստուա]ծ. զի սրտանի լինիցին յամենեցուն փրկչէն
փրկութե[ա]ն և քաւութե[ա]ն սխալանացն բարեխօսութ[եամ]բ
տէրցն. և այլ մի՛ եւս դառնալ ՚ի դժնդակ վարս սնոտի
Նաև լսել զնորաքանչիւրոց զնահատակութեան
և զկատարեալ սր[բո]ց սէրն. որ առ ա[ստուա]ծ էր յոյս ն[ոցա]
համբերութեան նախանձ ունելով ք[րիստոս]իւ.
Որ հրով և ցրտով, ջրով և սառնամանեօք, քերա-
նօք և հարուածովք, սրով և մահու, սպառնալեօք
և ողորքանօք մարտեան ընդ նո[ցա] բռնաւորք. զի
երկնչուտն զարհուրեսցի և արին կակղասցի.
Նաև ոչ ինչ կարաց յայտպխսեաց չարաչար տանջա-
նաց վերջս և նեղութի և վտանգ մահուն՝ քակտել
և խլել զսր[բո]ց սէրն ն[ոցա] որ առ ամենայն Աստուա-
ծութեան. Այլ յաղագս առաւելութեան ա[ստուածայ]յ սիրոյն՝
առին համարձակութի բարեխօսել առ տէր վ[աս]ն մեր.
Զի զայս ա[ստուա]ծ տանջանս ՚ի հակառակաց անտի ըն-
կալան համբերութ[եամ]բ բազմաւ. վ[աս]ն երախտաւոր
սր[բո]ց սիրոյ ն[ոցա]. որ սիրեաց զազգս մարդկան և կա-
չեաց հրաւիրեաց յերկնից արքայութեան.
Արդ՝ զհետ երթիցուք կոչողին զհետ սր[բո]ց սր[բո]ւ
սիրով. և խնդրեսցուք ջերմեռանդն շնորհալից
տրտասուօք զանդէն հանգիստ ասացեօք աշխա-
տու

ութիւնքս․ և զհուր ցանկութե՟ շիջուցուք հրով
հոգւոյն ս՟բոյ․ և սրբեսցուք զանձինս զերեւելի
զգայարանս և զաներեւոյթ հոգւոյն շարժմունս
'ի խղճէ չարեաց․ Եբր 10․22․ Զի ճշմարիտ սի
րովն որ առ ա՟ծ՝ կարասցուք մաքուրն ս՟րտն արժա
նի լինել յետ զկեանս ս՟իս լուծանելոյ․
Զի այսպէս 'ի ժողովս ս՟րցն հաղորդեսցուք ն՟ց
և տօնեսցուք զն՟ս 'ի փառս ամենակալին ա՟յ․ որ
ետ ն՟ց զյաղթութի՟ առ չար բռնաւորսն․ և փառս
հասեալ յերկրի և յերկինս ուր կան և մնան
միշտ․ Այլ այսպէս յուսով և հաւատով տօնես-
ցուք զսրբոցն ժողովսն, բարեխօս առ ա՟ծ ունելով
զն՟ս․ Որ՟պ զքահանայս որ կան առաջի այնորիկ
որ նստի ընդ աջմէ հօր․ և զիւրաքանչիւր պատ
րագս ընծայեն նմա աղօթիւք առ 'ի հաշտութի՟
ակամայ և կամաւոր սխալանաց հաւատացելոց ժո
ղովրդեան․ վախճանելոց և կենդանեաց․ յայտ ձ․10․
Այլ իւրեանց ճշմարտեալ հաւատոյն և հանդի-
սաւոր ճգնութե՟քն և առաքինասէր վարուքն՝ որ
դար և ս՟բ և ուղիղ բաղձանօք և շնորհալից սի-
րով արտասուաւոր պաղատանօք հաւատան առ-
նուլ զխնդրեալսն յամցունց փրկչէն լոյս յուսոյ
հաւատացելոյ ժողովրդոց․ Մանաւանդ 'ի ձեռն
փրկականն խոր՛հրդոյն սրբանց կատարմանն 'ի ք՟ն յն՟․
Այսպէս է իմանալ զսրբոց բարեխօսութիւն առ
հաւատացեալ ժողովուրդս․ Զի իւրեանց
մտերիմ վաստակօքն որք զմարմինս իւրեանց պա-
տարագեցին յերկրի վ՟ն անուան ա՟ն 'ի հաւա-
նուշից․ և ս՟բ հոգիք ն՟ց հոգևոր բարեխօսութե՟ն՝

զա՟ծ

զա՟ծ յողորմութի ծի ամենե։ Աւ նշխարք ոսկե-
րաց նց փրկութի ընծայեն ՛ի ժողովս հաւատա
ցելոց որք ամենեցուն է քաղցրայր. զի երևե-
ցի սէրն նր ՛ի նց նշխարսն բնակեալ, և նշանօքն
ծանուցեալ յերկրի.

Իսկ արդ իմանալեօքն զդուսացելոց իրացն ըզ
հաստատութի և զյանդիմանութի նր մերձաւորու
թեն ունին. և զհամարձակութի բարեխօսութեն
որ ոչն երևի մարմնաւորացս. այլ երևելեօքս ըզ
նորհաստուր զօրութեցն նր ՛ի նց նշխարսն և՛ի նր
ժողովս զաներևոյթն իմացուք առաւելա-
գոյն այցելութի ՛ի նմանէ. զի հոգիք առաւել են
քան զմարմինս առ արարածս։ Աւ այսպիսի ըզ
նորհք տուաւ յմյ առաքելոց մարգարէից մար
տիրոսաց և ամ ընտրելոց որ ց յերկրի աստ և
յերկինս։ Զինց առաջնորդական հանդիսիւքն
և առաքինասէր վարուքն հաճոյացուք նմ. և
նոքա պատճառք լինին մեզ փրկութե և կենաց՝
միշտ բարեխօսութեն իւրեանց։ Աւ մեք զփա-
ռաւորեալն յմյ երանեսցուք. որք վս սիրոյն
նր՝ զանձինս իւրեանց մատնեցին չարչարանաց
և մահու. և առին զպարգևս յանմահ թգւրէն։
Աւ զփառաբանութին և զպաշտօնն երկրպագութե
ամենայնէ Երրորդութեն մատուսցուք ՛ի յէշտկս
կատարման որ ցն նր։ Աւ որ են կանք ամենե-
նեցուն տն և ամ որ ց նր։ Զինա է փառաց
և պատուոյ արժանի յամ որ ց և յամ արարածոց։

Այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն.

Ն.

Վասն Նորընծայից Սրբոյ Պատարագին՝ Զ կացուած չորրորդ Ը աշխարհ գործառնութեան Ընդ մատուցման և ընդ ընծայական Ի գործս և՛ ի գործոց

## Ճառ ԺԵ

Գրել ձեզ և ուսուցանել կամիմ եղբարք իմ և որդեակք զորս ի Քս ծնայ. 1 Կորն 4.19

Զի որք յարդեն զանձինս իւրեանց ի գործս բարութեան և յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաստեսցին ի վնասակարացն. և պէսպէս հնարիւք առնել զբարիս խորհեսցին։ Այլ զի օրինակ ճշմարտութեան եղիցին յառնելն և յուսուցանելն միշտ. և անխիղճ և անպատճառ իցեն առ հեռաւորս և առ մերձաւորս ըստ բանին Տն։ Լուսաւոր եղիցի լոյս ձեր առաջի մարդկան. որպ զի տեսցեն ըզ գործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկնաւոր։ Մատթ 5.16։ Այլ դարձեալ երանի է զծառայ՝ յորոց անուն օրհնի ինքն Տր և փառաւորի։ Ղուկ 6.20։ Այլ վայ և եղուկ զայնոսիկ վարկանի, յորոց անուն Տն հայհոյեսցի.

Ղուկ 6.20.24։ Հռոմ 2.24։

Զի որք լինին քարոզք ճշմարտութեան, ճշմարտութիւն ինքնին յորդորէ զնոսա անմոլար գիտութեամբն. Յոհն 8.32։ Այլ Տր փառաւորէ զնոսա յորժամ տեսանէ ի նոսա բարեգործութեան ջանս. Զի զոր նոքայն տեսանեն և ուսուցանեն, Տր աճեցուցանէ և հաստատէ առաւելոք կենացն. ի

փառս եւ ՚ի պարծանս նոցա ՚ի տիեզերական ատենին
՚ի յարութեան որ ՚ի մեռելոց ։ Այլ կարասցեն ա-
սել, ահա մեք եւ մանկունք մեր ճշմարտեալ ։ զոր
ետուր մեզ Աստուած ։ Եսայ. 8 • 18 ։ Այլ պսակեալ ա-
ռաքինութեամբ՝ առնուն զգրաւականն խոստացել
աւետեացն Քրիստոսի ։ Զի որ արասցէ ոք եւ ու-
սուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից ։
Մատթ. 5 • 19 ։ Զի սկսաւ ոք Յիսուս առնել եւ ուսու-
ցանել մինչեւ յօրն յորում համբարձաւ յեր-
կինս ։ Գործ. 1 ։ Իսկ որում հաւատացաւ վերա-
կացութիւն ժողովրդոցն, եւ հեղգացաւ ՚ի նոցա խնամսն
եւ ՚ի հոգեւոր ուսումն եւ ՚ի խրատ, եւ ստուգանի-
ցէ, կամ ոչ տացէ զմարմնաւոր պէտս կարօտելոց ։
այլ ուտէ եւ ըմպէ անզգայաբար, յանկարծակի
գայցէ ՚ի վերայ նորա մահ ։ յորում աւուր ակն ոչ ու-
նիցի ։ եւ հատուցանող բանն այս սուր՝ Եբր. 4 • 12
ընդ մէջ կտրեսցէ զնա ։ յիւրքն առեալ զշնորհսն՝
որ ՚ի նմանէ ։ եւ զվատթարան ընդ անհաւատսն դիցէ
՚ի խաւարն արտաքին եւ ՚ի հուրն ։ ուր լալ աչաց է
եւ կրճել ատամանց ։ Մատթ. 24 • 51 ։ Զի հաւատք
՚ի լսելոյ են (ասէ առաքեալն ։) եւ լուր՝ ՚ի բանէն
Քրիստոսի ։ զիարդ հաւատասն զոր ոչն ուսան ։ եւ կամ
զիարդ աղաչեսցեն զոր ոչն գիտեն ։ Հռ. 10 • 17 ։
Այլ առ մարգարէն եզեկիէլ օրինակաւ առ վե-
րակացուս ասէ, դէտ կացուցի զքեզ ։ զգուշա-
ցիր անձինդ ։ եւ զգուշացիր ժողովրդեանդ ։ եւ
տասցես ցանօրէնն եթէ մահու մեռցիս ։
Եթէ ոչ զգուշասցի եւ դարձցի խոստովանութեամբ յա-
պաշխարութի, մեռցի զմեղացն մահ ։ եւ դու ապ-
րես

րեացիս զի զգուշացուցեր յառաջագոյն .
Նա եթէ զղջասցի և դարձցի խոստովանութե̃
յապաշխարութի, կեցով կեցցէ զարդար կեանս և
մի՛ մեռցի զմեղաց մահ. Նա եթէ ո՛չ զգու_
շացուցեր նմա, նա ՚ի մեղս իւր մեռցի ՚ի պա_
տուհաս, և զարիւն նր̃ ՚ի ձեռաց քոց խնդրե_
ցից. ասէ զայս ա̃մցունց տ̃րն. 3.17.
Այլ դանիէլ բանիւք և արդեամբք եցոյց զի_
րաւացի դատաստանն առ ծերսն որ էին վերա_
կացուք իէ̃լի զպա ոխծս պատուհասիցն. դան 13.45.
Որ և ՚ի գուբս առիւծուցն արկեցաւ. 6.18.
Մատնեալ ոսոխացն ՚ի մահ. որ անդէն ՚ի նոյին
դառնայր մահն յառիւծուց անտի. 6.24.
Այլ այնպս երևելի եղև ճշմարտութի արդարոցն
և ամբարշտանութի զրպարտող չարացն .
Այլ այսպէս փառաւորէ ա̃ծ զփառաւորիչս իւր
և զճշմարիտ վերակացուս. Որ և զերիս ման_
կունսն արկին ՚ի հնոցն առ ՚ի այրել. վ̃ն առ ՚ի
յա̃ծ զհաւատսն ամբողջ պահելոյ. զի հրաման
տուեալ թագաւորին սաստկանայր և հնոցն բորբո_
քեր առաւել. և հուրն ոչ կարէր մերձենալ ՚ի
մ̃րմն ոյք օրհնէին զտ̃ր ա̃ծ. Նա յլ զչարսն զորս
գտանէր՝ այրէր զնոսին հուրն. Այլ այնու ծա_
նուցեալ լինէր արարիչն արարածոց. և թ̃գաւորն
խոստովան լինէր ա̃յ զմեղսն իւր. դ̃ն 3.20.95.
Այլ զերեմիաս արկին ՚ի գուբն ՚ի մահ. յաղագս
յանդիմանելոյ զանիրաւսն և ՚ի դարձ ածելոյ.
զի ապրեսցին ՚ի բարկութենէն որ գալոցն էր
՚ի վերայ ժողովրդեանն. երեմ 30.6.

Որ

Որ և զգրեալ խրատսն և զմարգարէութիւն այրե
ցին․ 36․ 23․ և ըստ արժանեացն ընկալան զհա-
տուցումն մեղաց իւրեանց․ և մատնեցան ՚ի սով
և ՚ի սուր և ՚ի գերութի․ 39․ Նաև մարգարէն փա
ռաւորեալ պատուեցաւ ՚ի թագաւորէն և ՚ի մե-
ծամեծացն․ 39․ 11․ և վերստին նորոգեաց գրով
զմարգարէութիւն և զուղիղ խրատսն․ 42․ 1․ 7․
Նաև ասաց, անիծեալ որ գործէ զգործ տն ծու
լութեամբ իւիք․ 48․ 10․

Նաև տրն յաւետարանին առ պետրոս ասաց, դու
ես վէմ․ և ՚ի վն այդր վիմի շինեցից զեկեղեցի
իմ ոչ․ (այսինքն զհաւատացեալ ժողովուրդս իմ․)
և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն․
Արձակեալն քո յերկրի ոչս և արդարս ճշմարիտ
հաւատով, եղիցի արձակեալ յերկինս․ և զորս կա
պեսցես յերկրի զանոչս և զանիրաւս և զանհա
ւատս, եղիցին կապեալ յերկինս․ մտթ 16․ 18․
Իսկ պատիժս սպառնալեաց առ պետրոս ՚ի տնե
առ ամ վերակացուս ոչս ասացաւ վն այնոցիկ
որք զճշմարտութիւն անիրաւաբար ունին․ հռոմ 1․ 18
Որք իւրեանց սրբութե և առաքինասէր վարուքն
եղեն օրինակք և քարոզք բանին ճշմարտու
թե, և զգուշութի անձանց ժողովրդոց․ Իսկ ար-
համարհողաց և անհնազանդից՝ անոչեց և պղծոց,
և որ այլ ևս դժնդակութե վարք իցեն, յամե
խելամտեալ ձանաչելով զերկաքանչիւրոցն ըզ
շարժմունսն, ընդ սխալեալսն մարտիցէ զինուք
ճշմարտութեն ողոքանօք կամ սաստիւք․ որով կարի
ցէ շահել զմեղապարտն․ Նաև զհեծանացն ՚ի ձե
ռին

ութին ունելով. զի հողմով հոգւոյն մեր հնչելով
որոշեսցէ զցորեանն ՚ի շտեմարանս մեր, և ըզ
յարդն պատրաստեսցէ ՚ի նիւթ գեհենին հրոյն.
Մտ 3. 12. զի որ ասացաւ՝ ընտրութիւն է ՚ի
մէջ բարւոյն և չարին.

Նաև որք ՚ի Ճշմարիտ վերակացութեան օտար են,
բարկութիւն այ ՚ի վր նց պատրաստեալ կայ ՚ի տնէ
ըստ բանի առաքելոյն. որք զՃշմարտութիւն անիրա
ւութբ ունին և ոչ ըստ աւետարանին քրի. Հռ 1. 18
Զի արժան է առաջնորդաց՝ վերադոյն ըստ
արդարութե օրինացն լինել յամի հաճոյս այ.

Նաև զժողովուրդն զգուշացուցանել Ճշմարիտ
վարդապետութբ վր իւրաքանչիւրոցն փրկութե.
զի մի՛ սպառնացեալ պատուհասն ՚ի վր հասանի
ցէ ՚ի ձեռն հրեշտակի չարի. Ոք մարգարէին
ցուցաւ՛ սատակել զանիրաւսն և ոչ ումեք ողոր
միլ. ծերոյն և տղայոյն. կուսին և երիտասարդին.
քահանայից և ժողովրդոց. Բայց ասէ, որք հե
ծեն և յոգւոց հանեն և սգան զայլոց անօրէ
նութիւն, խնայել հրաման առնու նշանաւն ՚ի
Ճակատն առեալ ՚ի տնէ. զի ապրեսցին ՚ի սատակ
մանէ անտի. Եզէկ 9. 4.

Եւ՛ սկիզբն սատակմանն՝ ՚ի քահանայից անտի առ
նու. յորոց վերակացութի էր ժողովրդեանն
այ. որ զշահս մարմնոյ առնուին, և զհոգևոր շա
հիցն անփոյթ առնէին. այլ այ դատաստանքն
Ճշմարիտ են. Զի ամ դպիր աշակերտեալ ար
քայութե այ (ասէ տրն) նման է առն տանուտեառն
որ հանէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհինն. Մտ 13. 52

Տա

Տանուտէր անուանեաց զառաջնորդս եկեղեց-
ւոյ զաշակերտեալսն ճշմարտութեան աւանդութեն. և
գանձք՝ զիմաստ սրտին. որ 'ի հնոյն և 'ի նորոյս
ունի ստուգութի. և վայելեցուցանէ զմերձաւորս
և զհեռաւորս բարի խորհրդովք և բարի գոր-
ծովք և անարատ սրբութբ. Նա զչար գանձուցն
զմըլթերսն արտաքս պեղէ. մինչև ոչ մնասցեն
նշխարք չար գանձուց 'ի բարի ուսմունսն. ընդ-
բերելով զլաւն 'ի վատթարէն.

Ինքեանք ասէ օրինակք լիցին կացէք և գնա-
ցէք. զի աշակերտեալքն յորդորեսցին 'ի ճըշ-
մարիտ վարս որք փառք են վարդապետաց. գնալ-
'ի ճանապարհս արդարոց և խորհիլ 'ի պատուի-
րանս ան̃. և առաջնորդել 'ի լուսաւոր վարդապե-
տութե վարս և յորդորութիս ա̃մ. Զի զա̃մենն
ժառանգորդս արասցէ արքայութն ա̃յ. գործա-
կից լինիլ կենարար աւետարանական խրատուն.
և մի իւ՛ք զանց առնել ճշմարիտ աւանդութեն.
Զի եթէ միով իւիք ինչ ոք գթիցես, եղեր
ա̃մ օրինացն պարտական. յակ 2, 10. Զի ճշմար-
տեալք հաւատով և սրբեալք 'ի խղճէ չարեաց,
միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեան տն̃.
'ի ներքին մարդն ընկալեալ զքս̃. որ լուսաւորէ
զոգիս անարատ և ամբիծ երախտեօք ո̃գ սրբոյն.
հոգևոր և մարմնաւոր դարմանօք յամենասուրբ
Երրորդութէն միշտ. Իսկ յորժամ քս̃ յայտ-
նեսցի կեանքն մեր ասէ առաքեալն, յայնժամ
և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք. կող 3. 4.
Ո̃ր զի եղիցի մեզ ա̃մյուն որ զգեցաք զքս̃,

Ճշմար

Ճշմարտեալ հաւատովք և առաքինութեամբ վարուք հաճոյանալ ա̃յ և մերձենալ 'ի լոյսն անմատոյց. և պայծառանալ 'ի փառացն ք̃րի յուսոյն մերոյ 'ի տիեզերական ատենին 'ի յարութե̃ն որ 'ի մեռելոց. Այլ փառաւորեսցուք զամենազօր տէրութիւն միշտ ընդ հրեշտակս յա̃տեանս յա̃տենից ամէն.

## Երանելւոյն Սբ̃յն Գրիգորի [illegible]. [illegible] ժողովրդեան [illegible] և Ս[illegible].

## Ճառ ԺԸ

Որքա՞ն են խնամք բարերարին և անզեղջ պարգևք կենարարին. որ հաստատեաց զզօրս երկնից 'ի փառս անուանն իւրոյ ս̃բյ. և զմարդիկ յանարգութե̃ նմանապէս 'ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. և ետ նմա իշխանութի̃ 'ի վ̃ր ա̃մ երևելի արարածոց. և խոստացաւ տալ զանպատում երանութիւն: Զի անճառելի կամս ստացան 'ի ո̃նէ երկնաւոր զօրութիքն և երկրաւորքս որդիք մարդկան. զի հաղորդ լիցին բարերար կամաց արարչին. խորհիլ միշտ զբարին և առնել 'ի կամս բար միայն ըստ բարի կամացն ա̃յ. զի շահեսցին զօգտակարն անձանց. Այլ ետ դատաստանս երկուս. զաւետիս և զսպառնալիս. Այլ վարդապետս յօրինեաց զհոգևորսն խրատուն կենացս յիւրմէ կանոնս գիտութե̃ն ծածկեալ յանձնիշխան կամն բարեօքս: Նայլ զի որ զաւագոյնսն

հնա

հնազանդելեաց մտերիմ հաւանութբ 'ի կամս տն,
փառօք պսակեսցին։ Իսկ արհամարհօղն և անհնա-
զանդն և ապստամբեալն 'ի ճշմարտութէ աւան-
դիցն՝ պարտաւորեալ պատուհասեսցին։ Եւ արա-
րիչն բարերար կամօք ոչ եթէ հակառակ ինչ եր-
իբրև կանոնս գիտութբն, այլ հաւանս իսկ նա-
խախնամական սիրովն առ 'ի հաստատուն կալ 'ի
բարիսն։ Եւ զպատիժ խոստացեալ աւետեացն՝
արդարոցն յուշանէ միշտ. այլ և զպատիժս որ
համարձակողացն և անհնազանդիցն 'ի հոգևոր օրի-
նացն։ Զի ի զնմ զմիտս զգուշացուսցէ 'ի հնա-
զանդութի պատուիրանին. զի մի զրկեսցին 'ի
վարձուցն հատուցմանն. այլ յորդորեսցին յօգտա-
կարն։ Սակայն ոչ բառնայ զանձնիշխան կամսն.
Թէպէտ և յառաջագէտ է. Ոչ առ մանկունսն
Իսահակայ. մինչդեռ յորովայնի մօրն էին՝ ընտ-
րութիս առնէ. զյակոբ սիրէ որ բարի բացայայ-
տի. և զեսաւ ատէ որ չար երևի։ Հռոմ 9.10.
Եթէ այդ այդպիսի է, զիա՞րդ չարն աւէն յառա-
ջադայի և ոչ բարին միշտ յառաջադայի.
Եթէ այդ այդպէս էր, բառնայր էութի անձնիշ-
խան կամացն. և կորնչէր ընտրութի արդարոց.
զրկեալ լինէին քաջքն յաղագս հանդիսից 'ի
պսակացն փռց։ Զի ի արքայութիւն երկնից (ասէ տրն)
ամր է, և բռունք յափշտակեն զնա։ Ղուկ 16.16
Զի ի առաքինասէր վարուք մեռեալքն մեղաց՝
փոխեսցին ոմք 'ի մեռելոց 'ի կենդանիս՝ 'ի սրբութ
և յարդարութ ընդ ճշմարտուէ աւետարանին.
Զի ի մեզ՝ նց ոչ տիրեն. զի չեն ընդ օրինօք.

 այլ

ալ ընդ շնորհօք։ Հռով. 6. 14։ Զի այլ պարգևք 'ի Տեառնէ են և այլ պատիւ և փառք որ առաքինութեան և քաջութեան են շահեալ. և այլ է որ 'ի դիտից վայելէ 'ի խոնարհութենէ պատկառանաց զգաստացեալ. և այլ է որ 'ի հանդէս առաքինութեան մրցին ըստ հարկաց ախոյանացն անձանց. զի զամբարութիս զերկրաւորս և զերկնաւորս որ փառօք է՝ և պարծանօք՝ վայելեսցեն 'ի բարի տուօղէն։ Այնպէս է իմանալ և վասն հրեշտակաց և դիւաց, և արդարոց և մեղաւորաց. զի նախ ընտրութիւն լինի 'ի մէջ քաջացն և վատացն, և ապա ըստ իւրաքանչիւր արժանաւորութեացն զհատուցումն առնէ ըստ արդար դատաւորութեան իւրում։ Զի քաջացն ոչ պարտս տայ զպատիւն. և վատացն ողորմութեան ոչ պարգևս ինչ շնորհէ։ Զի զօրէնս ոչ բոլս եդ 'ի փորձ. և նովաւ առնէ զընտրութիւն 'ի վեր և 'ի վայր. և ըստ արժանեացն տայ զպատիժս և զպատիւս արդարոց և մեղաւորաց. Եփես. 3. 6։ Զի հոգևոր օրէնքն կենդանարար են. զարդարասէրսն առաւել ունին 'ի բարի գործն. և զպղերգսն դարձուցանեն յառաքինութի սպառնալեօք պատուհասիցն, և փառացն ցանկացօղս առնեն։ Վասն հանդէսք լաւութե կենացն նորոգին. և պսակեալ քաջութե յաղթողելոյն ա՛յ, յաւետիս արդարոցն մտանեն. Արդարքն են որ զարժանն և զիրաւն առնեն. և ժառանգաւոր լինին վերին կոչմանն որ 'ի կեանսն տանի. զի ըստ միոյ միոյ առաքինութեց՝ են և պսակքն փառաց և գովութիւնքն որ յօրինին 'ի Տեառնէ։ Զի

Զի բազմապատիկք են չափք ճգնաւորաց. որք զբազմաշահ օգտաւետն ժողովեն խրատու կենարար օրինացն քսի. զի ամ ճշմարտութբ եղիցի ամ որդիս լուսոյ հօրն երկնաւորի, և ժառանգակից քսի. Որ իւր մեծերիմ վաստակօքն էառ զմեծութի անբաւ բարութեցն և պատուոյն և փառացն. և արքայութեն երկնից եղև ժառանգաւոր. Զի եկամուտ եղև անհնազանդութի ՚ի կամացն և ոչ ՚ի հարկէ հանդերձ ամ դժնդակութբք. և փշալից արար զամ անդս մտաց և անդամոց.

Այ զմտաւորքս և զբանաւորքս լցոյց բուսովք չարութեն և մոլոր խաբէութբքն բանսարկուին մտ. 13. 27. Վայսորիկ ՚ի մշակութ կացոյց զորդիսն ստուգութե. զի բազում ճգնաւորական հանդիսիւք քաղեսցեն զորոմն ցանկութե ՚ի մտաց և ՚ի մարմնոց զբոյս ախտակարս. Զխաբէութի, զստութի, և զամ չար ցանկութիս հանդերձ ամ չար ախտակարօք երևելեօք և աներևութիւք առ չարին հակամտութե. Ն. Ալ մարտ պատերազմի քաջացն ոչ միադիմի, այլ բազմադիմի է.

Առի՝ զի մի՛ հաղորդեսցի բանից խաբեբից. որոքանաց և պատրանաց. որ զմիտս և զանդամս շարժէ ՚ի խառնակար աղտեղի ցանկութիս.

Երկրորդ՝ զի մի՛ անկցի ՚ի բուռն ամբարտաւանութե և անախտութե. որ փակէ զմարմին և զհոգի ներքոյ կապանօքն անհնարին չարեօքն.

Երրորդ՝ զանհամբերութե և զստունգանութե և զալանդակութե զշարժմունսն շիջուցանել. ընդ նմին և զբարկութի և զյանդգնութի և զըր-

տա

տաճարութիւն սանձել խոնարհ սրտիւ.

Չորրորդ՝ շռայլութիւն եւ որկորստութիւն. դէմ շըռ ջելն՝ չեղջակոտել ցանկութեան գինոյ, Ա Պետ.3.6, ամծայրն ցանկութեան եւ պարկեշտութեան աղա-տանալ. Ընդ նմին եւ զամ ցոփութիւն եւ զգուռ-զուխ յանձնէ ընկենուլ. եւ զամ անօգուտս որ ալէկոծեն զմիտս եւ զզգայութիւն՝ յանձնէ ՚ի բաց թօթափել բարի յուսով.

Հինգերորդ՝ ոչ վրիպել եւ ոչ մոլորիլ յերախտա-ւոր բարերար տեսչութենէն. որ հեռացուցանէ յերանութենէն, եւ ՚ի մըլթագին ախշութ ընկենու, ըստերիւրեալ ՚ի ճանապարհացն արդարութեան որ տանի յօթեանս հանգստեան.

Վեցերորդ՝ երդմնահարութիւն եւ յափշտակութիւն զրկանաց. որ արկանէ յամօթ եւ ՚ի տոյժ եւ ՚ի տուգանս սպառնալեօք. որ առանց պատասխանւոյ է դատաստանն եթէ ոչ զգաստասցի ՚ի նոցանէ.

Եօթներորդ՝ որ զարտմտութեան բարկութիւն շարժէ եւ խռովեալ պղտորէ զմերձաւորսն ՚ի փորձանս խորհրդոց եւ բանից եւ գործոց. եթէ ոչ յաղթա-հարեսցի հեզութեան, արկանէ ՚ի պարտիս յա-ւիտենից պատժոցն.

Ութերորդ՝ ոխութիւն եւ նախանձ եւ ատելութիւն. որ եթէ ոչ ազատեսցի յայսոցիկ չարեաց, մահ անձինն եւ այլոց սատանայ. Զի քինայ եւ զչարի ՚ի խորհուրդս սիրելաւորս. եւ զթոյնս դառնու-թեան հեղու յոյս սատէն.

Իններորդ՝ որ զանհաւատութիւն եւ զծուլութիւն զարմանալ խլէ. որ մըլթերք են չարեաց. եւ պատ-

ճառք

Ճառք անշէջ կորստեան · և դրունք մահու՝ հոգւոյ և մարմնոյ ·

Տասներորդ՝ որ անխտիր է յամբարշտութիս և՛ի գործելի ախտս և յա՛մ անօրէնութիս · որ եթէ ոչ զղջասցի յայս և յերկիւղ տ՛ն զղջմամբ, կո– րիցէ զյաւիտենական կորուստն ·

Այս են բոյսք չարութե · որ ժիր մշակք քաղհան առնեն և զբարի բոյսն անուցանեն ողորմամբ շնորհալից արտասուաց և առաքինասէր վարուք · Այս յայտնիկ է մարտն և յաղթութի քաջացն և առաքինեացն · որք վկայք են Ճշմարտութե, և կեն դանի մարտիրոսք սիրեցելայք 'ի տ՛նէ ·

Զի սպանին զթշնամին արդարութե · և՛ի նորո– գումն կենաց որ 'ի քս տուեալ եղեն՝ կեցին · և յայս նշ հաստատեալ կայ ընդ քսի · Ճշմարտելք հաւատովք և հանդիսիւք առաքինութե · 'ի լուսա– գոյնան միշտ կելով զշնութք հօր ամենակալի և օգնութք որդւոյն բարերարի և շնորհօք ամե– նասուրբ հոգւոյն միոյ ածութեն որ սպասէն է ամ յուսացելոց իւրոց ·

Առաջին և նախ քան զամ՝ Ճշմարիտ հաւատոցն հաստատութի որ 'ի հայր և յորդի և՛ի հոգին սբ՝ սբ սիրով և յուսով: Զի այսու վկայեցան Ճշմարիտ սբքն · խմացան և ծանեան զած 'ի նմա– նէ յօրինուածս ամ արարածոց, և զնախախնա– մութի սբ սիրոյն և զվստահութի յուսոյն առ ած որ ոչն երբէք ·

Երկրորդ՝ լինել Ճշմարիտ բանին քարոզ առ գիտս կորուսելոյն, և առ պահպանութի գտելոցն ·

Որովկորդքն ընդ ո՞ւր հրեշտակս, որ առաքեն 'ի սպասաւորութի որ ժառանգելոց են զփրկութի և զերանութի 'ի յոյս կենացն յաւիտենից.

Երրորդ՝ որ յառակ խորհրդով աղբերական բարեգործութե յորդորումն առ երախտիս մեծին հեռաւորաց և մերձաւորաց. ուսուցանել զանգամոց և անդամոց հոգևոր շահիւք. և այնպէս բազմացուցանել զպտուղս արդարութե արմտեցն 'ի վայելումն անմահ կենացն.

Չորրորդ՝ որ զհաւանութե և զհնազանդութե և զխոնարհութե ունի զհանգամանս. յօգտի հոգւոյն ո՛չ 'ի միայն ժողովել 'ի խաղաղութի և 'ի փառաբանութի ոչ. և զխմբանս օգտեցուցանել աննախանձ օգնականութե և յերանելի կեանն յուղղորկել.

Հինգերորդ՝ որ անարատ և ամբիծ յորդեւանդն հոգևոր սիրով խնամէ զնմանն ըստ իւրաքանչիւր պիտոյից. ձեռնտու լինելով զրկելոց և վշտացելոց. և եթէ այլ ինչ աղէտք իցեն որ պէտս ունին հոգւոյ օգնականութեան և կամ մարմնոյ. և այսպիսի երախտեօք մտանել 'ի ժառանգութիւն կենացն քրի.

Վեցերորդ՝ որ լինին մատակարարք ճշմարտութե աւանդիցն որ հաւատացաւ նմ յոյն՝ հոգեկանաց և մարմնականաց. տալ 'ի ժամու զհոգևորական օգուտն և զմարմնաւորական պէտս. և առնուլ զառհաւատչեայ երանութիւն զպարգևսն յարքայութեն արդարոց. մտթ 24.45.

Եօթներորդ՝ որբուն և զգուշուի և պահպա-



նու

նուի՛ ա՛մ աւուրբ կենաց․ արթուն և զուարթուն կալ յա՛մ զաղտնաձիգ նետից չարին․ որով ածան զանմեղս ՚ի մեղս․ Ո՛չ է յամի ամրացեալք և յաղթեալք նր խորամանկին, տացուք զպսակն անեղծութեան

Ութերորդ՝ լինիլ խոնարհ սրտի․ և հեզ բարուք և խաղաղարար ա՛ռ ա՛մն ա՛ռ մերձաւորս և հեռաւորս․ նմանեալ քրի հեզոյն և խոնարհին և խաղաղարարին․ Հայեցեալք յառաջնորդն կենաց, Եբր 12․2․ Գործ 3․ 15, զհետ երթիցուք նր, և գտցուք զանտի հանգիստ ՚ի խոնարհ և ՚ի հեզ և ՚ի խաղաղարար սիրոյն․

Իններորդ՝ պարկեշտուե և համեստուե բարեմնեալ ըստ ա՛մ առաջնորդական խրատուն փրկկուէ և կենդանարար, հաստատել ՚ի դուռն կենաց և մտանել ՚ի յարկսն յաւիտենից․ ՚ի հանգիստն որ պատրաստեալ է ՚ի փրկչէն մերմէ ըստ իւրաքանչիւր վարձուց․

Տասներորդ՝ քրի փրկական պատարագին լինիլ խորհրդածու և խորհրդակից ըստ արժանաւորուէ մաքրման հաղորդելով․ աղօթանուէր պաղատանօք և շնորհալից արտասուօք և ջերմեռանդն հոգւոյն եռացմամբ մբ սիրոյն առ լցեալ ՚ի քս, ընդ երկնայինան մերձիլ առ ա՛ծ և անտի լուսաւորել զհոգի և զմարմին, և բուռն հարկանել զկենացն յաւիտենից․ Եւ զերկնայինան միշտ խոկալ․ և զերկրաւորս արհամարհել․ Խորհրդակից և գործակից ունել միշտ զամենազօր տրութին․ և մտերիմ կամօք զանձն անշարժ ունիլ

՚ի

՚ի ճշմարիտ փառս և յաւէտ հաւատս։ Խրախուսա
ւոր մեր սիրովն յառաջնում ՚ի բարիս, և զայլսն
՚ի նոյն յորդորել ՚ի խոստացեալ բարիսն հասանել։
Այս է քաջաց և առաքինեաց հանդէսք որ ՚ի
վերջին կենանն տանի. և լսեն յամենայնից Տեառնէն,
ով ծառայք բարեգործք և հաւատարիմք, որով
հետև ՚ի սակաւուդ հաւատարիմ եղէք յերկրի
ասա՝ ՚ի վերայ բազմաց կացուցից զձեզ ՚ի մշտնջե-
նաւոր կենանն. եկայք մտէք յուրախութիւն Տն
ձերոյ յանվախճան ուրախութիւն որ պատրաստե-
ցաւ ձեզ։ Մտ 25.34։ Այլ յայնժամ խրատս լի-
նել աշակերտ և խորհրդակից. և մերկանալ զզգօ-
սանս ձերս և զհոգս սնոտիս. և զգենուլ զհոգե
ւոր ազատութիւն զլուսաւոր զգեստն. որ յառա-
քինութէ կազմի անհամեմատ լուսով։ Այլ հանա
պազօր քննող լինիլ խորհրդոց և բանից և գոր-
ծոց. որ եթէ սուտնգանել իցէ, ուղղեսցէ ՚ի լա
ւագոյն խրատուն աստուածային գրոց ՚ի ձեռն զղջման։
Զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր
զղջացարուք ասէ մարգարէն. և մատուցէք պա-
տարագս արդարութե և յուսացարուք ՚ի տէր որ
արդարացուցանէ և փառաւորէ։

Զի փառաւորք են ՚ի վարդապետաց որք ա-
նեն զայս և ուսուցանեն ՚ի նոյն ինքն ՚ի Հայր
և յՈրդի և ՚ի Հոգին սուրբ։

Որում փառք յաւիտեանս
յաւիտենից
ամէն։

## Երանելւոյն Սրբոյն Գրեգորի Յորդորական յաղագս Խորհրդոյ Խոստովանութեան.

### Ճառ ԺԹ

Մեծ են յորդանք հրամանաց և անբաւ շնորհք բարերարին այ̃. զի զորս յառաջն ճանաչէր՝ զնո_սին և կոչեաց ՚ի յոյսն կենաց ան_վախճանից. և արդարացոյց և փառաւոր արար. Հռ. Ը. 29. Որ հաւատով և երկիւղիւ պահեցին զպատուիրանս նր̃. և հնազանդեցան ընդ ամենախնամ ո̃ւ սիրով նր̃. և ընկալան զբանն կենաց յանձինս իւրեանց. և եղեն պտղաբերք և աճեցուցիչք առաքինութեն վաստակօք. որոյ վարձքն կան և մնան ՚ի հանդերձեալ կեանսն։ Իսկ ծուլիցն և անհը նազանդիցն որք արհամարհեցին զբանն ճշմար_տութե և խափանեցին զպտուղն արդարութե և ընկալան զչարաչար սերմանս ՚ի թշնամւոյն և եղեն հեռաւորք ՚ի ճշմարտութէ աւանդիցն և՚ի խնամակալ սիրոյն, մոլորեալք յուղիղ ճանապար հացն, է կատարածն ՚ի կորստեան վիհն։ Սակայն բարերարին այ̃ բարերար խնամքն ոչ անտես առ_նէ որք դառնան առ նա. բանայ զդրունս ողոր_մութէ շնորհաց և ընդունի զթուէ երախտաւոր ո̃ւ սիրոյն. և յանձանձէ զապաւինեալսն ՚ի նր̃ գթութիւն՝ ՚ի ձեռն ճշմարիտ խոստովանութէ. Նա որ խոնարհեալ և բեկեալ սրտիւք ՚ի զղջումն ազաւորէ՛, գթայ ՚ի նա և ողորմի և այցելու լինի

փրր

փրկիչն. Զի զծածկեալ մաղձն դառնութեան 'ի
բաց փախուցաց. և եցոյց եթէ զինչ առնիցի և
անարգեցի և զօրէնս քո սիրեցի. զառողջութե
և զօրութե և զարդարութե. Նա՛ զառանդանութե
ցաւոցն 'ի մարդասէր բժշկէն զառողջութե դեղս
ընկալցի զարդարութե վարս. ընդդէմ մեղացն
և դժնդակ ցաւոցն զոր ունէր. Զի այլ մի
ևս անկցի 'ի նոյնն և այլ ոչ ևս գտցէ զմարդա-
սէր բժիշկն. Զի կոչէ մարդասէր բանն տն
զծանրաբեռնեալսն խոստովանութբ յապաշխա-
րութի. զխաւարեալսն մեղօք 'ի լոյսն արդարութե.
և զմոլորեալսն 'ի գիտութի ճշմարտութե. և զվրի
պեալսն 'ի ճանապարհացն արդարութե. ածել
յուղղութի. և զմահաբեր վարս 'ի կենաց վերըս-
տին նորոգել խոստովանութբ, և լուծանել զամ
խարդախութիս սատանայի. Զի զամ մարդ կամի
զի կեցցեն (ասէ առաքեալն) և 'ի գիտութի ճշ-
մարտութե հասցեն ամենագիւտ սիրոյն տեսու-
թեանն. 1 տիմ. 2. 4. Զի խոստովանութի (ասէ
մարգարէն) մեծ վայելչութի է առաջի այ և քա-
հանայից նրա. սաղ 95. 6. Զի ասացի ասէ թէ
պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես
զամ ամբարշտութիս մեղաց իմոց. Զի զվէրսն
բանից և զցաւսն յայտնէ. և զդեղն բժշկութե
'ի վրա ածէ զղջմամբ. զապաշխարութիւն եռանդ-
մամբ հոգւոյն 'ի հանապազորդ արտասուալից ա-
ղօթսն անդադար 'ի տուէ և 'ի գիշերի. և ողորմ
կերպարանս առանալով. Ընծելով զմարմինն պա-
հօք. զի զամ 'ի դուռն խոնարհ. ցուցէ բազմա-

ժե  իմամ

խնամ շնորհօք առ 'ի Թողութի մեղացն. Զի է ապաշխարութի ոչ միով ինչիք յարգի, այլ բազում իրօք լինի. և հատակ արդարութեն կանգնի անկեալն և աւերեալն.

Զի նախ և առաջին պարտ է զղջանալ և խոստովան լինել զմեղսն. և արտասուաց ընդունարան առնել զանձն յապաշխարութե ժամանակին. Անդադար աղօթիւք և տրտմութբ և միշտ պահօք և մեծ ապաշաւանօք սգալ հանապազ զյանցանս գործեցեալս.

Երկրորդ՝ զի առեսցէ զմեղսն և զգործակիցսն մեղաց ըստ ամ փաստուցն. և կշտամբել զմիտսն և զզգայութիսն որք 'ի չարն հակամիտեցին և ոչ պահեցին զհոգևոր օրէնսն որ նշ աւանդեցաւ յարարչէն. 2 պետ 2. 21.

Երրորդ՝ սիրել զարդարս և զառաքինիս. և գործակիցս իւր առնել զնս աղօթիւք առ աճ. և յամ գործս բարութե յորդորիչս 'ի ճշմարտութեան աւանդեալն կարգաց.

Չորրորդ՝ 'ի յանցաւորաց անտի խորշիլ մտօք և բանիւ և ամօթով և տեսութեն պատկառաւ. լաւ համարելով զնեղութիս կրել ընդ արդարս, քան զհանգիստ ընդ անիրաւս.

Հինգերորդ՝ յոյս և յերկիւղ ան կրթիլ և չթողուլ 'ի մտաց զօր վախճանին այլև զպատիժս մեղաւորացն. և մեռուցանել զանդամս կարեօք և ցանկութբ. Գաղատ 5. 24.

Վեցերորդ՝ 'ի տուէ և 'ի գիշերի հոգալ վն փրկութե անձին, եթէ ոպ կարասցէ լուծանել

ըղ

զմեղսն, և ապրիլ 'ի բարկութենէն որ գալոցն է
'ի վ՛ր անապաշխարողաց ։

Եօթներորդ՝ զի մի՛ մոռասցի զբեկումն անձին իւրոյ և պղերգասցի 'ի բարեպաշտութեան ճգանցն և դարձցի 'ի նոյն մեղսն և վերստին դարձեալ
ոչ կարասցէ բժշկիլ ։

Ութերորդ՝ զի առողջացեալ և զգաստացեալ և սրբեալ, իմասցի զներքին մարդն և զարտաքինն մխիթարական խոստացեալ ամենեցուն առոյգ
ապաշխարողաց ։

Իններորդ՝ առնել զամ հրամայեալսն արարեալս ըստ հոգևոր օրինացն և ըստ ամենատարածին քհնի. Ղւ-կ 17. 10. և ակն ունիլ վերստին նորոգման և
քաւութեան պատարագին ։

Տասներորդ՝ առնելով յամ բարեգործութիւն երևելի փառօք և աներևութիւք. և զայլս մեղացն քնքել զհոգւոյ և զմարմնոյ. և յաղթող երևիլ 'ի հանդիսի ապաշխարութեան ։ Զի կարասցէ համարձակիլ 'ի մեղաքաւիչ խորհուրդն տէրունական. և լինել խորհրդակից և մարմնակից և կցորդ անձառելեացն ։ Այն յայտնեաց զվերինն խորհել ուր քս նստի և ո՛չ ընդ նմա առ-
հաւատելոյ ուրախութե՛ ։ Կղ 3. 1.

Այն առոյգ խոստովանողք և ապաշխարողք՝ ազատեալք լինին փրկանօք մարմնոյն և արեամբն քսի. զի նա է յոյս մեր և առիթ քաւութե. և նովաւ լինի ազատութի և մուտ յուրախութիւն և 'ի ժառանգութիւն արդարոց. Երախտաւորք քսի ո՛րսիրոյն որ արդարացուցանէ զմեղաւորս թէ ա-

պաշխարեսցեն։ Զի ով սուրբ որ հատանէ ըզ մարմինն և վտանգէ զանձնն, կարօտանայ բժշկի որ զինջուցանէ զվտանգն դեղովք ամոքեք յա-ռողջութի։ Նախկին է և դեղով ապաշխարութե զհարուածս ցանկութե և զաղտեղի յիշատակս ջերմեռանդն արտասուօք լուանալ զմեղս և բժշկել անարատ սրբութբ։ Զի արտասուաց դրունք են վէրք նեղութեց և այսո ինչ ցաւք վշտաց. կսկիծ հոգւոց. տագնապք. վէրպք օգ-տից. պատահարք թշուառութեց. վտանգք ՚ի բըռ-նաւորաց. տնանկութի յանկարծահաս. կորուստն սիրելեաց՝ ցաւք. և պէսպէս դժնդակք անըմբե-րելիք. և որ այլ ինչ սոցին նմանեալ։ Իսկ հոգ-ւոյն շարժմունք յայսոյն հարուէ՝ յախշտակել յանխտիր ցանկութիս, վշտացուցանեն զմիտս ՚ի գըժնդակ խորհուրդս ապախտաւորս. որ ոչ ունի զկայանս արդարութե։ Այսպիսիկ պիտոյ են պաղատանք արտասուալից առ փրկիչն. զի զեր-ծուսցէ ՚յայնքան վշտաց։ Այլ խմանալեօք է վերծխնդրութ նդ նայել և ՚ի վայր կործանել զնս զինուք առաքինութե. և զօրավիգն ունելով կե-նաց մերոց զպարգևաւէննն մեր յս քս. և տալ զայ-ցելութի առնուլ բարեացն ցանկութբք։

Գութ առ ընտանիս հաւատոց. անձուկ հեռա-ւորաց սիրողաց այ. ծարաւ մեռելմուէ դիւտից հոգևոր իրաց. Ի 5 . 6 փափագումն առ այս. քարոզ խաղաղութե. հնկումն խոնարհութե. քաղց րալեց բարբառք խրատուց. որ զկարծրացեալ միտս շարժէ ՚ի յորդորումն առաքինութե։

Զա

Օ՜ ամենեան օգնեցուցանել առ խնամս սիրոյ փրկութե. և առ օգուտս լրման հոգևորացն. և՛ի շահս բարեաց վայելից. և համբերութի ՛ի նեղութե. վայելել ՛ի պարգևս շնորհաց որ տայ յաղբերբն կենաց։ Այ աղօթք և խնդրուածք միաբանութե ՛ի բոլոր սրտէ՝ տանին ՛ի նաւահանգիստն շնորհօք. և տան ձգնել զմիտսն ՛ի զղջումն արտասուաց ՛ի յիշատակս ամենեայն խնամալից պաշտամօք և եռանդնաւոր խանդաղատանօք. Հեղուն զարտասուս շնորհալիցս առ ՛ի մաքրութի մտաց և մարմնոց. որ զանմաքրութի տացեալ էին չար և աղտեղի ցանկութիւնս։ զի

Արտասուք՝ զմեղացն հարուածսն սրբեն և ողջացուցանեն. և զխոցոտսն ՛ի բաց ընկենուն ՛ի մտացն և՛ի զգայութեց. և լինին ընդ հալանեալ նախախնամական սիրոյ փրկչին. և առնուն յուսով զմխիթարութիւնն.

Արտասուք՝ շարժեն զմիտս առ այ. և զարթուցանեն յարիշութե մեղաց որք ՛ի քնոյ. և վարեն զզգայութիւն ՛ի զգաստութի շահաւոր օգտից սիրոյն։ Արտասուք՝ արբուցանեն զոգևոր ըմպելին ՛ի խնամս այ սիրոյն. ՛ի գութ յիշատակաց բարերարին տեսչութե քաղցր կամաց. ՛ի շնորհալից աղբերբն բղխեալ յաղատութի և՛ի կենդանութի յուսոյն յաւիտենից։ Այսպէս շահք օգտից լինին ՛ի զղջմանէ արտասուաց. որ շարժեն զբարս հաստատուս ՛ի գիտաս փրկութե և՛ի պահպանութի այ կամացն. և զմիտսն ամփոփեն ՛ի հաճոյսն այ։ Նա՛ և ոչքան յայտնաց շահք բարեաց,

դպաքան առնել 'ի ծուլութէ և յարհամարհանաց զարտօսր որ 'ի խորութէ սրտի յառաջագայի և 'ի պղերգութէ դժնդակացն՝ լինին մուրք 'ի չարին աղտմանէ. և չարժեն զմիտս և զանդամսն յան-խորհ չարիս. և ելք զղջման և արտասուաց 'ի ծուլութէ և 'ի խստացեալ ամբարտաւան սրտէ. որ քամահէ զղեղջ շնորհաց և ոչ հոգայ վ(ասն) այնր որ զրկեցաւն. և ընդունի փոխանակ բարեացն զչարիս։ Զ արհամարհութի, զամբարտաւանութի, զապիրատութի, զյամառութի, զանափառութի, զագա-հութի, զորկորստութի, զցանկութի, և որ այլ ևս են մուրք չարին։ Նա որ յոյսակից ընդերձեալ է՝ դժուարաւ բժշկի։ Բայց ոչ անյոյս առնէ մար-դասիրութէ բանին որ զղջանան և գան 'ի հնազան-դութի օրինացն աՀրին այ, և ընդդէմ չարին զուղղութիս։ Անիրաւութէ զիրաւունս. անօրէնու-թէ զօրէնսն. ամբարտաւանութէ զխոնարհութիւն. բարկութեն զհեզութի. որովայնամոլութեն զպար-կեշտութի. հեղգութեն զփոյթութի. ատութեն զճշմարտութի միշտ. անհնազանդութեն զհնազան-դութի. ագահութեն զչափաւորութի. կեղծաւորու-թեն զպարզամտութի. երդմնահարութեն զերդ-նուլն. մախանացն զբարերարութի. ոխակալութեն զանոխակալութի. խստութեն զքաղցրութի. ատելու-թեն զսէր սէրն միշտ. անզղջութեն զզղջումն ար-տասուաց. անխոստովանութեն անխղճի խոստո-վանութի խղճի մտացն. անյուսութեն զյոյսն ու-ղիղ. Թերահաւատութեն զուղիղ հաւատս յանձին հաստատել և այսց քարոզել զճշմարտութիւն։

Այս է սուրբ աւանդելոյն դէմք ապաշխարութեան. Ամենայն որ ինչ հակառակ է մեղացն՝ առնել զար-դարութիւն ամենայն որ երևելին և որ ոչն երևելին. 'ի խորհուրդս մտերիմս 'ի յիշատակ աւետեացն սուրբ ապաշխարողաց, և սպառնալեացն անապաշ-խարողաց յաւիտենից տեառնէն. Յայտնի պարտ է զգուշանալ և 'ի պատրաստի ունել զհաճոյսն Աստուծոյ ահիւ տեառն. յիշատակօք անվրէպ գիտութեան Աստուծոյ. հա-մարս առնելոյ արդար դատաւորին յաւուրն դատաստանին. յորում ոչ ինչ ծածկի 'ի խորհր-դոց 'ի բանից և 'ի գործոց. Զի ընտրութիւնք են առաքինեացն և պղերգացն. հաւատացելոցն և անհաւատիցն. և ըստ արժանեացն հատուցմունք. Այլ երանութիւնք յաղթողացն են. որք մարտեան ընդդէմ մեղացն և հակառակորդին և յաղթե-ցին. և պսակեալք փառաւորին. Նաև որք սուրբ ապաշխարեցին զմեղս իւրեանց. Իսկ ահաւոր սպառնալիք տանջանացն պահպանեն զանիրաւսն և զամբարիշտսն 'ի տոչորումն պատժոց որ ոչ ան-կան յապաշխարութիւն. Այլ զխոնարհեալսն և ըղ-նուաճեալսն ընդ կարգօք ապաշխարութեան՝ ընդու-նի յօթևանս կենացն ըստ արժանաւորութեան մաքրմանն ըստ բազում ողորմութեան իւրոյ. Զի նեղեալն և վտանգեալն արտասուօք և բա-րի շարժմամբ՝ յողորմութիւն դարձուցանէ յաղագս սխալանաց ինչ այնպէս զմարդասէրն տէրն. Այլ որպէս տղայք որ ոչ գիտեն բանիւք զպէտս մարցն խնամոց առնուլ, այլ արտասուօք զպէտսն խնդրեն և առնուն 'ի խնամոց սիրոյն. զի ոչ դա-

դարին 'ի լոյս՝ մինչև ամ խնամք 'ի մարդն կատա-
րին և ապա դադարեն և զուարճանան և հանգչին.
Այսպէս պարտ է լինել մեզ առ բարեգութ տէրն.
որ խնամէ զմեզ 'ի յաներևոյթս արարչական սի-
րովն. որ նաև յանարատելոս աթոռ. և բարերա-
րութեան իւրով խնամէ զարարածս. Որ 'ի ձեռն
նախահարցն ծանոյց զաստուածգիտութիւն. և 'ի ձեռն
մարգարէիցն եցոյց զապաշխարութիւն որք դառնան
առ նա. Իսկ 'ի գալստեանն իւրում երբաց զդ-
դուռն ողորմութեան և ասէ, ոչ եկի կոչել զարդարս,
այլ զմեղաւորս յապաշխարութիւն խոստովանութեան՝
արարչական խնամակալ սիրովն. Մրկ 2.17.
Զի փութացեալք 'ի կոչումն աւետեացն՝ առ-
ցուք զպարգևս 'ի շնորհողէն ապաշխարութեան
զքաւութիւն. որ յաներևոյթս զհոգիսն բժշկէ.
Այլ նախ յառաջագոյն է թողութիւն հաւատացելոց
յամենայնէ Արդարութիւն ճշմարիտ խոստովանութեան.
Զի ասէ ցաշկերտսն, յերթալն ձեր՝ մկըր-
տեցէք զհաւատացեալսն յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ. և ուսուցէք պահել զամ հրա-
մայեալսն ձեզ յինէն. Մատ 28.20. Զի որ 'ի
քս մկրտեցան՝ զքս զգեցան. և եղեն որդիք լու-
սոյ և ժառանգք արքայութեան՝ վերստին ծնըն-
դեամբն. Գաղ 3.27. Զի շնորհօք լինին որդիք
լուսոյ. և 'ի գիշերային ծննդենէն ազատեալ
յիշխանութենէն խաւարի, լուսաւոր վարուք կեան
յերկրիս օգնութեամբ բարերարին. Այլ ըստ առաւե-
լեացն որ 'ի շնորհացն՝ զհաւատոյն մեծաւորու-
թեան լոյս. և ղօտարացեալսն ընտանեցուցանելով

 ճշմա

ճշմարիտ հաւատով և անբիծ սիրով։ Այլ զոմ֊
բռնեալսն ՚ի սատանայէ ՚ի մեղս՝ և վ՟ն մեղացն
՚ի մահ, արդարացուցանէ և կենդանարծէ և հրա֊
ւիրէ յերկր արքայութին և ՚ի փառսն զոր պատ֊
րաստեաց սիրողացն իւրոց։

Դարձեալ՝ և յաղագս մեղուցելոցն զպարգևս
ապաշխարութե՟ն եդոյց և յայտնի արար առաջ֊
նովքն։ Ո՟պ զդաւթայ լսեմք մեղուցեալ և խոս֊
տովանեալ. որ լայր զա՟մ գիշեր, և զըմպելի իւր
արտասուօք խառնէր վ՟ն բարկութե՟ ա՟ն. որոյ
յաչացն վտակք արտասուաց հոսեին. Նա ՚ի
չպահելոյ զպատուիրանս ա՟ն՝ զցանկացօղ աչսն
մաշէր յարտասուս և սրբէր ՚ի մեղաց։

Այլ զպետրոս ՚ի նորոյս է իմանալ. որ ուրացաւ
և ոչ յիշեաց զառաջագոյն ասացեալսն ՚ի տ՟նէ.
մինչև հայելովն յիշեր զհաւուն ձայնն. և ելեալ
արտաքս ելաց դառնապէս. Մատ 26. 75.

Այլ յաղագս ջերմ արտասուացն եառ զթողութի.
և առաքելական շնորհքն անդէն մնացին։ յօհ 21. 15.
ո՟պ դաւիթ ՚ի մարգարեականսն։ Թողումն առեալ
և զայլ ևս զհնոցն և զնորոյս մեղուցեալս և
ապաշխարեալս ո՟պ և առեն ա՟ծայինն գիրք. որք
ցուցանեն զօրինակս ստոյգ ապաշխարութե.

Այլ այսպս ոչ փակի դուռն կենաց ապաշխարութե
մինչ ՚ի վախճան կե՟ս. զհանապազորդ սխալանսն՝
հանապազորդ արտասուօք ո՟պ աւազանաւ լուա֊
նալ և սրբել. զի հանապազօր մեղանչեմք. որ
խորհրդով՝ և որ բանիւ. որ լսելով՝ և որ տեսանե֊
լով՝ և որ շարժմամբ իւիք. այսորիկ հանապազորդ
ազօթք

տօթք և լուացք արտասուաց մի՛ պակասեսցին. Զի որ ընդ կշտամբեն մեղք, այսինքն ընդ կանոնօք, այնոցիկ ժամանակք որոշին, և զատին յեկեղեցւոյ և 'ի ժողովրդենէն և 'ի սեղանոյ. զի ըստ մեծի չափուցն՝ և մեծ ջանք և աշխատութիւնք պիտոյանան. Եւ՛ որք նուազ ունին զսխալանսն, և բժշկութիւն արտասուօք առնեն և սրբեն. Իսկ որ 'ի խորութե՛ սրտին է ախտ ապականութե՛ անդամքն, անդ վտակք արտասուաց և հուր և եռացումն հոգւոյ պիտոյանան. որ սրբէ և հալէ և 'ի բաց մերժէ զմեղսն. Եւ՛ որ փոքր ինչ սխալանս ունի՛ ակամայ վրիպեալ, զղջալով և ողոց հանելով և արտասուօք անդէն սրբէ. Նայլ որ սաստիկ ունի զվէրս մեղացն, և կամաւ ըմբռնեալ, որ կանոնով ունի զանուն և զկարգս 'ի տնէ, ունի և զհանգամանս սպառնալեաց. բազում ջանք և ջերմեռանդն արտասուք և բեկումն սրտի և որոշումն ժամանակաց ըստ յանցանացն 'ի ներքս բերցէ առ 'ի լուծանել զդժնդակ ձմեռն խառնութե՛ մեղացն. Զի գարունն հոգևոր երևեսցի 'ի շնչել հարաւոյ ջերմութե՛ հոգւոյն. և 'ի վերուստ սաստիկ անձրևոյ զհոսանս արտասուաց. որ երկիր զբոյս և զծաղիկս բացայայտէ. և տունկք զաղարթս և զպտուղս առ 'ի վայելս Թագաւորաց և ռամկաց. որովք զուարճանան և բերկրին. Այնպէս է որ ջերմութե՛ հոգւոյն զհոսանս արտասուացն հեղու և լուծանէ զկապանս ձմեռնային մեղացն. և արձակին բոյսք առաքինութե՛ և պտուղք արդարութե՛ տընկոյն. որովք

ու

ուրախանան երկնաւորքն և երկրաւորքս ՚ի
փառս ա̃յ. Նա յայլում միտս և բարս պարտ է
ստանալ ապաշխարողաց. զի ազատեսցին ՚ի պար-
տեաց և ՚ի հարուածոց գեհենին. յանշէջ հրոյն
և յանմահ որդանցն։ Նաև ճշմարտեալ առոյգ ա-
պաշխարութ՟ արտասուաց անազանանն ժառան-
գաւոր արքայութ՟են եղիցին։ Զգեցեալ զպատ-
մուճան սրբութ՟ լուսոյն. ճառագայթեալ առա-
քինութ՟են հանդերձիւք. պսակիլ և փայլել զան-
փոփոխման երանութիւն ընդ ս͠րբս ամ՟. Զի ապաշ-
խարութ՟ին է սրբագանել զմեղքն և հրաժարել ՚ի
վնասակարացն և ՚ի չար ցանկութ՟եցն։ Նաև փոխա-
նակ միոյ չարչարանացն՝ զարդարութ՟ին ընդդէմ
եդեալ՝ խափանեսցէ զմեղսն՝ և զարդարութ՟ին
աճեցուսցէ ս͠ր սիրով և արտասուալից աղօթիւք.
և պահօք ցամաքեցուսցէ զպղտորեալ զանձոյժ
բղխումն գիճութ՟են որ ապականութ՟ի է յանդամանն։
Զի ջուրք աղբերաց և սրսկմունք անձրևաց՝
զերևելիս հուր շիջուցանեն. իսկ առ ա͠ծ սէրն
և ջերմեռանդն արտասուք՝ զհուր մեղացն շի-
ջուցանեն և խափանեն զկամս մարմնոյն. զմեղքն
գործութ՟ շօշափեալ զաղտեղի չարժմանցն զհա-
մունան. և այլ մի՛ ևս մերձենալ ՚ի նոյն գործութ՟ի
ախտիցն. այլ մաքուր մտօք զմաքրութ՟ի ստանալ։
Զի մի՛ սպառնալեաց պատուհասն անորբութ՟ե
՚ի վ͠ր հասանիցէ յաւուր յորում ոչ գիտասցէ
և ՚ի ժամուն յորում ոչ կարծիցէ, և տացէ ընդ
վրէժ մնասուցն։ ղու-կ 12.46. Նայլ սիրէ տէր
զսրբութ՟ի որ ՚ի ս͠րս բնակէ. Նաև զանմեղսն ասէ,

որդն նոցա ոչ մեռանի և հուրն նոցա ոչ շիջանի. և
լինիցին տեսիլ ամ̃ մսեղեաց. Ես. 66.24.

Նա՛ զամ̃ արկածս մեղաց՝ ՚ի մտաց և ՚ի մարմնոց ՚ի բաց թօթափել. մինչև կարող լինիլ ասել, գայ իշխան աշխ̃ի մեղասեր, և յիս ինչ ոչ գտանէ զմեղացն զնշխարհսն. Յոհ 14. 30. Նա և քո ըստ ամենատարածին կենաց՝ վերստին նորոգեաց զմեղ ստոյգ խոստովանութ̃ և արտասուօք ապաշխարութե և գթով սնանկաց. հանդերձ ամ̃ առաքինա սէր վարուք յարդարեալ ՚ի հաճոյս այ̃.

Նա՛ մշակ լեալ այգւոյն Ճշմարտութե ՚ի սկզբանն հաւատոց և ուղիղ վարուց. որով կայ ՚ի վե̃ երկ րի և առաքինանայ. և երանելով յաւէ՛ս՝ ընդ իւր տանի զամ̃. Զ ողջայութեն անմեղութի. զմանկութեն անարատութի. զերկնաւորդութեն անբծութի. զծե րութեն զմաքրութի. գլխաւորելով ըստ իւրա քանչիւր հասակաց զամ̃ առաքինութիւն՝ զվարձսն առցէ ըստ իւրաքանչիւր վաստակոց յամ̃ցունց տնէին. Որ տայ գործողաց այգւոյն հաւատացե լոց ըստ ժամանակաց փոփոխմանց. Մտթ 20. Օժան դակեալ առ վերին կոչումն ուր քս̃ նստի ընդ աջմէ հօր յեմ̃ վերին որ է մայր մեր ամենեցուն
Կող 3.1. Գաղ 4.26.

Որ և յառաջագոյն գանձք առաքինութե բա րեացն ամբարեցան. Ղուկ 12.33.

Որ յոյսն մեր է հաստատեալ յանմահ երանու թեան յանվախճան վայելչութիւն և յանզեղջ բա րութիւն. ՚Ի վայելումն քո միահաւան խնդութ̃ երկնաւորաց և երկրաւորաց ՚ի փառս քո այ̃.

գործակցութ̄ բարերար երախտեաց մ̄ր սիրոյն ։
Որ մատոյց զձեզ յորդեգրութ̄ի հօրն և՚ի խնամս
մ̄ր հոգւոյն և՚ի ժառանգութ̄ի արքայութ̄ե իւրոյ։
Որ տաս արդարոցդ , և անդ Թագ ՚ի գլուխ
պսակել փառաւորէ յա̄ծեղէն խրախճանութիւն։
Ուր կան և մնան հանապազորդ հրճուանօք յան-
սպառ բարիս ամենա̄սբ Երրորդութ̄են։
Որում վայելէ փառք իշխանութ̄ի և պատիւ յա-
ւիտեանս յաւիտենից ամէն ։

Նորին [illegible] Սրբոյն Գրիգորի ։ [illegible]
[illegible]
[illegible]

Ճ Ի

Մեղաւորի գոհութ̄ի և օրհնութ̄ի և փառա-
տուլ արժան է ամենակալ տ̄րութ̄են ամե-
նառատ բարերարութ̄են ։ որ ոչ Թողու
զարարածս ՚ի խնամակալ սիրոյն իւրոյ։
այլ յանձանձէ և առատաբար բաշխէ զշնորհս
յարարածս իւր ։ Նախ՝ զի իշխան և տ̄ր կացոյց
՚ի վ̄ր երկրի ։ որ ընդ իշխանութ̄ են վերնոցն ։ զի
ծանիցուք զն̄ր խնամսն արարչական սիրոյն ։ և
աշակերտեալք ն̄ր պատուիրանին , կատարեսցուք
զարդարութիւն ա̄մ ։ և առցուք զհատուցումն բա-
րի ՚ի ժամանակի այցելութ̄են ։ և ըստ օրինակի ա-
նապական վարուցն հետևող լինիլ ։ Ող ՚ի սկզբ-
բանէ նախաստեղծին կեանքն ՚ի տ̄նէ յարդարե-
ցան անմեղութ̄ , վասնորոյ սէրն հաստատել ՚ի մեզ ։

Ոպ՟ և Քս՟ սիրեաց զմեզ, և զանձն իւր մատնեաց պատարագ 'ի հոտ անուշից · եփես 5 · 2 · որ բարկա-ցուցաք զարարիչն զի ոչ պահեցաք զպատուի-րանս նր՟ Եւ զնմանս սիրոյն իւրոյ՝ ոչ ոք առ-երախտաւորս եցոյց, այլ յապախտաւորս ոք ոչ փոյելէ · Զի զբարիսն զոր եցոյց մեզ ած՟, ոչ ըստ մերում արժանաւորութեան էր, այլ յաղթեալ յարարչական գթ՟ և անքին սիրոյն՝ դարձաւ յո-ղորմութի · Որ և ոչ իսկ փոխարէնս խնդրէ 'ի մէնջ փոխանակ երախտեացն · այլ կամի՛ զի կաց-ցուք արդարանէրք և ժառանգորդք լիցուք երկ-նից արքայութեանն. Զի նա է լոյս և կեանք մեր և աղբիւր բարութեանց. Ոպ՟ ոչ խնդրէ աղբիւր ջուր, և ոչ արեգակն լոյս, այսպէս ած՟ տուօղ է բարեաց և ոչ առօղ ինչ · յաղագս մեծի բարե-րարութեան իւրոյ և անկարօտ լինելոյն. Նմա որ առ միմեանս լինի երախտիքն, զայն իւր համարի և ինքն առնէ զփոխարէնան յերկրի և յերկինս՝ որ կան և մնան. Զի միմեանց բարի առնեն, և փոխարէնքն 'ի նմանէ առաքին երևելիք և աներևոյթք. Մատթ 25 · 40.

Զի որ արիւնն աբելի բողոքեաց որ սպանաւ 'ի կայենէ · և պատժեցաւ կայէն 'ի նմանէ. Ծնն 4 · 10. Նոյնպէս և բարի բողոք գայ 'ի բարի խնամս շարժէ բարեգործաց. Զի և որք ոչ խնդրեն զվրէժս 'ի զրկողաց, ինքն առնու զվրէժս ըստ արդար դատաստանին · 1 թես 4 · 6 · զի ըստ ար-ժանեացն է հատուցումն առ բարեգործսն և առ չարսն.

Իսկ ա̃յ նմանիլ այս է, որ ապերախտին երախտաւոր լինի. որ է զկորուսեալն գտանել. զգտեալն պահել ընդ իւրով իշխանութ̃ն. եւ ջանիւ նմանիլ որդւոյն ա̃յ որ եւ զանձն իւր վ̃ն մեր. եւ կամաւոր չարչարանօքն ազատեաց զմեզ ՚ի ծառայութ̃ե մեղաց. եւ ՚ի վայելումն բարեաց կենաց եւ աւետեաց զմեզ հրաւիրեաց. եւ հոգւոյն ա̃յ ընդունելութ̃ն արժանի արար. Իսկ ամենակալ հայրն զանհամեմատ զերանութ̃ին խոստացաւ. զի միածնական Եղբօրորդութ̃են միշտ հանգուցուք զօրհնութ̃իս. որ հանապազ ՚ի բաց ունի զդրունս փրկութ̃ե կենաց հաւատացելոց. եւ ապաւէն է ա̃մնեցուն որ կարդան առ նա. Իսկ աշակերտել առաջնորդական բանին՝ գործակից լինելն բարեբար կամաց նր̃ խորհել զբարին եւ առնել. եւ ընդու զհաճոյս արարչին ՚ի խնամս մերձաւորաց եւ հեռաւորաց. Զի զփոխարէնսն առցեն զբարեացն բատ անմեղութ̃ե ո̃ւ սիրոյն. եւ ՚ի նոյնսն ,բաւաջանալ ՚ի լաւսն. եւ պատերազմել ընդդէմ ողմոյն՝ առաքինութ̃են հանդիսիւք. Ի բոլոր սրտէ ապաւինեալ ՚ի խնամս բարերարութ̃են. խլելով զա̃մ բոյս անօրէնութեան ՚ի մտաց եւ ՚ի զգայութ̃եց հանդերձ ա̃մ չար եւ աղտեղի ախտիւք.

Իսկ ՚ի բաց բառնալ ՚ի միջոյ զհպարտութ̃ի. զագահութ̃ի. զխորամանկութ̃ի. զբարկութ̃ի. զոխակալութ̃ի. զնենգութ̃ի. զստութ̃ի. զերդմնահարութ̃ի. զնախանձ. եւ զորովայնամոլութ̃ի արբշռաց.

Զայսոսիկ ճշմարտութ̃իս եւ որ սոցին նման գժնդակութ̃իս մեղաց սպառնալեօք յաւիտենից

տան

տանջանացն 'ի բաց հանել. և տնկել զբարեաց
տունկս 'ի միտս և 'ի վարս. հանդերձ յարմարա-
կան առաքինութ՟ք և անարատ սրբութ՟ և ճշմա-
րիտ հաւատով. խրախուսեալ յԱ՟ծ յուսով աւե-
տեացն խոստմանց. Ո՛ ազատութ՟ն առհաւատչէյ
սոր առեալ, և հրաժարեալ 'ի պատրաստեալ ար-
քայութ՟ն երկնից. 'ի յոյսն կենդանեաց. 'ի բա-
րութ՟եան անվախճան ուրախութ՟եցն. որ ոչ միտք
իմանալի է և ոչ բանիւ ճառելի որ անդէն երա-
նութ՟քն. Ո ի ով մանկունք յորովայնի մարցն
լինին յապաժոյժ և 'ի խաւար թաղեալ. և ոչ գի-
տեն զերկիրս վայելչութ՟, և զարեգականն պայ-
ծառութ՟, և զլուսնի և զաստեղաց և զժամուց և
զամսոց շրջագայութ՟. և զբուսոց և զտնկոց պը-
ղաբերութ՟ 'ի վայելս կենդանեաց. և որ այլ ևս
անասնոց նախիրք. և գազանաց և թռչնոց ջոկք
և երամք. և որ 'ի կերակուր և 'ի հնազանդութ՟-
են անկեալ. որք 'ի ցամաքի և որք 'ի ջուրս լո-
ղակք. որ պատրաստեալ որոգայթիւք ըմբռնին
յորսողաց. և որ այլ ևս են վայելչութ՟ք և պայ-
ծառութ՟ք հանդերձից. և ոսկւոյ և արծաթոյ և
ականց պատուականաց որ 'ի զարդ մարդկան գոր-
ծեցաւ և 'ի փառս թագաւորաց. յորս ուրախա-
նան աշխարհասէրքն. Արդ՝ ով ոչ գիտելով ման-
կանցն զայս կենս որ ոչ նման է որովայնին կենաց.
Այսպ՟ս և մեզ ոչ է իմանալ զհանդերձեալ կեն՟սն.
և ոչ համեմատի այս լոյս և կենքս առ այն կենք
և լուսաւորութ՟ փառաց ամենազօր Երրութ՟են.
Ո՛ որ ակն ոչ ետես. և ունկն ոչ լուաւ. և 'ի
սիրտ

սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց ած
սիրելեաց իւրոց. և զանվախճան երանութիւնն
՚ի քս յս 1 կոր 2. 6.

Նաև ոչ որ յաշխ են նեղութիւնք և վիշտք և չար
չարանք և տանջանք հրով և ջրով ոպ սոդոմայն և
ջրհեղեղին, ոչ համեմատին անշէջ հրոյն և յաւի
տենից տանջանացն որ պատրաստեալ է ամբարշ
տաց և մեղաւորաց. Ով ի ած զմիտս և զզգայա
րանս գործակից կենաց ստեղծեաց ամենիմաստ
կենօք ՚ի սրբութի ՚ի ճշմարտութե և յամ բարե
գործութիւնս. Որ շահի բարեացն լցուցէ զանձն
և զայլս, և ուրախացուցէ զորդն. զի ՚ի բերա
նոյն քարոզի ճշմարտութի հաւատոց և անբիծ
վարուց. Ով ի արթուն և զուարթուն պահեսցէ
զինքն և զամենեսին զհաւատացեալսն յողջախո
հութի. անձի և ուր սիրով կալ ՚ի հնազանդութի
հոգևոր օրինացն. որ տայ ատել զչարն և սիրել
զբարին. որ քաղցր և անոյշ բարեօք լին է. և
գովեսցէ և գոհութիւնք ՚ի վեր ելանեն առ ած, և
պատրաստեն զերանութիւն արքայութե երկնից.
Ով ի համձայնացան ած ՚ի նեղութե և յանդորրու.
և անքակ մնասցեն ՚ի սիրոյ նր ճշմարտեալ հաւա
տով. խաղաղասէր և բարեսէր եղեալ առ ամեն
մեկնեալ յամ իրաց չարաց. յերկեւելեաց և յա
նօրենութեց սխալմանց. յոբ 1. 1.
Ով ի ես եմ տէր ած որ ատեմ զանիրաւութի
և սիրեմ զարդարութիւն. ես 61. 8.
Նաև յայսմ երկրին սիրելիք ած և ընտանիք հա
ւատոց, զի զնոյն սէր ունիցիմք առ սրբութիւն

ժգ և

և յա՜մ արդարութեան միջոց։ Նա՛ դարձեալ զառաւ-
լութի առ զաղէր ցանկութեան և առ ա՜մ մեղս։
Զի գրեալ է՝ զմեղս ատեցի և անարգեցի, և
զօրէնս քո սիրեցի։ Զի այնպիսիքն են երան-
եալ. որ դարմանօք կենդանարար խրատուն լի են։
և ո՜վ յաղթեցէ բղխեն զկենաց խրատն։
Զի ա՜մ որ կարդասցէ զանուն տն՝ կեցցէ.
Հռոմ 10.13. որ զայսն յորդորէ ՚ի քն յոն։
Իսկ որ ապխրատս խօսին առ ՚ի կորուստ բազմաց
խորամանկութե և այլանդակութե պատրանաց և
պէսպէս փառակարութեց, և որ վերպեցուցանեն
զօգեան ՚ի ճշմարտութե աւանդից, տայցեն վը-
րէժս վն կորստեան անօրինելոցն ըստ արդար
դատաստանութեն այ. որ ժառանգորդ լինին ան-
շէջ հրոյն և յաւիտենից տանջանացն։
Նա՛ աչք որ զճշմարտութե զտեսութի ունին,
առաջնորդութե իմանալեացն անկրեպ զգուշանան
՚ի փառասկարացն. ա՜մ անդամօք անարատ և ո՜ք և
անբիծ զտեսութիւնն հրահանգեալ յա՜մ։
Զի ճրագ մարմնոյ ական է ակն տոն. Զի որոյ
աչքն լուսաւորեն, ա՜մ մարմինն լուսաւոր եղիցի.
որ չունի մասն խաւարի զմեղաց իրս այլ լուսա-
ւորեալ կացցէ ՚ի լոյսն տն։ Ղուկ 11.34.
Ապա եթէ խաւարեալ է ՚ի ներքուստ լուսոյն ՚ի
ցանկական աղտեղութիս և յա՜մ չարեր պատրանս
երկնելեաց՝ ամենաչար է. որ շլացուցանէ ՚ի ճըշ-
մարիտ տեսութէ։ Նա՛ ՚ի մեղացն ո՜վ բիժ զա-
կամբ եկեալ՝ ոչ թողացուցանէ տեսանել զպատ-
շաճն. այլ զխաւար չարին։ Նոքա են որ ժա-
ռան

անգործ լինին խաւարին արտաքնոյ. ուր լալ-
աչաց է, և կուրութի յանշէջ հուր դեհենին.
Օ ի երկաքանչիւրոցն է հատուցումն. Աշխարհա-
սէր ուսողացն և ցանկասէր փառաթարատեացն.
Այլ լուիցէք որ բացին զդրունս յանձկնդրութի
Աշխարհիս քարոզութեան, և ընդունակ արարին
կենարար բանին զմիտս և զզգայարանս մդ, հա-
ւատով և Աշխարհաւորէ՝ ոչ պատուիրանին յերկե-
լիս և յանձերկայթս. Ընդ նոյն լուիցին մտանեն
բարբառոյ աւետեացն. եկայք մտէք [illegible] յու-
րախութի տն ձերոյ. և վայելեցէք զարքայն զանկոխ-
ման. որ ի սկզբանէ հաստատեալ երկնեցայք
յերկրի. մատ 25.21.
Իսկ որ խնուն զականջսն ու Աշխարհութի աւե-
տարանին, և մնան ատնեն կորստեան բարբառոց և
անհնարաւոր փառաւորաց, և ատնեն զմիտս բայնս
ի ժեից և քարբեից զի մի ածցեն զկենաց դեղն բը-
ժշկութե ի դեղատուէ մնայլին բանիցն, առ 57.5.
Լսելոց են զբօթ և զդժոխ աշխ որ ասպատակեք
ի տնէ. երթայք յինէն անիծեալք ի հուրն յա-
ւիտենից. որ պատրաստեալ է սատանայի և հր-
եշտակաց նր յաւուրն այցելութե. մատ 25.41.
Այլ հաւատալեք հատոցն են զպայութիւք, որք
որոշեն զանոյշ միրցն զհոգւոցն զհոտ բուրման
շնորհացն. որ արբեալն են յոմն գարշութեցն.
Ոչ ասպեալն առ, հաւ անուշեմք ի քս ի մէջ
փրկելոցն և ի մէջ կորուսելոցն. Ոմանց հոտ ի
մահուանէ ի մահ, և ոմանց ի կենդանութենէ
ի կենդանութիւն. 2 կորն 2.16.

Լա՜ւ առ այս ո՞ է բաւական։ Որք որոշեն զբան ՚ի վատթարեն. զհաւատոցն և զբարուցն անբը֊ ծութի. որք վայելեն յանուշակ բարիսն։
Իսկ որք զհոտս անարբութե՟ բուրեն և զամբա֊ րըշտութե՟՝ յորոշումն յաշխարհական ցանկութե՟ց որ լին է ժահահոտութ՟ անառակ և անխտիր շարժ֊ մամբ. հրաժարեալ ՚ի շնորհալից հոտոցն։
Առնլոց են այնպիսիքն զհոտ ժահճիցն հարուա֊ ծոյ անկեալն որդանցն և կիզման հրոյն. և գրաւ֊ ին ՚ի ներքս ՚ի յապաժոյժ տանջանսն. ՚ի հա֊ շումն և ՚ի մաշումն հոգւոյ և մարմնոյ։
Լա՜ւ ձեռք՝ որ ՚ի խնամս տեսչութ՟ գործաւորութ՟ առ ՚ի պտղաբերութի յարդարեցին միշտ. գլորե֊ ցելոյն օգնական և ձեռնտու եղեալ ըստ ա՟մ պիտոյից. և ՚ի գործս ա՟յ ոչ դանդաղեալ. զի զան֊ ձին պէտս ինչ իւրոց զմերձաւորաց և զհեռաւո֊ րաց սուղապէս ներգործեցէ ըստ շնորհելոյ նմա ՚ի տ՟նէ առողջութի։ Այսպիսի ձեռք՝ առնո֊ լոց են ՚ի տ՟նէ զլձիւ ազատութե՟ զմուրհակս որդեգրութե՟ զպսակն անապականն. որ փառօք և պարծանօք յօրինեալ է ՚ի ձեռացն ա՟յ։ Իսկ ձեռք որ ըստ աղտեղի ցանկութե՟ յամօթոն չարամբ֊ ձեռալ ինքեան կամ գործակցաց ախտաւորաց. և կամ որ գողանան, որ տանջեն և նեղեն և սպա֊ նանեն։ Այն ձեռք կապին հրեղէն կապանօք և մատնին անվախճան տանջանաց յանշէջ հուրն գեհենին. և ջնջին ՚ի կենդանի գրոյն տախտա֊ կացն քնի։ Մտթ 22. 13։
Լա՜ւ ոտք որ եղեն երիվարք չինութե՟ և խաղա֊

ղու

զութե՟ ոչ վարուց և ճշմարիտ քարոզութե՟ առ
ա՟մ օգուտ հոգևորս 'ի հաճոյութի կամաց տ՟րու
Թե՟ն. որք կրեցին զաշխատութի առ հանդերձ մե-
րին կոչմանն: Այն ոք եղանեն 'ի դրունս կե-
նաց և մտանեն յօթևանս ուրախութե՟ հարսա-
նեաց զարդուն վայելչութե՟ ընդ ա՟ջ մեծութե՟
յանանց ուրախութե՟ն: Իսկ որ արտաքսեցան
ոյք յարդարութե՟ ճանապարհէն, և զրահետ ե-
ղե՟լ մոլորեցան 'ի չար անդր 'ի փոսակորան ընթա
նալով. յանօրէնութի, յաւազակութի, յապիրատութի,
'ի ստահակութի, և յա՟մ անիրաւ ճանապարհս գնալ
որ տանի 'ի կորուստն յաւիտենից: Այսպիսի
ոյք մեկնեալ 'ի կենաց անտի առաքին 'ի վիհս
դժոխոց. ուր ոչ է վախճան կամ լուծումն և
հանումն 'ի կապանաց տանջանացն:

Եւ իմաստք խելացն որ բնակեալ է յուղեղն
որ 'ի գլուխն է, որ 'ի վ՟ե անդամոցն է պսակ՝ և
զգայութեցն գործարան, շարժմանց առաջնորդ,
և տեսուչ և վարդապետ և հրամանատար ա՟մ
անդամոցն: Որ զթիւրեալ անդամն ուղղէ.
զվրիպեալն հաստատէ. զանդէտսն իմաստնացու-
ցանէ. զկարօտսն լցուցանէ ա՟մ հնարիւք. զգիտու
փրկութե՟ անձինն ստանայ և այլոց. և լինի տուն
գանձուց հոգևոր իմաստից մերձաւորաց և հե-
ռաւորաց ըստ շնորհելոյ նմա 'ի հոգւոյն ս՟բոյ:
Որ աղբիւրն է ա՟մ բարեաց և իմաստից: Աստի
ծագէ լոյս գիտութե՟ և զա՟մ մարմինն լուսաւորէ
ըստ ք՟ի աւետարանին ս՟բ և բարի հանդամանցն:
և ընտ զա՟մ անդամն երանութե՟քն ըստ ճշմար-
տու

տուժէ բարերար կամացն. և առնու զթագ ար-
քայութեն որ 'ի քն.

Իսկ խելք՝ որ մոլորեցան 'ի ճշմարտութենէ իմաս-
տից յամ՟ վնաս անկրաւնութ՟ անխնայ մեղացն,
և փոխանակ կենաց՝ մահու պատճառք եղեն ան-
ձանց և բազմաց, նոքա կրեն սաստիկ պատուհաս.
Կորիցեն ասէ մեղաւորք յերկրէ 'ի դժոխս. և
ամբարիշտք ոչ ևս գտցեն հանգիստ 'ի չարաչար
տանջանսն. սղ 103. 35. եսայի 57. 20.

Զի այս է որ 'ի վտանգս մեղաց անկանին. և
չար կորուստ է նց և մութն և խաւար. և 'ի չա-
րաչար և 'ի դառն տանջանաց՝ զլոյս ոչ տեսանեն.
և ոչ զայլ ոք 'ի մխիթարութի առ տանջանսն.

Իմանալի է և զխրատն որ ընդունայն է հոգ-
ւոյն շարժման. Սիրտ ոք հաստատեա յիս ած
(ասէ մարգարէն.) և հոգի ուղիղ նորոգեա 'ի
փորի իմում. Որ խնդութ՟ յուսոյն վերաստեղ-
ծու 'ի զգաստութի առաքինասէր վարուց. և շար-
ժէ զամ՟ անդամսն 'ի վատթարացն 'ի լաւագոյնսն
բարի խորհրդով. առհաւատչեայ յուսոյն առ-
նուլ զազատութեն զկեանս և մտանել 'ի ժառան-
գութի ողջեգրութեն երկնից. Իսկ որ 'ի սրտէն
բղխէ զդրունս չարութե՟ (ոպ՟ ասաց տրն) զամ՟
դժնդակաց ելանէ 'ի սրտէն. զշնութի, զամբարտա-
ւանութի, զբարկութի, և զայլ ամ՟ չարիսն. մտ 15. 19.
Նոքա ելանեն 'ի խնամոց բարերարին 'ի խաւարա-
րարքն և 'ի կորուսանէ յաւիտենից. զոր ոչ
բաւէ ոք ասել զայնքան աղէտս տանջանացն.

Ի՛ մանալ և 'ի խորին սրբութի ըստ ամենայնի.
որով

որով ներքին մարդն նորոգի օրըստօրէ (ասէ առաքեալն.) 2 կոր 4. 16.

Զի առ ժամայն թեթեւ նեղութիւնքս՝ զյաւիտենից բարեացն գործէ յանձին 'ի ցաւս եւ 'ի հարուածս փորձութեանց: 17. 9. Որք մխիթարիչք զանուանեալն ունին. լեառն. եւ թոք. եւ փայծաղն. եւ աղիք. եւ երիկամունք. այնպէս տնօրինեալ ոչ 'ի սկզբանն էին առանց սխալանաց. Նոյն յամենայն մեղուցեալք երեւելի մարմնով եւ աներեւոյթ հոգւով՝ ամ փորձեօքն դարձեալ լինիլ բարի խորհրդոցն ընդունարան: Զի եւ ամօթոյ անդամքն առաւել եւս պարկեշտութիւն ունիցին (ասէ առաքեալն:) 1 կոր 12. 23

Նախնիքն զանարատ սրբութիւն եւ զանբիծ մաքրութիւն 'ի հաւանեաց. մեռուցանելով ճգնաւորական պարկեշտութեամբ զհուր ցանկութեան հրով հոգւոյն, եւ շնորհալից արտասուօք շիջուցանել: Զի ամ անդամօք եւ փորձեօք եւ հոգւով 'ի կամակար մնացն պարտաւորեալք՝ արդարացայք 'ի ձեռն լուսաւոր աւազանին վերստին ծննդեամբ շնորհօքն քրիստոս ազատեաց զմեզ 'ի մահուանէ մեղաց յաղթութեան նորոգման իւրոյ: Որ զգեցաւ զնոյն մարմին եւ զհոգի. եւ խառնեաց ընդ ածութեան իւր յաղագս անբաւ սիրոյ իւրոյ: Նա զմեզ յորդորէ հայիլ յելս գնացից նր. եւ նմանօղ լինիլ համբերութեան մարմնաւոր նր վարուցն. եբր 12. 2. զի եւ փառացն հաղորդեսցուք 'ի նր սիրոյ նր. յոհ 12. 26. Նա պատուիրան առնէ սիրել զնա. ոչ նոյն սիրեաց զմեզ եւ ետ զանձն իւր փրկանս ընդ ամենեցուն. յոհ 15. 12. Զի յայս երկու պատուի-

րանս

րանս կախեալ կան օրէնք և մարգարէք (ասէ տէրն)
սիրել զած. և սիրել զընկերն։ Մտթ 22. 40.

Զի որ սիրէ զած, հեռի է յամ անօրէնութենէ յերևելեաց և յաներևութից. և մերձ է յամ սրբութիւն և արդարութիւն. Հռօմ 13. 8.
զի իշխանութի առեալ յածային սիրոյն՝ խափանէ ՚ի մեղաց զմիտս և զզգայարանս։ Նմանապէս և որ զընկերն սիրէ, նմանութբ քնի ուր սիրոյն է զոր եհեղ ՚ի մարդիկ առատապէս։ Զնոյն սէր ասէ առաքեալն յանձին ունել. համաշունչք և միախորհուրդք առ հաճոյս այ. փախչել յանձնասիրութենէ պարտեաց. և խոնարհութբ առաւել համարել զընկերն քան զանձինս։ Փիլ 2. 2.

Զի հոգևոր և ոչ սիրով առ այ և առ ընկերս ճշմարտել, երկնայնոցն լիցուք ժառանգորդք.

Որ զի սերմն բարի սերմանեաց քն, և թշնամին արդարութե սայ՝ եարկ ՚ի մէջ զորոմն անօրէնութե. զոր քն հրամայեաց թողել և ՚ի նիւթ հրոյ առկանել. և զբարի սերմանս աճեցուցանել. որ բերէ զհարիւրաւորս. և որ ըստ իւրաքանչիւրոցն է սերմն առաւել կամ պակաս սերմանեալ։ Մտթ 13. 8.

Նաև սատանայ ՚ի սկզբանն ոչ թշնամի արարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարւոյ. զի ըստ եբրայեցւոց բարբառոյն՝ սատանայ հակառակ թարգմանի ՚ի մեզ։ Որպ և զպետրոսէ լսեմք ՚ի տէնէ, երթ յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս զայն, այլ զմարդկանս։ Մտթ 16. 23.

Որ անգէտ էր փրկական չարչարանացն. և հակառակէր արգելուլ։ Նաև ամ որ բարւոյ հակառակ

կայ, նա ս՟տնյ անուանի։ Զի ամ՟ ստեղծուածք
՚ի բարերարէն բարի ստեղծան․ և ՚ի կամակար մը
տաց եղեն չարք ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ
ամբարիշտք և դևք։ Զի ոչ զաստուածայն անձնա
հաճ հպարտութիւն իւր ընկեց ՚ի փառացն, նմանա
պէս և մարդիկ զնոյն ախտացան ՚ի ս՟տնայի խաբ
մանցն որ զա՟ծութեն զպատիւ խոստանայր զի
ա՟ծամարտ լինիցին իբրև զինքն։ Նա՛ գաբրիէլ
հրեշտակապետ էր, այլ աւետաւոր լինի առ կոյսն․
զուարախ լեր բերկրեալդ աւետարանելով և ազդէ
մարդկան զփրկութի։ Որ ՚ի ձեռն մարմնանալոյ
որդւոյն ա՟յ ազատեցան տիեզերք ՚ի յանցանացն որ
՚ի սատանայէ պատրեցան և զմահ ստացան։
Զոր ք՟ս կենդանացոյց, և արար հաշտութի արար
չին ընդ արարածս․ և հրաւիրեաց զհաւատացեալս
յամենասուրբ Երրորդութիւն առաքինասէր վարուք՝
յերկնից արքայութին։ Զոր և դևք խոստովա
նէին որդի ա՟յ՝ և զիւրեանց պատիժն․ գիտեմք
զքեզ թէ ո՞վ ես որդի ա՟յ․ որ եկիր յ՟աս, և յա
ռաջ քան զժամանակն տանջել զմեզ։ Մր 1.24։
Զի եթէ չար էին բնութ՟ և սոքա, զիա՞րդ կա
րէին արդար ասել զեղեալն և զլինելոցն դևքն․
զի չիք ոք լեալ բնութ՟ չար․ այլ ՚ի կամաց և ՚ի
գործոց իւրոց առնու զանուննս չար ճշմարտի․
և ըստ չար կամացն առնու զհատուցումն։
Վ՟ այսորիկ որ ուսուցանեն զչարն և որք ու
սանին, առնուն զհատուցումն յանշէջ հուրն։
Որ հրապուրեն և ուսուցանեն զչար՝ սատանայք․
և որ հրապուրին և ուսանին զչար՝ մարդիկ․ զի
գողն

գողն և գողակիցն ՚ի միում պատժի են. և որ այլ ևս չարագործաց հաղորդակիցք լինին, ընդ նոսին տան զվրէժս. Հռոմ 1. 32. Զի երթիցեն ասէ տ̃րն մեղաւորքն ՚ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա որ հրապուրիչքն են. Մատ 25. 46. 41.

Իսկ զաւետարանին գործակիցսն զքահանայս տ̃րս և զպաշտօնեայս եկեղեցւոյ որք սպասաւորք են սրբութեանց հրեշտակային կարգաւորութե̃ն, ոչ փոքր պարգև համարեսցուք. այլ ո̃պ յա̃յ կարգեալք ՚ի փրկութի հաւատացեալ ժողովրդեանն ա̃յ. 1 Տիմ 5. 17. Զի զառաջնորդս եկեղեցւոյ ՚ի տեղի առաքելոցն կարգեաց ք̃ս քարոզս և ասաց, որ զձեզ ընդունի, զիս ընդունի, և որ զձեզ անարգէ, զիս անարգէ. Մատ 10. 40. Ղուկ 10. 16. Այլ դարձեալ ասէ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. Մատ 18. 18. Զի իշխանութի որ յա̃յ է, զօրութի ունի մեղաց թողութե, և ախտաժէտաց առողջութե, և դիւաց հալածման ՚ի մարդկանէ. Զի զոր ա̃ծ կարգէ, զգործ ա̃յ գործէ շնորհօքն ք̃սի.

Այլ երախտիք որ ՚ի նոցանէ յառաջագայի պարգևք են. որ զյուսահատսն ՚ի յոյսն կենդանի ածէ, և զփրկութի աւետարանէ. զմահապարտս և զյանցաւորս խոստովանութե յապաշխարութի ածէ տայց և Ճշմարիտ վարդապետութե ըստ հոգևոր օրինացն և ըստ աւետարանին քարոզութե ՚ի փառս և ՚ի գովեստ ամենաս̃բ Երրորդութեն. զի հրեշ-

տակ

տակ ոտն ամենակալի է (ասէ մարգարէն.) և 'ի
բերանոյ նորա օրէնք հայցեն։ Մաղ 2.7։

Զի որ տէրքն են առաջնորդք բանին և ուսմանց աշակերտեն 'ի ճշմարիտն, նոքա տացեն զերանութիւն զխաղս և զպսակս ընդ նոր հրեշտակապետաց և ընդ տէր նոցա յամենակալ տրութենէն։

Այն յընտրութիւս հրեշտակաց և մարդկան յերկինս և յերկրի, հրշտկապետք և հրեշտակք և առաջնորդք նորա և նմա ընտրեալք սիրելիք նորա են։

Արդ 'ի վերին զօրացն որոշեալ 'ի հրեշտակապետացն հակառակին բարւոյ՝ սատանայ անուանեցաւ. և զօրք իւր՝ դևք. հաւանեալք կամաց նորա և ապստամբեալք 'ի ճշմարտութէ կարգաց։ Այն առա մարդիկ թիւրեալ 'ի հաւատոյ կորստեան և 'ի վարս անօրէնութե բաղում ժողովրդովք որք և առաջնորդք կոչեցան, և հպարտացեալ զարտուղի անկան. և բազմաց եղեն պատճառք կորստեան. որսացեալք 'ի սմին 'ի նորա կամսն ըստ ամենայն փխասուց։ 2 տիմ 2.26։ Զի ճշմարտութեն վերակացուք առաքեալք և մարգարէք և քահանայք, միաբանեալք ընդ սուրբ զօրս հրեշտակաց, են 'ի լուսաւորութի վերնոց և ներքնոց։ Այն ամբարշտեալք 'ի մերոց՝ և ապստամբեալք 'ի բանէն որ աշակերտեցաք զճշմարտութին՝ օտարացան և յետս կացին. որպ քուրմք և կախարդք և այլ ևս չարք։ Զի բարեգործք են արարածքն այ. և անխրատք որպ ասացաւ՝ յանձնիշխան կամացն եղեն չարք. դևք և մարդիկ։ Որպ տաճար բարութեք է Թագաւորի, այնպս բանք բանաւորաց։

Բարի մասն՝ ուրախութիւն և ամենագեղ զարդուք է մտերմացն և բարեխօս բարեգործացն. Իսկ գանն և խարազն և զանազան տանջանքն՝ անիրաւաց և պղծոց է. որք անխտիր են յամբարշտութենն. Զի բանս ասէ դժոխքն և զանազան տանջանքն. որ զպոռնիկս և զկախարդս և զսպանօղս և զա̃մ անիրաւս ՚ի տանջանս ընկենու. որք արհամարհեցին զբանն տ̃ն և ոչ պահեցին զարդարութի. Ապա եթէ իշխանութի դժոխոցն ա̃նյի՛ է, ապա վրէժխնդիր է ըստ արդար օրէնացն ա̃նյ. այլ մի՛ լիցի այսպէս իմանալ. զի և դժոխքն ՚ի տ̃նէ վ̃ն նր̃ պատրաստեցան և վ̃ն նր̃ արբանեկացն և ոչ վ̃ն մարդկան. Այլ որք ախորժեն զնոյն խորհիլ և գործել զչար, ընդ նմ̃ պարտաւորեալ տանջին զանմահ մահն. Զօրէնս ա̃յ և զիրաւունս՝ երեւելի արարածովքս իմացեալ տեսանեմք. հ– 1020. Զի անձրևք պիտանիք և շահեկանք և ցօղք՝ զենանոցն ա̃յ բացայայտեն զպէտս արարածոց. Իսկ որոտմունք և կարկուտք և հրացանութիւնք՝ գուշակեն մեզ զահեղ զբարկութիւն և զպատանալիս ամբարշտաց և մեղաւորաց զոր յայտնելոց է ՚ի վախճանի. Զի և ջրհեղեղն համաշխարհական վ̃ն անի̃եց և պղծոց և անօրէնաց ՚ի տ̃նէ եղև, ջնջել ՚ի յերկնէ և ՚ի յերկրէ զմարդ և զա̃մ կենդանիս. զի զանօրէնսն պատուհասեաց և զարդարսն պահեաց ընդ ամենախնամ ողորմութի իւրով ՚ի ձեռն տապանին և զայլ ևս չնչաւորս Թողլով ՚ի ս̃բ սերմանս. Իսկ զՍոդո-մայեցիսն սատակեաց հրով և ծծմբով. զի հրով



ցան

ցանկութ՟ե և զաղէր գիձութ՟ն ապականելք էին.
և զարդարն զղովտ ապրեցոյց 'ի դառն հարուա֊
ծոցն սատակման. Որ հող և ջուր և քար և
տունկ և բոյսք բնակչօքն հանդերձ տոչորեալ
հրդեհեցան. Նաև այսօրիւք ցուցեալ եղև ա՟մ֊
բարշտաց և անիրաւաց սատակագոյն սատակումն
յարդար դատաւորէն ա՟յ, և փրկութ՟ի արդարոցն
'ի խնամակալ սիրոյն. Նաև այժմ տեսանին 'ի սա֊
դոմ և 'ի գոմոր բարկութ՟են ա՟յ պատիժք 'ի հող և
'ի ջուր և 'ի քար և 'ի տունկս. Զի տեսեալ
զայնոսիկ արհաւիրս այժմ երկիցեն 'ի բարկու֊
թ՟են որ գալոցն է. ոյք զմեղս իւրեանց ո՟չ ըղ֊
սոդոմայեցւոցն պատմեցին և յայտ արարին ա֊
ռե մարգարէն. Եսայի 3. 6. Նաև այլ ևս, գայ֊
ցեն յաղագս մեղաց սով և սուր և գերութ՟ի և
տարաժամ մահք. և պէսպէս ցաւք և հիւանդու֊
թիք և վտանգք առ 'ի խրատ և յանդիմանութ՟ի.
զի զղջասցին և ապրեսցին 'ի բարկութ՟են որ
գալոցն է յերկնից.

Արդ յամօթ լիցին ոյք ասեն զա՟մ խորտու֊
պատուհասիցն ա՟ն և ոչ զամենակալն ա՟ծ.
Զի յումէ է՝ օրէնադրութ՟ին է նո՟ր. և հրաման
պատուհասիցն և ողորմութ՟ին ըստ իւր խորին
իմաստութ՟են և մատակարարութ՟են. Զի բանք է
ա՟մ մտաց. որ զմտերմաց զհանդէսն յայտնէ իւ֊
րեանց սիրոյն և երկիւղին. վկայութ՟է բարեբար
երախտեայն 'ի բարեբար կամացն յարդարեալ.
Զի ա՟ծ ցուցանէ զա՟ն սիրոյն իւրոյ զերախ֊
տիսն զտեսչութ՟ի շնորհաց իւրոց առ հնազանդ֊

և ողջախոհս․ զի ամ որդւոց՝ մտերմացն ժառան-
գութի և կեանս պատրաստեաց ամ բարեօք․
Իսկ որ ցուցանեն զարհամարհութի առ օրէնսն
և զանհնազանդութի առ կամս նր, և գնան խոտո-
րնակս և անխտիր յաղտեղի ախտս և յամ դժըն-
դակութիս մեղաց․ Վս այնոցիկ գայ բարկութին
այ ՚ի վր որդւոցն անհաւանութե (տես առաքելն․)
եփե․ 5․6․ Զի ցուցցէ զիւր արդար իրաւունսն
արդարոց և մեղաւորաց․ զարդար դատաս-
տանան յերկրի և ՚ի հանդերձեալսն․ որ կան և
մնան երանութիքն և տանջանքն․ Զի հարուածք
որ գան յաշ, վս մեղաց է իմանալ․ զի զղջասցին
զգաստասցին և դարձցին յապաշխարութի փրկութե․
Այլ առ այսորիկ ասէ տր մարգարէիւն, մխիթա-
րեցէք քահանայք զժողովուրդ իմ․ զի լի՛ եղև
տառապանօք․ Թողեալ լիցի դմա մեղք իւր․ զի
ընկալաւ ՚ի ձեռանէ տն կրկին զհատուցումն
մեղաց իւրոց․ Եսայի 40․2․ զի հարուածք՝ դար-
ձելոցն ՚ի թողութի մեղաց լինին պատուհասիքն
՚ի վր եկելոցն ՚ի տնէ․ Զի ես եմ (ասէ տր)
որ սպանանեմ և կեցուցանեմ․ հարկանեմ և
բժշկեմ․ և ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ ՚ի ձեռաց
իմոց․ 2 օրէ 32․ 39․ Զի զամ ակնկալութի արա-
րածոց դարձուսցէ ՚ի ճշմարիտ կենդանի լոյսն․
զի մի՛ մոլորեսցին զկնի սուտ կարծեաց․ այլ
զած այնոցն իմասցին զճշմարտութի աւանդիցն ՚ի
սբ գրոց և յուղիղ հանդամանաց․ Այլ որոշել
յամ սընոտի կարծեաց, ՚ի մշտնջենաւոր երանու-
թեան վերացուցեալ լիցին հանապազ․ Վս այ-

սո

սորին մտօք և զգայութիւք իշխանական կամաց՝ ըմ
են ածշնորհիւք իմաստութե. առաջնորդել յած
առաքինասէր վարս յերևելիս և յաներևոյթս.
Զի նովաւ կեամք և շարժիմք. և նովաւ յա-
ռաջիկայն ընթանամք ՚ի բարիսն միշտ. գործ 17.28
յաղագս աւետեաց և անսուտ խոստմանցն.
Զի նա է արարիչ մեր և մեք արարածք նր. եսա 64.8.
Զի մեք կարդասցուք զնա հայր մեր՝ առնելով
զկամս նր. և նա ասասցէ՝ որդիք իմ էք. և ես
ընկալայց զձեզ ոգւ սիրով. Եւ և ես՝ եղէց ձեզ
հայր. և դուք եղիջիք ինձ ժողովուրդ ասէ տր
ամենակալ. 2 կոր 6.18. Նա՛ զի ասէ մրգրէին,
եկայք որդեակք իմ լուարուք ինձ. և զերկիւղ
տն ուսուցից ձեզ. սաղ 33.12. Նա՛ եւս մեզ
որդին այ՝ հայր կոչել ըստ բնութե հօրն իւրոյ
զած մեր. մտթ 6.9. Նա՛ ոչ համարեցաւ զմեզ
անարգս՝ հաղորդս առնել իւր եղբայրութեն և
ժառանգաւորս իւր արքայութեն. Նա՛ հայր ՚ի
վերուստ ասէ զախորժելութի որդւոյ և առնել զկամս
նր. և զած որ ինչ ՚ի հօրէ ասացաւ. յոհ 3.17.
Նա՛ վն հոգւոյն ասէ, նա եկեալ ուսուսցէ ձեզ
զամ կամս հօր և որդւոյ ՚ի փրկութի. յոհ 6,13.
Զի ՚ի հօրէ և յորդւոյ և ՚ի հոգւոյն սբյ ազատեալք՝
առցուք շնորհս և կատարեսցուք զառաքինութիս.
Բայց զարմանալ արժան է զի անուանք արարչին
յարարածս խոնարհեցան. հօր՝ առ հայրս. որդւոյ՝
առ որդիս. և հոգւոյն սբյ՝ առ հոգիս մարդկան.
զի այսու իմասցուք զառաւելեալն ՚ի մեզ զսէր
սիրոյն իւրոյ զնախախնամութիւն. Ապա եթէ

զայսքան երախտեաց և առաւելեալս 'ի մեզ տր սիրոյն զանց արասցուք, մի թէ անիրաւ ինչ է ած որ ածէ զբարկութի իւր 'ի վր այնոցիկ որ զբարերարութեն զսէր արհամարհանօք արհամարհեցին. և թողութն 'ի մտաց զյիշումն առատ պարգևաց նր և տբ սիրոյն զոր եհեղ 'ի մեզ առատաբար. հռոմ 3.5. տիտ 3.6. Նաև ոչ 'ի ձեռն մովսեսի առն այ ասէ դատաստանն, որ ապականէ բռնաւոր այր զկին տկար յոչ կամաց, անզօր եղեալ 'ի նր զօրութն, այրն մեռցի, և կինն կացցէ ըստ արդար դատաստանին. 2 օրէն 22.25.

Նոյնպէս իմանալի է մեզ զայնցի 'ի մեզ զխալանս ինչ իրաց խորհրդոց և կամ շարժման անդամոց. Զի ասէ մարգարէին տրն, անձն հօր իմ է. և անձն որդւոյ իմ է. և անձն որ մեղիցէ՝ 'ի նոյն և մեռցի. զի 'ի կամաց է մեղանչել անձին. Նաև դարձեալ ասէ ցարդարն, կեալով կեցցէ որ զարդարութն զհետ երթիցէ. և մեռանելով մեռցի որ զհետ անիրաւութե երթիցէ. եզեկ 18.4.5. Զի արդար է տր և ուղիղ են դատաստանք նր 'ի վր արդարոց և մեղաւորաց. Նաև անձնիշխան կամօք կարօղ եմք զած 'ի բարի կամս դարձուցանել 'ի ձեռն բարի գործոց. և դարձեալ 'ի պատուհաս ընդ չար գործոց. զի 'ի մեր կամս է վայելել 'ի բարիս և կամ արտաքսիլ. Զի ոչ կամի զմահ մեղաւորին. այլ զդառնալ նր 'ի չար ճանապարհէն և զկեալն ապաշխարութբ. եզեկ 18.23. Զի ողորմած եմ ասէ տր և ոչ պահեմ ոխս դարձելոցն յուղղութիւն. երեմ 3.12.

Զի որում արժան է գթալ և կամ ողորմել և կամ ներել՝ ոչ անտես առնէ. այլ որ մարդասէր բժիշկ բժշկէ զներքին և զարտաքին անդամսն և զանբժշկելին ՚ի բաց կտրէ որ յայլսն ըզ
փոխան չառնիցեն. Ղուկ 13.7.

Զի որք ոչ դառնան յապականեալ վարուց, յուշ լեցին նոցա ջրհեղեղին կորուստն. և սոդոմայեցւոց տոչորումն և սատակումն. որ ասա դառնեցան և անդ դառնալոց են ըստ տն բանին որ յաւուրսն. Ղուկ 17.26. Իսկ որ զղջանան և դառնան յա պաշխարութի նման նինուէացւոցն, զապառնալեաց բարկութին և զեկեալ պատիժսն ՚ի տնէ ըստ մար գարէութեն յունանու յողորմութի դարձուցա նեն. և այցելութիւն տն կանխէ ՚ի նոսա և ընդ
ունին զխնամս որք սխալոյն 3.10.

Իսկ որք խստացուցանեն զսիրտս իւրեանց նը մանութն փարաւոնի, զնոյն հարուածսն կրես ցեն. որ ոչ լուան մովսեսի և ահարոնի զան ՚ի
յայ պատուիրեալս նոցա. Ելից 5.2.

Այլ որ անդէն սատակեցան իւրովքն, և ժողո
վուրդքն այս ապրեցան. Ել 24.28.

Զի մի է ած և արարիչ երկնաւորաց և երկրա ւորաց. Ընծնեցիւ կամս արարեալ զհրեշտակս և զմարդիկ. և ՚ի նոցանէ կամակար մտք չարք ո րոշեցան ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ. Այլ ան մարմնոց և մարմնաւորաց որք փառք և պատիք պատրաստեալ կան ՚ի տնէ. Այլ պատիժք և տան ջանք և դժոխք դիւաց անմարմնոց չարաց, և մարմնաւորաց ամբարշտաց և պղծոց. ըստ իւրա

քանզի և սրբոցն արժանեաց յարդար դատաւորէն այ․
Ո՞ է 'ի գործոց չարաց ունին զանուանն դևք․
Հանդէտ իւրեանց և մարդիկ չարք և կախարդք
և պիղծք յուսաչեկեալ 'ի չար անդր և միաբա-
նեալ ընդ չար դևսն։ Այլ որ կամի 'ի հակառա-
կացն փախչել և հրեշտակ լինել, ածասէր լիցի․
և զհաճոյս նր արասցէ յամ սրտէ և յանձնէ և
'ի զօրութէ։ Եւ զընկերն սիրեսցէ որպ սիրով
երեւելեօք և աներեւութիւք․ և ամ բարեօք ե-
րախտաւոր լիցի հեռաւորաց և մերձաւորաց․ որպ
առողջ անբիծ անարատ միամիտ հաւան հլու
հնազանդ խաղաղարար Ճշմարիտ մեկնեալ յամ
իրաց չարաց։ յոբ ։։ Սիրել զբարին և ատել ըզ
չարն․ և 'ի գործոց զբարի առնել և 'ի փառս լինել․
Եւ որ 'ի բարուոյն մեկուսանայ, նմանօղ լինի
սատանայի հակառակ բարւոյ․ Անհնազանդ, մեղա-
ւոր, հպարտ, ամբարտաւան, խորամանկ նենգա-
ւոր, սուտ, բանսարկու, խռովարար, չարասէր և
ոչ բարեսէր․ Մեկնեալ 'ի Ճշմարտութենն, և զչար
գործոցն զանուանն առնու չար․ և զհատուցումն
բարկութե անմահ տանջանացն․ զի որ արժանեցն է
պարգևք և պատուհասք։ Այլ մտաւորաց և բա-
նաւորաց՝ եւ զանձնիշխան կամսն 'ի պատիւ և
'ի փառս զի փառաւորեսցեն զբարեգործն ած
առաքինասէր վարուք․ Եւ յանձնիշխան կա-
մացն յօրինեսցեն պսակս հրեշտակային կարգա-
ւորութեն․ և շնորհս ընկալցին 'ի տնէ յաղագս
հանդիսաւոր և որպ վարուցն։ Առաքելութե․
մարգարէութեան․ քահանայութեան․

Ո՞ է

Զի ճշմարտեալք ըստ ա՟մի աւուրց զարքայութիւն
պատրաստեալ. Զի որ ա՟յ սեպհական է ար-
քայութիւն, և մեզ կամեցաւ սեպհական առնել՝ ի
ձեռն ուղիղ հաւատոց և ճշմարիտ վարուց վ՟ն
բազում սիրոյն որ սիրեացն զմեզ և եցոյց զե-
րախտիքն իւր. Այլ որոյ վարք անո՟յք և պղերգք
են յառաքինութիւն, և են մոլախայք և մեղսա-
սէրք, նոքա անարգ են. և նուաստեալ են ՚ի փա-
ռացն ա՟յ. հռոմ 3. 23. Ազարտին անարգ են. ան-
կանին ՚ի շնորհացն քո՟ի. յամօթ և ՚ի նախատինս
ամեցուն. Այլ վ՟ն այսորիկ ա՟ծ և տէր զարքայութիւն
արդարոց պատրաստեաց. և մեղաւորաց զպատիժս
պատուհասիցն. զի ծանիցեն ամէն զուղիղ դա-
տաստանն արդարոց և ամբարշտաց. Այլ մի ոք
զարմասցի որ ասէ նեղէ ա՟ծ. զի քաղցրութիւն
ա՟յ տանէ՝ զնա յապաշխարութի ածէ. հռ 2. 4.
Այս եթէ ոչ զղջասցին, առանց ողորմութե դա-
տեսցին յաւուր բարկութե երևմանն. Այլ տես-
ցեն մեղաւորք զփառս արդարոց, և կորացեալ
հաշեսցին ՚ի տխրութեան և յամօթն յաւիտենից.
Որ յերկրի աստ՝ մեծ գոլ զինքեանս քան զոր-
դարն համարեալ, հպարտութիւն ոչ թողացուցա-
նէր տեսանել զի՞նչ արդարքն իցեն և զի՞նչ մե-
ղաւորքն. Բայց զկնի վճարելոյն՝ երևի արդա-
րոց փառքն և մեղաւորաց ամօթն յաւիտենից.
Այս այս յայտնի է. զի ոչ տոհմից փառաւորու-
թի փառաւոր առնէ զոք առ ա՟ծ. այլ առաքի-
նութե բարեպաշտութի. Զի ՚ի հայս ոչ ինչ
մեծագոյն և ՚ի պարսս՝ քան զարշականեց տոհմ.

որ

որ և յաբրահամէ սերեցան աստ, նաև ամ ազգք և թագաւորք երկրի ըստ անուան բանին տն ամենեցուն: Ծնն 17. 6. Այլ եթէ ոչ զգաստացին ՚ի բարիս, աւելի պատուհաս ընկալցին ՚ի տնէ. Իսկ ծառայք նց հաճոյ եղեալք այ, թագաւորեալք փառաւորեցին ՚ի տնէ. Իսկ նոքա պարտաւորեալք յաղագս մեղացն պատժեցին յարդար իրաւանցն այ. Իսկ թագաւորք և իշխանք և դատաւորք իրաւախոհք և արդարակըշեալք յիրաւունս այ, և արդարադատք ըստ հոգւոր մասինն և ըստ մարմնաւոր, որքան և այլւոյն տեսուչք և ամ գլխոց խնամակալք, Նոքա՝ են հիմունք բարեաց. որ հաստատեալունին զաշխարհ հնարագիտութեն իւրեանց ՚ի հնարս օգտոյն ամենեցուն արարչին. որով Տէրին բարին յառաջանայ ՚ի գովեստ փառաց շնորհացն այ. ՚ի գովութիւն ամենազօր տէրութեանն

Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ.

Որում պատիւ իշխանութի և փառք վայելէն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.

Իսկ

Նորակերտեալ Սբոյն Գրիգորի Ս. տեառն Խաչատուր
Որ 'ի Ջուղայոյն մեր դարձելեցուց աստ էջ էրն։

## Ճառ ԻԱ

Սրբաւ են խնամք տեսչութե արարչին. եւ լուսաւորութի առ յօրինուածս արարածոց իւրոց։ Զի որում շատն տուաւ՝ բազումս խնդրեսցի զարմն ի բարեացն այ. եւ որում սակաւն՝ յաւելուածս շահիցն ըստ առաւելոյն առցէ զշահն։ Որպ յատակս տաղանդացն է իմանալ յաւելուածոյն 'ի սակաւուցն. ընտրողական միտք զոր ետ ած հրեշտակաց եւ մարդկան։ Մտթ 25. 21։ Զի լցեն արբանեակք բարերար կամացն այ եւ քարոզք շնորհաց նր, սերմանել զերախտիս նր ընդ ամ արարածս հաւանական կամօք եւ ընտրողական շնորհօք։ Նաեւ զի գոն առաւելութի իմաստութե եւ զօրութե եւ մեծութե յերկինս եւ յերկրի. Զայս լուսաւորական ուխտ գիտութեն այ կարգեալ է 'ի մեզ. զի որ բազում առաւել սիրեացէ, զբազում առաւել բարիս ընծայէ անն այ։ Ղուկ 7. 47. Իսկ որ սակաւն, եւ այս յայ խորհն գիտութեն ըստ կարին եւ ըստ մտերիմ շնորհացն զիրաւն խնդրէ։ Նաեւ դարձեալ՝ որ դժնդակ փորձ ունին, եւ առ նա է զանազանութի ամէնն չարի եւ կամ նուազ. Նաեւ որք դատնան, ոչ անոտես առնէ 'ի խնամոց սիրոյն. Թէպէտ եւ արբանեակք եղեն չարին 'ի կամակար մտաց. զի այսու ցուցցէ բարերարութե

խնամքն. զի մի՛ ոք կործեսցէ ակնածութ̄ բաշ-
խել զշնորհս յարարածս. Հռոմ՛ 2. 11. այլ ըստ
արժանեացն առնէ այցելութի և անարժանիցն
թէպէտ և ոչ զգան. զի խնամարեալ է առաջնոր-
դական միտքն և ոչ տեսանեն զլոյսն իւրեանց.
Ոչ է մտահասական խորհուրդք երկրաւորաց ոչ
թողացուցանեն տեսանել զպատուհասն. այլ 'ի հոգս
վնասակարս ծփին. յորոց բարի ինչ ոչ յառաջա-
գայի, այլ՝ չար. Նա՛ վ̄ն այսորիկ արգելեալ է 'ի
նոցանէ որք սիրոյն կամքն և առաքինութ̄ե յօժա-
րութիւնքն և բազմադարման երախտիքն կատարել-
հանդիսիւք և բազում համարձակութ̄ և Ճշմարիտ
հաւատով. որ̄ զի արժան լինէին լինել արքա-
նեակք Ճշմարտութ̄ե 'ի կամս և 'ի փառս անձինն
և այլոցն. Նա՛ եթէ արդարոյն միայն է բազմա-
ցուցանել զմիտս իմաստութ̄ե, երևէր թէ յա-
ղագս այնորիկ յառաջանան արդարքն յառաքի-
նութի. այլ ամենայն է իմացն. Այլ զարդարան՝ ո̄յ
երկիւղն յորդորէ. և զմեղաւորսն՝ աներկիւղու-
թին լքուցանէ. Նա՛ վ̄ն այսորիկ մեղան և խա-
ւարեցան 'ի խորհուրդս իւրեանց և կուրացան
մեղօք՝ անմտութ̄բ. Որք զանձինս իմաստունս
համարեցան և յաչս անձանց իւրեանց խորհրդա-
կանք. Հռոմ՛ 1. 22. և զՃանապարհս իմաստութ̄ ոչ
ծանեան. 3. 17. զի ոչ է ուր երկիւղ ա̄յ առաջի
աչաց ն̄ց. 18. Նա՛ վ̄ն այսորիկ ապականեցան և
պղծեցան. զի ը̄ ուղիղն ոչ գնացին. Բայց ա̄ծ-
ասիրոց իմաստութիւնն առաջնորդէ յարդարութիւն
ա̄մ 'ի լսելն և յառաւելն. զի միշտ անքակ մնա-
ցեն

ցեն 'ի վերին իմաստութենէն․ որ է՝ ս՟բ և խաղա-
րար և լի՛ պտղովք բարեօք․ յա՟կ 3․17․

Զի ստուգութե կարգօք լուսաւորեալ՝ 'ի միտ առնու զարդարութի ճշմարիտ և ուղղէ զիրա-ւունս արդարութե և ճշմարտութե միշտ․ առ՟կ 1․3․

Զի իմաստութի խօսիմ ընդ կատարեալսն․ որ գիտեն որոշել զմշտնջենաւորսն յանցաւորացս․ զիմաստութի ոչ զաշխարհիս այսորիկ զխափանեցելոց, այլ՝ որ յա՟յ արդարութիւքն են ճշմարիտ հաւատովք և ս՟բ սիրով․ 1 կո՟րն 2․6․ Արբութիւն և խոնարհութի․ հեզութի և ճշմարտութի․ ա՟մ առաքինութեամբ յորդորեալ աՀիւն ա՟յ․

Զ գուշանալով ամենապատիր պատրանաց․ որոշել ընտրողական իմաստիւք զբարին 'ի խորհրդոց և 'ի բանից և 'ի գործոց․ Զի դուռն կենաց իմաստութե 'ի բաց է․ և հակառակորդք բազումք գործակցաւն բանսարկուին որսան ըզ մարդիկ 'ի կորուստ․ Եւ այլ ա՟ծ ոչ թողու զյուսացեալս և զապաւինեալս իւր որ կարդան առ նա 'ի տուէ և 'ի գիշերի․ և խնդրեն զողորմուի և զյաղթութիւն առ ա՟մ փառակարութիւնս դիւաց․ ղու՟կ 18․7․

Զի փառաւորեսցի ա՟ծ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն․

## ՙՆորին Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Վասն անփոփոխ ինքնութե էութեանն Այ.

### Ճառ ԻԲ

Որ տկարութի դնէ Ածութեն զօրութե, արտաքոյ ճշմարտութե հաւատոյ է. Զի ասեն, երբեմն կարող է և երբեմն ոչ։ Անմիտք, եթէ Ած տկարանայ, ո՞վ է որ զօրացուցանէ զնա. ՚Ի բաց լիցին չար վարդապետին չար ուսմունքն. զի Ած կարող է և կատարեալ. ոչ երբէք նուազի ՚ի կատարելութենէն և ՚ի զօրութենէն. այլ զամենն լնու և զօրացուցանէ. և ինքն յումեքէ ոչ լնուի և ոչ զօրանայ։ Վասն այսորիկ արարչութեն անուն հաստատեալ կայ միշտ ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ. յառաքելոց և ՚ի մարգարէս և յամ սրբս. զի եղիցին վկայք ճշմարտութեն Ածգիտութե և արդարասէր և Քսի փառաց։ Նմա զօրութի և նշանոք և արուեստիւք՝ ՚ի նոցանէ փառաւորի Ած.

Նա ոչ օգնութի առնու արարիչն յարարածոցս. այլ նա նոյն է օգնական և զօրացուցիչ վերնոցն և ներքնոցս։ Զի ըստ մարգարէին ասէր Ած, մինչչև ստեղծեալ էիր յորովայնի գիտէի զքեզ. և մինչչև ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ շնորհօք մարգարէ։ Երե՛ 51.։

Նոյնպէս ըստ կանուխ գիտութե իւրոյ հրաւիրէ և կոչէ և արդարացուցանէ և փառաւոր առնէ սիրողն. Հռո՛ 8. 30։ Զի Ամ արարածք՝ են յա-

բարչէն. և միշտ կարօտանան օգնականութե նորին. և ոչ արարիչն արարածոցս: Զի անփոփոխելի է ա͞ծ. և փոփոխումն ունին արարածքս. ո͞րպ տղայն յերիտասարդութի. և երիտասարդն ՚ի ծերութի. և ծերն յապականութի: Եւ ո͞րպ գարունն յամառն. և ամառն յաշունն. և աշունն ՚ի ձմեռն. որ խափուցանէ զա͞մ կենդանեաց զյօրդորումն. և զտնկոց և զբուսոց: Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակի սահմանելոյն ա͞յ զերկանութի աւուրց և զպակասութի: Ի ծագաց երկնից մուտ են ելք նր. հանգիստ նր ՚ի նոյն. և ոչ ոք

իցէ որ թաքիցէ ՚ի տապոյ նորա լուսոյն:

Եւ այսպէս կայ ՚ի սպասաւորութի ըստ հրամանի արարչին առ արարածս: Նմանապէս և լուսինն զիւրն ունի զսպասաւորութի. ՚ի ժամանակաց ըղ փոփոխումն. ՚ի մաշիլն և ՚ի լնուլն: Զի նովաւ ծանիցուք զմաշումն երկրաւորացս և զնորոգումն ՚ի յարութեն: Այլ և աստեղք սպասաւորեն ՚ի գիշերի նաւագնացից. և ըստ այլ ևս շարժմանց առ ՚ի պէտս մարմնաւորաց: Այլ ոչ ըստ հեթանոսական բաղբանջմանցն որ բախտ և ծնունդս ասեն: Զի ա͞ծ է որ արար զա͞մ և յօրինեաց և սահման եդ. և ոչ անցանեն ընդ կարգն: Եւ ա͞մ արարածք ՚ի նմանէ են. և կան և ունին ՚ի խնամակալ զօրութէն: Յօդուածք իմաստութե և գիտութիք հնարից և արուեստք պիտոյից և կարգք յօրինուածոց և կշիռք չափուց ՚ի տեսչութե և ՚ի խնամոցն ա͞յ են յօրինեալք: Եւ չիք ոք գեր ՚ի վերոյ քան զնա և կարօղ որ ՚ի նմանէ

առ.

տանուցաւ զհնարս գիտութեան կամ զօրութեան. Զի ինքն իսկ է ած յամի աղբիւր բարեաց. որ ընու զերկինս և զերկիր և որ ՚ի նմա արարածք են. Որ յոչընչէ արար զամ. և դարձեալ եղծանէ ամ կամի. Նորա է յառաջ գիտութիւն և հանճար և իմաստութիւն և զօրութիւն. Ով և յարարածս է տեսանել. որ զօրութբ բարձրելոյն ունին զջուրն երկինք որ ՚ի վերոյ քան զնա. և երկիր զծով և ըզ գետս և զլերինս և որ այլ ևս արարածք են. Նա՛ ոչ կարօտանան սեանց և օգնականի և հիմանց երկինք և երկիր. այլ զօրութբ նր պահեալ կան և ոչ ապականին առանց նր. յոբ 38.

Նրդ՝ որպիսի պատիժս է պատրաստեալ որ խօսին զայս հայհոյութիս. Նոքա՛ ուրալք զօրութն առնուն. նոքա՛ արդարք խրախուսին և յաղթեն հակառակորդաց բռնաւորաց. և հանդիսանան պահել զպատուիրանս նր և իմաստանան ՚ի բարիս. Ով է վերակացու և օգնական վտանգելոց ՚ի նեղութեան որ առնէ ընդ փորձութեան զելսն 1 կոր 10. 13 եթէ ոչ նոյն ած.

Այլ և զայնս յետս հարցուք զչար լեզուսն, որ ՚ի վերին զօրացն պէտս ունիլ օգնականութե կամ յերկրես արդարոց ասեն զամենակալն ած. զի ոչ ինքն ՚ի նոցանէ առնու զօգնականութիւն, այլ՝ ապաւինութիւն վն այնոցիկ որ ժառանգելոցն են զփրկութիւն նոքօք ըն կամաց արարչին. եբ 1. 14. Զի նր իսկ են արարածք վերին զօրքն յանդգոյից արարեալք. և ՚ի նր շնորհացն ընտրեցան մեք ՚ի մարդկանէ. Որ զմտաւորս և զանմաւորս

հաստատեաց ՚ի յանձնիշխան կամսն, և դարձեալ
փառաւորել զողջախոհսն ՚ի միասին զերկնաւորսն
և զերկրաւորս. որք պահեցին զհրամանս նր և
ժառանգորդք արքայութե նր եղեն։ Եւ՛ եւեւս-
ցի ած ած յամի հրշտկաց և մարդկան է հանուր։
Զ ի բանիւ տն երկինք և երկիր հաստատե-
ցան. և հոգւով բերանոյ նր ամ զօրութիք նր։
Եւ՛ յաղագս այնորիկ գ մանկունքն ՚ի հնոցին
զամ արարածս ՚ի փառաբանութի ամենակալ և ամե-
նազօր և ամենապարգև տրութեն յորդորեին
համապազ։ Քանզի ասեն, օրհնեցէք ամ գործք
տն զտր. օրհնեցէք զարարիչն երկնի և երկրի
և որ ՚ի նմա արարածք իցեն որ երևեին և որ ոչն
երևեին. Զ ամենայնն յանուանէ կոչեն ՚ի գո-
վեստ օրհնութե և փառաբանութե ամենատր ան-
ուանն այ ընդ միաւորս և բանաւորս. Զ տիւ
և զգիշեր. զլոյս և զխաւար. զծով և զցամաք.
լողակօք և զեռնօք. Զ գազանս և զանասունս.
զսողունս և զթռչունս. զամպս և զանձրևս. զե-
ղեամն և զձիւն. զցուրտ և զտօթ. զօդս և զը-
մրրիկս. զառուակս և զծովս. զլերինս և զբլուրս.
զդաշտս և զանդունդս խորոց. զվիշապս և զը-
կէտս. զհուր և զջուր աղբերաց և գետոց.
՚Ի վր ամի զինչ կոչէ յօրհնութի. Զորոց ընտ-
րեալ հարքն և մարգարէքն և առաքեալքն՝ և ամե-
ցորդք ըստ ընտրութե շնորհացն՝ երևեցան ծռյք
այ բարձրելոյ և քահանայք ան. Հռ. 11. 5.
Եւ՛ անձինք և հոգիք արդարոց և սրբք և խո-
նարհք սրտիւ՝ ՚ի վր ինքեանց աւարտեն զօրհ-

նու

նուէրս առ ած զի մի՛ այլ ազգ ինչ թուիցին․ Այլ զի ծանիցեն ամենեքին եթէ և նոքա արարածք են ածոյն արարչին․ Զորս ՚ի փառաբանութն կոչեցին հոգևոր երգով անուանմբք․ Որ և մեզ աւանդեցաւ այս հոգևոր երգս․ զի այսպիսի հոգևոր երգոց յօրինուածովք՝ խորհրդածութբ ըստ տօնից, ըստ քսի մարդանալոյն, և մերոյ փրկութն, և նահատակութն սրբց կիշատակաց, և զղջման ապաշխարողաց, և հանգուցելոց յայսմիկ շարականեալ, օրհնեսցուք գովեսցուք և բարձր արասցուք զամենասբ զԵրրորդութին Որ սրբար զամ արարածս և ետ մեզ մխիթարութի և յոյս բարի ՚ի փառս իւր․ Զի է որ անսկիզբն է և անիմաց և մշտնջենաւոր և աղբիւր ամ բարութեց վերնոց և ներքնոց, նր իմաստօքն ՚ի բարի գործս արարան և կան ՚ի կամս նր միշտ ամ եղեալք․ Որպէս գոյութի բնութեցն եկամուտ է, այսպէս և ամ ինչ որ ըստ նոցայն է ըստ իւրեանց կարգին եկամուտ է․ իբրաւ գիտութ և իմաստութ․ Նա ամ քաջաց և առաքինեաց է զօրավիգն․ որ ՚ի չգոյէ ՚ի գոյ էած զերևելիս․ և փառաւորս արար զսբս և զարդարս․ և հրաւիրանօք կոչեաց յիւր արքայութին և ՚ի փառսն․ Հռոմ 4․17․ 8․28․

Յանկախելի երանութին, յանսպառ բարիսն, և յանեղծ և յանվախճան կենսն․ Ուստի հեռի են տըրտմութիք և տխրութիք․ և մերձ միշտ անմատոյց լոյսն․ ՚Ի փառս և ՚ի գովութի և յօրհնութի ամենասբ Երրորդութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ․ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն․

## Լուսաւորչին Մեծին Գրիգորի Խրատ ճգնաւորաց եւ Յաղագս Յանդիմանութեան Աստուածութեան Յորդորութեան։

### Ճառ ԻԴ

Ամենայն որք որ հրաժարեցան յաշխարհէս եւ ընծայեցին զանձինս այ, ՚ի հնազանդութիւն ճշմարտութեան որք հարցն աւանդից, կուսութեամբ ճգնաւորեալք յաղագս խոստացելոյ աւետեացն, զգոյշ կացցեն ՚ի խորհրդոց եւ ՚ի բանից․ զի մի՛ խայթեսցէ դարանակալ օձն․ Ծննդոց 21․6․ եւ խափանեսցէ ըստ այ զգնացս սրբութեան եւ արդարութեան առաքինասէր վարուց։ Ամենայն հոգեւոր խրատուց անխարդախ կեալ․ եւ իւրաքանչիւր չարի յօրինել զներհակն։ Բարկութեան՝ հեզութիւն միշտ․ անզգամութեան՝ հանդարտութիւն․ թշնամութեան՝ բարերարութիւն․ անհնազանդութեան՝ հնազանդութիւն․ ստահակութեան՝ հաւանութիւն․ անհամբերութեան՝ համբերութիւն․ ոխակալութեան՝ անոխակալութիւն․ մախանացն աննախանձութիւն․ դառնութեան՝ քաղցրութիւն․ չարութեան՝ բարերարութիւն․ անգործութեան՝ գործաւորութիւն․ մեղկութեան՝ առջնութիւն․ արատութեան՝ համեստութիւն․ կատականացն եւ ծաղր՝ արտասուս․ ատելութեան՝ զսէր որ ունիլ․ տրտմութեան՝ զուարթութիւն․ փորձանացն երկայնմտութիւն ագահութեան՝ չափաւորութիւն․ ընչասիրութեան՝ արհամարհանս․ պատուասիրութեան՝ նուաստութիւն․ թերահաւատութեան՝ հաւատս ճշմարիտս․ եւ որ այլ եւս են չարիքն մերենայք․ որովք ընդդէմ ճշմարտութեան

պատերազմ առնէ ։ Ընդ աչս ․ ընդ լսելիս ․ ընդ
ունչս ․ ընդ ճաշակելիս ․ ընդ լեզուս ․ ընդ ձեռս ․
ընդ ոտս ․ և ընդ սիրտս որ խորհրդոցն է ընդու-
նարան ՚ի լուծս կամ ՚ի վատթարս հակամիտել ։
Զոր պարտ է վերագոյն լինիլ ամ փաստակարաց
առաքինասէր վարուք ըստ յառաջ ասացելոց հան-
գամանաց խրատուց որ ընդդէմ չարեաց զպա-
տերազմն առնէ ․ ընդ յարուցեալսն ՚ի վր ճգնա-
ւորաց ճակատամարտս ։ Զի միշտ յայտնի է
մարտ մեծ ․ և դարձեալ յաղթութի մեծագոյն
որովք հակառակամարտն կործանեսցի ․ որ յայտ-
նի է պանծացեալ և հրապուրանօք յուսոյ յաղ-
թել նորանորիցն ։ Բայց դու ով անձն որ ըն-
ծայեցար այ , մի զնա քեզ խորհրդակից առներ-
այլ մարտիր զօրութք մարտն ․ և բուռն հար զայ-
սոցիկ խրատուց ․ անմոռաց ունելով զախոյեանն
տր ճգնաւորաց ․ որ շաղեն և պատեն զհոգիս և
զմարմինս ։ 1 Տիմ 6 ․ 12 ։ Ուշ առնելով մտերիմ
խորհրդով և արժանաւորապէս ըստ աւետարանին
քի կրօնաւորիլ ։ Մերկանալ զհին մարդն յաշ-
խարհական յանդգնութիս ամ ․ և զգենուլ զնոր
մարդն ամ բարի գործովքն զարդարեալ ներքոյ
և արտաքոյ ։ Մէ և անարատ կատարեալ արդարու-
թեամբ և սրբեալ յամ ցանկութեց երկրաւորաց ։
Նախ զածսիրութեն զհանգամանս յանձինս հաս-
տատել տր սիրով և անկեղծաւոր հաւատով ․ պատ-
րաստ լինիլ ըստ արժանի իւրոյ ընծայութեն յոր
կոչեցաւն ․ յամ բծից անարատ և մաքուր՝ հաճոյ
այ լինիլ ։ Մտօք և ամ անդամօք հաստատուն և

ան

անշարժ և անդրդուելի կալ ՚ի կարգի ճգնաւո-
րական հանդիսիցն։ Մտանիցէ ՚ի հոգևորական
մարտին ընդդէմ հանապազորդեան թշնամեացն.
որ ընդ զգայութիւն և ընդ խորհուրդն ՚ի ներքս
պատերազմի. և յաղթի ՚ի վերին օգնականութենէն.
իմաստութբ հոգւոյն առաջնորդեալ յամ արդա-
րութիս. և ՚ի վայր կործանեալ զհակառակամարտն
բարեձևութբ կարգաց և կրօնից։ Զի զինուո-
րութի ճգնաւորաց ոչ է մարմնաւոր, այլ հոգևոր
յայ առ վանումն չարին։ 2 Կոր՝ 10. 4.

Ընդ անսրբութե զսրբութիւն ՚ի ներքս ամբարել
յամ անդամն. և յանմաքուր խորհրդոյն զող-
ջախոհութիւն ՚ի ներքս ածել յամի։ Արկորատութեն
զպարկեշտութի. արբշռութեն զժուժկալութի. շուայ-
տութեն զհամեստութի. ծուլութեն զպնդութի.
ձանձրութեն զփոյթ. ամբարտաւանութեն զխոնար-
հութի. հպարտութեն զնուաստութի. նախանձութեն
զանոխութի. ստութեն զստուգութի. երդմնահա-
րութեն զճշմարտութիւն. խորամանկութեանն
զկատարեալ սէր։

Որդ՝ զգուշացեալ ամրացեալ կացցես աղօթիւք
և պահօք՝ մինչ սիրով շնորհալից յուսով և բաղ-
ձալից գթով առ այ կամօն. ահիւ և երկիւղիւ
՚ի բարեպաշտութե ջանս յառաջանալ միշտ, և առաւ-
ելուլ ՚ի բարի գործս. և ոչ պակասեցուցանել
յառաքինութեցն վաստակոց յերևելեաց և յանե-
րևութից։ Զի համդամանս չարին խափանեցանել
հանդիսաւոր յառաջադիմութբ. զխառնակութի
զամ ՚ի բաց ընկենուլ և զցանկութի չարեաց և

զմեղս

զմեզ դիւրաշարժս իրաւամբք արդարութե-
առողջութե անարատութե։ Անբիծ երախտեօք
ոչ միայն անհանգիստ կեալ 'ի ճգնաւորական
մշակութեն ըստ բարերար սիրոյն երախտեացն
քոյի. առ հնազանդութին այ և առ որս հաղորդութի
եղե սիրով։ Զի ճշմարտեալ պահեսցի միաբա-
նութին յօդին խաղաղութե անխռով մտածութբք.
առ 'ի կատարեալ հաւանութի և հնազանդութի
եղբայրսիրութեն։ Այլ հաւատացեալ առաջնոր-
դին. որով և զխոստովանութին նոխա ընծայեաց
այ ստուգապէս. որով և զպտուղ ապաշխարութեն
առնէ ը̃ մխալանաց խորհրդոց բանից և գործոց։
Զի զթողութի մեղացն առցէ 'ի փրկչէն վկայութ
առաջնորդին և եղբարցն. և յայնոսիկ անշարժ
հաստատուն ամրացեալ կայցէ 'ի նոյն վանան։
Այլ մի՛ երկմտեսցէ. զի որ երկմիտն է, նման է
հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու. մի՛
ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յայ բարիս։
յակ 1.7. Այլ ճշմարտեալ հաւատով և անբիծ վա-
րուք կատարեսցէ զառաքինութիս ահին այ. 'ի
շնորհաց սբ հոգւոյն զօրացեալ համբերութբ
բազմաւ ըստ առաքելոյն խրատու։ 'Ի նեղութիս,
'ի վիշտս, 'ի չարչարանս, 'ի գանս, 'ի բանտս, 'ի խռ-
ովութիս, յաշխատութիս, 'ի հսկմունս, 'ի պահս, 'ի
սրբութի, 'ի քաղցրութի, 'ի բարութի 'ի հոգ-
ւոյն սբյ յարդարեալ։ 2 կոր 6.5.
Զի որ սիրէն զիս (ասէ տրն,) զպատուիրանս
իմ պահեսցէ զոր սբ հոգին աղեաց։ Ապա ես
և հայր իմ եկեսցուք և օթեւանս առ նմա արաս-
ցուք

ցուք։ յօհան 14.23։ Որքան է մեծութի և փառք
և շնորհք որ տուեալ լինին ամենայն Քրիստոնէու-
թեան։ Զի բնակեցայց 'ի նոսա և շրջեցայց և եղէց
նոցա Ած և նոքա եղիցին ինձ 'ի ժողովուրդ ասէ
Տր ամենակալ։ 2 կոր 6.16։ Արդ՝ որ զայս աւե-
տիս ունին ճգնաւորք, կատարեսցեն զսրբութի
ահիւն Այ. 2 կոր 7.1. անբիծ անարատ և սբ սի-
րով հնազանդեալ ընդ ամենահեշտ լծոյն որ թե-
թեւ է առաքինեաց անձանց և ծանր աշխարհասիրաց։
Զի որս կոչեաց քաղցր ձայնիւ և ասէ, եկայք
առ իս ամ աշխատեալք և բեռնաւորք և ես հան-
գուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ և ուսա-
րուք յինէն զխոնարհութի և զհնազանդութի և
զամ արդարութիս, և գտջիք հանգիստ անձանց
ձերոց. զի լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն,
և բեռն իմ փոքրոգի յաղագս վարձուցն հա-
տուցմանց։ մատ 11.28։ Զի ամ առաքինութիս
դժնդակս զբարուցն շարժմանց առնել խաղա-
ղաբար ազատութբն. և մտանել 'ի նաւահանգիստն
հանդարտութե հոգւոյ և մարմնոյ. և յամ վշտա-
գին հարուածոց չար ցանկութեցն ազատանալ։
Անկնդիր լինել առաջնորդացն խրատուց. և
հպատակ կալ նց հրամանացն. և նոքա մի՛ անհոգ-
լիցին 'ի ժողովրդեանս ուխտին. զի համարս տալոց
են վն նց յաւուրն այցելութե։ եբր 13.17։
Զգեցի յամենեսեան ճշմարտասիրութի. մի բանսար-
կու. մի խորամանկ. մի հակառակօղ առ հրամանս
վ՛րակացուեն. մի՛ տրտնջօղ 'ի գործ և կամ յայլ
ինչ իրս. մի՛ խռովարար և թշնամանօղ։ Զի որ

զձեզ խռովեցուցանէ, կրեսցէ դատաստան ո՛ ոք
և իցէ (առէ առաքեալն) Գաղ 4 · 10. Մ․ճլ ըղ
ձեռ երթալ զխաղաղութե և զմր սիրոյ. և լինիլ
որդի այ և ժառանգակից քնի որ արար խաղա-
ղութի յերկինս և յերկրի։ Նաև հնազանդ լինիլ
և հաւանիլ միմեանց երկիւղիւ այն. Անխզելի
պահել զմիաբանութի եղբայրութե հաւանական
մր սիրովն, որ 'ի միմեանս կապէ և ոչ թողու
քայքայել և անջատել 'ի միմեանց պատճառանօք,
որ զանձանց միայն խնդրեն և ոչ զմիաբանութի
սիրոյն. Զի որ վերակացուն է' զգաստ լինի
առ մերձաւորսն և նախատես առ հեռաւորսն։
Խրատել զեղբարս խորագիտութբ ըստ ժամանա-
կին ըստ ընդունելութե ըստ բարուց սոցին.
Զ կրտսերն խոնարհել յաւ և յերկիւղ այն և 'ի
հնազանդութի եղբարցն։ Հաւանիլ մծցուն 'ի
կամս առաջնորդին եղբայրութեց. ոչ ինչ 'ի գոր-
ծել այն առանց նորին կամացն եղիցի։ Նաև որ
արտաքոյ նորին կամացն խորհի ինչ կամ առէ կամ
գործէ, պարտաւոր է ապաշխարութե. զի զառաջ-
նորդն արհամարհել' զած է արհամարհել.
Զի ասաց տրն, որ զձեզ անարգէ' զիս անարգէ.
և որ զձեզ ընդունի զիս ընդունի. և որ զանձն ձեր
պահեսցէ' զիմն պահեսցէ։ Ղու 10 · 16. Մրդ խո-
նարհութբ և կամաւոր հնազանդութբ նուաճեալք առ
հարկաց օգտութ, կացցեն 'ի հաւանութի այն պատ-
ուիրանին հաւատացել յայն առաջնորդին. Զի
որք ննն' յայն կարգեալ են. և որք դիմակայք են'
կրեսցեն դատաստանս որք և իցեն։ Հռ 13 · 1.

Զի

Զի հաւանեալք ՚ի միմեանս՝ կացցեն ՚ի մի միաբանութ
փ̃ց ամենայնիւ. Եղբայրութեն միաշունչք և միախոր
հուրդք: Մի՛ ըստ գրգռութեն ինչ և ոչ ըստ
սնապարծութե ո̃պ օրինակէ առաքելոյն. փիլ 2.3.
այլ խոնարհութե զմիմեանս առաւել համարել
քան զանձինս: Նոքա են որ զո̃ղ սիրոյն իւղն
միշտ ընդ ինքեանս ունին. և պայծառ լապտե-
րօք մտանեն յառագաստն լուսոյ. մտթ 25.10.
Զորս ամենակալ հայրն ուրախ առնէ յաւէտս
երկնաւոր փեսայն յանպատ ուրախութիւն:
Բայց որ որոշին և մեկնին ՚ի միաբանութենէն և
զիւղ սիրոյն ոչ ունին, փակի նց առագաստն յա-
ղագս շիջանելոյ հարսնական ջահիցն: Որք լսեն
՚ի ձայնէ փեսայն թէ՝ որք ոչ ցուցիք յեղբարս
զսէրն, այլ զմիաբանութե զկապն խզեցիք, երթայք
՚ի խաւարն արտաքին: մտթ 25.45. Նւ որք ըղ
միաբանութի հոգևոր սիրով ողջ պահեսցեն առ
եղբայրութին, և զմիաբանութին առ վերակացուն,
երանելիք են. և ամ̃ բարի հանգամանաց ցոյցք
՚ին̃ է տպաւորեալ: Եղբայր զեղբայր յորդո-
րելով ՚ի բարի գործս և ՚ի հանդէս բարի նախան-
ձու ՚ի սէր ա̃ծութեն. ամ̃ հաւատարմութբ իւրա-
քանչիւր զգործն յառաջացուցանել փութայ.
և զանդադար փառաբանութիս կատարել ՚ի տր̃.
և օրըստօրէ յաւելեալ լիցի ՚ի լաւութեն և ՚ի
պիտանութեն: Զգաստութ և զգուշութ եղիցի
և գործաւորացն. զի զոր ինչ հաւատացաւ ի-
րեանց՝ զամենայնն ստուգութբ աւարտեսցեն ՚ի
հաճոյս ա̃յ և առաջնորդին և եղբայրութեցն:
Նւ

Եւ հասարակաց պաշտօնն մի պատճառանօք ինչ խափանեսցի. բայց եթէ 'ի պէտս ինչ եկեղեցւոյն զբաղեալ հրամանաւ առաջնորդին. սակայն և անդ կատարեսցի աղօթքն. Եւ յամ ուրեք պաշտօն աղօթիցն հոգևորապէս կատարեսցի անխափան. 'ի նաւի 'ի տան. 'ի դնալ 'ի ճանապարհի. 'ի գործել և 'ի ննջել և 'ի յառնել։ Եւ չթողուլ 'ի մտաց զյիշումն այ՝ անդադար խնդրուածովք եռանդնաւէր հոգւով և արտասուօք ջերմեռանդն միշտ։ Զի ընդունելուն արժանի լինին աղօթիւքն. և լինի պարգևատու ած. որ զամենեցուն կամի զփրկութիւն և արքայութեան արժանաւոր լինել 'ի քսն յսն. Եւ դիւրահաւանութիւն ճշմարիտ ոք սիրով առ վերակացուն եղիցի ամենեցուն. և մի ըստ կամաց խնդրեսցէ գործ 'ի նմանէ. այլ զոր նայն հաճոյ 'ի հասարակաց օգուտ և 'ի մարմնաւոր պէտս և 'ի հոգևոր շահս։ Զի կարասցեն ասել ամենքն եթէ՝ յորմէ հետէ ընծայեցաք այ զմեր կամս մարմնոյ և մտաց խափանեցաք. և տուաք զանձինս 'ի ծառայութիւն նմա այն, և այժմ առաջնորդին 'ի հնազանդութիւն ըստ պատուիրանին այ որ 'ի սբ հոգւոյն 'ի մեզ աւանդեցաւ։ Զի ոչ անդամք մարմնոյ մի մարմին են յօդեալ և պատշաճեալ. սակայն իւրաքանչիւրն զիւր ներգործութիւն առանձինն ունի։ Աչք տեսանեն. ականջք լսեն. ունչք հոտոտին. լեզու խօսի. բերան ճաշակէ. ձեռք գործեն. ոտք գնան. և և միտք իմանան. և նոյնաւ շարժին զգայութիւնքն 'ի գործ հոգևորաց և մարմնաւորաց։ Այսպէս

և

և ժողովուրդքն ա՟յ՝ սիրով յօժարեալք են և միա֊
բանեալք ՚ի կամս ա՟յ՝ առաջնորդական կամօքն որ
զուարճութի վերակացութե եղբայրութեցն ունի
միշտ. և այլքն զհաւանութի ըստ իւրաքանչիւր
ներգործութեցն ցուցանեն։ Ո՛ ի որք թուին
յանդամն թէ ակարագոյնք են, են և նոքին
յայլոցն պատուաւորութե հանդամանս։ Նաև ո՟տն չէ
հնար յառողջ անդամոցն հատանել, բայց ապա֊
կանեալն յանբժշկելեացն ՚ի բաց հատանի որ
առանց բժշկութե ունի զվէրսն. և զի ոչ է հնար
յայլոց անդամոց յայլս յարել։ ‛Այնպէս առանց
բժշկութե է որ ՚ի միաւորեալ եղբայրութեն հա֊
տանի և ՚ի վանացն որոշի. և զուխտ և զդաշն որ
առաջի ա՟յ անարգէ. և լինի պարտաւոր դատաս֊
տանին և յաւիտենից տանջանացն։ Բայց եթէ
՚ի կամաց վերակացուին և հասարակաց եղբայ֊
րութե ՚ի պէտս եկեղեցւոյն բռնադատեսցի
յեպիսկոպոսութի կամ յառաջնորդութի այլոցն և
՚ի քահանայութի որ զնոյն կարգ ունիցին ՚ի ներ։
Նաև զայս ոչ յօժար կամօք ընդունիլ. բայց եթէ
յառաջնորդէն և յեղբարցն հարկաւորեալ բռ֊
նադատեսցի, բազում արտասուօք և աղաչա֊
նօք յաղագս փրկութե այլոց հաւանեսցի. եթէ
այսպիսի ոք՝ որ ոչ հայհոյեսցի անուն տ՟ն ա՟յ
մերոյ։ Հռո՟ 2.24։ Բայց ճշմարիտ ո՟ք սիրոյն
յեղբայրութեն և ՚ի հնազանդութե առաջ֊
նորդէն մի հանցի. այլ զմիմեանս հոգասցեն ՚ի
լրումն հոգևորին։

‛Նաև ո՟մ ժողովք ուղղափառ եպիսկոպոսաց որ

զուղղափառ հաւատոյն հաստատեցին և կանոնս սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովելով։ Եղիցի որ ոք ոչէ, մի իշխեսցէ ՚ի վանացն ելանել. կամ ուր և կամեսցի երթալ առանց կամացն առաջնորդին և եղբայրութեն. Այլ որ ոք յանդգնեսցի զայս առնիցէ, ընդ նզովիւք կապեսցի ՚ի հարցն. Զի ամ ոք յոր ինչ կոչեցաւ՝ ՚ի նոյն կացցէ (ասէ առաքեալն այս) Ա կոր 7.24. Զի ոչ ամէն ՚ի մի յոյս կոչեցան ՚ի քս. զի մի մարմին ՚ի պատուականն ար մարմնոյ նր և յարենէ պարապեցան ՚ի փառաւորութի. Հռոմ 12.5. Նա եթէ ունի պատճառ ինչ մեկուսանալոյ՝ մի ծածկեսցէ զպատճառսն յառաջնորդէն և յեղբայրութեցն. զի բազմաց վկայութի հաստատիմէ առաջի այ և ամ ուխտին. Զի արհամարհեալ ուրուք զօրէնսն մովսեսի՝ առանց ողորմութե երկու կամ գ վկայիւք մեռանէր. իսկ որչափ պատուոյ արժանի համարիջիք զայնոսիկ որ մարմնով և արեամբն են դաշնաւորեալք ՚ի միաբանութի ըստ ուխտին և ըստ հրաժարմանն յնէ ՚ի սկզբան կարգին՝ պահել զուանդ միաւորութեն մինչև ՚ի վախճան։ Այլ գիտեմք զայն որ ասաց տրն, իմ են վրէժխնդրութիք և ես հատուցից (ասէ առաքեալն.) զնոյն և զնորոյ պատիժս եբր 10.28. Նմա այս ջան ՚ի մոտ կացցէ վերակացուին, դաղտնի և յայտնի տալ խրատ առամենեսին, զի կարասցէ ուղղել զթիւրեալսն ՚ի ճանապարհացն արդարութե ՚ի ճշմարտութե աւանդսն։ Այլ յամի ոչ անհնար լինիլ ՚ի խոստովանութիւ և

յուղ

յուղղութիս հոգւոյ և մարմնոյ․ զի զա՟մ ոք որ նմա
հետեւեն՝ կատարելս կացուսցէ առաջի քի՟․ կող․ 1․28
Զի որ արասցէ և ուսուսցէ՝ մեծ կոչեսցի
առաջի ա՟յ․ մտթ 5․19․

Այլ որ տնտեսն է՝ համարեսցի զինքն ա՟յ մա-
տակարար․ ահիւ և երկիւղիւ ա՟ն՝ տեսցէ զհա-
ւատացեալսն յա՟յ զաւանդսն․ և զգուշասցի ա-
նօթոցն, զի մի՛ ՚ի ծուլութէ կորուսցէ․ և մի՛ յար-
համարհանաց արտաքս ընկեսցէ․ և անփոյթ արա-
ցէ աւանդեալսն յաճախ ՚ի ծախս առ ոչ ՚ի հաճոյս
ա՟յ․ և կրեսցէ դատաստան յայնմանէ որ ՚ի միտ
առնու զա՟մ խորհուրդս և զգործս․ Զի ա՟մ
ինչ յա՟յ է նուիրեալ յաղագս պիտոյից եղբա-
րութեն․ մի՛ հեղգասցի ՚ի գործ՝ կամ ՚ի բաշխելն
անհաւատար․ Այլ յա՟մ զա՟ծ առաջի աչաց կալցի
և ահիւն ա՟յ ստուգապէս մատակարարեսցէ հրա-
մանաւ վերակացուին․ Արթուն և զգաստ լի-
նիլ առ ա՟մ կամս սպասաւորութեն․ ըստ իւրաքան-
չիւրոցն արժանի ըստ պիտոյիցն զդարմանն առ-
նել․ Ծերոցն, հիւանդացն, տկարացն, ճանա-
պարհորդացն, վաստակաւորացն․ և որ ՚ի չնասուցն
կարգի են․ ըստ արժանեացն եղիցի մատակարա-
րեալն հոգևորապէս ըստ ա՟յ․ Մի՛ աչառանօք
կամ հեռւի․ զի մի՛ զրկեսցին ՚ի վարձուցն հա-
տուցմանց․ այլ ո՟պ մայր՝ գթով առ ա՟մն լիցի․ զի
առցէ զվարձս յամենակալ հօրէն․ Լսելով, ե-
կայք օրհնեալք հօր իմոյ․ ժառանգեցէք զար-
քայութի՟ն․ զի որովհետև արարիք տնտեսութի՟
եղբարցն՝ ինձ արարիք․ մտթ 25․40․ Թողում

աւել

առել և որք ոչ այսպէս առարին՝ զպատիժս պա-տուհասին զհուրն անշէջ։

Այլ որք շաբաթամուտք են կահուցն՝ զգուշասցին․ և զգործն մաքրութե՟ կատարեսցեն։

Տեսուչք հիւրոցն մի՛ անփոյթ արարեալ զկարգ-տեալն, զհիւրոցն ըստ իւրաքանչիւրոցն զպէտսն լնուլ զուարթութե՟ և մի՛ աղմկիլ առ խնդրելեաւն․ այլ սիրով և անխռով զա՟մն յուղարկել բանիւք և իրօք։ Այլ իւրեանք մի՛ լուծցեն պատճառանօք հիւրոցն զպահս և զաղօթս․ զի մի՛ զրկեսցին ի վարձուցն որ յա՟յ։ Այլ զգաստասցին ա՟մ գործաւորք ի ժամ աղօթիցն․ զի մի՛ ի հեղգացելոցն դատաստանս անկանիցին։ Ղուկ 12․ 45։ Այլ յա՟մ եւս՝ ի կամաց վերակացուին եղիցի հրամանն․ զի ասացեալն ի նմանէ ընդունելի եղիցի ա՟մ յա՟մի ի կամս ա՟ն։ Այլ որ ինչ նոքօք մատակարարին՝ նմա́ պարտ է գիտել զամենայն ո՟ղ արժանն է։

Այլ և որ տեսուչքն են եղանց հողագործաց, կամ խաշանց արօտականաց, և հօտից կթոց, և գրաստուց բեռնակրաց, ա՟մքեան ուշ կալցեն խնամածութե՟ և հաւատարմութե՟ ցուցանել զարդիւնս շահեկանս ա՟մ ջանարութե՟․ ո՟ղ ո՟յ գործաւորք և խնամոտուն մշակք առդինակաւորք ժողովել ի շտեմարանս․ զի իցէ աննուազ ում պիտոյ իցէ ի նո՟ց աշխատութեացն պտղաբերութի՟ ի տուն ա՟ն ա՟յ․ և զհատուցումն առցեն յարարչէն ըստ իւրաքանչիւր վաստակոցն․ որ տեսանէ ի ծածուկ և հատուսցէ յայտնապէս յաւուրն

այցելուէ զանսպառ բարիսն. Յոհ 6.4. որ 'ի սա_
կաւուն հաւատարիմ եղեալ՝ 'ի բազում բարիսն
վայելեսցեն։ 25.21։ Այնպէս և որոց օգն հա_
ւատացան՝ զեւրոպանչեւրոց զպէտսն կոչկաց վճա_
րեսցէ առանց հակառակութե. և որ ինչ այլ պէտք
են ոգւոյն։ Մենեցուն հեզութին եղիցի նպաս_
տաւոր. խնդրողաց և կատարողաց զառ 'ի պէտս
արժանաւոր սիրով և խոնարհ սրտիւ. զի ժառան_
գեսցեն զօրհնութիւն այ։ Նոյնպէս և ամ որք
որոց գործ հաւատացան և հող առ 'ի պէտս եղ_
բայրութեն, աճիւ և զգաստութբ և առանց խար_
դախութե ըստ ամի լիցի միշտ զամծ ունիլ առջի
աչացն. և ոչ իւիք 'ի ճշմարտութէն վերջանալ. այլ
սուրգանայս ոչ այ մշակ անխարդախ. յամի ամցուն
գործավարաց սկիզբն վերստին երկիւղածն լիցի.
և երկիւղիւ յարմարել զգործն 'ի շահ օգտիցն
հոգեւոր յառաջադիմութե հաւատարիմ 'ի
գործ մշակութե և անլեհեր փութով։ Ոչ ոք
մարդկան հաճոյ, այլ ոչ այ. որ քննէ զսիրտս և
զերիկամունս. և 'ի մտի առնու զեւրոպանչեւրոցն
զյօժարութե զլան և զգործ. որ հաւատարիմք են
յամի հոգևոր շահիւք և մարմնաւոր ըստ պատ_
ուիրանին այ. և 'ի շինութի եղբայրութեն. և 'ի հա_
ւանութի ուխտին. ժառանգել զկեանսն յաւիտենից։
Իսկ որ զհակառակութե և զանհաւատացւութե և
զպղերգութե զմիտս ունիցի, մեկնեալ 'ի ճշմար_
տութէն, 'ի հեռ և 'ի նախանձ և 'ի ստահակութի և
'ի տրտունջ և 'ի բամբասանս և շոգմոգութբ բան_
սարկել։ Բարկութի այ կայ և մնայ 'ի վերայ նր.

հուլն

հուրն ահեղ ամենափորձ որ այրէ զխոտանսն, և
զմաքուրսն լուսաւորէ անշիջանելի լուսովն.
Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ և բա-
րեխօս և բարեգործ. օրինակ լինել ամ̃ բարե-
ձևութ̃ե. կարգաց և կրօնից. աղօթից և պահոց.
խոնարհութ̃ե և հեզութ̃ե. ուղղութ̃ե և Ճշմարտութ̃ե.
սրբութ̃ե և արտասուաց. խաղաղութ̃ե և հանդար-
տութ̃ե. սիրոյ և երկայնմտութ̃ե. իրաւանց և ար-
դարութ̃ե. աշխատութ̃ե և ժուժկալութ̃ե. պար-
կեշտութ̃ե և զգաստութ̃ե. անարատ մ̃ք անբիծ ան-
բամբաս յամ̃ի. Վերագոյն քան օրինացն ար-
դարութ̃ե եղեալ յամ̃ի. և հաստատեալ նմա ժո-
ղովուրդն այ̃՝ իմաստութ̃ և գիտութ̃ խրատեալ
՚ի սրբութ̃ե իցէ և յամ̃ առաքինասէր վարս.
Եւ զա̃ծային զսէրն զօրացուցանել յանձինս.
և արհամարհել զաշխ̃ի զսէրն. Եւ երկաքանչիւ-
րոցն՝ հաւատովք երևեալ առ ամենեսին ա̃ծ-
ային սէրն. Զ՚ի որ սիրէն զիս (ասէ տ̃րն,)
զպատուիրանս իմ պահեսցէ. և որ ոչն սիրէ՝
զպատուիրանս իմ ոչ պահէ. յօհ̃ 14.23.
Եւ զի վերակացուն՝ հայր հոգևոր կոչեցաւ.
և ծնեալք ՚ի նմանէ՝ հոգևոր որդիք քան կար-
գի Ճգնաւորաց. որ առաւել ունի զհանգամանս
քան զմարմնոյ ծնողացն. այլ զմկրտութեն զհամե-
մատութին քան ամ̃ի. և այսպէս լինել որդիք լու-
սոյ և որդիք արդարութ̃ե. Հրաժարեալք յաշ-
խարհական զբաղմանց. որ մթացուցանեն զմիտս
և խաւարեցուցանեն զզգայութիւնս և առնեն
որդի խաւարի և ժառանգակից դժոխոց.

Եւ

Ա՛յլ զի պա՛րտ է հոգևոր ծննդոցն՝ հոգևոր վարս ստանալ. կատարեալ հնազանդութ̃ առ հոգևոր հայրութիւն։ Նախա՛ զխոստովանութիւն՝ ո̃չ ընծայել ստուգութ̃. և մի՛ սուտ 'ի խոստովանութեան լինիլ. զի ըստ ա̃յ սխալանացն և մեղաց՝ զդեղ բժշկութեան դիւրա՛ ընկալցին. և առ ա̃յ հրամանս հա՛ման և հպատակ։ Ո̃ր յերկնաւո՛ր հօրէն է առեալ հրաման առ գործ պատուիրանին. զհաստատակաց եղբայրութեան զհանգամանս՝ հոգւով և ճշմարտութ̃ կատարել։ Զայս խորհիլ և առնել 'ի քո̃ յո̃. որ հնազանդ եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի։ Այ՛լ նա ոչ ամօթ համարի զկոչեցեալսն և զհրաւիրեալսն 'ի կարգ ա̃ծային կրօնիցն՝ եղբարս անուանել ինքեան և ասել, պատմեցից զանուն քո եղբարց իմոց. և 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ սաղ 21. 22.

Ա՛յլ այսպիսի հաւանական միոք և ս̃րբ սիրով վերաբերիլ յա̃մ փառակարացն որ ընդ երկիր քարշէ, և վերնոցն զհետ երթալ երկնայնոցն և անմահիցն. որ կուսութիւն է նց սեպհականութիւն և անարատ վարքն. և հանապազորդ փառաբանութիւն ամենասո̃ւրբ Երրորդութեան։ Զի մաքուր և անբիծ և անարատ կուսութ̃՝ ընտրողութի ունի առ վերին զօրսն երկնաւորացն ժողովսն. զի և զփառաբանութիւն նմանապէս ունին առ ա̃ծ։

Զի վարք ճգնաւորաց՝ երկնայնոցն նմանեցան. և 'ի նոցանէ ունին զհանգամանս կարգաց որ- ա՛եալից ըստ ա̃մ հանդիսից։ Զի երկրաւո՛ր բանակք՝ ճշմարտեալ ս̃րբ սիրով և անբիծ զգաս-

տու

տութեամբ յորդորեալք հրեշտակական կարգաւ և
րութեամբ զերկնաւոր բանակացն ունին զհամե-
մատին ։ Նոյն պետք և իշխանք զօրացն անմարմնոց
զսպասաւորութիւն ըստ իւրաքանչիւր կարգի ունին
առ Աստուած կամաւ և առ միմեանս և առ ազգս մարդ-
կան ։ որպէս կամք Աստուծոյ որ սահմանեցին զիւ-
րաքանչիւրոց իշխանութիւն և զպատիւ և զսպաս-
ւորութիւն ըստ նախախնամութեան ։ Իսկ ստամբա-
կեալն 'ի վերին իշխանացն բանակաւն իւրով 'ի
բարւոյ 'ի վայր անկեալ՝ ընդ մեզ պատերազմողք
եղեն ։ և այնք անուանեցան և դևք ։ Ըստ ան-
ուանցն և զհակառակ բարուցն և զգործն ու-
նին առ Աստուած մեղսասիրութիւս ։ Ինքն և ամենայն չար
գործք իւր ։

Այս իմանալի է բանակս ճգնաւորաց ։ զի որ ըզ
հրեշտակային զկարգս զգեցեալ ունին 'ի յերկրի,
'ի նոյն կարգ հրեշտակաց վեր ամբառնան 'ի տե-
ղի անկելոց հրեշտակաց ։ Այս տացի նոցա (ասէ
մարգարէն) տեղի անուանի առաւել քան զու-
տերաց և զդստերաց իմոց ։ և անուն յաւիտե-
նական տաց նոցա ։ և մի՛ պակասեսցին փառքն ։ Ես ։ 56 ։ 5 ։
Զայս աւետիս ունին բանակք սոցա ժողովոց ։
միաբանեալք սոցա սիրով և առաքինասէր վարուք ։
Ընդ Աստուծոյն կապեալք և ոչ 'ի վայր բերեալք
յերկնայնոց յուսոյն պատրանօք բանսարկուին ։
որ միացաւ ընդ ճգնաւորացն կարգաց և կրօ-
նից՝ հանապազ թշնամին որդւոցն ։ Այս նա է
որ հրապուրէ և օգնէ 'ի ճշմարիտ աւանդիցն ։
զոմանս բաժանէ նախանձութեամբ յեղբարցն պատ-

 ճա

Ժառանգք բարեկարգութե՟ և անօտի խաբէութե՟
'ի մեղս։ Եւ է որ ըստ խորհրդոյն և ը զգայու-
թե՟ն 'ի ներքս մուծանէ զամբարշտութե՟ փառս։
Յոյս այսպիսի ունելով կրօնաւորաց՝ բազում
զգուշութ՟բ կացցեն 'ի մշակութե՟, բարեձևութ՟բ վա-
րուց և սրբութե՟. երկեւելեօք և աներկեւութիւք.
Զի մի՛ զրկեսցին յայնքան առաքինութե՟ պատ-
ուոյն հրեշտակական դասուցն, և 'ի փառացն որ նա-
ցայն աւանդեցաւ յարարչէն։ Լնուլ զպակա-
սութի վերնոցն՝ ներքնովքս առաքինութ՟բ. վերա-
բերեալ 'ի գեհենաքարշիցս և հաղորդակից լեալ
բարւոք քաղաքավարութե՟ նոցին, և ըստ նմ՟ ձայ-
նակցեալ՝ ամենայնք Երրորդութե՟ն հաստուսցեն
զփառս անճառելիս օրհնութ՟բ։ Եթէ այսպէս ար-
դարացեալք ճշմարիտ հաւատով և անարատ վա-
րուք և ամ՟ սիրով, եղիցի երկիր ն՟յ նոր՝ 'ի նորո-
գումն կենաց հանձյիցն ա՟յ, և երկինք պայծառ
զգաստութ՟բ. Ես 66.22 զոր ակն ոչ ետես և ունկն
ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատ-
րաստեաց ա՟ծ կուսանաց և ճշմարտասէր կրօնա-
ւորաց։ 1 Կոր 2. 6. Եւ յիշատակօք վերնոցն
յուսով՝ հարք բարեսէրք և բարեգութք և բա-
րեխորհուրդք լիցին. նմանեալ հօրն երկնաւորի.
որ նախախնամական սիրովն իւրով խնամէ զարա-
րածս ամ՟ ըստ ամի հոգևորաւք և մարմնաւորաւք.
երկեւլի և աներկեւոյթ դարմանօք. հոգեխառն
սիրով և բարեպաշտագոյն երկեմամբ 'ի քս՟ յս՟.
Եւ որդիք՝ բարեհաւանք և սրբասէրք և ճշմար-
տասէրք լինիցին. որոշեալք յամ՟ դժնդակաց որ

Եղեւին եւ որ ոչն երեւին ։ Այլ բուռն հարեալ զհրեշտակական փառուցն, որք եւ անարատ իցեն մարմնով եւ ողջախոհ խորհրդով եւ անկեղծաւոր հաւատով ։ Երանախոհք եւ հնազանդք առ հայր հոգեւոյն եւ տեսուչ մարմնոյն։ Մի՛ ուրեք խորհրդովքն յածիլ եւ մարմնովն գայթակղիլ։ Այլ կալ մնալ 'ի լաւագոյն կարգաւորութեան 'ի կամս միամիտս եւ յիշատակս վերին որդեգրութե հօրն երկնաւորի եւ մարդասիրի։ Նուեալ առ զգրաւականն հոգեւոր ազատութեան զհանգամանս ։ եւ ուրախել զկեալսն եւ զերեւեալսն ։ երկնայնոյն զհետ երթալ զերկրաւորս արհամարհելով ։ Այլ մեկնեալ 'ի զբաղմանց՝ մերձ 'ի հրեշտակայինսն լինել։ որ զհանգամանս իւրացն իբրեւ ընդ հայելեաւ եւ առակաւ տայ տեսանել՝ լուսոյն առ ընդունելութիւ ատենն ։ Այլ 'ի ձեռն մարմնոյ եւ արեան մն վերստեղծուլ 'ի զգաստութի, համապազ արժանաւորապէս հաղորդելով ստ Քրիստոսի մաքրման եւ կենդանարար քնի ազատութեանն ։ որ շնորհեցաւ սիրողացն մեր եւ կոչեցելոց մեր 'ի կարգս մեծայինն։ Այլ 'ի միւսանգամ գալստեանն իւրում յորժամ գայցէ փառօք Հօր, շնորհէ զանսպառ բարիսն 'ի Հայր եւ յՈրդի եւ 'ի Հոգին սուրբ ։

Որում վայելէ փառք պատիւ եւ երկրպագութի յաւիտեանս յաւիտենից Ամէն։

Վ. Ե. Ր. Ջ.

Յուն

Յանկ ԻԳ ճառից որ ՚ի Յ՟ն յաճախապատում ասացեալ սբյ
Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։

Ճառ Ա։ Վարդապետութիւն յաղագս միութեան և Երրորդութեանն Ա՟յ․ և բարի բնութեանն նորին․ և խնամոցն և սիրոյն յարարածս իւր․

Ճառ Բ։ Յայտնութիւն յաղագս հաւատոյ առ Երրորդութիւն և միութիւն ամենասուրբ Երրորդութեանն։ Եւ առ սէրն նորին առ արարածս իւր․

Ճառ Գ։ Կարճեալ միտք յաղագս հաւատոյ առ էութիւն Ա՟յ․ և առ խնամս նո՟ր յարարածս իւր․

Ճառ Դ։ Յաղագս թէ՝ ա՟մ արարածք՝ յայս ըստեղծեալք են։ Յորում և յանդիմանութիւն մոլար մտաց։ Եւ ընծայումն ա՟ծպաշտութեան։

Ճառ Ե։ Հաստատութիւն ճշմարտութեան և առաջնորդութիւն կենարար խրատուց։

Ճառ Զ։ Յանդիմանութիւն ծածկութեանց իւրոց։ Որ զաներեւոյթս յերեւելիս ածէ։

Ճառ Է։ Յաղագս յօրինուածոց արարածոց։

Ճառ Ը։ Յանդիմանութիւն դժնդակ վարուց․ և ընծայումն առաքինութեան հանդերձից։

Ճառ Թ։ Վարդապետութիւն կատարեալ ՚ի Տ՟ր․ յաղագս ամենապատուեալ պահոց․

Ճառ Ժ։ Յերախտաւորութիւն անզեղջ բարերար կամացն Ա՟յ։ Եւ յորդորումն ՚ի լուսն և յառաւելումն ըստ ճշմարիտ առաքինութե․ ՚ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ճառեալ։

Ճառ

Ճ— ԺԱ. Յաղագս փառաց առաքինութեան. Որք հանդիսիւք լուսոյն պսակել երանեցան.

Ճ— ԺԲ. Վարդապետութիւն յաղագս բարերար արարչին խնամոցն. Եւ կշտամբութիւն անհնազանդ ստահակաց. Եւ առաջնորդութիւն բարի և լուսաւոր փառաց.

Ճ— ԺԳ. Հանդէս յաղագս լուսոյն յերկնից 'ի պէտս օգտից. Զաներևոյթսն յերևելիս ցուցանելով 'ի գործս առաքինութեան. փոխեալ 'ի յոյն կենդանի 'ի բանականս զուարթնոց. Որ ստա կատարեցին զհաճոյն իւր.

Ճ— ԺԴ. Յաղագս որ իւր խնամք տեսչութեան առ մարդիկ.

Ճ— ԺԵ. Յաղագս հոգւոց մարդկան բացայայտութիւն.

Ճ— ԺԶ. Յաղագս մարտիրոսաց վարդապետութիւն ուսմանց.

Ճ— ԺԷ. Զգուշութիւն զգաստութեան շահաւոր պատրաստութեան. Ընդ մտերիմն և ընդ դժընդակն. 'ի պատիւս և 'ի պատիժս.

Ճ— ԺԸ. Գոհութիք իւր երախտեացն. Հանդէս սիւք մարտիրոսաց քաջաց և առաքինեաց.

Ճ— ԺԹ. Յորդորումն յապաշխարութիւն խոստովանութեան.

Ճ— Ի. Առաջնորդութիւն ամենարուեստ խրատուց. Հանգամանք գիտութեան և իմաստից.

Ճ— ԻԱ. Յաղագս որոց իմաստութեան որ 'ի հոգւոյն իւրոյ պարգևեցաւ սուղ ինչ բան.

Ճ—

Դ՛-- ԺԷ. Յաղագս անփոփոխ ինքնութեան էութեանն այ.

Դ՛-- ԺԸ. Խրատք ճգնութենց և Յսյցք հանդիսից Յառաքինութեան յորդորմունս.

*************************

Այս ցանկ լոկ իւր բնական գրուածոյն է. Իսկ 'ի վճարման առաջի կայ ներբողեանցդ՝ 'ի գաղափարի մերում շարադասեալ կայր 'ի պատուելի պաշտօնատար դպրէ՝ և այլ ցանկ լոկ այբբենական կարգին. Սառի և մեք եդաք զդ նմին զոմանս 'ի բանից գլխաւորաբար յիշեցեալս 'ի մէջ ճառիցդ՝ կամ թէ 'ի դոյն իսկ 'ի ներբողեանսդ՝ թղթահամարաւն 'ի յայտ բերելով.

*********************************

Յօհաննէսի Մրքուզեան Ջուղայեցւոյ, Ասացուած
Ներբողական Պատուական 'ի սբ Լուսաւորիչն
Հայոց 'ի Թծն Պարթեւորէն։

Ասացեալ յօր յիշատակի նորին· ըստ Տօնին Թծածաղիկ
հանդիսին 'ի լեառն Սեպուհ (որ է տեղի ճգնութեան
նորին և հանգստեան) Յոգնահոգւոյ հանդիսիւ 'Բա-
հանայական դասուց և Մարտիրոսաց և ժողովրդոց Հա-
ստատելոց բանիւս Ա̃ծ գովաբանելոց։

Օգնեա՛ սբ Հոգի Սբ·

ՅԱՐԱԶՈՒԱՐՃ
խնդութբ երկրպագեալ ցնծա՛ եկեղեցի
սբ· Նորահրաշ և պայծառ երկին· նմա-
կազմ լուսաւորօք զարդարեալ։ Քանզի 'ի քեզ
ծագեալ իմանալի արեգակն զուարթարար, ըղ-
լուսինն գիշերայնոյ մխիթարիչ՝ զօրէնան սառե-
րական՝ լոմամբ լիացոյց· Նա՛ զգումարս խմբից
հրաբորբոք և հոգեխահրաշ սատեղաց, 'ի քոյդ
բարձրայարկ և գմբեթաձև խորանի առ կայացոյց
կենդանաշարժ ընթացիւք· Որ են նահապետացն
անձինք· մարգարէիցն հանդէսք· առաքելոցն
դասք· մարտիրոսացն ժողովք· հայրապետացն
հոյլք· ճգնաւորացն խումբք· և ա̃մ ա̃ծազարդիցն
լուսափայլութիք· Յորում 'ի քոյդ գերակայ
կայանս 'ի վեր նկատեալ բարձրահայեաց բանա-
կանացս, տեսանեմք 'ի մէջ բազմահոյլ հրեղինա-
կերպն

կերպն դասուց՝ յոգնազան լուսով առ լցեալ
զհանդիսաւորաց եւ զմեծ նահատակն արեւելեան.
զլուսերանգ եւ զզուարթարար աստղն աշխարհա-
րիս, զԳրիգորիոս գերազանց փառօք փայլեալն
յաւէտ քան զնաւս. զորոյ քաղցրահայեաց լու-
սոյն շուրջ փարիմք յօր յիշատակի սորին

Ուրախ լեր դրախտ ծառատունկ. բազմախիտ
տնկովք տենչացեալ. եւ մշտափթիթ ծաղկօք ու-
ռուցեալ. երկիր լուսոյ եւ վայր փափկութ. եդե-
մական աղբերն բղխեշ լայնածաւալ ընթացիւք.
Քանզի 'ի քեզ ծառն կենաց տնկեալ բարձօղ
անմահական պտղոյն, եւ որթն ճշմարիտ աճեցել
քաջաբեր ուռոցն բազմութ, յինքն ցուցեալ
զգեղեցկատես եւ զվայելուչ ողկոյզսն՝ ուրախա-
րար բաժակին բաշխիչ: Յորում 'ի բոյթ բարե-
լի բուրաստանի հայեցեալ տեսանեմք զերեւելի
եւ զհամապայծառ ծաղիկն, զքաջազուարճ եւ զա-
զարթալի տունկն պտղաւէտ, յաղբերին կենաց
զյորդառատ վտակն, զճշմարիտ որթոյն քաղցրա-
ճաշակ ողկոյզն, զԳրիգորիոս լուսաւորիչն հայոց
զհեղինակն հոգւոց. որոյ յիշատակաւն զուար-
ճացեալ բերկրիմք յուրախութ հոգւոր.

Համագումար բազմութ հանուր հաւատոյ ման-
կունք ազատածին ծնունդք ազատամօրն վեր-
նոյն սիոնի, սիրասնունդ զաւակք մաքուր ծնըն-
դեանն յորդանան հոգւոր, ազինք ազնուականք՝
ընտրեալք յառաջահրաւէր կոչմանն գերագոյն
անուանն ժառանգորդք օրհնութ նոր երգեցէք նո-
րոգողին զձեզ եւ նորահրաշ բարեց պարգեւողին.

Զկ

Զի այսօր մայր ձեր եկեղեցի, իմաստութեան հօր շինեալ և հանճարով հոգւոյն կանգնեալ, զնորհրդաբար լցեալ շտեմարանս իւր բանիւ, և զմրթերս հոգևոր գանձուց իւրոց ցուցանէ բարեսէր որդւոցդ։ Զի տեսանելով զեկեղեցկութի գանձուցն անկողոպտելի, անդ և սիրտք ձեր եղիցին անբաժանելի։ Ղուկ 12 ։ 34։

Յորում տեսանեմք զհրագունակ և զմաքուր ակին զհաւատոյ ուղղափառութե՛ • զընտրեալ և փորձեալ արծաթն զպայծառ բանս վարդապետական • զերևելի և զպատուական ակունսն զոսկեփայլ և զառաքինազարդ անձինս սրբոցն • զծովածին մարգարիտն և զա՛մ յօրինուածս գեղեցկութե իւրոյ։ Յորում և տեսանեմք ՚ի յայսմ ամենունակ գանձարանի զոսկեփայլ անձն • զհաւատով պայծառացեալն • զոր և զզուտ արծաթն • յստակ բանիւն զճշմարիտ քարոզն • զբազմագունի ակն • զգերազանց առաքինութե՛ շքեղացեալն • զԳրիգորիս հայրն հաւատոյ, և զվայելուչ պսակն հայաստանեայց սբ եկեղեցւոյ ։ Որոյ տօնախմբութեան այսօր զարդարին անձինք հոգևոր որդւոց • և զբազմադիմի պէսպէս իւրեանց լցուցանեն հայրենի գանձիւքն։

Արդ այսօր բացէք զգանձարանս մտաց ձերոց յընդունակութի ամենայն գանձուցն։ Ամբարեցէք զտախտակս սրտից, կենդանագրել ՚ի ձեզ զտիպ պատուելի պատկերին • և նկարել յոգիս ձեր զգեղեցկապէս հասակն գովելի • Զի հաւատոյ հեղինակն • զլուսոյ յարաժամ և անշարժապէս

դի

դխտօղն· զմիրոյ սրբապէս և զհամատարիմ պաշ֊
տօնէայն։ Ո՜վ կատարեալ բարեացն գործունէին·
զճշմարիտ միապաշտութե յորացոյցն· զբարուք
հնազանդութե օրինակն· զծրապէս ծուծկալութե
ծաղովեալն· զողջախոհութե և զպարկեշտութե֊
տպացոյցն· զհրաշագործ և զարմանալի սքանչելեաց
ներգործօղն· զարիաբար և դանդաղանելի զօրավարն·
զքաջազօր և զյառաջադէմ զինուորն· զԳրիգո֊
րիոս զամ առաքինութեց պարունակն· զսրբութե
սնեալն· զառաքինութե քաղաքավարեալն և զար֊
դարութե փայլեալն։ Որոյ այսօր յիշատակաւն
զուարճանամք· և յասպարէզ նահատակութեցն
ձեպիմք· և հայրենի բարեաւն բարդաւաճիմք·
և քաղցրախորժելի անուամբն զընծայս բանիս
ուղղեմք ասելով, Նահատակ բարի Գրիգորիոս·
քանզի փութամք ելանել 'ի հանդէս քոյդ մե֊
ծասքանչ ճգնութեդ։ Ճ'եմել 'ի բուրաստանս բա֊
նաւոր և խօսուն քո ծաղկանց գունագեղ և
զովելի վարուցդ· մտանել յայգի բազմածաւալ
և նորազուարճ ողկուզիցդ· դիմել 'ի դրախտ
պայծառազարդ և պարարտաբեր պտղոցդ·
Ո՛ր արդեք ժողովեսցէ անծորելի ծաղիկս
'ի ծոցս բանիս թաքուցանել։ Կամ զո՞ր ողկոյզ
ուրախարար կթեսցէ 'ի զմայլեցուցանել զոյքան
բազմութեաս անձինք։ Որո՞վ պտղով պարարեսցի
բանիս շարժումն· կամ յո՞րս պշուցեալ նայեսցի
յանձեռնարկելին բարձրութե։ Ո՞վ որս պատմե֊
ցէ որ 'ի քեզ գեղեցիկ գովասանութեցն արժա֊
նեաց։ Ո՛ յղուե՞ն ամենասքանչ հրաշագործութին·
եթէ

եթէ զծննդեանն պարգեւական շնորհս։
Ո՜ սքանչելեա՜նն մաքուր սրբութի, եթէ զուսմանցն
շնորհալի մատակարարութիւն։ Ո՜ երկնանման առա-
քինութե՜ան ընթացս, եթէ խաչեցելոյն յա-
ղագս մեր՝ զհետեւումն։ Ո՜ անտանելի չարչարա-
նացն զհամբերս, եթէ զխորունկ վիրապին խոր-
հրդական ժուժկալութիւն։ Ո՜ ծայրին տեսչութ
վերաբերմանն, թէ զառաւելի տեսլեանն զարմա-
ցուցիչ հանգամանան։

Նախկին բարւոյն վերադիտող Գրիգորիոս,
բազմագունի բարեացն որ 'ի քէն մեզ ընձեռե-
ցաւ, զորպիսի ընծայս՝ որո՜ւմ մեծամեծ եւ ան-
զուգական իրի նուիրեսցուք բազմաբան վար-
դապետութ լուսաւորեալքս։ քահանայապետա-
կան հայցուածոց նուիրեալքս։ արխական հսկո-
ղութ հովուեալքս։ Հոգեւորական աղօթիւք
պարապեալքս։ Հանգստեան քո տեղւոյ եւ գե-
րեզմանիդ գովելոյ տեսլեամբ մխիթարեալքս։
եւ այժմ ծանրաբեռն անձամբ առ հայրդ հանգըս-
տարար հաւաքեալքս։ Յորս եւ ես անշահելի
պարգեւացն որ 'ի քէն պարտականս, եւ անհամե-
մատ բարեացն բաշխման բաժանորդս, դուզնա-
քեայ բանիւ ձեռնարկեմ փոխարինել զքաղցր
պտուղն համարս։ Որ եղեր յոչ էից լինելու-
թեանն ըստ յուսոյ ծնողացն միջնորդ, եւ պտղոյ
անպիտանի՝ բարւոք գոլոյն պատճառ։ Բանական
մաքինս շարժման աւիթ, եւ 'ի նոյնն յարամնալոյ
յորդորիչ։ Ու՜ այժմ ընկա՛լ զբանիս պարտ՝
ձեռնատուութեդ որ 'ի քէն։ Սրբազնունի անձինդ

պատ

պատուեալ պատկերի լինիլ նկարիչ։ Վեհագու-
նից ընտանից բարուց ընտրութ՝ բանիւ քան-
դակիչ։ Գերագոյն գեղոյդ գերազանց փառաց՝
գրով դրոշմիչ։ Արձանիկ գործոյդ երկնաձեւ
ոգեւորեալ յօրինիչ։ Բանիւ քարոզիդ քաղց-
րուսոյց բանիւդ՝ քոյին հոգեւոր որդւոցդ պատմիչ։
Բայց որո՞վք երանգօք ՚ի դէմս բերից զփառա-
զարդ քո տիպ տիրական։ Ո՞ր բան բաւէ զըն-
տիր բարուց քոց յօրինուածս բերել ՚ի կիր ար-
կանել։ Զ վեհագոյն վարս․ զզարմանալի գործս․
զտեսկալի եւ զարտաքնանման մաքրութիս․ Յորմէ
յաղթի տկար բանիս զօրութիւն, եւ փախագէ
նուաստ ոգւոյս ցանկութի։ Յաղթիլն յանյու-
սութի արկանէ, եւ փախագն համարձակագոյնս
գործէ։ Անյուսութին՝ անկարելի ցուցանէ
զյօդուածս անդամոց բարեացդ մասանց ՚ի կիր
արկանել․ եւ համարձակութին՝ իմաստից կարօտի
կատարեալ վարժից հիւսուածոց բանից․
Այ՛ ցանկամ լինիլ ինձ միտս մաքուրս եւ բանս
արագաշարժս եւ բազմաբուղխս ըստ ծիծուանցն
ճարտարութեց․ ձեռն անխոնջ ՚ի գործ, եւ զբաղ-
մութի ջուրց նիւթ, առ ՚ի գրել զշնորհաշուք
պատկեր զարմանահրաշ գործոց ո̃ք լուսաւորչիդ
մերոյ՝ ՚ի հոգիս եւ ՚ի միտս բազմութե հաւանեցելոցս։
Այ՛ արդ՝ զի կատարեալ ցանկայ սիրտ իմ մե-
ծափափագ բաղձանօք նկարել զարփիագեղ
պատկեր ածազարդ հօրն մերոյ սբյ Լուսաւոր-
չին Գրիգորի ՚ի կենդանի տախտակս սրտից
որդիացեալ ժողովրդեան նր։ Ո՛չ ՚ի գոյնս փայ-
լուն

լինս նիւթականս, այլ զանմարմին նահատակու-
թեանցն զհանդէս և զտոկալի չարչարանսն, որով
գեղեցկացաւ թագաւորական պատկեր մաքրա-
փայլ ոգւոյ նր, Հայր երկնաւոր ներկեաւ զե-
րանգս իմաստից բանեղէն դեղոց՝ յառատա-
բուղխ շնորհացդ աղբերէ· կազմել գեղեցկայար-
մար յօրինուածովք զայս պատկեր ցանկալի,
ախորժական գեղով սքանչելի։

Եւ զի յօժարիմ սիրով՝ յօրինել պսակ պան-
ծալի մօրս մեր սրբ եկեղեցւոյ, ոչ ՚ի նիւթա-
կանաց և ՚ի ծովածին մարգարտաց, այլ յամենա-
պայծառ առաքինութեց և յանմարմնական վարուց
նահատակին քնի սրբյն Գրիգորի։ Գլուխ եկե-
ղեցւոյ Որդի և Բան տր յն, տուր ինձ հրա-
տուէր արուեստի և մտաց տեսողական դիտաւո-
րութի· յաջողակի ձեռին շարժութբ շարայարել
զհիւսուածս վարուց լուսափայլ ականց խոստուն
մարգարտաց՝ ՚ի զարդ վայելչութե գլխոյ սրբ եկղցւյ։

Եւ զի հանդերձեալ եմք շինել տաճար տեն-
չալի, ոչ ՚ի փայտից յղկելոց և ՚ի քարանց քանդա-
կելոց, ել. 31, այլ ՚ի կենդանի տնկոց աճելոց ՚ի
ջուր սրբ աւազանին, և անելոց ուղղափառ դա-
ւանութբ հոգեշնորհ և ածագութ հօրն մերոյ
սրբյն Գրիգորի· և ՚ի բանական քարանց որք իբ-
րև զվէմս կենդանիս շինեալ եմք տաճար հո-
գևոր ՚ի գլուխ անկեան հաստատելը։ 1 պետ. 2. 5.
և այժմ շինիմք մաքրութբ յընդունականի քահա-
նայապետին մերոյ։ Մանաւանդ հոգւոյդ սրբյ·
որում նա եղև տաճար ցանկալի, Ամենիմաստ

ճարտարապետ հանճարոյ՝ հոգւով իւր այ, տուր շնորհ այսմ շինուածոյ նորանուէր որդւոց սիո-նի, (զորս ծնար մը աւազանաւն և միշտ նորոգես 'ի հնութեց մեղաց,) անխախտ մնալ ամրութ, և յընդունելութիւն քեզ տաճարանալ. և յուրա-խական տօնիս 'ի քէն զարդարեալ հօրս մերոյ զուարձանալ.

Այլ արդ՝ զի մեծագոյն է առաջիկայս խրախուէ, պարտ է մեզ նկատել հոգւոյ աչօք 'ի յայսմ վե-րին՝ սիրով քան մը նահատակին. և զմարմնոյ աչս մաքրել յուսով հայեցուածովք և յարտասու-ցնդել. Ըստ արժանի ձեռաց յաղօթս, և ական-ջաց յունկնդրութի. և խնդրել իմաստութի հան-ճարոյ 'ի հոգւոյն մըյ Աստոյ լինել սպասաւո-րել անհիտ և գովութ աւուր յիշատակի խոստո-վանողին քան մը Գրիգորի. և գրել 'ի սիրտ մեծահանդէս այսմ ժողովոյս զյիշատակ անմոռա-նական վարուց նր. Այլ դուք պատրաստեցէք զձեզ 'ի ժամուս յայսմիկ հաղորդ լինել մաքրութ երկնային վարուցն 'ի շնորհաբաշխ աւուր տօնիս. Այլ արդ՝ հորքս այսորիկ եղիցին մեզ գլուխք բանից՝ արժանի զարմացման և յիշատակի.

Ժամանակս այս և օրս բերկրալի տօնիս. և Տէ-ղիս հանգստեան մըյն Գրիգորի. և Գէմքն ամենագովելի և ներբողելի. և Իրքն որ 'ի տեղւոջ և 'ի ժամանակի գործի.

Ժամանակս այս՝ Յորում հաւաքեալ եմք որ-դիքս սիօնի 'ի գիրկս մօր մերոյ մը եկեղեց-ւոյ, և ծնունդքս բանի քարոզութ մըյն Գրի-

գո

գործ առ հայրս մեր հոգևորս։ Որ և հոգևորս այս գարուն՝ ընդ գարնանային զուարճութեանցն համեմատի. յորում երկնային այս խորան պայծառանայ. և խմնալի արեգակն զքաղցր լուսոյն խուրս ծագէ ՚ի սմա ճառագայթս։ Օրէնքն լուսաւոր՝ համադատախար լուսնին՝ քաղցրութիւն փայլէ։ Այլ պարք աստեղացեալ ուրցն ՚ի նորումս երկնի մեծապէս ծագեն։ Աղեխաղք վարդապետութեան յառաքագոյն բղխեն, և գետօրէն մեկնութիւն յանցանց յեռլեռ հոսին

Այս Տեղիք ժողովոյս՝ Աստուածային ընտանի հանգստեան Լուսաւորչի մերոյ ուրք։ Որ և լուսափայլ ճառագայթիւք առօթից նր պայծառանայ. և ՚ի հոգւոյ չնորհաց նր հովանանայ, և զօրութիւն սրբոյ նր բանական ծաղկօք զարդարեալ դեղեցկանայ։ Զուերև յուսոյն զարդարեալ. և զզանազան ծաղկս առաքինութե տարածեալ. և զկատարեալ բարեացն պտուղ՝ նր նուիրեալ։ Այս զայստնիկ միջնորդութի ու Լուսաւորչին մերոյ հայցեալ. բազմութն ՚ի մի ախն եղեալ. ըստ ծաղկի ումեմն բնութե դեւք ՚ի դխմաց պայծառացեալ. և ուժգին յարեգակն կոյս ուղղել։ Յով Պետք ամենագով և Ներբողելի Արևելք և պայծառացեալ արեգակն հայոց Գրիգորիս. որ զխաւար կապաշտութեն փարատեաց. և զուսուցեալքս մեզ՝ չերմ ճառագայթիւք աղօթիցն պատրաստեալս գործեաց։ Ճշմարիտ որթոյն բարեբեր բարունակն. որ ուրախարար բաժակաւն զուարճացոյց զմեզ։ Պետղեցիկ և զուար-

թա

Թարար գարունն հոգւոյ․ որ յորդահոս վար-
դապետութեն հնչեց ՚ի մեզ զշնորհս հոգւոյն սրբ․
Հովանաւոր դրախտն ՚ի տօթ եւ ՚ի կիզող ժամա-
նակի․ Նորերեւելի աստղն․ որ մոլորեալցս ՚ի ծածու-
կենցաղոյս՝ առաջնորդեց լուսափայլ երեւմամբն․
Բնութեան կերպիւ լուսաւորեալ դիմօք ըստ նմա-
նութե փառացն մովսէսի․ Գովելի հասակն․
որ ինն թզեան բարձրութեն՝ ինն դասուց վեր-
նոցն եղեւ ցանկալի․ Լուսերանգ շուրթն․ որով
Ճշմարիտ լուսոյն ծննդաբարձ ծանուցեալ եղեւ․
շող կենդանի մեզ ՚ի բարձանց իջեալ․ Քաղցր
եւ բժշկարար դեղն․ որ զցաւս եւ զխայթուածս
թունից վիշապին որ ՚ի մեզ բժշկեաց․ Սոսկալի
տեսիլն եւ ցանկալի․ որ եւ սրովբէական փառացն
տեսող եղեւ․ Կարմրորակ եւ անուշահոտ վարդն․
որ ՚ի փշաբեր արմատոյ եղեւ ծաղկեալ, եւ անու-
շահոտ բուրմամբն ելից զհայաստանեայց Տա․
Տենչալի տունկն դրախտին եկեղեցւոյ․ որ քաղցր-
ախորժ պտղովն իւրով զուարճացոյց զմեզ․
Յօղն զուարթարար․ որ շնորհօք հոգւոյն ցօ-
ղեալ՝ զխամրեալս եւ զթառամեալս ՚ի բուսոց բա-
րեց՝ զուարթացոյց․ Ն․ յաքինն են դեմք․ յաղագս
որոյ անկարանեաց բան յարժանաւորս խօսելոյ․
Իսկ Իբր՝ Որ ՚ի ժամուս յայսմիկ գործի․
Զի հովիւքս բանաւոր հօտին քո՝ ընդ հան-
գստաւետս հովանեաւ մօրս ձեր մեր եկեղեցւոյ
ժողովեալ, հովուեն զձեզ ՚ի վայրի դալարւոջ,
եւ ՚ի ջուր հանգստեան կենդանի վարդապետութեն
սնուցանեն․ Աշակերտքս երկրպագուծ՝ իբրեւ եղինս
հեզ

հեղ և հանդարտ՝ ընդ քաղցր լծովն քրիստոսի լծեն զձեզ. և զբանական անդաստանս հոգւոց և մտաց հերկեն, զբանն կենաց սերմանելով ՚ի ձեզ. և յուսով՝ բարեացն պտղոյ սպասեն ուրախութեան. Զկնորսքս հոգևոր՝ որսան զձեզ կարթիւ բանին ՚ի հաստատուն կենացս ՚ի յաւիտենականն. ՚ի տղմասէր վարուցս ՚ի յերկնային քաղաքավարութիւն. Պահապանքս դրախտին կենաց՝ ցուցանեն ձեզ զծաղկոցն ա՟ծային զվարս ա՟ծայնոց արանց. և բուրեն ՚ի ձեզ զհոտ դրախտին անմահական փայտին. և դուք ժրացէք իբրև զմեղուս ա՟ծային հաւաքեալ ժողովեցէք զայն ՚ի բջիջս մտաց ձերոց.

Այս զինչ պատճառ ժողովոյս բազմութեան. Խնդութի և սէր տօնիս. Որ է ուրախութի յիշատակաց արթուն և զուարթուն անուանն. Քանզի տօն է Հայրապետին մերոյ սբյն Գրիգորի և առաքելաշնորհ և մարգարէապատիւ լուսաւորչին հայաստանեայց. Որ զարդարեալ ՚ի հօրէ՝ ՚ի մարգարէական պատիւ մեծարեալ եղև. Այլ որդիական սիրով առաքեալ յորդւոյ՝ առաքելական շնորհիւ լցեալ եղև. Այլ ՚ի հոգւոյն սբյ ընտրեալ՝ ՚ի հայրապետական աթոռ բարձրացեալ եղև. Զերից ժամանակաց՝ զառաջնոց և զմիջնոց և զվերջնոց պարգևս՝ ՚ի սբ Երրորդութենէն յինքն պարագրեաց. Ըստ որում և մարգարէիցն է համապատիւ. և առաքելոցն զուգահաւասար. և ա՟ծազգեաց հարցն սբց համանման. Սբյ հայր կոչեմք զնա. զի ծնաւ զմեզ բանիւն

 ճշ

ճշմարտութե, և մնայց անհամեմատ գթութ առա-
տութե իւրոյ, և անձեցոյց ուղղափառ հաւատոյն
դաւանութ։ Արդարեւ անուանեմք, զի ու-
սոյց մեզ զերկնաւոր բարեացն հանդամանս։
Զոմին, զի ժողովեաց ՚ի հօտ ճշմարիտ հովուին
զհաւատացեալս սբյ Երրորդութեն։ Աշակ, զի
բազմավաստակ քրտամբք քակտեաց զկորդացեալ
անդաստանս մտաց մերոց, և սերմանեաց զսերմն
ածպաշտութե։ Մարտիրոս, զի մարտեաւ ընդ
երևելի և աներևոյթ թշնամեայն։ Վկայ, զի
վկայեաց բազում չարչարանօք միութե սբ Երրոր-
դութեն և ճշմարիտ ածութեն։ Նահատակ, զի
ողջակիզեալ եղև կենդանի մարմնով։ Յաղթող
զի ոչ կասեցաւ ՚ի բազմահնար տանջանացն։
Ազնաւոր, զի ՚ի վր ած հանդիսիցն՝ և զվարս
ճգնութե յանձն եառ. որով առաւել բարձրանայ
ազգս հայոց։ Զի ոչ մի է հայրն մեր և զամ
բարիս յանձն իւր տպաւորեաց, այսպէս մի է և
միակրօն ազգս հայոց և ամ գերազանց պարգևօք
մեծարեալ եղև։ Այս և մեք ՚ի պատիւ բազմ-
երախտի հօրն մերոյ՝ բանս ներբողականս յար-
մարեցաք։

Գրիգորիոս՝ արփիական գեղ. արեգակնափայլ
ջահ. անշիջանելի լուսոյն լցեալ։
Գրիգորիոս՝ բարունակ բարի. բուրաստան ծաղ-
կեալ. բուրվառ ոսկեղէն հաշտարար խնկօք։
Գրիգորիոս՝ գարուն ծաղկաւէտ. գետ յորդա-
հոսան. գեղեցկածաւալ բղխմամբ ընթացեալ։
Գրիգորիոս՝ դրախտ ածաշարդ. դիւրայարմար

քնար · դայեակ մանկութե և դաստիարակ·
Գրիգորիոս՝ երկնաքաղաքացի այր · երևելի աստղ·
երկնաչու ընթացիք լուսատու ·
Գրիգորիոս՝ զօրութե էին · վարդարեալ եդեմ·
զանազան ծաղկօք անուշիւք ·
Գրիգորիոս՝ էական բարւոյն · էապէս պատկեր·
էին ճշմարիտ ճոխացեալ շնորհին·
Գրիգորիոս՝ ընտրեալ կերպիւ · ընդ ալիքն սլա-
ցեալ · ընդ հանդէս յոգունց երևեալ·
Գրիգորիոս՝ թաւախիտ անդաստան · թագազարդեալ
փառօք · թև ածեալ յեթերային բարձր խորան·
Գրիգորիոս՝ ծրարեալ ծաղիկ · ծիր մշակ երկնից·
ծաղկաւարան յոգունց բարութեանց·
Գրիգորիոս՝ իմաստիւք վերին իսկապէս լցեալ·
՚ի ծովածաւալս խաղաղ նաւահանգիստ·
Գրիգորիոս՝ լուսերանգ շաւիղ · լմամբ լցեալ·
լուսաւորիչ հայաստանեայց զարմից·
Գրիգորիոս՝ խոհական հանճար · խորհրդեամբ
մաքրեալ · խորհրդակից վերին հանճարոյն ·
Գրիգորիոս՝ ծով ծիծաղական · ծովակ դժրո-
ղին · ծառ բարձրուղէշ և պտղաւետեալ·
Գրիգորիոս՝ կատակագիր բարւոյ · կերպարան փա-
ռաց · կենդանւոյն յաւէտ յարաժամ·
Գրիգորիոս՝ հեղինակ բարի · հերքիչ ցանկութե·
հանճարով հոգւոյն զօրացեալ·
Գրիգորիոս՝ ձայն ազդարար · ձայնեալ ՚ի բար-
ձանց · ձևեալ հաստ անձինդ գովելի ·
Գրիգորիոս՝ ղամպար ջահացեալ · ղեկօք հաւա-
տոյ · ղեկավարեալ ՚ի ծով կենցաղոյս ·

Գրիգ

Գրիգորիոս՝ ճշմարիտ հովիւ․ ճառագայթ փա-
ռաց․ ճանապարհ 'ի կեանս անմահից։

Գրիգորիոս՝ մայր եկեղեցւոյ․ մաքուր սրբութ՟․
մտօք սլացեալ 'ի դասս սերոբէից։

Գրիգորիոս՝ յոգնազան պարգևք․ յարփինագեղ
լուսոյն․ յազգս երկրածնաց։

Գրիգորիոս՝ նուիրեալ վեհին․ նորազուարճ փա-
ռօք․ նահատակ բազմաչարչար։

Գրիգորիոս՝ շող էջ կենդանի․ շար ոսկեմանեաւ․
շնորհազարդ պսակ ս՟բ եկեղեցւոյ։

Գրիգորիոս՝ ոսկեձեւ աղբիւր․ ողողեալ գե-
ղեցկազարդ․ ուղղուէց արթուն առաջնորդ։

Գրիգորիոս՝ չնաշխարհիկ պարծանք․ չարչարիչ
չարին․ չարչարանօք վշտակիր մարմնոյդ։

Գրիգորիոս՝ պտղագործ երկիր․ պարարտաբեր
բուսովք․ պարգևօք հոգւոյն պատուեցեալ։

Գրիգորիոս՝ ջերմեռանդն աղօթիւք․ ջնջիչ
յանցանաց․ ջրոյն կենդանի և ա՟ծունակ։

Գրիգորիոս՝ ռետին քաղցրութե՟․ ռահ արփիա-
ձեւ․ ռահ գործեալ 'ի կեանս վերինս անմահից։

Գրիգորիոս՝ սոսկալի տեսիլ․ սրովբէական փա-
ռօք․ սլացեալ յաստեացս առ երկինս։

Գրիգորիոս՝ վարդ կարմրորակ․ վառեալ հաւա-
տով․ վիմարդեայ մտօք հաստատեալ։

Գրիգորիոս՝ տունկ տենչալի․ տէրունեան դը-
րախտին․ տարփալի վերնական վեհից։

Գրիգորիոս՝ րաբունի բարի․ րաբունեաց պար-
ծանք․ րեննական լուսով ցնծալի։

Գրիգորիոս՝ ցանկ հաւատոյ․ ցնծութի աղանց։

ցօղ

ցօղ զուարթարար բանական բուսոց.
Գրիգորիոս՝ սիւն ծխելոյս հոգևոր. սիւն ողի ձա-
ռիս. սիւն թէ բժշկարար ցաւոց.
Գրիգորիոս՝ փայլփլենափայլ ծաղիկ. փունջ մա-
նուշակաց. վառաձգորդ լապտեր լուսընկալ.
Գրիգորիոս՝ քահանայ անբիծ. քարոզ ճշմարիտ.
բնար ա͞ծախօս և քաղցրանուագ.
Գրիգորիոս բազմերանեան վկայն. յերկնելի
արարածոցս գերաշխարհիկն. վերնոյն երուսա-
ղէմի գաւառականն. անմարմնոցն դասուց աղ-
գայինն մաքրութեամբ.

Որդ՝ եթէ ախորժելի թուեսցի ումեք ըստ
ներբողական գովեստի գրեցն՝ յազգէ և
'ի գաւառէ պատմաբանել, ապա ուստի արժան է
'ի վերուստ անտի պարտիմք ցուցանել.
Յաբրահամէ մեծէ և յա͞յ սիրելւոյ առ սկըզբ-
նաւորեալ. 'Ի նահապետէ հնոյն՝ նահապետս նո-
րոյս նուիրեալ. Յարդարոցն հօրէ՝ արդարուե
ծնօղ ծանուցեալ. Յընտրեալ հնչմանն մօրն՝
մ քրամբիտ իմաստիւք փայլեալ. 'Ի կենսաւորա-
կան ծնունդեան բուրաստանն անուշից խնկոց ծաղ-
կեալ. Ընդ աւազանածին որդւոցն՝ 'ի զարդ-
փայլման ոսկի միացեալ. Ընդ վկայեսին որդւոյն
որ 'ի կենսատուրոյ, երկնաւոր խոստմամբ արժա-
նեան, և 'ի հրաշխաւական ազգան ժամանեալ.
Լոյս հոգւոյն՝ 'ի լուսոյ կողմանն ա͞յ ծագեալ.
Սա զի ա͞ծ շնորհ օրհնութեց որդւոյն լուսոյ՝
յառաջածին հօրէն ծածկեալ գայր ընդ նմին,
և լեր զաղինարուղխ գետն եփրատէս՝ 'ի ծոր-
ծոյս

ծորս ծոցոյ երկրի և ընդ երախս խորոց 'ի սահ-
մանս հայաստան ճի ողբերգացեալ բղխեն ։
Նոյպէս և մերն լուսաւորիչ 'ի քաջաբուն և 'ի
զօրաւոր զարմէն պարթևաց սնեալ ։ 'Ի պալհա-
ւական պետացն որ յարքայնիստ շահաստանէն՝
բարգաւաճանօք կոչեցեալ ։ 'Ի թագադարդելյն
արշակունեաց՝ արշակունի անուամբ առձայնել ։
'Ի սուրենական ցեղէն իբր 'ի յամպոց մըթա-
ցելոց՝ ցնծութե մեզ ցող անձրևեալ և լուսա-
ծնունդ ծագումն փայլեալ ։ 'Ի յանակայ հօրէ
իբր 'ի փշաբեր թփոյ՝ հրաներկ թերթս վար-
դից 'ի հոտ անոյշ մեզ վերածաղկեալ ։ Յօձից
թունալից խայթոցաւորաց՝ մեզ թիւրակէ բժիշկ
երևեալ ։ 'Ի խինձինից զաղրատեսից՝ երփնե-
րանգ որակ ծիրանւոյ 'ի զարդ կայսերական հան-
դերձից տուեալ ։ 'Ի տխրատպան հարանց դաւա-
ղաց՝ կենդանարար հոգւոց պարգևեալ ։ Նրմա-
ւենի քաղցրաբեր՝ արդարուն պտղովք 'ի փշա-
բեր անդոյ վարսագեղ բուսեալ ։ 'Ի ժանտահոտ
և 'ի դառնաճաշակ ծովէ՝ մարգարտոյ յօրինուած
'ի պէտս արքայական թագից ընծայեալ ։ Յապա-
ռաժուտ վիմաց քարանց կարծրութեց՝ տըպա-
զիան հրախայլ գունով գեղեցիկ գտեալ ։
Նա՝ այսոքիկ զխորդ կամ որպիսի եղանակաւ
գործեցեալ ․ այլ՝ յամենահնարն արուեստաւորէ,
'ի հրաշիցն ներգործողէ, 'ի բնութեցն ստեղծողէ և
'ի փոխադրողէ ։ Որ 'ի քարանց որդիս աբրահամու
յարուցանէ ․ զծերութի 'ի մանկութի և զանկութի
'ի ծնունդս շարժեալ նորոգէ ․ Յանշնչական

տընկոց՝ խոյ կենդանի՝ ՚ի պէտս պատարագաց պտղաբերեալ կախէ։ Որոյ իմաստութիւն անչափ, և զօրութիւն անբաւ, կամիլն գործ կատարեալ, և իմացուածն մտաց՝ ստեղծուածն աշխարհի։

Այլ երբեմն և ըստ արուեստական հանճարոյ վարի ՚ի գործ սքանչելեացն իւրոց։ Զի՞ է ոչ յերկրագործ մշակացն՝ որք խնամով տնկագործութեան զթթուաբեր և զդառնահամ տունկս նռնենեացն ՚ի քաղցրութի կամեցեալ փոխարկել, փայտս ՚ի պլեսկի ծառոց ոչ և առի՝ յարմատս թթուաբեր նռնենւոյն վարեն. յորմէ զօրութի հիւթոյ՝ զբերս դառնութեան ՚ի քաղցրութի յեղաշրջեալ փոխէ. և հալի և կորնչի դառնութեան որակ և թթուահամն ճաշակ ՚ի քաղցր և անոյշ և ախորժելի։

Նա՛ արդ՝ եթէ այսպիսի բնաւորապէս գործեցեալ լինին, ապա զիա՞րդ ոչ զարմանալի իմն հրաշս սքանչելեաց նորագործեացէ որթոյն ճշմարտի քաղցրաբեր ուռոց մշակօղն՝ ՚ի տնկաւորեալ այս երկնահաս տնկոյ՝ ՚ի դառնարմատ և ՚ի թթըթուաբեր ծառոյ ծնողէ։ Ի հեռուստ դարուց և կանուխ ժամանակաց դիտաւորութի իւրն իւրում ժամու պահելով։ Նա՛ տեղի յարմարական այսմ տնկոյ ածեցուցեալ։ Նա չիրիմս գերեզմանի՝ մերոյ Տէր և ազգի լուսաւորչին՝ մերձ առ դիրս հանգստեան հանդիպեցուցեալ։ Յորմէ մահաբեր տունկն դառնահամ՝ յանմահուն պտղոյ քաղցրութեան ճաշակ ժամանեալ։ Ի տիրանենգ զորմէ՝ տիրական աթոռոյ ժա-

ռանգ

ռանգ կացուցեալ։ Յաշխարհամատն ազգէ՝ նի փրկիչ զօրացեալ։ Յառաքելական մասնէն՝ առաքեալ քնի ընտրեալ։ Յածաւլառ լուսոյն ճրագ-լուսոյ արդարև մեծի տանս նի յօրինեալ։ Որ զի լուսաւորեսցի աշխարհ՝ գիտութ բանի՛ և առաքինական վարուք պաճուճելի. Զանզգամութ և զանգիտութ խաւարեալսն՝ լուսաւորել իմաստութ և գիտութ լուսոյն. ՚Ի փրկչէն և՚ի բարերարէ և յիմաստութենէ նորէ՝ հրաւիրակ երկնաւոր խրախճանութեն առաքեալ. ՚ի պատրաստական սեղանն և՚ի զուարճութե գինեբրուաց խառնարանն զհայաստանեայց ազգս կոչելով։ Որդ՝ փշալից այն տունկ՝ այս քաղցրունակ պտղոյ պահապան, և դիւրածախ ծեղն՝ առոք ցորենոյն բարձօղ, յետ ընկադործին զայս բերկրանաց պտուղ կթելոյ, և ցորենոյն հատի ՚ի հունձ հասելոյ, տապարաւ բանին՝ հոսեաւ արդար դատաստանին կորեալ հատանի. և փոշետասակն յարդ՝ ՚ի հողմոյ հանի. զարմիք և ազգք ՚ի սրոյ ջնջեալ. և մնացեալ միայն մերն լուսաւորիչ ՚ի ծոց խնամոցն այ ծածկեալ. և յեկեղեցւոյ հնձանս ուրախարար ողկոյզ նուիրեալ. Հացն հաստատութե սրտի քաղցելոց՝ յըղտե մարանս որդինք ամբարեալ. Զոր անհարկութէն ՚ի վերուստ առեալ նորին դայեկացն՝ ՚ի կեսարիա կապադովկացւոց հաւուցանէին ՚ի մեծն մայրաքաղաք. Հօղն եկեղեցւոյ դրախտի՝ ՚ի յամպ խնամոցն այ բարձեալ, ՚ի սրախողխող սպանմանէ զարմիցն զերծեալ. Որ և տէրն յո̃ թեթև ամպօք ՚ի

՚ի հեռաւորեալ որոյն ՚ի յեգիպտոս փախուցեալ։
Որդ՝ պայազատի ծնունդ սքանչելի զերորդ ՃԸ
մարմնոյ ազգաբանութե պատմեսցք. որ ՚ի վեր
քան զբնութի մարմնոյ երևեալ եղև յարմարութե
կարգայն. Աշխարհական փառաց վեհագոյնն.
Գիտնական գերագրութեան գովութիւն. Արշակու-
նեայն Թագաւորաց պարթևաց Թագն. Առա-
քելոյն Թադէոսի պարգևական զաւակն. Աւե-
տարանի նշխարաց սրբին օրհնութե շառաւիղն.
Մխիթարեալ ծին նր ընտրեալ հոգեբարձուն.
Արևելեան ծննդեան և աշխարհափայլ ծագումն.
Սնեալ սրբութե յաշխարհն գաւառաց, և փարթել
քրիստոնէական հաւատոյն իմաստութե, և յար-
բունս հասեալ ամծապաշտութեն հանճարաւորութե.
Որոյ կենաց փառացն կենդանի և հոգևոր օրէնք
տուեալ ծի. Ոչ գրոշմեալ գիր ՚ի տախտակի
իբր ՚ի քարեղէն պնակիտսն մովսէսի, և ոչ գրա-
ւորական պատուիրանաց ձայնք տպեցեալ դեղօք
՚ի քարտիսի, այլ մ որդ հրեշտակակրօն ՚ի մաքուր
մարմնի եդեալ յընդհանուր բնութես ստեղծ-
ուածի. ՚Ի փարթ ուսման համագամայն երկ-
րածնաց մարդկային սեռի. Իսկ որդ յամենայ-
նում, նոյնպէս և յամենայնութեն ամծագիր օրէնս.
Յորմէ ոչ հրաժարեաց իբր ՚ի խոտան և յարհա-
մարհելի իրէ, և ոչ անկեալ իբր ընդ հարկաւոր
և անլուծանելի կապով. Ոչ միայն զի և զնո-
րէնն օրինաց ցուցցէ զպատճառ և զչափ և զկա-
տարումն. Իսկ պատճառ, զի սակս որդէծնութեն
և զօրհնութեն ամ ծնլոյ զհրամանս. Զի ոչ էր
պարտ

պարտ՝ եթէ երկինք զգալի լուսաւորք պան-
ծառայի առ ՚ի ցոյցս մարմնոյ վ յելշակմանց, իսկ
արեգակնափայլ հայրն զծնունդս լուսոյ իւրոյ
ծածկեալ ոչ փայլեսցէ ՚ի կամարս նորոյ երկնի
(եկեղեցւոյ ասեմ) զհոգևոր ջահսն բերողի.
Եւ յետ զամուսնութեն ընդոց զպարտս և զչափ
սահմանի, այնուհետև զկուսական կրօնիցն յան-
ձին բերէր զլուսաւոր մաքրութի. Ոչ զի մի
զրկեսցի ՚ի նմանէ ամուսնութեն կարգ. ոչ ունե-
լով զողջախոհութեն օրինակ. Եւ մի գերակա-
տար կուսութեն պատիւ անգործ և անգիտելի
մնասցէ յամուսնութեն կարգէ և կենաց.

Նաև յետ զայսոցիկ տալոյ զօրարացոյցս, այնու-
հետև փութայր լինել հայր արդարութեն գործոց.
Եւ է օրինակ արդարագործութեն այս, ոչ ունեմք
պարտական զատանիլ ըստ առաքելական խրատուն.
Այսպէս որոյ լցեալն հոգւոյն Ճառագայթիւք իւր
լուսնէ լուսոյ նիւթ արեգական՝ յարևմտից
յարևելս հասանէ, իբր դարձ արեգականն ՚ի
ջօրեայն կողմանէ ՚ի սայլն կցս առնելով զըն-
թացս. Նյպս և նա յազգս և յազինս հիւսի-
սաբնակ աշխարհին դիմեալ. զի արեգակնապէս
զանպտղութե զատուն հալեսցէ, և զխաւարամած
թանձրութին քայքայեսցէ, և զլուսոյ և զառըն-
ջեան մասունս աճեցուսցէ.

Յաղագս որոյ դոյ առ մեծ արքայն հայրապետ-
դատ, զի զծնունդս խաբէութե իւրոյ հօրն դա-
հանաց զպարտուն վճարեսցէ միամտութբ ծա-
ռայութե. Եւ զառաքելական վիճակեալ ճ և

այգ

ազգ զհօրն՝ ժառանգեսցէ․ չարչարանօք և արեամբ ստացեալ․ զոր ընձեռեալ յանձնեաց նմա կարկառմամբ ձեռին ՚ի գերեզմանէն։ Այլ արքայական ատենին զպակասութի չարչարանաց տն՝ ՚ի մարմնի իւրում կլեսցէ վս մարմնոյն քնի որ է եկեղեցի հայաստանեայց։

Յաղագս որոյ հարկաւոր է յիշել և զտեղի չարչարանաց նորին․ որով զտեալ մաքրեցաւ ՚ի բովս փորձանաց այս լուսափայլ ոսկւոյ մաքրութի։ Այլ թուել զհոգեհրդական թիւս չարչարանացն զոր կրեաց քմանման գթով վս մեր․ զի ՚ի չարաչար կրից զմեզ ազատեցուսցէ, և չարչարանօք իւրոյ մարմնոյն մեզ՝ զխոցոտեալս մեղաց մեր բժշկեսցէ։ Տէրն նմանեալ հաւատարիմ ծառայն իւրոյ էր, և Ճշմարիտ հովուին քնի հովուէն հրակող և արիական։ Զի զզաստացեալ անդամքս և հաստեալ, յօդեալ ՚ի գլուխն մեր կապեսցէ․ և զմծաբարբառ ձայնիւ ցուցեալն եթէ՝ (այլ եւս ոչխարք են իմ որ ոչ են յայսմ գաւթէ,) զնոսին մծայլին հօտն խառնեսցէ։ Յաղագս որոյ ոչ էր կար թուել քաղաքի կենդանեայն այ ՚ի վր հաւատոյն լերին կացելոյ․ և ոչ մծայլին փչմամբն վառել բազմալոյս ճրագին՝ դնել ընդ գրուանաւ ծածկութի։

Ծանուցեալ լինէր թագաւորին՝ Ճշմարտութ նր հաւատոյն։ Յառեան դատաստանի ածեալ լինէր անպարտականն ատենի։ Հարց և փորձ բանից արարեալ արքայն՝ ահարկու և զարհուրելի դիմօք։ Այս զոռոզաբար և սպառնալիս սաստիկ

և

և ընդ բարկութ՟ բերեալ յոյզս է՛, և արիական
պնդութ՟ի և առաքինաբար պատասխանիս ըն՛
իմաստութ՟ և հանճարով՛ի մերյն։ Որ համառօտ
բանիւ՟ զմխիթարեա՟ն զանց արարից, և միայն զխոր-
հրդական կիրս չարչարանացն և գթութեանն մեզ
ամբարօղ տանջանսն պատմեցից բանիւ՟։ Ա՟ զի
թագաւորն սաստիկ լցեալ բարկութ՟, հրամայէր
կապել զձեռսն յետս. և արկանել գայլ 'ի բե-
րանն. և կախել շառաչիւս ադի 'ի վ՟ր ողանն. և
տալ գելոցս կրծիցն. և արկանել առասանս 'ի
կապս գելարանաց կրծիցն. և վերամբարձ կա-
խել 'ի բարձրա՟նդակ տանիս ապարանից որմոյն
մեքենայիւք։ Իսկ կայր այնպէս զեօթն օր։
Իսկ որդ՝ զմտա՟ ածեալ զանհրա՟ն առենի և
զանխմաստն առեանականաց զգործն անուղղայ
զարհուրեալ դողամ. և ոչ առանց արտասուաց
բերեմ զեղեալն ողբոց արժանի. Մ՛վ արքայ
մեծազօր՝ զխորհրդ որ բազմութե զօրաց և ...աց
և ազգաց տիրես, այդ հաւ անխմաստաբար և
անզգայութ՟ վարիս. այլ և ոչ զոք յիշխանաց և
յաթոռակցաց ունիս զգաստացուցիչ. և ընդէ՞ր
այդքան կարծրացեալ սրտիւ՟ նմանիս քարանց։
Ո ի 'ի քաղցր ցօղոյ վարդապետութեն բանի 'ի
բարբառս բերանոյն իմր յամպոց երկնից իջե-
լոյ՝ ոչ կակղացա՟ պնդութի սրտից ձերոց։
Ո խորհրդ ոմ՟ ալքոյ՝ ա՟աղաբար ծանրանաս՝ հա-
կես 'ի վայր՝ և ընդդիմանաս այնմ, որ զձեզ ստող
երկնաւոր թեթեւաթուիչ ընթացիւք 'ի բար-
ձանս է հանելոց։ Իսկ դու ք տանջանս չոր փու-
խս

խանակ բարւոյ և հանգստեան ձեզ հոգևորի
հաստուցանէք։ Օ վերամբարձ ձեռն երկնահաս
զօրբարային օդոյ՝ մշտատարած կարկառմամբ յա-
ղօթս, զհաշտութիւն ձերոյ ընծայամատոյց զհոր-
հաբաշխն ձեր ա͞ծ-ագործ ի-ղուն զմերկութիւն
ձերոյ զզգեցուցանօղն այլ և զմաքրօղ մատուցման
զխորդ կապէք՝ ի գործս ձեռաց ձերոց կապելքդ
և ի շարժմանէ բարեաց կարկամեալքդ։ Նա՛ մ͞ղ
գայլ ի բերան և դանդաղանանդս ի կղակի դնէք
ի կենդանաբուղխ բանին աղբերաբար բղխօղն։
Որոյ շարժումն հոգևորի շրթանցն՝ իբր զլար
կարմիր ներկեալ գեղեցկախօսութ͞բ. յորմէ շինե-
լոց էք տաճար ա͞յ ըստ լարոյն յարմարութ͞ միա-
ցեալք. Ելք 40. և արեանն ք͞րի խորհրդով՝ գե-
ղեցիկ կարմրութ͞բ ներկեալք և մածեալք։
Որ սիրովն ք͞րի շարայարէ ա͞յ լարով. և հաւա-
տոյն ներկուածով գեղեցկացուցանէ իբր կար-
միրով։ Երգ 4. 3. Որ մեղր և կաթն էր կաթուած-
բանի՝ լեզուին շարժողի։ 11։ Տղայոցն ի ք͞ս՝
կաթն ըստնդարար, 1 Կոր 3. 2, և հաստատելոցն
ի հաւատս՝ մեղր քաղցրաճաշակ։ Եբր 5. 14։
Ո՛չ պատկառէք կամ զարհուրիք դանդաղանանդս
դնել ի կղակի. ի գործին ա͞ծ-ուսոյց բանի. որ
ցանկալի էր քան զոսկի և քան զակունս պատուա-
կանս բազումս։ Որ իբրև զանօթս տաշխից էր
խնկոց անուշից ա͞ռ իմաստնոյն գովեստից։ Երգ 5. 13։
Նմանեաց վարդապետութիւն ուսուցիչ. որ հաւա-
տարիմ բանիւքն իմաստուն առնէր զձեզ զման-
կամիտ և զանխմաստ բազմամեայ ալեայդ։ Որ

ի                                                  լու

լուսով պատուիրանին փառէր զՏէրդ. նաւմացէլ ձեր մտացդ: Որ զողջախոհութեան լուսաւորիլ շուշան սերմանէր շնթամբք՝ 'ի սրտից ձեր խոպանացեալ անդաստանս. և զմուռս կաթեցուցանէր 'ի մեռելութի մարմնաւէր և ախտակիր ձեր

բարուցդ: 5.5.

Ըուաշխոս աղէ ծանրաբեռնեալ դնէք 'ի մէջ ողէս՝ ծաղկին օրինացն բեռին բարձողէ՝ անհամեալքդ յամծպաշտութէն աղէ. Եւ գերարանօք և անրօք չարահնար պնդէք զսիրտն որ՝ և սրբարար հոգւոյն օթարան, երկրաքարշէք և անսանձմին՝ զերկնաւոր մարդոյն 'ի բարի սրտէ զբարիս բղխողէն: Որ 'ի ջերմութի սրտին բնաւորականէ խառնեալ ունէր զհուր սիրոյ յերկիր սերմանազէն. որ և 'ի սիրտս ձեր սառուցեալ՝ կամէր բոցբոքել: Ղուկ 12.49. Որդ՝ որ յաղթական չարեաց ձեզ աղատոյտոյր՝ և անթիւ բարեաց բերող ձեզ աղբիւրաբար՝ այդպէս բազմահնար չարչարանօք տանջէք անխնայաբար: Այլ դուք ոչ գիտէք զինչ գործէք. այլ և ոչ խուժանն հրէից զմեծաբան և զՏէր յո քո հանել 'ի խաչ ձեռօքն:
Եւ այն որին որդիաբար առ Հայրն աղաչէր, Հայր՝ թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն: Ղուկ 23.34. Եւ սա հայրաբար զթոյլ 'ի մէջ մեղուցեալ որդւոցն աղերսէր. և փոխանակ չարեացն՝ զերկնաւոր բարիսն հայցէր: Ընդ կարգանաց ձեռին բարեգործակ՝ խնդրէր պաղատելով զի արձակեսցին կապեալ և կարկամեալ ձեռք հայատանեայց աշխրհ. Կազմօղք կուոց և զոհարարք դիւաց և

խըն

խընկամատոյցք անշունչ պատկերաց՝ ուսցին առ
ած վերամբառնալ։

Դանդանաւանդս ընկալաւ ածաբան բերանն նր, զի եղաք մեք անասնացեալ բարուք և անիմաստ մտօք իբրև ձիս և ջորիս։ Զորոց պա՛րտ էր 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ձըմլել զկզակս. և զխստերախ և զապարասան բարսն՝ առ բանատուն և ստեղծիչն դարձուցանել։ Նորդ զմերն արժանեաց կերս յինքն կրեաց բարեգութ հայրն զչարահատոյցն որդւոց. զի զմեզ յանասնական ախտասիրութէն և 'ի վայրենաբարոյ սովորութէն յիմաստութին երկնային՝ ընդ հնազանդութ հօրն և արարչին դարձուսցէ։

Դեղարանօք և անրօք ձընշեալ ճմլեցան կուրծք և սիրտ նր, որ սբն էր սրտիւ և ածային տեսութեանն արժանաւոր։ Մտթ 5. 8.

Զի սրբեսցէ զմիտս մեր 'ի խղճէ չարեաց. և անօթս երկնաւոր գանձուցն արասցէ։

Բեռինս ծանրութ աղի 'ի վր ողնին դժուարակիրս և կսկծելիս բարձեալ բերէր. այն որ աղ համեմիչ լինելոց էր հաստատնեայց՝ աղիւն սուգութէ և ճշմարտութէ համեմելոց. զի զանհամութի և զնեխութի գործոցն 'ի ճաշակս անուշից փոխարկեսցէ։ Մտթ 5. 13.

Եւ արդ՝ այսպէս ամ կերք չարչարանացն նր խորհրդաւորք են. և մեզ փրկականք և ազատաբարք և առիթք բարեաց։ Բայց զամենայնն յիշել երկարութի լինի ճառիս. մանաւանդ զի 'ի մր հայցն պատմութիս և ներբողական ճառն

զե

գեղեցկապէս մխիթարեալ են։ Առ ամենայս դի-
տաւորութն յաղագս սրբութե լերինս է․ որ տեղի
եղեւ երեւմանց ճգնութե մերոյն․ եւ դիր հան-
գստեան գերեզմանի մե մարմնոյն․ վն որոյ եւ
՚ի սոյն դարձուցից զբանս։

Բազում լերինք ըստ զանազան պատճառաց
հռչակելի անուամբ յոյժ մեծարել պատուին։
Զի նախ՝ յետ համաշխարհական ջուրցն հեղե-
ղին՝ պատուեցաւ լեառն արարատեան՝ բարձրա-
կառոյցն մասսիւք․ տեղի հանգստեան եղեալ
տապանին որ ունէր զխորհուրդ եկեղեցւոյ․ եւ
եղեւ վերստին ծնող մարդկութեան։

Աբրահամ ՚ի լերինն ամուրհացւոց զիսահակ՝
այ պատարագէր։

Լեառն քորեբ հրաշալի տեսլեամբն պատուի․
զոր եւեւս մովսէս ՚ի խորհուրդ կուսին զմորե-
նին վառեալ որ ոչ այրէր։

Լեառն սինա երեւմամբն այ մեծարեցաւ․ զի
անդ տուեալ մովսէսի տախտակքն ածագիրք։
Այլ այժմ տապանակն՝ եւ որ ՚ի նմա գանձեալ
օրէնքն՝ ՚ի նոյն լերին ՚ի ձեռն երեմիայի մար-
գարէի պահեալ կան ՚ի փապ վիմին՝ յորում եդ-
ած զմովսէս․ ՚ի տուէ ամպով ծածկեալ եւ ՚ի
գիշերի լուսով։

Պատուեցաւ յարաբովթ մովաբու լեառն նա-
բաւ․ զի անդ եղեալ մովսէսի եցոյց նմա ած
զերկիրն պարգեւաց եւ անդ վախճանեցաւ։

Մեծարեցաւ լեառն սիոն զի ընտրեաց զնա ած
տեղի, յորում եդ զանուն քահանայութ իւր ընդ նմա։

Զնոյն

Զնոյն լեառն և դաւիթ ամրացոյց. և սողոմոն ՚ի նմա զտաճարն շինեաց հրաշազան յօրինուածովք. Իմաստնացեալն յա̃յ սողոմոն՝ ՚ի գաբաւոնաց-ւոց լեառն՝ հազար եզինս պատարագ մատոյց ա̃յ, և խնդրեաց իմաստութի, զոր էառ անհամե-մատ մեծութեամբ.

Եղիա ՚ի գլուխ կարմելոս լերինն աղօթէր. և հրով և ջրով տանջեալ խրատէր զյանցաւորս օրինացն ա̃յ. Ի նոյն լերինն և եղիսէոս համա-նման վարդապետին իւրոյ աղօթէր. առ որ իջեալ բանակք երկնաւոր զօրացն, և աղօթիւք մարգա-րէին բացան աչք պատանեկին. և տեսանէր ըզ-լեառն լցեալ կառօք և հեծելօք. Յս̃ տ̃րն ՚ի բարձրութի լերինն նստեալ ուսուցանէր աշա-կերտացն զինն երանութիւնս.

Պատուեցաւ լեառն տաբաւոր թափօր. զի անդ յայտնեաց տ̃րն զփառս ա̃ծուե իւրոյ և զօրի-նակ հանդերձեալ կենաց և զխորհուրդ եկե-ղեցւոյ անհամեմատ բարձրութեամբ.

Պատուեցաւ գողգոթա անհամեմատ փառօք. զի անդ տ̃րն խաչին փառաւորեցաւ ՚ի վ̃ր շիրմի նա-խաստեղծ մարդոյն և ազատեաց զծնունդս ն̃ր.

Շնորհազարդեալ եղև լեառն ձիթենեաց. զի անդ բաշխեաց զշնորհս քահանայութե տ̃րն աշա-կերտաց իւրոց. Ի սարինայ և յահերմոնէ ա-կանքն յորդանանու բղխեն յորում տ̃րն մկր-տեցաւ. զնոյն մեզ ծնող տուեալ հոգևոր.

Ան և բազումք որք ընտ մարմնոյ և ընտ նիւթա-կան հրաշից հռչակելի անուամբ համբաւին.

Ոսկի անուանեալ լեառն յիտալիա։ Լերինք
երկու ՚ի սիկիլիա. Պարթենոս, յորմէ գետք
երկու մեծամեծք բղխեն. և Ուլկանոս, որոյ
միշտ կատարն հրով տոչորի։ Մեծն լիբանան
և կարմելոս յասորիս. Գիդիմոն ՚ի փիւնիկիա.
Տորոս ՚ի սիւռիա. Անտիտորոս ՚ի կապադովկիա.
Ոլոմպոս ՚ի կիպրոս. Յառաջին հայս արգէոս
՚ի մերումս Տի. զի մի նուաղեսցուք իմիք քան
զազգ և զաշխարհ ՚ի հաւաքելեացն կողմանէ.
Իսկ ՚ի յաւուրս յետինս ըստ մարգարէական
ձայնին՝ Եսայի 2.2, յայտնեալ եղև լեառն սե֊
պուհ, ՚ի միջոցս սահմանի երկուց գաւառացն
եկեղեցեայ և դարանաղեց, սեպհական փառք
հանգոյն հանուրց խորհրդաւոր և մեծապատի
լերանց. Զոր՝ և մեզ արժանի է բանիւ բարբա֊
ռել, ձայնիւ ներբողել, և զունակցեալն ՚ի
սմա ճշմարիտ ճոխութի արտայայտել.

Սուրբն լեր լեառն սեպուհ, և խորին խորհր֊
դով խնդա՛ քան զարարատեանն բարձրուկս֊
ույցն մասիւք. Զի է անդ տապանն հանգեաւ
կազմեալն ՚ի նոյէ փայտեղէն նիւթով. Ծնն 4.8.
Իսկ ՚ի քեզ՝ տապանն ապրեցուցիչ Գրիգորիս.
կազմեալ կամացն հօր գթութե, յօրինեալ քրս֊
նման առաքինութե, գեղեցկացեալ հոգւոյն որոյ
զօրութե. Այն տապան՝ ՚ի ջուրցն արկածից
զմարմինս մարդկան ապրեցուցանէր և զազգս
գազանաց. Իսկ այս կենդանի տապան՝ ՚ի հոա֊
նոց մեղաց և կռապաշտութե՝ զոգիս բանական
հայաստան ազանց կեցուցանէր. և լինէր սերմն

ուղղափառութե̃, որ է ճշմարիտ և բարուք կենդանութի։ Յայնմ տապանէ ելեր 'ի մօր արգանդէ ծնեալ նաւահապետին Նոյի, պատարագ ա̃յ մատուցանէր 'ի ցամաքիլ ջրոյն։ Ծ․20։ Իսկ 'ի յայսմ ապանէ յորդորաբուղխ բանի քաղցր քարոզէ՝ ծնեալ վերստին հայաստան ազգ, պատարագ ա̃յ կենդանւոյ և միայնոյ ճշմարտին մատուցանեն, ցամաքեալք յախտից և մաքրեալք 'ի մեղաց։

Ուրախ լեր լեառն գերազանց՝ գերամբարձ տեղի՝ ամուրհացւոցն լերին նմանեալ․ աբրահամու զենմանն տեղւոյ։ Յորում զորդին իւր սիրելի պատարագէր ճշմարիտ օխոյն, և զխոյն փոխանակ առնոյր սիրելւոյն․ և զպարգևատուն պարտական առնէր ա̃յ։ Ծն 22․9։ Իսկ 'ի քեզ հայրն հաւատոյ՝ լուսաւորիչն ոգւոց մե̃ն Գրիգորիոս՝ զծնունդս ոգւոյն զառաքինութեց մատուն՝ և զժուժկալութի մարմնոյ հողանիւթ ընութե̃ն՝ և զմաքրութի մտացն՝ ա̃յ նուիրէր։ Նա՛ փոխանակ առնոյր ժողովուրդ մաքրեալ և կրօնիւք ընտրեալ։ Նա՛ միշտընջենաւոր յարամնայու̃թ իւր պարտական լինիլ հայցէր պահել անվրէպ զնոյն կնիք հաւատոյ ուղղափառ դաւանութե̃ յորդին միածին։

Ուրախ լեր լեառն ս̃ք՝ սրբութե̃ կայան․ սինէական շնորհին պատուեալ․ այնմ որ եղև տեղի տապանակին որ պատեալ էր ներքուստ և արտաքուստ ոսկւով․ և 'ի նմա սափորն ոսկի, և տախտակք կտակարանացն․ յորոյ վ̃ր քերովբէքն փառաց հովանի ունէին։ Ելց 25․10։

․ Իսկ

Իսկ դու առաւել զուարճացիր որ եղեր տեղի
ակնկալմ տապանակին զուտ և զուարթուն
անձին սրբոյն Գրիգորի. որ պատեալ էր սրբութ
՚ի ներքուստ հոգւով և արտաքուստ մարմնով։
Այլ ՚ի հինգ զգայութիս մարմնոյն և ՚ի նոյնքան
զօրութիս ոգւոյն՝ գրեալ էին անջնջելի աստուածային
օրինացն պատգամք։ Այլ իբր սափոր ոսկի լցեալ
էր մանանայիւ աստուածային շնորհացն. և բուրվառ
սրտին բուրէր զանուշութիւն խնկոց։ Որ և ՚ի քեզ
եդեալ պահեցաւ նշխարք նուիրեալ սրբոյ նահա-
տակին. որով և պատուիս յազգաց և ազանց։
Այլեալ ՚ի հեռուստ՝ զհող քո օրհնեալ ՚ի պէտս
բժշկութեան ազգայնոցն իբր ընծայս մատուցանել։
Որպիս էր լեառն բարձրագոյն և գլուխ լե-
րանց. զի որ մեծն Մովսէս ելեալ յարաբովթ
մովաբու ՚ի լեառն Նաբաւ, յորում եցոյց նմա
աստուած զերկիրն պարգևաց և անդ վախճանեալ պա-
հեցաւ ՚ի հրեշտակաց. Բ.— 27.12. Նմանապէս
և մերն Մովսէս՝ նոր ժողովրդեանս առաջնորդ՝
քահանայապետն սուրբ Գրիգորիոս, յորժամ ան-
ցոյց զմեզ ընդ ծովն մեղաց և հեղձուցիչ կռա-
մոլութեց, բնակեցոյց յերկրատասան առաքելական
վտակին. Ելից 15.27. զերծուցեալ ՚ի հեթանոսա-
կան մոլորաբեր ուսմանցն։ Այլ իւրով չարչա-
րանօքն եհան զմեզ ժառանգութիւն ընդ իւր և
յերկիր պարգևաց յաշխարհն կենաց։ Այլ ինքն
ելեալ ՚ի քոյդ բարձրադիտակ բարձունս, միշտ
նկատէր մօտք զնոյն երկիր կենդանեաց։ Այլ
աղօթէր ՚ի ծերպս քարանձաւաց զպահպանութիւն

իւ

րագս ա՟յ մատոյց, և խնդրեաց իմաստութի՟. զի
զթագաւորութի՟ն ուղղեսցէ և զժողովուրդ ա՟ն
հովուեսցէ. զոր ետ ա անհամեմատ մեծութ՟բ.
3 Թագ 3. 4. Նոյնպէս և արքայակերպն Գրիգո-
րիոս արքայութե՟ն տեսօղ և քարոզ, 'ի քեզ բարձ-
րացեալ, զբանական պատարագս և զպտուղ շրթ-
թանց և զմարմինն մաքուր' ա՟ն ա՟յ ողջակիզե՟լ.
Նա՟ խնդրէր' վերին իմաստութե՟ն ճշմարտին և
կատարելոյն լինել իմացօղ. 'ի հայրենի սեղանն
բաժանման բանին ըստ աւետեաց խոստմանն.
Որ և ե-հաս անհամեմատ ձրիութ՟բ. ելեալ 'ի
հայելւոյս, և ժամանե՟լ 'ի դէմ յանդիմանն. և 'ի
փոքրագունէս 'ի մեծ գիտութի՟. 1 Կոր՟ն 13. 12.
Նա՟ այժմ հովուէ զժողովուրդ իւր յիմաստս
ա՟ծատուր' քաղցրուսոյց վարդապետութ՟բ լուսաւոր.
Սուրախ լեր լեռան սեպուհ' կատարեալ և բա-
րերջանիկ. կարմելոս լերինն համանման.
Յորոյ գլուխ եղիաս ելեալ աղօթէր, և հրով և
երաշտութ՟բ տանջէր զյանցաւորս օրինացն ա՟յ.
3 Թագ 17. 1. և ինքն սարեփթացւոյ արւոյն' լուծ-
հացի և իւղոյ 'ի տանէն աղբերացուցանէր.
17. 10. Իսկ 'ի քեզ' հանդուննատիպն եղիայի'
մարգարէաշնորհ և առաքելապատիւ հայրն Գրի-
գորիոս. Նա՟յն որ հրով հոգւոյն զբանակս դի-
ւացն հալածէր. և սաստիկ պատուհասիւ զյան-
ցաւորս ա՟ծային օրինացն խրատէր. և զծծումն
ա՟ծային իւղոյն և յերկնից իջեալ հացին' յե-
կեղեցիս հայաստանեայց աղբիւրացուցանէր.
Նա՟ ոչ եղիսէոս համանման վարդապետին իւ-

րագս ա̃յ մատոյց, և խնդրեաց իմաստութի․ զի
զթագաւորութիւն ուղղեսցէ և զժողովուրդ ա̃ն
հովուեսցէ․ զոր եառ անհամեմատ մեծութբ․
3 Թագ 3․4․ Նոյնպէս և արքայակերպն Գրիգո-
րիոս արքայութեն տեսող և քարոզ, 'ի քեզ բար-
բացեալ, զբանական պատարագս և զպտուղ շրթ-
թանց և զմարմինն մաքուր՝ ա̃ն ա̃յ ողջակիզել․
Նա խնդրեր՝ վերին իմաստութեն ճշմարտին և
կատարելոյն լինիլ իմացօղ․ 'ի հայրենի սեղանն
բաժանման բանին րստ ա̃ւետեաց խոստմանն․
Որ և եհաս անհամեմատ ճոխութբ․ ելեալ 'ի
հայելույս, և ժամանել 'ի դէմ յանդիմանն․ և 'ի
փոքրագունէս 'ի մեծ գիտութի․ 1 կոր 13․12․
Նա այժմ հովուէ զժողովուրդ իւր յիմաստս
ա̃ծատուր՝ քաղցրուսոյց վարդապետութբն լուսաւոր․
Որում լեր լեառն սեպուհ կատարեալ և բա-
րերջանիկ․ կարմելոս լերինն համանման․
Յորոյ գլուխ եղիաս ելեալ աղօթեր, և հրով և
երաշտութբ տանջեր զյանցաւորս օրինացն ա̃յ․
3 Թագ 17․1․ և ինքն սարեփթացւոյ արուոյն՝ լինէր
հացի և իւղոյ 'ի տանէն աղբերացուցանէր․
17․10․ Իսկ 'ի քեզ՝ հանգուցանողին եղիայի՝
մարգարէաշնորհ և առաքելապատիւ հայրն Գրի-
գորիոս․ Նոյն որ հրով հոգւոյն զբանակս դի-
ւացն հալածեր․ և սաստիկ պատուհասիւ զյան-
ցաւորս ա̃ծային օրինացն խրատէր․ և զծուա̃ծ
ա̃ծային իւղոյն և յերկնից իջեալ հացին՝ յե-
կեղեցիս հայաստանեայց աղբիւրացուցանէր․
Նա ոչ եղիսէս համանման վարդապետին իւ-

րոյ հրաշագործէր, Դ Թագ 2. 14, և զբանակս երկ-
նաւորացն առ ինքն իջեալ տեսանէր. որ և աղօ-
թիւք բացեալ զաչս պատանեկին, զլեառն հրե-
ղէն կառօք և հեծելօք լցեալ ցուցանէր. 6. 17.
Նմանապէս և սուրբն Գրիգորիս աղօթիւք շըր-
ջապատ պարսպեաց զքեզ ով ածաբնակ լեառն.
Նա զզօրսն անմարմինս սերոբէից՝ մարմնաւոր սե-
րոբէն ՚ի բարձրութեն երկնից ՚ի խորաձորս քո
իջուցանէր. Զոր առաքեաց ած ՚ի պատիւ նմա
գալ տեսանել զանտեսանելի ճգնութին և պատմել
հրաբուն զօրացն զանկար բնութեն մարմնոյ զարխա-
կան ժուժկալութին. Տէրն ՚ի լերինն ուսուցանէր
զաշակերտսն, և ՚ի լեառն աղօթէր. և հաւատա-
րիմն սն զնոյն նմանութի յանձն իւր ցուցանէր.
Զի յետ ամի ՚ի բարձրութի լերինն ելեալ,
աղօթից և ճգնութե պարապէր.

Ուրախ լեր լեառն գովեալ՝ գոհութե տեղի.
գողգոթայի մեծափառութեն բարգաւաճեալ.
Յորում ելեալ տրն բարձրանայր յետ տնօրէ-
նութեն ամի խաչին կատարել զմերն փրկութի.
Նա գոհանայր զհօրէ որ առաքեաց զմածինն
՚ի փրկութի, և որդի սիրով կատարեաց զկամս հօր
՚ի գագաթան տեղւոյն գողգոթայ. Ղուկ 23. 33.
Իսկ ՚ի քեզ ով պատուեալ լեառն և գովելի
գագաթն՝ հայրն հրաշափառ ՚ի հօրէ զարդարեալ
և որդին հարազատ առաքեալ յորդւոյ, և հոգ-
ւով համճարեղն՝ ընտրեալ ՚ի հոգւոյ, Գրիգո-
րիոս ամենագով վկայն, յետ կատարելոյ զհմբե-
րութիս զանտանելի չարչարանացն զհանդէս,

բազ

բազմաբան վարդապետութեն լուսաւորելոյ զհիւ-
սիսայինսն ազինս, և հաստատելոյ զեկեղեցիս
հայաստանեայց, ելեալ 'ի քեզ գոհանայր զհօրէ.
օրհնելով զորդի և փառաւորելով զամենասուրբ հո-
գին, որ նովաւ հրաշագործեաց զմեծամեծս և
զհրաշակերտս. յոբ 5. 9. Այլ կանգնեաց զխաչ-
կական նշան խաչին 'ի նշանաւոր տեղիս. և ամ-
րակուռ զինուք պարփակեաց զձորոց և զքա-
րանցն բազմութի. Որ և զգէնն արքայական զա-
պանմանն գործի կենաց արքային յօրինէր 'ի
կենաց գործիս. Այլ կայ այժմ 'ի պահեստի 'ի
քեզ ով բարեբախտ և ամենազօր Սեպուհ.
սրբութե տեղի և սրբասէր արանց սրբելի.
Սուրբ լեր լեառն սեպուհ շնորհընկալ և պար-
գևաշատ. բարեբաշխ լերինն ձիթենեաց քաղա-
քեալ. Զի ով անդ տէրն 'ի համբառնալն օրհ-
նեաց զաշակերտսն և ետ նց շնորհս քահանայա-
պետութե և ինքն յիւր սեպհական փառսն վե-
րացաւ, Այսպէս և 'ի քեզ տիպն տիրական ար-
ժանապատիւ քահանայապետն Գրիգորիոս՝ իւ-
րովքն ձեռօք յօրինեաց զփայտակերտ խորանն
որ՝ յանուն արեգակնն արդարութե սրբուհեկին
և կարապետին յովհաննու. Այլ 'ի նոյն տաճա-
րի ետ զշնորհս քահանայապետութեան որդւոց
իւրոց լուսաւորիչն. յանձն առնելով նմա զբա-
նաւոր հօտն. Այլ ինքն միայն հրեշտակակրօն
վարուց պարապէր.
Սուրբ լեր լեառն որ՝ գեղապանծ լուսով
զուարճացեալ. և ցնծա՛ 'ի տէր սանիրոյ և ահեր-

մն

մանի ։ Յորմէ ակունքն յորդանանու բղխեն ։ յորում և տէրն մկրտեցաւ և ետ մեզ վերստին ծնունդ և հոգևոր լուսաւորութի ։ Իսկ ՚ի քէն աղբիւրք երկու բղխեն ընդ այլ բազմաբուղխ վտակս ջուրց ։ աղբիւրն լուսոյ, և ջուրն բարեհամ ։ Եւ ով ջուրն սէրովմայ ունելով մերձ կինքն զմաքուր մարմինն եսայեայ տր մարգարէին, առնէր բժշկութիւ ախտից ։ յոհ 9 ։ 7 ։
Այնպէս և ՚ի քէն բղխեալ աղբիւր ջրոյն և տարածեալ աղօթք տր լուսաւորչին շուրջանակի, և մերձ առ նմին հանգուցեալ ՚ի բազմավտակ ձգնութեցն ։ յորմէ զօրացեալ ջրոյն բնութի, շնորհեաց տեսութի կուրին ։ և այժմ լուսոյ անուամբն վերաձայնի ։ Եւ հանգոյն մեծին մովսէսի որ զդառնութի ջուրցն մեռայի քաղցրացոյց խաչին խորհրդով, ելից 15 ։ 23, Նոյն նմանութի ՚ի ձեռն տր լուսաւորչին խաչակնիք նշանաւն դրոշեալ միւս աղբերն, յաղտաղտուկ բնութեն բարեհամ և ախորժելի փոխարկիւր ։ որ և նոյն անուամբն այժմ ձայնի ։

Ուրախ լեր լեառն հրաշալի, մարգարէական հօգւոյն ցանկալի ։ Որ և հայցեր զվայր քո ըղձալի, տէր՝ ով կայցէ ՚ի խորանի քում ։ կամ ով բնակեսցէ ՚ի լեառն տր քո ։ Եւ առեալ հոգւոյն պատասխանի ։ Որ և ՚ի վերջին ժամանակիս տեսեալ եղև աչօք զգալի ։ Յորում ելեալ տէրն Գրիգորիոս անբիծն վարուք, արդարն հոգւով, ճշմարտապատում և լուսաւորչն բանիւ ։ աննենգն և տէրն սրտիւ ։ որ ոչ հատոյց չար փոխանակ ըն-

կե

կերի իւրում։ Մ՟ն որոյ ոչ նախատի ՚ի մերձա_
ւորաց՝ յա՟մի փառաւորեալն և երկիւղածաց ա՟ն
փառաւորիչն։ Որ զարծաթ ա՟ն իւրոյ ոչ ծրա_
րեալ թաքոյց ՚ի վարշամակի. Ղուկ 19. 20 այլ էարկ
՚ի սեղանաւորսն. Զայս և յոլովս քան զայս
գործեալ. և անսասան ուսումբ ՚ի քեզ կատարել.
և զքեզ մեզ տեղի ուխտից և խնդրուածոց
պարգևեալ։

Ուրախ լեր Մայր լուսապայծառ. քարայարկ
և առաքինաբնակ. տուն տենչալի և աղօթարան
ցանկալի. քան զթագաւորաբնակ ոսկեզօծ տա_
ճարս զարմանալի. ՚ի բեթղեհեմ խորհրդոյն
ընտրեալ։ Յորում պարծանքն կուսից՝ մայրն
մարմնացելոյ բանին՝ ծնաւ մաքուր կուսութբ
զանճառաբար ծնունդն հօր. և հրաւիրեաց ըզ_
դստերս եւայի լինել կուսութբ ՚ի մայր ք՟ի։
Զոր և տ՟րն՝ ա՟ծային բանիւն ստուգեաց. որ
արասցէ զկամս իմ, նա է մայր իմ եղբայր և քոյր։
Մրկ 3. 35։ Ըստ որում և ՚ի քեզ ծաղկեալ խոր_
հուրդն պայծառ, յայս յոյս հրաւիրեալն և վե_
հագոյն վիճակի հասեալն, զտեալն մտօք հեզն
հոգւով, մաքուրն մարմնով, որք կոյսն մանի.
Որ երբ զայս յարեմից ցուցեալ՝ բարձրա_
գոյն բարեաց ցանկացօղն, ընդ բազում լերամբք
և ձորօք անցեալ ՚ի քեզ բարձրանայր։ Զքեզ
յարկ ծածկութի և տուն հագստեան իւր ընտ_
րէր. և յինքն զկամս ա՟յ հանդուցանելով, միշտ
զվերինն հանգիստ դիտէր. և կատարմամբն ՚ի
քեզ փոխէր հոգւով՝ առ որ ցանկացեալն էր.

Նա

Եւ զմարմինն պարկեշտ և պատուելի ամփոփեր
մեծ քահանայապետն Գրիգորիոս։ Որ և այժմ
հաւատովք դիմելոցն՝ հանգիստ հայցէ հոգւոց և
մարմնոց. և յոյս թողութեան պարտաւորելոցս։
Ամղ դու ով լեառն ամենունակ բարութեամբ լցեալ.
Ճշմարիտ ճգնողին ճեմարան. Հեզագոյն
հօրն հանգստարան։ Երջանիկ անձինն օթեւան։
Անքուր ուխտին կայարան. Մեծ ձեռինն տեղի
տարածմանն։ Աշխատեալ վաստակաւորին աթոռ.
Երկնից դիտողին կառք. Քրտնաջան մշակին
անդաստան։ Առաքինութե հասկիցն կալ. Պարարտ
ցորենոյն շտեմարան։ Պատուական ոսկւոյն գրու-
նակ։ Անգին մարգարտին տեղի ծածկութի.
Վ որոյ ՚ի քեզ հաւաքին հաւատացելոց ան-
ձինք. լաւ համարեալ զմիօրեայ բնակիլն ՚ի քեզ
քան զհազարս ՚ի յարկս թագաւորաց։ ՚Ի խորա-
նորս քո՝ ձայն աղօթից արձակեն. ՚Ի քարա-
ծերպս քո՝ քաւութիւն յանցանաց հայցեն.
Յաղբիւրս քո՝ կաթիլս արտասուաց իջուցանեն։
՚Ի խորս անապատի քո՝ խոստովանութեամբ դիմեն.
Եւ երանի թէ ըստ արժանեացն մատչէաք. կամ
ոպ սերեան լինէաք. Քանզի նախ պարտ էր մե
ժողովրդեանն իջել երեք աւուրբք սրբել և
յամ մարմնական աղտից մաքրել, և ՚ի կերակրոց
անգամ անսուաղանալ. զի մի զանպիտանութի աւե-
լորդացն ՚ի քեզ բերէին. Քանզի ոչ է պարտ
զանուշահոտ քո զվայր զաղտացուցանել. զընծա-
նուէր քո քարինս աղտեղացուցանել. զանուա-
ղութե տեղիդ արբեցութեամբ ձանձրացուցանել.

Ամղ

Նաև նախ առ ստորոտով լերինն մաքրիլ, և ապա 'ի քոյդ բարձրութի ելանել։ Բայց քանզի տկար է մարմնոյս բնութի, և սակաւք ոմանք են որ իմանան հոգւով զպատիւ քո գերագոյն ․ և բաղձումք այնք՝ որք մարմնով ըստ մարմնոյն խորհին ։ Նաև սակայն գթած է հայրն մեր գործագութ ․ և հայցէ ներումն սխալանաց ։ Ընկալ և զսո հիւրութբ և արձակեա խաղաղութբ ։

Ուրախ լեր գեղով գեղեցիկ՝ երկիր ցանկալի՝ դարմանաղեաց գաւառ գովելի։ Լերամբք ծաղկաւէտ ․ ձորովք ջրաբուղխ ․ եդեմաբուղխ աղբերն եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ ։ Որ և 'ի քեզ հրաշս պատմի, կաթուածս ջրոյ յանձաւս քարի 'ի ժամանակս տօթաժամու ամառնային եղանակին ․ յորում թանձրութիւն ձեան բարձրայեցն լերանցն սպառին, և սառնամանեացն պնդութիք հալին ։ Յայնմ ժամանակի կաթուածք ջրոյն դիզեալ 'ի վր միմեանց քարացեալ պաղին ։ Որ և յառաջին աւուրսն՝ բազմօրեայ ճանապարհաւ 'ի պէտս թագաւորաց յաղագս առողջային և բժշկական զօրութն տարեալ լինէր ։ Նաև դարձեալ յորժամ ամ ջրոց բնութի պնդեալ պաղի 'ի ձմեռնային եղանակս, նա թուլացեալ ջերմանայ ։ Նաև և 'ի ծործորս քո լերանց 'ի ներքոյ երկրի՝ աղբիւրս աղի դարմանացեալ ունիս ․ և 'ի խորութենէն 'ի վեր եկեալ 'ի ջերմութեն արեգականն, զխառնեալ ջուրսն առանց աղի ծծէ հրոյն զօրութի, և յստակեալ պարզի աղն համեմչանուշահոտ ։ Որով և դարան աղի կոչիս յայսմ ներ-

գործութե · զոր ընծայես բազում գաւառաց ·
Այլ ո՛չ այս միայն է քո գովութն զգալի և մարմ-
նական իրի , և կամ սոքօք միայն կոչիս գովելի
գաւառ և երկիր ցանկալի։ Նաև գովելի ես՝ զի
գաւառ եղեր բնակութե գովելոյն մերն Գրի-
գորի։ Այլ երկիր ցանկալի, զի ցանկալին վեր-
նոցն 'ի քեզ եղեալ պահեցաւ ։ Որ և յերկիս
տեղիս 'ի քեզ կազմեալ շինեցաւ շիրիմ հանգըս-
տարանի և սրբ մարմնոյն նշխարաց տեղի և տա-
պան գերեզմանի · Նա՛ իսկ է փառքն քո պան-
ծալի։ Բարձրագոյն լերանց քոց բարեբոյս ծա-
ղիկն ։ Խորութե ձորոց քոց աղբերաբուղխ
վտակն աղօթից։ Գեղեցկածաւալ գետոն եղե-
մաբուղխ ։ Հոգևոր աղն՝ հոգւոց համեմիչ։
'Ի տօթայինն և՛ի կիզող ժամու՝ բժշկական և զո-
վացուցիչ ջուրն։ 'Ի դառն և՛ի կսկծաբեր ձմե-
րուան՝ ջերմ և ճառագայթաւէտ հնչումն։ Նա՛ յս է
գեղեցկութն քո գովելի և պատկն · որով զարդա-
րիս՝ յոգունց գաւառաց գերագոյն գտեալ։
Սորա լերունք ազգք և ազինք հայաստանեայց ·
'ի հսկայազօրն հայկայ անուամբ հռչակեալք։
Որք 'ի մահաբեր և յանբերելի ցաւոց հիւան-
դութեց հոգւոց՝ յարուեստական և քաջահմուտ
բժշկի դեղոց առողջացայք։ Յանթառամ ծաղ-
կանց կազմածոյ՝ քաղցրախօս խրատու վարդա-
պետութեցն՝ 'ի վիրաց բժշկեցայք։ Բանիւ քա-
հանայապետին մաքուր մաղթանօքն՝ 'ի մահու-
սրդելոյք ։ Մխիթարար հայցմամբ աղօթիցն՝
'ի մեղացն պարտեաց զերծայք · Նորեամբ և

իա　　　　　　　　　　　　　　　　　　　　խորն

խնկով եւ Ահարօնին նորով՝ ըստ հօր հաշտեցայք:
Արեամբ՝ չարչարանաց հեղման նահատակին քնի
մրյն Գրիգորի, եւ գտաւ ինն այ՝ մեղաց բարձողէ:
Այլ խնկով՝ աղօթիցն անուշահոտից ծերունա_
կանաւ՝ եւ ամենեղէն բուրվառաւ, եւ պարտաւո_
րացն աղատարարաւ: Որք յամօթալի մերկութեցն՝
յարժանաւոր ձեռաց՝ փրկութե հանդերձ զքս
զգեցայք: Գաղ 3·27: Այլ վերստին երկնելովն
հոգւոյ ծնողին, նկար կերպարանի զքս ընկա_
լայք: 4·19: Ի զօրագլխէն հաւատոց՝ ինձ նաւահա_
տակութ մարտի սպառազինեցայք: Եփես 6·13:
Ուրախ լեր Եկեղեցի հայաստանեայց: Յամե_
նիմաստ եւ հանճարեղ ճարտարապետէ նորայ
բեսելիելէ կազմեալ: Ել 31: Յիմաստութեն
հօր բանի հիմանն շինեալ: Առակ 9: Ի յամրութե
հաւատոյ վէմն կառուցեալ: 1 Պետ 2·5:
Աշխատօք եւ քրտամբք ճգնաւորաց հօրն հա_
ւաքեալ: Գերահրաշ բանի մրյն Գրիգորի լու_
սաւոր վարդապետութեն ծնեալ: Զօրագլխին
հզօրի զինաւոր յարդարեալ: Կրաջան մշակին
տունկ արմատացեալ: Զգայական գլխոյն ան_
դամ յօրինեալ: Բոլոր եկեղեցւոյ լնմամբ՝
զարդարողին ձեռամբ՝ ի հանդերձս ամենահաւս
զարդարեալ եւ պաճուճեալ:
Ուրախ լերուք քահանայական գլուխք եւ պետք
եւ վերատեսուչք հօտին քնի: Որք վիճակի
առաքելանման հօրն՝ եղէք ժառանգորդք. եւ հո_
գեւորական իշխանութեցն աթոռոյ եւ իրաւանցն
վերակացուք: Ընկալեալ հօտին եւ գառանցն
ան

աւազանին՝ հովիւք արածողք։ Աշխատաւոր և ժրաջան մշակին կենդանի տնկոցն տածողք և սննդագործողք. և ցանկոյն ամրութեն պահապանք և խրամակարկատք։ Եսայի 58.12։ Որք գեղեցկութե հարսին եկեղեցւոյ էք զարդարիչք և զգեցուցանողք։ Հրեշտակք հաշտութե, և քահանայապետք քաւութեան։

Եւ արդ՝ կամիմ աստանօր զերաժշտականացն բերել նմանութի արուեստի։ Երբեմն զուրախականն հնչել նուագս և տրամադրել զլսողսն ՚ի զուարճական խնդութի։ Եւ երբեմն զողբերգականն շարժել մասն. յաղերս և յողբս արտասուաց ածել։

Ողբամ աշխարհ և ազգ հայաստանեայց։ Որ երբեմն համանման երկնի լուսապայծառ աստեղօք լցեալ, այսօր նսեմացեալ կրկին խաւարաւ. մեղաց ասեմ և ներքնացն ամպովք ծածկեալ։ Որք յիմաստուն տնկագործէն իբրև զդրախտ փափկութե ծաղկազարդեցայք, այսօր իբր զդաշտ ապականութե տգեղացեալ տխրութ̃ կայք և անզարդեալ։ յոէլ 2.3։ Մի՛ ի սեպհական գաւառք հայրենի՝ յօտարալեզու ազգաց տիրեցան. և գաւազանք մեղաւորաց ՚ի վիճակս արդարոց մտին. վս̃ զի արդարք զձեռս իւրեանց յանիրաւութե գործս ձգեցին։ սաղ 124։ ՚Ի բազմամեայ և յերկար հիւանդութեց առողջացայք, և այժմ ՚ի դժնդակ հիւանդութեցն կայք ՚ի տարակուսի. անայցելու ՚ի բժշկական դարմանողաց։ Մինչդեռ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ այ, քնանման քա-

հա

հանայապետութեն։ Հռ. 5.10։ Արդ այժմ սիրելիքս օտարացեալք 'ի գրկաց մօրն և գթութեան հօրն բարերարի ըստ գրեցելոյն, օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ. զի խաբեցան յարգանդէ և խօսեցան սուտ։ Մինչդեռ յանցաւորքն էաք, 'ի մեղացն պարտեաց ազատեցաք ա̃ծուսոյց օրինադրին մաղթանօքն։ Իսկ յազատութեն պատուոյ՝ ծառայք վերստին անտից եղաք. և ընդ բիւր քանքարոյ պարտականութե դարձեալ մատնեցաք։

Ողբացէք 'ի ծննդական գթոյ տարամերժեալ մանկունք, զի որբ մնացաք. և ոչ գոյ մեզ հայր, որ ծերունական առաքինութեցն աւէօք 'ի գութ ածէ զերկնաւոր հայրն։ Արդ կամ զանձն անպարտական՝ 'ի մահ մատնէ փոխանակ մահապարտ որդեաց։ Կամ զարիւնն իւր հեղու 'ի գին փրկութե մերոյ։ Արդ կամ քրտամբք մարմնոյ ըմանայ 'ի յախտից ներկեալ ազգոյ։ Արդ կամ զենմամբ զուարակին մեծի արգելու զպատիժ մահու յաշխարհէ։ Արդ կամ խնկանուէր աղօթիւք քաւութի հայցէ յանցանաց պարտեաց։

Ո՞ զգ հայաստանեայց, կրտսերագոյն մանուկ մերոյն յակոբայ. և վերջածին ծնունդ յազգս և յազինս։ Որ 'ի լուսաւորիչ հօրէն ծաղկերանգ պատմուճանաւ զարդարեցայք. ծննդ. 37, 3. մինչ զի եղբարցն նախանձելի եղայք։ 11։ Արդ այժմ զխորդ գազանաց չարաց կերակուր մատնեցայք. և զպատմուճան զարդուն ձեր արիւնաներկ շաղախեալ եղև։ Արդ յակոբ հայրն ծերունի չէ 'ի մէջի. որ զաղէտս ողբոյն յարմարէ տեսելով,

գազան չար և անըմբռնելի եկեր զորդեակն իմ 33։ Այլ գազան չար՝ զոր և կամիս իմացիս. Եթէ զսպանօղին և զգերօղին մարմնոյ, և թէ զպատառօղին և զհերձուածօղին հոգւոյ. զի երկոքումբք կամք 'ի վտանգի։

Գրիգորիոս՝ երկնաւոր հօրն պատկեր և ծնողական գթոյն կերպարան. խօսեցիս առ քո մեղուցեալ որդեակքս՝ որ զմաքուր և զանախտ ծննդեանն զգեստ մերկացաք, ասելով. Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ մինչև նկարեսցի քս 'ի ձեզ Գաղ 4.18։ Զի ո՞չ զոք ունիմք որ գթով գորովոյ դարձեալ խրատեսցէ, և յապաշխարութե երկունս ծնցի զմեզ վերստին։ Այժմ ժամանակ մարտի և գուպար հանդիսի, և քո կոզմեալ զինուորքս լցեալք և տարակուսեալք։ Զի ո՞չ գոյ մեզ զօրավար քաջամարտիկ և բազմահանճար. որ գումարէ զզինուորսն 'ի մարտ ճակատուն։

Ողբամ եկեղեցի հայաստանեայց մայր բազմազաւակ։ Որ յանագան ժամու և տարաժամ հասակի՝ ազգ մի ողջոյն հրաշիւք հանգոյն սառայի ծնար։ Եսայ 66.8։ Այլ այժմ նմանեաց հռաքելի, և լաց 'ի վր̃ որդւոց քոց։ Հռաքէլ լայր զորդիս իւր և ո՛չ կամէր մխիթարել զի ո՛չ էին։ Մատ 2.18։ Այլ դու լաց զմանկունս քո. զի ո՛չ են ու̃ր և էին։ Զի 'ի միոյ ծնողէ զբազմութի անթիւ զաւակաց ծնար, և այժմ 'ի բազմութեց հարանց ո՛չ զոք ծնանիս. և ծնեալսն ո՛չ ոք դաստիարակէ զսնունդ օրինացն։ 'Ի հատէ հասկ վերաբերէսար։

ԻԼ　　　　և

և՚ի հասակէ չեղջ յօրինեցար. և՚ի միոյ շառաւիղէ տնկեալ՝ որթ արմատացար։ Յոգնակի ուռոյք աճեցեալ և տարածեալ լցեր զոխեզերս ՚ի ծովէ մինչև ՚ի ծով։ Այժմ քակեցան քո ցանկք ամրութեան. և կթեն զքեզ անցաւորք ճանապարհաց օտարք և այլազգիք զմարմնական բարեացն զպտուղս։ եւ 1070։ Այժմ զայգի քո բանաւոր՝ ապականէ խոզ անտառի. և կինճ վայրենի արածի ՚ի հոգևոր սերմանցն ծաղիկ, ստեղն և գեղքն չարատէր։ ՚Ի միոյ հովուէ մեծ հօտ եղեր հովուապետին մեծի. և այժմ ՚ի բազում հովուաց ցրուեալ ճապաղեցար։ Մոլորականք և թափառեալք ՚ի լերինս. գազանաբեկք և վիրաւորք ՚ի գայլոց. կարօտս խնամակալս և մահաբերս ճարակեալ։ Պակասեալք և անբնակք ՚ի դալար վայրէ ՚ի մեք գրոց վարդապետութեան։ ՚Ի հանգստարար ջրոյ անմնունդք. ՚ի փարախոյ ժողովարանէ արտաքոյ։ Այլ ոչ գոյ քեզ հովիւ որ կրկին գործեօքն հովուէ. ունելով ՚ի ձեռն ցուպ և գաւազան։ Ցպով ընդ գազանն մարտնչիլ, և գաւազանաւ զխաշինսն ուղղել։

Ամենածայրին Խորան, եօթնաջահեան լուսոյն ընդունակ. լուսաւորիչ հօրն՝ լուսածնունդ որդւոյքն բերկրեալ։ Զխորդ այժմ լուսատու ճրագունք քո նուաղեալք յիմաստութեան ձիթոյ։ Զօրագլուխք մարտի քո անզէնք ՚ի գխոտեցն օրինաց։ Բժիշկք կենաց քոյ անհմուտք ՚ի հանճարոյ։ Հովիւք հօտի քո հեշտասէրք և փառամոլք։ Մանկունք ուսման քո սրտմտողք և ընդ-

դիմացեալք խրատու։ Որք ոչ ախորժեն լսել
զձայն Թովչէ ճարտարի․ և ոչ ընդունեին դեղ ՚ի
դեղատուէ իմաստնոյ։ Սաղ 57․4․ մանաւանդ՝
թէ դեղատուքն են կարօտք դեղոյ բժշկակա֊
նի․ և թէ ոք ուրեք զայն նոյ մատուցանէ, ատեն
և թշնամանեն։

Նա՛ թէպէտ ըստ այսմ ամի ողբոց եմ արժանի․
և զի զմարմնական ճոխութիս քո օտարք վտա֊
րեցին․ և մանկունք ուխտի քո ՚ի գերութի վարե֊
ցան․ և զոստանաձայլ զարդ քո կողոպտեցան․ և
անձառելի խորհուրդն գնոյ այսօր վաճառի․ և
երկնաւորն ստոիճան յերկրաւորաց յափշտակի։
Այլ ՚ի մեծն և ՚ի գլխաւորական բարիսն երա֊
նելի ես և յոյժ խնդալի։ Մանզի ուղղափառ
հաւատոյ քո լոյս ոչ նուաղեցաւ։ ՚Ի բարի սեր֊
մանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ։ Մատ 13․25։
Ծաղկեալ յստակ աւանդութեց քոց՝ աղտաղտուկ
ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց։ Սաղ 106․34։
՚Ի ստուգուն և ՚ի ճշմարտութն հացն քո կենդա֊
նական՝ մեռելական խմոր և հերձուած քացա֊
խութն չարութն ոչ զանգեցաւ։ 1 Կոր 5․8։
Յակկի անքիծ հաւատոյն, և յարծաթ լուսաւո֊
րիլ բանին՝ պղինձ ժանտահոտ և կապար սևա֊
թիւր ոչ գտաւ։ 3․12։ Նա՛ պայծառէր խնդրաւա֊
ծուլք մեծ նահատակին քո ոյն Գրիգորի քեզ
շնորհեցան․ որ է գլուխ մեզ ամ բարեաց, և հիմն
կենաց յաւիտենականաց։ Մանզի որոյ և դուք քա֊
հանայապետք և գլուխք եկեղեցւոյ՝ ուրախ լե֊
րուք ցնծութե և տօնակցէք երկնաւորն և յոյժ

գողութ̃։ առղ 2 · 11։ Զի որք գնուիք էք վե-
րամբարձ և երկնահանգէտ , մի՛ գուցէ զօրէն
ոտից գետնաքարշ և մոխրաթաւալ լինիցիք ·
զերկրաւորս և եթ խորհելով։

Այլ որք վիճակաց քաղաքաց և գաւառաց էք
վերակացուք , մի՛ լինիցիք դէտք անզգուշք
հեղգութ̃ · և կամ ընդ քնով անկեալ։ Զի տե-
սանելով զեկեալ սուր պատուհասին ն̃յ և ոչ
բողոքիցէք , և գտանիցիք արեան պարտականք
մարդկան 'ի մահ մատնելոց։ եզկ 3 · 18։

Աթոռակալք արդար իրաւանց , մի՛ յուսայք յա-
նիրաւութ̃ի և մի՛ ցանկայք յափշտակութե̃։

Այլ որք զերկնաւորն ունիք մեծութիւն մի
յօժարեսցին սիրտք ձեր մարմնական և ունայն
մեծութե̃ ։ առղ 61 · 11։

Առաջնորդք երկնաւոր ճանապարհին և արա-
ծօղք քո̃ հօտին և մեծագին գառանցն · զոր
միածինն միայնոյ հօր՝ արեամբ և մահու ժառան-
գեաց։ Զի հնդետասան ամեայ չարչարանօք մեր
լուսաւորչին ստացեալն սեպհական ժողովուրդ
և ձեզ ձրի և անգին տուեալ 'ի ժառանգութ̃ի,
մի՛ մոլորեցուցանէք 'ի լերինս և յանկոխ ճանա-
պարհ · և մի՛ մատնէք գայլոց և գազանաց · զոր հա-
մեն քաջ՝ 'ի վ̃ր ուսոյ եբարձ և 'ի վեր տարաւ
յերկինս և ղ̃թ անմոլարս խառնեաց թիւն։ ղուկ 15 · 5։

Մի՛ լինիք նմանօղք վարձկանացն 'ի մարմին սեր-
մանողաց , և զհոգիս խաշանց բանաւորաց անտես
առնողաց։ Մի՛ անխնամ անգութ և անայցելու-
խոցելոցն վիրաւորաց լինիցիք · վ̃ս որոց քո̃

զխոցումն և զվէրս յանձն էառ. Ղուկ 10. 31. Մի՛ լինիք զօրագլուխք անզարմաբարք և անագորոյնք. զխառացն անուն սիրելով և զզօրսն ՚ի տագնապ տարակուսանաց մատնելով.

Նաւաստիք եկեղեցւոյ նաւի, մի՛ ՚ի կենցաղոյս ամբոխեալ ծովու՝ տայք զնաւ եկեղեցւոյ յալեկոծումն և ՚ի խռովումն հողմոց. զի մի՛ ընկղմելով զորս յանձն առիք հանել ՚ի հեղձական ծովէ, կորուսանողք անձանց անմեղաց լինիցիք. Որք ա͞ծայինն այգւոյն բանաւոր և երկնաւոր տնկոցն տնկագործ և պահապան կարգեցայք, և ՚ի պտղոց այգւոյն ճաշակէք, և ակն ունիք դահեկանի վարձուն յամենաբարի տ͞նէն, Մտթ 20, մի՛ տայք թոյլ գազանին ապականել զա͞ծայինն այգւոյն զքաջաբեր ուռսն յորթն ճշմարիտ արմատացեալ. Սաղ 79. 14. Մի՛ շարժէք զպատուար զգուշութե պատուիրանացն ա͞յ. Մի՛ կոխէք զկարգ կանոնաց ա͞ծահաստատ ուխտին հաւատոյ. Մի՛ քակէք զցանկ ամրութե հայրենադիր աւանդիցն. զի մի՛ հարցիք յօձէն չարաթոյն և անբուժելի. Ժող 10. 8. Բժիշկք բանաւորք և վերակացուք հոգւոց, որք զա͞ծականն ունիք բժշկարան, մի՛ անգութ և անգորովար խածելյն ՚ի կամակոր օձէն՝ և ՚ի բնական և յանբնական ցաւօք պաշարեալսն լինիցիք. Մի՛ ողջացուցիչք չարեաց և ո՛չ փարատիչք ցաւոց. Յեր 13. 4.

Ա͞ծայինն պօղոս գրէ ձեզ և ա͞մ հաւատացելոց խրատ և ասէ, յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան ընդ ձեզ զբանն ա͞յ. և հայեցեալք

յել

յելս գնացից նր̃, նմանօղք եղերուք հաւատոցն.
Եբր 13.7. Արդ և դուք յիշեցէք զառաջնորդն
կենաց և փրկութե̃ ձերոյ. և զմտաւ ածէք զան-
տանելի չարչարանս ա̃ծադութ հօրն և հօգւոց
լուսաւորչին և ձգնաւոր նահատակին ք̃րի տ̃րն
Գրիգորի. Յա̃ մի մոռանայք զզարմացուցիչն
երկնաւոր զօրացն՝ և զկիրս նր̃ հողանիւթ մարմ-
նոյն. Պատկառեցէք յայնպիսի սակալի նր̃ խոր-
տամբեր վարուցն. Որ և այժմ զարեամբ քըր-
տանցն և զցօղով մնուցեալ արտասուացն զսեր-
մանեալ հաւատոյն անդաստանի պտուղ վայելէք.
Արդ՝ հայեցարուք յելս գնացից նր̃. թէ ո̃պ
եկաց յ̃ծի. և կամ որպիսիք էին ելք գնացից նր̃.
Զի այն է դուռն ոչխարաց հովուութե̃ն, ընդ
որ սա եմուտ չարչարանօք. Ստացաւ իւր ժա-
ռանգութ քերանօք ոսկերաց մարմնոյն. և կողիցն
համամբ արեան՝ շինեաց զայգս զայս՝ եկեղեցի
ա̃յ. Որ և ո̃րն իւրով կողակցական արեամբն
զորդ և զք̃ ա̃մ. Որոյ տաժանմամբ խորովեցաւ
՚ի վ̃ր իւրոց գեղեցիկ գառանցն. Անհնարին
տանջանօք կայր ՚ի կախաղանին և աղօթէր վասն
իւր հաւատացեալ հօտին. ՚Ի դուռ խաւարին
և ՚ի մէջ չարաթոյն օձից կայր զամս երեքտասան.
յաղագս ՚ի դուռ մեղաց և ՚ի հարուածս օձին և
՚ի մէջ թունալի ախտից մեր ընկղմելոյն. Այս է
դուռն հովուապական հովուութե̃ն. և որ ոչ մտանէ
ընդ այս դուռն, գող է և աւազակ. յոհ 10.1.
Այս է օրինակ՝ որով սեպհական լինի ժառան-
գութիւն և ոչ ազգակցութե̃ արեանն որով տիրեն

 քնի

քի հօտին։ Այս են գինք գառանցն քի և ոչ բազմութի արծաթոյ․ զի խոստացին այնոքիկ՝ որք ընտրեալ են արծաթով։

Արդ որ այսպէս եմուտ ընդ դուռն ոչխարաց, հայեցարուք յելս գնացից նր և զարմացարուք։ Զի յետ ստանալոյն իւր ժողովուրդ, և յետ ՚ի քահանայապետական բարձրանալոյ յաթոռ, հրաժարեալ յնէ՝ յանապատ վայրս և յանբնակս հեռանայր։ Օտարանայր ՚ի պատուոյ․ փախստական լինէր ՚ի փառաց․ ոյ լինէր խօսակից․ հրեշտակաց երգակցութեց կցորդ․ ընդ սրբասաց սերովբէսն սրբաբանող։

Արդ՝ նմանօղք եղերուք գթած հովուին․ որպ և նայն իւրում տն և քին․ 1 Կորն 11․ 1․ և զօրինակ ձգնող նահատակին յանձինս ձեր ստացարուք։ Բերէք և ՚ի ձերում ոգիսդ զհաճասարութի այնպիսի հաճոյս։ Զարչարեցարուք և դուք ոչ ՚ի բռնաւորաց, այլ ՚ի կամաւոր բարուց։ Մի՛ ինչ խափան լիցի հովուելոյ զածայինն հօտն՝ ոչ սպառնալիք սրոյ․ ոչ վէրք մարմնոյ․ ոչ արկածք փորձութե․ ոչ բերմունք ժամանակի։ Մանաւանդ զի ոչ գոյ այժմ չարչարանք բռնաւորաց և ոչ պատերազմ հերձուածողաց․ այլ փառք և պատիւ։ Զի հայրն հաճոյս կրեաց զչարչարանս և զվաստակս, և դուք վայելէք ՚ի պտուղն, և զարդարեալ շքեղանայք յածային խորանն ՚ի մէջ ժողովրդեանն յածագործ քահանայութեանն։ յօհ 4․38։

Այլ դու ո՛վ ածային և քահանայական գլուխ,

վր

վ̃ն զի ընդ քեզ իբրև ընդ ճշմարիտ կենդանւոյ
խօսիմ, զա̃ծային և զանմահականն զգեցեալ զկեանս.
Ո՛վ քահանայապետ ո̃ւ, վերնոյն և հրեշտակական
քահանայութեան կարգակից. Յանմահ սեղանն
մեր յի՛ պատարագօղ զառաքինութեան քո պատա-
րագ. որով և հայրն երկնաւոր զուարճանայ.
Անգամայն բնութեան ըստ պատկերի եղելոյ ճշմա-
րիտ կերպարանին ցուցօղ անխառն և պարզ մաք-
րութե. Ամ̃եց 'ի բնութենս ընտրելոյ՝ նկա-
րագիր պատկերի գեղեցկութե բոլորից. Սքան-
չելի տեսութե՝ ճոխութե վարուց պայծառութե
հրաշալի. Երկուցն միաւորութե բարձրագոյն
գործովք և անհպելի. Նաւաստ խորհրդովք և
հեզահոգի. Աներարկանալի բարուք, վշտակից
սրտիւ, հեշտալուր և ախորժելի բանիւք հրեշ-
տակական դիմօք. Ամենայն ձրի և աղգի և հա-
սակի և աստիճանի՝ բարեգործական աղբիւր.
Կուսական կրօնից փեսաւէր փառաւոր.
Ամուսնութե կարգաց խրատ ողջախոհութե.
Յանապատական վարս՝ թուացիչ երկնահաս.
Քաղաքական վարուց օրինադիր սուգութե.
Պարզամիտ բարուց ուսուցիչ քաղցրութեամբ.
Տեսական իմաստից խորաքննին ա̃ծաբան.
Ճոխապատիւ իշխանաց սանձք արդելման.
Թշուառացեալ աղքատաց մխիթարիչ սփոփանաց.
Ծերունական ալեաց ցուպ հաստատուն.
Մանկական տիոց դաստիարակ զգաստութեան.
Աղքատութե անկանելոց փարթամութի փառաց.
Ճոխութե բարձրաւանձից յա̃ծայինն ամբարօղ-
գան

գանձու։ Նայրեաց վերակացու։ Սրբոց հայր
հաւատարագութ, Հիւանդաց բժիշկ յերկու–
քունց ցաւոց հոգեկանին և մարմնականին։
Առողջութե պահապան. ուղղութե հաւատոց և
առաքինութե գործոց։ Պահոց և աղօթից ժուժ–
կալութբ՝ անմարմնոց և անարեանցն ազգակից։
Սաղմոսերգութե հնչմամբ՝ անշիջանելի ըստ
հրեշտակացն հոգւոց։ Արթնական տքնութբ քա–
ջալինդ և անպարտելի ըստ հոգեղէն զաւրաթ–
նոցն։ Ո՛վ ամենամեծ և ամենազգեաց անձն, հայեա–
ցիս գթութբ և սիրով յաղջս և յեկեղեցիս
զոր դու ընծայեցեր այ. որք քո ճգնութբդ
տուան այ՝ մրցանակ մարտի և յաղթանակ նա–
հատակութեդ։ Նա՛ հայցեսցես զերկնաւորն զխա–
ղաղութի. և՛ի փրկական կենցաղոյս ծովու զան–
դորրութիւն. և յընթացս բարեաց ճանապար–
հին զուղղութիւն։

Նալ ո՛վ քաղցրութե և գթութե և ամենայն
բարերարութեն երանական պատկեր մեր հայր
հոգւոց, հայեա՛ց և յիս յողորմելիս և թշուառա–
ցեալս ոգւով։ Ի քո բարերարութենէդ ողոր–
մութի գտօղս և անարժանութբ կորուսանօղս։
Ի քահանայութեն կարգ՝ ամօթոյ զգեցօղս և
ոչ արդարութե գործոց։ Ի բանիս ապաաւորութի
բազմաց քնքարաց ծածկօղս և ոչ շահեցօղս։ Մտթ 25։
Ի գործ տնտեսութե՝ ընչից այն խմոյ վատնօղս
անխրատութբ և ոչ հաւատարմութբ բաշխօղս։ Ղուկ 16։
Նաւ զի մաշեցան ունայնութբ կեանք իմ և ոչ
կարացի գործել. և թէ այդր եկից և մուրա–
ցայց։

ցայց, մի՛ լինի ողորմեացի կամաւ՝ 'ի բաց զրկելոյս։
Այլ մի միայն է իմ յոյս և ապաւինելոյս փրկութե
հընար առ քո ողորմութիւնդ վստահութիւն։
Որով և զայս ընծայ բանեղէն պատարագաց հա-
րաբար գթով ընկալցիս։ Եթէ իցէ ինչ արժա-
նի յեկեղեցի քո ընդունելոյ, քո՛ են պարգևք
և 'ի քոյոցն քեզ ընծայեցաւ։ Եւ՛ թէ ոչ, թո-
ղութիւն ընդ այլոց յոլովից սխալանաց և այսմ
համարձակութե̄ եղիցի 'ի յօժարութե̄ և 'ի փա-
փագմանէ բանաստեղծս։ Այլ և զիմ սակաւ
մնացեալ աւուրս կենաց՝ արժանի արասցես յե-
կեղեցւոյ քո գործ՝ սպասաւորական ծառայութ̄
վճարել։ Զի և ես ողորմութի̄ գտից և վարձ
ընդ քո կենդանի տնկոցն մշակութ̄ վաստակոց։
Տեսանել զքեզ ընդ քոյին քում յանզուգական
փառսն։ Զի որում չարչարանացն հաղորդեցար,
և յանճառելի փառսն ընդ նմին բարձրացեալ
Ճոխասցիս։ Հռօմ 6. 5.

Զի և ես արժանի եղէց ընդ քո եկեղեցւոյ
որբակրօն մանկունսն փառաւորել զամենասուրբ
զԵրրորդութիւն զՀայր և զՈրդի և զամենասուրբ
Հոգին։ Այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն։

'Ի Թուականիս Հայոց ՉՂԷ գրեցաւ Ձեռամբ և ըն-
ծայեցաւ Հայաստանեայց Սուրբ
Եկեղեցւոյ։

Պօղոսեան Գալստեան յորդւոյն և ՚ի Բերայոյ ներքն
Գաբրիէլի Տէր Լազարոսեան․ ՚ի Սարգիսի Լուսաւորչեա,
և ՚ի Սեբաստիա․ ՚ի Յովհաննու, և ՚ի Գաբրիէլի․ նոր
՚ի Գոնելէ։

## Օգնեա՛ Յս̅

ԲԱՂՁԱՆՔ սրտի իմոյ բորբոքին, և տկարութիւն անձին իմոյ նահանջեալ կասեցուցանէ ՚ի յօժարութենէս։ Յոյժ առ ա̄ծ՝ ստիպէ, և սէր մ̄րցն փութացուցանէ․ բայց անարժանութիւն իմ ոչ տայ համարձակել։ Վարանեալ գոմ յերկուց, և տարակուսեալ ՚ի մէջ ծփանաց։ Երկրնչիմ ՚ի մեծութե̄ իրիս, և զարհուրիմ ՚ի հեղգութեանցն սպառնալեաց։ Փութամ յուսով և սիրով ՚ի դաշնակութիւն բանիս, և հրաժարիմ ՚ի պատկառելի պատուոյս։ Մեծ է սէր քան զա̄մ․ և գովելի գտանի երկիւղ, յորժամ ոչ լինի ընդ տանջանօք։ 1 յոհ 4․18։ Բազում են պատճառք լռութե, և յոլով կասկածանք արգելման։ Նուաղել է ժամանակ, և ցամաքել սէր բազմաց։ Վ՚սյ ոչ ինչ խափանումն եպերանաց տեսանի ՚ի յանդգնելոցն յաչաղութե ընդդէմ այնոցիկ, որք ՚ի հոգս իրաց հանդիսանան։ Այլ որ անօրինելոցն է՝ անօրինեսցի․ և որ բարկանալոցն է՝ բարկասցի կարծմանութե և նախանձու զինեալ վշտով։ Եւ 21․ զի տէր Ճանաչէ զխորհուրդս մարդկան յիւրաքանչիւր մտաց որոշեալս և զանազանելս․

որ

որ քննէ զսիրտս և զերիկամունս ։ Սմա ինձ
բանս յառաջիկայի, և մ̃եքն պատուեսցուք գովութ̃,
և ա̃ծ փառաւորեսցի։ Այլ զի քահանայական է
տօնս, քահանայից և խրախուԹիս • համազգեաց
խնդուԹիս, հոլովապետաց հանդէսս • վ̃ոյ մանա-
ւանդ պատուելի է ՚ի մեզ։ Զի մերազնեայք
գոն կոչնականքս • և առաւել երախտաւորք հո-
վիւքս մ̃եր • Հայրք հոգևորք • Ծնօղք բարե-
փառք • Առաջնորդք յաջողակք • Նաւաստիք
իմաստունք • Հանդխաղիրք նորահրաշք։ Սրբա-
նեակք երանաւէտք ։ Բազմադիմի երկամբք
ծնանելով, և մեծագոյն սիրով սնուցանելով
զորդիսցելոցս անձինս • հաստատելով վերստին
՚ի յոյս կենդանի։

Այլ արդ՝ զի՞նչ հատուսցուք փոխարէնս երախ-
տեաց հարցդ հոգևորաց • կամ զո՞րպիսի տրի-
տուրս տացուք ընդ մեծագոյն վաստակոց աշխա-
տելոցն ՚ի մշակու̃թ հոգևոր գործոց ։ Զի եթէ
զա̃մ մ̃եր պատուել պատուէր ընկալաք, որչափ
ևս առաւել զհամազգի առաջնորդս մեր և զհո-
ծնօղս զմեզ հոգևոր շնորհիւ ։ Զի եթէ յըն-
տանիս հաւատոյ հրաման առաք գԹալ, ա Տիմ̃ 5 • 8,
և զակն ոչ դարձուցանել ՚ի զաւակէ ազգա-
տոհմի ըստ գրեցելումն • Եսայի 58 • 7, Ապա քա-
նի՞ ևս հարց մերոց հոգևորաց պարտիմք շնոր-
հակալու̃թ լինել տօնախմբու̃թ գԹածաբար • զի մի
դասեսցիմք ընդ ապերախտիցն և ընդ անշնորհա-
կալս բարերարելոցն։ Զի ոչ կարեն ՚ի գործ-
առնուԹի ըստ արժանոյն՝ ՚ի նկարուԹէ աստուա-

լինել անձին. խակ ոչ կամիլն ձեռնամուխ լինել
ըստ բաւականին, յանհաւատութե տուգեալ
եղև։ Մ՛յլ հաւատով և սիրով յօժարիլն՝ հաճոյ
է այ և մերց խորոց։ Այլ թէ այս այսպէս է հա-
ւատոյ՝ այ և է խոկ, սոյս բարուք է քան 'ի
քուն թանձրութե խորդալ ծուլութբ, աշխատութբ
յօժարամիտ լինել 'ի գործ։ Այլ ո այսմ սորասի
ձեռնամուխ լինիմք յիրս. թէպէտ և կասեալ
գտանիմք յարժանոյն։ Զի քան զոր տայ այծ՝
առնել ոչ պահանջէ. և ոչ մեքն եպերեն զլոտ
կարողութե հանդիսացեալն. այլ սիրով հաճուե
ընդունին և վարձս հատուցանեն։

Այլ արդ՝ որովհետև զպատճառն 'ի բաց մեր-
ժեցաք զպատճառանաց, եկա՛յք այժմ սիրելիք՝
մնաց աշօք յանեսցուք 'ի հանդէսս մեզն. և
դիտեսցուք որչափ և է կարողուե զեղանելեցն
զմեծուն շնորհին։ Թերևս կարասցուք փոքր 'ի
շատէ ընծայաբեր լինել մեզն։ Զի կոչնատերք
մեզ անուրս հանդիսի և պատճառք ժողովոյ՝
ոչ մի ոք կամ երկուք 'ի հարց բարեփառաց, այլ
յոլովից վեհից և պատուեցելոց անձինք.
Հովուաց և հովուապետաց հաւաքումն. Քա-
հանայապետից քահանայացելոց, և պատուովճո-
խացելոց մեծութբ։ Մ՛րիստակէս և Վ՛րթանէս.
Յուսիկ և Գրիգորիս. ընդ որս և մեծն Դա-
նիէլ սքանչելի եղեալ։ Յայլասեռ ցեղէն՝ բարի
արդասիւք առ այստիկ միացեալ։ Հ—օ՛ 11.17.
Այլ սոքա երանելիքս զորոց զվիճակս տօնա-
խմբեմք, յառաջաբուղխ աղբերին յառաջելք։

անճառելի փառաց բղխմամբ՝ զծորանի անդս
մտաց մերոց ոռոգեալք յա̃ծային հոսմանցն փառա-
կաց։ Տունկք անընչալիք ՚ի մեծագոյն բուրաս-
տանէն բողբոջեալք։ Բարունակք բեղնաւորք
՚ի հայրական որթոյն ուռ շառաւիղեալք։ Ծա-
ղիկք ծիրանափառք, ՚ի ծովային ծոցոյ ծաղկեցեն
ընծիւղեալք։ Պտուղք գեղեցիկք, ՚ի բարուոք
արմատոյն բարուոք բոլորեալք։ Քաղցրահամք և
վայելչադարդք։ Յանկալիք և քաղցրալիք։ Սրբա-
նուէրք՝ հօրն արփիածագ։ Պերճացեալք պատ-
ուով վեհագոյն։ Թագակապեալք և Թագաւո-
րազունք։ Բանիբունք և բերկրահամբոյրք։
Քարոզք պատուիրանին ճշմարտութե̃, և քաջա-
մարտիկք ՚ի պատերազմի ընդդէմ այսոցն չարութե։
Խօսեալք առաջի Թագաւորաց զվկայութի տ̃ն
ա̃մ համարձակութ̃բ. և նահատակեալք ճշմարտաքա-
րոզ վարդապետութ̃բ։ Քահանայական շնորհի-
պսակեալք։ Առաքելական հանդիսիւ պայծա-
ռացեալք։ Վկայական անուն ժառանգեալք։
՚Ի գանձ տ̃ն յաւելեալք, և յարքայութիւն երկնից
փայլակնանման երևեալք։ Դասակիցք դասուց
անմարմնոց, և փառաբանիչք փ̃ոց բարձրելոյն։
Արիստակէս մեծ քահանայապետ. մեծափառ
հօրն փոխանորդ. ըստ գրեցելումն՝ փոխանակ
հարց եղիցին որդիք։ սղմ 44 . 17։ Ո՛չ միայն ժա-
ռանգ հայրենի պատուոյն, այլև սրբութե̃ վարուց՝
հօրն հաւասարորդ գտեալ։ Անուանեալ թէ
և կուսութ̃բ առաւելեալ ես քան զնոյն։ Սուսեր
հոգևոր երևեալ ճշմարտապէս բանիւ վարդա-
պե

պետութե։ Հնախնամու յանդիմանութ՝ յանմոռա-
դունից ատեցողաց ՚ի մէջ պատուիրանի ած խող-
խողեալ՝ առաքելոյքս զմահ ընդունէր ․ ՚ի կա-
ճառս կենդանեացն թեւակոխելով։ Մ՛իշտ կեն-
դանի գոլով ած ըստ տրաունեան հրամանին ․ յոհ
11․26 ․ յեկեղեցիս գրելոցն ՚ի յերկինս ՚ի վերինն
եէմ որ է մայր մեր ամցն․ յաղաւն ՚ի վայրաքաղ-
վերդովմանց․ հուպ առ Աստուածութին․ եբր 12․22։
Ուր սերովբէիցն դասք, քերովբէիցն գունդք,
աթոռոցն ջոկք, հրեշտակացն հոյլք, ճշմարտապես
անդ և քահանայապետն մեր որն Քրիստոսէս։
Ուր և փառաւորէ խմանալի ձայնակցութ ընդ
երկնայնոցն դասուց զքահանայապետն քն զփա-
ռաւորեալն ընդ հօր և հոգւոյն անլռելի ձայ-
նիւ յաւիտեան։

Սա էր ՚ի կատարմանն ՚ի վերջին հաւատոյ․ ՚ի նե-
կեղական հարցն հաւաքումն՝ փոխանորդ հօրն
առաքեալ ՚ի հռովմայեցւոց մեծագահութին․ մե-
ծախտ և զարմանալի հրաշիւք անդ փառաւոր-
դեալ․ ՚ի մէջ բազմախումբ հարանցն որց հան-
դիսաւոր երևեալ։ Ի մէջ կապուտակ ալեացն
լայնատարած ծփին լինէ վեհաւէտ և քանա-
ծածան կողովակի սրգաշարժ թանձրութ ջուրցն
ովկիանոյն՝ սրգաքայլ ոտիւք ընթացութ սխրա-
ցեալ, անվեհեր դիմամբ յառաջ ՚ի նկատել
տեղին հասանէր։ Որ պետրոսօրէն երկմտէր,
մտթ 14․30, այլ փրկչաբար խիզախէր․ Նա ծո-
ղովելոց հարցն բազմութե՝ սխրալի հիացումն
տանէր։ Նա զանդրադարձութին եկաւորութ՝

ոչ

ոչ տարակուսանօք իւիք հայթայթէր, կամ յառաջ
արկեալ հանդիսէն կամէր: Այլ նոյնաձև օրի-
նակաւ համարձակապէս 'ի հաստատուն երկիր
ելանէր: Որ և հետք հետագնացութեն մինչև
ցայսօր ժամանակի լուսաշաւիղ երևմամբ 'ի վե՛ր
երեսաց ջուրցն տեսանի, առ 'ի յիշատակ նոյն
սքանչելեաց: Իսկ Քրիստոսապէս ամ ուրեք 'ի
տեսողացն ասուգին պատմի առանց երկբայութե-
ող և է Քրիստոսի: Նաև թշնամեաց վկայութբ
հաստատի հաւաստեաւ որ զօրաւոր է յոյժ:
Այլ և տուն ոչ և տաճար սրբուն 'ի տեղւոջն
հաստատեալ. առ 'ի վկայութի հրաշիցն և 'ի հաւաս-
տեսողացն: Յորոց հիացմամբ փառս վեր առա-
քի հրաշագործողին քնի: Զի ամ փառաւո-
րեալ է 'ի խորհուրդս և 'ի բանս և 'ի գործս նոց
իւրոց Քրիստոսապէս: Իսկ զփառաւորիչս իւր
փառաւորէ փառաւորեալն յամենայն 'ի գործս
բարիս որդւոց մարդկան: մտթ 5. 16:
Զորոց տեսեալ զմեծաքանչ հրաշս ժողովուրդք
հաւատացելոց, փառաւորեն զհայրն երկնաւոր
զտուիչն այնպիսի իշխանութե մարդկան: մտթ 9. 8:
Սա գտանայր 'ի ժողովոյն նիկիոյ և գայր ընդ
հայոց մեծաւ հանդիսիւ, ընդ որհօք հոգւոյն նոյ
զօրացեալ: (Հանգուցանողին փրկչին մերոյ յոր
գտանալոյն զօրութբ հոգւոյն 'ի գալիլեայ.) Իսկ
ելանէր համբաւ զնմանէ ընդ ամ կողմանս գա-
ւառաց ուր և հասանէր: Սոյք առէին այս այր է
որ իշխանութբ ասուսէ հողմոց և ծովուց լռու
օրինի փրկչին յոր և հնազանդին նմա: Նաև

այ

այսոց պղծոց հրաման տայ և ելանեն . և զն̃մ
ցաւս ապաքինէ 'ի մարդկանէ զօրութ̃ն իւրոյ.
Որք լուեալ բերեին զն̃մ հիւանդս և ախտա-
ժէտս և ընկենուին առ ոտս նր̃ և բժշկեր զն̃մանս.
Եւ տեսեալ բազմաց զեղեալ սքանչելիսն, տային
փառս այ̃ և ասէին, ով լուաք՝ այնպս և տեսաք.
Եւ այսպիսի մեծասքանչ հրաշիւք և չքնաղա-
գեղ ձիրութ̃ գայր հասանէր յն̃ս հայոց. բե-
րելով ընդ ինքեան զգիրս հաւատոյ զեղեալն 'ի
մեծէ ժողովյն. և մատուցանէր հօրն իւրում
տրդն Գրիգորի և մեծի Թգ̃ւորին Տրդատիոսի.
Որք մեծաւ ուրախութ̃ ընկալեալ բերկրեին,
և յաւելուին 'ի նոյն ըստ պատշաճի. Խնդրելով
'ի այ̃՝ զի 'ի նոյնն հաստատ կացցեն մնասցեն
իւրեանց վիճակեալ ժողովուրդս.

Եւ կացեալ զկնի հօր իւրոյ մեծին գրիգորի
յաթոռ հայրապետութե̃ն ամս եօթն. բարւք
վերակացութ̃ և ճշմարիտ վարդապետութ̃ յան-
դիմանելով զչարսն. Եւ ով առացաւ՝ յարքե-
ղայոսէ ամբարիշտ բռնաւորէ վ̃ն սաստկագին
յանդիմանութե̃ն՝ որով զմահ ընկալեալ, հասանէր
խնդութ̃ առ քս̃. առ որ անձկացեալն էր 'ի մահ-
կութէ. Ասելով, տ̃ր՝ ոչ զքզ սիրեցաք յոյժ,
բայց միայն զքեզ. Եւ թէ, թողաք զա̃մ և եկաք
զկնի քո. և զբանն քո պահեցաք ճշմարտապէս.
տուր մեզ զողորմութի քո. Այսպէս վճարեաց
զկեանս նր̃ հովիւն մեր. սուրբ մեծ թողեալ
վիճակելոց իւրոց. որոց վ̃ն աղօթէ միշտ առ տ̃ր
ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ.

Իսկ զինի նորին երանելին Աթանէս հարա-
զատ եղբայր նորա. ոչ միայն ըստ մարմնոյ, այլ ըստ
հոգւոյ եւս՝ առաքինութեամբ նորին գոլով համեմատ,
բազմադիմի պատուով պանծացեալ։ Սա եւ ուղ-
ղափառ վարդապետութեամբ զՃշմարտութիւն միշտ քա-
րոզելով, հաստատեր եւս կրկին անգամ խորովքն
յօժարական երկամեօք զաթոռն Թագաւորական։
Բարեպաշտութեամբ եւ ուղղափառ հաւատով զարդա-
րեալ. կայսերական պատուով պանծացեալ, եւ ՚ի
պատիւ սրբութեան չքեղացեալ։ Յառաջադէմ
յամ գործս բարութեան. արիագոյն ՚ի վաստակս
առաքինութեան։ Զ բարեմիտն յորդորելով ՚ի
գործս բարիս, եւ զչարսն յանդիմանելով բանիւն
Ճշմարտութեան։ Կարգաւոր քանոն հաւատոյ եւ չափ
ածպաշտութեան եւ հիմնադրութեան յամի Ճանաչելոյ.
՚ի Սարմնի միշտ կենդանի վիմաց քնի. սպանանելով
զանդամս զերկրաւորս ըստ առաքելոյն բանին. կող. 3. 5.
Անմարմնաբար Ճգնութեամբ, Ճշմարիտ քաղաքավա-
րութեամբ, ուղիղ վարդապետութեամբ եւ բարւոք վերա-
կացութեամբ, զանձն օրինակ տալով բազմաց եւ նպա-
տակ բարեաց զինի եկելոց։ Ըղձալի մարդկան
եւ հաճոյ այ։ Յաւելեալ ՚ի հօրս հայրապետս.
՚Ի քահանայս քահանայապետն. ՚Ի հովիւս հո-
վուէն քաջ. որ զանձն իւր միշտ եդեալ էր ՚ի վր
հօտին։ ՚Ի Ճգնաւորս՝ անմարմնաբար Ճգնեալն։
՚Ի վկայս՝ հաստատագոյն մեռեալն աշխի. որոյ աշխ ՚ի
խաչ եղեալ էր՝ եւ ինքն աշխի. գաղ. 6. 14.
՚Ի մարտիրոսս՝ միշտ մարտուցեալն ՚ի վր պատ-
ուիրանացն այ։ ՚Ի նահատակս՝ հաստատագոյն նա-

 հա

հաստատեալն ըստ հաճոյին ա՟յ ։ ’Ի մենամարտս՝ բարւոք մարտուցեալն ըստ օրինի ա՟ն ։ 2 Տիմ՝ 2. 5. ’Ի սիրելեան ա՟յ՝ միշտ անձկացեալն առ նա սիրով։ Որ միշտ փափագէր զելանելն ’ի մարմնոյ աստի և զլինելն առ ա՟ծ ։ Փիլ 1. 23. Որ հանապազ գոչէր ընդ մեծին դաւթի բաղձալի սիրով, Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ ա՟յ։ Վաղագոյն հրաժեշտ խնդրելով յախտալի կենացս ։ Ցանկալին վերնոց՝ և մեզ յոյս բարեաց առ ա՟ծ և պարծանս առ մարմնակից մարդիկ։ Որև բարեխօս է միշտ

առ տ՟ր վ՟ն հօտի իւրոյ աստ մնացելոյ։

Մ․ յԼ և շառաւիղ սուրբն սրբութե՟՝ մեծայոյսն և յուսոյ ժառանգն ։ Որ յոլովագոյն յուսով յուսայր ’ի յոյսն առատապարգև ։ Յուսով կարդալով զանուանն ա՟յ զյոյսն ա՟մե՟ն յօգնականութ՟ յուսացելոց ’ի յոյսն բարի։ Ճշմարիտ քահանայապետն՝ Յոյսն յորջորջեալ ։ Փոխանորդն հօրն աթոռոյն, և նախանձաւոր նորին առաքինութեանն ։ Նաև զնախանձ ա՟ն յանձին կրելով հանգոյն մեծին եղիայի, ’ի վ՟ն պատուիրանացն ա՟յ նահատակեալ նման մեծին յովհաննու մկրտչի ։ Վրէժխնդիր փառաց փրկչին մերոյ ք՟ի ։ Որդւոյն ա՟յ վկայ Ճշմարտութ՟ե ։ Հովիւ հոգևոր՝ հօտին ք՟ի Նորդարև ա՟ն նմանեալ ։ զանձն դնելով ’ի վ՟ն ոչխարաց, գորովագութ սիրով հայր մեծապէս վ՟ն փրկութ՟ե հօտին իւրոյ ։ Գթածաբար գոչէր առ բարեգութն և ողորմածն ա՟ծ, մի՛ մերժեր զմեզ յողորմութ՟ե քումմէ ։ մի՛ ցրեր զուխտս քո ։ մի՛ ’ի բաց է առնէր զողորմութի՟ւն

քո

քո 'ի մէնջ. մի՛ մատներ զմեզ իսպառ վ՟ն ան-
ուանդ քում ս՟բյ. Ա՟մ զերծո՛ զմեզ յորոգայ-
թէ՛ որսողին վ՟ն Գրիգորի սիրելւոյ քո, և վ՟ն
Արիստակիսի ընտրելոյ քո, և Վրթանիսի ս՟բյ
քո. Յիշեա՛ տ՟ր զԳրիգոր և զա՟մ հեղուին ն՟ր,
Ո՟ր երդուեալ էն և ուխտս եդ ո՟յ իւրոյ, թէ
ոչ ելից 'ի խորութե վերայէս և 'ի մէջոյ թշնա-
ւոր գաղանացս. Թէ տաց քուն աչաց, կամ
նինջ արտևանաց. թէ տեսից զլոյս արևու. մինչև
զաւետիս ընկալայց փրկութե ազգիս այսորիկ.
Թէ բերկրեցայց սրտիւ, մինչև գտից զտեղի
արկանել հիմն տաճարի տ՟ն 'ի գաւառիս յայսմիկ.
Եւ արդ տէր՝ յիշեա՛ զուխտ վաստակաւորին
քո. և զնեղելոց անձանց պաղատանս մի՛ անտես
առներ. Տո՛ւր փառս անուան քում որ փառա-
ւորեալդ ես յաւիտեան. Ամենեքեան նեղեալք և
հոգիք ձանձրացեալք յանօրինաց յարուցելոց 'ի
վ՟ր մեր, աղաղակեմք առ քեզ ք՟ս փրկիչ մեր. Ե-Ե Յ.
Լո՛ւր ձայնի աղօթից յուսացելոցս 'ի քեզ. և
փրկեա՛ զմեզ 'ի հալածչաց մերոց. զի քեզ փառս
վեր առաքեսցուք ընդ հօր և հոգւոյդ ս՟բյ.
Այսպիսի գորովագութ սիրով աղօթէր քաջ
հովուապետն մեր և արի երջանիկ ծնօղն ը՟ս
հոգւոյ երանելին Յուսիկ 'ի վ՟ր հօտին իւրոյ.
Այսպիսի արտօսրագոչ պաղատանս մատուցանէր
առ ա՟ծ վ՟ն բանաւոր խաշանց իւրոց. Այսպիսի
սիրովին գթով գոչէր առ տէր վ՟ն արտագահս
օգնականութե. Հառաչելով 'ի գութ զայն որ
ոչ երբէք դադարէ 'ի գթալոյ. Եւ այսպիսի
թախ-

Թախծեալ սրտիւ հեղոյր զանձն առաջի տն. և
յորդառատ արտասուօք ողողէր զերեսս երկրի։
1 Բ-Գ 1.15. Որ և այսպիսի աղօթիւք սատակէր
զանօրէնն յուլիանոս զանմտութբ յարուցեալն
'ի վ(եր)այ եկեղեցւոյ նրյ. Նա ինքն որ ըստ օրինա-
կի տն զամենայն կամէր կեալ և 'ի գխոուի ճշմար-
տութե գաղ, փութանակի հասանէր առ Թագա-
ւորն. Թերևս կարասցէ շահել զփրկութի ոգւոյ նր։
Նա անդ 'ի ձեռն առեալ զխրատ վարդապետութե
խորոյ, բազում ջանիւ հնարէր դարձուցանել
զնա յապարասան բարուցն զոր ստացեալն էր։
Յուշ առնելով նմա զտն մարդասիրութի և զե-
րախտիս նախնեացն և զջանս վաստակոց նոցին։
Ով Թագաւոր ասելով, ընդէ՞ր անմտանաս 'ի
քրիստոնէից մեղս յանդգնելով. Եկեղեցի գը-
նեալ է պատուական արեամբն քնի. և քարինք
սորա շաղախեալ են 'ի կայլակահոս աղբերէ կո-
ղից նր. Շինուած յարկի սորա' առաքելովք
և մարգարէիւք հիմնացեալ է։ Հայրապետաց և
վկայից կատարմամբ աւարտեալ է. Հրեշտակաց
բնակարան և մարդկան քաւարան խոստովանեալ է։
Աթոռ ածութեն 'ի սմ կառուցեալ է։ Զնո-
րածնեալսն' որդիս այ առնէ։ Զամուսնացեալսն
ողջախոհութբ զարդարէ։ Զզղջեցեալսն հաղորդ-
առնէ տն արքայութե։ Հիմ առնես զսա տեղի
և բնակարան դիւաց։ Զխորդ զտաճար այ' բա-
գինս կռոց։ Որչափ զայրկս փրկութե' տեղի կորս-
տեան։ Ընդէ՞ր զտուն սրբութե' վայրս պըղ-
ծութե։ Զի՞նչ օգտեցան այնոքիկ որք այդպի-
ան

անմոռացան։ Ո՞ւր են թագաւորքն տաճկինք չա-
րագոյնքն և ապարասանք, որք պաշտօնեայք էին
դիւաց։ Ո՞չ ապաքէն որպէս զծուխ պակասեցան.
և իբրև զփոշի զոր տարաւ մրրիկ։ Եւ՛ երանի
թէ այսչափ միայն. այլ կան և մնան լուցկիք յա-
ւիտենական տանջանացն։ Ես զքեզ կամիմ զի
ընդ երկրաւոր թագաւորութեանդ՝ և զերկնիցն
ժառանգեսցես զարքայութի. և ընդ անցաւոր փառաց՝
զանանցն առցես փառս։ Յիշեա՛ զի է մին հաւատոյ
զտրդատիոս և զգրիգորիոս. զհաւատն իմ և զհաւատն
քո. ուստի կրկին կոխեցայք ըստ մարմնոյ և ըստ
հոգւոյ։ Նոքա զդիւաձոյլ պատկերսն խորտա-
կէին. և զմեհեանսն քանդէին. և զսեղանս եկե-
ղեցիս հիմնարկէին։ Եւ՛ դու զտաճար այ բնա-
կարան դիւաց առնես և տեղի կռոց պատրաստես։
Եւ՛ որո՞ւմ տանջանաց չիցես արժանի. կամ ո՞ր
գեհեն զքեզ ոչ այրեսցէ։ Մանաւանդ զի կրկին է ա-
պարասանութիւն. ուրացութե, և՛ի սրբութիւն
մեղանչես։ Զի՞ է թէ ՛ի վայրաբնակ տեղիս կռա-
պաշտիցն կորուսանէ անձին, ապա զո՞ր ներումն
թողութե ունիցի որ առ սեղանովն այ զպատկերս
դիւաց դնիցէ։ Քանզի զի՞նչ հաղորդութի է
լուսոյ ընդ խաւարի. կամ զի՞նչ նմանութի է տա-
ճարի այ ընդ մեհենեաց։ Մանաւանդ որոյ նպաստաւո-
րութի մատուցանեմ քեզ զգուշանալ ՛ի չար յա-
մառութենէդ. զի մի՛ եկեսցէ ՛ի վե(րայ) քո բար-
կութի տն։ Զի՞ է թէ բաղտասար արքայ բաբե-
լացւոց՝ որ զսպաս սրբութե յանարժան տեղիս
մատուցանէր՝ չարաչար սատակեցաւ, դան 5.2.30,


ապա

ապա տառապել ես քեզ լինի կորնչել. որ զգար-շելոյն 'ի սրբութիւն մերձեցուցանես: Մ՜որոյ աղետալի հայցեմ և փոխան աղաչեմ ով Թագա-ւոր, մի՛ փութար 'ի քոյին կորուստ: Մ՛ի զերկ-րաւոր Թագաւորի պատկերդ յարգոյ համարես-ցես քան զպատկերդ երկնաւորին: Յիշեա՛ զի գրեալ է, 'ի պատկեր իւր արար Ած զմարդն: Ծն. 1.26: Մ՛ի փոխանակեր զմահկանացուդ ընդ անմահին. զաւօրեայդ ընդ մշտնջենաւորին: Զի այդմ պատկերի նախադաղափարն վաղվաղակի չարաչար ըստ արժանոյն կործանելոց է. իսկ ոգւոյդ քո կայ և մնայ յաւիտենական. պատրաստեալ զմեթու իւր 'ի դատաստան. Աղ 9, 8. առ 'ի մշտնջենաւոր դա-տել զայնպիսիսն: Մ՜յ ով Թագաւոր զարթիր 'ի Թմրութենէդ որ ոչ է 'ի քնոյ. ընթափեաց յար-բեցութենէդ որ ոչ է 'ի գինւոյ. այլ՝ վայի արժանի: Հրեշտակ ես հոգւով. մի՛ զանմահ մահն մեռանիր: Աստուած ես առ այժմ. մի՛ բնաւ ապականիր: Ն՝կ 'ի զղջումն փութայես. ամբարձ յերկինս զաչս քո: Նայեաց 'ի բարձունս առ Տէր Ած քո: Յիշեա՛ զարարիչն որ ստեղծ զքեզ յոչընչէ. որ եհան զքեզ յարգանդէ. որ կերակրեաց զքեզ 'ի մանկութենէ. որ փչեաց 'ի քեզ զշունչդ. որ ետ քեզ զարքայութիւն. որ խոստացաւ քեզ զհանդեր-ձեալն եթէ պահեսցես զպատուիրանս. որ իշխա-նութիւն ունի կենաց և մահու քո: Յիշեա՛ ըզ-շնորհս աւազանին որով լուսաւորեցար: Յիշեա՛ զանուն Տեառն եկեղեցւոյ որով դաստիարակեցար: Յիշեա՛ զհաղորդութի մարմնոյ և արեան Տն որով

քո

քաւեցար · Յիշեա՛ զնշանն տէրունական որով
կնքեցար յաւուրն փրկութեան · որով և պահպանեալ
եղեր · որով և փրկութիւն գտեր · Յիշեա՛ զմիւսան-
գամ գալստեան յորժամ ծագի նշան փրկչին ՚ի
յարևելից պայծառ քան զարեգակն · Յիշեա՛ և
զդնիլ աթոռոցն · զահեղ դատաստանն · զիւրաքան-
չիւր գործոց հատուցումն · Յորժամ հայր և
որդի և հոգին սուրբ բազմին յաթոռ փառաց · և
զօրք հրեշտակաց յերկնից յերկիր հեղուն · մինչ
զի թափուր լինիլ երկնից ՚ի բնակչաց · Որպիսի
լինիցի ատեանն այն · յորժամ բանքն սպառին և
գործքն թագաւորեն · Յորժամ իւրաքանչիւր
ումեք յանցանք հրապարակայայտ լինին · և զար-
հուրեալ դողան տարրեղէն արարածքս · Ընդ
զայս ամենայն քեզ յուշ արարից · Յորժամ զղջասցիս
և ոչ օգտեսցիս · հառաչես և ոչ հասանես · խնդ-
րես և ոչ գտանես · Զի կոչէի և ոչ լուար ·
յերկարէի զձեռս և ոչ անսացեր · առակ 1 · 24 ·
Արդ այժմ լուր, մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է ·
մինչդեռ գայ յոյս փրկութեան և ժամանակ ապաշխարութեան
Ընկեր առաջի Աստուծոյ արտասուօք և աղաչեա՛ զերեսս
նորա ապաշխարութեամբ · Ասա՛, մեղայ Աստուծոյ որպէս դաւիթ ·
Եւ լուիցես պատասխանի, եթէ՝ եթող Տէր զյան-
ցանս քո · 2 թագ 12 · 13 · Արտասուեա՛ ընդ պետրոսի
և ընկալցիս վերստին զշնորհս · Ընդ պօղոսի յուշ
արա զանդխոստութիւն · Ընդ մաքսաւորին քաւութիւն
խնդրեա՛ · Ընդ աւազակին գոչեա՛ մեծաձայն, յիշեա՛
զիս Տէր յարքայութեան քում · և լուիցես ժառանգել
զդրախտն աստուածատունկ · Լեր օրինակ բազմաց
մե

մեղուցելոց և վստահուն յուսացելոց։ Ոչ ՚ի
քոյդ նայելով ՚ի դարձ, դայցեն ՚ի զզջումն ա-
պաշխարութե և յուսացին Թողութի գտանել։
Գոչեմ ընդ մանասէի, չեմ արժանի հայել ՚ի
բարձրութիս երկնից ՚ի բազմութէ անօրէնութե
իմոյ․ վս զի կանգնեցի պատկեր և բազմացուցի
զցասումն անձին իմոյ․ և զայլս որ ՚ի կարգին․
որով հանդիպեցիս փրկութե։ Ահա ծանուցի
քեզ զամ որով ապրեցիս։

Այլ յորժամ ամ բանքս այսոքիկ ոչ ազդեսցեն ՚ի
միտս Թգէորին․ այլ կարծրացուցանէր զսիրտ
իւր իբրև զսալս դարբնաց․ և խնայր զականջսն
որպէս իժի և քարբի չարաթոյն գազանացն․
և ոչ տայր տեղի Թովչէին ճարտարի, առնուլ
դեղ ՚ի դեղատուէն իմաստնոյ։ Յայնժամ ըղ-
մարդարեականն ՚ի կիր արկանէր զհրաման մե-
ծին դաւթի երանելին որ հայրապետն Յուսիկ․
զորոյ զանունն առել քաղցր է ՚ի լսելիսն իմ զօ-
րէն պատուիրանի որն առնել քան զքաղցրութի
մեղու ՚ի քիմս ճաշակողաց ըստ հոգեգրողին․ սղ 118։
Այլ զի՞նչ գործէր երջանիկն ՚ի հովուապետս․
զսուտ բարկութն ՚ի ձեռս իւր առեալ իբրև զնե-
ցուկս երկաթեղէնս․ և զպատկեր պանդկին իբ-
րև զանօթս կաւագործաց խորտակէր։ Այլ առ-
նելով ՚ի վր ատամբ՝ բարբառէր, աստուածք որ
զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն ՚ի ներ-
քոյ երկնից։ երեմ 10․11․ զի կուռք հեթանո-
սաց դևք են։ սղ 95․5։ Այլ զի եւ որ հրա-
ման ՚ի վր իժի և քարբի գնալ և կոխել զամ

զօ

զօրութիւն թշնամւոյն։ Ղուկ 10.19։ Նաև այսպէս առաթուր հարեալ զգունեալ գարշութիւն, ընդունիք արկանել զիմանալին գողիադ։ զժողովուրդ իւր ամբողջ պահելով յաներևոյթ այլազգեաց։ 1 Թագ 17.49։ Նաև վանեալ մեծայաղթութբ զվիթխարի վիշապն ահագին։ Զոր օրինակ մեծն դանիէլ զգարշելին զայն ՚ի բաբելոնի։ 13.21.26։ Կամ իբրև զգազանն զայն ՚ի ձեռն սրբուն տապանակին առ քանանացիսն։ 1 Թագ, 5։

Ընդ որ ցասուցեալ թագաւորին, զա͞մ թոյնս դառնութե իւրոյ թափէր ՚ի նա փութանակի։ անօթ եղեալ սպնջի։ զկամս նր կատարելով յօժարութբ։ Նաև հրամայէր ձաղկել զնա ուժգին։ ոչ միայն ըստ պօղոսի քառասուն միով պակաս, 2 Կորն 11.24, այլ մինչև յոգնիս զի զրաւեսցի ՚ի կենաց որ և եղեն իսկ։ Տախանաւ հարեալ հանգոյն եղբօր տն յակովբայ։ որոյ և փառացն հաղորդ գտեալ ՚ի քրս։ Միաբանութե զինուորացն։ ոչ չարին սպասաւորացն։ ոչ արբանեկաց բանսարկուին։ Յորժամ բարկանայր սաւուղ ՚ի վր քահանայիցն և հրամայէր կոտորել զնս վն կերակրելոյն զդաւիթ, ոչ առին յանձն սպասաւորքն։ այլ հրաժարեցին ամէքն ասելով, ոչ մխեսցուք զձեռս մեր յօծեալ տն։ մինչև դովեկ ասորի պատահէր նց հրամանաւ սաւուղայ։ 1 Թագ 22.17։ Նաև յորժամ յանդիմանէր պօղոս զքահանայապետն անանիա վն հրամայելոյն հարկանել զբերան նր, և սպասաւորացն ասացեալ՝ զքահանայապետ այ հայհոյես, ասէր, ոչ գիտէի եղ-

բարք

բարք և թէ իցէ քահանայապետ. թէպէտ և դի
տեր իսկ. Գործ 23.2. Յայտ առնելով թէ՝ պատ-
կառել պարտ է յօծութե՛ն շնորհէն. Նաև տէրն
մեր և ած՝ յորժամ ածել լինէր յատեան ան-
ածիցն և հարցեալ յանօրէն քահանայիցն և հա-
մարձակութ առնէր զպատասխանին, ապտակեալ
լինէր 'ի չորին սպասաւորէն և 'ի չար հատուցա-
նողէն ընդ բարւոյ կեցուցչին իւրոյ. որ և առէրն
իսկ, մինչպէս տաս պատասխանի քահանայապե-
տին. յօհան 18,22. Այ՛ պատիւս ամուրէք պատ-
կառէին 'ի պատուոյն. Իսկ սոքա միայն երևէին
լերբք և յանդուգն. Ո՛չ ունելով զերկիւղն այ
և ո՛չ պատկառելով 'ի շնորհէ քահանայութեն.
Նայլ զցանկութին սննդի կատարէին անմտութ 'ի
կորուստ անձանց. զի նա մարդասպան է խնդրե-
նէ ըստ հրամանի փրկչին մերոյ. յօհան 8,43.
Նման անմտութե ազգիս մերոյ. քանի՞ լուսաւո-
րիչս խաւարեցուցին. որչափ ածաբան բերանս
խցին. քանի՞ սիւնս եկեղեցւոյ տապալեցին.
Զարխտակէս սրախողխող արարին. զվրթանէս
հեռահալած առնելով. զյուսիկն ողոածեծ վճա-
րելով 'ի կենաց. զմեծն ներսէս դեղակուր կո-
րուսին. զնրսն սահակ 'ի մետաղս աքսեցին.
Որք էրբև ճրագունք վառեցան հայոց ազգիս.
և մեք առ ժամանակ մի կամեցաք ցնծալ 'ի լոյս
նոցա. յոհ 5.35. Այ՛ սոքա այսպիսի օրինակաւ
վճարեցին զայս կեանս.
Իսկ մանուկն Գրիգորիս, եղբայր յուսիկանն
երեց քան զնոյն. դեղաղէշ դիմօք և բարձր հա-
տա

տակաւ. Հնդեստաստան ամենայ կոչեցեալ յեպիսկո-
պոսութի աղօթանեաց նորին. Ծերունական վարուք
և սրբասէր բարուք՝ զմեծին Գրիգորի բերե-
լով յինքեան զնմանութի. Հետևեալ ընթացեալ
զերկայնաձիգ ճանապարհն ըստ օրինակի փրկչի
մերոյ յոյժ. Ճշմարտապէս անօթ ընտրութե
գտեալ փրկչին այ ըստ երանելւոյն պօղոսի. կրել
զանուն սորայն առաջի խուժադուժ ազգաց և
ժողովրդոց՝ քարոզութ բանին կենաց. Գործ 9.15.
Որխաբար ի մարտ մտեալ ընդդէմ բանութե
բանսարկուին. բոլորապատուղ զինքն մատուցանե-
լով պատարագ ընդունելի ի հոտ անուշից այն
այնպէս և ըստ այսմ օրինակի. Ո՛չ ի յորժամ
էհաս յերկիրն յայն և յանդիման եղև Թագաւորին
նոցա, զճշմարիտ վարդապետութին ի կիր արկանէր.
և ջերմեռանդն սիրով քարոզէր նոցա զաւետարանն քի.
Այլ զի նոքա յառաջ էին հաւատացեալ քարո-
զութ առաքելոցն և դարձեալ վերստին ի նոյն
մոլորութի էին խոտորեալ, վն որոյ գայթագղեալ
և զդիւրախաբ բարս ոչ գործ էին ստացել.
և եղուզակ արշաւանաց էին պարապեալ. Այլ որ
թէպէտ զառաջինն ընդունէին զբան վարդապետե
երանելւոյ հայրապետին, բայց յորժամ տեսին թէ
հատանել կամի զայս զնի նոցա, առաւելապէս ի նա-
խանձ դրդէին. Այլ զի քարոզէր նոցա մանուկն
գրիգորիս ասելով, ով մարդիկ դարձարուք առ
այ ձեր և ծանիրուք զարարիչն ձեր և զհաս-
տիչ. և մի յընդունայնութի ծախէք զնորհս բա-
նականութե ձերոյ. և զհանճար իմաստութե. հաւ-

սա

տարելով անասնոց անմոլից. որք ոչ ճանաչեն զա-
րարիչն իւրեանց: Մ. ժլ գիտասջիք զի ձեր տր
գոյ յերկինս. որ կարօղն է կերակրել զամենայն բա-
նիւ զօրութ իւրոյ: Որ կեցուցանէ միշտ զկո-
րուսեալսն ըստ հաճոյից կամաց իւրոց: Նա՛
զհրամանէ՛ նր կախեալ կան ամ եղականն բնութք:
Որ տայ արեգական և ոչ ծագէ. յոբ 9. 7. և
զանձրև ՚ի հուր փոխարկէ: ծն 19. 23. Որ թուէ
զբազմութի աստեղաց, և զամենայն զնս յանուանէ
կոչէ: սաղ 146. 4. Նա՛ ՚ի բուռն ունի զամ շունչ
կենդանեաց: յոբ 11. 10. Որ բանայ և ոչ ոք է որ
փակէ. և փակէ՛ և ոչ ոք է որ բանայ: յայտ 3. 7.
Որ առնէ զհրաշակերտս և զմեծամեծս որոց ոչ
գոյ թիւ: յոբ 9. 10. Որ փակեաց զծով աւա-
զով. և զթանձրութ հող և կարծրագոյն խճողել
երկիր ՚ի վր հաստատեաց և լոյծ բնութե ջուրց
հաստատեաց. և ոչ կամի՛ փոխել զամ անհնա-
րինս ՚ի հնարաւորութի. Նա՛ արդ որդեակք,
լուարո՛ւք և ՚ի միտ առէք զհրաման պատուիրանի
տն. ոչ զի բարի՛ լինիցի ձեզ, և ողորմութի գտա-
ջիք ՚ի մարդասիրութէն ՚ի դէպ ժամանակի.
Այս և առաւել քան զայն քարոզէր և ու-
սուցանէր երջանիկ հայրապետն Գրիգորիս ՚ի
մէջ բազմամբոխ ժողովրդեանն այնորիկ: Յոր-
դորելով զնս ՚ի հաւատս. և վարժելով ՚ի գիտութ
ճշմարտութե: Որք թէպէտ զառաջինն տեղե-
տուել ունկնդիր լինէին քարոզութ ոչ առն այր,
բայց յետոյ հրաշիւրս պղտորս և դառնացու-
ցիչս արբեալ սաստկապէս զարժանին վայլ մա-

 տու

տուգողաց և ընդունողաց, և կործրացուցեալ զխրատս իւրեանց ոչ զփարատօնին և զնմանեաց նորին, և զշարեալ չարացն այնոցիկ 'ի չարագոյն հօրէն չարուն, չարապէս չարչարանօք զչարչարանս նոյն հնարէին. Կատարելով զկամս չարութոյն վիշապին. որքանեկին՝ իւրեանց չարութեն. որ հրապուրեր զնա յայնպիսի չարուն. Այլ զինչ առնէին. Նորահնար իմն չարի գտակ եղեալ. զի հանդիսաւոր և հռչակելի չարուն գործեացեն. Այլ գտեալ 'ի դէպ չարին խորհրդոց (որով յագեցուսցեն զախտ որամոլութեն) զվայրենի ամեհութի քառաքեաց երկվորաց. որով ստորաքարշ ընթադրուք զկեանս նոյն սպասէին. Ծածեցուցանելով ընդ լայնանիստ մեծութի դաշտին. զի խնամով մանրամասնաբար երկարուք գզեացի մատաղ մարմին նոր հովուապետին. Յորոյ կարմրագոյն արեանն հեղմանէ՝ անբաւսածին քարինք ծաղկէին. և թանձրագոյն հողն ոռոգանէր. Կանանչագեղ բոյսքն ծիրանեգոյն ներկանէին. և խռովացեալն դալարանայր. Այլ մեծ քահանայապետն և երջանիկն յամի որդարև նմանեալ տն իւրոյ մեծի հովուապետին. աղօթելով վն հօտին իւրոյ փրկութե. Ոչ միայն ոչ համարել 'ի մեղս զյանդգնութին աղերսէր, այլ և ողորմութի գտանել 'ի տնէ հայցեր. Այլ այնչափ ջերմեռանդն սիրով զգութ գորովոյ հատատուն ունէր, մինչ զի 'ի ստորաքարշ ընթադրութեն ոչ լինէր կասեցեալ յայսպիսի խնդրոյս. այլ մինչև յեղանել շնչոյն զնոյնս աղօթէր. Որոյ

ոչ

ոչ լինէր անպտուղ մաղթանք աղօթից մեր հայ
րապետութիւն. այլ 'ի յանկ ելեալ տիրանին կատարէր
խնդիր հայցուածոց նորին. Զի ի մահուանէն
իւրով և կամաւոր չարչարանօքն շահէր զկորուս
տն̃ց. և հաստատէին 'ի հաւատս Ճշմարիտս. Նո
րանէր յաղգէ ն̃ց թշուառ բարեպաշտօն և եր-
կիւղած ժ̃ղ. և 'ի խնդիր ելեալ մեծաւ յուսով
նշխարաց մ̃եյ քահանայապետութեն, գտանէր 'ի գիւղն
ամարաս. մեծաշուք հանդիսիւ տօնախմբելով
զվերջաւորն ն̃ր ցնծութ̃ե ամ յամէ 'ի փառս ա̃յ.
Նո՛ արդ՝ սոքա չորեքեան շառաւիղք մեծի հօրն
հաւատոյ մ̃րյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.
Սերեալք սրբութ̃ե 'ի նմանէն տիրապէս ոչ
միայն ըստ մարմնոյ, այլ և հոգևոր շնորհացն գո-
լով պտուղք գովելի երկամբք. Սերովբք սրբու
և քարոզք Ճշմարիտ որդւոյն ա̃յ. Զիւրաքան-
չիւր ժամանակս պայծառացեալք պանծալի փառօք.
Նուաճեալք առաքողեն. և սիրեցեալք 'ի Ճշմա-
րիտ սիրոյն. Քահանայք պատուեալք քաղցր-
ուսոյց վարդապետութ̃ե. Արեգակունք կող-
մանս արևու. և լուսատուք 'ի խաւարի նստելոցս.
Ցնծութիք տրտմեցելոց, և ժողովօղք ցրուեալ
հօտից. Նարդոսք անուշաբուրիչք, և քրքումք
քաղցրաւետնիլք. Տիեզերաց ծաղիկք, և ծի
խնդութիք. Պարծանք քրիստոնէութ̃ե, և պսակք
եկեղեցւոյ. Միջնորդք խաղաղութ̃ե, և հաշտե-
ցուցիչք արարչին ընդ արարածս. Օծեալք հոգ-
հօք հոգւոյն ս̃բյ. և փոխանորդք Ճշմարիտ օծե-
լոյն. Լուսաւորչի աջով օծանելով զ̃մանս յե-

րա

յուրաքանչիւր աստիճանս ։ Պահապանք հաւատոյ և
բարձրացուցիչք եկեղեցւոյ։ Վարդապետք ուղղա-
ցելոց, և դաստիարակք զարգացելոց ։ Ոմանց
կաթն ջամբելով ՚ի քո, և ոմանց հաստատուն կե-
րակուր ըստ պօղոսի ։ 1 կորն 3 ․ 1 ։
Պարիսպք շրջապատ՝ եկեղեցւոյն քո ․ և աշտա-
րակք ամրութեան հաւատոյ։ ՚Ի յերկրի խորանա-
կիցք մարդկան ․ և ՚ի յերկինս դասակիցք հրեշ-
տակաց։ Նաւաստիք ձկնորսութեան, և նաւահան-
գիստք ալեկոծելոց ։ Սնողք հաւատոյ և պար-
ծանք հաւատացելոց ։
Սա՛ որդ՝ զի՞նչ եւս ասացից ․ զի տկարանայ բանս
առ ՚ի ներբողել զասա ։ Ամենայնք յամի ․ և ՚ի
ամի ամենայնք եղեալք զամենեսեան ընդով ։
Տունկք անճառելիք տանս Թորգոմեան ․ և բարու-
նակք ծաղկեալք յայգւոջ սրբութեան ․ այսինքն է
յեկեղեցի քո։ Բողբոջեալք բարի արգասիք
՚ի զանազան ծաղկանց հաւաքումն ․ յօրինեալ
պսակք վայելուչ՝ մեծապատիւ փառացն քո։
Արիստակէս և Վրթանէս, Յուսիկ և Գրի-
գորէս, Պատակի թուլպանծացեալք հանգոյն
չորից տարերց ՚ի լնութի լման աշխարհի ․ լու-
սացիչք լուսով լինայես։ Յեդեմաբուղխ աղ-
բերն յառաջեալք ըստ քառատոյ վտակացն
յարձակման ․ առ ՚ի զովացումն ծարաւելոց քա-
ռանկիւնի ծի լման ։ Սիւնք ամրութեան յամ-
խարխլեալք, մինչ յօդութի հաւատացելոց։
Չորեքդիմեան կառք իմանալիք ըստ հրաշալի
տեսլեանն եզեկիէլի ․ 1 ․ 5 ։ Աթոռք փառաց
որդ-

պատուոյն ա҃յ· բարձօղք ըստ բարձրելոյն շնորհի·
յորս հանգչի ա҃ծն ամենի· փառաւորեալն ընդ
հօր և հոգւոյն։

Ընդ սոսա և մեծն Գաբրիէլ դասակցեալ· երա_
նելին և երջանիկին 'ի հարս։ Ո҃ղ ամի աշակերտ
եղեալ յառաջագոյն լուսաւորչին մերոյ սրբոյն
Գրիգորի· և յերկարեալ մինչև 'ի խորին ծե_
րութիւն։ Սորա գոլով աղգաւ· 'ի զատական
ցեղս որոշելով։ Բայց համեմատ գոլով սրբոցս,
'ի սրբութե վարս հաւասարեալ։ Որ և յանա_
պատի բնակելով հանգոյն մեծին յովհաննու և
եղիայի։ Նաև այնչափ առաքինասէր վարուք հա_
ճոյացեալ ա҃յ՝ և մեծագոյն շնորհի արժանացեալ
յորարչէն, մինչ զի մեծամեծաց հրաշք և զարմա_
նալիք կատարեին 'ի ձեռս ն҃ր 'ի շնորհացն ա҃յ։
Որ զի թէ հարկ հասանէր 'ի ձմերայնի 'ի լեռ_
նայինն վարս ճանապարհորդել, կամ վերանալ
թանձրութե ձեանն 'ի ճանապարհէն, և կամ
յափշտակեալ լինէր մարմնով 'ի տեղին յոր և
կամէր գնալ ս҃ր ծերունին։

Նաև ս҃ր՝ 'ի ժամանակին յայնմիկ՝ յորում ս҃րն
յուսիկ նահատակեալ լինէր ձաղկմամբ 'ի տի_
րանայ թագաւորէն հայոց, (ողբածեծ առնելով
զնա,) և 'ի կենդանեացն՝ փոխէր յ҃ն կենդանի՝
արքական վկայն ք҃սի։ Նաև ս҃րն դանիէլ յայսմ
ժամանակի կենդանի գոլով յանապատի, վասն
հաչակելի առաքինութեն՝ ածեալ լինէր 'ի թա_
գաւորէն, զի կացուսցէն զնա յաթոռ հայրա_
պետութեն հայոց՝ փոխանակ ս҃րյ յուսկանն։

Այլ խստագոյնս յանդիմանեալ զԹագաւորն և զպաշտաւորսն ծերունեին ո՛չ. 'ի յուշ ածելով նոցա զպարտասանութեան գործս իւրեանց։ Մանաւանդ յաւելեալ 'ի չարիս Թագաւորն զևս անմտութիւնն, խեղդամահ առնէր զերանելին։ Ո՛չ պատկառելով 'ի հրեշտակական վարուցն և 'ի պատկառելի դիմացն։ Զի թէ ընդ փայտ դալար զայն առնէին ընդ չորն զի՞նչ լինէր։ Ղուկ. 23. 31.

Ա. յինքն՝ եթէ զո՞րն յուսիկ որ շառաւիղ գոլով Սրբոյ Լուսաւորչին մերոյ և քահանայապետ փոխանորդ յաթոռն նորա՝ այնպիսի հարուածովք անցուցանէին, ապա 'ի մերն դանիէ՞լ (որ ո՛չ ազգային գոլով նմա ըստ մարմնոյ և ո՛չ յաթոռակալութեան բարձրացեալ՝) զիա՞րդ խնայէին։

Ողբացէք ծառք անտառի և ծաղիկք դաշտի զանմտութիւն ազգիս մերոյ. ևս առաւել զԹագաւորաց մերոց անզգամութիւն։ Մի՛ որոյ տայր զվրէժն. անձամբ վճարեալ զպարտս չարեացն յատենին ընդ մեծագոյն յամառութեան։ Մի՛ զի կուրացեալ լինէր 'ի պարզից արքայէն. առհաւատչեայ անտի տանջանացն զատոյս ընկալեալ պատուհաս։ Զի է՞ որոց աստ ներէ ա̃ծ և անդ տանջէ զչարս, և է՞ զորս աստ և անդ տանջէ, զի մի՛ կարծամիտքն Թերասցին.

Այլ արդ՝ հնգեքին սոքա միաբանեալք 'ի միասին տօնախմբութեամբ, հնգից զգայութեց մերոց լինին մաքրութիւն. և բարեխօսք միշտ առ ա̃ծ վ̃ս տօնողացս զյիշատակս սոցա։ Զի տօնասիրութիւն տօնասիրաց՝ առանց չարչարանաց և նահատակութե

 պա

պսակակից առնել մեզ զոտնողս իւրեանց սիրով յուսով և հաւատով։

Եւ արդ դուք ինձ ով մեծայինն գլուխք՝ ոչ մի կամ երկու, այլ հնգեքին ՚ի միասին պատուեալք։ Զսակաւ հիւսուածս բանիս յաղքատիմաց մտացս և յանարժան անձնէ՝ սիրով ընկալարուք։ (Թէպէտ ոչ ըստ ամենարժեայ մեծութե ձերոյ, այլ ՚ի մէնջ ըստ կարողութե հասուցեալ։) Եւ հատուսջիք ըստ մեծութե շնորհի ձերոյ զառատն ողորմութի։ Զի այժմ առաւել ունիք համարձակութի բարեխօսել առ որում մերձ էք՝ այ, քան յորժամ ՚ի մարմնի տաղաւարէիք։ Այլ և խնդրեսջիք յամենողորմ տնէն՝ զի զխաղաղութի, և եկեղեցւոյ մերոյ զհաստատութի, և մանկանց նորին զմաքրութի և սիրոյ կապակցութի։ Վերակացուաց բանաւոր հօտից զմիաբանութիւն և ուղիղ քարոզութիւն։

Ժողովրդոց զհաւանութի և զանդորրութի։ Եւ մեզ խրախուսցեալք ՚ի հոգևոր սեղանոյ ձերոյ, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՀոգին սբ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

## Շարական Որդւոց և Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Գրոց. ՁԿ

Ծայլին հաւատոյ հարցըն մերց դաւանմամբն նոցին·
ծագեցաւ քեւ ընդ հանուր լոյս հայաստանեայց
որ Արիստակէս· անդադար բարեխօսեա վասն ան-
ձանց մերոց: Բանաւոր հօտին քո ընտրեալ
հովուապետ քաջ· ի հօրէն լուսոյ բղխեալ շառա-
ւիղ բարի որ Վրթանէս· անդադար բարե:
Պաղեալըն ի վերկայս հօրըն մեծի համբաւ նման
քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերն որ
որ Յուսիկ· անդա: Պսակեալ անմարմնոցն
մաքուր կուսութեամբ· Ճշմարիտ քահանայապետ
վերկայ քո որ Գրիգորիս· ան: Երկնայնոցն
ի յերկրի հաւասար ձրգնութեամբ· յանդիմանելով
ըզ Թագաւորըն կատարեցար վասն անուանըն նորա
որ Դանիէլ· ան:

---

Սուրբ որդիք և թոռունք՝ սուրբ հօրըն Գրոյ·
որ ընծայք շնորհիւ ի սուրբ ոգւոյ·
Սուրբըն առաքելոց՝ սուրբըն հաւատոյ·
որըն յաւէտ յայտնէք՝ սուրբըն կենդանոյ·
Ընդ որս և դասեալ սուրբ ծնողին ծեր·
ել ըն ընդհատ նոցին՝ կարծէք խաւարէք·
Որոց սուրբ մաղթանօքն՝ ի մեզ հայեցիս·
կեցո զմեզ ամենեցուն՝ և ողորմեցիս·
Ամէն.

## 'Ի Սեբաստոյն Հայրն Տէր Ներսէսին Գրիգորիսո ։ Վաղարշաւար Վարդապետ Դաւթի Նորայետալ 'Ի Թուին 1158 ։

գերազանց լուսոյն՝ գերափայլեցեալ ․
իմաստութբ նորին՝ գերապէս լցեալ ․
ճառագայթ անաղօտ՝ յերկիր ծագեցեալ ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ Հոգւոյն ընտրեցեալ ։

Պատմաբանող բանին՝ կենաց մեզ ցու ցար ․
լուսաւորիչ հոգւոց՝ մերոց յայտնե ցար ․
անյաղթահարելի՝ արժան կանգնե ցար ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ երկնաւորից կա մար ։

Ազանց հիւսիսայնոց՝ օդ գարնանա բեր ․
որ իբր 'ի հարաւոյ՝ ջերմաբար ե լեր ․
ընդ դիցապաշտութե՝ սառեալս հալե ցեր ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ և մեզ հընչօղ լեր ։

Դեկաւ նըպատութե՝ գերազօր հոգ ւոյն ․
հետևեցար հոգւով՝ ուղղակի ուղ ւոյն ․
որով օթեւանաց՝ հասեր բաղձալ ւոյն ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ այր Տէր գերա գոյն ։

Տաւիղ քաղցրեղանակ՝ և երգ հրաշա զան ․
անձանց մոլորելոց՝ գողուածն անմը ման ․
որում վերնականաց՝ բազմութք տեն չան ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ շնորհալից բե րան ։

Ախոյեան դիմամարտ՝ խաւարասէ րաց ․
թալկիովլթ անկասկած՝ 'ի պատերազ մաց ․
գայլոան փախուցիչ՝ դիմեցմանց դի ւաց ․
Տէր Տէր Գրիգորիոս՝ կործանիչ բագ նաց ։

Սիւն

Սիւն եղեր կառուցեալ՝ յերկրէս երկնա հաս ․
որ ըզնոր ժողովուրդ՝ զոր միշտ ըստա նաս ․
՚ի վեր հանեալ յերկինս՝ տն՟ տյ՟ տաս ․
տ՟ր տ՟է գրիգորիոս՝ սանդըղյ՟ սա րաս ։

Աշակերտաց փրկչին՝ ընտանի քա տակ ․
հայաստան աշխարհիս՝ արի հեղի նակ ․
համայնից ունողին՝ մըշտաջան մը շակ ․
տ՟ր տ՟է գրիգորիոս՝ հայր բազմազա ւակ ։

Րէնատեսիս նորոյ՝ ահարօն երկ րորդ ․
քահանայ բարձրելոյն՝ և մեզ առաջ նորդ ․
մեծի հովուապետին՝ կարգեցեալ յա ջորդ ․
տ՟ր տ՟է գրիգորիոս՝ հըմտավարժ որ սորդ ։

Գ՛ հայր մեր հոգևոր՝ գաղափար ձը գանց ․
հանդոյն և նըմանակ՝ երկնաջահ փայլ մանց ․
գըտար անհամեմատ՝ հողանիւթ ան ձանց ․
տ՟ր տ՟է գրիգորիոս՝ հըսկող գերա զանց ։

Ունօղ ՚ի տ՟է մարմնիդ՝ վարուց անմա հից ․
զօրական զինուորեալ՝ արքային երկ նից ․
նահատակ արժանի՝ բիւրուց գովե ստից ․
զոր ոչ բերեն բերան՝ տըկար մեր բա նից ։

Լիւսեցան չարչարանք՝ վըշտակիր մարմ նոյդ ․
պըսակ զարմանազան՝ պատուական գըլ խոյդ ․
անտեսից հիացեալ՝ ցանկացան տե սոյդ ․
բաղձանք և մեք սիրով՝ գեղափայլ գեղ ոյդ ։

Մեծ վըկայ քո՝ որդւոյն միած նի ․
ջախօղ գըլխոյ չարին՝ անդընդակա նի ․
տիպ օձակոյս զարմին՝ ՚ի քեզ գըտա նի ․
յաղթահարիլ չարեաց՝ նիզակ կենդա նի ։

Լորխթացեալ անդէն՝ մեղմածաւալ ցօղ.
պաքեցելոց անձրև՝ զովացուցա նօղ.
հոսան պարթևազնեայ՝ յեդեմայ է լօղ.
Ջուր կենաց հանապազ՝ մեզ արբուցա նօղ։

Մարգարիտ լուսերանգ՝ արփիագու նակ.
՚ի հայաստան գըտար՝ շնորհազարդ պը սակ.
սընուցիչ որդեկացս՝ կաթնաբեր է րակ.
մեզ մանկութե դայեակ՝ և դաստի րակ։

Լահանդաց դիցամոլ նըսեմացե լոց.
և չարաշուք մեգով խաւարացե լոց.
քարոզեցեր զա̃ծն՝ հանուրց եղե լոց.
չերկուցեալ ՚ի ժանեաց՝ գազանացե լոց։

Լ՛ գործ քո նորաշքանչ՝ արեգակնա ծագ.
և ձայն քո գեղեցիկ՝ հոգերգօղ նը ւագ.
որ կոչեցեր ըզ մեզ՝ արագ ընդ ա րագ.
արարչին համայնից՝ լինել երկըր պագ։

Բանին հօր անմահի՝ որ էառ մար մին.
և նովիմբ սևեռեալ՝ զենաւ ՚ի խա չին.
եղեր չարչարակից՝ հետևեալ ձայ նին.
թէ թողէք զա̃մ՝ ըստ երկրակա նին։

Լնդըստին ՚ի բընէ՝ պաշտօնեայդ էին.
և բարեկարգ ծառայդ՝ կամաց արար չին.
ոչ փոխեցեր ըզ փառս՝ նոյն իսկակա նին.
տալ անահտականին՝ զաղիր պատկե րին։

Լոյնագոյ էութեան՝ կամարար ըն տիր.
խաչեցելոյն խաչի՝ ըզհետ խաչա կիր.
յանձն առեր չարչարիլ՝ նահատակըդ ժիր.
և մեզ յապարախս՝ յօգնել փութա ցիր։

Գու

Գունագեղ կարմրորակ՝ չքնաղ մարտի րոս •
հեղլով իբր ըզ վըտակ՝ զարիւնդ յորդա հոս •
'ի պարծանս արամեանց՝ հըռչակեցեալ գոս •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Որ ինչ մերն է կարեաց՝ որքան կարաս ցուք •
ըզ քոյին չարչարանս՝ 'ի համար արկ ցուք •
բայց զի չեմք բաւական՝ համառօտես ցուք •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Վ երամբարձ քոց ձեռաց՝ յետոյս կապե ցեալ •
և գայլ երախակալ՝ 'ի բերան ե‿ դեալ •
որով կենացըն բան՝ մեզ վարդապե տեալ •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Երջանիկ բեռնակիր՝ ծանրութեանց ե‿ ղեր •
ըզ շառաչիւս աղին՝ ողամբ քո բար ձեր •
որով զանմահութիւն՝ մեր համեմե ցեր •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Սաստկագոյն հարուածոց՝ ենթակայա ցար •
բառնալ զմեր տագնապս՝ որք 'ի մեզ գոն յար •
ըզ գելոց 'ի վերայ՝ կըրծիցդ ընկա լար •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Տեւողիդ տանջանաց՝ առանց կասեց ման •
'ի կապանըս կըրծից՝ յոր կայր գելա րան •
դըժընդակ հընարիւք՝ ձըգեցին պա րան •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո‿ րիոս •

Իռասանա՛ն այնու՝ զոր 'ի սուրբդ ար կին •
առ 'ի բարձրաւանդակ՝ տանիսըն բար ձին •
որմոյն ապարանից՝ որ յոյնըմ տե ղին •
գեղեցիկ շառաւիղ՝ տէր գրիգո րիոս •

Կա

Աացեր համբերելով՝ 'ի նոյն տակա ցեալ·
եօթնեակ աւուրբք մերձ՝ նայիւք պընդե ցէլ·
եօթամբք նետիւք խոցե՛ցելոց բուժիչ լէլ·
գեղեցիկ շառաւիղ՝ ՟տր գրիգո րիոս։
Պառամախրտ արանց՝ խըստաց մատնե լով·
այլ և կախեցին՝ զսուրբդ ոտամբ միով։
'ի ներքոյ չարահոտ աղբ ծըխանե լով·
գեղեցիկ շառաւիղ՝ ՟տր գրիգո րիոս։
Յայգւոջս այս խոպանի՝ և փըշաբե րի·
ըստորագըլուխ եղեր՝ ողկոյզ ըղձա լի·
երկիր քոյդ ընծայօղ՝ ցընծայ և բերկ րի·
գեղեցիկ շառաւիղ՝ ՟տր գրիգո րիոս։
Շաւիղդ խմեր եկեց՝ հարար տանջա նօք·
յարանց տասանց սաստիկ բըրօք դալա րօք·
ոյնց և առ տոկացեր՝ աւուրբք եօթնե կօք·
կենդանի նահատակ՝ ՟տր գրիգո րիոս։
Իյոտոց որդեղեց՝ վարդ փայլերփնա կան·
ողրածեծ առնելոյ՝ չեղեր դիմա բան·
յորմէ մասունք մաքուր՝ մարմնոյդ ջարդե ցան·
երկինք խողխողեցեալ՝ ՟տր գրիգո րիոս։
Յարդարդ երանելի՝ 'ի կախաղա նին·
առ ոչ ինչ համարեալ՝ ըզգանալըն նո ցին·
խօսէիր հանապազ՝ ըզբանս աղօ թին·
աղաւնի քաղցրաձայն՝ ՟տր գրիգո րիոս։
Աղէ դարձեալ բերել՝ կոճեղս երկա թից·
առնել ըստ ողըքի՝ խառնգաց քոց ո տից·
և պընդեալ առ նոքօք՝ պաշտօնէից դ լից·
պահօղ ուխտին կենաց՝ ՟տր գրիգո րիոս։

Յոր

Յորդորէդ դիմեցմանց՝ հաւեցեալ ու- րեանց ·
գեղօրէն 'ի ծայրից՝ ատեցող մա տանց ·
որով լըմանեցաք՝ յանմահու թեանց ·
աղաւնութե մաքրիչ՝ տր գրիգո րիոս ·

Երկնագընաց քո թաթք՝ ատեցդ անձը մանն ·
ըղըեեաս երկաթիս՝ սիրով ընկա լան ·
իբր ըզդարասու յոլով՝ ծաղկօք ծաղկե ցան ·
հովիւ շուշանագեղ՝ տր գրիգո րիոս ·

Սատանդելով զանբիծ՝ վըկայդ արար չին ·
առեալ ըզձեռանէ՝ 'ի շուրջ ա- ծէին ·
ատեցդ արինք զերկիր՝ ուղղա նէին ·
քըրտնահոս պարտիզպան՝ տր գրիգո րիոս ·

Ի արի յուսոյ անեղծ՝ փոցն որ ան զրան ·
մարմին քո կերողաց՝ առաջի որ կան ·
գըլուխ քո պատուական՝ կրախահարե ցան ·
հեզամիտ աղաւնի՝ տր գրիգո րիոս ·

Ո՛հ զի եմ յամրային՝ 'ի խոր նիրհե լով ·
իբրև ըզսալ դարբնաց՝ ապընդատ գո լով ·
վերականգնեա ըզդիս՝ որսայցեցմամբ քով ·
ով խարիսխ ամրութեան՝ տր գրիգո րիոս ·

Նի դու խոկ արթնորէն՝ ըստ քոյ ոչ կոչ ման ·
մըտեր 'ի մեծ հանդես՝ քաջամարտու թե ·
ցանեցեալ ոչ գըլխոյդ՝ մամլօք հիւսնա կան ·
* թագին պըսակեցեալ՝ տր գրիգո րիոս ·

Սուանեալ մարտուցեալ՝ ճակատօղ րէն ·
առեալ 'ի յունչըս քո՝ փող եղեգնե ղէն ·
թափեա ըզմեղ նովաւ՝ 'ի չար գաղա նէն ·
վահան ներախտարակ՝ քաջ ըսպառա զէն ·

Սա

Ատամբ կենսաբաշխին՝ զանձդ առ պահեցեալ.
աղ՝ բորակ՝ և քացախ՝ քըմաւ ընկա լեալ.
ըզծուղակ գոռոզին՝ անդ ես աւե րեալ.
նըշաւակիչ մըթին՝ քաջ ըսպառա զէն.

Բերեալ պարկս օդենիս՝ անդրէն մարթե լով.
լցին զայն թուլագոյն՝ հընոցի մոխ րով.
յորմէ տագնապեցար՝ վըկայդ բազմա գով.
վիմաբուն մենամարտ՝ քաջ ըսպառա զէն.

Չըքնաղ մէյդ ՚ի գլուխ՝ զայն պարկ ագու ցեալ.
զորս և ըզբերանն՝ ՚ի փող քո կա պեալ.
զաւուրս երկեռակեայ՝ այնու համբե րեալ.
անտանելեաց տարար՝ քաջ ըսպառա զէն.

Ւրշաւմամբ հետևօղ՝ երկրին աւե տեաց.
ամենապիրկ տանջեցար՝ լինիլ երկնա գնաց.
ըմբ ըզ լոր քարշեցման՝ իմոց յանցա նաց.
ով խըղճիչ կապանաց՝ քաջ ըսպառա զէն.

Փառս մերոյ փըրկութե՝ զանպարտըդ ս րոջ.
կախեցին գըլխիվայր՝ ՚ի տանջարա նոջ.
դընելով ըզձագար՝ ՚ի նըստոյ տե ւոջ.
յոգնացան կըռկիծք քո՝ քաջ ըսպառա զէն.

Ի յորովայնդ տըկաւ՝ ընդունելով ջուր.
շիջուցեր առ ՚ի մէնջ ըզմեղացըն հուր.
սըրբեա ըզմեզ յաղտից՝ առնելով մա քուր.
զօրեղ ըսպեղանի՝ քաջ ըսպառա զէն.

Լերանց վեհագունից՝ երից քառե կից.
գոլով համահանգոյն՝ և չարչարա կից.
քերեցաւ կող քո մէ՝ ՚ի կարծրատան ջից.
քերանօք երկաթեօք՝ քաջ ըսպառա զէն.

Առ

Ոռոգան վայրք համայնք՝ յարենէ կո ղեղ·
Ո՜վ ոք քատակեացն այդ մատրուա՜ կեղ·
ծարաւեցեալ բաղձանք՝ ոսկեայ բաժա կեղ·
վըտակ յորդախաղաց՝ քաջ ըմպուա ղէն:

Վ ըկայդ բազմաչարչար՝ հաղորդդ անմա հից·
գերիվերոյ գըտար՝ զանից և բան տից·
ուստի վերաթեւեալ՝ ՚ի կամարն երկ նից·
հրեշտակ հողազանկուա՜ծ՝ քաջ ըմպառա ղէն:

Ն՝ պըստամբից ըղհեզդ՝ ապըստամբ վար կեալ·
վերըստին վայըն քո՝ հընարս խմա ցեալ·
թէ ինչ կերպիւ արդեօք՝ լիցիս կասե ցեալ·
որ պատնէշ պինտ ցուցար՝ արի ես արի:

Ահահորդիդ մարդկան՝ որ առի չըր ւեալ·
տատասկըս երկաթիս՝ բերել հրամայ եալ·
առեալ ածին բազմօք՝ ասկառօք ըր ցեալ·
յորոց ո՛չ ինչ երկեար՝ արի ես արի:

Սարսուատիզ թանձրախիտ՝ ՚ի գետնի սփռե՜լ·
զըզգեստ անպարտ դուինդ՝ խըրատելով հընե՜լ·
՚ի վ՟ր տատասկին՝ մերկ թաւալե ցեալ·
արեամբ շաղախեցար՝ արի ես արի·

Ո՛չ ոք յերկրաւորաց՝ քեզ նըմանե ցեալ·
և ո՛չ ոք քաջապէս՝ քոյդ կըրից տա րեալ·
զի տեղի ՚ի մարմնիդ՝ ողջ չերևե ցեալ·
ընդ գոռոզին մարտեար՝ արի ես արի:

Հիւծեալ և վշտակիր՝ մարմնով զօրա ցեալ·
յուսով ըղհաւատոյն՝ դըղեակ կառու ցեալ·
անտի ընդ խորամանկ՝ օձին մարտու ցեալ·
յաղթող երևեցար՝ արի ես արի·

Բա

Բարունույդ ու ծննկաց՝ որ միշտ ծննդագրեալ.
կապիճս երկաթեղէնս՝ դառնատանջս արկեալ.
և ուռամբք ըռնամարօք՝ սաստկանիս հարեալ.
Նիզակամարտ տապար՝ արի ես արի։

Բարձեալ յետ այնորիկ՝ ՚ի կախան պըր կեալ.
զի լիցին ծունկք նորա՝ առ յօշէ ցեալ.
զամուրս երիս վըշտօք՝ ՚ի նոյն ժուժկալէլ.
կարի արձանացար՝ արի ես արի։

Վըրբահայեաց ուշին՝ ՚ի վեր վերա ցեալ.
յերկրականաց տառի՝ գոլով հեռա ցեալ.
սիրոյն միոյ սիրով՝ ողջակիզէ ցեալ.
պատարագ մատուցար՝ արի ես արի։

Վուն գործողին ջընին՝ կապար հալէ ցէլ.
ջերմաջերմ իբր զջուր՝ ըզմարմնովդ հեղեալ.
յորմէ առ հասարակ՝ եղեր այրե ցեալ.
և ոչ այնու կասեար՝ արի ես արի։

Բամից չարչարողաց՝ կարի զարմա ցեալ.
՚ի վերայ վըկայիդ՝ որ ընդդիմա ցեալ.
նաւապարիսպ մարմնին՝ հոգւով զօրա ցեալ.
※ արեամբ պսակեցար՝ արի ես արի։

Զայնպիսի տեսել՝ առն հողած նի.
և յաղթանաց վըշտաց՝ մընալ կենդա նի.
ոչ է գործ զանդուածոյս՝ այս մարմնականի.
այլ այնմ որով աշխարհս՝ զօրացուցա նի։

Վորովհագութ հոլին՝ հայր մեր հո գեւոր.
ըստ փըրկչին ներկեցար՝ գունեալ ՚ի բա սոր.
յետ այգանեացս իջեր՝ ՚ի վերնայըն խոր.
ըզըարզմութ դիմաց՝ առնել վեհա կոր։

Ուրախացան ցընծամամբ՝ բանակք հրեշտա կաց.
ընդ քոյին ծընդնութ̃ին՝ խըստակրօնա կաց.
ամօք երիւք հընգօք՝ ներ թունաւո րաց.
կացեր անմարմնաբար՝ ուղղութ̃բ մը տաց.

Բախանամք հանապազ՝ և մեք ցընծա լով.
ընդ քոյին յիշատակ՝ տօնախըմբե լով.
բարեխօսեա՛ առ տ̃ր՝ զմեզ միշտ յիշե լով.
և թողութիւն մեղաց՝ մերոց հայցե լով:

Ի վիրապէն ելեալ՝ ողջ անապա կան.
յաղթելով բանսարկուին՝ յո̃անը ման.
ըզխոզացեալ արքայն՝ որ եղեալ ան բան.
բըժըշկեալ գործեցեր՝ յիւրըն կերպա րան:

Սատի ՚ի հաւատայ՝ մեծին տըրդա տայ.
՚ի տ̃ե երրորդութիւն՝ լոյսըն գերա կայ.
անթիւք մըկըրտեցան՝ ՚ի գետն եփրա տայ.
յանուն խաչեցելոյն՝ ՚ի տ̃ե գողգո թայ.

Սոյն այս շարունակիս՝ շարադրող գե րիս.
աղաչեմ Էլ՟Ք՝ թիւ թըւակա նիս.
ո՛վ զարդ հայաստանեայց՝ հովի՛ւ մեր հօ տիս.
առաջի անմահին՝ միշտ յիշեսցես զիս:

Լուսաւորիչ հայոց՝ հեղինակ ըն տիր.
օրհնաբան ա̃յ՝ դաւիթ հոգե կիր.
նոր առաքեալ դու մեզ՝ և նոր մըշակ ժիր.
անուն քո փայլօղնի՝ ՚ի կենացըն գիր.

Ողկոյզ քաղցրաճաշակ՝ յանպխտան որ թոյ.
վարդ վայելչատեսիլ՝ ՚ի յանարգ ըս տոյ.
՚ի յանարօր երկրէ՝ պըտուղ ցորե նոյ.
և՚ի տըղմուտ ըլձոյ՝ մարգարիտ լու սոյ:

Լուծ

Լուծեալ և կորուսեալ՝ ազգ աշքանա զեան.
խաւարեալ ՚ի լուսոյ՝ ա͞ծգիտու թեան.
քև ըղձմք պողոտայն՝ լուսով քո ծա նեան.
և ՚ի խորոց մահու՝ ՚ի կեանս վերջա րեան.

Սառնամանեաց լերանց՝ հիւսիսակա նաց.
դիցապաշտ մոլութ͞՝ մածեալ նահան գաց.
արև ջերմաձաձանչ՝ յանարև մի գաց.
և հողմ հարաւային՝ փարատիչ ցըր տաց.

Եկն աննըման ակինթ՝ կայծ և կարկէ հան.
մարգարիտ լուսախայլ՝ ոսկի պատուա կան.
պալասան կինամոն՝ նարդոս և շու շան.
հոգւոց ըսպեղանի՝ յօձից ըն խայթ ման.

Լուսեալ մաքուր վարուք՝ թագ մարգարտա շար.
յեռեալ ընդ չարչարանս՝ ազնիւ կազմե ցար.
պըսակդ անհամեմատ՝ ամենայար մար.
պարգևեալ ՚ի հոգւոյն՝ ՚ի գլուխ մեր է դար.

Ուղղափառ հաւատոյ՝ քանոն անսը խալ.
և վարժ ՚ի յակոբէ՝ ուղիղ մաձա կալ.
զո՞ր գովգովեցելոյդ՝ պատկան կարեմք տալ.
որ մեզ ըղձմք հաւատոյ՝ ետուր իմա նալ.

Բարբուն հոգևհանձար՝ քընար քաղցըրա ձայն.
քարոզող ճըշմարիտ՝ զուղիղ պողո տայն.
որով քեզ հետևմամբ՝ գընալով մեզ յայն.
ծանեաք ըստուգապէս՝ զերկնաւոր ար քայն.

Ի քո անբիծ վարուցդ՝ ազնիւ բուրաս տան.
մըտեալ մընամք ՚ի յայժ՝ մեծի հիաց ման.
թէ զո՞ր ծաղիկ արդեօք՝ քաղեմք անըն ման.
որք հոտով և գունով՝ յայժ են բազմա զան.

Զար

Զարչարանօք մարմնոյդ՝ ո՛վ սուրբ նահա    տակ.
և զարեան քո յերկիրն հեղլով ըզ վը    տակ.
երկիրս հայաստանեայց՝ անբեր ագա    րակ.
քաղցր անձրևոյ հոգւոյն՝ եղև ընդու    նակ:

Սորաքանչ նահատակի՝ անհըման վը    կայ.
տեառն մոյ ընտիր՝ և ազնիւ ծա    ռայ.
Ճըշմարիտ քահանայ՝ հաշտարար ըն    ծայ.
և զաւակ օրհնութեան՝ նորոյս ադա    մայ:

Հայոց գաւառ խընդա՛ բերկրալի հո    գւով.
լցեալ և լիացեալ՝ երկնային լու    սով.
զի սուրբ երրորդութիւն՝ 'ի քեզ գըթա    լով.
շնորհեաց քեզ ըզսուրբըն՝ գրիգոր բազմա գով:

Այլ և տաճար լուսոյ՝ 'ի քեզ յօրի    նեաց.
և սուրբ կաթողիկէ՝ հաստատուն հիմ    նեաց.
որոյ ընդ հովանեաւն՝ ըզ մեզ ժողո    վեաց.
և կենացն անմահից՝ ժառանգաւո    րեաց:

Յանձառ ծոցոյ ծընունդ՝ բանն անպարա գիր.
ոսկի ուռն 'ի ձեռին՝ իջեալ 'ի յեր    կիր.
տաճար մեզ ձևացոյց՝ երկնալուսա    ծիր.
պըտուղ սուրբ աղօթից՝ հօրըն մեր ըն    տիր:

Ո՛վ սուրբ գրիգորիոս՝ հայր մեր քաղցրա    գին.
ո՛վ մայր մեր հրաշալի՝ սուրբ էջմիա    ծին.
զչընչին երգօղ բանիս՝ որ այժմ հասակ յետին.
միշտ պահպանել հայցեմ՝ 'ի ձեր հովա    նին:

Յորդորեցելոց և մեր՝ տառապեալ հօ    տին.
և այժմ 'ի ներկայիս՝ մեր հովուապե    տին.
ընդ հօր և մօր գըթոյ՝ առ նըւաղ որ    դին.
այցելուք ձեր միշտ՝ յօգնել փութաս    ցին:

Ամէն.    Յո

## Յայտարարութիւն ինչ Յաղագս Հաւաքելոյ Սորին Մատենիս։

Այն պատուոյ արժանի բազմերանեան հայրս մեր սրբն Գրիգորիոս լուսաւորիչն հայաստանեայց՝ Յորժամ աղբերցուք կանուխ գիտութեանն այ՝ եւ ՚ի խորութ վիրապէն եւ եկն ծանուցանել մեզ զմի ածն յաւիտենական, Շարժեալ ՚ի հոգւոյն սրբ՝ սկիզբն արար վարդապետել յանկիզբն էութե ամենասուրբ Երրորդութեանն եւ միոյ ածութեն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբ։ Եւ մինչեւ ՚ի հասարակաց յարութիւնն եւ ՚ի գործոց հատուցումն՝ երկար եւ յաճախ բանիւ աւարտեաց յաւուրս կե։

Զոր քաջ քարտուղարն տրդատայ ագաթանգեղոս՝ ՚ի կարգ արկեալ գրեաց զամ մի ըստ միոջէ։ Եւ լուսաւորեալ սրբն գրիգոր զհայաստանն աշխարհ, մկրտեաց զամենեսեան յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբ։

Եւ յետ հաստատելոյ եկեղեցիս եւ կարգելոյ քահանայս եւ պաշտօնեայս, ձեռնադրեաց զկրտսեր որդին իւր զարիստակէս ՚ի տեղի իւր. եւ ինքն միայնակեցութե ցանկացեալ, ելանէր ՚ի յանապատ տեղիս եւ անդ կեայր զաւուրս իւր քառասնօրեայ պահօք մինչեւ ՚ի սոյն վախճանն իւր. Եւ անդ մինչ էր ՚ի խստակրօն վարս ճգնութե, սկսաւ դարձեալ շարադրել գիրք երկրորդ զհոգելից մատեանս զայս կոչեցեալ Յաճախապատում։ Եւ թէ ինչ կամ որքան ինչ պարունակէ կայ ՚ի սմա, ահա ցանկն այբբենական՝ որ զկնի

զսակաւն 'ի բազմաց նշմարէ համառօտիւ .
Իսկ զխորուն բանիցն 'ի պարզ գրուածոյն՝ միայն
նա կարէ ճանաչել, որ միշտ զհոգևորն խորհի և
ախորժէ . Այն զի խորուն բանիցն՝ և որ ինչ
'ի նմա պարունակեալ իմաստք . աստ 'ի պարզ գրը-
ուածի են իբրև գանձք աստուածային ծածկեալք
յագարակի . Վասն որոյ այրն ազնուական մհտսի
աբրահամ բարեպաշտ ամիրայն՝ զնոցայն գիտելով
զյարգ, եղև ցանկացող այնր աստուածային գանձուց,
ոչ վիճակաց վաճառուց անխախճան վարձուց
երանական շահուց . և այն՝ ոչ առ 'ի զնոյնս ունել
և ինքեան միայն սեփականել, այլ և ըստ բարե-
սէր բարուցն առ 'ի նոցայն կարօտելոց ևս սե-
զանաւորել . Աստի զայն սա մատեան՝ որ զկնի
կտակաց հնոյ և նորոյ օրինաց մատեան անսխալ՝ զ'ի
յայլմէ նախ արձանացուցեալս 'ի տիպ՝ որ առ մեզ
սպառեալ և պակասեալ՝ և 'ի նմա՝ որ ինչ բանք և
իմաստք 'ի բազմաց անյայտք էին և ծածկեալք,
անդրէն արդ այժմ՝ ոչ թէ առ 'ի ցուցանել
զտեղին և զծածկեալ գանձս աստուածային՝ որ 'ի նմա,
յերևան ածել՝ և 'ի լոյս բերել՝ եւ արձա-
նացուցանել 'ի տիպ՝ իւրով իսկ արդեամբ
(ոչ գրեցաք 'ի դուռն այսր մատենի) 'ի սեփական
իւր գործարանի իբրև արձան կենդանի 'ի յի-
շատակ իւր ինքեան և 'ի շահ հոգեսիրաց նաև
'ի պատիւ որդւոյն և 'ի փառս միոյն այ .
Ուրեմն խնդիր է 'ի ձէնջ ասել ընդ մեզ սի-
րելիք մեր՝ թէ նոյն ինքն ած՝ այն որ կամի
տալ տացէ նմա զվարձս բարեաց ոչ միայն 'ի

 կեանս

կեանս յայս այլ և ընդ երանելեաց ։
Ընդ նմին և ծնողի նորին՝ առն բարեպաշտի
Թէրզեանց սառրաֆ հանգուցեալ մահտեսի
Յօհաննին, և յարգի եղբօր նորին հանգուցեալ
Ղազարին, նաև այնոցիկ՝ որք այժմ են կենդա-
նի, բարեպաշտուհի մօր նորին մահտեսի Աննա-
տիկնոջն, և եղբօր նորին մահտեսի Երամին և
եղբօր որդւոց նորին՝ Գասպարին՝ Սահակին՝ մահ-
տեսի Նորուկին, և Գէորգին, և այլ ամ՟ կենդա-
նեաց և ննջեցելոց նորին ։ Բարեխօսութ՟բ սբյն
Գրիգորի, և սբ՟ որդւոց և Թոռանց նորին ։ և
դանիէլի սբ՟ ծերունւոյն, և ամ՟ ընտրելոցն
այ՟ ամէն ։

## Ցանկ Գլխաւոր Իմաստութեանց Հոգեւորաց Սրբոյ Անտոնի ։

Ազգականաց ազնուութիւն ոչ առնէ առ զզք ազնիւ․ այլ վարուց ուղղութիւն ։ 251 ․
Աղբիւր է ա՛ծ ա՛մ բարեաց․ լոյս կեանք և այլ յորմէ ՚ի բաց լինիլ չէք ։ 133 ․
Աղօթք ՚ի բոլոր սրտէ՝ ժամանել տան հոգւոյն ՚ի նաւահանգիստն կենաց ։ 208 ․
Ա՛մ ինչ կենդանեաց և մեռելոց՝ քնի պատարագաւն առէ կատարի ։ 187 ․
Ամօթոյ անդամքն՝ առաւել պարտին առ ունել զպարկեշտութիւն ։ 251 ․
Անզեղջ և անապաշխար հոգւոյն դժուարին գոլն բժշկութիւն ։ 234 ․
Անձնիշխան կամք է յա՛յ ՚ի մարդիկ․ թէպէտ յառաջագէտ է ամենայնի ։ 219 ․
Անձրևք պիտանիք և կարկուտք վնասիչք՝ տես թէ յինչ ցոյցս են ։ 256 ․
Անփոփոխ գոլն ա՛յ․ և թիւրութն փոփոխելի առողացն գոլ զա՛յ ։ 268 ․
Աշխարհս այս՝ ո՛չ դպրոց ուսման կարգեցաւ առ մեզ յա՛յ ։ 075 ․
Աչքն թէ առ ինչ պիտանութիւն եդան յանձինս մեր յարարչէն ։ 156 ․
Աչք, ականջք, ունչք, ձեռք, ոտք, արտաքին զգայութիւնք յիշին ։ 246 ․
Ապաշխարութն զհարկաւոր լինելն և զպիտանութիւնն տես ծ գլխով ։ 230 ․

Ապաշ

Ապաշխարութեան յոյժ ցուցանի վ̃ս ստոյգ զղջացելոց. 187. 229.

Ապաշխարութիւն ճշմարիտ՝ երկրորդ աւազան լինի ուէ զղջացելոցն. 237.

Ապաշխարութիւնն ճշմարիտ՝ զներհակն է ըս֊կրանիլ զիւր մեղացն. 234.

Ապաշխարողն՝ ճաշակմամբ մ̃ը խորհրդոյն ազա֊տի 'ի մեղացն պարտեաց. 231.

Ապաշխարողքն ճշմարիտք 'ի հին օրէնսն և 'ի նորս ո՞յք և ո՞րպէս. 238.

Առաջնորդի վանաց խրատ. հոգ տանիլ 'ի վերայ եղբարց. 283. 286.

Առաջնորդին հրամանաւ պարտ է լինիլ ա̃մ ինչ յեղբայրանոցս. 279.

Առաջնորդք եկեղեցւոյ օրինակ լիցին ուէ հե֊տեւելոցն ինքեանց. 218.

Առաջնորդք ժողովրդեան՝ թէ հեղգասցին յորս կարգեցան, տե՛ս. 213.

Առաջնորդ օտար 'ի ճշմարտութէ բարկութիւն ա̃յ՝ կայ ուէ 'ի վ̃ր նորա. 217.

Առաջնորդաց խրատ գրէ յոհաննէս եզնկացի 'ի ներբողեանսն. 340.

Առողջ գոլն և հիւանդ՝ բարի մարդոյն բարի են, և չարին չար. 129.

Ա̃ծ վ̃ս սիրոյ սիրելեացն՝ բարիս առնէ մնա֊ցելոցն 4 թագ 19. 34. 183.

Ա̃յ էութեանն փառաւոր ասութիւք. թէ այն֊պէս էր՝ և է միշտ նոյն. 061.

Արարածք որ տուեալ մեզ 'ի դարմանս, նոքին դառնան և 'ի պատժել. 081.

Արդարոց պայծառութիւն փառաց թէ ո՟պ ան-
ճառ և անպատմելի է ։ 011։
Արդարքն խնդան ուէ՝ և մեղաւորքն սգան
նախքան զհատուցումն։ 171։
Արիստակիսի գովութիւն և գնալն ՚ի վր՟ ծո-
վուն նիկիոյ ։ և մահն։ 349։
Արտասուք՝ զմեղաց աղտոն մաքրեն և ողջա-
ցուցանեն զհոգին ։ 233։
Արտասուք՝ զհուր մեղացն շիջուցանեն, և զկամս
մարմնոյն խափանեն։ 239։
Արտասուք օգտակար մեռելոյն՝ տես թէ որ-
պիսի պարտի լինել։ 175։
Բարեգործութիւք մնացելոցն՝ օգնեն աստ հան-
գուցելոցն ։ 107։
Բնական օրինացն ուղղութիւն ՚ի հեթանոսան
ըստ պօղոսի բանին։ 097։
Բնակութիւնք և կեանք՝ երեք որոշին մարդ-
կան ՚ի խնամոցն այ՟։ 173։
Բերան մարդոյս թէ զինչ վարս ունի ըստ այ՟
սահմանելոյն ՚ի մեղ։ 156։
Գթութիւն՝ կապ է ասէ միաբանութե՟, և մայր
է սիրոյն, և այլ։ 152։
Գինի պախարակի՝ վնասակար գոլ ոգւոյ բա-
զում կերպիւ։ 113։
Գիտութիւնք ամ՟՝ ՚ի միոյն այ՟ յառաջագայեն
որ է սկիզբն ամ՟ի։ 053։
Գործակալաց վանօրէից խրատ, խնամածութե՟
և սիրով կալ։ 284։
Գրիգորիս՝ թոռն որդի գրիգորի լուսաւորչին
եպիսկոպոս աղուանից։ 362։

Վարանաղեաց երկրին գովասանութիւն յօ-
հաննու երզնկացւոյ ։ 331։
Եկեղեցին անդրանկաց · առագաստն հարսա-
նեաց · վերինն սիօն ։ 241։
Երանի աղքատաց հոգւով, երանի հեզոց, և
այլն որ զկնի ։ 119։ 200։
Երկու դաստիարակս ետ մեզ ած · որք են
խոստմունք և սպառնալիք ։ 078։
Երեք կեանք և բնակութիւնք որոշին մարդ-
կան 'ի խնամոցն այ ։ 173։
Զանազան վարուց մրցն այ՝ զանազան փառք
և պսակք պատրաստին ։ 188։
Զարարածս առնել մեզ 'ի դարմանս և'ի պա-
տիժ՝ 'ի մեր կամս է ։ 084։
Զգայութիւնք մեր մարմնականք՝ 'ի հոգւոյ ան-
տի ունին զշարժումն ։ 206։
Զգայութիւնք մեր թէ ուստի զօրանան, և
զի՞նչ վարս ունին ։ 206։
Զգաստութիւնն խլէ 'ի զգայութեց զվնասա-
կարն, և տնկէ զշահաւորն ։ 150։
Զգոյշ լիցին ասէ հրաժարեալքն յաշխս, 'ի
միտս 'ի բանս և'ի գործս ։ 273։
Զգուշանալ պարտ է ասէ յամենայն վնասակա-
րացն զգայութեանց ։ 055։
Զգուշութիւն պատուիրէ 'ի մոլար և'ի վնա-
սակար ուսմանց միշտ ։ 039։
Զղջալն մօտ 'ի վախճանին ունի՞ արդեօք յոյս
թողութեան մեղաց ։ 189։
Զղջմամբ եղողացն յաշխս պարտ է ասէ օգ-
նել բարեգործութեամբք ։ 191։

Ընկերին սէրն 'ի մէջ սրտէ՝ նմանութիւն ունի
առ ճշմարիտ սիրոյն քնի 252։
Ըստ ա̃մ հասակի մերոյ աճման, պարտ է առ
ցուցանել պտուղ ։ 205։ 241։
Թէ ամենայն արարածք՝ միայն 'ի յայն են ըս-
տեղծեալք և արարեալք ․ 031։
Թոյլ տալն այ՝ սատանայի ․ տարածել զչարու-
թիւն իւր 'ի մարդիկ ․ 024։
Ի մեղանչելն մեր՝ ոչ խոկոյն թողու զմեզ ած ․
այլ սպասէ զի դարձցուք։ 085։ 103։
Իշխան գոլն կամ իշխեցեալ՝ մի և նոյն է բարի
առն ․ նոյնպէս և չարին ։ 130։
Լալի մեռեալ տես թէ որն է ․ և բարւոք առ
'ի միտ ոչ քրիստոնեայ ։ 174։
Լերանց հաչակաւորաց զանուանսն յիշէ յո-
հաննէս եզնկացին։ 319։
Լսելիք՝ թէ որպիսի դրունք են 'ի մեզ 'ի
մուտս բանին այ։ 160։
Խելքն որ է իմաստն, աղբիւր է առ ա̃մ որ 'ի
մեզ գիտութեանցն ․ 251։
Խոնարհութիւն և հնազանդութիւն ․ թէ որ-
քան գովելի են և ունելի ։ 150։
Խոնարհութիւն որցն յիշատակի ․ զոր ուսոյց
քս̃ աշակերտացն իւրոց ։ 210։
Խոստովանողն զմեղս իւր՝ ճաշակմամբ սուրբ
խորհրդոյն կատարի ։ 231։
Ծանր մեղաց՝ սաստիկ զզջումն և յորդ արտա-
սուք պիտոյ են ասէ ։ 238։
Ծառայեն մեզ ամենայն տարրեղէնք 'ի խնա-
մոցն այ առ 'ի պիտոյս մեր։ 031։

Կայանք հոգւոց մեղաւորաց այլ են ասէ 'ի կայանից արդարոց. 171.
Կայանք մեղաւորացն՝ տեղիք զանազան տըխրութեց և սըգոյ են ասէ. 302.
Կատարեալ այն է ասէ՝ որ գիտէ որոշել զկայունն և զանցաւորն. 268.
Կատարեալ առաքինութիւն խնդրէ ասէ ած 'ի սպասաւորաց եկեղեցւոյ. 185.
Կնիք արդիւնական գործոց՝ է փրկական սուրբ խորհուրդն քնի. 226.
Կուսանքն ասէ զերկնայնոցն ունին զնմանութի իբրև անմարմինք. 289.
Հակակայութիւնք եղելոց՝ պիտոյ են ասէ իրերաց առ 'ի ճանաչել. 076.
Հայհոյութիւնք այնոցիկ, որ 'ի վերին զօրացն պետս ունիլ ասային այ. 270.
Հանապազօր քննող լինիլ ասէ սխալանաց՝ խորհրդոց բանից և գործոց. 228.
Հարուածք ածի, զարդար դատողութեցն այ են մեզ ապացոյցք. 258.
Հաւատոյ բանք. և թէ՝ զինչ զօրութի ունի և ներգոր". 025. 137.
Հեզութիւն՝ թէ զինչ է և որքան պիտանի և գովելի առաքինութիւն. 143.
Հեթանոսք որք զօրէնս ոչ ունին, բնութբ զօրինացն գործեն. 096.
Հետևողին ճշմարտութե՝ ինքն ճշմարտութին լինի նմա առաջնորդ. 214.
Հերձուած ոչ եմուտ ասէ բնաւին 'ի ճշմարիտ հաւատս մեր. 338.

Հնազանդ գոլոյ մեր այ̃, և գազանք ա̃մ՝ էին առ մեզ հնազանդք. 036.
Հնազանդութի̃ պետի առ առաջնորդն ՚ի միաբան եղբայրանոցսն. 276.
Հնազանդութի̃ թէ որքան գովելի է և գլխաւոր առաքինութիւն. 149.
Հոգիք մ̃րցն յուսով ուրախանան առ մինչև ՚ի հասարակաց յարութին. 188.
Հոգիքն ՚ի կայանսն՝ ոչ են տէ անզգայք և ա-նիմայք. այլ ՚ի զգայութն են. 205.
Հոգւոցն արդարոց յառաջ գան առ հրեշտակք և մ̃րց հոգիք. 171.
Հոտոտելիք՝ թէ որպէս առնուն զհոտ գիտութ̃ հոգևորացն է գիտելի. 161.
Հրաժարելոցն յս̃էս խրատ. թէ ո̃րպ պարտին կեալ ՚ի մարմնի. 273.
Ձեռք՝ թէ որքան օգտակար գործիք բարւոյ տուեան մեզ յա̃յ. 163.
Ճանաչելն զա̃ծ՝ է նախկին հարկաւորութիւն քան զա̃մ. և թէ զինչ է. 169.
Ճանաչելն զա̃ծ՝ է ոչ մեղանչել. զոր մ̃րն յո-հաննէս վկայէ. 3.6. 169.
Ճգնաւորաց զգուշութն խրատ. զի միշտ զգաստ, և արթունք լիցին. 275.
Ճգնաւորք ճշմարիտք՝ բազում զգուշութիւնս տէ պարտին ունիլ. 289.
Ճգնաւորքն առ համակարգութի ունին ընդ-վերին հրեշտակս. 287.
Ճշմարիտ հրաժարեալքն յս̃էս զգոյշ կացցեն տէ ընդ աչս, ընդ ունկնս, և յայլս. 274.

Ճշմարտութիւնն՝ ինքն լինի առաջնորդ հե-տևողին իւրում անսխալ։ 214։
Մակաբայեցւոց զօրքն յիշեն վասն մեռելոցն յիշատակի 2 Մակ 12. 40։ 176։
Մահ մեղաւորին չար է. տես թէ ընդէ՞ր, և զգոյշ լեր ով քրիստոնեայ։ 177։
Մահն որդւոյն արիստակիսի յարքեղայսակ ամբաւ-րիշտ իշխանէն հայոց։ 352։
Մահն որդւոյն վրթանիսի խաղաղութեամբ առ-յոյսն մեր ամենեցուն։ 353։
Մահն որդւոյն յուսկայ 'ի տիրանայ. տափանա-հարեալ 'ի գլուխն։ 362։
Մահն որդւոյն գրիգորիսի կապեցմամբ յագիս ձիոց ամեհեաց։ 365։
Մարդիկ միմեանց բարիս առնեն և չարիս. իսկ փոխարէնն յայս ոքի։ 243։
Մարդն մինչ հնազանդ էր այ՝ արարածքն ևս հնազանդ էին մարդոյն։ 036։
Մարդս բարի և չար գործովք՝ հրեշտակաց և դիւաց նմանի։ 044։ 047։
Մարմին և հոգի է մարդն. տկար և զօրաւոր. տես յերեսն։ 193։ 198։
Մարմնոյս մերոյ տկարութիւն և գոյն դիւրա-փոխելի 'ի բազում իրաց։ 197։
Մարտիրոսաց վն խօսի, թէ պատուելի են յի-շատակք նոցա։ 208։
Մեծատուն և աղքատ՝ բարի կամ չար լինել 'ի կամսն է և ոչ յինչսն։ 129։
Մեղաց արմատք ոչ էին առ նախ, և այժմ իսկ՝ ոչ են և ոչ գոն։ 063։

Մեռելոց բարի վարքն՝ օրինակ ուղղութեան լինին առ է վերջնոցն։ 182. 188.

Մեռելոց սուգ գնելն և լալն անյուսաբար՝ մեծ վնաս է ասէ։ 175.

Մեռելոց վասն պատարագ առնել, և աղօթս և ողորմութիւնս և այլ տուրս։ 189.

Միաբանութիւն եղբարց առ առաջնորդն տես թէ յինչ օրինակի։ 282.

Միաբանութիւն եղբարց յոյժ զգուշութեամբ պահելի գոլ ցուցանի։ 280.

Միաբանութիւն ընդ եղբարսն և հնազանդութիւն առ առաջնորդն։ 276.

Միաբանութիւն ընդ իրեարս յեղբայրանոցսն միակամութեամբ և սիրով։ 276.

Միաբանութիւն հաւատոյ և մեր վարուց՝ աղբիւր է ասէ գիտութեան։ 151.

Միութիւն բնութեան ամենասուրբ երրորդութեան և մի աստուածութեանն։ 003. 043. 060.

Միս ուտելն պախարակի ընդ գինւոյ չափաւոր գոլ ոգւոյ։ 114.

Մոլար և չարաչար ուսմանց վասն զգուշութիւն պահել զլսելիս։ 038.

Յարութիւն մարմնոյ թէ որպիսի փառօք լինելոց է ըստ պօղոսի ասիցն։ 009.

Յուսիկ թոռն սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ պատմի և գովի։ 353.

Ներբողեան ՚ի վերայ սրբոյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչին հայոց։ 295.

Ներբողեան յորդորն և՛ ի Թոռունս սրբոյ լու-սաւորչին մերոյ. 034.
Նզովեցելոցն յուսով ՚ի ք՛ս, պիտոյ է առ մա-տուցանել զպատարագն ս՛բ. 172.
Նշխարք սրբոց մարտիրոսացն՝ փրկութի՛ ընծայեն առ հաւատացելոց. 212.
Ողբական ձև բանի ՚ի ձեռն առնու ՚ի ներբո-ղին յոհ՛՛ եզնկացի. 334.
Ոչ՝ թէ առ ի՞նչ պէտս տուեալ են մեզ յա-րարչէն՝ ՚ի միտ առ. 144.
Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ ՚ի վ՛ր տանդ-իսրայելի. եզեկ 3. 17. 214.
Որքան սիրեաց առ որ զձ՛ծ, այնքան բարիս ընծայէ ն՛յ. ղուկ 7. 47. 265.
Չարն ընդէ՞ր է զի առաջանայ աճեն և ոչ խա-փանի յաշխարհէ. 220.
Պահոց պնդութի՛ն երկարապէս գովաբանի որ գովելին է յոյժ. 104.
Պահք՝ բժիշկ լինի առ հոգւոյ և մարմնոյ ան-ժուժկալութեանցն. 115.
Պահք՝ զդեղն առողջութե՛ շնորհէ առ. և հալէ զաղտեղութիւն. 115.
Պահք՝ դադարեցուցանէ առ յախտից մտացն և զգայութեանց. 115.
Պահք՝ զօրացուցիչք են առ հոգևոր և ո՛բ վա-րուց յառաքինութի՛ն. 108.
Պահքն՝ մաքսաւորի, և եղիայի, և փրկչին մերոյ ք՛սի քառասնօրեայ. 108.

Պահք՝ յորդորէ տալ զմարդիկ յապաշխարութի̃ և ածէ 'ի յուղղութիւն. 110.

Պահքն՝ երկուցն են տալ պտուղ են. կատարե-լոյն, և տխմարին. 110.

Պահքն՝ պարիսպ հզօր է տալ և դռանամուր ընդդէմ թ̃մ մեղաց. 111.

Պահք՝ զօրօրդեալ հուրն ցանկութեան շիջու-ցանէ տալ առ 'ի մէնջ. 111.

Պահքն՝ խաղաղ նաւահանգիստ է տալ ախտիցն որ 'ի մեզ ալեաց. 112.

Պահոց պնդութեան և ժուժկալութեան և զմեզ արժանիս արասցէ տ̃րն մեր ք̃սի. 112.

Պայծառութի̃ փառացն արդարոց քան զարե-գակն տալ փայլականի. 010.

Պատարագաւն̃ ք̃սի տալ կատարին ա̃մ բարի արդիւնք նաև սրբոցն. 186.

Պատարագել ոչ կարէ քահանայ որ ընդ այլս խեթ-ունիցի, զինչ ապա այլ մեղքն. 187.

Պատարագօղն եթէ ո̃ք է տալ 'ի մեղաց, շահի պակաս անձին իւրում. 185.

Պատարագօղն՝ կատարեալ պտուղ գոլ տալ ա̃մ առաքինութեամբ. 186.

Պատերազմն առաքինեաց ոչ միադիմի է տալ, այլ բազմադիմի. 222.

Պատուական է առաջի տ̃ն մահ ս̃րց իւրոց. տես թէ վ̃ս ինչ պատճառի. 177.

Պոռնկութեան վ̃ս յերկարէ ո̃ք հայրս մեր. զի գարշելի քան զայլ ախտսն է. 087.

Սատանայ և խաւար և մահ՝ ոչ էին տալ նախ, և ոչ են այժմ. 067.

Սատանայի բարի ստեղծանիլն ի կղզեանէ, և չարանալն յինքենէ. 253.

Սատանայի թէ ընդէ՞ր թոյլ տայ Ած՝ տարածել 'ի մարդիկ զչարութի իւր. 023.

Սէր՝ թէ զինչ ներգործութիւն ունի՛ բացայայտէ գովութի. 139.

Սիրելն զԱծ՝ 'ի գեղեցկայրն սիրելոյն ասէ ճանաչի. 1 յոհ 4. 20. 058. 115.

Սիրելոյն զմեզ Այ նշանք են տարածքս Աշխ. որք վն մեր ստեղծան. 008.

Սիրողն զԱծ՝ հեռի է յամ անօրէնութէ, և մերձ է յամ սրբութիւնս. 252.

Սիրտն ես ասէ ունի առաքինութի, և վատթարութիւն չարեաց. 251.

Սիրողն զընկերն՝ յինքն բերէ ասէ զնմանութի ճշմարիտ սիրոյն Քի. 252.

Սրբքն միշտ ջանան և փափագին ասէ, զի փառաւորեսցի Ած 'ի մեզ. 208.

Սրբքն պատճառ լինին ասէ փրկութե մերոյ, իւրեանց աղօթիւքն. 213.

Սրբց հոգիքն ասէ յուսով ուրախանան մինչև 'ի հասարակաց յարութին. 187.

Սրբոցն Այ՝ զԱծահաճոյ կենցաղավարութիւնն պատմէ յօգուտ մեզ. 066.

Վախճան մարդոյ 'ի զանազան հասակս. 'ի տղայութեանն, 'ի մանկու''. 200.

Վերակացուաց եկեղեցւոյ խրատ զգուշութե, զի դէտք են հոգւոց. 096.

Վերակացուք եկեղեցւոյ եթէ հեղգասցին 'ի գործն, կորին ասէ ընդ մեզ. 214.

Վրթանիսի որդւոյն՝ սրբոյն Գրիգորի գովասանութիւն և կատարումն։ 352։
Տան գլխով Թուաբանէ զմոլութիւն որք ներհակին առաքինեաց։ 222։
Տան գլխով ևս Թուաբանէ զառաքինութեան բարի արդիւնսն։ 224։
Տարրեղէնքն թէ որպէս 'ի ծառայութիւն տուեալ են մեզ առ 'ի յայս։ 032։
Տղայքն յարգանդի ոչ գիտեն զաշխարհիս, նոյնպէս և մեք զվերինսն։ 244։
Տնտեսաց վաճառելից խրատ. վասն այլ առնել զգործառնութիւնս։ 282։
Տօնելով զտօնս սրբոց վկայիցն Քրիստոսի, բազում վարձս առնումք յայս։ 208։
Ցուցանէ թէ մեծ օգտակարութիւն ունի յիշել զմեռեալսն։ 192։
Փոխարէնս ետ 'ի մեզ բարեացն զայս խնդրէ Աստուած զի բարի լիցուք։ 242։
Փորձ ևս սաի ունել սրբութիւն և ոչ սրբութիւն փորձանօքն հանդերձ։ 250։
Քահանայ՝ որ ընդ այլում խէթ ունիցի՝ ոչ կարէ պատարագել զՔրիստոս։ 186։
Քահանայքն սուտ որք աւետարանին գործակիցք են՝ պատուեսցուք։ 254։
Քահանայքն սրբոց՝ որ առաջնորդեն 'ի ճշմարիտն երանին 'ի տնէ։ 255։
Քաղցրութիւն և խոնարհութիւն և հնազանդութիւն տես թէ զինչ են։ 149։

Քարոզէն սրբոյն Յուսկայ առ Տիրան արքայն ունկնախից․ 355․
Քարոզէն Գրիգորիսի յերկրէն աղուանից մինչ հնգետասանամեայ էր․ 363․
Օրինակ լինել առաջնորդացն եկեղեցւոյ՝ հետեւելոյն ինքեանց․ 218․

---

Օ աշխատող Յանկիս, և զառաջին սրբատրող մեր Մատենիս զՊաղտասար պատուելի դպիրն ընդ որում և զիս զայժմեան սրբագրող չնչին ծառայս ձեր զԹագւոր Ասլանեան Թարմատար դպիրս՝ ո՛վ եղբարք բանասէրք յիշեսջիք ՚ի տէր հանդերձ ծնողովք մերովք և ամ ննջեցելովք և ո՛ղջ լերուք․ ամէն․

Ներել մաղթեմ աղէրս առ կեալ
որ ինչ ՚ի սմա աղխալ գը տեալ․
Ո՛չ գիտելոյն և ոչ տե սեալ․
կամ ըստ հնոյն այնպէս թո ղեալ․

ԳՐԱԴԱՐԱՆ ... Гос. Публ. Библиотека ... СССР ... им. А. Мясникова ... ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ․

Գիրքը վերադարձնել է նշված ժամկետում

16/V ―――― [illegible] թ.